

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներդրումների խոսքը: Ինչպե՞ս կարող է այս մեկնաբանությունը օգնել ձեզ.....	4
Աստվածաշունչը ճիշտ կարդալու ուղեցույց: Ստուգված ճշմարտության ինքնուրույն ուսումնասիրություն.....	7
Նոտնեացիներին ուղղված թղթի ներածությունը.....	17
Գլուխ 1.....	22
Գլուխ 2.....	58
Գլուխ 3.....	77
Գլուխ 4.....	98
Գլուխ 5.....	113
Գլուխ 6.....	134
Գլուխ 7.....	149
Գլուխ 8.....	166
Գլուխ 9.....	200
Գլուխ 10.....	224
Գլուխ 11.....	238
Գլուխ 12.....	255
Գլուխ 13.....	277
Գլուխ 14.....	299
Գլուխ 15.....	317
Գլուխ 16.....	336
Նավելված 1: Նունարեն լեզվի քերականական կառուցվածքի համառոտ սահմանումները	353
Նավելված 2: Տեքստային քննադատություն	364
Նավելված 3: Բացադրական բառարան	368
Նավելված 4: Վարդապետական սկզբունքներ	380

**ՀՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԹՂԹԻ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆԵՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ուղղարկված (<i>Apostellō</i>), 1:1	25
Վաղ եկեղեցու պատգամը <i>Kerygma</i> , 1:2	26
Աստծո Որդին, 1:3	27
Մարմին (<i>Sarx</i>), 1:3	28
Աստծո անունները, 1:4	30
Կանչված. 1:6.....	35
Սուրբեր, 1:6	36
Հայր, 1:7.....	37
Արդարություն, 1:17	42
«Ճշմարտությունը» Պողոսի գրվածքներում, 1:18	47
Կործանել, ավերել, ապականել, աղավաղել (<i>Phtheirē</i>), 1:23	50
Սիրտը, 1:24	51
Հավիտյան (Հունարեն իդիոմաներ), 1:25	52
Ամեն, 1:25	52
Միասեռականություն, 1:26,27.....	54
Անբարոյականությունն ու առաքիությունը Նոր Կտակարանում, 1:28-31	55
Պողոսը օգտագործում է <i>Huper</i> նախդիրը, բարդ բառեր կազմելու համար, 1:30.....	56
Ապաշխարություն, 2:4	62
Ռ-ասիզմ2:11	65
Պարծենալ, 2:17	71
Հունարեն «փորձել, ստուգել» տերմինները և դրանց լրացուցիչ իմաստները, 2:18	72
Անվավեր (<i>Katargeō</i>), 3:3	80
Փառք, 3:23	89
ՆԿ փաստը մարդու փրկության մասին, 3:24.....	89
Փրկագին/Ազատագրում, 3:24.....	90
Հավատք, 4:5.....	102
Կնիք, 4:11	105
Երաշխիք/գրավ, 4:16.....	109
Խաղաղություն, 5:1	116
Կանգուն, հաստատ (<i>Histēmi</i>), 5:2	117
Նեղություն, 5:3	120
Թագավորել Աստծո Թագավորության մեջ, 5:17,18.....	129
Սկրտություն, 6:3-4.....	138
Սրբացում, 6:4	139
Նախատիպ, օրինակ (<i>Tupos</i>), 6:17	145
Պողոսի փառաբանությունը, աղոթքը և գոհությունը առ Աստված, 7:25	164
Հիսուսն ու Հոգին, 8:9.....	174
Երբորությունը, 8:11	176
Հավատացյալների ժառանգությունը, 8:17.....	181
Շրջապատող միջավայր, բնական ռեսուրսներ, 8:19.....	183
Հույս, 8:25.....	187
Համբերելու կարիք, 8:25	188
Հոգին որպես Անձ, 8:26	190
Անդրանիկություն, 8:29.....	193

Ընտրություն/նախասահմանություն և աստվածաբանական հավասարակշռության կարիք, 8:33	195
<i>Մկիզք Archē</i> , 8:38	198
Բարեխոսական աղոթք, 9:3	205
Անեծք (<i>Anathema</i>), 9:3	208
Ուխտ, 9:4	209
Անկյունաքար, 9:33	222
Հնագանդություն, 10:3	227
Հունարեն բայերի ժամանակաձևերը՝ փրկությունը նկարագրելու մեջ, 10:4	228
Խոստովանություն, 10:9	230
Տիրոջ անունը, 10:9	231
Հիսուս Նագովրեցի, 10:13	233
Խորհուրդ, 11:25	250
Սուրբ, 12:1	258
Ներկա դարաշրջան և գալիք դարաշրջան, 12:2.....	259
Նորոգում (<i>Anakainōsis</i>), 12:2.....	260
Աստծո կամքը (<i>Thelēma</i>), 12:2	261
Նոր Կտակարանի մարգարեություն, 12:6.....	264
Առատաձեռն, Անկեղծ (<i>Haplotēs</i>), 12:8	268
Հաղորդակցություն <i>Koinōnia</i> , 12:13.....	273
Մարդկային իշխանություններ, 13:1	280
Պողոսի կարծիքը մովսեսական Օրենքի մասին, 13:9.....	287
Նշումներ Ելից գրքից 20,13:15,17.....	288
Տկարություն, 14:1	302
Քրիստոնյաները կարո՞ղ են դատեն միմյանց, 14:13	309
Աստծո Թագավորությունը, 14:17	311
Շինություն, խրատել 15:2.....	320
Առատություն (<i>Perissevō</i>), 15:13	325
Քրիստոնյան և սովածը, 15:26	331
Եկեղեցի (<i>Ekklesia</i>), 16:1	339
Անձնական չարը, 16:20	346
Հավիտենական, 16:26	351

Հեղինակի խոսքը: Ինչպե՞ս կարող է այս մեկնաբանությունը օգնել ձեզ

Աստվածաշնչյան մեկնաբանությունը դա մտային և հոգևոր գործընթաց է, որը փորձում է հասկանալ հեղինակի ներշնչվածության չափը բուն հեղինակի մոտ, այնպես որ Աստծո պատգամը հասկանալի և կիրառելի լինի մեր օրերում:

Հոգևոր գործընթացը որոշիչ է, բայց նաև դժվար է այն սահմանել: Դա իր մեջ ներառում է բաց լինել Աստծո առաջ և հեշտությամբ ընդունել Աստծո ասածները: Մարդու մեջ պետք է լինի ծարավ (1)Նրա հանդեպ, (2) Նրան ճանաչելու, և (3) Նրան ծառայելու հանդեպ: Այս գործընթացը ներգրավում է աղոթք, խոստովանություն և կյանքի փոփոխություն: Սուրբ Հոգին մեկնաբանության գործընթացում որոշիչ դեր է խաղում, բայց ինչու՞ անկեղծ, աստվածապաշտ քրիստոնյաները Աստվածաշունչը տարբեր կերպ են հասկանում: Դա մեր համար մնում է գաղտնիք:

Գործընթացի մտային կողմը նկարագրել հեշտ է: Մենք պետք է լինենք հետևողական և նախապատվությունը տանք տեքստին, այլ ոչ թե անձնական կամ եկեղեցական համոզմունքներին: Մենք բոլորս էլ գտնվում ենք որոշակի պատմական պայմանների շրջանակներում: Մեզինք ոչ ոք չի կարող լինել օբյեկտիվ և չեզոք մեկնաբան: Այս մեկնաբանությունը առաջարկում է ուշադիր և տրամաբանական մոտեցում, որը հիմնված է մեկնաբանության երեք սկզբունքների վրա, որոնք կօգնեն մեզ խուսափել մոլորություններից:

Առաջին սկզբունք

Առաջին սկզբունքը ամփոփվում է նրանում, որ պետք է հաշվի առնել պատմական իրավիճակը, երբ գրվել է համապատասխան գիրքը, որը առիթ է հանդիսացել հեղինակի համար գրելու տվյալ գիրքը: Բուն հեղինակն ուներ նպատակ և պատգամ՝ փոխանցելու մարդկանց: Տեքստը չի կարող մեզ համար նշանակել մի բան, որը երբեք չի նշանակել բուն, ներշնչված հեղինակին: Դա հասկանալու բանալին ոչ թե մեր պատմական, զգացմունքային, մշակութային, անձնական կամ եկեղեցական կարիքն է, այլ հեղինակի մտադրությունը:

Կիրառությունը սերտ կապված է մեկնաբանության հետ, բայց ճիշտ մեկնաբանությունը միշտ պետք է նախորդի կիրառությանը: Հարկ է հստակ ընդգծել, որ աստվածաշնչյան յուրաքանչյուր տեքստ ունի մեկ և միայն մեկ իմաստ: Դա այն իմաստն է, որը հենց բուն աստվածաշնչյան հեղինակը, գտնվելով Սուրբ Հոգու գործության ներքո, մտադրվել է փոխանցել իր ժամանակակիցներին: Իսկ հենց այդ իմաստն էլ կարող է ունենալ լայն կիրառություն տարբեր մշակույթներում և իրավիճակներում: Բայց բոլոր կիրառությունները պետք է կապակցված լինեն գլխավոր ճշմարտության հետ, որը փոխանցում է մեզ հեղինակը: Այդ իսկ պատճառով, այս ուսուցողական սերտողության մեկնաբանությունը կազմված է այնպես, որ կտա անհրաժեշտ պատկերացում աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրքի մասին:

Երկրորդ սկզբունք

Երկրորդ սկզբունքը գրական բաժինները ճիշտ որոշելու համար է: Յուրաքանչյուր աստվածաշնչյան գիրք իրենից ներկայացնում է մեկ ամբողջական փաստաթուղթ: Մեկնաբաններն իրավունք չունեն առանձնացնել ճշմարտության մեկ ասպեկտ՝ մերժելով մյուսները: Ուստի, մենք պետք է հակված լինենք հասկանալու աստվածաշնչյան ամբողջ գրքի նպատակը, նախքան գրական բաժինների առանձին մեկնաբանելը: Գրքի առանձին մասերը—գլուխներ, պարբերություններ, կամ համարներ —չեն կարող նշանակել այն ինչ չի նշանակում ամբողջ բաժինը: Մեկնաբանությունը պետք է ամբողջի դեղուկտիվ մոտեցումից գնա դեպի մասերի

ինդուկտիվ մոտեցմանը: Ուստի այս սերտողության մեկնաբանությունը կօգնի վերլուծել յուրաքանչյուր գրական բաժնի կառուցվածքը ըստ պարբերությունների: Գրքի գլուխների և համարների բաժանումները ներշնչված չեն, բայց օգնում են մեզ որոշել տեքստի կառուցվածքային սահմանները:

Մեկնաբանությունը պարբերության մակարդակի վրա—ոչ թե նախադասության, արտահայտության կամ բառի կարող է հանդիսանալ իբրև բանալի, բացահայտելու աստվածաշնչյան հեղինակի մտադրության իմաստը: Պարբերությունները հիմնված են ընդհանուր թեմայի վրա, հաճախ կոչվում է թեմա կամ թեմատիկ նախադասություն: Պարբերության մեջ յուրաքանչյուր բառ, արտահայտություն, բառակապակցություն և նախադասություն ինչ որ կերպ կապված է այս ընդհանուր թեմային: Դրանք սահմանափակում, ընդարձակում, բացատրում են և/կամ հարցադրում: Ճիշտ մեկնաբանելու միակ ճշմարիտ կերպը՝ հետևել հեղինակի մտքին պարբերությունից պարբերություն, աստվածաշնչյան գրքի մի բաժնից մյուսին: Այս մեկնաբանության սերտողությունը նախատեսված է օգնել մարդկանց՝ ժամանակակից անգլերեն թարգմանությունները համեմատելու համար: Այս թարգմանություններն ընտրվել են, որովհետև նրանք հետևեցին թարգմանության տարբեր մոտեցումներին:

1. Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերստուգված սրբագրություն, հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից (UBS⁴): Այս թարգմանությունը պարբերությունների է բաժանվել ժամանակակից գիտնականների կողմից:
2. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV) -սա բառացի թարգմանություն է, հիմնված հին հունարեն ձեռագրերի ավանդության վրա, որը կոչվում է *Textus Receptus* (համընդհանուր ընդունված տեքստ): Այս թարգմանության պարբերությունների բաժանումները ավելի երկար են քան մյուս թարգմանություններինը: Այս երկար բաժինները օգնում են ավելի հեշտ տեսնել ընդհանուր թեմաները:
3. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV)- կատարելագործված բառացի թարգմանություն է: Սա կազմում է միջանկյալ կետ հետևյալ երկու ժամանակակից թարգմանությունների միջև: Այս թարգմանության պարբերությունների բաժանումները բավականին օգտակար են թեմաները ճիշտ որոշելու համար:
4. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV)- դինամիկ հավասարազոր թարգմանություն է հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից: Սա փորձում է Աստվածաշունչը թարգմանել այնպես, որ ժամանակակից անգլիախոս ընթերցողը կամ քարոզիչը կարողանա հասկանալ հունարեն տեքստի իմաստը: Հաճախ, հատկապես Ավետարաններում, պարբերությունների բաժանումը ավելի շատ կապված է խոսացողի հետ քան թեմայի, այնպես ինչպես NIV (Նոր Միջազգային Թարգմանություն) է: Մեկնաբանության այսպիսի մոտեցումը օգտակար չէ: Հետաքրքիր է նշել, որ թե UBS⁴ և թե TEV հրատարակված են նույն կազմակերպության կողմից, բայց նրանց պարբերությունների բաժանումները տարբեր են:
5. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB)- դինամիկ հավասարազոր թարգմանություն է, հիմնված ֆրանսերեն կաթոլիկ թարգմանության վրա: Սա շատ օգտակար է համեմատած եվրոպական մոտեցման հետ պարբերությունների բաժանումների առումով:
6. 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգված թարգմանությունը (NASB), որը բառացի թարգմանություն է: Այս մեկնաբանության մեջ ես օգտվել եմ այս թարգմանությունից:

Երրորդ սկզբունք

Երրորդ սկզբունքը կայանում է Աստվածաշնչի տարբեր թարգմանություններ կարդալու մեջ, որպեսզի կարողանալ ընկալել լայնամասշտաբ հնարավոր իմաստը (իմաստային դաշտ/semantic) որ կարող են ունենալ աստվածաշնչյան բառերն ու արտահայտությունները: Հաճախ հունարեն արտահայտությունը կամ բառը կարելի է հասկանալ մի քանի ձև: Այս տարբեր թարգմանությունները օգնում են նկատել այդ առանձնահատկությունները և օգնում հասկանալ ու բացատրել հունարեն ձեռագրերի տարբերությունները: Սրանք չեն ազդում վարդապետական հարցերի վրա, բայց օգնում են մեզ ավելի մոտ լինել բնագրին:

Այս մեկնաբանությունը ուսումնասիրողին առաջարկում է մեթոդ, բավականին արագ ստուգելու իր սեփական հասկացողությունը տեքստի վերաբերյալ: Այն չի նշանակում ինչ որ միանշանակ մեկնաբանություն, այլ ավելի հակված է տալ լրացուցիչ տեղեկություն և մտաբերելու կարողություն: Հաճախ, այլ աստվածաշնչյան հնարավոր մեկնաբանություններ օգնում են մեզ ձերբազատվել սեփական տեսակետներից և չլինել այդքան սահմանափակ, դոգմատիկ և աղանդավորական: Մեկնաբանները պետք է պատկերացում ունենան հնարավորինս շատ մեկնաբանությունների մասին, որպեսզի գիտակցեն, թե որքան երկիմաստ կարող են լինել հին տեքստերը: Ապշեցուցիչ է, թե ինչքան քիչ համաձայնություն կա քրիստոնյաների միջև, որոնք իրենց համար Աստվածաշունչը հռչակում են որպես ճշմարտության աղբյուր:

Ժամանակին այս սկզբունքները օգնել են ինձ հաղթահարել շատ համոզմունքներ, բառացիորեն պարտադրելով ինձ ծայրաստիճան ուշադիր վերաբերվելու հին բնագրերին և ձեռագրերին: Հույս ունեմ, որ դրանք օրհնություն կլինեն նաև ձեզ համար:

Բոր Աթլի
Արևելյան Տեխասի Սկրտական Համալսարան
Հունիս 27, 1996

ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ԿԱՐԴԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՍՏՈՒԳՎԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Կարո՞ղ ենք մենք ճանաչել ճշմարտությունը: Որտե՞ղ է այն գտնվում: Կարո՞ղ ենք այն ստուգել տրամաբանությամբ: Կա՞ր արդյոք գերազույն հեղինակություն: Կա՞ր արդյոք իրականում ինչ որ անկասկած և կատարյալ մի բան, որը կարող է շարժել մեր կյանքը և ամբողջ աշխարհը: Ո՞րն է կյանքի իմաստը: Ինչու՞ ենք մենք այստեղ: Ու՞ր ենք գնում: Այս հարցերն այն հարցերն են, որոնց շուրջ լրջորեն խորհել են մտավորականները և որոնք հանգիստ չեն տվել մարդկային բանականությանը ժամանակի սկզբից սկսած (Ժող. 1:13-18; 3:9-11): Ես հիշում եմ իմ անձնական որոնումները իմ սեփական կյանքի կենտրոնի համար, ինչի շուրջ ամեն ինչ պետք է պտտվի: Ես Հիսուսին, որպես իմ կյանքի Տեր ու Փրկիչ ընդունել եմ փոքր հասակում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիք վկայությունների վրա: Երբ ես չափահաս դարձա, իմ և իմ աշխարհի մասին հարցերը նույնպես մեծացան: Պարզ մշակույթային և կրոնական կլիշեները իմաստ չմտցրեցին այն գործնական կյանքի փորձառության մեջ, որի մասին ես կարդացել կամ առընչվել եմ: Դա շփոթության, փնտրտուքների, կրքոտ ցանկությունների ժամանակն էր, և հաճախ անհույս լինելու զգացողությունը, որը զոյություն ուներ դաժան, իրական աշխարհում, որտեղ ես ապրում էի:

Շատերը պնդում էին, որ իրենք ունեն այս հիմնական հարցերի պատասխանները, բայց ուշադիր և երկար մտածելուց հետո, ես հայտնաբերեցի, որ այդ պատասխանները հիմնված էին (1) անձնական փիլիսոփայությունների, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառությունների, կամ (4) հոգեբանական պատկերացումների վրա: Իսկ ինձ հարկավոր էր որոշ պնդումներ, որոշակի ապացույցներ, խելացի փաստարկներ, որի վրա կարող էի կառուցել իմ աշխարհայացքը, իմ ամբողջականության կենտրոնը, իմ կյանքի իմաստը:

Ես այդ ամենը ձեռք բերեցի Աստվածաշնչի ինքնուրույն սերտողության ժամանակ: Ես սկսեցի փնտրել ապացույցներ վստահելի լինելու մասին, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական վստահելիությունը, ինչը հաստատվում էր հնէաբանների կողմից, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշգրիտ իրականացումը, (3) 1600 տարիների ընթացքում գրված աստվածաշնչյան պատգամի համաձայնեցվածությունն ու միասնականությունը, և (4) մարդկանց անձնական վկայությունները, որոնց կյանքերը ամբողջությամբ փոխվել էին Աստվածաշնչի հետ շփվելուց հետո: Քրիստոնեությունը, որպես հավատքի միացյալ համակարգ, ունի կարողություն լուծելու մարդկային կյանքի բարդ հարցերն ու խնդիրները: Այդ ամենը միասին ոչ միայն ինձ տվեց հստակ աշխարհայացքի համակարգ, այլ աստվածաշնչյան հավատքի փորձառություն, որն իմ կյանքում բերեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել էի իմ կյանքի այդ ամբողջականության կենտրոնը՝ Քրիստոսը, որին ես ճանաչեցի Սուրբ Գրքի միջոցով: Դա հիասքանչ փորձառություն էր, զգացմունքային թեթևացում: Սակայն ես մինչև հիմա հիշում եմ այն ցնցումն ու ցավը, երբ իմ առջև բացվեցին այն փաստերը, թե ինչքան շատ հիմնավորված, բայց տարբեր մեկնաբանություններ կան, երբեմն նույնիսկ նույն եկեղեցիների և աստվածաբանական դպրոցների միջև: Աստվածաշնչի ներշնչվածությունը կամ վստահելիությունը հաստատելը ընթացքի վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս կարող եմ վստահել կամ մերժել տարբեր և իարարամերժ մեկնաբանությունները հասկանալու համար շատ բարդ աստվածաշնչյան տեքստերը, եթե նրանցից ամեն մեկը առանձին ներկայացնում է դրա հեղինակությունը և վստահության արժանի լինելը:

Այս առաջադրանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հավատքի ուխտագնացությունը: Ես գիտեի, որ իմ հավատքն առ Քրիստոս բերել էր ինձ մեծ խաղաղություն և ուրախություն: Իմ միտքը փափագում էր գտնել ինչ որ բացարձակ ճշմարտություններ (1) իմ մշակույթի արժեքների հետ կապված (փոստ-մոդեռնիստական); (2) իրար բախվող կրոնական համակարգերի դոգմատիզմը (աշխարհի կրոններ); և (3) հարանվանական գոռոզամտություն: Իմ որոնումների ընթացքում իրական վստահելի մոտեցումների հին գրականության մեկնաբանության ժամանակ, ես

զարմանալի կերպով հայտնաբերեցի իմ սեփական շփոթությունները՝ պատմական, մշակույթային, հարանվանական և գործնական փորձառության հետ կապված: Ես հաճախ կարդացել եմ Աստվածաշունչը, որպեսզի գտնեմ պնդումներ իմ կարծիքների և տեսանկյունների համար: Ես օգտագործեցի այն որպես դոգմայի աղբյուր, որպեսզի գրոհեմ ուրիշների վրա, վերահաստատելով իմ սեփական անհուսալի և անկայուն կարծիքները: Այնքան ցավալի էր ինձ համար ընդունել այդ փաստը:

Չնայած, ես երբեք չեմ կարող ամբողջությամբ օբյեկտիվ լինել, ես կարող եմ Աստվածաշնչի ավելի լավ ընթերցող լինել: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները ճանաչելով և ընդունելով դրանց առկայությունը: Ես դեռևս ազատագրված չեմ դրանցից, բայց դիմադրել եմ իմ տկարությունները: Մեկնաբանը հաճախ Աստվածաշունչը ճիշտ ընթերցելու ամենավատ թշնամին է:

Թույլ տվեք ինձ, սիրելի ընթերցող, թվարկել կանխակարծիքներից մի քանիսը, որոնց վրա է հիմնված Աստվածաշնչի իմ ուսումնասիրությունը, որպեսզի դուք կարողանաք ինձ հետ միասին ստուգել դրանք:

I. Կանխակարծիքներ

Ա. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչն միակ ճշմարիտ Աստծո միակ ներշնչված հայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բուն աստվածային հեղինակի (Սուրբ Հոգու) մտադրության լույսի ներքո, մարդ-գրողների միջոցով, որոնք ապրել են որոշակի պատմական իրավիճակներում:

Բ. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է սովորական մարդու համար և բոլոր մարդկանց համար: Աստված գտավ այնպիսի միջոց, որպեսզի հստակ մեզ ասի այն ամենը, ինչ եղել է տվյալ պատմական և մշակույթային կոնտեքստի մեջ: Աստված չի թակցում ճշմարտությունը - Նա ուզում է, որ մենք հասկանանք: Ուստի, այն պետք է մեկնաբանվի այն օրերի լույսի ներքո և ոչ թե մեր օրերի: Աստվածաշունչը չպետք է մեզ համար նշանակի մի բան, որը չի նշանակել առաջին ընթերցողի կամ լսողի համար: Այն հասկանալի է ամենահասարակ մարդու համար, և իր մեջ պարունակում է սովորական մարդկային հաղորդակցության ձևեր և մեթոդներ:

Գ. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչն ունի ամբողջական, միավորված պատգամ և նպատակ: Այն չի հակասում ինքն իրեն, չնայած որ իր մեջ պարունակում է դժվար և պարադոքսալիկ հատվածներ: Այսպիսով, Աստվածաշնչի լավագույն մեկնաբանը հենց ինքն՝ Աստվածաշունչն է:

Դ. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (բացի մարգարեություններից) ունի մեկ և միայն մեկ իմաստ՝ հիմնված բուն, ներշնչված հեղինակի մտադրության վրա: Չնայած մենք երբեք չենք կարող բացարձակ վստահ իմանալ հեղինակի մտադրությունը, շատ ցուցիչներ կօգնեն մեզ որոշել դրանք.

1. գրական ժանրը՝ ընտրված պատգամի փոխանցման համար
2. պատմական կոնտեքստը և/կամ որևէ իրավիճակ, որը առիթ է հանդիսացել տեքստը գրելու համար
3. ամբողջ գրքի գրական կոնտեքստը, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժին
4. գրական բաժինների կառուցվածքի ուրվագիծը կամ պլանը, կապված ամբողջ պատգամի հետ
5. յուրահատուկ քերականական առանձնահատկություններ պատգամը փոխանցելու համար
6. ընտրված բառեր՝ պատգամը ներկայացնելու համար
7. զուգահեռ հատվածներ


Այս պահերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը միանգամայն անհրաժեշտ է աստվածաշնչյան տեքստի ուսումնասիրության համար: Բայց նախքան Աստվածաշնչի ճիշտ

ընթերցանության իմ մեթոդը բացատրելը, թույլ տվեք նկարագրել մի քանի ոչ պիտանի մեթոդներ, որոնք օգտագործվում են մեր օրերում, ստեղծելով մեկնաբանության բազմազանություն, որոնցից պետք է համառոտեն խուսափել:


II. Անհամապատասխան կամ ոչ պիտանի մեթոդներ

- Ա. Անտեսելով աստվածաշնչյան գրքերի գրական կոնտեքստը, և օգտագործելով յուրաքանչյուր նախադասություն, արտահայտություն կամ նույնիսկ առանձին բառեր, իբրև հաստատված ճշմարտություն, որը ոչ մի կապ չունի հեղինակի մտադրության կամ ավելի լայն կոնտեքստի հետ: Սա հաճախ կոչվում է «անհրաժեշտ ապացույցներ տեքստի մեջ»:
- Բ. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, փոխարինելով ենթադրյալ պատմական կոնտեքստով, որն ունի շատ քիչ կամ ընդհանրապես չունի հիմք բուն տեքստից:
- Գ. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, այն կարդալ որպես առավոտյան լրագիր, որը հիմնականում գրված է ժամանակակից անհատ քրիստոնյաների համար:
- Դ. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, փորձել այլաբանորեն մեկնաբանել այն, փոխելով տեքստի իմաստը փիլիսոփայական/աստվածաբանական քննարկման, որը ոչ մի կապ չունի առաջին ունկնդիրների և բուն հեղինակի մտադրությանը:
- Ե. Անտեսելով ուղերձի իմաստը, փոխարինելով ինչ որ մեկի սեփական աստվածաբանական համակարգի հետ, սիրած վարկածի կամ կենսական նպատակահարմարությամբ, որը ոչ մի կապ չունի բուն հեղինակի նպատակի և պատգամի իրական իմաստի հետ: Այսպիսի բան հաճախ պատահում է Աստվածաշնչի սկսնակ ընթերցողների հետ, օգտագործելով այս օրինակը սեփական հեղինակությունը պնդելու համար: Սա հաճախ վերաբերվում է որպես «ընթերցողի արձագանքը» (ինչ է այն նշանակում ինձ համար) մեկնաբանությանը:

Բոլոր գրավոր ինֆորմացիայի մարդկային հաղորդակցության մեջ գոյություն ունի ամենաքիչը երեք կապակցված բաղադրիչներ:



Անցյալում Աստվածաշնչի ընթերցանության տարբեր մեթոդներ կենտրոնացել են երեք բաղադրիչներից մեկի վրա: Բայց որպեսզի իրապես հաստատվի Աստվածաշնչի եզակի ներշնչվածությունը, այս սխեման ավելի հարմար է:



Իրականում, բոլոր երեք բաղադրիչները պետք է ներգրավված լինեն մեկնաբանության գործընթացի մեջ: Երբ իմ առջև դրված է առաջադրանք, գտնել ինչ որ մի բանի պնդում, իմ ամբողջ մեկնաբանությունը կենտրոնացվում է առաջին երկու բաղադրիչների վրա՝ բուն հեղինակը և տեքստը: Հնարավոր է այս ամենի մեջ կիսով չափ առկա է իմ ոչ ճիշտ գործածումը, որի հետ ես ստիպված եմ եղել բախվել (1) տեքստերին չհիմնավորված այլաբանական կամ հոգևոր իմաստ տալ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանություն (ինչ է այն նշանակում ինձ համար): Չարաշահում կարող է ծագել յուրաքանչյուր փուլում: Մենք միշտ պետք է ստուգենք մեր շարժառիթները, համոզմունքները, ուսումնասիրության մեթոդները և գործնական կիրառությունները: Բայց ինչպե՞ս այս ամենը հսկել, եթե չդրվի մեկնաբանության հստակ սահմաններ, հստակ չափանիշներ: Եվ հենց այս իրավիճակում է հեղինակի մտադրությունը և տեքստի կառուցվածքը ներկայացնում են մի շարք չափանիշներ, որոնք թույլ են տալիս ինձ որոշել հնարավոր մեկնաբանության թույլատրելի սահմանները:

Այսպիսով Աստվածաշնչի ընթերցանության այս ոչ պիտանի մեթոդների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության և մեկնաբանության այն մի քանի հնարավոր մոտեցումները, որոնք տալիս են որոշակի վստահության աստիճան և տրամաբանորեն չեն հակասում իրար:

III. Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության հնարավոր մեթոդները

Այստեղ ես չեմ քննարկում մեկնաբանության հատուկ ժանրերի յուրահատուկ մեթոդներ, այլ ներկայացնում եմ ընդհանուր հերմենևտիկական սկզբունքներ, որ ընդունելի են ամեն տեսակ աստվածաշնչյան տեքստերի համար: Լավ գիրք է տարբեր ժանրերի մեկնաբանության առանձնահատկությունների մասին «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր բոլոր արժեքներով» Գորդոն Ֆի և Դուգլաս Ստուարտ, տպագրված Չոնդերվան» (*How To Read The Bible For All Its Worth*, by Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդի մեջ, նախևառաջ, կենտրոնանում եմ այն ընթերցողի վրա, ով ինքնուրույն չորս անգամ կարդում է աստվածաշնչյան տեքստը, և ամեն անգամ թույլ տալիս, որ Սուրբ հոգին մեկնաբանի դրա նշանակությունը: Այդ կերպ, Սուրբ Հոգին տեքստը և ընթերցողը հայտնվում են առաջին տեղում և ոչ թե երկրորդական: Այս մոտեցումը նաև պաշտպանում է ընթերցողին մեկնաբանների կողմից հասցվելիք մեծ ներգործությունից: Մի անգամ այսպիսի արտահայտություն եմ լսել «Աստվածաշունչը շատ լույս է սփռում մեկնաբանությունների վրա»: Եվ սա չի նշանակում, որ տեքստի ուսումնասիրության համար բավարար չեն մեկնաբանությունները, բայց դրանք կարելի է օգտագործել զգույշ և համապատասխան ժամանակին:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնաբանությունների համար պնդումներ գտնել հենց տեքստից: Վեց բնագավառներ, որոնք տալիս են մեզ, համեմայնդեպս, որոշակի վստահություն:

1. հեղինակի
 - ա. պատմական կոնտեքստը
 - բ. գրական կոնտեքստ
2. հեղինակի կողմից ընտրված
 - ա. քերականական կառուցվածքներ (շարահյուսություն)
 - բ. այն ժամանակվա բառային կիրառությունը
 - գ. ժանր
3. մեր հասկացողությունը
 - ա. համապատասխան գույախեռ հատվածներ

Մեր մեկնաբանությունը պետք է լինի բանական և տրամաբանական: Աստվածաշունչը մեր միակ հավատքի և ճիշտ գործնական ապրելակերպի աղբյուրն է: Ցավալի է, որ քրիստոնյաները հաճախ չեն համաձայնվում այն բանի հետ, ինչ սովորեցնում է Աստվածաշունչը, կամ ինչ որ նա

պնդում է: Այդ դեպքում մենք մեզ դատապարտության ենք ենթարկում, եթե մի կողմից մենք համառորեն պնդում ենք նրա ներշնչված լինելը, բայց անմիջապես հայտարարում ենք, որ հավատացյալները չեն կարող համաձայնվել Սուրբ Գրքի հստակ ուսմունքի կամ պահանջների հետ:

Ընթերցանության չորս շրջանները անհրաժեշտ են այն բանի համար, որ կարողանանք տեսնել բոլոր անհրաժեշտ առանձնահատկությունները ճիշտ մեկնաբանելու համար.

Ա. Ընթերցանության առաջին շրջան

1. Մեկ շնչով կարդացեք գիրքն ամբողջությամբ: Կարդացեք այն ևս մեկ անգամ ուրիշ թարգմանությունով, ցանկալի է ուրիշ թարգմանության տեսության տեսանկյունից
ա. բառացի (NKJV, NASB, NRSV)
բ. դինամիկ հավասարազոր (TEV, JB)
գ. վերապատմում (Living Bible, Amplified Bible)
2. Գտեք ամբողջ գրվածքի կենտրոնական նպատակը: Որոշեք նրա թեման:
3. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական բաժինը, գլուխը, պարբերությունը կամ նախադասությունը, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման:
4. Որոշեք ստեղծագործության գրական ժանրը
ա. Հին Կտակարան
(1) Եբրայերեն պատմություն
(2) Եբրայերեն պոեզիա (իմաստուն գրականություն, սաղմոս)
(3) Եբրայերեն մարգարեություն (արձակ, բանաստեղծական)
(4) Օրենսգիրք
բ. Նոր Կտակարան
(1) Պատմություններ (Ավետարաններ, Գործք)
(2) Առակներ (Ավետարաններ)
(3) Նամակներ/թղթեր
(4) Վախճանաբանական գրականություն

Բ. Ընթերցանության երկրորդ շրջան

1. Նորից կարդացեք գիրքն ամբողջությամբ, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ քննարկվող հարցերը:
2. Ընդգծեք գլխավոր թեմաները, մեկ նախադասությամբ շարադրեք դրանց բովանդակությունները:
3. Համեմատեք ձեր եզրակացությունը այս ամենի մասին սերտողության գրականության հետ:

Գ. Ընթերցանության երրորդ շրջան

1. Նորից կարդացեք գիրքն ամբողջությամբ, փորձելով գտնել պատմական իրավիճակը և հատուկ իրավիճակը, որն առիթ է հանդիսացել այդ գիրքը գրվելու համար:
2. Թվարկեք պատմական առանձնահատկությունները, որոնք նշված են տվյալ Աստվածաշնչի տվյալ գրքում
ա. հեղինակը
բ. գրվելու տարեթիվը
գ. ում համար է գրվել
դ. ինչի համար է գրվել
ե. մշակույթային կոնտեքստի առանձնահատկությունները, որոնք կապված են գրվելու նպատակի հետ
զ. ակնարկ պատմական մարդկանց և իրադարձությունների մասին
3. Ընդարձակեք ձեր ուսումնասիրությունը պարբերության մակարդակի վրա և հատկապես գրքի այն հատվածը, որն ուզում եք մեկնաբանել: Միշտ գտեք և ընդգծեք

գրական բաժինը: Սա կարող է լինել մի քանի գլուխներ կամ պարբերություններ: Դա կօգնի ձեզ հասկանալ հեղինակի տրամաբանությունն ու տեքստի կառուցվածքը:

4. Ստուգեք պատմական իրավիճակի մասին ձեր եզրակացությունները՝ օգտագործելով տեղեկատու ձեռնարկներ:

Դ. Ընթերցանության չորրորդ շրջան

1. Կարդացեք ուսումնասիրվող հատվածը կրկին մի քանի թարգմանություններով
 - ա. բառացի (NKJV, NASB, NRSV)
 - բ. դինամիկ հավասարագոր (TEV, JB)
 - գ. վերապատմում (Living Bible, Amplified Bible)
2. Փնտրեք գրական կամ քերականական կառուցվածքներ
 - ա. կրկնվող արտահայտություններ, Եփ. 1:6,12,13
 - բ. կրկնվող քերականական կառուցվածքներ, Հռ. 8:31
 - գ. հակասող գաղափարներ
3. Պարզեք հետևյալ պահերը
 - ա. կարևոր, բանալի տերմիններ
 - բ. անսովոր տերմիններ
 - գ. կարևոր քերականական կառուցվածքներ
 - դ. բարդ բառեր, արտահայտություններ և նախադասություններ
4. Փնտրեք համապատասխան զուգահեռ հատվածները
 - ա. փնտրեք ամենահատակ ուսուցանող հատվածը ձեր թեմային համապատասխան, օգտվելով
 - (1) «սխտեմատիկ աստվածաբանություն» գրքերից
 - (2) ուսուցողական Աստվածաշնչեր մեկնաբանություններով և տեղեկատվական նյութերով
 - (3) համաբարբառներից
 - բ. Փնտրեք հնարավոր պարաֆրասային զույգեր նույն թեմային պատկանող: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ կան «դիալեկտիկական զույգերի» մեջ; հարանվանական շատ բախումներ առաջանում են տեքստը կիսով չափ ընդունելու համար: Ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և մենք պետք է փնտրենք ամբողջ պատգամը որպեսզի պահենք մեր մեկնաբանության մեջ սուրբգրային հավասարակշռությունը:
 - գ. Փնտրեք զուգահեռներ նույն գրքի մեջ, նույն հեղինակի մոտ և նույն ժանրի տեքստերի մեջ; Աստվածաշունչը իր իսկ սեփական լավագույն մեկնաբանն է, որովհետև այն ունի մեկ հեղինակ՝ Սուրբ Հոգին:
5. Օգտվեք լրացուցիչ ուսուցողական նյութերից, ստուգելու համար ձեր դիտարկումները պատմական կոնտեքստի և կոնկրետ դեպքի շուրջ, կապված գիրքը գրելու հետ
 - ա. ուսուցողական Աստվածաշնչեր
 - բ. աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
 - գ. աստվածաշնչյան ներածություններ
 - դ. աստվածաշնչյան մեկնաբանություններ (այս փուլում թույլ տվեք հավատացյալներին անցյալի և ներկայի օգնել ձեզ և ուղղել ձեր անձնական սերտողությունը):

IV. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Հիմա մենք կնայենք կիրառության հարցերին: Դուք բավականին ժամանակ ծախսեցիք, որպեսզի հասկանաք տեքստի սկզբնական նշանակությունը; հիմա ձեր առջև դրված է

առաջադրանք դա ճիշտ կիրառել ձեր կյանքում, ձեր մշակույթում: Ես որոշում եմ աստվածաշնչյան տեքստ հեղինակությունը որպես «այն բանի հասկացողություն, թե ինչ է ասել հեղինակն իր ժամանակին, և դրա կիրառությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բուն հեղինակի մտադրության մեկնաբանությանը, թե ժամանակի մեջ և թե տրամաբանությամբ: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի հատվածը մեր օրերում մինչև որ չհասկանանք թե ինչ նշանակություն ունեն դա այն ժամանակվա մարդկանց համար, ում համար որ գրվել է դա: Չի կարելի աստվածաշնչյան տեքստին իմաստ տալ, որը երբեք չի բովանդակել:

Այստեղ ձեր ուղեցույցը կլինի մանրամասն ուսումնասիրությունը պարբերությունների մակարդակով (ընթերցանության ցիկլ #3): Կիրառությունը պետք է կատարվի պարբերության մակարդակով և ոչ թե բառի: Բառերն ունեն նշանակություն միայն կոնտեքստում, արտահայտություններն ունեն իմաստ միայն կոնտեքստում, նախադասություններն ունեն իմաստ միայն կոնտեքստում: Միակ ներշնչված անձը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում դա բուն հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Սուրբ Հոգու լուսավորությամբ: Բայց լուսավորումը ներշնչանք չէ: «Այսպես է ասում Տերը» ասելու համար մենք պետք է ամբողջությամբ ենթարկվենք բուն հեղինակի մտադրությանը: Կիրառությունը պետք է կապված լինի հիմնականում ամբողջ գրվածքի, հատուկ գրական բաժնի և պարբերության մակարդակի մտքի զարգացումը ընդհանուր մտադրության հետ:

Թույլ մի տվեք մեր օրերի խնդիրներն ու պահանջները մեկնաբանեն Աստվածաշունչը, թող Աստվածաշունչը խոսի: Իհարկե, դա մեզանից շատ ջանք է պահանջում, որ կարողանանք տեքստից սկզբունքներ քաղել: Եվ դրանք կգործեն միայն այն ժամանակ, երբ տեքստը հաստատի դա: Դժբախտաբար, շատ անգամ մեր սկզբունքներից շատերը հենց «մերն են», և ոչ թե այն ինչ տեքստն իրականում պարունակում է:

Աստվածաշունչը կիրառելու ժամանակ, շատ կարևոր է հիշել, որ (բացի մարգարեությունից) ամեն մի աստվածաշնչյան տեքստ ունի միայն մեկ իմաստ: Այդ իմաստը կապված է բուն հեղինակի մտադրությանը, որը ներկայացնում է իր օրերի ճգնաժամներն ու կարիքները: Շատ հնարավոր կիրառություններ կարող են դուրս բերվել այս մեկ իմաստից: Տեքստի կիրառությունը հիմնված կլինի կոնկրետ մարդկանց կարիքներից, բայց պետք է կապված լինի բուն հեղինակի տված իմաստին:

V. Սուրբ Հոգու դերը մեկնաբանության մեջ

Մինչև այս պահը ես քննարկել եմ տրամաբանական և տեքստային գործընթացը, որպես կարևոր հիմք՝ աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու և կիրառելու համար: Հիմա թույլ տվեք համառոտ շարադրել մեկնաբանության գործընթացի հոգևոր կողմը: Այստեղ ինձ շատ են օգնում հետևյալ քայլերը

Ա. Աղոթք Սուրբ Հոգու օգնության համար (հմմտ. I Կոր. 1:26-2:16).

Բ. Աղոթք անձնական ներման և գիտակցական մեղքից մաքրվելու համար (հմմտ. I Հովհ. 1:9).

Գ. Աղոթք Աստծուն ճանաչելու մեծ ցանկություն ունենալու համար (հմմտ. Սաղ. 19:7-14; 42:1; 119:1).

Դ. Բացահայտված ճշմարտության անհապաղ կիրառում քո սեփական կյանքում

Ե. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Շատ դժվար է պահել հավասարակշռությունը տրամաբանական գործընթացի և Սուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև: Հետևյալ մեջբերումներն օգնել են հավասարակշռության մեջ պահել այդ երկուսը

Ա. Ջեյմս ՈՒ. Սայր «Սուրբ Գրքի Աղավաղում», էջ 17-18 (James W. Sire, *Scripture Twisting*, pp. 17-18):

«Լուսավորումը պայծառացնում է բոլոր Աստծո ժողովրդի միտքը, և ոչ թե միայն ինչ որ հոգևոր բարձր խավի: Աստվածաշնչյան քրիստոնեության մեջ չկա գուրու

դասակարգ, ոչ հատուկ լուսավորվածներ, ոչ հատուկ մարդիկ, որոնց միջոցով է միայն ճիշտ մեկնաբանությունը տրվում: Եվ քանի որ Սուրբ Հոգին է տալիս հատուկ պարզևներ իմաստության, գիտության և հոգևոր խորաթափանցության, Նա չի նշանակում այդ պարզևներով օժտված քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր մեկնաբանողները: Բայց Իր ժողովրդից ամեն մեկը պատասխանատու է սովորելու, խորհելու և մտածելու ամեն ինչ Աստվածաշնչի միջոցով, որը հեղինակություն է բոլորի համար և նաև նրանց համար, ում Աստված տվեց բացառիկ կարողություններ: Ամփոփելով ասեմ, որ ամբողջ այս գրքի ընթացքում ես պնդում եմ, որ Աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն է ամբողջ մարդկությանը, այն հանդիսանում է անձեռնմխելի հեղինակություն ամեն ինչում, ինչի մասին որ խոսում է, որ այն չբացահայտված գաղտնիք չէ, բայց կարող է բավականին լավ հասկանալի լինել սովորական մարդու համար՝ ցանկացած մշակույթ ներկայացնող»:

Բ. Կյորկեգորա, Բերնարդ Ռամ «Բողոքական Աստվածաշնչյան մեկնաբանություն», էջ 75 (Kierkegaard, found in Bernard Ramm, *Protestant Biblical Interpretation*, p. 75):

Համաձայն Կյորկեգորայի Աստվածաշնչի քերականական, լեքսիկոնային և պատմական սերտողությունը անհրաժեշտ էր, բայց նախևառաջ կարևոր է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: « Որպեսզի Աստվածաշունչը կարդացվի որպես Աստծո Խոսք, պետք է կարդալ այն սաստիկ վախենալով, ծածուկ, լարված սպասումով, Աստծո հետ հարաբերություն ունենալով: Աստվածաշունչ կարդալ չմտածելով կամ անփութորեն, կամ ակադեմիական և մասնագիտական մոտեցմամբ, նշանակում է Աստվածաշունչը չկարդալ որպես Աստծո Խոսք: Բայց երբ մարդը կարդում է այն, որպես սիրային նամակ, այդժամ նա իրականում կարդում է այն որպես Աստծո Խոսք»:

Գ. Հ.Հ. Ռոլուեյ «Աստվածաշնչի պատշաճությունը», էջ 19 (H. H. Rowley in *The Relevance of the Bible*, p. 19):

«Աստվածաշնչի ոչ մի մտային հասկացություն, որքան էլ որ այն ամբողջական լինի» չի կարող բացահայտել նրա բոլոր գանձերը: Այսպիսի հասկացողությամբ չի կարելի չարաշահել, քանի որ այն հանդիսանում է անհրաժեշտ բաղկացուցիչ մասը, որը ապահովում է ամբողջական հասկացողությունը: Բայց, որպեսզի ամբողջական լինի, այն պետք է հոգևոր գանձերը առաջնորդի հոգևոր հասկացողության: Իսկ հոգևոր հասկացողության համար անհրաժեշտ է ավելին քան միայն մտային զգոնությունը: Հոգևոր բաները կարելի է տեսնել միայն հոգևոր տեսողությամբ, դրա համար Աստվածաշունչ ուսումնասիրող մարդը պետք է գտնվի հոգևոր զգայունության իրավիճակում, ունենա խիստ փափագ Աստծուն փնտրելու, որպեսզի իրեն հանձնի Աստծուն, եթե նա ուզում է անցնել իր գիտական հետազոտությունը այս ամենահարուստ ժառանգության բացահայտմանը հասնելով»:

VI. Այս մեկնաբանության մեթոդը

«Մեկնաբանության ուղեցույց»-ը նախատեսված է Աստվածաշնչի ձեր մեկնաբանության գործընթացի մեջ օգնել ձեզ հետևյալ կերպ

Ա. Հակիրճ պատմական ակնարկ, որը ներկայացնում է աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրք: «Ընթերցանության #3 շրջանը» անելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:

Բ. Յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացվում է կոնտեքստի տեսությունը: Սա կօգնի ձեզ տեսնելու, թե ինչ կառուցվածք ունի գրական բաժինը:

Գ. Յուրաքանչյուր գլխի կամ գրական բաժնի սկզբում պարբերության բաժանումները և պատկերավոր վերադրումները ներկայացված են մի քանի ժամանակակից թարգմանություններով

1. Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերստուգված սրբագրություն, հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից (UBS⁴)
2. 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB),
3. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV)
4. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV)
5. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV)
6. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն: Նրանք պետք է հաստատվեն կոնտեքստի հիման վրա: Համեմատելով մի քանի ժամանակակից թարգմանություններ, որոնք կատարված են տարբեր թարգմանչական տեսությունների և աստվածաբանական տեսանկյուններից, մենք կարող ենք վերլուծել բուն հեղինակի մտքի ենթադրյալ կառուցվածքը: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ գլխավոր ճշմարտություն: Սա կոչվել է «գլխավոր թեմա» կամ «տեքստի կենտրոնական միտք»: Այս միացնող միտքը բանալին է ճիշտ պատմական և քերականական մեկնաբանության: Երբեք չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել հիմնվելով մեկ պարբերությունից փոքր հատվածի վրա: Նաև հիշեք, որ յուրաքանչյուր պարբերություն կապված է իրեն շրջապատող պարբերությունների հետ: Ահա թե ինչու պարբերության համար կարևոր է ունենալ ամբողջ գրքի պլանը: Մենք պետք է կարողանանք հետևել թեմայի տրամաբանական զարգացմանը ըստ ներշնչված հեղինակի:

Դ. Բոք Ատլեի մոտեցումն այսպիսին է, որ ճիշտ մեկնաբանություն ստանալու համար պետք է կատարել համար առ համար սերտողություն: Սա ստիպում է մեզ հետևել բուն հեղինակի մտքերին: Նշումները մեզ օգտակար տեղեկություն են տալիս մի քանի բաժիններում, դրանք են՝

1. գրական կոնտեքստ
2. պատմական, մշակույթային առանձնահատկություններ
3. քերականական ինֆորմացիա
4. բառային սերտողություն
5. կարևոր գույքահեռ հատվածներ

Ե. Որոշակի դեպքերում մեկնաբանության մեջ, 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB), լրացված է մի քանի այլ ժամանակակից թարգմանությունների հղումներով:

1. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV), -սա բառացի թարգմանություն է, հիմնված հին հունարեն ձեռագրերի ավանդության վրա, որը կոչվում է *Textus Receptus* (համընդհանուր ընդունված տեքստ):
2. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV), որը բառացի տարբերակն է Եկեղեցիների Ազգային Խորհրդի կողմից, որը վերստուգված Ստանդարտ Թարգմանությունն է:
3. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV), դինամիկ հավասարազոր թարգմանություն է հրատարակված ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից:
4. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB), որը անգլերեն թարգմանություն է հիմնված ֆրանսերեն կաթոլիկ դինամիկ հավասարազոր թարգմանության վրա

Ձ. Նրանք, ովքեր հունարեն կարդալ չեն կարող, համեմատելով անգլերեն թարգմանությունները կկարողանան լուծել շատ խնդիրներ, որոնց հետ առընչվում են տեքստն ուսումնասիրելու ժամանակ

1. ձեռագրային տարբերակներ
2. բազմիմաստ բառեր
3. քերականորեն բարդ տեքստեր և կառուցվածք
4. երկիմաստ, անորոշ տեքստեր

Չնայած անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, նրանք նշում են տեքստի այն հատվածները, որոնք պահանջում են ավելի խորը և մանրակրկիտ ուսումնասիրություն:

Է. Յուրաքանչյուր գլխի վերջում կան կարևոր հարցեր քննարկման համար, որոնք կօգնեն կենտրոնացնել ձեր ուշադրությունը այդ գլխի ընդհանուր թեմաների մեկնաբանության արդյունքների վրա:

ՀՈՈՄԵԱՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՎԱԾ ԹՂԹԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

- Ա. Հռոմեացիներին ուղղված թուղթը Պողոս Առաքյալի ամենաախտեմատիկ և տրամաբանական վարդապետական գիրքն է: Հռոմում տիրող հանգամանքները պատճառ հանդիսացան, որ Պողոսը գրեր այս թուղթը, ուստի այն հանդիսանում է «հատուկ առիթով գրված» փաստաթուղթ: Հնարավոր է, ինչ որ բան էր պատահել, որը պատճառ դարձավ, որ Պողոսը գրեր այս նամակը: Ինչևէ, այն Պողոսի գրվածքներից ամենաչեզոքն է, որի մեջ Պողոսը առընչվում է մի խնդրի (հավանական է նախանձություն կար հավատացյալ հրեաների և հեթանոս առաջնորդների միջև), նրա ավետարանի պարզ ներկայացումն էր և դրա նշանակություններն առօրյա կյանքում:
- Բ. Թե, ինչպես է Պողոսը ներկայացնում ավետարանը Հռոմեացիներին ուղղված թղթում, իր ներգործությունն է ունեցել եկեղեցու կյանքի վրա բոլոր ժամանակաշրջաններում:
1. Օգոստոսը դարձի եկավ 386 Ք.Հ. կարդալով Հռ. 13:13-14
 2. Մարտին Լյութերի հասկացողությունը փրկության վերաբերյալ արմատապես փոխվեց 1513 Ք.Հ., երբ նա համեմատեց Սաղ. 31:1-ը Հռ. 1:17-ի հետ (հմմտ. Ամբ. 2:4):
 3. Ջոն Վեսլին դարձի եկավ 1738 Ք.Հ.՝ լսելով Լյութերի քարոզը Հռոմեացիներին ուղղված թղթի ներածության մասին:
- Գ. Իմանալ Հռոմեացիներին ուղղված թուղթը նշանակում է իմանալ քրիստոնեությունը: Նամակը ձևավորում է Հիսուսի կյանքի և ուսմունքների հիմնական ճշմարտությունները՝ Եկեղեցու համար բոլոր ժամանակներում:

ՀԵՂԻՆԱԿ

Անկասկած՝ Պողոսն է հեղինակը: Նրան հատուկ ողջույնի խոսքը գտնվում է 1:1. Ընդհանրապես շատերը համաձայն են այն մտքի հետ, որ Պողոսի «խայթոցը» վատ տեսողությունն էր, ուստի ֆիզիկապես նա չի գրել այս նամակը, այլ օգտագործել է դպիր Տերտիուսին (հմմտ. 16:22):

ՏԱՐԵԹԻՎ

- Ա Հռոմեացիներին ուղղված թղթի հավանական տարեթիվը Ք.Հ. 56-58: Սա Նոր Կտակարանի այն սակավ գրքերից է, որի տարեթիվը կարող ենք իմանալ ճշգրտորեն: Սա արվում է Գործք 20:2 համեմատելով Հռ. 15:17: Հռոմեացիներին ուղղված թուղթը հավանական է գրվել է Կորնթոսում, Պողոսի երրորդ միսիոներական ճանապարհորդության ժամանակ, մինչև Երուսաղեմ վերադառնալը:
- Բ. Պողոսի գրվածքների հնարավոր ժամանակագրությունը համաձայն Բրյուս Ֆ. Ֆ. և Մյուրի Հարիս (F. F. Bruce and Murry Harris) աննշան ուղղումներով:

<u>Գիրք</u>	<u>Տարեթիվ</u>	<u>Գրելու վայրը</u>	<u>Կապը Գործք Առաքելոց գրքի հետ</u>
1. Գաղատացիս	48	Սիրիայի Անտիոք	14:28; 15:2
2. I Թեսաղոնիկեցիս	50	Կորնթոս	18:5
3. II Թեսաղոնիկեցիս	50	Կորնթոս	
4. I Կորնթացիս	55	Եփեսոս	19:20
5. II Կորնթացիս	56	Մակեդոնիա	20:2
6. Հռոմեացիս	57	Կորնթոս	20:3
7.-10. Նամակներ բանտից Կողոսացիս	վաղ 60-ականներին		
Եփեսացիս	վաղ 60-ականներին	Հռոմ	
Փիլիմոն	վաղ 60-ականներին		
Փիլիպեցիս	62-ի վերջում-63		28:30-31
11.-13. Չորրորդ միսիոներական ճանապարհորդություն			
I Տիմոթեոս	63 (կամ ավելի ուշ,	Մակեդոնի	
Տիտոս	63 բայց մինչև	Եփեսոս(?)	
II Տիմոթեոս	64 Ք.Հ. 68)	Հռոմ	

ՈՒՄ Է ՈՒՂՂՎԱԾ ԹՈՒՂԹԸ

Նամակում պարզ ասվում է, որ այն հասցեագրված է Հռոմին: Սակայն մենք չգիտենք, թե ո՞վ է հիմնել Հռոմի եկեղեցին;

Ա. Հնարավոր է դրանք այն մարդիկ էին, ովքեր եղել էին Երուսաղեմում Պենտեկոստի օրը և դարձի եկել ու վերադառնալով տուն՝ հիմնել եկեղեցի (հմմտ. Գործք 2:10):

Բ. Հնարավոր է, որ դրանք աշակերտներն էին, որոնք փախել էին Երուսաղեմի հալածանքներից՝ Ստեփանոսի մահից հետո (հմմտ. Գործք 19:21): կամ

Գ. Նրանք կարող է Պողոսի միսիոներական ճանապարհորդության արդյունքում դարձի եկած նորադարձները լինել, որոնք այնուհետև այցելեցին Հռոմ: Պողոսը երբեք չէր եղել այդ եկեղեցում, բայց նա փափագում էր լինել այնտեղ (հմմտ. Գործք 19:21): Այնտեղ նա շատ ընկերներ ուներ (հմմտ. Հռ. 16):

Ըստ երևույթին նրա ծրագրում կար այցելել Հռոմ՝ Իսպանիա գնալու ճանապարհին (հմմտ. Հռ. 15:28) «սիրո ընձաններով» լի Երուսաղեմ ճամփորդելուց հետո: Պողոսը զգում էր, որ իր ծառայությունը արևելյան Միջերկրականում ավարտված էր: Նա միսիոներական նոր դաշտեր էր փնտրում (հմմտ. 15:20-23): Պողոսի նամակը Հունաստանից Հռոմ տանողը, հավանական է եղել է Փիբե սարկավագուհին, որը ճամփորդում էր այդ ուղղությամբ (հմմտ. Հռ. 16:1): Ինչու՞ այս նամակը, որը գրվել է առաջին դարում, Կորնթոսի հետին փողոցներից մեկում ապրող մի հրեա վրանագործի կողմից, այդքան արժեքավոր է: Մարտին Լյութերը այն կոչեց «Նոր Կտակարանի գլխավոր գիրքը և անաղարտ Ավետարանը»: Այս գրքի արժեքը գտնվում է այն փաստի մեջ, որ ավետարանի բացատրության խորության մեջ դարձի եկած բաբբիի կողմից, Սողոսը Թարսիսից, կանչված հեթանոսներին առաքյալ լինելու: Պողոսի նամակներից շատերը խիստ գունազարդված են տեղական եկեղեցու իրավիճակով և ոչ թե Հռոմի: Դա առաքյալի մինչև կյանքի վերջը տևող հավատքի սիստեմատիկ ներկայացումն է:

Դու հասկացա՞ր, քրիստոնյա ընկեր, որ շատ տեխնիկական տերմիններ, որ այսօր օգտագործվում են «հավատքը» նկարագրելու համար («արդարացում», «մեղսագրում», «որդեգրում», և «սրբացում») գալիս է հռոմեերենից: Աղոթիր Աստծուն, որ բաց անի քեզ համար այս սքանչելի նամակը, մինչ մենք միասին Նրա կամքն ենք փնտրում մեր կյանքերի համար այսօր:

ՆՊԱՏԱԿԸ

Ա. Օգնության խնդրանք դեպի Իսպանիա իր միսիոներական ճանապարհորդության համար: Պողոսը տեսավ, որ իր առաքելական աշխատանքը արևելյան Սիջերկրականում ավարտված է (հմմտ. 16:20-23):

Բ. Ուղղել խնդիրը Հռոմի եկեղեցում հրեա հավատացյալների և հեթանոս հավատացյալների միջև: Հավանական է, որ սա բոլոր հրեաների արտաքսումն էր Հռոմից և նրանց հետագա վերադարձը: Մինչև այն ժամանակը Հրեա քրիստոնյա առաջնորդները փոխարինվել էին հեթանոս քրիստոնյա առաջնորդներով:

Գ. Ծանոթացնել իրեն Հռոմի եկեղեցուն: Պողոսի դեմ շատ հակառակություն կար անկեղծ հրեա նորադարձների կողմից Երուսաղեմում (Երուսաղեմի խորհուրդը Գործք 15), անազնիվ հրեաների կողմից (հուդայականները Գաղատացիս և 2 Կորնթ. 3, 10-13) և հեթանոսների կողմից (Կողոսացիս, Եփեսացիս) ովքեր փորձում էին ավետարանը խառնել իրենց սիրելի թեորիաների կամ փիլիսոփայությունների հետ:

Դ. Պողոսը մեղադրվում էր վտանգավոր նորարար լինելու համար, Հիսուսի ուսմունքին անխոհեմորեն ավելացնելով: Հռոմեացի թուղթը իրեն սիստեմատիկորեն պաշտպանելու կերպն էր ցույց տալով թե որքան ճշմարիտ էր իր ավետարանը, օգտագործելով Հին Կտակարանը և Հիսուսի ուսմունքները (Ավետարանները):

ՀԱՍՏԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ

Ա. Ներածություն (1:1-17)

1. Ողջույն (1:1-7)
 - ա. Հեղինակ (1-5)
 - բ. Կոչում, նպատակ (6-7ա)
 - գ. Ողջույն (7բ)
2. Պատճառ, առիթ (1:8-15)
3. Թեմա (1:16-17)

Բ. Աստվածային Արդարության Կարիքը (1:18-3:20)

1. Հեթանոս աշխարհի անկումը, հրաժարվելը (1:18-32)
2. Հրեաների կամ հեթանոս բարոյականների կեղծավորությունը (2:1-16)
3. Հրեաների դատաստանը (2:17-3:8)
4. Համընդհանուր/Տիեզերական դատապարտություն (3:9-20)

Գ. Ի՞նչ է Աստվածային Արդարությունը (3:21-8:39)

1. Արդարությունը միայն հավատքով է (3:21-31)
2. Արդարության հիմքը: Աստծո խոստումը (4:1-25)
 - ա. Աբրահամի ճիշտ դիրքը (4:1-5)

- բ. Դավիթ (4:6-8)
- գ. Աբրահամի կապը թլփատության հետ (4:9-12)
- դ. Աստծո խոստումը Աբրահամին (4:13-25)
- 3. Արդարության ձեռք բերումը (5:1-21)
 - ա. Ուղղական կերպը: անարժան սեր, անհավասար ուրախություն (5:1-5)
 - բ. Օբյեկտիվ հիմքը: Աստծո զարմանահրաշ սերը (5:6-11)
 - գ. Ադամ/Քրիստոս նախատիպ: Ադամի օրինազանցությունը, Աստծո նախապատրաստումը (5:12:21)
- 4. Աստվածային արդարության արդյունքում պետք է լինի անձնական արդարություն (6:1-7:25)
 - ա. ազատված մեղքից(6:1-14)
 - (1) կարծեցյալ առարկություն (6:1-2)
 - (2) մկրտության նշանակությունը (6:3-14)
 - բ. Սատանայի ծառա կամ Աստծո ծառա: քո ընտրությունը (6:15-23)
 - գ. Մարդու ամուսնությունը Օրենքին (7:1-6)
 - դ. Օրենքը բարի է, բայց մեղքը խոչընդոտում է բարուն (7:7-14)
 - ե. բարու և չարի շարունակական պայքարը հավատացյալի մեջ (7:15-25)
- 5. Աստվածային արդարության տեսանկյունի արդյունքները (8:1-39)
 - ա. Կյանքը Հոգու մեջ (8:1-17)
 - բ. Արարչագործության ազատագրումը (8:18-25)
 - գ. Հոգու մշտական օգնությունը (8:26-30)
 - դ. Հավատքով արդարանալու օրինական հաղթանակը (8:31-39)

Դ.

- Աստվածային նպատակը ամբողջ մարդկության համար (9:1-11:32)
1. Իսրայելի ընտրությունը (9:1-33)
 - ա. Հավատքի իրական ժառանգորդները (9:1-13)
 - բ. Աստծո սուվերենությունը (9:14-26)
 - գ. Աստծո տիեզերական ծրագիրը ներգրավում է հեթանոսին (9:27-33)
 2. Իսրայելի փրկությունը (10:1-21)
 - ա. Աստծո արդարությունը մարդու արդարության դեմ (10:1-13)
 - բ. Աստծո ողորմությունը պահանջում է պատգամաբերներ, աշխարհին ավետարանելու կանչը (10:14-18)
 - գ. Իսրայելը շարունակում է չհավատալ Քրիստոսին (10:19-21)
 3. Իսրայելի անհաջողությունը (11:1-36)
 - ա. Հրեա մնացորդը (11:1-10)
 - բ. Հրեաների նախանձը (11:11-24)
 - գ. Իսրայելի ժամանակավոր կուրությունը (11:25-32)
 - դ. Պողոսի փառաբանության պոռթկումը (11:33-36)

Ե.

- Աստվածային Արդարության Պարզևի արդյունքը (12:1-15:13)
1. Նվիրման կոչ (12:1-2)
 2. Պարզևների գործածում (12:3-8)
 3. Հավատացյալների հարաբերություններն ուրիշ հավատացյալների հետ (12:9-21)
 4. Հարաբերություններ իշխանությունների հետ (13:1-7)
 5. Հարաբերություններ ընկերների հետ (13:8-10)
 6. Հարաբերություններ մեր Տիրոջ հետ (13:11-14)
 7. Հարաբերություններ եկեղեցու անդամների հետ (14:1-12)
 8. Մեր ազդեցությունը ուրիշների վրա (14:13-23)

9. Զրիստոսանման հարաբերություններ (15:1-13)

- Ձ. Ամփոփում (15:14-33)
1. Պողոսի անձնական ծրագրերը (15:14-29)
 2. Աղոթքի խնդրանքներ (15:30-33)

- Է. Ետգրություն (16:1-27)
1. Ողջյուններ (16:1-24)
 2. Օրհնություն (16:25-27)

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ձեր խոսքերով գրեք ամբողջ գրքի կենտրոնական թեման:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրականության տեսակը (Ժանրը)

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. և այլն

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 1**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Ողջույն	Բարևներ Ողջույններ	Ողջույն	Ողջույն	Գիմում/ Ողջույն
1:1-7	1:1-7	1:1-6	1:1 1:2-6	1:1-2
				1:3-7
		1:7ա	1:7ա	
		1:7բ	1:7բ	
Պողոսը փափագում է այցելել Հռոմ	Հռոմ այցելելու փափագ	Գոհություն	Գոհության աղոթք	Գոհություն և աղոթք
1:8-15	1:8-15	1:8-15	1:8-12	1:8-15
Ավետարանի գործությունը	Արդարը հավատքով կապրի	Նամակի թեման	1:13-15 Ավետարանի գործությունը	Թեման հաստատվում է
1:16-17	1:16-17	1:16-17	1:16-17	1:16-17
Մարդկության հանցանքը	Աստծո բարկությունը անարդարության վրա	Աստծո դատաստանը մեղքի հանդեպ	Մարդկության հանցանքը	Աստծո բարկությունը հեթանոսների դեմ
1:18-23	1:18-32	1:18-23	1:18-23	1:18-25
1:24-32		1:24-25 1:26-27 1:28-32	1:24-25 1:26-27 1:28-32	

*Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և վերլուծել է առաջին գլուխը: Ամեն մի պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Այս թեման յուրաքանչյուր թարգմանված տարբերակում ձևավորվում է իր իսկ ձևով: Կարդալով տեքստը, հարցեր տվեք ինքներդ ձեզ, թե թարգմանություններից, որ մեկն է ավելի համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձեր հասկացողությանը:

Յուրաքանչյուր գլխի ժամանակ դուք նախ պետք է կարդաք Աստվածաշունչը և փորձեք որոշել թեմաները (պարբերությունները): Հետո ձեր հասկացողությունը համեմատեք ժամանակակից թարգմանությունների հետ: Միայն այդ ժամանակ, երբ հասկանաք հեղինակի մտադրությունը, հետևելով նրա տրամաբանությանն ու շարադրանքին, դուք կկարողանաք ճիշտ հասկանալ Աստվածաշունչը: Միայն հեղինակն է ներշնչված – ընթերցողներն իրավունք չունեն փոխել կամ խեղաթյուրել նրա պատգամը/ ուղերձը: Աստվածաշնչի ընթերցողներն պարտավոր են կիրառել ներշնչված ճշմարտությունը ժամանակակից իրավիճակի և իրենց կյանքերի մեջ:

Բոլոր տեխնիկական տերմիններն ու հապավումները ամբողջությամբ ներկայացված են Հավելված 1,2 և 3 –ում:

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՐՏԵՔՍԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ

Ա. 1-7 համարները նամակի ներածությունն է: Այն ամենաերկար ներածությունն է Պողոսի գրած նամակների մեջ: Նա փորձում է ներկայացնել ինքն իրեն և իր աստվածաբանությունը տվյալ եկեղեցուն, որը չէր ճանաչում իրեն անձնապես և հնարավոր է, որ բացասական ինֆորմացիա ուներ իր մասին:

Բ. 8-12 համարները գոհության աղոթք է: Սա բնորոշ էր հունարեն նամակներին ընդհանրապես և հատուկ էր Պողոսի գրվածքներին:

Գ. 16-17 համարները հաստատում են գրքի թեման:

Դ. 18 համարից մինչև 3:20 ձևավորում է առաջին գրական բաժինը և Պողոսի ավետարանի գլխավոր միտքը; բոլոր մարդիկ կորսված են և պետք ունեն փրկության (հմտ. Ծննդոց):

1. անբարոյական հեթանոսներ
2. բարոյական հեթանոսներ
3. հրեաներ

Ե. Հռոմեացիս 1:18 և հաջորդող համարները անդրադարձնում են Ծննդ.3 գլուխը: Մարդկությունը ստեղծվեց Աստծո հետ հաղորդակցություն ունենալու համար, Աստծո պատկերով (հմտ. Ծննդ. 1:26-27): Ինչևէ, մարդն ընտրեց լուսավորվածությունը և ուժի և առավել լինելու խոստումը: Ըստ էության, մարդիկ Աստծուն փոխեցին իրենցով (աթեիստական մարդկայնություն/հումանիզմ):

Աստված թույլ տվեց, հնարավոր է նույնիսկ նախաձեռնեց, այս ճգնաժամը: Աստծո պատկերին կերպարանակից լինելը նշանակում է լինել պատասխանատու, լինել բարոյապես հաշվետու, ազատ կամք ունենալ, բայց հետևանքներով: Աստված առանձնացնում է մարդկանց թե Իր ընտրությամբ և թե նրանց (ուխտի հարաբերություն): Նա թույլ է տալիս նրանց, որ ընտրեն իրենք ամեն հետևանքներով: Աստված վշտանում է (հմտ. Ծննդ. 6:5-7) բայց մարդիկ ազատ բարոյական գործոններ են ամեն իրավունքներով և պատասխանատվություններով, որոնք առաջ են գալիս: Կրկնվող արտահայտությունը «Աստված տվեց նրանց իշխանություն» (հմտ. 1:24,26,28) այդ ազատության ճանաչումն է, ոչ թե Աստծո կամովի մերժումը: Սա Աստծո ընտրությունը չէր: Սա չէ այն աշխարհը, որ Աստված մտադրել էր (հմտ. Ծննդ. 3:22; 6:5-7,11-13):

Ձ. 1:18-3:20 համարների աստվածաբանական վերլուծությունը գտնվում է 3:21-31 համարներում: Սա ավետարանի առաջին նախադրյալը - բոլոր մարդիկ մեղանշել են և Աստծո ներման կարիքն ունեն:

Է. Պողոսի ավետարանի ներկայացման մեջ, այս առաջին գրական բաժնում, հետաքրքիր է նկատել, որ ընկած մարդկությունը պատասխանատու է իր ասպտամբության և մեղքի համար, առանց մեղադրելու Սատանային կամ դիվային ուժի (հմմտ. Հռ. 1:18-3:20): Այս բաժինն անշուշտ անդրադարձնում է Ծննդոց 3-ի աստվածաբանությունը, բայց առանց անձնական գայթակղիչի: Աստված թույլ չի տա, որ ընկած մարդկությունը նորից մեղադրի Սատանային (հմմտ. Ծննդ. 3:13) կամ Իրեն՝ Աստծուն (հմմտ. Ծննդ. 3:12): Մարդը ստեղծված է Աստծո պատկերով (հմմտ. Ծննդ.1:26; 5:1,3; 9:6): Նրանք ունեն ընտրելու իրավունք, զորություն և պարտականություն: Նրանք պատասխանատու են իրենց ընտրությունների համար թե աղամական և թե անձնական (հմմտ. 3:23):

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

NASB (UPDATED) TEXT: 1:1-6

¹Paul, a bond-servant of Christ Jesus, called *as* an apostle, set apart for the gospel of God, ²which He promised beforehand through His prophets in the holy Scriptures, ³concerning His Son, who was born of a descendant of David according to the flesh, ⁴who was declared the Son of God with power by the resurrection from the dead, according to the Spirit of holiness, Jesus Christ our Lord, ⁵through whom we have received grace and apostleship to bring about *the* obedience of faith among all the Gentiles for His name's sake, ⁶among whom you also are the called of Jesus Christ;

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:1-6

1 ¹Պօղոս Յիսուս Քրիստոսի ծառայ՝ կանչուած առաքեալ՝ Աստուծոյ ավետարանի համար որոշուած, ² Այն որ առաջուց խոստացաւ իր մարգարէների ձեռովը սուրբ գրքերումը, ³ Իր Որդու համար, ու մարմնի կողմանէ Դաւիթի զաւակիցն եղաւ. Եւ ⁴ Աստուծոյ Որդի սահմանուեցաւ զօրութիւնով՝ սրբութեան Հոգու կողմանէ՝ մեռելներից հարութիւն առնելուցը, մեր Տէր Յիսուս Քրիստոսի համար. ⁵ Որով ընդունեցինք շնորհք եւ առաքելութիւն՝ հաւատքի հնազանդութեան համար ամեն ազգերի մէջ նորա անունի համար. ⁶ Որոնց միջումը դուք էլ Յիսուս Քրիստոսի կանչուածներն էք.

1:1 «Պօղոս» Պողոսի օրերում շատ հրեաներ ունեին երկու սկզբնաճում, մեկը հրեական, իսկ մյուսը՝ հռոմեական (հմմտ. Գործք 13:9): Պողոսի հրեական անունը Սողոս էր: Նա, Իսրայելի թագավորի նման, Բենիամինի ցեղից էր(հմմտ. Հռ.11:1; Փիլ.3:5): Նրա հռոմեական անվան հունարեն ձևը Պողոս (Պաուլոս) նշանակում էր «փոքր»: Սա կամ (1) վերաբերում էր իր ֆիզիկական հասակին, որի մասին ակնարկվում է երկրորդ դարի ոչ-կանոնական գրքում, *Պողոսի Գործքերը*, Թեսաղոնիկեի մասին գլխում, որը կոչվում էր «Պողոսը և Թեկլան»; (2) իր անձնական նշանակությունը՝ սուրբերից ամենավերջինը լինելով, որովհետև նա առաջուց հալածում էր Եկեղեցին (հմմտ. 1 Կորն.15:9; Եփես. 3:8; 1 Տիմ. 1:15); կամ (3) անուն, որը տրված էր իր ծնողների կողմից ծնվելու պահից:

«Հիսուս Քրիստոսի ծառա» Այս հասկացողությունը կամ (1) հակադրում է այն մտքին, Հիսուսին որպես Տեր; կամ (2) Հին Կտակարանի հարգալից տիտղոս (հմմտ. Մովսեսը Թվոց 12:7 և Հեսու 1:1; Հեսուն՝ Յեսու 24:25; և Դավիթը Սաղմոսներում (վերնագրերը) և Եսայի 42:1, 19; 52:13):

«կանչված առաքյալ» Սա Աստծո ընտրությունն էր, ոչ իր (հմմտ. Գործք 9:15; Գաղ. 1:15; Եփես. 3:7): Պողոսը պաշտպանում է իր հոգևոր որակավորումներն ու հեղինակությունը (ինչպես նա անում է 1 Կոր. 1:1; 2 Կոր. 1:1; Գաղ. 1:1; Եփես. 1:1; Կող. 1:1; 1 Տիմ. 1:1 և Տիտոս 1:1) այս եկեղեցու մոտ, որին նա երբեք չէր հանդիպել: Տես Հատուկ/Առանձին Թեմա: Կանչված 1:6-ի տակ

«Առաքյալ» տերմինը Պաղեստինյան հրեաների 1 դարի շրջանում նշանակում էր « մեկն ուղղարկված որպես պաշտոնական ներկայացուցիչ» (հմմտ. 2 Կոր. 17:7-9): Նոր Կտակարանում այս տերմինը օգտագործվում էր երկու իմաստներով: (1) 12 հատուկ առաքյալների և Պողոսի: և (2) հոգևոր պարզի, որ շարունակվում է եկեղեցում (հմմտ. 1 Կոր. 12:28-29; Եփես. 4:11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒՂՂԱՐԿՎԱԾ (APOSTELLŌ)

Այստեղ օգտագործված է հասարակ հունարեն բառ «ուղարկել» (այն է, *apostellō*): Այս տերմինն ունի մի քանի աստվածաբանական կիրառություններ:

- Ա. Ռաբբիներն օգտագործում էին այն մի մարդու համար, որը կանչված և ուղղարկված էր ինչ որ մեկի կողմից, որպես իր պաշտոնական ներկայացուցիչ, ինչպես օրինակ մեր անգլերեն «դեսպան»ը (հմմտ. II Կոր. 5:20):
- Բ. Ավետարանները հաճախ օգտագործում են այս տերմինը, երբ ասվում է, որ Հիսուսն ուղղարկվեց Հոր կողմից: Հովհաննեսի ավետարանում տերմինը ընդունում է մեսիական հնչերանգ (հմմտ. Մաթ. 10:40; 15:24; Մարկ. 9:37; Գուլ. 9:48 և հատկապես Հովհ. 4:34; 5:24,30,36,37,38; 6:29,38,39,40,57; 7:29; 8:42; 10:36; 11:42; 17:3,8,18,21,23,25; 20:21): Եվ այն նաև օգտագործվում է Հիսուսի կողմից , երբ Նա ուղարկում է հավատացյալներին (հմմտ. Հովհ. 17:18; 20:21)
- Գ. Նոր Կտակարանում օգտագործվում է աշակերտների համար
 - 1. 12 աշակերտների նեղ շրջանը (հմմտ. Գուլ. 6:13; Գործք 1:21-22)
 - 2. առաքյալների օգնականների և գործընկերների հատուկ խումբը
 - ա. Բարնաբաս (հմմտ. Գործք 14:4,14)
 - բ. Անդրոնիկոս և Յունիա (KJV, Junia, հմմտ. Հռ. 16:7)
 - գ. Ապոդոս (հմմտ. I Կոր. 4:6-9)
 - դ. Հակոբոս՝ Տիրոջ եղբայր (հմմտ. Գաղ. 1:19)
 - ե. Սիլվանոս և Տիմոթեոս (հմմտ. I Թես. 2:6)
 - զ. հավանական է Տիտոս (հմմտ. II Կոր. 8:23)
 - է. հավանական է Եպափրոդիտոս (հմմտ. Փիլ. 2:25)
 - 3. պարզ, որը գոյություն ունի եկեղեցում և մեր օրերում (հմմտ. I Կոր. 12:28-29; Եփ. 4:11)
- Դ. Պողոսն օգտագործում է այս առաքյալի տիտղոսը իր համար իր նամակներից շատերի մեջ, որպես պնդում/հաստատում Աստծո կողմից տրված իշխանության, որպես Քրիստոսի ներկայացուցիչ (հմմտ. Հռ. 1:1; I Կոր. 1:1; II Կոր. 1:1; Գաղ. 1:1; Եփ. 1:1; Կող. 1:1; I Տիմ. 1:1; II Տիմ. 1:1; Տիտոս 1:1):

«որոշված» Սա վաղակատար կրավորական ժամանակ է, որը նշանակում է, որ նա որոշված էր Աստծու կողմից անցյալում (հմմտ. Երեմ. 1:5 և Գաղ. 1:15) և սա շարունակվում է որպես ներկա վիճակ: Սա հնարավոր բառախաղ էր Արամերեն «Փարիսեցի» բառի համար: Նրանք

առանձնացված էին հրեական օրինականության համար (և Պողոսը նույնպես (Փիլ.3:5)), բայց հիմա նա առանձնացված էր ավետարանի համար:

Սա վերաբերվում է եբրայերեն «սուրբ» բառին, որը նշանակում է «որոշված Աստծո օգտագործման համար» (հմմտ. Ել.19:6; 1Պետ.2:5): «Սուրբ», «սրբացնել», և «առանձնացնել» տերմինները բոլորն էլ ունեն նույն հունարեն արմատը, «սուրբ» (հագիոս/hagios):

«Աստուծոյ ավետարանի համար» Այս կոնտեքստում *eis* նախդիրը (և հ.5) ցույց է տալիս Պողոսի «կանչի»(հ.1բ.)և «որոշված»(հ.1 գ.)լինելու նպատակը:

Ավետարանը բաղադրյալ բառ է բաղկացած «բարի» (eu) և «լուր»(angellos) : Այն դարձավ տերմին, որը նկարագրում է Նոր Ուխտի մեջ հայտնված վարդապետությունները(հմմտ. հ.2 և Երեմ. 31:31-34: Եզեկ. 36:22-23), որը Աստծո խոստացված Մեսիան է (հմմտ. 3-4 հհ.):

Սա Աստծո ավետարանն է, և ոչ թե Պողոսի (հմմտ. 15:16; Մարկ.1:14; 2 Կոր.11:7; 1 Թես. 2:2,8,9: 1 Պետ. 4:17): Պողոսը նորարար կամ մշակույթային հարմարեցնող չէր, այլ իր ստացած ճշմարտությունը հռչակող (հմմտ. 1Կոր. 1:18-25):

1:2 «Այն որ առաջուց խոստացաւ իր մարգարէների ձեռովը սուրբ գրքերումը», Ավետարանը Աստծո ուղացած միտքը չէր այլ Նրա հավիտենական, նպատակասլաց ծրագիրը(հմմտ. Ծննդ.3:15; Եսայ. 53; Սաղ. 118; Մարկ. 10:45; Գուկ. 22:22; Գործք 2:23; 3:18; 4:28; Տիտոս 1:2): Գործք Առաքելոց գրքում վաղ քարոզները (kerygma) ներկայացնում են Հիսուսին որպես Հին Կտակարանի խոստումների և մարգարեությունների իրականացում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՎԱՂ ԵԿԵՂԵՅՈՒ ՊԱՏԳԱՄԸ՝ KERYGMA-Ն

1. Հին Կտակարանում Աստծո տված խոստումները կատարվել են Հիսուս Մեսիայի գալուստով (Գործք 2:30; 3:19,24; 10:43; 26:6-7,22; Հռմ.1:2-4; 1Տիմ.3:16; Եբր.1:1-2; 1Պետ.1:10-12; 2Պետ.1:18-19)
2. Հիսուսը օծվեց որպես Մեսիա Աստծո կողմից Իր մկրտության ժամանակ (Գործք 10:38)
3. Հիսուսը սկսեց Իր ծառայությունը Գալիլեայում Իր մկրտությունից հետո (Գործք 10:37)
4. Իր ծառայությունը բնութագրվում էր բարիք գործելով և գորավոր գործեր անելով Աստծո գործությամբ (Մարկ. 10:45; Գործք 2:22;10:38)
5. Մեսիան խաչվեց համաձայն Աստծո նպատակի (Մարկ.10:45; Հովհ.3:16; Գործք 2:23; 3:13-15, 18; 4:11; 10:39; 26:23; Հռմ.8:34; 1Կորն.1:17-18; 15:3; Գաղ.1:4; Եբր. 1:3; 1Պետ.1:2,19; 3:18; 1Հովհ. 4:10)
6. Նա հարություն առավ մեռելներից և հայտնվեց Իր աշակերտներին (Գործք 2:24, 31-32; 3:15, 26; 10:40-41; 17:31; 26:23; Հռմ.8:34; 10:9; 1Կորն.15:4-7, 12; 1Թեսաղ.1:10: 1Տիմ.3:16; 1Պետ. 1:2; 3:18,21)
7. Հիսուսը մեծարվեց Աստծո կողմից և տրվեցավ «Տեր»անունը (Գործք 2:25-29, 33-36; 3:13; 10:36; Հռմ. 8:34; 10:9; 1Տիմ. 3:16; Եբր. 1:3; 1Պետ. 3:22)
8. Նա տվեց Սուրբ Հոգին ձևավորելու Աստծո նոր համայնքը (Գործք 1:8; 2:14-18, 38-39; 10:44-47; 1Պետ.1:12)
9. Նա նորից կգա դատելու և վերականգնելու ամեն բան (Գործք 3:20-21; 10:42; 17:31; 1Կորն.15:20-28; 1Թեսաղ. 1:10)
10. Ով որ լսում է պատգամը պետք է ապաշխարի և մկրտվի (Գործք 2:21,38: 3:19; 10:43,47-48; 17:30; 26:20; Հռմ. 1:17; 10:9; 1Պետ.3:21)

Այս սխեման ծառայում է որպես վաղ եկեղեցու հիմնական հռչակումը, չնայած որ Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ բաց են թողել մի մաս կամ ընդգծել են ուրիշ մանրամասնություններ իրենց քարոզչության մեջ: Ամբողջ Մարկոսի Ավետարանը մանրամասն հետևում է Պետրոս առաքյալի քարոզներին: Ըստ ավանդույթի Մարկոսը գրել է իր Ավետարանը,

այն կառուցելով Պետրոսի քարոզների վրա, որոնք քարոզվել են Հռոմում: Թե Մատթևոսը և թե Ղուկասը հետևում են Մարկոսի հիմնական կառուցվածքին:

1:3 « Իր Որդու համար» Բարի լուրի կենտրոնական պատգամն անձ է, Հիսուս Նազովրեցին, կույս Մարիամից ծնված: Հին Կտակարանում ազգը, թագավորը և Մեսիան կոչվում էին «որդի» (հմմտ. 2 Թագ. 7:14; Ովսիա 11:1; Սաղմ. 2:7; Մաթ.2:15):

Հին Կտակարանում Աստված խոսեց ծառաների և մարգարեների միջոցով: Հիսուսը Աստծո ծառան չէր: Նա ընտանիքի անդամ էր (հմմտ. Եբր.1:1-2; 3:6; 5:8; 7:28): Չարմանալիորեն սա միակ տեղն է գրքում, որտեղ Պողոսը կենտրոնանում է Քրիստոսը Քրիստոսաբանության վրա: Հռոմեացիս թուղթը ամբողջական սիստեմատիկ աստվածաբանություն չէ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆ

Նոր Կտակարանում սա ամենագլխավոր կոչումներից մեկն է Հիսուսի վերաբերյալ/մասին: Այն անշուշտ ունի աստվածային լրացուցիչ իմաստներ: Այն ներգրավում է Հիսուսին որպես «Որդին» կամ «Իմ Որդին» և Աստված որպես «Հայր»: Նոր Կտակարանում այն հայտնվում է ավելի քան 124 անգամ: Նույնիսկ Հիսուսի ինքնաանվանումը որպես «Մարդու Որդի» ունի Աստվածային լրացուցիչ իմաստ Գանիել 7:13-14:

Հին Կտակարանում «որդի» անվանումը կարող էր վերաբերվել երեք հատուկ խմբերի:

1. հրեշտակներ (սովորաբար ՀՈԳՆԱԿԻ թվով, հմմտ. Ծննդ.6:2; Հոր 1:6; 2:1)
2. Իսրայելի Թագավորը (հմմտ. 2 Թագ.7:14; Սաղմ. 2:7; 89:26-27)
3. Իսրայել ազգը որպես մեկ ամբողջ(հմմտ. Ելից.4:22-23; 2 Օրին.14:1; Ովս.11:1; Սաղ. 2:10)
4. Իսրայելի դատավորները (հմմտ. Սաղմ.82:6)

Սա երկրորդ կիրառումն է, որ կապվում է Հիսուսի հետ: Այս ձևով «Գավթի Որդի» և «Աստծո որդի» երկուսն էլ վերաբերվում են 2 Թագ. 7; Սաղմ. 2 և 89: Հին Կտակարանում «Աստծո որդի» երեք չի օգտագործվում հատուկ Մեսիայի համար, բացի որպես վախճանաբանական թագավոր որպես Իսրայելի «օծյալներից» մեկը: Ինչևէ, Մեռյալ ծովի մագաղաթների մեջ Մեսիական ներիմաստներով տիտղոսը/կոչումը սովորական է: Նաև «Աստծո Որդի» Մեսիական տիտղոսը երկու ներաստվածաշնչյան Հրեական ապոկալիպտիկ գործերում (հմմտ. 2 Եզրաս 7:28; 13:32, 37,52; 14:9 և 1 Ենովք 105:2):

Նոր Կտակարանում այն վերաբերվում է Հիսուսին ամենալավ ձևով ամփոփվում է մի քանի կատեգորիաներում:

1. Նրա նախա-գոյությունը (հմմտ. Հովհ. 1:1-18)
2. Նրա եզակի, կուսական ծնունդը (հմմտ. Մաթ.1:23; Ղուկ. 1:31-35)
3. Նրա մկրտությունը (հմմտ. Մաթ. 3:17; Մարկ. 1:11; Ղուկ. 3:22: Երկնքից եկողԱստծո ձայնը միավորում է Սաղմ.2-ի թագավորին Եսայի 53-ի տառապող ծառայի հետ) :
4. Սատանայի կողմից Իր փորձվելը (հմմտ. Մաթ. 4:1-11; Մարկ 1:12,13; Ղուկ. 4:1-13: Նրան փորձում է Սատանան, որ կասկածի Իր որդի լինելու վրա կամ համենայն դեպս ավարտել դրա նպատակը ուրիշ իմաստով քան խաչը):
5. Նրա հաստատումը անընդունելի խոստովանողների կողմից
ա. դևեր (հմմտ. Մարկ. 1:23-25; Ղուկ. 4:31-37; Մարկ. 3:11-12)
բ. անհավատներ (հմմտ. Մաթ.27:43; Մարկ.14:61; Հովհ.19:7)
6. Նրա հաստատումը Իր աշակերտների կողմից
ա. Մաթ. 14:33; 16:16
բ. Հովհ. 1:34, 49; 6:69; 11:27
7. Նրա ինքնահաստատումը
ա. Մաթ. 11:25-27
բ. Հովհ. 10:36
8. Նա օգտագործում է հայտնի փոխաբերություն Աստծո մասին որպես Հայր
ա. Նա օգտագործում է «աբբա» Աստծո համար
1) Մարկ. 14:36
2) Հռոմ. 8:15
3) Գաղ. 4:6

բ. Նա պարբերաբար օգտագործում է Հայր (պատեռ)նկարագրելու համար Իր կապը աստվածության հետ

Ամփոփելով «Աստծո Որդի» տիտղոսը ուներ մեծ աստվածաբանական իմաստ նրանց համար , ովքեր գիտեին Հին Կտակարանը և նրա խոստումներն ու կատեգորիաները, բայց Նոր Կտակարանի գրողները նեարդայնացած էին դրանց օգտագործումը հեթանոսների հետ իրենց հեթանոս ակունքների պատճառով, երբ «աստվածները» կանանց էին վերցնում սերունդ տալու նպատակով լինելով «հսկաներ»:

«Դավթի գաակիցն եղաւ.» Սա վերաբերվում է 2 Թագ. 7 մարգարեությանը: Մեսիան Դավթի թագավորական սերնդից էր (հմմտ. Եսայ. 9:7; 11:1, 10; Երեմ. 23:5; 30:9; 33:15) Հուդայի ցեղից (հմմտ. Ծննդ. 49:4-12; Եսայ. 65:9): Մաթևոսի Ավետարանում Հիսուսին ուղղված է այս կոչումով մի քանի անգամ (հմմտ. 9:27; 12:23; 15:22; 20:30), որը անդրադարձնում էր հրեաների հույսը գալիք փրկչի հետ կապված:

Ջարմացնող է, որ Պողոսը չընդգծեց Հիսուսի այս տեսանկյունը: Նա նշեց այն միայն այստեղ և 2 Տիմ. 2:8; երկու հատվածներն էլ հնարավոր է որ մեջբերումներ են եղել հավատքի ֆորմուլայում վաղ եկեղեցու:

- NASB, NKJV,**
- NRSV** **“according to the flesh”**
- TEV** **“as to his humanity”**
- JB** **“according to human nature”**

Արևելահայերեն «մարմնի կողմանէ»
Արևմտահայերեն «մարմնի կողմանէ»

Սա մարգարեության իրականացումն էր և Հիսուսի մարդեղության հաստատումը, որը առաջին դարի էկլեկտիկ կրոնական աշխարհն ուրացավ (հմմտ. 1 Հովհ. 1:1-4; 4:1-3): Այս համարը հստակ ցույց է տալիս , որ Պողոսը միշտ չէ օգտագործում «մարմին» (*sarx*) տերմինը բացասական առումով (հմմտ. 2:28; 9:3), Սակայն Պողոսը սովորաբար օգտագործեց «մարմին» տերմինը հակասելու «հոգի» տերմինին (հմմտ. 6:19; 7:5, 18,25; 8:3-9,12,13; 1Կորն. 5:5; 2Կորն. 1:17; 11:18; Գաղ. 3:3; 5:13, 16, 17-19, 24; 6:8; Եփես. 2:3; Կող. 2:11, 13, 18, 23):

Քերականական այս կառուցվածքը *kata* (համաձայն) գումարած հայցական հոլով գուգահեռականություն է համար 4-ում; Հիսուսը թե մարդ է (մարմնի կողմանէ) և թե աստվածային (Հոգու կողմանէ): Մարմնացման այս վարդապետությունը վճռական է/խաչաձև (հմմտ. 1 Հովհ. 4:1-3): Այն նաև կարող է Հիսուսի ինքնարևոտած անվանման ներիմաստը լինել, «Մարդու Որդի» (հմմտ. Սաղ. 8:4; Եզեկ. 2:1[մարդկային] և Դան. 7:13[աստվածային]):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐՄԻՆ (SARX)

Սա վերաբերում է մարդկային իմաստությանը կամ աշխարհիկ չափանիշներին (հմմտ. 1:20; 2:6,8; 3:18): Պողոսն օգտագործում է «մարմին» տերմինը (*sarx*) մի քանի ձևերով իր գրվածքներում:

1. մարդու մարմինը (հմմտ. 5:5; 7:28; Հռ. 2:28)
2. մարդկային սերունդ (i.e., հայր-որդի, հմմտ. 10:18; Հռ. 1:3; 4:1)
3. մարդկությունը որպես մեկ ամբողջ (հմմտ. 1:26,29)
4. մարդու տկարությունը մեղքի պատճառով Ծննդ. 3 (հմմտ. Հռ. 6:19; 7:18)

1:4 «սահմանուեցաւ» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ԴԵՐԲԱՅ է: Աստված հստակորեն նշանակեց Հիսուսին «Աստծո Որդի» : Սա չի նշանակում թե Բերթեհենը Հիսուսի սկիզբն էր կամ թե Նա ստորադաս էր Հորը: Տես Հատուկ Թեմա: Երրորդությունը 8:11

«Աստուծոյ Որդի» Նոր Կտակարանի հեղինակները հաճախ չէին վերագրում Հիսուսին «Աստուծոյ Որդի» կոչումը (հմմտ. Մաթ. 4:3) հունական առասպելների կեղծ իմաստների պատճառով (նույնը նաև կապված կուսական ծննդի հետ): Սովորաբար գաղափարը որակավորվում է «եզակի, մի տեսակի» (monogenes) (հմմտ. Հովհ. 1:18; 3:16, 18; 1Հովհ. 4:9): Սա է իմաստը « Հիսուս, Աստծո միակ ճշմարիտ Որդին»:

Նոր կտակարանը ունի երկու աստվածաբանական բևեռներ կապված Հայր Աստծո և Հիսուս Որդու հետ: (1) նրանք հավասար են (հմմտ. Հովհ. 1:1; 5:18; 10:30; 14:9; 20:28; 2Կորն.4:4; Փիլ. 2:6; Կող. 1:15; Եբր. 1:3), և (2) նրանք առանձին անձեր են (հմմտ. Մարկ. 10:18; 14:36; 15:34):

«մեռելներից հարություն առնելուցը» Հայր Աստվածը հաստատեց Հիսուսի կյանքն ու պատգամը Նրան մեռելներից հարություն տալով (հմմտ. 4:24; 6:4, 9; 8:11): Հիսուսի աստվածությունն (հմմտ. Հովհ. 1:1-14; Կող. 1:15-19; Փիլ. 2:6-11) ու հարությունը (4:25; 1 Կորն. 15) Քրիստոնեության երկու սյուներն են:

Այս համարը հաճախ օգտագործվում էր «որդեգրության» հերետիկոսությունը պաշտպանելու համար, որը հաստատում էր, որ Հիսուսը վաճառրված և բարձրացված էր Աստծո կողմից Իր հնազանդության օրինակելի կյանքի համար: Հերետիկոսները հաստատում էին , որ Նա միշտ Աստված չէ եղել (օնթոլոգիականորեն/ գոյաբանականօntologically), բայց դարձավ Աստված, երբ Աստված նրան հարություն տվեց: Թեև սա պարզորեն ճշմարտություն է, որը ակնհայտ է շատ տեքստերից ինչպիսին Հովհ. 1 և 17, ինչոր հիասքանչ բան շնորհվեց Հիսուսին Իր հարության ժամանակ: Դժվար է արտահայտել թե ինչպես աստվածությունը վարձատրվի, դա այն է ինչ տեղի ունեցավ: Չնայած Հիսուսը հավիտենական փառքը բաժնեկցեց Հոր հետ, Նրա կարգավիճակը ինչ-որ ձևով հարստացավ՝ իր նշանակված առաջադրանքը կատարյալ ձևով իրականացնելով: Հարությունը կյանքի Հոր հաստատումն էր, օրինակ, ուսմունքները, և Հիսուս Նազովրեցու զոհաբերվող մահը; հավիտյան աստվածային, ամբողջությամբ մարդ, կատարյալ փրկիչ, վերականգնված և վարձատրված, եզակի/միակ Որդի: Տես Հավելված երեքը- Որդեգրություն:

NASB, NKJV “according to the Spirit of holiness”
NKJV “according to the spirit of holiness”
TEV “as to his divine holiness”
JB “in the order of the spirit, the spirit of holiness”

Արևելահայերեն « Հոգու կողմանէ»
Արևմտահայերեն «հոգիին կողմանէ»

Որոշ թարգմանություններ Հոգի բառը գրում են մեծատառով, կապելով Սուրբ Հոգու հետ, իսկ փոքրատառ «h» կապում են Հիսուսի հոգու հետ: Քանի որ Հայր Աստվածը Հոգի է, ուրեմն Հիսուսը նույնպես: Հին եբրայերենն ու հունարեն տեքստերը չունենին մեծատառ, կետադրություն, գլուխների կամ համարների բաժանում, այդ պատճառով այս ամենը ավանդություն է կամ թարգմանիչների մեկնաբանություն:

Երեք կերպերով կարող ենք նայել 3 և 4 համարները: (1) կապված Հիսուսի երկու բնությունների հետ, մարդկային և աստվածային; (2) կապված Իր կյանքի վաղ շրջանի երկու փուլերի հետ, մարդ և հարուցյալ Տեր; կամ (3) որպես զուգահեռ «Մեր Տեր Հիսուս Քրիստոս»-ին:

«Հիսուս» Արամերեն Հիսուս անունը նույնն է, ինչ եբրայերեն Հեսու անունը: Այն եբրայերեն «Յեհովա» և «փրկություն» երկու բառերի կապակցումն է: Այն կարող է նշանակել «Յեհովան փրկում է», «Յեհովան ազատում է» կամ «Յեհովան փրկություն է»: Տես Մաթ. 1:21,25:

«Քրիստոս» Սա երբայերեն *մեսիա* տերմինի հունարեն թարգմանությունն էր, որը նշանակում էր «օծյալ»: Հին Կտակարանում կային առաջնորդների մի քանի խմբեր (մարգարեներ, քահանաներ, և թագավորներ), որոնք օծված էին որպես Աստծո ընտրյալներ: Հիսուսը իրականացրեց այս բոլոր երեք օծյալ պաշտոնները: (հմմտ. Եբր.1:2-3):

Հին Կտակարանը կանխագուշակեց, որ Աստված կուղարկի հատուկ «օծյալ մեկը» հայտնելու արդարության Նոր Դարը: Հիսուսն էր հատուկ «ծառան», «որդին» և «Մեսիան» էր:

«Տեր» Հուդայականության մեջ Աստծո Ուխտի անունը՝ Յահվեն, դարձավ այնքան սուրբ, որ բաբբիները այն փոխարինեցին «Տեր» (*Adon*) տիտղոսի/կոչման, երբ կարդում էին Սուրբ Գրքերը, որովհետև նրանք վախենում էին, որ կարող է Աստծո անունը անտեղի բերան առնեն: (հմմտ. Ելից 20:7; 2Օրին. 5:11) և այսպիսով քանդեցին Տաս Պատվիրաններից մեկը: Երբ Նոր Կտակարանի հեղինակները Հիսուսին կոչեցին «Տեր» («*Kurios*») աստվածաբանական կոնտեքստներում, նրանք հաստատում էին Նրա աստվածությունը: (հմմտ. Գործ.2:36; Հռոմ. 10:9-13; Փիլ. 2:6-11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Ա. ԷԼ (*El*)

1. Սկզբնական նշանակությունը ընդհանրական հին տերմինի աստվածության համար անորոշ է, չնայած որ շատ գիտնականներ ենթադրում են, որ այն առաջացել է արքադական արմատներից, «ուժեղ լինել» կամ «գորեղ, գորավոր լինել» (հմմտ. Ծննդ. 17:1; Թվ. 23:19; 2 Օրին. 7:21; Սաղ. 50:1)

2. Քանանական դիցարանում բարձր աստվածը *Էլ* է (*Ras Shamra* –յի տեքստերը)

3. Աստվածաշնչում *Էլ* բառը սովորաբար չի օգտագործվում որպես բաղադրիչ մաս ուրիշ բառեր կազմելու համար: Այսպիսի բառակապակցությունները դարձան միջոց Աստծուն բնութագրելու համար:

ա. Էլ-Էլիոն (*El-Elyon*) («Բարձրյալ Աստված»), Ծննդ. 14:18-22; 2 Օրին. 32:8; Ես. 14:14

բ. Էլ- Ռոի (*El-Roi*) («Աստված, որ տեսնում է» կամ «Աստված, որ Իրեն հայտնում է»), Ծննդ. 16:1

գ. Էլ-Շադայ (*El-Shaddai*) («Անենակարող Աստված» կամ «Աստված Ամենաողորմած» կամ «Լեռան Աստված»), Ծննդ. 17:1; 35:11; 43:14; 49:25; Ել. 6:3

ա. ՅԱՀՎԵ (*YHWH*) Սաղ. 85:8; Ես. 42:5

բ. Էլոհիմ (*Elohim*) Ծննդ. 46:3; Հոբ 5:8, «Ես եմ Աստված *El*, Աստվածը *Elohim* քո հոր»

գ. Շադայ (*Shaddai*) Ծննդ. 49:25

դ. «նախանձոտ» Ել. 34:14; 2 Օրին. 4:24; 5:9; 6:15

ե. «ողորմած» 2 Օրին. 4:31; Նեե. 9:31; «հավատարիմ» 2 Օրին. 7:9; 32:4

զ. «գորավոր և ահարկու» 2 Օրին. 7:21; 10:17; Նեե. 1:5; 9:32; Գան. 9:4

է. «գիտություն» I Թագ. 2:3

ը. «իմ գորավոր բերդը» II Թագ. 22:33

թ. «ինձ համար վրեժխնդիր եղող» II Թագ. 22:48

ժ. «սուրբը» Ես. 5:16

ի. «հզոր» Ես. 10:21

լ. «իմ փրկություն» Ես. 12:2

խ. «մեծ և հզոր» Եր. 32:18

ծ. «հատուցող» Եր. 51:56

5. Բոլոր հիմնական հին կտակարանային Աստծո անունների կապակցությունները հանդիպում են Հեսու 22:22 (Էլ, Էլոհիմ, ՅԱՀՎԵ) կրկնողաբար)

Բ. Էլիոն (*Elyon*)

1. Սրա հիմնական նշանակությունն է «բարձր», «մեծարված, փառաբանված» կամ «վեր բարձրացված» (հմմտ. Ծննդ. 40:17; 3 Թագ. 9:8; 4 Թագ. 18:17; Նեեմ. 3:25; Եր. 20:2; 36:10; Սաղ. 18:13):

2. Այն օգտագործվում է որպես զուգահեռ Աստծո մի քանի ուրիշ անունների/տիտղոսների համար:
 - ա. Էլոհիմ (*Elohim*) – Սաղ. 47:1-2; 73:11; 107:11
 - բ. ՅԱՀՎԵ (*YHWH*) – Ծննդ. 14:22; II Թագ. 22:14
 - գ. Էլ – Շադայ (*El-Shaddai*) – Սաղ. 91:1,9
 - դ. Էլ (*El*)- Թվոց 24:16
 - ե. Էլահ (*Elah*) – հաճախ օգտագործված է Դան. 2-6 և Եզրաս 4-7, իլլիար (*illair*) բառի հետ միասին (արամերեն «Բարձր Աստված») Դան. 3:26; 4:2; 5:18,21
3. Անունը հաճախ օգտագործվել է ոչ իսրայելացիների կողմից
 - ա. Մելքիսեդեկ, Ծննդ. 14:18-22
 - բ. Բաղասամ, Թվոց 24:16
 - գ. Մովսես, խոսելով ազգերի մասին 2 Օրին. 32:8
 - դ. Նոր Կտակարանում Դուկասի Ավետարանը, գրելով հեթանոսներին, նաև օգտագործվում է հունարեն համագործը *Hupsistos* (հմմտ. 1:32,35,76; 6:35; 8:28; Գործք 7:48; 16:17)
 - զ. Էլոհիմ (հոգնակի թիվ), Էլոահ (եզակի թիվ), հիմնականում օգտագործվել են պոեզիայի մեջ:
 1. Այս տերմինը չի հանդիպում Հին Կտակարանից դուրս:
 2. Այս բառով կոչում են և Իսրայելի Աստծուն և մյուս ազգերի աստվածներին (հմմտ. Ել. 12:12; 20:3): Աբրահամի ընտանիքը բազմաստվածության հավատքի էր պատկանում (հմմտ. Հեսու. 24:2):
 3. Այն կարող է վերաբերվել Իսրայելի դատավորներին (հմմտ. Ել. 21:6; Սաղ. 82:6):
 4. Էլոհիմ տերմինը նաև օգտագործվում է ուրիշ հոգևոր արարածների համար (հրեշտակներ, դևեր) ինչպես 2 Օրին. 32:8 (LXX); Սաղ. 8:5; Հոբ 1:6; 38:7: Այն կարող է վերաբերվի մարդկանց/մարդկային դատավորներին (հմմտ. Ել. 21:6; Սաղ. 82:6):
 5. Աստվածաշնչում սա Աստծո առաջին անունն է/տիտղոսը (հմմտ. Ծննդ. 1:1): Այն օգտագործվում է բացառապես մինչև Ծննդ. 2:4, որտեղ միացվում է ՅԵՀՈՎԱ բառի հետ: Այն հիմնականում (աստվածաբանորեն) վերաբերվում է Աստծուն, որպես Արարիչ, Պահպանող և Աղբյուր ամբողջ կյանքի այս մոլորակում գոյություն ունեցող (հմմտ. Սաղ. 104):
Այն հոմանիշ է Էլ բառին (հմմտ. 2 Օրին. 32:15-19): Այն կարող է նաև զուգահեռ լինել ՅԵՀՈՎԱ-յին, ինչպես Սաղ. 14 (*էլոհիմ*) ճիշտ Սաղ.53 նման է (ՅԵՀՈՎԱ), բացառությամբ տարբեր գործածությունը Աստծո անունների:
 6. Չնայած իր հոգնակի թվի կառուցվածքին, և նաև ուրիշ աստվածների համար օգտագործումով, այս տերմինը հաճախ օգտագործվում է հենց Իսրայելի Աստծո համար, բայց սովորաբար հանդես է գալիս եզակի թվով, ցույց տալով իր մոնոթեիստական կիրառությունը:
 7. Այս բառը հնչում է ոչ-իսրայելացիների շուրթերից, բայց որպես Աստծո անուն:
 - ա. Մելքիսեդեկ, Ծննդ. 14:18-22
 - բ. Բաղասամ, Թվոց 24:2
 - գ. Մովսես, երբ նա խոսում է ազգերի մասին, 2 Օրին. 32:8
 8. Տարօրինակ է, որ այդ տարածված անունը Իսրայելի մոնոթեիստիկ Աստծո հոգնակի թվով է:
 - Չնայած չկա կոնկրետ հասկացողություն, ահա վարկածները.
 - ա. Եբրայերեն լեզվում շատ գոյականներ ունեն հոգնակի թիվ , հաճախ օգտագործվում են միտքն ընդգծելու համար: Սրան շատ մոտ է ավելի հին եբրայերեն քերականական կանոնը, որը կոչվում է «գերազանցության հոգնակի թիվ», որտեղ հոգնակի թիվը օգտագործվում է կոնկրետ հասկացողությունն ավելի ամրապնդելու համար:
 - բ. Սա կարող է վերաբերվել հրեշտակների խորհրդին, որոնց հետ Աստված հանդիպում է երկնքում և որն Իր շրջապատող միջավայն է (հմմտ. 3 Թագ. 22:19-23; Հոբ 1:6; Սաղ. 82:1; 89:5,7):
 - գ. Սա նույնիսկ հնարավոր է, որ սա անդրադարձնում է Նոր Կտակարանի հայտնությունը Մեկ Աստծո երեք անձերում: Ծննդ. 1:1 Աստված ստեղծում է; Ծննդ. 1:2 Մուրբ Հոգին փչում է և Նոր Կտակարանից Հիսուսը Հոր Աստծո կատարողն էր արարչագործության մեջ (հմմտ. Հովհ. 1:3,10; Հռ. 11:36; I Կոր. 8:6; Կող. 1:15; Եբր. 1:2; 2:10):

Գ. ՅԵՀՈՎԱ

1. Այս անունը արտացոլում է աստվածությունը որպես Ուխտի Աստված, Աստված որպես Փրկիչ, Ազատարար: Մարդիկ խախտում են ուխտը, բայց Աստված հավատարիմ է մնում Իր խոսքին, խոստմանը, ուխտին (հմմտ. Սաղ. 103):

Այս անունն առաջին անգամ հանդիպում է *Էլոհիմ* բառի հետ միասին Ծննդ. 2:4: Ծննդ. 1-2 գլուխներում չկան արարչագործության երկու նկարագրություն, այլ դրա երկու կարևոր կողմերը (1) Աստված որպես տիեզերքի Արարիչ (ֆիզիկական աշխարհի) և (2) Աստված որպես մարդկության զարմանալի Արարիչ: Ծննդ. 2-4 գլուխներում սկսվում է հատուկ հայտնությունը մարդկության արտոնյալ դիրքի և նպատակի մասին արարչագործության մեջ, ինչպես նաև մեղքի խնդիրն ու ըմբոստությունն Աստծո դեմ այս եզակի դիրքից ելնելով:

2. Ծննդ. 4:26 ասվում է «մարդիկ սկսեցին կանչել ՏԻՐՈՋ անունը» (ՅԵՀՈՎԱ): Բայց, Ելից 6:3-ի իմաստը ենթադրում է, որ վաղ ուխտի մարդիկ (նախահայրերն ու նրանց ընտանիքները) ճանաչում էին Աստծուն որպես *Էլ-Շադայ*: ՅԵՀՈՎԱ անունը բացատրվում է միայն մեկ անգամ Ելից 3:13-16, բացի. հ. 14-ից: Ինչևէ, Մովսեսի գրվածքներում կոնկրետ բառերը հաճախ բացատրվում են լայնատարած բառախաղերով, և ոչ թե ստուգաբանորեն/etymologies (հմմտ. Ծննդ. 17:5; 27:36; 29:13-35): Գոյություն են ունեցել մի քանի թեորիաներ այս անվան նշանակության վերաբերյալ (վերցված է IDB, հատ. 2, էջ. 409-11)

ա. արամերեն արմատից, «ցուցաբերել կրքոտ սեր»

բ. արամերեն արմատից, «փչել» (ՅԵՀՈՎԱ ինչպես փոթորիկի Աստված)

գ. Ուգարիթական (քանանական) արմատից «խոսել»

դ. փյունիկյան ձեռագրից, ՊԱՃԱՌ-ԱԿԱՆ ԳԵՐԲԱՅ, որը նշանակում է «Նա, ով պահում է, ուժ է տալիս» կամ «Նա, ով հաստատում է»

ե. եբրայերեն *Qal* (*Քվալ*) բառի ձևից «մեկը, Ով կա, գոյություն ունի», կամ «մեկը, Ով ներկա է» (ապառնի ժամանակով, «Մեկը, ով կլինի»)

զ. եբրայերեն *Hiphil* (*Հիփիլի*) բառի ձևից «մեկը, որը հանդիսանում է գոյության աղբյուրը»

է. եբրայերեն արմատից «սպրել» (օր., Ծննդ. 3:20), որը նշանակում է «հավիտյան կենդանի», մեկը, որ իրապես կենդանի է»

ը. Ելից. 3:13-16 կոնտեքստից ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ օգտագործվում է ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՈՎ, «ես կշարունակեմ լինել այն, ինչ եղել եմ ինչ որ մի ժամանակ» կամ «ես կշարունակեմ լինեմ այն, ինչ միշտ եղել եմ» (հմմտ. J. Wash Watts, *A Survey of Syntax in the Old Testament*, էջ. 67-Ջ.Վոշ Վոթս, «Հին Կտակարանի Շարահյուսության Ակնարկը»

ՅԵՀՈՎԱ բառի լրիվ անվանումը հաճախ հանդես է գալիս հապավումով կամ հնարավոր է որպես բնագրի ձև

(1) *Yah* (օր., *Hallelu – yah*, *Հալելու-յա*)

(2) *Yahu* (*Յահու*) (անուններում, օր., *Isaiah*, *Եսայա*)

(3) *Yo* (*յո*) (անուններում, օր., *Joel*, *Յոլել*)

3. Ուշ հուդայականության ժամանակաշրջանում այս ուխտի անունը դարձավ այնքան սուրբ (the tetragrammaton), որ հրեաները վախենում էին այն նույնիսկ արտասանել, որ հանկարծ պատվերը չդրժեին Ել. 20:7; 2 Օրին. 5:11; 6:13:

Ուստի նրանք փոխարինեցին եբրայերեն բառը «սեփականատեր», «տեր», «ամուսին», «տիրակալ»—*adon* (ադոն) կամ *adonai* (ադոնայ) («իմ տեր»): Հին Կտակարանի ընթերցանության ժամանակ, երբ հասնում էին ՅԵՀՈՎԱ բառին, նրանք դրա փոխարեն արտասանում էին «Տեր»: Դրա համար ՅԵՀՈՎԱ բառի փոխարեն անգլերեն թարգմանություններում գրված է ՏԵՐ:

4. Նաև, ինչպես նաև Էլ-ի հետ, ՅԱՀՎԵ անունը հաճախ կապակցվում է ուրիշ բառերի հետ՝ տալով հատուկ նշանակություն Իսրայելի Ուխտի Աստծո որոշակի առանձնահատկությանը: Քանի որ այսպիսի տարբերակները շատ են, ահա դրանցից մի քանիսը;

- ա. *YHWH - Yireh* (ՅԱՀՎԵ - Յիրե) (ՅԱՀՎԵ-ն կապահովվի, կհայթայթի), Ծննդ. 22:14
- բ. *YHWH - Rophekha* (ՅԱՀՎԵ - Ռոֆեքխա) (ՅԱՀՎԵ-ն քո բժիշկն է), Ել. 15:26
- գ. *YHWH - Nissi* (ՅԱՀՎԵ - Նիսսի) (ՅԱՀՎԵ իմ դրոշակն է), Ել. 17:15
- դ. *YHWH - Meqaddishkem* (ՅԱՀՎԵ-Սեքադիշկեմ) (ՅԱՀՎԵ- Նա, որ քեզ սրբացնում է), Ել. 31:13
- ե. *YHWH - Shalom* (ՅԱՀՎԵ - Շալոմ) (ՅԱՀՎԵ-ն Խաղաղություն է), Գառ. 6:24
- զ. *YHWH - Sabbaoth* (ՅԱՀՎԵ - Սաբաոթ) (ՅԱՀՎԵ- Չորաց Աստված), I Թագ. 1:3,11; 4:4; 15:2; հաճախ մարգարեական գրքերում)
- է. *YHWH - Ro'I* (ՅԱՀՎԵ - Ռո'ի) (ՅԱՀՎԵ-ն իմ հովիվն է), Սաղ. 23:1
- ը. *YHWH - Sidqenu* (ՅԱՀՎԵ - Սիդկենյու) (ՅԱՀՎԵ-ն մեր արդարությունը), Եր. 23:6
- թ. *YHWH - Shammah* (ՅԱՀՎԵ - Շամմահ) (ՅԱՀՎԵ-ն այնտեղ է), Եզ. 48:35

1:5 «մենք» Պողոսը ոչ մի անձի անուն չի նշում իր ներածության մեջ ինչպես նա հաճախ անում է մյուս թղթերում: Այս առաջին արտահայտությունը վերաբերվում է Գամասկոսի ճանապարհին Պողոսի դարձի գալուն և ծառայության նշանակմանը (հմմտ. Գործ.9), որը խստիվ ենթադրում է/ակնարկում է խմբագրական օգտագործումը «մենք»-ի:

«ընդունեցինք շնորհք և առաքելություն» Պողոսը հաստատում է ոչ միայն փրկության պարզև քրիստոսի միջոցով, այլ նաև դրա հետ կապված հեթանոսներին առաքյալ լինելու կոչումը: Այս ամենը տեղի ունեցավ վայրկենական Գամասկոսի ճանապարհին (հմմտ. Գործ.9): Գա արժանիք չէր այլ նպատակապես շնորհք.

«հավատքի հնազանդության համար» Սա երկրորդ անգամն է օգտագործվում *eis* նպատակային կոնտեքստում (հմմտ. 1հ.): Ավետարանը վերականգնում է Աստծո պատկերը մարդու մեջ Հիսուսի վրա ունեցած հավատքի միջոցով: Սա թույլ է տալիս, որ Աստծո բուն նպատակը երևա, որը հաղորդակցությունը այն մարդկանց հետ, ովքեր անդրադարձնում են Նրա կերպարը (հմմտ. 7հ):

NASB, JB	“the obedience of faith”
NKJV	“for obedience to the faith”
NRSV	“to bring about the obedience of faith”
TEV	“to believe and obey”

Արևելահայերեն «հավատքի հնազանդության համար»
Արևմտահայերեն «հավատքի հնազանդության համար»

Սա առաջին օգտագործումն է “հավատք” հիմնական տերմինի հռոմեացիս թղթում: Այս գլխում և գրքում երեք տարբեր կերպերով է օգտագործվում:

1. Համար 5. Այն օգտագործվում է ճշմարտության մարմին կամ վարդապետություններ կապված Հիսուսի և քրիստոնեական կյանքի հետ (հմմտ. Գործք 6:7; 13:8; 14:22; 16:5; Հռ. 14:1; 16:26; Գաղ. 1:23; 6:10; Հուդա 3,20):
2. Համար 8. Այն օգտագործված է անձնական վստահություն Հիսուսի վրա առումով: Անգլերեն «հավատալ», «հավատք» և «վստահություն» տերմինները թարգմանվում են հունարեն մեկ բառով (*pistis/pisteuo*): Ավետարանը թե գաղափարային (վարդապետական) և թե անձնական (հմմտ. 16հ.; Հովհ. 1:12; 3:16):
3. Համար 17. Այն օգտագործվում է իր Հին Կտակարանային իմաստով վստահության արժանի, հավատարմություն, կամ հուսալիություն: Սա Ամբակ. 2:4 նշանակությունն է: Հին կտակարանում չկար զարգացրած վարդապետություն հավատքի մասին, բայց հավատքի

կյանքի վերաբերյալ օրինակ օրինակի հետևից (հմմտ. Աբրահամ Ծննդ. 15:6); ոչ կատարյալ հավատք սակայն պայքարող հավատք (հմմտ. Եբր. 11): Մարդու հույսը ճիշտ հավատալու կամ կատարելու կարողությունը չէ, այլ Աստծո կերպարի մեջ է: Միայն Աստված է հավատարիմ:

Կան մի շարք գործողություններ, որոնք կարող են կոչվել փրկության իրադարձություն: (1) ապաշխարություն (հմմտ. Մարկ.1:15; Դուկ.13:3,5; Գործք 3:16,19; 20:21); (2) հավատք (հմմտ. Հովհ.1:12; 3:16; Գործք 16:31); (3) հնազանդություն (հմմտ. 2 Կորն.9:13; 10:5; 1 Պետ. 1:2,22); և (4) համբերատարություն (հմմտ. 2 Կորնթ. 4:1,16; Գաղ. 6:9; 2 Թես. 3:13);: Սրանք Նոր Ուխտի պայմաններն են: Սենք պետք է ընդունենք և շարունակենք ընդունել Աստծո առաջարկած գոհր Քրիստոսով (հմմտ. 16հ.; Հովհ. 1:12):

- NASB** “for His name’s sake”
- NKJV** “for His name”
- NRSV** “for the sake of his name”
- TEV** “for the sake of Christ”
- NJB** “for the honor of his name”

Արևելահայերեն « նորա անունի համար »
Արևմտահայերեն «անոր անունին համար»

Տես Հատուկ Թեմա 10:9

- NASB, NRSV** “among all the Gentiles”
- NKJV** “among all nations”
- TEV** “people of all nations”
- JB** “to all pagan nations”

Արևելահայերեն «ամեն ազգերի մեջ »
Արևմտահայերեն «բոլոր ազգերում մեջ»

Սա տիեզերական ավետարան է: Աստծո փրկության խոստումը Ծննդոց 3:15-ում ներգրավում է ամբողջ մարդկությունը: Հիսուսի փոխարինող մահը ներգրավում է Ադամի բոլոր ընկած որդիներին (հմմտ. Հովհ. 3:16; 4:42; Եփես. 2:11-3:13; 1 Տիմ. 2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ. 3:9): Պողոսը՝ Աստծո ավետարանը հեթանոսներին քարոզելը, համարում է հատուկ կանչ (հմմտ. Գործք 9:15; 22:21; 26:17; Հռ. 11:13; 15:16; Գաղ. 1:16; 2:29; Եփես. 3:2,8; 1 Տիմ. 2:7; 2 Տիմ. 4:17):

1:6 «ղուք էլ» Պողոսը արտակարգ օրինակ էր (եկեղեցուն հալածողը) Աստծո շնորհքի, բայց նրա ընթերցողները նույնպես Աստծո շնորհքի անարժան օրինակներ էին:

- NASB, NKJV** “the called of Jesus Christ”
- NRSV** “who are called to belong to Jesus Christ”
- TEV** “whom God has called to belong to Jesus Christ”
- JB** “by his call belong to Jesus Christ”

Արևելահայերեն « Յիսուս Քրիստոսի կանչուածներն էք »
Արևմտահայերեն « Յիսուս Քրիստոսի կանչուածներն էք »

Սա հնարավոր է (1) բառախաղ է «եկեղեցի» բառի , որը նշանակում էր «կանչվածներ» կամ «հավաքվածներ»; (2) վերաբերում է աստվածային ընտրությանը (հմմտ. Հռ. 8:29-30; 9:1; Եփես. 1:4, 11; 3:21; 4:1,4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԱՆՉՎԱԾ

Հավատացյալների կանչը և ընտրությունը Աստծո ձեռքին է: Աստված է ընտրում, կանչում դեպի Իրեն (հմմտ. Հովհ.6:44, 65; 15:16; 1Կորն.1:12; Եփես. 1:4-5,11): «Կանչ» տերմինը օգտագործված է աստվածաբանական մի քանի իմաստով.

Ա. Մեղավորները կանչված են փրկության Աստծո շնորհքով Քրիստոսի կատարած-ավարտված գործի միջոցով և Հոգու համոզելովը (*kletos*, հմմտ. Հն. 1:6-7; 9:24, որը աստածաբանորեն նման է 1Կորն.1:1-2 և 2 Տիմ. 1:9; 2 Պետ. 1:10):

Բ. Մեղավորները կանչված են Տիրոջ անունով փրկվելու (*epikaleY*, հմմտ. Գործք 2:21; 22:16; Հն.10: 9-13): Այս դրույթը հրեական պաշտամունքի խոսվածքի ոճ է:

Գ. Հավատացյալները կանչված են քրիստոսանման կյանքեր ապրելու (*klesis*, հմմտ. 1Կորն.1:26; 7:20; Եփես. 4:1; Փիլ. 3:14; 2 Թես.1:11; 2 Տիմ. 1: 9):

Դ. Հավատացյալները կանչված են ծառայության (հմմտ. Գործք 13:2; 1Կորն.12:4-7; Եփես. 4:1):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:7

⁷Չեզ ամենիդ՝ որ Հռովմումն էք՝ Աստուծո սիրելիներիդ՝ կանչուած սուրբերիդ, շնորհք լինի ձեզ եւ խաղաղութիւն Աստուածանից՝ մեր Հօրիցը եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը:

NASB (UPDATED) TEXT: 1:7

⁷to all who are beloved of God in Rome, called *as* saints: Grace to you and peace from God our Father and the Lord Jesus Christ.

1:7 «Աստուծո սիրելիներիդ» Այս արտահայտությունը հաճախ օգտագործվում էր Հիսուսի համար (հմմտ. Մաթ. 3:17; 17:5): Հիմա յան օգտագործված էր եկեղեցու համար Հռոմում: Սա ցույց է տալիս Աստծո սիրո խորությունը նրանց համար, ովքեր վստահում են Իր Որդուն: Այս տեսակ փոխանցումը կարող ենք տեսնել Եփես. 1:20 (Աստծո գործողությունները Հիսուսի անունից) և 2:5-6 Հիսուսի գործողությունները հավատացյալների անունից):

«Հռովմում» Պողոսը չի հիմնել այս եկեղեցին: Ոչ ոք չգիտե թե ով է հիմնադիրը: Հռոմեացի թուղթը իրեն ներկայացնում է եկեղեցու, որը արդեն հիմնված էր: Հռոմեացի թուղթը պողոսի ամենագարգացված ներկայացումն է ավետարանի, որը նա քարոզել է: Սա տեղական իրավիճակի կողմից ամենաքիչ ներգործվածն է, չնայած որ այնտեղ գոյություն ուներ լարվածություն Հրեա և հեթանոս հավատացյալների միջև, որոնց նա դիտողություն է անում ամբողջ նամակի մեջ:

NASB	“called <i>as</i> saints”
NKJV, NRSV, JB	“called to be saints”
TEV	“called to be his own people”

Արևելահայերեն « կանչուած սուրբերիդ,»

Արևմտահայերեն «սուրբ ըլլալու կանչուածներուդ»

«Սրբեր» տերմինը վերաբերվում է Քրիստոսի մեջ եղող հավատացյալներին, ոչ թե նրանց անմեղությանը: Այն նաև կարող է նկարագրել նրանց քրիստոսանման լինելու առաջընթացը: Տերմինը միշտ ՀՈԳՆԱԿԻ էր բացի Փիլ. 4:21: Ինչևէ,նույնիսկ այս կոնտեքստում այն ընդհանուր է: Քրիստոնյա լինել նշանակում է լինել համայնքի, ընտանիքի, մարմնի մաս:

Համար 1-ը ցույց է տալիս , որ Պողոսը կանչված էր առաքյալ լինելու: Հավատացյալները «Հիսուս Քրիստոսի կանչվածներ» -ն են համար 6: հավատացյալները նաև կոչվում են «սուրբեր» համար 7: Այս «կանչ»ը Նոր Կտակարանի ձև է հաստատելով Աստծո նախաձեռնող նախապատվության ճշմարտությունը: Ոչ մեկ ընկած մարդ երբևէ իրեն չի կոչել (հմմտ. 3:9-13; Ես. 53:6; 1 Պետ.2:25): Աստված է միշտ նախաձեռնությունը վերցնում (հմմտ. Հովհ. 6:44, 65; 15:16): Նա միշտ ուխտը մեզ է բերում: Սա մեր փրկության ճշմարտությունն է (մեզ վերագրած արդարությունը կամ օրինական դիրքը, բայց նաև մեր շնորհալիությունը արդյունավետ ծառայության համար (հմմտ. 1 Կորն. 12:7,11) և մեր քրիստոնեական կյանքերը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲԵՐ

Սա հունարեն համարժեքն է եբրայերեն *kadash* բառի, որն ունի հիմնական իմաստ ինչ-որ մեկին, ինչ որ մի բան կամ ինչ որ մի տեղ մի կողմ դնել, առանձնացնել Եհովայի բացառիկ օգտագործման համար: Այն ցույց է տալիս անգլերեն «սուրբ» (sacred) գաղափարը: Եհովան առանձին է մարդուց Իր բնությամբ (հավիտենական ոչ-ստեղծված Հոգի) և Նրա կերպարը (բարոյական կատարելություն): Նա է չափանիշը, որով չափվում և դատվում են մնացած բոլորը: Նա գերազանցն է, Սուրբը:

Աստված ստեղծեց մարդկանց հաղորդակցվելու համար, բայց անկումը (Ծնն. 3) պատճառ դարձավ բարոյական և հարաբերության խոչընդոտի՝ Սուրբ Աստծո և մեղավոր մարդկության միջև, Աստված ընտրեց վերականգնել Իր գիտակից ստեղծագործությունը; ուստի, Նա կոչ է անում Իր ժողովրդին «սուրբ» լինել (հմմտ. Գևտ.11:44; 19:2; 20:7,26; 21:8): Եհովայի հետ ունեցած հավատքի հարաբերությունը Իր ժողովուրդը սրբացավ իրենց Նրա վրա ունեցած ուխտի հիման վրա, բայց նաև կանչված են սուրբ կյանքով ապրելու (հմմտ. Մաթ. 5:48):

Այս սուրբ կյանքը հնարավոր է, որովհետև հավատացյալները ամբողջությամբ ընդունված են և ներված՝ Հիսուսի կյանքի և գործի միջոցով և Սուրբ Հոգու ներկայությունը նրանց մտքերում և սրտերում է: Սա հաստատում է պարագոքսալ իրավիճակը

1. սուրբ լինել Քրիստոսի վերագրված արդարությամբ
2. կանչված ապրելու սուրբ կյանքով՝ Հոգու ներկայության պատճառով

Հավատացյալները «սուրբեր» են (*hagios*) որովհետև մեր կյանքերում ներկա է (1) Սուրբի կամքը (Հայրը); (2) Սուրբ Որդու գործը (Հիսուս); և (3) Սուրբ Հոգու ներկայությունը:

Նոր Կտակարանտ սուրբերը բառը միշտ ներկայացնում է ՀՈԳՆԱԿԻ թվով (բացի մի տեղից Փիլ. 4:12, բայց նույնիսկ հետո կոնտեքստը այն դարձնում է ՀՈԳՆԱԿԻ): Փրկված լինել նշանակում է ընտանիքի, մարմնի, շինության մաս լինել: Աստվածաշնչյան հավատքը սկսվում է անձնական ընդունումով, բայց արդյունքում լինում է համագործակցող հաղորդակցություն: Մենք ամենքս ունենք պարզև (հմմտ. 1 Կոր. 12:11) առողջություն, ան և բարեկեցություն Քրիստոսի մարմնի - եկեղեցին (հմմտ. 1 Կոր. 12:7). Մենք փրկված ենք ծառայելու համար: Սրբությունը ընտանեկան առանձնահատկություն է:

«շնորհք լինի ձեզ և խաղաղութիւն Աստուածանից» Սա Պողոսին բնորոշ բացման օրինանքի խոսքն է: Սա ավանդական հունարեն «ողջույն» (*charain*) տերմինի բառախառն է և եզակի քրիստոնեական տերմին «շնորհք» (*charis*). հնարավոր է Պողոսը միացնում է այս հունարեն բացման խոսքը եբրայերեն ավանդական ողջույնի հետ *Shalom* կամ “խաղաղություն.” Ինչևէ, սա միայն ենթադրություն է: Աստվածաբանական շնորհքին միշտ նախորդում է խաղաղությունը:

«մեր Հօրիցը և Տէր Յիսուս Քրիստոսիցը» Սովորաբար Պողոսն օգտագործում է միայն մեկ ՆԱԽԴԻՐ երկու անունների համար (հմմտ. 1 Կոր. 1:3; Գաղ. 1:3; Եփ. 1:2; Փիլ. 1:2; II Թես. 1:2; I

Տիմ. 1:1; II Տիմ. 1:2; Տիտոս 1:4): Սա քերականորեն կապակցող Երրորդության այս երկու Անձերի իր ձևն էր Սա ընդգծում էր Հիսուսի աստվածությունն ու հավասարությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՅՐ

Հին Կտակարանը ներկայացնում է մտերմիկ ընտանեկան փոխաբերություն Աստված որպես Հայր;

1. Իսրայել ազգը հաճախ նկարագրվում է որպես Եհովայի «որդի» (հմմտ. Ովս. 11:1; Մաղ. 3:17)
2. նույնիսկ ավելի շուտ 2 Օրինացում օգտագործվում է Աստված որպես Հայր նմանությունը (1:31)
3. 2 Օրինաց 32 Իսրայելը կոչվում է «իր որդիները» իսկ Աստված կոչվում է «ձեր հայրը»
4. այս նմանությունը հաստատվում է Մաղ. 103:13 և զարգանում Մաղ. 68:5 (որբերի հայրը)
5. այն ընդունված էր մարգարեություններում (հմմտ. Ես. 1:2; 63:8; Իսրայելը որպես որդի, Աստված որպես Հայր, 63:16; 64:8; Եր. 3:4,19; 31:9):

Հիսուսը խոսեց արամերեն, որը նշանակում է, որ շատ տեղերում, որտեղ հայտնվում է «Հայր» բառը, հունարենով, *Pater*, այն կարող է վերաբերել արամերեն *Abba* (հմմտ. 14:36): Այս հայտնի տերմինը «Daddy» կամ «Papa» անդրադարձնում է Հիսուսի մտերմությունը Հոր հետ; Սա հայտնելով Իր հետևորդներին նաև քաջալերում է մեզ մեր մտերմությունը Հոր հետ: «Father» տերմինը օգտագործվում էր միայն Հին Կտակարանում Եհովայի համար, բայց Հիսուսն այն օգտագործում է հաճախ: Սա մեծ հայտնություն է մեր նոր հարաբերությունը Աստծո հետ Քրիստոսի միջոցով:

NASB (UPDATED) TEXT: 1:8-15

⁸First, I thank my God through Jesus Christ for you all, because your faith is being proclaimed throughout the whole world. ⁹For God, whom I serve in my spirit in the *preaching of the gospel of His Son*, is my witness *as to how unceasingly I make mention of you*, ¹⁰always in my prayers making request, if perhaps now at last by the will of God I may succeed in coming to you. ¹¹For I long to see you so that I may impart some spiritual gift to you, that you may be established; ¹²that is, that I may be encouraged together with you *while* among you, each of us by the other's faith, both yours and mine. ¹³I do not want you to be unaware, brethren, that often I have planned to come to you (and have been prevented so far) so that I may obtain some fruit among you also, even as among the rest of the Gentiles. ¹⁴I am under obligation both to Greeks and to barbarians, both to the wise and to the foolish. ¹⁵So, for my part, I am eager to preach the gospel to you also who are in Rome.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ: 1:8-15

⁸Առաջ զոհանում եմ Աստուածանից Յիսուս Քրիստոսի ձեռովը ձեր ամենի համար. որ ձեր հաւատքը բոլոր աշխարհքի մէջ պատմվում է: ⁹Որովհետեւ Աստուած ինձ վկայ է, որին ես պաշտում եմ իմ հոգովը նորա Որդու աւետարանումը, թէ ինչպէս անդադար ձեզ յիշում եմ: ¹⁰Ամեն ժամանակ իմ աղօթքներումն աղաչելով՝ որ լինի թէ մի անգամ յաջողի ինձ՝ Աստուծոյ կամքովը ձեզ մօտ գալ: ¹¹Որովհետեւ շատ ցանկանում եմ ձեզ տեսնել, որ մի հոգետր շնորհք հաղորդեմ ձեզ ձեր հաստատուելու համար. ¹²Այսինքն՝ որ ձեզ հետ միխթարուիմ մեր փոխադարձ՝ իմ եւ ձեր հաւատքի միջոցով: ¹³Եղբարք, չեմ կամենում որ դուք չգիտենաք, թէ շատ անգամ միտքս դրի որ ձեզ մօտ գամ, (թեև մինչեւ հիմա արգիլուեցայ.) որ ձեր միջումն էլ պտուղ ունենամ՝ ինչպէս եւ ուրիշ հեթանոսների

մէջ:¹⁴ Որովհետեւ եւ Յոյներին եւ Բարբարոսներին, իմաստուններին եւ անմիտներին պարտական եմ: ¹⁵ Այնպէս՝ ինովսանն յօժար եմ ձեզ էլ, որ Հռովմունն էք՝ աւետարանը քարոզել:

1:8 «Առաջ» Այս կոնտէքստում «առաջ» նշանակում է «սկզբից» կամ «Ես պետք է սկսեմ» (թարգմանությունը Ջ. Բ. Փիլիպսի J. B. Phillips):

«գոհանում եմ Աստուածանից Յիսուս Քրիստոսի ձեռովը» Պողոսը, որպէս կանոն, իր աղոթքներն ուղղում է Աստծուն Հիսուս Քրիստոսի միջոցով: Հիսուսն է մեր միակ ճանապարհը Աստծուն մոտենալու: Տես Հատուկ Թեմա; Պողոսի փառաբանության և գոհության աղոթքները 7:25.

«ձեր ամենի համար» Այս «ամենի» օգտագործումը ինչպէս 7h., հնարավոր է անդրադարձնում է նախանձն ու կոնֆլիկտը հրեա հավատացյալ առաջնորդների, որոնք փախան Հռոմ Ներոնի հրովարտակից և համագոր հավատացյալ հեթանոս առաջնորդների միջև , որոնք փոխարինել էին նրանց մի քանի տարի: Հռոմ. 9-11 հնարավոր է ուղված է այս նույն խնդրին:

Այն նաև հնարավոր է, որ այս արտահայտությունը ուղղված է «տկարին» և «ուժեղին» Հռ. 14:1-15:13. Աստված սիրում է Հռոմի ամբողջ եկեղեցուն և Նա հավասարապես է նրանց սիրում:

« որ ձեր հաւատքը բոլոր աշխարհքի մէջ պատմվում է» Հռոմ. 16:19 ակնարկ է անում նույն ճշմարտությունը: Սա պարզ արևելյան չափազանցություն էր (հիպերբոլա) հռոմեական աշխարհին վերաբերող (հմմտ. I Թես. 1:8):

1:9 «Աստուած ինձ վկայ է» Պողոսը երդում էր անում Աստծո անունով (հմմտ. 9:1; II Կոր. 1:23; 11:10-11,31; 12:19; Գաղ. 1:20; I Թես. 2:5): Սա իր ճշմարիտ լինելը հաստատելու իր հրեական ձև էր:

« իմ հոգովը » Սա լավ օրինակ է *pneuma*-ի օգտագործման մարդու հոգու հետ կապված (հմմտ. 8:5,10,16; 12:11) օգտագործված մարդու կյանքի իմաստով (այն է, շունչ, եբրայերեն *ruach*, հմմտ. Ծննդ. 2:7):

1:10 «Ամեն ժամանակ իմ աղօթքներումն աղաչելով» Պողոսը չի հիմնել այս եկեղեցին, բայց նա շարունակաբար աղոթում էր նրանց համար (հմմտ. II Կոր. 11:28), ինչպէս նա անում էր բոլոր իր եկեղեցիների համար: Տես հատուկ Թեմա; Բարեխոսական Աղոթք 8:26. Ինչևէ, Պողոսն ուներ շատ ընկերներ և գործընկերներ հռոմեական եկեղեցում ինչպէս հստակ ցույց է տալիս 16-րդ գլուխը:

« որ լինի թէ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ընդունվում է որպէս ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Պողոսը պլանավորեց այցելել հռոմ Իսպանիա գնալու ճանապարհին (հմմտ. 15:22-24): Հավանական է նա երկար մնալու մտադրություն չունէր: Պողոսը միշտ նոր դաշտ էր փնտրում, որտեղ ոչ ոք չէր գործել (հմմտ. 15:20; II Կոր. 10:15,16): Հնարավոր է, որ Հռոմեացի թղթի նպատակներից մեկ դրամական միջոցներ խնդրելն էր իր Իսպանիա միսիոներական ճանապարհորդության համար (հմմտ. 15:24):

« մի անգամ յաջողի ինձ՝ Աստուծոյ կամքովը ձեզ մօտ գալ » Սա զուգահեռվում/ համեմատվում է 13h. և 15:32: Պողոսը չէր կարծում, որ իր կյանքը և ճամփորդության ծրագրերը պատկանում էին իրեն, այլ՝ Աստծուն (հմմտ. Գործք 18:21; I Կոր. 4:19; 16:7): Տես Հատուկ Թեմա 12:2.

1:11 « Որովհետև շատ ցանկանում եմ ձեզ տեսնել» Սա զուգահեռ է 15:23: Երկար ժամանակ պողոսն ուզում էր հանդիպել Հռոմի հավատացյալների հետ: (հմմտ. Գործք 19:21)

« որ մի հոգեւոր շնորհք հաղորդեմ ձեզ» «հոգևոր շնորհք/պարգև» արտահայտությունը օգտագործվում էր հոգևոր խորաթափանցության կամ օրհնության իմաստով (հմմտ. 11:29; 15:27): Պողոսը իրեն համարում է կանչված առաքյալ հեթանոսների համար (հմմտ. 15հ.):

«ձեր հաստատուելու համար» Սա ԱՕՐԻՍԾ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ԱՆՈՐՈՇ ԳԵՐԲԱՅ *histēmi*. Տես Հատուկ Թեմա 5:2.

1:12 Սա քրիստոնյա հաղորդակցության նպատակն է: Պարգևները հավատացյալների համար էին համայնքում ծառայության համար: Հավատացյալները օժտված են պարգևներով ընդհանուր լավի համար (հմմտ. I Կոր. 12:7): Բոլոր պարգևները պատշաճ են: Բոլոր պարգևները տրվում են Հոգու կողմից փրկության պահին (հմմտ. I Կոր. 12:11): Բոլոր հավատացյալները կանչված են, պարգևներով օժտված, ծառայող (հմմտ. Եփ. 4:11-12): Պողոսը պարզ հաստատում է իր առաքյալ լինելու հեղինակությունը, բայց նաև մեծ կարևորությունը՝ հավատացյալների փոխադարձ կախվածությունը եկեղեցուց: Հավատացյալները մեկը մյուսի կարիքն ունեն:

1:13 « Եղբարք, չեմ կամենում որ դուք չզիտեճաք» Սա իդիոմ/ոճ է, որը Պողոսը հաճախ օգտագործում է կարևոր մտքերը ներկայացնելու համար (հմմտ. 11:25; I Կոր. 10:1; 12:1; II Կոր. 1:8; I Թես. 4:13): Սա նման է Հիսուսի «Ամեն, ամեն/ճշմարիտ, ճշմարիտ» գրական նպատակին:

«թեև մինչևի հիմա արգիլուեցայ» Սա ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ -ի բայ է: Այս նույն արտահայտությունը հանդիպում է I Թես. 2:18 որտեղ Սատանան է կատարողը/խափանողը: Պողոսը հավատում էր, որ իր կյանքը առաջնորդվում էր Աստծո կողմից, բայց խզվում էր Սատանայի կողմից: Ինչ-որ ձևով երկուսն էլ ճիշտ են (հմմտ. Հոր 1-2; Գան. 10): Այս տերմինի առկայությունը 15:22-ում առընչվում էր արգելքին Պողոսի միսիոներական գործում արևելյան Միջերկրականի տարածքում, որը դեռ ամբողջական չէ:

« որ ձեր միջումն էլ պտուղ ունենամ » Այս կոնտեքստում «պտուղ» կարող է վերաբերել դարձի եկողներին, բայց Հովհ. 15:1-8 և Գաղ. 5:22 այն վերաբերում է քրիստոնեայի հասունությանը: Մաթ. 7 ասում է «իրենց պտուղներիցը ճանաչեցեք նրանց», բայց այն չի սահմանում պտուղ տերմինը: Լավագույն զուգահեռը/համանմանությունը Փիլ. 1:22, որտեղ Պողոսն օգտագործում է այս նույն գյուղատնտեսական փոխաբերությունը:

1:14 «պարտական եմ» Պողոսը մի քանի անգամ օգտագործում է այս տերմինը Հռոմեացիս թղթում:
1. Պողոսը պարտավորված է քարոզել ավետարանը բոլոր հեթանոսներին:
2. Պողոսը պարտական չէ «մարմնին» (8:12)
3. Հեթանոս եկեղեցին պարտավորված է օգնել մայր եկեղեցուն Երուսաղեմում (15:27)

«Յոյներին» Սա վերաբերում էր քաղաքակիրթ, մշակութային մարդկանց Միջերկրական ծովի շուրջ երող: Ալեքսանդր Մեծը և նրա հետևորդները հելլենացրել էին հայտնի աշխարհը: Հռոմեացիները վերցրել և յուրացրել էին հունական մշակույթը:

«Բարբարոսներին» Այս (*onomatopoeia*) տերմինը նշանակում էր անուս կամ անմշակույթ մարդկային խմբեր, սովորաբար հյուսիսում: Դա օգտագործվում էր այն մարդկանց համար, ովքեր

չէին խոսում հունարեն: Այս խոսքը հնչում էր ինչպես «բար բար բար» հույների և հռոմեացիների համար:

« **իմաստուններին եւ անմիտներին** » Հնարավոր է, որ սա զուգահեռ է հունարենում բարբարոսին, բայց և պարտադիր չէ, որ այդպես լինի: Սա կարող է վերաբերել բոլոր մարդկային խմբերի կամ անհատներին:

NASB (UPDATED) TEXT: 1:16-17

¹⁶For I am not ashamed of the gospel, for it is the power of God for salvation to everyone who believes, to the Jew first and also to the Greek. ¹⁷For in it *the* righteousness of God is revealed from faith to faith; as it is written, “BUT THE RIGHTEOUS MAN SHALL LIVE BY FAITH.”

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ: 1:16-17

¹⁶Որովհետեւ ես Քրիստոսի ւստարանը ամօք չեմ համարում. որովհետեւ Աստուծո զօրութիւն է փրկելու համար ամեն հաւատացողին, առաջ Հրէային՝ եւ յետոյ Յոյնին: ¹⁷Որովհետեւ Աստուծով արդարութիւնը նորանով յայտնվում է՝ հաւատքից հաւատքի մէջ. ինչպէս գրուած է թէ Արդարը հաւատքից կապրի:

1:16-17 16-17hh. ամբողջ գրքի թեման են: Այս թեման ընդլայնվում և ամփոփվում է 3:21-31.

Արևելահայերեն « ամօք չեմ համարում»

Արևմտահայերեն «ամօք չեմ սեպեր»

1:16

NASB, NRSV “I am not ashamed of the gospel”

NKJV “I am not ashamed of the gospel of Christ”

TEV “I have complete confidence in the gospel”

JB “I am not ashamed of the Good News:”

Պողոսը կարող է ակնարկում էր Հիսուսի խոսքերը Մարկ. 8:38 և Բուկ. 9:26: Նա չի ամաչում ավետարանի կոնտեքստից կամ դրա հետևանքով առաջացած հալածանքից (հմմտ. II Տիմ. 1:12,16,18).

I Կոր. 1:23 հրեաները ամաչում էին ավետարանից, որովհետև այն հաստատեց տառապող Մեսիա իսկ հույները, որովհետև այն հաստատեց մարմնի հարությունը:

«**փրկելու**» Հին Կտակարանում, եբրայերեն տերմինը (*yasho*) հիմնականում վերաբերում էր ֆիզիկական ազատագրմանը (հմմտ. Հակ. 5:15), բայց Նոր Կտակարանում հունարեն տերմինը (*sōzō*) վերաբերում է հիմնականում հոգևոր ազատագրմանը (հմմտ. I Կոր. 1:18, 21). Տես Ռոբերտ Բ. Գլորդլեստոնի «Հին Կտակարանի Հոմանիշները», էջ. 124-126; (Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*, pp.124-126):

Արևելահայերեն « ամեն հաւատացողին»

Արևմտահայերեն «բոլոր հաւատացեալներուն»

NASB “to every one who believes”
NKJV “for everyone who believes”
NRSV “to everyone who has faith”
TEV “all who believe”
JB “all who have faith”

Ավետարանը բոլոր մարդկանց համար է (oh, որքան եմ սիրում “ամեն ոք,” “ով ոք,” “բոլոր” բառերը), բայց հավատալը ընդունելու պայմաններից մեկն է (հմմտ. Գործք 16:30-31). Մյուսը ապաշխարությունն է (հմմտ. Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21). Աստված մարդկանց հետ վարվում է ուխտի պայմանով: Նա միշտ նախաձեռնում է և մշակում օրակարգ (հմմտ. Հովհ. 6:44,65): Բայց կան մի քանի փոխադարձ պայմաններ, տես ծանուցումը 1:5:

Հունարեն տերմինը, այստեղ թարգմանված “հավատալ,” կարող է նաև թարգմանվել “հավատք” կամ “վստահություն” տերմիններով: Հունարեն բառը ունի ավելի լայն իմաստ, քան որևէ մեկ անգլերեն բառ: Ուշադրություն դարձրեք, որ սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԴԵՐԲԱՅ է: Փրկարար հավատքը շարունակական հավատք է (հմմտ. I Կոր. 1:18; 15:2; I Կոր. 2:15; I Թես. 4:14)

Բնագրում եբրայերեն տերմինը կապված “հավատք” բառի հետ ավելի վեր իմաստ ունի քան հունարեն տերմինը, որը նշանակում է կայուն վիճակ, մարդ, որը իր ոտքերը լայն բացած ամուր կանգնած է, որ հազիվ կարողանաս նրան տեղաշարժել: Հին Կատակարանի փոխաբերության հականիշը կնշանակի «իմ ոտքերը տիղմոտ ցեխի մեջ էին» (Սաղ. 40:2), « քիչ էր մնացել ոտներս սահեին» (Սաղ. 73:2). Եբրայերեն համապատասխան արմատները *emun, emunah, aman*, փոխաբերականորեն էր օգտագործվում մեկի համար, որը հուսալի էր, հավատարի կամ վստահելի: Փրկարար հավատքը չի անդրադարձնում ընկած մարդու հավատարիմ լինելու կարողությունը, այլ Աստծո: Հավատացյալների հույսերը իրենց կարողությունների մեջ չեն այլ Աստծո կերպարի և խոստումների: Դա Նրա հուսալիությունն է, Նրա հավատարմությունը, Նրա խոստումները:

«առաջ Հրեային» Սրա պատճառը համառոտ քննարկվում է 2:9-10 և 3 և ամբողջությամբ զարգանում 9-11 գլուխներում: Դրան հետևում է Հիսուսի միտքը/դրույթը Մաթ. 10:6; 15:24; Մարկ. 7:27:

Սա կարող է վերաբերել այն նախանձությանը, որը կար Հռոմի եկեղեցում հրեաների և հեթանոսների միջև:

1:17 «Աստուծով արդարությունը» Այս արտահայտությունը կոնտեքստում վերաբերում է (1) Աստծո կերպարին, և (2) ինչպես է Նա այդ կերպարը տալիս մեղավոր մարդուն: Երուսաղեմ Աստվածաշնչի թարգմանությունը ունի «սա այն է ինչ հայտնում է Աստծո արդարությունը»: Չնայած սա վերաբերում է հավատացյալի բարոյական ապրելաճին, այն հիմնականում վերաբերում է նրա օրինական դիրքին Արդար Դատավորի առջև: Աստծո արդարության մեղադրանքը ընկած, մեղավոր մարդուն, Բարեփոխումից սկսած բնութագրվել է որպես, «արդարացում հավատքով» (հմմտ. II Կոր. 5:21; Փիլ. 3:9): Սա այն համարն էր, որը փոխեց Մարտին Լյութերի կյանքն ու աստվածաբանությունը: Ինչևէ, արդարացման նպատակն է սրբացումը, Զրիստոսանմանություն, կամ Աստծո արդար կերպարը (հմմտ. Հռ. 8:28-29; Եփ. 1:4; 2:10; Գաղ. 4:19): Արդարությունը ոչ միայն օրինական վճիռ է այլ նաև սուրբ կյանք ապրելու կոչ, Աստոծ պատկերը մարդու մեջ պետք է վերականգնվի ֆունկցիոնալ առումով (հմմտ. II Կոր. 5:21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արդարություն»ը այնքան վճռական/կրիտիկական թեմա է, որ Աստվածաշնչի ուսանողը ինքը պետք է իր անձնական ընդարձակ սերտողությունն անի տվյալ գաղափարի շուրջ:

Հին Կտակարանում Աստծո կերպարը բնութագրվում է որպես «ուղիղ» կամ «արդար»: Միջագետքյան տերմինը ինքնի առաջացել է գետի եղեգից, որը օգտագործվում էր որպես շինարարական գործիք պատերի կամ ցանկապատերի հորիզոնական ուժը գնահատելի/ստուգելու համար: Աստված ընտրեց տերմինը փոխաբերական իմաստով Իր բնությունը ցույց տալու համար: Նա է ուղիղ ծայրը (քանոնը) որով բոլոր բաները գնահատվում են: Այս գաղափարը հաստատում է ինչպես Աստծո արդարությունը այնպես էլ Նրա ուղիղ դատելը:

Մարդը ստեղծված էր Աստծո պատկերով (հմմտ. Ծննդ. 1:26-27; 5:1,3; 9:6): Մարդը ստեղծված էր Աստծո հետ հարաբերություն ունենալու համար: Ամբողջ արարչագործությունը բեմ կամ ֆուն/նախադրյալ Աստծո և մարդու փոխադարձ ներգործության համար: Աստված ուզում էր, որ Իր ամենաբարձր արարչագործությունը ճանաչի Իրեն, սիրի Իրեն, ծառայի Իրեն և Իր նման լինի: Մարդու հավատարմությունը/օրինապահությունը ստուգման ենթարկվեց (հմմտ. Ծննդ. 3) և առաջին զույգը ձախողվեց ստուգարքից: Սա բերեց Աստծո և մարդու միջև եղած հարաբերության պառակտմանը/խզում (հմմտ. Ծննդ. 3; Հռ. 5:12-21):

Աստված խոստացավ նորոգել և վերականգնել հաղորդակցությունը (հմմտ. Ծննդ. 3:15). Նա անում է սա Իր կամքի և և Իր Որդու միջոցով: Մարդիկ անընդունակ էին վերականգնելու ճեղքվածքը/խախտումը (հմմտ. Հռ. 1:18-3:20):

Մարդու անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար ուխտի գաղափարն էր՝ հիմնված Իր հրավերքի և մարդու ապաշխարած, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա: Անկման պատճառով մարդիկ համապատասխան գործողության անընդունակ էին (հմմտ. Հռ. 3:21-31; Գաղ. 3): Աստված պետք է նախաձեռնությունը վերցնեք վերականգնելու մարդկանց քանդած ուխտը: Նա դա արեց

1. մարդուն ձրի արդարություն տալով Քրիստոսի կատարած գործի միջոցով (վերագրված/մեղադրած արդարություն):
2. ապահովելով Հոգու բնակվելը մարդու մեջ, որը բերում է արդարություն (էթիկական արդարություն)
3. վերականգնելով Եդեմի պարտեզի հաղորդակցությունը Քրիստոսի միջոցով վերականգնելով Աստծո պատկերը հավատացյալների մեջ (հմմտ. Ծննդ. 1:26-27) (հարաբերության արդարություն):

Ինչևէ, Աստված պահանջում է ուխտային պատասխան: Աստված վճռում է (այն է, ձրի տալիս) և մատակարարու/ապահովում, բայց մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդ կյանք ապրելով
4. համբերությամբ/հաստատակամությամբ

Արդարությունը, ուստի, ուխտին պատկանող է, փոխադարձ գործողություն Աստծո և Իր ամենավեհ ստեղծագործության միջև: Այն հիմնված է Աստծո կերպարի, Քրիստոսի գործի և Հոգու իրավունքի վրա, որին ամեն մի անհատ պետք է անձնապես և շարունակաբար պատշաճ/յուրահատուկ արձագանքի: Գաղափարը/հասկացողությունը կոչվում է «հավատքով արդարացում»: Գաղափարը հայտնվում է Ավետարաններում, բայց ոչ այս տերմիններով: Այն հիմնականում սահմանվում է Պողոսի կողմից, որը օգտագործում է հունարեն «արդարություն» տերմինը իր զանազան տարբերակներով ավելի քան 100 անգամ:

Պողոսը, լինելով կրթված ռաբբի, օգտագործում է *dikaionē* տերմինը իր երբայերեն *SDQ* իմաստով օգտագործված Մեպտուագինդում: Հունական գրվածքներում տերմինը կապված է մեկին, որը համապատասխանում է աստվածության և հասարակության սպասումներին/ակնկալիքների: Երբայերեն իմաստով այն միշտ կառուցված է ուխտի տերմիններով: Եհովան արդար, բարոյական Աստված է: Նա ուզում է, որ Իր ժողովուրդը

արտացոլի Իր կերպարը: Փրկված մարդը դառնում է նոր արարած: Այս նորությունը բերում է աստվածաշնորհության նոր ապրելակերպ (Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին կենտրոնանում է արդարացման վրա): Քանի որ Իսրայելը թեոկրատական էր, չկար պարզ ուրվագիծ աշխարհիկի (հասարակության նորմեր) և հոգևորի (Աստծո կամք) միջև: Այս տարբերությունը արտահայտվում է եբրայերեն և հունարեն տերմիններում թարգմանվելով անգլերեն որպես «արդար/ուղիղ» (կապված հասարակության հետ) և «արդարություն» (կապված կրոնի հետ):

Հիսուսի ավետարանը (բարի լուրը) այն է, որ ընկած մարդկությունը վերականգնվի Աստծո հետ ունեցած հարաբերության մեջ: Պողոսի պարադոքսն այն է, որ Աստված, Քրիստոսի միջոցով, արդարացնում է հանցավորին: Սա իրականացվում է Հոր սիրո, ողորմության և շնորհքի միջոցով; Որդու կյանքի, մահվան և հարության միջոցով; և Հոգու սիրատեծելու և դեպի ավետարանը քաշելու միջոցով: Արդարացումը Աստծո ձրի գործն է, բայց այն պետք է աստվածաշնորհամբ արտահայտվի (Օգոստոսի վերաբերմունքը/դիրքը, որը անդրադարձնում է թե Բարեփոխման շեշտը ավետարանի ձրի լինելու վրա և թե հռոմեական Կաթոլիկի շեշտը սիրո և հավատարմության փոխված կյանքի վրա): Բարեփոխիչների համար “Աստծո արդարություն” տերմինը ՕԲՅԵԿՏԱՅԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ է (այսինքն, գործողություն, որով մեղավոր մարդը ընդունելի է դառնում Աստծո համար [positional սրբացում]), այնինչ կաթոլիկների համար ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ, որը Աստծուն ավելի նմանվելու գործընթաց է (գործնական առաջընթացային սրբացում): Իրականության մեջ այն, անշուշտ, և նա է և նա: Իմ կարծիքով ամբողջ Աստվածաշունչը Ծննդ. 4 – Հայտ. 20, արձանագրությունն է Աստված վերականգնում է Եդեմի պարտեզի հարաբերությունը: Աստվածաշունչը սկսում է Աստված-մարդ հարաբերությունով երկրային միջավայրում (հմմտ. Ծննդ. 1-2) և Աստվածաշունչն ավարտվում է նույն միջավայրով (հմմտ. Հայտ. 21-22): Աստծո պատկերն ու նպատակը կվերականգնվի:

Վերը նշած քննարկումները ապացուցելու համար տես հետևյալ Նոր Կտակարանային հատվածները պարզաբանված հունարեն բառախմբով:

1. Աստված արդար է (հաճախ կապվում է Աստված որպես Գ-ատավոր)
 - ա. Հռ. 3:26
 - բ. II Թես. 1:5-6
 - գ. II Տիմ. 4:8
 - դ. Հայտ. 16:5
2. Հիսուսն արդար է
 - ա. Գործք 3:14; 7:52; 22:14 (Մեսիայի տիտղոսը)
 - բ. Մաթ. 27:19
 - գ. I Հովհ. 2:1,29; 3:7
3. Աստծո կամքը Իր արարչագործության համար արդարությունն է
 - ա. Գևտ. 19:2
 - բ. Մաթ. 5:48 (հմմտ. 5:17-20)
4. Աստծո օժանդակությամբ մատակարարել և արտահայտել արդարություն
 - ա. Հռ. 3:21-31
 - բ. Հռ. 4
 - գ. Հռ. 5:6-11
 - դ. Գաղ. 3:6-14
 - ե. Տրված Աստծո կողմից
 - 1) Հռ. 3:24; 6:23
 - 2) I Կոր. 1:30
 - 3) Եփ. 2:8-9
 - զ. Հավատքով ստացած/ընդունած
 - 1) Հռ. 1:17; 3:22,26; 4:3,5,13; 9:30; 10:4,6,10
 - 2) I Կոր. 5:21

- է. Որդու կատարած գործողության միջոցով
 - 1) Հռ. 5:21-31
 - 2) Ուրբ. 5:21
 - 3) Փիլ. 2:6-11
- 5. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն
 - ա. Մաթ. 5:3-48; 7:24-27
 - բ. Հռ. 2:13; 5:1-5; 6:1-23
 - գ. Ուրբ. 6:14
 - դ. I Տիմ. 6:11
 - ե. II Տիմ. 2:22; 3:16
 - զ. I Հովհ. 3:7
 - է. I Պետ. 2:24
- 6. Աստված կղատի աշխարհը արդարությունով
 - ա. Գործք 17:31
 - բ. II Տիմ. 4:8

Արդարությունը Աստծո առանձնահատկությունն է, ձրի տրված մեղավոր մարդուն Քրիստոսի միջոցով: Դա

1. Աստծո վճիռն է
2. Աստծո պարգևն է
3. Քրիստոսի գործն է

Բայց դա նաև արդար դառնալու գործընթացն է, որը պետք է լինի եռանդուն և հաստատուն հետևողականությամբ; մեկ օր այն կավարտվի Երկրորդ Գալուստով: Աստծո հետ հարաբերությունը վերականգնվում է փրկության ժամանակ, բայց զարգանում է կյանքի ընթացքում, դառնում դեմ առ դեմ անսպասելի հանդիպում/բախում մահվան ժամանակ կամ Քրիստոսի Երկրորդ գալստյան ժամանակ:

Ահա մի լավ մեջբերում վերցված «Պողոսի Բառարանը և նրա թղթերը» գրքից» IVP հրատարակչություն ; *Dictionary of Paul and His Letters* from IVP

«Կալվինը, ավելին քան Լյութերը, ընդգծում է Աստծո արդարության հետ կապված տեսակետը: Լյութերի տեսակետը՝ կապված Աստծո արդարության հետ թվում է թե պարունակում է արդարացման/պարտքից ազատվելու տեսակետը: Կալվինը ընդգծում է հաղորդակցության սքանչելի բնությունը կամ Աստծո արդարությունը մեզ տալը» (էջ. 834):

Ինձ համար հավատացյալի հարաբերությունը Աստծո հետ ունի 3 տեսակետ

1. ավետարանը անձ է (Արևելյան Եկեղեցին և Կալվինի շեշտը/ընդգծումը)
2. ավետարանը ճշմարտություն է (Օգոստոսի և Լյութերի շեշտը/ընդգծումը)
3. ավետարանը փոխված կյանք է (Կաթոլիկ շեշտը/ընդգծումը)

Գրանք բոլորն էլ ճշմարտություն են և պետք է միասին պահվեն առողջ, հուսալի աստվածաշնչյան քրիստոնեության համար: Եթե մեկն ու մեկը ավելի է ընդգծվում կամ թերագնահատվում, խնդիրներ են առաջ գալիս:

- Մենք պետք է ողջունենք Հիսուսին
- Մենք պետք է հավատանք ավետարանին
- Մենք պետք է հետապնդենք քրիստոսանմանությանը:

Արևելահայերեն « հաւատքից հաւատքի մէջ »
Արևմտահայերեն «հաւատքէն, հաւատքի համար»

NASB, NKJV “from faith to faith”
NRSV “through faith for faith”
TEV “it is through faith, from beginning to end”
JB “it shows how faith leads to faith”

Այս արտահայտությունը ունի երկու ՆԱԽԳԻՐՆԵՐ *ek* և *eis*, որոնք ցույց են տալիս/նշանակում են անցում/փոփոխություն կամ զարգացում: Նա օգտագործում է նույն կառուցվածքը II Կոր. 2:16 և *apo* իսկ *eis* II Կոր. 3:18. Քրիստոնեությունը պարզև է, որը պետք է լինի հատկանշական և ապրելակերպով արտահայտվի:

Այս արտահայտությունը թարգմանելու մի քանի հնարավոր տարբերակներ կան: Նոր Կտակարանի Ուրիլիամսի թարգմանության մեջ այն թարգմանում է այսպես «հավատքի ձև, որը տանում է ավելի մեծ հավատքի»: Հիմնական աստվածաբանական մտքերն են (1) հավատքը Աստծուց է գալիս («հայտնվում»); (2) մարդը պետք է արձագանքի և շարունակի արձագանքել; և (3) հավատքը պետք է տանի աստվածահաճո կյանք ապրելուն:

Սի բան հաստատ է, որ Քրիստոսի վրա ունեցած «հավատքը» վճռական է (հմմտ. 5:1; Փիլ. 3:9): Աստծո առաջարկած փրկությունը պայմանավորված է հավատքի արձագանքի վրա (հմմտ. Մարկ. 1:15; Հովհ. 1:12; 3:16; Գործք 3:16,19; 20:21):

Արևելահայերեն «Արդարը հաւատքից կապրի»
Արևմտահայերեն «Արդարը հաւատքէն պիտի ապրի»

☐
NASB “But the righteous man shall live by faith”
NKJV “The just shall live by faith”
NRSV “The one who is righteous will live by faith”
TEV “He who is put right with God through faith shall live”
JB “The upright man finds life through faith”

Սա մեջբերում էր Ամբ. 2:4, բայց ոչ թե Մատթեոսիկ տեքստից կամ Սեպտուագինդումից: Հին Կտակարանում «հավատ» ուներ լայն փոխաբերական իմաստ «վստահելիություն», «հավատարմություն», կամ «անձնվիրություն»: Փրկարար հավատքը հիմնված է Աստծո հավատարմության վրա (հմմտ. 3:5,21,22,25,26): Ինչևէ, մարդկային հավատարմությունը ապացույց է, որ մեկը վստահել է Աստծո պայմանին: Այս նույն Հին Կտակարանային տեքստը մեջբերված է Գաղ. 3:11 և Եբր. 10:38: Հաջորդ գրական բաժինը, Հռ.1:18-3:20, հայտնում է հավատարմության հակադրությունը Աստծուն: Օգտակար կլինի թվարկել, թե ինչպես են մի քանի ժամանակակից մեկնաբաններ հասկանում այս արտահայտությունը;

1. Վաուգհան (Vaughan): «սկսում է հավատքով և ավարտում հավատքով»
2. Հոջ (Hodge): «միայն հավատքով»
3. Բարետ (Barrett): «ոչ մի բանի հիմք այլ հավատք»
4. Նոքս (Knox): «հավատք առաջինը և վերջինը»
5. Սթեգ (Stagg): «ազնիվը հավատքով կապրի»

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ: 1:18-23

¹⁸Որովհետեւ Աստուծոյ բարկութիւնն երկինքիցը յայտնվում է մարդկանց ամեն ամբարշտութեան եւ անիրաւութեան վերայ, որ ճշմարտութիւնն անիրաւութիւնով բռնում են:

¹⁹Որովհետեւ Աստուծոյ գիտելիքը յայտնի է նորանցում. որ Աստուած յայտնեց նորանց:
²⁰Որովհետեւ նորա աներեւոյթ բաները աշխարհքի սկզբիցն ստեղծուածներովն իմացուելով տեսնվում են, որ է՝ նորա մշտնջենաւոր զորութիւնը եւ Աստուածութիւնը, այնպէս որ անպատասխան մնան: ²¹Որովհետեւ Աստուծուն ճանաչելով, նորան Աստուծոյ պէս չփառաւորեցին՝ կամ շնորհակալ չեղան. այլ իրանց մտածմունքներուն ունայնացան եւ նորանց անմիտ սրտերը խաւարուեցան: ²²Ասելով թէ իմաստուն են՝ յիմարեցան. ²³Եւ անեղծ Աստուծոյ փառքը փոխեցին եղծանելի մարդի եւ թռչունների եւ չորքոտանիների եւ սողունների պատկերի մնանութեան հետ :

NASB (UPDATED) TEXT: 1:18-23

¹⁸**For the wrath of God is revealed from heaven against all ungodliness and unrighteousness of men who suppress the truth in unrighteousness, ¹⁹because that which is known about God is evident within them; for God made it evident to them. ²⁰For since the creation of the world His invisible attributes, His eternal power and divine nature, have been clearly seen, being understood through what has been made, so that they are without excuse. ²¹For even though they knew God, they did not honor Him as God or give thanks, but they became futile in their speculations, and their foolish heart was darkened. ²²Professing to be wise, they became fools, ²³and exchanged the glory of the incorruptible God for an image in the form of corruptible man and of birds and four-footed animals and crawling creatures.**

1:18 «Որովհետեւ» Տես թե քանի անգամ է օգտագործվում *gar* թեմայի մեջ 16-17հհ. - երեք անգամ, իսկ հիմա այն ներկայացնում է/ծանոթացնում է Պողոսի ավետարանի առաջին միտքը (1:18-3:31), որը հակադրվում/տարբերվում է Աստծո զորությունը փրկության մեջ (1:16-17):

«Աստուծոյ բարկութիւնն» 18-23հհ. պատկերում է հեթանոս աշխարհը Պողոսի օրերում: Պողոսի հեթանոս աշխարհի բնութագրումը նաև գտնվում է հրեական գրականության մեջ (հմմտ. Սողոմոնի Իմաստությունը 13:1 և Արիստեսի նամակը, 134-38) և նույնիսկ հույն և հռոմեական բարոյագիտական գրվածքներում: Նույն Աստվածաշունչը, որը պատմում է Աստծո սիրո մասին նաև հայտնում է Նրա բարկությունը (հմմտ. 23-32; 2:5,8; 3:5; 4:15; 5:9; 9:22; 12:19; 13:4-5 հհ.):

Թե բարկությունը և թե սերը մարդկային տերմիններ են, որոնք վերաբերում են Աստծուն: Դրանք արտահայտում են ճշմարտությունը, որը Աստված ունի ձև, որով Նա ուզում է, որ հավատացյալները արձագանքեն և ապրեն: Մեկի ինքնական մերժումը Աստծո կամքի (Քրիստոսի ավետարանը) բերում է թե ժամանակավոր հետևանքներ, ինչպես այս համարում, և թե վախճանաբանական (հմմտ. 2:5): Ինչևէ, Աստված չպետք դիտվի որպես պատժիչ: Դատաստանը Նրա «տարօրինակ/օտարոտի գործն է» (հմմտ. Ես. 28:21): Մերը Նրա կերպարն է, 2 Օրին. 5:9 համեմատիր 5:10; 7:9: Նրանում են գերակշռում արդարությունն ու ողորմությունը: Բայց դեռ բոլորը հաշիվ պիտի տան Աստծուն (հմմտ. Ժող. 12:13-14; Գաղ. 6:7), նույնիսկ քրիստոնյաները (հմմտ. 14:10-12; II Կոր. 5:10).

«յայտնվում է» Ինչպես ավետարանը հայտնված ճշմարտություն է (17հ.), այնպես էլ Աստծո բարկությունը: Ոչ մի մարդկային գործողություն հայտնություն կամ տրամաբանություն չէ:

«որ ճշմարտութիւնն բռնում են» Սա վերաբերում է մարդու ինքնական մերժմանը, ոչ թե անտեսմանը (հմմտ. 21,32հհ.; Հովհ. 3:17-21): Այս արտահայտությունը կարող է նշանակել (1) նրանք գիտեն ճշմարտությունը, բայց մերժում են այն; (2) նրանց ապրելակերպը ցույց է տալիս, որ

իրենք մերժում են ճշմարտությունը; կամ (3) նրանց կյանքը և/կամ խոսքերը պատճառ են հանդիսանում ուրիշների համար, որ չիմանան և չընդունեն ճշմարտությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ» ՊՈՂՈՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Պողոսի այս տերմինի և դրան առընչվող ձևերի օգտագործումը գալիս է դրա Հին Կտակարանային համագործից, *emet*, որը հուսալի կամ վստահելի բառն է: Միջաստվածաշնչյան հրեական գրվածքներում ճշմարտությունը օգտագործվում էր իհակասություն կեղծիքի: Հնարավոր է ամենամոտ զուգահեռը լինի Մեռյալ Ծովի բնագրերը/մատյանները «Գոհության երգեր/հիմներ», որտեղ օգտագործվում է հայտնված վաղապետություններ: Էսսենական համայնքի անդամները դարձան «ճշմարտության վկաներ»:

Պողոսը օգտագործում է տերմինը՝ որպես Հիսուս Քրիստոսի ավետարանին առընչվող ձև:

1. Հռոմեացի 1:18,25; 2:8,20; 3:7; 15:8
2. I Կորնթացի 13:6
3. II Կորնթացի 4:2; 6:7; 11:10; 13:8
4. Գաղատացի 2:5,14; 5:7
5. Եփեսացի 1:13; 6:14
6. Կողոսացի 1:5,6
7. II Թեսաղոնիկեցի 2:10,12,13
8. I Տիմոթեոս 2:4; 3:15; 4:3; 6:5
9. II Տիմոթեոս 2:15,18,25; 3:7,8; 4:4
10. Տիտոս 1:1,14

Պողոսը նաև օգտագործում է տերմինը՝ իր խոսքը ճշգրիտ արտահայտելու համար

1. Գործք 26:25
2. Հռոմեացի 9:1
3. II Կորնթացի 7:14; 12:6
4. Եփեսացի 4:25
5. Փիլիպեցի 1:18
6. I Տիմոթեոս 2:7

Նա նաև օգտագործում է այն նկարագրելու դրա դրդապատճառները I Կոր. 5:8-ում և ապրելատճը (նաև բոլոր քրիստոնյաների համար) Եփ. 4:24; 5:9-ում; Փիլ. 4:8-ում: Նա երբեմն դա օգտագործում է մարդկանց համար:

1. Աստված, Հռ. 3:4 (հմմտ. Հովհ. 3:33; 17:17)
2. Հիսուս, Եփ. 4:21 (մման է Հովհ. 14:6)
3. Առաքյալների վկայությունները, Տիտոս 1:13
4. Պողոս, II Կոր. 6:8

Պողոսը միայն օգտագործում է որպես բայ (այն է, *alētheuō*) Գաղ. 4:16 և Եփ. 4:15, որտեղ վերաբերում է Ավետարանին: Ավելի խորը ուսումնասիրության համար; Քոլին Բրաուն (խմբ), «Նոր Կտակարանի Աստվածաբանության նոր միջազգային բառարան», հատոր 3, էջ. 784-902; Colin Brown (ed), *The New International Dictionary of New Testament Theology*, vol. 3, pp. 784-902).

1:19 «Որովհետև Աստուծոյ գիտելիքը յայտնի է նորանցում. որ Աստուած յայտնեց նորանց» բոլոր մարդիկ ինչ որ բան գիտեն Աստծո մասին արարչագործությունից (հմմտ. 20հ.; Հոր 12:7-10 և Սաղ. 19:1-6 [բնության միջոցով], 12-15 [Սուրբ Գրքի միջոցով]): Աստվածաբանության մեջ սա կոչվում է «բնական հայտնություն»: Այն ամբողջական չէ, բայց այն հիմք է հանդիսանում այն բանի, որ Աստծո առաջ պատասխանատու լինեն նաև այն մարդիկ, որոնց հայտնված չի եղել Աստծո «հատուկ հայտնություն» Սուրբ Գրքում կամ, վերջիվերջո, Հիսուսում (հմմտ. Կող. 1:15; 2:9):

Նոր Կտակարանում «իմանալ» տերմինը օգտագործվում էր երկու իմաստով (1) դրա Հին կտակարանային իմաստը անձնական ինտիմ հարաբերությունն է (հմմտ. Ծննդ. 4:1; Եր. 1:5), և (2) դրա հունարեն իմաստը իմանալ փաստեր առարկայի/իրի մասին (հմմտ. 21հ.): Ավետարանը թե ինքնին Անձն է և թե պատգամ այդ անձի մասին, Որին պետք է ընդունել և հավատալ: Այս համարում այն միայն օգտագործվում է #2 իմաստով:

1:20 Այս համարը նշում է Աստծո երեք տեսակետերը/ասպեկտները.

1. Նրա անտեսանելի հատկանիշները (Նրա կերպարը, հմմտ. Կող. 1:15; I Տիմ. 1:17; Եբ. 11:27)
2. Նրա հավիտենական գործությունը (երևում է բնական արարչագործության մեջ)
3. Նրա աստվածային բնությունը (երևում է Նրա գործողությունների և արարչագործության շարժառիթների մեջ)

«Որովհետև աշխարհքի սկզբիցն ստեղծուածներովն» *apo* ՆԱԽԴԻՐԸ օգտագործվում է ժամանակի իմաստով: Նմանատիպ արտահայտություն ենք հանդիպում Մարկ. 10:6; 13:19; II Պետ. 3:4: Անտեսանելի Աստվածը հիմա երևում է (1) ֆիզիկական արարչագործության մեջ (այս համարում); (2) Սուրբ Գրքում (Մաղ. 19, 119); և (3) Հիսուսի մեջ (հմմտ. Հովհ. 14:9):

«Աստուածութիւնը» հունարեն գրականությունից *theiotēs* կարող է թարգմանվել «աստվածային մեծություն, հրաշափառություն»: Սա մեծագույն ձևով երևում է Հիսուսի մեջ: Նա եզակիորեն կրում է աստվածային պատկերը (հմմտ. II Կոր. 4:4; Եբր. 1:3): Նա Աստծո ամբողջ հայտնությունն է մարդու կերպարանքով (Կող. 1:19; 2:9): Ավետարանի հիասքանչ ճշմարտությունն այն է, որ ընկած մարդկությունը, Քրիստոսի վրա ունեցած հավատքի միջոցով, կբաժնեկցի Քրիստոսանմանությունը (հմմտ. Եբր. 12:10; I Հովհ. 3:2): Աստծո պատկերը մարդկության մեջ (հմմտ. Ծննդ. 1:26-27) վերականգնվել է (*theios*, հմմտ. II Պետ. 1:3-4):

Արևելահայերեն «Ասելով՝ թե իմաստուն են՝ հիմարացան»
Արևմտահայերեն «Իրենք իմաստուն ենք ըսին ու հիմարացան»



- NASB** “have been clearly seen, being understood through what has been made”
NKJV “are clearly seen, being understood by the things that are made”
NRSV “have been understood and seen through the things he has made”
TEV “have been clearly seen; they are perceived in the things that God has made”
NJB “have been clearly seen by the mind’s understanding of created things”

noeō (հմմտ. Մաթ. 15:17) և *kathoraō* (երկուսն էլ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ) բառերի կապակցությունը նշանակում է ճշմարիտ ընկալում/իմացություն: Աստված գրել է երկու գիրք (1) բնություն և (2) Սուրբ Գիրք: Նրանք երկուսն էլ հասանելի են մարդկային հասկացողությանը և պահանջում են արձագանք (հմմտ. իմաստություն, 13:1-9):

«այնպես որ անպատասխան մնան» Սա բառացիորեն նշանակում է «օրինական պաշտպանության բացակայություն»: Այս հունարեն տերմինը (*a* գումարած *apologeomai*) Նոր Կտակարանում միայն օգտագործվում է այստեղ և 2:1. Հիշիր 1:18-3:20 աստվածաբանական նպատակն է ցույց տալ ամբողջ մարդկության հոգևոր կորսվածությունը: Մարդիկ պատասխանատու են իրենց ունեցած գիտության համար: Աստված մարդկանց պատասխանատու է պահում միայն այն ինչ իրենք գիտեն կամ կարող էին իմանալ:

1:21 «Որովհետև Աստուծուն ճանաչելով» Մարդկանց առաջընթացը ոչ թե արդարանալու մեջ է այլ ավելի առաջանում են չարի մեջ: Սկսած Ծննդ. 3 մարդկությունը դեպի անդունդ է սահում: Խավարն ավելանում է/շատանում:

«նորան Աստուծոյ պես չփառաւորեցին՝ կամ շնորհակալ չեղան.» Հեթանոս կռապաշտութեան ողբերգութեան աղբյուրը 23, 24հհ. (հմմտ. Եր. 2:9-13):

«այլ իրանց մտածմունքներումն ունայնացան եւ նորանց անմիտ սրտերը խաւարուեցան» Օլաֆ Մ. Մորլիի *«Նոր Կտակարան; նոր թարգմանություն» գրքում (The New Testament: A New Translation by Olaf M. Morlie)* այս հատվածն այսպես է շարադրված «փոխարենը նրանք գերադասեցին զբաղվել հիմար ենթադրություններով Նրա մասին, և նրանց անմիտ մտքերը խարխալեցին խավարում»: Մարդկային կրոնական համակարգերը հոգևոր ըմբոստության և հպարտության հուշարձաններն են (հմմտ. 22հ; Կող. 2:16-23):

Երկու բայերը ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ, ՉԵԶՈՔ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ-ով են դրված: Արդյոք չեզոք սեռը նշանակում է, որ նրանց հասկացողության սակավությունը և պատշաճ պատասխանը նրա համար էր, որ Աստված քողարկել էր նրանց սրտերը, թե նրանց լույսին մերժելը խստացրել էր նրանց սրտերը (հմմտ. 10:12-16; 4 Թագ. 17:15; Երեմ. 2:5; Եփես. 4:17-19). Այս ամբողջ կոնտեքստը միացնում է ամբողջ մարդկության մեղավորությունը:

«սիրտ» Հին Կտակարանում սա օգտագործվում էր ամբողջ անձի համար: Ինչևէ, դա հաճախ մտածելու կամ զգալու գործընթացին առնչվող ձև է: Տես Հատուկ Թեմա 1:24

1:22

- NASB, NKJV** “Professing to be wise, they became fools”
- NRSV** “Claiming to be wise, they became fools”
- TEV** “They say they are wise, but they are fools”
- JB** “The more they called themselves philosophers, the more stupid they grew”

Արևելահայերեն «Ասելով՝ թե իմաստուն են՝ հիմարացան»

Արևմտահայերեն «Իրենք իմաստուն ենք ըսին ու հիմարացան»

Հունարեն «հիմար» բառից մենք ստանում ենք անգլերեն «moron» (հիմար, տհաս, ապուշ) բառը: Խնդիրը մարդու հպարտության և իր գիտելիքներին վստահելու մեջ է (հմմտ. 1 Կորն. 1:18-31; Կող. 2:8-23): Սա մեզ հետ է տանում դեպի Ծննդոց 3 գլուխ: Գիտությունը բերում է բաժանում և դատաստան: Մարդու գիտությունը միշտ չէ, որ սխալ է դա միայն հիմնական, առաջնային չէ:

1:23 Գիտավորյալ անտեղյակ, մարդիկ, որոնք ստեղծված էին Աստծո պատկերով (հմմտ. Ծննդ. 1:26-27; 5:1,3; 9:6) Աստծուն փոխեցին երկրային պատկերների ինչպիսիք էին (1) կենդանիների (Եզիպտոս), (2) բնության ուժերի (Պարսկաստան), կամ (3) մարդու կերպարանքների (Հունաստան/Հռոմ) -- կուռքեր: Նույնիսկ Աստծո սեփական ժողովուրդը այդպես վարվեց (հմմտ. 2 Օրին. 4:15-24 և Ամովս 5:25-26):

Այս հին մեղքի մի քանի նոր ձևեր կան, դրանք են (1) ինվայրնմենտալիզմ (մայր հող), (2) Նոր Գար արևելյան մտածելակերպ (միստիցիզմ, սպիրիտուալիզմ և օկուլտ), (3) աթեիստիկ հումանիզմ (Մարքսիզմ, ուտոպիանիզմ, պրոգրեսիվ իդիալիզմ և հիմնական հավատք քաղաքականությանը կամ կրթությանը), (4) հոլիստիկ դեդորայք (առողջություն և երկարակեցություն), և (5) կրթություն:

«**փառք**» Տես Հատուկ Թեմա 3:23

«**նեխման, այլասերման ենթակա մարդ**» Տես Հատուկ Թեմա ներքևում

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿՈՐԾԱՆՎԱԾ, ԱՎԻՐՎԱԾ, ՓՉԱՅԱԾ (PHTHEIRŌ)

phtheirō այս տերմինի հիմնական իմաստն է կործանել, ավերել, ապականել կամ փչացնել: Այն կարող է օգտագործվել.

1. ֆինանսական սննկացում (հավանական է, II Կոր. 7:2)
2. ֆիզիկական կործանում (հմմտ. I Կոր. 3:17ա)
3. բարոյական փչացում (հմմտ. Հն. 1:23; 8:21; I Կոր. 15:33,42,50; Գաղ. 6:8; Հայտ. 19:2)
4. սեռական գայթակղություն (հմմտ. II Կոր. 11:3)
5. հավիտենական կործանում (հմմտ. II Պետ. 2:12,19)
6. կործանել մարդկանց ավանդույթները (հմմտ. Կող. 2:22; I Կոր. 3:17բ)

Հաճախ այս տերմինն օգտագործվում է նույն կոնտեքստում իրենց հականիշների հետ միասին (հմմտ. Հն. 1:23; I Կոր. 9:25; 15:50,53): Ուշադրություն դարձրեք զուգահեռ հակադրությունների միջև՝ մեր երկրային մարմինների և մեր երկնային հավիտենական մարմինների միջև:

1. ապականություն - անապականություն, I Կոր. 15: 42,50
2. անպատվություն - փառք, I Կոր. 15: 43
3. տկարություն - զորություն, I Կոր. 15: 43
4. ֆիզիկական մարմին - հոգևոր մարմին, I Կոր. 15: 44
5. առաջին Ադամ - վերջին Ադամ, I Կոր. 15: 45
6. երկրային պատկեր - երկնային պատկեր, I Կոր. 15: 49

NASB (UPDATED) TEXT: 1:24-25

²⁴Therefore God gave them over in the lusts of their hearts to impurity, so that their bodies would be dishonored among them. ²⁵For they exchanged the truth of God for a lie, and worshiped and served the creature rather than the Creator, who is blessed forever. Amen.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1: 24-25

1 ²⁴ Նորա համար Աստուած էլ նորանց մատնեց իրանց սրտերի ցանկութեան մեջ՝ պղծութեան համար. որ խայտառակեն իրանց մարմիններն իրանց անձերումը: ²⁵ Որոնք Աստուծոյ ճշմարտութիւնը ստութեան հետ փոխեցին. եւ երկրպագեցին եւ պաշտեցին ստեղծուածներին քան թէ Ստեղծողին. որ օրհնեալ է ի յաւիտեանս. ամէն:

1:24, 26, 28 «Աստուած էլ նորանց մատնեց» Սա ամենավատ դատաստանն էր: Սա Աստծո ասածվածքն էր «թող ընկած մարդկությունը իրենց ճանապարհներով գնա» (հմմտ. Սաղմ. 81:12; Ովսիա 4:17; Գործք 7:42): 23-32 համարները ըկարագրում են Աստծո մերժումը (ժամանակավոր բարկություն) հեթանոս աշխարհին և նրանց կրոնասիրությանը (ինչպես նաև մերը): Հեթանոսությունը բնութագրվում էր և է սեռական այլանդակությամբ և շահագործմամբ:

1:24 «սրտեր» Տես Հատուկ Թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍԻՐՏԸ

Հունարեն *kardia* տերմինը օգտագործվում է Մեպտուագինդում և Նոր Կտակարանում, որը անդրադարձնում է երրայերեն *leb* տերմինը. Այն օգտագործվում է մի քանի ձևերով

1. ֆիզիկական կյանքի կենտրոն, փոխաբերություն մարդու համար (հմմտ. Գործք 14:17; 2 Կորն. 3:2-3; Հակ. 5:5)
2. հոգևոր (քարոյական) կյանքի կենտրոն
ա. Աստված գիտի սիրտը (հմմտ. Գուլ. 16:15; Հն. 8:27; 1 Կորնթ. 14:25; 1 Թես. 2:4; Հայտ. 2:23)
բ. օգտագործվում է մարդու հոգևոր կյանքի համար (հմմտ. Մաթ. 13:18-19; 18:35; Հն. 6:17; 1 Տիմ. 1:5; 2 Տիմ. 2:22; 1 Պետ. 1:22)
3. մտային կյանքի կենտրոն (ինտելեկտ, բանականություն, հմմտ. Մաթ. 13:15; 24:48; Գործք 7:23; 16:14; 28:27; Հն. 1:21; 10:6; 16:18; 2 Կորնթ. 4:6; Եփես. 1:18; 4:18; Հակ. 1:26; 2 Պետ. 1:19; Հայտ. 18:7; սիրտը մտքի հոմանիշն է 2 Կորնթ. 3:14-15 և Փիլ. 4:7 համարներում)
4. կամքի, ցանկության կենտրոն (հմմտ. Գործք 5:4; 11:23; 1 Կորնթ. 4:5; 7:37; 2 Կորնթ. 9:7)
5. զգացմունքների, էմոցիաների կենտրոն (հմմտ. Մաթ. 5:28; Գործք 2:26, 37; 7:54; 21:13; Հն. 1:24; 2 Կորնթ. 2:4; 7:3; Եփես. 6:22; Փիլ. 1:7)
6. Հոգու գործունեության միակ վայրը (հմմտ. Հն. 5:5; 2 Կորնթ. 1:22; Գաղ. 4:6, (Զրիստոսը մեր սրտերում, Եփես. 3:17))
7. Սիրտը փոխաբերական ձև է, որը վերաբերում է ամբողջ անձին (հմմտ. Մաթ. 22:37, մեջբերված 2 Օրին. 6:5): Մտքերը, շարժառիթներն ու գործողությունները վերագրվում են սրտին, որոնք ամբողջությամբ հայտնում են թե ինչ տեսակի անհատ է նա: Հին Կտակարանը ունի տերմինների զարմանալի օգտագործում
ա. Ծննդ. 6:6; 8:21
բ. 2 Օրին. 4:29; 6:5, “քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով”
գ. 2 Օրին. 10:16, “անթլապատ սիրտ” և Հն. 2:29
դ. Եզեկ. 18:31-32, “նոր սիրտ”
ե. Եզեկ. 36:26, “նրո սիրտ” հակառակը “քարե սիրտ”

1:25 «Որոնք Աստծո ճշմարտությունը ստության հետ փոխեցին» Սա կարող ենք հասկանալ մի քանի կերպերով (1) մարդու ինքնաստվածացումը (հմմտ. 2 Թես. 2:4,11); (2) մարդն իր ստեղծածին է պաշտում –կռապաշտություն (հմմտ. Ես. 44:20; Երեմ. 13:25; 16:19) Յեհովայի փոխարեն, որը ստեղծել է ամենբան (հմմտ. 18-23հհ.); կամ (3) երբ մարդը վերջնականորեն մերժում է ավետարանի ճշմարտությունը (հմմտ. Հովհ. 14:17; 1Հովհ. 2:21,27): Տվյալ կոնտեքստում ավելի համապատասխանում է (2) տարբերակը:

«երկրպագեցին և պաշտեցին» Մարդը միշտ կունենա չաստվածներ: Բոլոր մարդիկ էլ ունեն ինչ որ մեկին, ինչ որ մի ճշմարտություն կամ ինչ որ մի բան իրենց կյանքում, որին իրենցից վեր են դասում:

«որ օրհնյալ է ի հավիտյանս. ամեն» Պողոսը ներխուժում է հրեական օրհնություն, որն այնքան բնորոշ է իրեն (հմմտ. Հն. 9:5; 2Կորն. 11:31): Իր գրվածքներում Պողոսը հաճախ աղոթք է բարձրացնում (հմմտ. 9:5; 11:36; 15:33; 16:27):

«հավիտյան» տես հատուկ թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԻՏՅԱՆ

Սա բառացի հունարեն իդիոմատիկ է/խոսակցական արտահայտություն, «մինչև դարեր» (հմմտ. Գուկ. 1:33; Հն. 1:25; 11:36; 16:27; Գաղ. 1:5; 1Տիմ. 1:17), որը կարող է պատկերել եբրայերեն *'olam*: Տես Ռոբերտ Բ. Գիրդլեստոն, *Հին Կտակարանի Հոմանիշները*, էջ 321-319: «Մինչև դարեր» ի հետ կապված ուրիշ արտահայտություններ (հմմտ. Մաթ. 21:19 [Մարկ. 11:14]; Հովհ. 6:5,58; 8:35; 12:34; 13:8; 14:16; 2Կորն. 9:9) և «դարերից դար/հավիտյանս հավիտենից» (հմմտ. Եփես. 3:21): Թվում է թե այս իդիոմաների մեջ «հավիտյան» բառի համար չկա ոչ մի տարբերություն: «Դարեր» տերմինը կարող է հանդես գալ հոգնակի թվով պատկերավոր առումով բաբբիական քերականական կառուցվածքում, որը կոչվում է «մեծության հոգնակիություն» կամ այն կարող է վերաբերվել «դարերի» մի քանի գաղափարների հրեական առումով «անմեղության շրջան», «չարության շրջան», չափահասության հասակ» կամ «արդարության շրջան»:

«Ամեն» Տես հետևյալ թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՄԵՆ

1. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. «Ամեն» տերմինը եբրայերեն ճշմարտություն (*emeth*) կամ ճշմարտասիրություն (*emun, emunah*) և հավատք կամ հավատարմություն բառից է:

Բ. Դրա ստուգաբանությունը անձի ֆիզիկական կայուն վիճակից է: Հակառակը կլինի մեկը, որը անկայուն, սայթաքող (հմմտ. 2 Օրին. 28:64-67; 38:16; Սաղ. 40:2; 73:18; Երեմ. 23:12) կամ գլորվող է (հմմտ. Սաղ. 73:2): Այս բառացի կիրառումից զարգացավ փոխաբերական ծավալումը հավատարիմ, վստահելի, օրինապահ և անկախ բառերի (հմմտ. Ծննդ. 15:16; Ամբակ.2:4):

Գ. Հատուկ կիրառություններ

1. սյուն, 4 Թագ. 18:16 (1 Տիմ. 3:15)
2. հավաստիացում, վստահություն, Ելից 17:12
3. հաստատուն, Ելից 17:12
4. կայունություն, Ես. 33:6; 34:5-7
5. ճշմարիտ, 3 Թագ. 10:6; 17:24; 22:16; Առակ. 12:22
6. անսասան, 2 Մնաց. 20:20; Ես. 7:9
7. հուսալի, ամուր, հաստատուն (Թորա), Սաղ. 119:43; 142, 151, 168

Դ. Հին Կտակարանում երկու ուրիշ եբրայերեն տերմիններ են օգտագործված գործուն հավատքի համար:

1. *bathach*, վստահություն
2. *yra*, վախ, հարգանք, երկրպագություն (հմմտ. Ծննդ. 22:12):

Ե. Վստահություն կամ վստահելի իմաստով զարգացավ եկեղեցական/պատարագային կիրառությունը, որը օգտագործվել է մյուսին հաստատելու համար ճշմարիտ կամ վստահելի դրույթը (հմմտ. 2 Օրին. 27:15-26; Նեեմ. 8:6; Սաղ. 41:13; 70:19; 89:52; 106:48):

Զ. Այս տերմինը հասկանալու աստվածաբանական բանալին մարդու հավատարմությունը չէ, այլ ՅԱՀՎԵ-ի (հմմտ. Ել. 34:6; 2 Օրին. 32:4; Սաղ. 108:4; 115:1; 117:2; 138:2): Ընկած մարդկության միակ հույսը ՅԱՀՎԵ-ի ողորմած և հուսալի հավատարիմ ուտխն ու Նրա խոստումներն են:

Նրանք, ովքեր ճանաչում են ՅԱՀՎԵ-ին պետք է Նրան նմանվեն (հմմտ. Ամբ. 2:4): Աստվածաշունչը պատմություն է և նաև Աստծո Իր պատկերի մարդու մեջ վերականգնման գործընթացի արձանագրությունը (հմմտ. Ծննդ. 1:26-27): Փրկությունը մարդուն նորից տալիս է կարողություն ունենալու մտերիմ հարաբերություն Աստծո հետ: Ահա թե ինչի համար ենք մենք ստեղծվել:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. Նոր Կտակարանի ժամանակաշրջանում «ամեն» բառը օգտագործվել է որպես վերջնական ծիսակարգային հաստատում որոշակի դրույթի վստահելիության վերաբերյալ (հմմտ. I Կոր. 14:16; II Կոր. 1:20; Հայտ. 1:7; 5:14; 7:12):
- Բ. Նոր Կտակարանի ժամանակաշրջանում տերմինը օգտագործվել է որպես աղոթքի ավարտ (հմմտ. Հռ. 1:25; 9:5; 11:36; 16:27; Գաղ. 1:5; 6:18; Եփ. 3:21; Փիլ. 4:20; II Թես. 3:18; I Տիմ. 1:17; 6:16; II Տիմ. 4:18):
- Գ. Միայն Հիսուսն օգտագործեց այս տերմինը (հաճախ կրկնակի անգամ Հովհաննեսի Ավետարանում) ընդգծելու համար որոշակի կարևոր պնդում, միտք (հմմտ. Դուկ 4:24; 12:37; 18:17,29; 21:32; 23:43):
- Դ. Այն օգտագործվում է որպես տիտղոս Հիսուսի համար Հայտ. 3:14 (հավանական է Եհովայի տիտղոսը Ես. 65:16):
- Ե. Հավատարմության կամ հավատքի, վստահելի կամ վստահություն գաղափարը արտահայտվում է հունարեն *pistos* կամ *pistis տերմինով*, որը թարգմանվում է անգլերեն որպես վստահություն, հավատք:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1: 26-27

1²⁶Նորա համար Աստուած մատնեց նորանց անարգ կիրքերի. եւ նորանց էգերը բնական գործածութիւնը փոխեցին անբնականի հետ: ²⁷Այնպէս էլ արուները կնոջ բնական գործածութիւնը թողելով, իրանց ցանկութիւններովն իրար հետ բորբոքուեցան. արուներն արուների հետ խայտառակութիւն էին գործում, եւ այն փոխարէնը՝ որ արժան էր իրանց մոլութեանն՝ իրանց անձերումը ընդունում էին:

NASB (UPDATED) TEXT: 1:26-27

²⁶For this reason God gave them over to degrading passions; for their women exchanged the natural function for that which is unnatural, ²⁷and in the same way also the men abandoned the natural function of the woman and burned in their desire toward one another, men with men committing indecent acts and receiving in their own persons the due penalty of their error.

1:26,27 Միասեռականությունը Աստծո ակնհայտ կամքից բաժանված կյանքի օրինակներից մեկն է արարչագործության մեջ: Այն մեղք էր և մշակութային շատ լուրջ խնդիր (1) Հին Կտակարանում (հմմտ. Գև. 18:22; 20:13; 2 Օրին. 23:18); (2) հունա - հռոմեական աշխարհում (հմմտ. I Կոր. 6:9; I Տիմ. 1:10); և (3) մեր օրերում:

Միասեռականությունը հավանական է թվարկված է որպես մեղավոր կյանքի մեկ օրինակ, քանի որ ամբողջ կոնտեքստը կողմնորոշվում է Ծննդ. 1-3: Մարդը ստեղծվել էր Աստծո պատկերով և նմանությամբ (հմմտ. Ծննդ. 1:26-27; 5:1,3; 9:6): Մարդը ստեղծվել էր արու և էգ (հմմտ. Ծննդ. 1:27): Աստծո պատվերն էր աճել և բազմանալ (հմմտ. Ծննդ. 1:28; 9:1,7): Մարդու անկումը (հմմտ. Ծննդ. 3) խախտեց Աստծո ծրագիրն ու կամքը: Միասեռականությունը ակնհայտ պղծությունը է: Ինչևէ, պետք է նշել, որ սա միակ մեղքը չէ այս կոնտեքստում (հմմտ. հհ. 29-31): Բոլոր մեղքերը ցույց են տալիս մարդու բաժանումը Աստծուց և իրենց արժանի պատիժը: Ամեն մի մեղք, հատկապես մարդու ասպրելակերպին վերաբերող, նողկալի է Աստծուն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԻԱՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մշակույթում գոյություն ունի ուժեղ ճնշում այն բանի վրա, որ միասեռականությունն ընդունվի որպես բնական երկրնորանքային ապրելակերպ: Աստվածաշունչը դատապարտում է այն որպես կյանքի համար կործանարար բան, որը չի համապատասխանում Աստծո կամքին և Իր ստեղծագործությանը;

1. այն խախտում է Աստծո պատվերը Ծննդ. 1 աճել և բազմանալ
2. այն բնորոշ է հեթանոս պաշտամունքին և մշակույթին (հմմտ. Գև. 18:22; 20:13; Հռ. 1:26-27; և Հուդա 7)
3. այն հայտնում է եսակենտրոն անկախություն Աստծուց (հմմտ. I Կոր. 6:9-10)

Ինչևէ, մինչև ուրիշ թեմայի անցնելը թույլ տվեք նուրից հայտնել ձեզ Աստծո սիրո և ներողամտության մասին բոլոր ապստամբ մարդկանց հանդեպ: Քրիստոնյաներն իրավունք չունեն խիստ և ինքնահավանորեն մոտենան այս մասնավոր մեղքի հանդեպ, հատկապես իմանալով որ մենք բոլորս էլ մեղավոր ենք: Աղոթք, հոգածություն, վկայություն և գութ ունենալով ավելի մեծ գործեր կանեն այս դեպքում, քան վճռական դատապարտությունը: Աստծո Խոսքը և Սուրբ Հոգին կդատապարտեն մեզ, եթե մենք նրանց թույլ տանք: Բոլոր սեռական մեղքերը, և ոչ թե միայն այս մեկը, Աստծո առաջ պղծություն են և մարդուն տանում են դատաստանի: Ինքնին սեքսը պարզ է Աստծուց տրված մարդկությանը իր բարեկեցության, ուրախության և կայուն և ճիշտ հասարակություն ունենալու համար: Բայց այս շատ ուժեղ, Աստծո կողմից տրված մղումը հաճախ դառնում է ըմբոստ, եսակենտրոն, հաճույք -փնտրող, «ինձ-պետք է-ավելին – ցանկացած - գնով» կյանքի/ապրելակերպի (հմմտ. Հռ. 8:1-8; Գաղ. 6:7-8):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:28-32

1²⁸ Եւ ինչպէս որ չընտրեցին՝ Աստուծուն ունենալ իրանց գիտության մեջ, Աստուած մատնեց նորանց անարգ մտքի որ անարժան բաներ գործեն. ²⁹ Որոնք լցուած են ամեն անիրաւութիւնով, պռոնկութիւնով, անզգամութիւնով, ազահութիւնով, չարութիւնով, լիքը նախանձով, մարդասպանութիւնով, կռիտով, նենգութիւնով, չարաբարութիւնով. ³⁰ Քսուներ, բամբաստողներ, աստուածատողներ, թշնամանողներ, ամբարտաւաններ, գռռոզներ, չար բաներ հնարողներ, ծնողների անհնազանդներ. ³¹ Անմիտներ, ուխտադրուժներ, անգութներ, անհաշտներ, անողորմներ. ³² Որ Աստուծո իրաւունքները հասկանալով՝ թէ այսպիսի բաներ գործողները մահի արժանի են, ոչ թէ միայն այս բաներն անում են, այլ գործողներին էլ կամակից են լինում:

NASB (UPDATED) TEXT: 1:28-32

²⁸And just as they did not see fit to acknowledge God any longer, God gave them over to a depraved mind, to do those things which are not proper, ²⁹being filled with all unrighteousness, wickedness, greed, evil; full of envy, murder, strife, deceit, malice; *they are* gossips, ³⁰slanderers, haters of God, insolent, arrogant, boastful, inventors of evil, disobedient to parents, ³¹without understanding, untrustworthy, unloving, unmerciful; ³²and although they know the ordinance of God, that those who practice such things are worthy of death, they not only do the same, but also give hearty approval to those who practice them.

1:28-31 Հունարենում սա մեկ նախադասություն է: Այն բնութագրում է ապստամբ, ընկած, անկախ մարդը (հմմտ. Հռ.13:13; I Կորն.5:11; 6:9; Գաղ.5:19-21; Եփես. 5:5; IՏիմ. 1:10; Հայտ. 21:8):

Մարդկության մեղքը այն էր, որ նրանք ընտրեցին կյանք առանց Աստծու: Դժողքն այդ կյանքը դարձրեց հարատև: Անկախությունը ողբերգություն է: Մարդը կարիք ունի Աստծո, առանց Աստծո նա կորաված է, անբավարար և անկատար: Հավիտենական դժողքի ամենավատն այն, որ այնտեղ բացակայում է Աստծո հետ հարաբերությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Նոր Կտակարանում անբարոյականությունների և առաքինությունների ցանկերը միասին են թվարկված: Հաճախ նրանք անդրադարձնում են թե բաբբիական և թե մշակույթային (հեյլենիստական) ցանկերը: Նոր Կտակարանի հակադրող առանձնահատկությունների ցանկը կարող ենք տեսնել

	<u>Անբարոյականություններ</u>	<u>Առաքինություններ</u>
1. Պողոս	Հռ. 1:28-32 Հռ. 13:13 1 Կորն. 5:9-11 6:10 2 Կորն. 12:20 Գաղ. 5:19-21 Եփես. 4:25-32 5:3-5 ---	---
	Կող. 3:5,8 1 Տիմ. 1:9-10 6:4-5 2 Տիմ. 2:22ա,23 Տիտոս 1:7, 3:3	---
2. Հակոբոս	Հակ. 3:15-16	---
3. Պետրոս	1 Պետ. 4:3 2 Պետ. 1:9	---
4. Հովհաննես	Հայտ. 21:8; 22:15	---

		1 Կորն. 6:6-9 2 Կորն. 6:4-10 Գաղ. 5:22-23 ---

		Փիլ. 4:8-9 Կող. 3:12-14 ---
		2 Տիմ. 2:22բ,24 Տիտոս 1:8-9; 3:1-2
		Հակ. 3:17-18
		1 Պետ. 4:7-11
		2 Պետ. 1:5-8

1:29 «անառակ միտք» Ընկած մարդը որպես ազատություն տեսնում է իր գործունը որոշված է որպես Աստված 1:24,26,28 հի. բայց այս կոնտեքստում կապված Ծննդ. 1-3 մարդու ընտրությունն է , որը խնդրի պատճառ դարձավ: Աստված թույլ տվեց, որ Իր ստեղծագործությունը տառապի իր սեփական ընտրությունների, իրենց անկախության հետևանքի պատճառով:

«լցված լինել» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՍԱՄԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Մարդիկ բավարարվում և բնութագրվում են իրենց ապրած կյանքով: Բաբբիները կասեին, որ ամեն մի մարդու սրտում կա սև (չար *yetzer*) շուն և սպիտակ (բարի *yetzer*) շուն: Ում որ ամենաշատն ես կերակրում, նա էլ դառնում է ամենամեծը:

1:29-31 Սրանք առանց Աստծո կյանքի արդյունքներն ու ախտանիշներն են : Նրանք բնութագրում են անհատներին և հասարակություններին, ովքեր մերժում են Աստվածաշնչի Աստծուն: Սա

մեղքերի ցանկերից մեկն է, որը նկարագրեց Պողոսը (հմմտ. 1 Կորն. 5:11; 6:9; 2 Կորն. 12:20; Գաղ. 5:19-21; Եփես. 4:31; 5:3-4; Կող. 3:5-9):

1:30 «ամբարտավան» Սա Պողոսի “*hyper*” բառի բաղադրիչներից մեկն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԸ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է “*HUPER*” ՆԱԽԴԻՐԸ ԲԱՐԴ ԲԱՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Պողոսն ուներ հատուկ սեր նոր բառեր ստեղծելու համար օգտագործելով հունարեն ՆԱԽԴԻՐԸ *hyper*; որը հիմնականում նշանակում է “վեր, գերազանց” կամ “բարձրագույն”: Երբ օգտագործվում է ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ) դա նշանակում է “օգուտ, ի պաշտպանություն”: Դա նաև կարող է նշանակել “մասին” կամ “վերաբերյալ” ինչպես *peri* (հմմտ. 2 Կորն. 8:23; 2 Թեսաղ. 2:1): Երբ այն օգտագործվում է ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ ԱՅՆ նշանակում է “վեր”, “վերին”, կամ “ վեր” (հմմտ. Ա.Տ. Ռոբերտսոն, *Նոր Կտակարանի հունարեն քերականությունը Պատմական ուսումնասիրության լույսի ներքո*, էջ 625-633): Երբ Պողոսն ուզում էր ընդգծել մի գաղափար, բաղադրյալ բառի մեջ նա օգտագործում էր այս ՆԱԽԴԻՐԸ:

Սրանք են Պողոսի հատուկ օգտագործված նախդիրներով բաղադրյալ բառերի ցանկը:

Ա. *Hapax legomenon* (սա նշանակում է “օգտագործված միայն մեկ անգամ Նոր Կտակարանում)

1. *Huperakmos*, մեկը, որ ծաղիկ հասակից/չափահասությունից անցել է, 1 Կոր. 7:36
2. *HuperauxanY*, չափազանց ավելանալ/խիստ մեծանալ, 2 Թես. 1:3
3. *Huperbainy*, սահմաններից անցնել կամ մեղանչել/չափիցն անցնել 1 Թես. 4:6
4. *Huperkeina*, այն կողմը, 2 Կորն. 10:16
5. *Huperekteina*, չափից շատ երկարացնել, տարածել, 2 Կորն. 10:14
6. *HuperentugchanY*, բարեխոսել, Հն. 8:26
7. *HupernikaY*, առ ավելի հաղթական լինել, Հն. 8:37
8. *HuperpleonazY*, չափազանց, էլ ավելի շատ, 1 Տիմ. 1:14
9. *HuperupsoY*, շատ/ գերազույն բարձրացնել, Փիլ. 2:9
10. *HuperphroneY*, ունենալ շատ բարձր մտքեր/բան չմտածել նրանից ավելի, Հն. 12:3

Բ. Բառեր, որոնք միայն օգտագործված են Պողոսի գրվածքներում:

1. *Huperaïromai*, մեկին բարձրացնել/գոռոզանալ, 2 Կորն. 12:7; 2 Թես. 2:4
2. *HuperballontYs*, չափից վեր, չափազանց, 2 Կորն. 11:23; (միայն այստեղ ՍԱԿԲԱՅ է, բայց 2 Կորն. 3:10; 9:14; Եփես. 1:19; 2:7; 3:19 ԲԱՅ է)
3. *Huperbole*, չափազանց, չափից շատ, Հն. 7:13; 1 Կորն. 12:31; 2 Կորն. 1:8; 4:7,17; 12:7; Գաղ. 1:13
4. *Huperekperissou*, չափից վեր, առավել, Եփես. 3:20; 1 Թես. 3:10; 5:13
5. *Huperlian*, ամենաբարձր աստիճանը կամ աչքի ընկնող/մեծամեծ, 2 Կորն. 11:5; 12:11
6. *Huperoche*, աչքի ընկնող դիրք, գերազանցություն, 1 Կորն. 2:1; 1 Տիմ. 2:2
7. *HupererisseuY*, ավելի, չափից շատ, Հն. 5:20 (ՉԵԶՈՔ ՍԵՌ, առատորեն լցված լինել, հեղեղված լինել, 2 Կորն. 7:4)

Գ. Բառեր, որոնք օգտագործել է Պողոսը և Նոր Կտակարանի ուրիշ գրողներ էլ:

1. *HuperanY*, շատ ավելի վեր, Եփես. 1:21; 4:10; և Եբր. 9:5 (հրեշտակային իշխանություններ)
2. *HuperechY*, գերազանցություն, ամենաբարձր, Հն. 13:1; Փիլ. 2:3; 3:8; 4:7; 1 Պետ. 2:13
3. *Huperephanos*, մեծամիտ կամ ամբարտավան, Հն. 1:30; 2 Տիմ. 3:2 և Բուկ. 1:51; Հակ. 4:6; 1 Պետ. 5:5:

Պողոսը բուռն զգացմունքների տեր մարդ էր; երբ իրերը կամ մարդիկ լավն էին, նրանք շատ լավն էին և երբ նրանք վատն էին ապա նրանք շատ վատն էին: Այս ՆԱԽԴԻՐԸ թույլ տվեց իրեն

արտահայտելու իր գերագույն զգացմունքները կապված մեղքի, եսի, Քրիստոսի և Ավետարանի հետ:

1:32 « այսպիսի բաներ գործողները մահի արժանի են» Այս դրույթն անդրադարձնում է Մովսեսի Օրենքը: Այն ամփոփված է Հռ. 6:16,21,23; 8:6,13: Մահը Աստծո կամքի և Աստծո կյանքի հակառակն է (հմմտ. Եզեկ. 18:32; 1 Տիմ. 2:4; 2 Պետ. 3:9):

«այլ գործողներին էլ կամակից են լինում» Թշվառությունն ընկերակցություն է սիրում: Ընկած մարդը ուրիշների մեղքերն օգտագործում է որպես արդարացում, “բոլորն այդ անում են”: Մշակույթներն բնութագրվում են իրենց հատուկ մեղքերով:

Քննարկվող հարցեր

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչու՞ Պողոսը գրեց Հռոմի եկեղեցուն:
2. Ինչու՞ էր Հռոմեացիսը համարվում Քրիստոնեության կարևոր աստվածաբանական դրույթ:
3. Ուրվագծիր 1:18-3:20 քո բառերով:
4. Արդյոք նրանք ովքեր չեն լսել Ավետարանը մերժվելու են Քրիստոսին չվստահելու համար:
5. Բացատրիր տարբերությունը «բնական հայտնություն» և «հատուկ հայտնություն»:
6. Նկարագրիր մարդկային կյանքն առանց Աստծո:
7. Արդյո՞ք 24-27 համարները վերաբերում են միասեռականության

ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՑԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Արդար դատաստանը Աստծո	Աստծո արդար դատաստանը	Հրեաները դատաստանի տակ	Աստծո դատաստանը	Հրեաներն ազատված են բարկությունից
2:1-16	2:1-16	2:1-11	2:1-16	2:1-11
Հրեաներն ու Օրենքը	Հրեաները մեղավոր են ինչպես և հեթանոսները	Հիմք դատաստանի համար	Հրեաներն ու Օրենքը (2:17-3:8)	Օրենքը չի փրկի նրանց
		2:12-16		2:12-16
2:17-3:8	2:17-24	2:17-24	2:17-24	2:17-24
	Թլպատությունը օգուտ չունի			Թլպատությունը չի փրկի նրանց
	2:25-29	2:25-29	2:25-29	2:25-29

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Սեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 քարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐՈՍԲՈՆՈՒՄ 2:1-3:20hh.

- Ա. 2 և 3 գլուխներն ամբողջացնում են գրական բաժինը, որը սկսվում է 1:18. Այս բաժնում շոշափվում են հետևյալ կարևոր թեմաները
1. ամբողջ մարդկության կորսված վիճակը
 2. Աստծո դատաստանը մեղքի դեմ
 3. մարդու կարիքը Աստծո արդարության Զրիստոսի միջոցով, որը արտահայտվում է անձնական հավատքով և ապաշխարությամբ
- Բ. Գլուխ 2 կան յոթ սկզբունքներ կապված Աստծո դատաստանի հետ
1. համար 2, դատաստանը ճշմարտությամբ է
 2. համար 5, կիտած հանցանքներ;
 3. համար 6 և 7, համաձայն գործերի;
 4. համար 11, արդարացի և առանց աչառության;
 5. համար 13, ապրելակերպով;
 6. համար 16, մարդկան ծածուկ բաները
 7. համար 17-29, չկան հատուկ ազգային խմբեր.
- Գ. Մինչև հիմա մեկնաբանների միջև շատ քննարկումներ են գնում, այն մասին թե ում են ուղղված նամակի այն խոսքերը, որոնք գտնվում են 2:1-17-ի մեջ: Ակնհայտ է, որ 2:12-29hh. վերաբերվում են հրեաներին: 1-17hh. կրկնակի նպատակ է ծառայում՝ խոսելով թե բարոյական հեթանոսների, ինչպես Սենեկան (ընդունված հասարակական նորմեր) և թե հրեա ազգի մասին (Մովսեսական Օրենք):
- Դ. 1:18-21hh, Պողոսը հաստատում է, որ մարդիկ կարող են ճանաչել Աստծուն արարչագործության միջոցով: 2:14-15hh., Պողոսը նաև հաստատում է, որ բոլոր մարդիկ ունեն ներքին բարոյական խիղճ՝ տրված Աստծո կողմից: Այս երկու վկայությունները՝ արարչագործությունը և խիղճը, ամբողջ մարդկությանը դատապարտելու համար Աստծո հիմքն են, նույնիսկ նրանք ովքեր գտնվել են Հին Կտակարանի կամ ավետարանի պատգամի տակ: Մարդիկ պատասխանատու են, որովհետև նրանք չեն ապրել իրենց ունեցած լավագույն լույսի ներքո:

ԲԱՈՒ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 2:1-11

2 ¹Նորա համար առանց պատասխան տալու ես, ով մարդ՝ ով որ էլ լինես, որ դատում ես. որովհետև ինչով որ ուրիշին դատում ես, քեզ ես դատապարտում. որ դու նոյնն ես գործում որ ինքդ դատում ես: ²Բայց մենք գիտենք, որ Աստուծոյ դատաստանը ճշմարտութեամբ է նորանց վերայ, որ այսպիսի բաներ գործում են: ³Իսկ, ով մարդ, որ դատում ես այսպիսի բաներ գործողներին, ես որ դու նոյնն ես գործում, մի՞թէ կարծում ես՝ թէ դու կարծնիս Աստուծոյ դատաստանիցը: ⁴Կամ թէ նորա քաղցրութեան առատութիւնը ես համբերութիւնը ես երկայնմտութիւնը արհամարհու՞մ ես. չգիտենալով որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ ապաշխարութեան է տանում: ⁵Բայց դու քո խստութիւնովը ես անգեղջ սրտովը բարկութիւն ես կիտում քո անձի համար՝ բարկութեան ես այն Աստուծոյ արդար դատաստանի յայտնութեան օրումը, ⁶Որ նա ամեն մէկին իր գործերի պես հատուցումը կտայ. ⁷Նորանց, որ բարի գործերի մէջ են յարատեում, ես փառք ես պատիւ ես անապականութիւն են որոնում, յալիտենական կեանք. ⁸Բայց նորանց՝ որ հակառակութիւնից են՝ ես ճշմարտութեան անհնազանդ ես անիրաւութեան ետեւից գնացած, բարկութիւն ես սրտմտութիւն. ⁹

Ներութիւն եւ տառապանք այն ամեն մարդի վերայ՝ որ չարութիւն է գործում. առաջ Հրեայի՝ եւ յետոյ Յոյնի: ¹⁰ Իսկ փառք եւ պատիւ եւ խաղաղութիւն ամեն բարի գործողին. առաջ Հրեայի՝ եւ յետոյ Յոյնի: ¹¹ Որովհետեւ Աստուծոյ մօտ աչառութիւն չկայ:

NASB (UPDATED) TEXT: 2:1-11

¹Therefore you have no excuse, everyone of you who passes judgment, for in that which you judge another, you condemn yourself; for you who judge practice the same things. ²And we know that the judgment of God rightly falls upon those who practice such things. ³But do you suppose this, O man, when you pass judgment on those who practice such things and do the same *yourself*, that you will escape the judgment of God? ⁴Or do you think lightly of the riches of His kindness and tolerance and patience, not knowing that the kindness of God leads you to repentance? ⁵But because of your stubbornness and unrepentant heart you are storing up wrath for yourself in the day of wrath and revelation of the righteous judgment of God, ⁶who WILL RENDER TO EACH PERSON ACCORDING TO HIS DEEDS: ⁷to those who by perseverance in doing good seek for glory and honor and immortality, eternal life; ⁸but to those who are selfishly ambitious and do not obey the truth, but obey unrighteousness, wrath and indignation. ⁹*There will be* tribulation and distress for every soul of man who does evil, of the Jew first and also of the Greek, ¹⁰but glory and honor and peace to everyone who does good, to the Jew first and also to the Greek. ¹¹For there is no partiality with God.

2:1

- NASB “you have no excuse, everyone of you who passes judgment”
- NKJV “you are inexcusable, O man, whoever you are who judge”
- NRSV “you have no excuse, whoever you are, when you judge others”
- TEV “You have no excuse at all, whoever you are. For then you judge others”
- JB “So no matter who you are, if you pass judgment you have no excuse.”

2:1

Արևելահայերեն «Նորա համար առանց պատասխան տալու ես, ով մարդ՝ ով որ էլ լինես »
Արևմտահայերեն «Ո՛վ մարդ, ո՛վ որ ըլլաս՝ դուն որ կը դատես՝ արդարանալու չքմեղանք չունիս.»

Սա բառացի նշանակում է « օրինական պաշտպանության բացակայություն» (հմմտ.1:20): Նախկինում այն հունարեն նախադասության մեջ օգտագործվում էր պնդելու/հաստատելու դրա իմաստը: 1-16 հհ. վերբերում են թե հրեա օրինականների ինքնաարդարացմանը և թե հույն բարոյականներին: Ուրիշներին դատելով, նրանք դատապարտում էին իրենք իրենց:

2:2 «մենք գիտենք» Այս ԳԵՐԱՆՈՒՆԸ հավանական է վերաբերում է հրեաներին ինչպես նաև հնարավոր է քրիստոնյաներին: 2-4հհ. Պողոսը վերադառնում է իր պարզ հարց-պատասխան ձևին, որը կոչվում է սուր քննադատություն, որը ճշմարտության ներկայացումն էր որպես ենթադրյալ հակառակորդ: Դա նաև օգտագործվում էր Ամբակումի, Մաղաքիայի և ռաբբիների, ինչպես նաև հույն փիլիսոփաների կողմից (ինչպիսիք են Սոկրատը և ստոիկները):

«Մենք գիտենք, որ» արտահայտությունը մի քանի անգամ օգտագործվում է Հռոմեացիս թղթում (հմմտ. 2:2; 3:19; 7:14; 8:22,28): Պողոսը ենթադրում է, որ իր ունկնդիրները ինչ որ աստիճանի գիտություն ունեն, ոչ թե ինչպես 1 գլխի անբարոյական հեթանոսները:

«Աստուծոյ դատաստանը» Աստվածաշունչը հստակ է այս ճշմարտության շուրջ: Բոլոր մարդիկ հաշիվ պիտի տան Աստծուն կյանքի պարզևի համար (հմմտ. 5-9հհ.; Մաթ. 25:31-46; Հայտ. 20:11-15). Նույնիսկ քրիստոնյաները կկանգնեն Քրիստոսի առաջին (հմմտ. 14:10-12; II Կոր. 5:10):

2:3 Պողոսի հռետորական հարցի քերականական ձևը ակնկալում է «ոչ» պատասխան:

«մի՞թե կարծում ես» Սա հունարեն *logizomai* ԲԱՅՆ է: Պողոսն այն հաճախ է օգտագործում (Հռ. 2:3,26; 3:28; 4:3,4,5,6,8,9,10,11,22,23,24; 6:11; 8:18,36; 9:8; 14:14; Գաղ. 3:6 և տասն անգամ I և II Կորնթ. և երկու անգամ Փիլ. թղթում): Տես ծանուցումները 4:3 և 8:18հհ:

«ով մարդ» Սա համապատասխանում է նույն լեզվին/ոճին 1հ-ում: 9:20 վերաբերում է հրեաներին:

2:4 Հունարենում սա նույնպես հարց է:

« նորա քաղցրութեան առատութիւնը եւ համբերութիւնը եւ երկայնատութիւնը » Մարդիկ հաճախ սխալ են հասկացել Աստծո շնորհքը, ողորմությունը և համբերությունը և շրջել են այն որպես մեղանշելու հնարավորություն ապաշխարելու փոխարեն (հմմտ. II Պետ. 3:9).

Պողոսը հաճախ նկարագրում է Աստծո հատկանիշները որպես «առատություն/հարստություն/ճոխություն» (հմմտ. 9:23; 11:33; Կող. 1:27; Եփ. 1:7,18; 2:4,7; 3:8,16; Փիլ. 4:19).

« քաղցրութիւնը քեզ ապաշխարութեան է տանում » Ապաշխարությունը վճռական է Աստծո հետ ունեցած հավատք-ուխտ հարաբերության համար (հմմտ. Մաթ. 3:2; 4:17; Մարկ. 1:15; 6:12; Դուկ. 13:3,5; Գործք 2:38; 3:19; 20:21): Եբրայերենում տերմինը նշանակում է գործողությունների փոփոխություն, բայց հունարենում այն նշանակում է մտքի փոփոխություն: Ապաշխարությունը կամավոր է փոխելու եսակենտրոն կյանք ունենալուց դեպի մի կայնք որը տեղեկացված է ուղղված է Աստծո կողմից: Այն կոչ է անում շրջվել ես-ի նախապատվությունից և կապանքից/գերությունից: Հիմնականում դա նոր կեցվածք է, նոր աշխարհայացք, նոր տեր: Ապաշխարությունը Աստծո կամքն է ամեն մեկ ընկած Ադամի զավակի համար, Իր պատկերով ստեղծված (հմմտ. Եզեկ. 18:21,23,32 և II Պետ. 3:9):

Նոր Կտակարանային հատվածը, որը լավագույնն է անդրադարձնում հունարեն տարբեր տերմինները ապաշխարության հետ կապված II Կոր. 7:8-12 է: (1) *lupeō*, «վիշտ» կամ «ցավ/տխրություն» 8հ. (2x), 9հ. (3x), 10հ. (2x), 11հ.; (2) *metamelomai*, «ափսոսանք/զղջում» կամ «հոգսերի փոփոխություն» 8հ. (2x), 9; և (3) *metanoia*, «ապաշխարություն» կամ «մտքի փոփոխություն» 9հ., 10հ.: Հակադրությունը կեղծ ապաշխարությունն է (*metamelomai*) (հմմտ. Հուդան, Մաթ. 27:3 և Եսավը, Եբր. 12:16-17) ի հակադրություն ճշմարիտ ապաշխարության (*metanoieō*):

Ճշմարիտ ապաշխարությունը աստվածաբանորեն կապված է (1) Հիսուսի քարոզչությունը Նոր Ուխտի պայմանների հիման վրա (հմմտ. Մաթ. 4:17; Մարկ. 1:15; Դուկ. 13:3,5); (2) առաքյալների քարոզները Գործք-ում (*kerygma*, հմմտ. Գործք 3:16,19; 20:21); (3) Աստծո սուվերեն պարզը (հմմտ. Գործք 5:31; 11:18 և II Տիմ. 2:25); և (4) կործանում (հմմտ. II Պետ. 3:9): Ապաշխարությունը ընտրվածների համար չէ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապաշխարությունը (հավատքի հետ միասին) ուխտի պահանջ է թե Հին Ուխտի (*Nacham*, III Թագ. 8:47; *Shuv*, III Թագ. 8:48; Եզեկ. 14:6; 18:30; Հովել 2:12-13; Ջաք. 1:3-4) և թե Նոր Ուխտի:

1. Հովհաննես Սկրտիչ (Մաթ. 3:2; Մարկ. 1:4; Գուկ. 3:3,8)
2. Հիսուս (Մաթ. 4:17; Մարկ. 1:15; 2:17; Գուկ. 5:32; 13:3,5; 15:7; 17:3)
3. Պետրոս (Գործք 2:38; 3:19; 8:22; 11:18; II Պետ. 3:9)
4. Պողոս (Գործք 13:24; 17:30; 20:21; 26:20; Հռ. 2:4; II Կորն. 2:9-10)

Բայց ի՞նչ է ապաշխարություն: Դա ցա՞վ է: Դա մեղքի դադարո՞ւմ է: Լավագույն գլուխը Նոր Կտակարանում այս գաղափարի տարբեր լրացուցիչ իմաստները հասկանալու համար II Կորնթ. 7:8-11 է, որտեղ օգտագործված են իրար կապված, բայց տարբեր հունարեն տերմիններ:

1. «ցավ/տխրություն» (*hupē*, հմմտ. 8h. [2x], 9h. [3x], 10h. [2x], 11h.): Դա նշանակում է վիշտ կամ դառնություն/կսկիծ և ունի աստվածաբանորեն չեզոք լրացուցիչ իմաստ:
2. «ապաշխարություն» (*metanoō*, հմմտ. 9,10hh.): Դա «հետո» և «միտք» բառերի միացությունն է, որը նշանակում է նոր միտք, նոր մտածելակերպ, նոր կեցվածք կյանքի և Աստծո հանդեպ: Սա ճշմարիտ ապաշխարություն է:
3. «ափսոսանք/զոջում» (*metamelomai*, հմմտ. 8h.[2x], 10h.): Դա «հետո» և «հոգալ» բառերի միացությունն է: Դա օգտագործվում է Հուդայի կողմից Մաթ. 27:3 և Եսայի Եբր. 12:16-17: Դա նշանակում է զոջում խղճի, ոչ թե գործերի:

Ապաշխարությունն ու հավատքը պահանջվող ուխտի գործերն են (հմմտ. Մարկ. 1:15; Գործք 2:38,41; 3:16,19; 20:21): Կան մի քանի տեքստեր, որոնք նշանակում են, որ Աստված տալիս է ապաշխարություն (հմմտ. Գործք 5:31; 11:18; II Տիմ. 2:25): Բայց տեքստերից մեծամասնությունը սա դիտում է որպես անհրաժեշտ ուխտի արձագանք Աստծուն ձրի փրկություն առաջարկելու համար: Թե եբրայերեն և թե հունարեն տերմինների սահմանումները պահանջվում են ըմբռնել ապաշխարության ամբողջ իմաստը:

Եբրայերենը պահանջում է «գործողությունների փոփոխություն», բայց հունարենը պահանջում է «մտքի փոփոխություն»: Փրկված անձը ստանում է նոր միտք և սիրտ: Նա մտածում և ապրում է այլ կերպ:

2:5-9 Այս համարները նկարագրում են (1) ընկած մարդկության համառությունը/խստապարանոց լինելը և (2) Աստծո բարկությունն ու դատաստանը:

2:5 «խստութիւնովը/համառություն» Իսրայելը նույն ձևով նկարագրվում է Ել.32:9; 33:3,5; 34:9; 2 Օրին. 9:6,13,27:

«սրտովը» Տես Հատուկ Թեմա 1:24.

«բարկութեան օրումը» Հին Կտակարանում սա կոչվում էր «Տիրոջ Օրը» (հմմտ. Հովել, Ամովս): Սա Դատաստանի Օր գաղափարն է, կամ հավատացյալների համար Հարության Օր: Բոլոր մարդիկ հաշիվ պիտի տան Աստծուն կյանքի պարզևի համար (հմմտ. 5-9hh.; Մաթ. 25:31-46; Հայտ. 20:11-15):

Իմացիր, որ մեղավորներն իրենք են («դու» և «ինքդ»), որ կուտակում են բարկություն: Աստված պարզապես, ինչ որ մի պահ թույլ է տալիս, որ այս կուտակված բարկությունը դառնա ակնհայտ և իրականանա:

Բարկությունը, ինչպես բոլոր մարդկային բառերը Աստծուն նկարագրելու համար, միայն համանմանորեն (մարդակերպորեն) կիրառվում են աստվածությանը: Աստված հավիտենական է, սուրբ և Հոգի: Մարդիկ սահմանափակ են, մեղավոր և նյութական/ֆիզիկական: Աստված էմոցիոնալ/զգացմունքորեն բարկացած չէ, ինչպես մոլեզվություն/կատաղություն: Աստվածաշունչը Նրան ներկայացնում է, որպես մեղավորներին սիրող և ուզում է, որ նրանք ապաշխարեն, բայց նաև որպես հակառակվող մարդկային ըմբոստությանը: Աստված անձնական է: Նա անձամբ վերցնում է մեղքը, իսկ մենք անձամբ պատասխանատու ենք մեր մեղքի համար:

Մեկ լրացուցիչ միտք Աստծո բարկության մասին: Աստվածաշունչում դա թե տվյալ ժամանակի համար է (ժամանակավոր, հմմտ. 1:24,26,28) և թե վերջին ժամանակի համար (վախճանաբանական, հմմտ. 2:5-8): Տիրոջ Օրը (Գատաստանի Օրը) մի ձև էր Հին Կտակարանի մարգարեների համար, զգուշացնելու Իսրայելին ապաշխարելու ներկայում, որ իրենց ապագան լինի օրհնված և ոչ թե դատապարտված (հմմտ. 2 Օրին.. 27-28): Հին Կտակարանի մարգարեները հաճախ վերցնում էին իրենց օրերի ճգնաժամը և այն արձակում/նետում էին վերջի-ժամանակի վրա ապագայում:

2:6 Սա մեջբերում է Սաղ. 62:12-ից: Սա տիեզերական սկզբունք է, որ մարդիկ պատասխանատու են իրենց գործողությունների համար և հաշիվ կտան Աստծուն (հմմտ. Հոբ 34:11; Առակ. 24:12; Ժող. 12:14; Երեմ. 17:10; 32:19; Մաթ. 16:27; 25:31-46; Հռոմ. 2:6; 14:12; I Կոր. 3:8; Գաղ. 6:7-10; II Տիմ. 4:14; I Պետ. 1:17; Հայտ. 2:23; 20:12; 22:12): Նույնիսկ հավատացյալները հաշիվ կտան Քրիստոսին իրենց կյանքերի և ծառայության համար (հմմտ. II Կոր. 5:10): Բավատացյալները չեն փրկվում գործերով բայց փրկվում են գործելու համար (հմմտ. Եփ. 2:8-10 [հատկ. 2:14-26]; Հակոբոս և I Հովհ.):

2:7 «Նորանց, որ» Այստեղ կա հակասություն 7h. և 8h. նկարագրված անձանց միջև («Բայց նորանց՝ որ»):

- NASB** “to those who by perseverance in doing good seek for glory and honor and immortality; eternal life”
- NKJV** “eternal life to those who by patient continuance in doing good seek for glory, honor, and immortality;”
- NRSV** “to those who by patiently doing good seek for glory and honor and immortality, he will give eternal life;”
- TEV** “Some men keep on doing good, and seek glory, honor and immortal life; to them God will give eternal life”
- JB** “For those who sought renown and honor and immortality by always doing good there will be eternal life;”

Արևելահայերեն «Նորանց, որ բարի գործերի մեջ են յարատեւում, եւ փառք եւ պատիւ եւ անապականութիւն են որոնում, յաւիտենական կեանք.»

Արևմտահայերեն «Յաւիտենական կեանք անոնց, որոնք բարի գործերու մեջ համբերութեամբ յարատեւելով փառք ու պատիւ եւ անմահութիւն կը խնդրեն.»

Սա վերաբերվում է Կոռնելիոսի նման մարդկանց (հմմտ. Գործք 10:34-35): Այս հատվածը կարող է թվալ արդարություն գործերով (ձեռք բերել արդարություն մարդկային ջանքերով), բայց դա հակառակ է Հռոմեացիս թղթի գլխավոր թեմային: Հիշիր, որ թե 1-16hh. և թե 1-11hh. պարբերություն են: Ամբողջի աստվածաբանական միտքն այն է, որ Աստված մարդկանց

աչառություն անող/մեծարող չէ (11h.) և որ բոլորը մեղանչել են (12h.): Եվ եթե մարդիկ ապրեին իրենց ունեցած լույսի ներքո/համաձայն (բնական հայտնություն հեթանոսների համար, հատուկ հայտնություն հրեաների համար, հմմտ. 10:5) այն ժամանակ նրանք կլինեն ուղիղ Աստծո հետ: Ինչևէ, 3:9-18,23 ամփոփումը ցույց է տալիս, որ ոչ ապրեցին, ոչ էլ կարողացան: Հավատացյալի փոխված աստվածահաճո կյանքը դիտվում/ հասկացվում է, որպես հաստատում և վավերացում իր սկզբնական հավատքի արձագանք: Փոխված կյանքը ապացույց է Աստծո Հոգու բնակվելու (հմմտ. 10,13հհ.; Մաթ. 7; Եփ. 2:8-10; Հակոբոս 2:14-26 և I Հովհ.): Տես Հատուկ Թեմա: Համբերելու Կարիքը 8:25:

« **յալիտենական կեանք**» Սա Հովհաննեսի գրվածքներին բնորոշ արտահայտություն է և օգտագործվում է քիչ Նույնանման/Սինոպտիկ Ավետարաններում: Թվում է թե Պողոսը արտահայտությունը քիտցնում է Գան. 12:2-ից (հմմտ. Տիտոս 1:2; 3:7), որտեղ այն ցույց է տալիս նոր դարի կյանքը, Աստծո հետ ունեցած մտերմիկ կյանքը, հարուցյալ կյանքը: Նա առաջին անգամ դա օգտագործում է Գաղ.6:8: Գա Հռոմեացիս թղթի վարդապետական բաժնի ընդհանուր թեման է (հմմտ. 2:7; 5:21; 6:22,23). Գա նաև մի քանի անգամ հայտնվում է Հովվական Թղթերում (հմմտ. I Տիմ. 1:16; Տիտոս 1:2; 3:7):

- 2:8**
NASB “those who are selfishly ambitious”
NKJV, NRSV “those who are self-seeking”
TEV “other people are selfish”
NJB “those who out of jealousy”

**Արևելահայերեն «նորանց՝ որ հակառակութիւնից են/փառասեր,եսասեր/նախանձ »
Արևմտահայերեն «անոնց՝ որ հակառակ են»**

Տերմինը սկզբում նշանակում էր «աշխատել վարձավճարով»
«Հունարեն-անգլերեն բառարան» Լոուր և Նիդա, հատ. 2; էջ 104 (*Louw and Nida, Greek-English Lexicon, vol. 2, էջ. 104*), առաջարկում է այս տերմինի կիրառման երկու տարբերակ:
1. «հակառակութիւնից են/փառասեր,եսասեր/նախանձ» օգտագործված Հռ. 2:8 noting “ուզել լինել ավելի լավ քան որևէ մեկը», որը համապատասխանում է այս կոնտեքստին
2. «թշնամություն» օգտագործված Փիլ. 1:17 իմաստով/ծանուցումով «մրցակցություն» որպես թարգմանության տարբերակ (նաև տես II Կոր. 12:20; Գաղ. 5:20; Փիլ. 2:3; Հակոբոս 3:14,16)

«**ճշմարտութեան անհնազանդ**» «ճշմարտություն» (*aletheia*) տերմինը օգտագործվում էր իր երբայերեն իմաստով (*emeth*) ճշմարտախոսություն և հուսալիություն/վստահության արժանի: Այս կոնտեքստում այն ունի բարոյական, ոչ թե մտավոր կենտրոնացում: Տես Հատուկ Թեմա: Ըճմարտությունը Պողոսի գրվածքներում 1:18.

2:9 «ամեն մարդի վերայ» Պողոսն օգտագործեց *pas* հունարեն տերմինը թարգմանված «բոլոր» կամ «ամեն» այնքան հաճախ Հռոմեացիս թղթի այս սկզբի գլուխներում, ցույց տալու համար տիեզերական առնչությունները թե «վատ լուր»-ի (մարդու կորսվածությունը և Աստծո անաչառ/անկողմնապահ դատաստանը) և թե «բարի լուր»-ը (Աստծո առաջարկված ձրի փրկությունը և լրիվ/ամբողջական թողությունը Զրիստոսում բոլոր նրանց, ովքեր ապաշխարում և հավատում են):

Այս կոնտեքստը խստորեն ակնարկում է տիեզերական դատաստան կամ դրանից բխող հետևանքները: Այս ճշմարտությունը պահանջում է թե արդարի և թե չարի հարությունը (հմմտ. Գան. 12:2; Հովհ. 5:28-29; Գործք 24:15):

Եթե 6-11 հ. խիազմներ են, ուրեմն 8-9 հ. բանալի համարներն են, որոնք նշանակում/ցույց են տալիս դատաստան կամ չարագործներ:

2:9-10 «առաջ չրեայի» Սա կրկնվում է ընդգծելու համար: չրեաներն առաջինն էին պատեհության/առիթի մեջ, որովհետև նրան ունեին Աստծո հայտնությունը (հմմտ. 1:16; Մաթ. 10:6; 15:24; Հովհ. 4:22; Գործք 3:26; 13:46), բայց նաև առաջինը դատաստանի մեջ (հմմտ. 9-11) որովհետև նրանք ունեին Աստծո հատուկ կանչն ու օրհնությունները (հմմտ. 9:4-5):

2:11
NASB, NKJV “for there is no partiality with God”
NRSV “For God shows no partiality”
TEV “For God judges everyone by the same standard”
NJB “There is no favoritism with God”

Արևելահայերեն «Որովհետև Աստուծոյ մօտ աչառութիւն չկայ »
Արևմտահայերեն «Վասն զի Աստուծոյ քով աչառութիւն չկայ»

Բառացիորեն սա նշանակում է «բարձրացնել երեսը», որը փոխաբերություն էր վերցված Հին Կտակարանի հուդայականության համակարգից (հմմտ. Գևտ. 19:15; 2 Օրին. 10:17; II Սնաց. 19:7; Գործք 10:34; Գաղ. 2:6; Եփ. 6:9; Կող. 3:25; I Պետ. 1:17): Եթե դատավորը տեսնում էր թե ում էր արդարադատություն գործում ապա կար շեղելու/համոզելու առիթ: Ուստի նա չէր բարձրացնում այն մեկի երեսը, ով կանգնած էր իր առջև:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՌԱՍԻԶՄ

I. Ներածություն

Ա. Սա համընդհանուր արտահայտություն էր ընկած մարդու կողմից իր հասարակության մեջ/մերսում: Սա մարդու էգոն/ես է, աջակցելով ինքն իրեն ուրիշների հետևում/ի լրումն ուրիշների: Ռ-ասիզմը դա, շատ կերպերով, ժամանակակից երևույթ/ֆենոմեն է, այնինչ ազգասիրությունը (կամ ցեղային/tribalism) ավելի հին արտահայտություն է:

Բ. Ազգասիրությունը/հայրենասիրությունը սկսեց Բաբելոնի աշտարակաշինությունից (Ծննդ. 11) և որը սկզբնապես կապված էր Նոյի երեք որդիների հետ, որից այսպես կոչված ռասաները/ցեղերը զարգացան (Ծննդ. 10): Ինչևէ, Սուրբ Գրքից ակնհայտ է, որ մարդկությունը մեկ աղբյուրից է առաջացել (այն է, Աստծո հատուկ արարչագործությունը Ադամ և Եվա, հմմտ. Ծննդ. 1-3; Գործք 17:24-26):

Գ. Ռ-ասիզմը դա շատ կանխակալ կարծիքներից/չարիքներից մեկն է: Մյուսներն են/դրանցից են (1) կրթական պճնայամոլությունը/սնոբիզմ; (2) սոցիալ-տնտեսական գոռոզությունը/ամբարտավանությունը; (3) ինքնա-արդար կրոնական օրինականությունը; և (4) դոգմատիկ/դավանաբանական քաղաքական ընդունումը/հաստատումը:

II. Աստվածաշնչյան Նյութ

Ա. Հին Կտակարան

1. Ծննդ. 1:27- Մարդը, արու և էգ, ստեղծվեց Աստծո պատկերով և նմանությամբ, որը նրանց եզակի/հատուկ է դարձնում: Դ-ա նաև ցույց է տալիս նրանց անհատ արժեքը և արժանապատվությունը/բարձր կոչումը (հմմտ. Հովհ. 3:16):

2. Ծննդ. 1:11-25 -Արձանագրում է «. . իր տեսակի պես. . .» արտահայտությունը տաս անգամ: Սա օգտագործվել է հիմնավորելու ռասայական խտրականությունը: Ինչևէ, կոնտեքստից հայտնի է, որ սա վերաբերում է կենդանիներին և բույսերին և ոչ թե մարդուն:

3. Ծննդ. 9:18-27-Սա օգտագործվել է հիմնավորելու ռասայական իշխանությունը/ազդեցությունը: Պետք է հիշենք, որ Աստված չանիծեց Քանանին: Նոյը՝ նրա հայրը, անիծեց իրեն՝ հարբած թնրությունից արթնանալուց հետո: Աստվածաշունչը երբեք չի նշում, որ Աստված համաձայնեցրեց այդ անեծքը: Եթե նույնիսկ Նա դա աներ, սա չի ազդում սևամորթ ռասայի վրա: Քանանը նրանց հայրն էր, ովքեր բնակվեցին Պաղեստինում և Եգիպտոսում պատի արվեստը ցույց է տալիս, որ նրանք սևամորթ չեն եղել:
4. Հեսու 9:23 – Սա օգտագործվել է ապացուցելու համար, որ մի ռասան/ցեղը կժառայի մյուսին: Ինչևէ, կոնտեքստում Գաբավոնացիները նույն ռասայական տոհմից են ինչ հրեաները:
5. Եզրաս 9-10 և Նեեմ. 13 – Սրանք հաճախ օգտագործվել են ռասայական իմաստով, բայց կոնտեքստը ցույց է տալիս, որ ամուսնությունները դատապարտելի էին ոչ թե ռասայի պատճառով (նրանք Նոյի նույն որդուց էին, Ծննդ 10), այլ կրոնական պատճառներով:
- Բ. Նոր Կտակարան
1. Ավետարաններ
 - ա. Հիսուսն օգտագործեց հրեաների և սամարացիների միջև եղած ատելությունը մի քանի օրինակներով, որոնք ցույց են տալիս ռասայական ատելությունը անհարմար է:
 - (1) Բարի Սամարացու առակը (Ղուկ. 10:25-37)
 - (2) կինը ջրհորի մոտ (Հովհ. 4:4)
 - (3) երախտապարտ բորոտը (Ղուկ. 17:7-19)
 - բ. Ավետարանը բոլոր մարդկանց համար է
 - (1) Հովհ. 3:16
 - (2) Ղուկ. 24:46-47
 - (3) Եբր. 2:9
 - (4) Հայտ. 14:6
 - գ. Թագավորությունը կներգրավի ամբողջ մարդկությանը
 - (1) Ղուկ. 13:29
 - (2) Հայտ. 5
 2. Գործք
 - ա. Գործք 10 հստակ հատված է Աստծո տիեզերական սիրո և ավետարանի տիեզերական պատգամի մասին:
 - բ. Պետրոսը ենթարկվում է հարձակման իր գործողությունների համար Գործք 11-ում և այս խնդիրը չի լուծվում մինչև Երուսաղեմի Խորհուրդը Գործք 15-ում հետո այն լուծում է ստանում: Առաջին դարի հրեաների և հեթանոսների միջև եղած լարվածությունը շատ լարված էր/ինտենսիվ:
 3. Պողոս
 - ա. Քրիստոսում չկան արգելքներ
 - (1) Գաղ. 3:26-28
 - (2) Եփ. 2:11-22
 - (3) Կող. 3:11
 - բ. Աստված մարդկանց միջև աչառություն չի անում
 - (1) Հռ. 2:11
 - (2) Եփ. 6:9
 4. Պետրոս և Հակոբոս
 - ա. Աստված մարդկանց միջև աչառություն չի անում, I Պետ. 1:17
 - բ. Քանի որ Աստված աչառություն չի անում, ուրեմն Իր ժողովուրդն էլ չպետք է անի, Հակ. 2:1
 5. Հովհաննես

ա. Ամենաուժեղ դրույթներից մեկը հավատացյալների պատասխանատվության վերաբերյալ գտնվում է I Հովհ. 4:20

III. Եզրափակում/ամփոփում

Ա. Ռ-ասիզմը, կամ այդ հասկացողության լայն իմաստով, ցանկացած կանխակալ բնավորության ամբողջությամբ անհամապատասխան է Աստծո զավակներին: Ահա մեջբերում Հենլի Բառնետի (*Henlee Barnette*) կողմից, որը խոսեց Գլորիետայի ժողովում/ֆորում, Նյու-Մեքսիկոյում, Քրիստոնեական կյանքի հանձնաժողով 1964թ.: «Ռ-ասիզմը հերետիկոսական է որովհետև դա ոչ աստվածաշնչյան և ոչ քրիստոնեական, էլ չասած ոչ գիտական»:

Բ. Այս խնդիրը քրիստոնեաներին հնարավորություն է տալիս ցույց տալ իրենց Քրիստոսանման սերը, ներողամտությունը և հասկացողությունը կորսված աշխարհին: Քրիստոնեա մերժումը այս բնագավառում ցույց է տալիս անհասունություն և դա չարի համար հնարավորություն է դանդաղեցնել/ արգելակել հավատացյալի հավատքը, վստահությունը և աճը: Դա նաև խոչընդոտ է հանդիսանում կորսված մարդկանց համար՝ մոտենալու Քրիստոսին:

Գ. Ի՞նչ կարող եմ ես անել: (Այս բաժինը վերցված է Քրիստոնեա Կյանքի Իրավասություն գրքույկից/բրոշյուր վերնագրված՝ «Ռ-ասայական Հարաբերություններ»):
«ԱՆՁՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ»

1 Ընդունել քո սեփական պատասխանատվությունը խնդիրները լուծման մեջ կապված ռասայի հետ:

1 Աղոթքի, Աստվածաշնչի սերտողության և ուրիշ ռասային պատկանող անձանց հետ շփվելու միջոցով, ջանալ/աշխատել ազատել քո կյանքը ռասայական նախապաշարմունքից:

1 Արտահայտիր քո համոզմունքները ռասայականության մասին, մասնավորապես այնտեղ որտեղ ռասայական ատելություն հրահրողները ոչ մի պատժի չեն արժանանում:

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ»

1 Ընդունիր ընտանիքի ազդեցության կարևորությունը ուրիշ ազգերի հանդեպ ճիշտ դաստիարակություն և վերաբերմունք ունենալ:

1 Փորձիր գտնել հնարավորություններ ընկերական հարաբերություններ ստեղծելու տարբեր ազգեր ներկայացնող ընտանիքների միջև:

«ՔՈ ԵԿԵՂԵՅՈՒՄ»

1 Քարոզչության և աստվածաշնչյան ճշմարտության ուսմունքի միջոցով կապված ազգային փոխհարաբերությունների հետ, համայնքը կարող է մղվել օրինակ հանդիսանալու ամբողջ հասարակության համար:

1 Վստահ եղիր, որ երկրպագությունը, պաշտամունքը, հաղորդակցությունը և ծառայությունը եկեղեցու միջոցով բաց է բոլորի համար, նույնիսկ ինչպես Նոր Կտակարանի եկեղեցիներում ռասայական, ազգային խոչընդոտներ չկային (Եփ. 2:11-22; Գաղ. 3:26-29):

«ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ»

1 Օգնիր ամբողջությամբ հաղթահարել ազգային խտրականությունը աշխատանքի ոլորտում:

1 Գործիր բոլոր տեսակի հասարակական կազմակերպությունների միջոցով իրավունքների և հնարավորությունների հավասարությունը պաշտպանելու համար, հիշելով, որ ազգային խնդիրների դեմ պետք է պայքարել, և ոչ թե մարդկանց: Սրա նպատակը պետք է լինի իրար հասկանալու մակարդակի բարձրացումը և ոչ թե դառնության զգացողության:

- 1 Եթե ճիշտ ես գտնում, կազմակերպիր մտահոգ քաղաքացիներից կազմված հատուկ կոմիտե, հասարակության մեջ հաղորդակցության միջոցներ ստեղծելու նպատակով, ընդհանուր մասսան կրթելու և հատուկ գործունեություն ծավալելու նպատակով՝ ազգային հարաբերություններ հաստատելու համար:
- 1 Աջակցիր օրենսդրությանն ու օրենսգետներին, օրենքներ ընդունելու ժամանակ, ուղղված ռասսայական արդարության և հակառակ կեցիք նրանց, ովքեր հրահրում են անարդարություն քաղաքական նկատառումներով:
- 1 Հավանություն տուր իշխանավորներին օրենքը պաշտպանելու դեպքում առանց խտրականության:
- 1 Խուսափիր բռնությունից, այլ ձգտիր օրենքը հարգելուն, ամեն հնարավոր բան անելով որպես քրիստոնյա-քաղաքացի, որպեսզի վստահ լինես, որ իրավասու մարմինները չդառնան գործիք նրանց ձեռքին, ովքեր հրահրում են խտրականություն:
- 1 Օրինակ եղիր Քրիստոսի հոգին ու միտքը ցուցաբերելով բոլոր մարդկանց հետ փոխհարաբերությունների մեջ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 2:12-16

¹²Որովհետեւ նորանք՝ որ առանց օրենքի մեղք գործեցին, առանց օրենքի էլ կկորչեն. եւ նորանք՝ որ օրենքի տակ մեղք գործեցին օրենքով կդատուին:¹³(Որովհետեւ ոչ թէ օրենքը լսողներն են Աստուծոյ առաջին արդար, այլ օրենքը կատարողները կարդարանան: ¹⁴Ուրեմն երբոր հեթանոսները՝ որ օրենք չունին՝ բնութեամբ օրենքի գործերն անեն, սորանք թէւ օրենք չունին իրանք եւ իրանց համար օրենք. ¹⁵Որոնք ցոյց են տալիս թէ օրենքի գործը նորանց սրտերումը գրուած է՝ նորանց խղճմտանքի վկայութիւնովը, եւ իրանց խորհուրդների իրար յանդիմանելովը, կամ թէ իրաւունք տալովը.)¹⁶Այն օրը՝ որ Աստուած մարդկանց ծածուկ բաները կդատէ իմ աւետարանի համեմատ Յիսուս Քրիստոսի ձեռովը:

NASB (UPDATED) TEXT: 2:12-16

¹²For all who have sinned without the Law will also perish without the Law, and all who have sinned under the Law will be judged by the Law; ¹³for *it is* not the hearers of the Law *who* are just before God, but the doers of the Law will be justified. ¹⁴For when Gentiles who do not have the Law do instinctively the things of the Law, these, not having the Law, are a law to themselves, ¹⁵in that they show the work of the Law written in their hearts, their conscience bearing witness and their thoughts alternately accusing or else defending them, ¹⁶on the day when, according to my gospel, God will judge the secrets of men through Christ Jesus.

2:12 «նորանք՝ որ առանց օրենքի մեղք գործեցին,» Աստված բոլոր մարդկանց պատասխանատվության կկանչի, անգամ նրանց ովքեր չեն իմացել Հին Կտակարանի հայտնությունը կամ չեն լսել Ավետարանը: Բոլոր մարդիկ ունեն Աստծո մասին որոշակի գիտություն արարչագործությունից (հմմտ. 1:19-20; Սաղ. 19:1-6), և բնածին բարոյական զգացողությամբ, (հմմտ. 2:14-15): Ողբերգությունը նրանում է, որ բոլորը ինքնակամ մերժել են իրենց ունեցած լույսը (հմմտ. 1:21-23; 3:9,19,23; 11:32; Գաղ. 3:22):

«օրենքը» «օրենք» բառը այստեղ չունի հոդը: Այսպիսի քերականական կառուցվածքը սովորաբար օգտագործվում է ընդգծելու համար ԳՌՅԱԿԱՆԻ որակական նշանակությունը: Ինքն, Հռոմեացիներին ուղղված թղթում Պողոսն օգտագործում է «օրենք» տերմինը մի քանի տարբեր բաների համար (1) Հռոմեական օրենք; (2) Մովսեսական օրենք; կամ (3) մարդու հասարակական բարոյական գաղափարը ընդհանուր վերցրած: Կոնտեքստը և ոչ թե ՀՌԳԸ պետք է հայտնի որ մեկը: Այս կոնտեքստը ընդգծում է, որ բոլոր մարդիկ իրենց սրտերում ինչ որ չափի գիտություն ունեն Աստծո բնական հայտնության Իր մասին (հմմտ. հ. 15):

2:13 «Որովհետև ոչ թե օրենքը լսողներն են Աստուծոյ առաջին արդար,» «Լսողներ» տերմինը ռաբիական կիրառության մեջ ուներ յուրահատուկ իմաստ Թորայի ռաբիական ուսանողների համար:

«Ճիշտ, ուղիղ» կամ «արդարացված» տերմինը (*kikē* իր բոլոր ձևերով) վճռական տերմին է Պողոսի աստվածաբանության մեջ (հմմտ. 3:4,20,24,26,28,30; 4:2,5; 5:1,9; 6:7; 8:30,33): «Ճիշտ, ուղիղ», «արդարացված», «արդարացում» բոլորն էլ առաջացել են *dikaio* բառից: Տես հատուկ թեմա: Արդարություն 1:17: Եբրայերենում (*tsadag*) այն իրականում վերաբերվում էր երկար ուղիղ եղեգին (15-ից 20 ոտնաչափ), որն օգտագործվում էր իրերը չափելու համար, ինչպես օրինակ պատերը կամ ցանկապատերը, կապարալարի համար:

Պողոսի գրվածքներում տերմինն ուներ երկու շեշտադրություն: Առաջինը՝ Աստծո արդարությունը տրվում է մեղավոր մարդուն, որպես ձրի պարգև Քրիստոսի հավատքի միջոցով: Սա հաճախ կոչվում է վերագրված արդարություն կամ դատական արդարություն: Սա օրինական հիմք է տալիս մարդուն՝ կանգնելու արդար Աստծո առաջ: Սա Պողոսի հայտնի «արդարացում հավատքով» թեմայի աղբյուրն է: Երկրորդը Աստծո գործն է մեղավոր մարդուն վերականգնել Իր պատկերին նմանեցնելու համար (հմմտ. Ծննդ. 1:26-27), կամ այլ կերպ ասած, քրիստոսանման դարձնելու համար: Այս համարը նման է Մաթ. 7:24; Գուկ. 8:21 և 11:28; Հովհ. 13:17; Հակոբ. 1:22-23,25— թախանձում է հավատացյալներին ոչ միայն լսողներ լինեն այլ կատարողներ: Վերագրված արդարությունը պետք է երևա արդար կյանք ապրելով: Աստված ներում և փոխում է մեղավորներին: Պողոսն օգտագործում է այս տերմինը երկու իմաստներով էլ: Նոր Ուխտը մարդկանց տալիս է օրինական կարգավիճակ, բայց նաև պահանջում է աստվածահաճո ապրելակերպ: Այն տրվում է ձրի, բայց շատ թանկ արժե:

«այլ օրենքը կատարողները» Աստծո իմացությունը պահանջում է նոր հնազանդ կյանք (հմմտ. Գևտ. 18:5; Մաթ. 7:24-27; Գուկ. 8:21; 11:28; Հովհ. 13:17; Հակոբ. 1:22-25; 2:14-28): Շատ ձևերում այս գաղափարը նման է եբրայերեն *shema* տերմինին, որը նշանակում էր, որ մարդը ինչ լսում է այն էլ անում է (հմմտ. 2 Օրին. 5:1; 6:4; 9:1; 20:3; 27:9-10):

Արևելահայերեն «Ուրեմն երբոր հեթանոսները՝ որ օրենք չունին՝ բնութեամբ օրենքի գործերն անեն, սորանք թէև օրենք չունին իրանք են իրանց համար օրենք»
Արևմտահայերեն «Քանզի հեթանոսները, որոնք օրենք չունին, երբ բնականաբար օրենքին գործերը կը գործեն, օրենք չունենալով՝ իրենց անձերուն օրենքը բուն իրենք կըլլան»

2:14

NASB “For when Gentiles who do not have the Law do instinctively the things of the Law, these, not having the Law, are a law to themselves”

NKJV “for when Gentiles, who do not have the law, by nature do the things contained in the law, these, although not having the law, are a law to themselves”

NRSV “When Gentiles, who do not possess the law, do instinctively what the law requires, these, though not having the law, are a law to themselves”

TEV “The Gentiles do not have the Law, but whenever of their own free will they do what the Law commands, they are a law to themselves, even though they do not have the Law”

JB “For instance, pagans who never heard of the Law but are led by reason to do what the Law commands, may not actually ‘possess’ the Law, but, they can be said to ‘be’ the Law”

Բոլոր մշակույթներն ունեն ներքին-բարոյական օրենք, սոցիալական նորմ: Նրանք պատասխանատու են իրեն ունեցած ճշմարտության լույսի համար (հմմտ. I Կոր. 9:21): Այս համարը չէր նշանակում, որ իրենք կարող են Աստծո հետ ունենալ ճիշտ հարաբերություն, եթե նրանք ապրեն իրենց մշակույթի լույսի ներքո, այլ այն, որ նրանք պատասխանատու են իրենց բնածին գիտության համար Աստծո մասին:

2:15 «նորանց խղճմտանքի վկայութիւնովը, եւ իրանց խորհուրդների իրար յանդիմանելովը, կամ թէ իրաւունք տալովը» Կա ներքին-բարոյական ձայն: Բայց լիովին կարող ես վստահել միայն Սուրբ Գիրքին՝ լուսավորված Սուրբ Հոգով: Մեղքի մեջ ընկնելը ազդել է մեր խղճի վրա: Ինչևէ, արարչագործությունը (1:18-20) և այս ներքին, բարոյական օրենքը (2:14-15) բոլորը Աստծուն ճանաչելու համար են, որով օժտված են որոշ մարդիկ: Հին եբրայերենում չկար տերմին, որ հավասարազոր լիներ հունարեն «խիղճ» (*syneidesis*) բառին: Հունարեն հասկացողությունը ներքին բարոյական զգացմունքի ճիշտ ու սխալի վերաբերյալ հաճախ քննարկվում էր փիլիսոփաստիկների կողմից: Պողոսը լավ ծանոթ էր հույն փիլիսոփաների ուսմունքներին (նա մեջբերում է Կլեմնտուսին Գործք 17:28-ում; Մենանդերին I Կոր. 15:33; և Եպիմենիդուսին Տիտոս 1:12) իր վաղ կրթության շնորհիվ Տարսոնում: Նրա հայրենիքը հայտնի էր իր հույն հռետորական և փիլիսոփայության գերազանց դպրոցներով:

2:16 «Այն օրը» Տես նշումը 2:5-ում.

«իմ աւետարանի համեմատ» Կոնտեքստում սա վերաբերում է Հիսուս Քրիստոսի հայտնության Պողոսի քարոզչությանը: «Իմ» ԴԵՐԱՆՈՒՆ-ը արտացոլեց Պողոսի հասկացողությունը ավետարանի տնտեսավարումը, որը վստահվել էր իրեն (հմմտ. 16:25; I Կոր. 15:1; Գաղ. 1:11; I Տիմ. 1:11; II Տիմ. 2:8): Դա միայն իրեն էր պատկանում, բայց որպես Հեթանոսների Առաքյալ նա մեծ պատասխանատվություն էր զգում Հիսուս մասին ճշմարտությունը տարածելու մեջ հունահռոմեական աշխարհում:

«Աստուած մարդկանց ծածուկ բաները կդատէ» Աստված գիտե բոլոր մարդկանց սրտերը (հմմտ. I Թազ. 2:7; 16:7; 3 Թազ. 8:39; I Մնաց. 28:9; II Մնաց. 6:30; Սաղ. 7:9; 44:21; 139:1-6; Առ. 15:11; 21:2; Եր. 11:20; 17:10; 20:12; Գուկ. 15:16; Գործք 1:24; 15:8; Հռ. 8:27; Հայտ. 2:23): Հայրը, Իր Որդու միջնորդությամբ, յուրաքանչյուր շարժառիթ, յուրաքանչյուր արաք կրեթի դատական վերաքննության (հմմտ. Մաթ. 25:31-46; Հայտ. 20:11-15):

«Յիսուս Քրիստոսի ձեռովը» Հիսուս չեկավ որպես դատավոր (հմմտ. Հովհ. 3:17-21): Նա եկավ հայտնելու Հոր Աստծուն, մեռնելու որպես փոխանորդ, և հավատացյալներին օրինակ թողնելու՝ իրեն հետևելու համար: Երբ մարդիկ մերժում են Հիսուսին իրենք իրենց դատում են:

Ինչևէ, Նոր Կտակարանը նաև սովորեցնում է, որ Հիսուսը կդատի, որպես Հոր Աստծո ներկայացուցիչ (հմմտ. Հովհ. 5:22, 27; Գործք 10:42; 17:31; II Տիմ. 4:1): Հովհաննու ավետարանում կարելի է տեսնել և որոշ դժվարություն Հիսուսը որպես Դատավոր և/կամ Փրկիչ (հմմտ. 3:17-21 և 9:39):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 2:17-24

¹⁷ Ահա դու Հրեայ ես անուավում, եւ կռօնվում ես օրէնքի վերայ, եւ պարծենում ես Աստուծով: ¹⁸ Եւ նորա կամքը գիտես, եւ զանազանում ես տարբեր բաները օրէնքիցը խրատուած լինելով: ¹⁹ Եւ քո անձի վերայ վատահոսքին ունիս՝ որ կոյրերի առաջնորդ ես. եւ խաւարեալների լոյս. ²⁰ Անմիտների խրատիչ, երեխաների վարդապետ. որ օրէնքի գիտութեան եւ ճշմարտութեան կերպարանքն ունիս օրէնքումը. ²¹ Արդ դու՝ որ ուրիշին սովորեցնում ես, քո անձին չե՞ս սովորեցնում. դու որ քարոզում ես չգողանալ, գողանու՞մ ես: ²² Որ ասում ես շնութիւն չգործել՝ շնութիւն ես գործում. դու՝ որ կռքերիցը զարշում ես՝ սրբապղծութիւն ես անում: ²³ Դու՝ որ օրէնքովը պարծենում ես, օրէնքին դէմ գործելով Աստուծուն անարգու՞մ ես: ²⁴ Որովհետեւ Աստուծոյ անունը ձեր պատճառովը հայհոյվում է հեթանոսների մեջ, ինչպէս եւ գրուած է:

NASB (UPDATED) TEXT: 2:17-24

¹⁷But if you bear the name “Jew” and rely upon the Law and boast in God, ¹⁸and know *His* will and approve the things that are essential, being instructed out of the Law, ¹⁹and are confident that you yourself are a guide to the blind, a light to those who are in darkness, ²⁰a corrector of the foolish, a teacher of the immature, having in the Law the embodiment of knowledge and of the truth, ²¹you, therefore, who teach another, do you not teach yourself? You who preach that one shall not steal, do you steal? ²²You who say that one should not commit adultery, do you commit adultery? You who abhor idols, do you rob temples? ²³You who boast in the Law, through your breaking the Law, do you dishonor God? ²⁴For “THE NAME OF GOD IS BLASPHEMED AMONG THE GENTILES BECAUSE OF YOU,” just as it is written.

2:17 «**ահա**» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է որպէս ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար: Այս պայմանը շարունակվում է մինչև հ. 20-ը, բայց չունի եզրակացություն, ուստի TEV թարգմանության մեջ այս տեքստը տրվում է, որպէս հնարավոր պնդումներ, որը կարող էր անել Հիսուսը: Հրեաներն ամբողջությամբ հենվում էին իրենց ծագումնաբանության, ավանդությունների և դրանց կատարման վրա՝ իրենց փրկության համար (հմմտ. Մաթ. 3:9; Հովհ. 8:33,37,39):

«**պարծենալ Աստծով**» Շատ հրեաներ հենվում են (1) իրենց ազգային ծագումնաբանության և (2) Մովսեսական Օրենքի կատարելու վրա, որով ընդունված են Աստծո կողմից: Իրականում, նրանց ինքնա-արդարացնող օրինապաշտությունը իրենց բաժանում էր Աստծուց (հմմտ. Մաթ. 5:20; Գաղ. 3): Ինչպիսի ողբերգական հեզմանը:

Պողոսը զարգացնում է այս փառաբանության գաղափարը I Կորնթացիների նամակում: Պողոսը բախվեց գոռոզ, ինքնահավան իսրայելացի և ինքնահավան հույն մտավորականության հետ: Սակայն կարևորը նա է, որ ոչ մի մարմին իր արժանիքներով չի կարող փառավորել Աստծուն (կամ էլ կոպիտ ասած, Աստված ոչ մի բարի բան չստացավ ձեզ ընդունելու համար):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊԱՐԾԵՆԱԼ, ՄԵԾԱՐԵԼ

Պողոսն օգտագործում է հունարեն *kauchaomai*, *kauchēma*, և *kauchēsis* բառերը 35 անգամ և միայն երկու անգամ հանդիպում է Նոր Կտակարանի մնացած մասերում (երկուսն էլ Հակոբոսի թղթում): Մեծանասությունը գտնվում է I և II Կորնթացիների նամակում:

Կան երկու հիմնական ճշմարտություններ կապված այս թեմայի շուրջ;

1 ոչ մի մարմին չի պարծենա Աստծո առաջ (հմմտ. I Կոր. 1:29; Եփ. 2:9)

1 հավատացյալները պետք է պարծենան Տիրոջնով (հմմտ. I Կոր. 1:31; II Կոր. 10:17, որն ակնարկ է Եր. 9:23-24)

Ուստի, կա համապատասխան, հարմար և անթույլատրելի պարծանք/մեծարում (օր., հպարտություն):

1. համապատասխան, առանձնահատուկ
 - ա. փառքի հույսովը (հմմտ. Հն. 4:2)
 - բ. Աստծով Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով (հմմտ. Հն. 5:11)
 - գ. Տեր Հիսուս Քրիստոսի խաչով (օր., Պողոսի հիմնական թեման, հմմտ. I Կոր. 1:17-18; Գաղ. 6:14)
 - դ. Պողոսը պարծենում է
 - (1) նրա ծառայությունը առանց վարձատրության էր (հմմտ. I Կոր. 9:15,16; II Կոր. 10:12)
 - (2) Քրիստոսից ստացած իր հեղինակության և իշխանության համար (հմմտ. II Կոր. 10:8,12)
 - (3) նա չէր պարծենում ուրիշների աշխատանքով (ինչպես որոշ մարդիկ էին անում Կորնթոսում, հմմտ. II Կոր. 10:15)
 - (4) իր ազգային ժառանգությունով (ինչպես և մյուսները Կորնթոսում այդպես էին վարվում, հմմտ. II Կոր. 11:17; 12:1,5,6)
 - (5) իր եկեղեցիներով
 - (ա) Կորնթոսի (II Կոր. 7:4,14; 8:24; 9:2; 11:10)
 - (բ) Թեսաղոնիկեի (հմմտ. II Թես. 1:4)
 - (6) նրա վստահությունը Աստծո մխիթարության և փրկության վրա էր (հմմտ. II Կոր. 1:12)
2. անթույլատրելի, անհարմար
 - ա. կապված հրեական ժառանգության հետ (հմմտ. Հն. 2:17,23; 3:27; Գաղ. 6:13)
 - բ. Կորնթոսի եկեղեցում ոմանք պարծենում էին
 - (1) մարդկանցով (հմմտ. I Կոր. 3:21)
 - (2) իմաստությունով (հմմտ. I Կոր. 4:7)
 - (3) ազատությամբ (հմմտ. I Կոր. 5:6)
 - գ. կեղծ վարդապետները փորձում էին պարծենալ Կորնթոսի եկեղեցում (հմմտ. II Կոր. 11:12)

2:18 «զիտես» Տես Հատուկ Թեմա ստորև

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՆԱՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ «ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ, ՓՈՐՁ» և ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՔՆԵՐԸ

Գոյություն ունեն երկու հունարեն տերմիններ, որոնք ունեն ինչ որ մեկին նպատակի համար փորձելու գաղափարը.

1. *Dokimazō, dokimion, dokimasia*
 Այս տերմինը մետալուրգիական տերմին է, որն օգտագործվում է ինչ որ բանի կրակով փորձելու համար իրական լինելը ստուգելու պայմանով (փոխաբերական իմաստով նաև մարդուն): Կրակը հայտնում է մետաղի իսկական լինելը այրման, թրծման միջոցով (մաքրելով, զտելով): Ֆիզիկական գործընթացը դարձավ գորեղ իդիոմա Աստծո և/կամ մարդկանց համար ուրիշներին փորձելու համար: Այս տերմինը օգտագործվում է միայն դրական իմաստով՝ պիտանի լինելու փորձով.
 Նոր Կտակարանում օգտագործվում է փորձելու համար
 - ա. եզներ, Դուկ. 14:19
 - բ. ինքներս մեզ, I Կոր. 11:28
 - գ. մեր հավատքը, Հակոբոս 1:3

դ. նույնիսկ Աստծուն, Եբր. 3:9

Ենթադրվում էր, որ այս փորձությունների արդյունքները կլինեն դրական (հմմտ. Հռ. 1:28; 14:22; 16:10; II Կոր. 10:18; 13:3; Փիլ. 2:27; I Պետ. 1:7): Ուստի, տերմինը տալիս է գաղափար, երբ ինչ որ մեկը փորձվում է և ապացուցվում է որպես

ա. արժանի, կարևոր

բ. լավ, բարի

գ. անկեղծ, ազնիվ

դ. թանկագին, կարևոր

ե. պատվավոր

2. *Peirazō, peirasmos*

Այս տերմինն ունի ստուգման լրացուցիչ իմաստ, որը սխալը գտնելու կամ մերժելու համար է: Սա հաճախ օգտագործվում է կապված անապատում Հիսուսի փորձության հետ:

ա. Նկարագրում է Հիսուսին ծուղակը զցելու փորձի մասին (հմմտ. Մաթ. 4:1; 16:1; 19:3; 22:18,35; Մարկ. 1:13; Գուկ. 4:2; 10:25; Եբր. 2:18):

բ. Այս տերմինը (*peirazō*) օգտագործվում է սատանայի անվան համար Մաթ. 4:3; I Թես. 3:5.

գ. Սա (բարդ կառուցվածքով, *ekpeirazō*) օգտագործվում է Հիսուսը, երբ խոսում է Աստծուն չփորձելու մասին (հմմտ. Մաթ. 4:7; Գուկ. 4:12; նաև տես I Կոր. 10:9):

դ. Սա օգտագործվում է նաև այն ժամանակ, երբ խոսքը գնում է հավատացյալների փորձանքների և փորձությունների մասին (հմմտ. I Կոր. 7:5; 10:9,13; Գաղ. 6:1; I Թես. 3:5; Եբր. 2:18; Հակոբոս 1:2,13,14; I Պետ. 4:12; II Պետ. 2:9):

□ **«Օրենքի»** 17h-ից սկսած խոսում է հրեա ժողովրդի մասին, ուստի «Օրենք» տերմինը այս կոնտեքստում պետք է վերաբերվի Մովսեսական Օրենքին: Սա հաստատվում է h.25-ում, որտեղ խոսվում է թլպատության մասին:

2:18-20 Հրեա առաջնորդներն հավատում էին, որ իրենց ճանապարհը (հուդայականության դավանանքը) ոչ միայն ամենաճիշտն էր, այլ միակը, որը տանում է Աստծո մոտ: Նաև նրանք վստահ էին, որ իրենք են ճշմարտ վարդապետները կրոնական հարցերում: Բայց արտոնությունը պահանջում է պատասխանատվություն (հմմտ. Գուկ. 12:48):

Ահա նրանց վստահության զուգահեռ արտահայտությունները

1. կույրերի առաջնորդ, հ. 19

2. խավարյալների լույս, հ. 19

3. անմիտներին խրատիչ, հ. 20

4. երեխաների վարդապետ, հ. 20

5. օրենքի գիտության և ճշմարտության կերպարանքն ունես, հ. 20

2:21-24 Եթե մեկը հավատում է անձնական հնազանդությանը, ապա այդ հնազանդությունը պետք է ամբողջական լինի (հմմտ. Մաթ. 5:20,48; Գաղ. 3:10, որը մեջբերում է 2 Օրին. 27:26 և Հակ. 2:10): Ընկած, մեղավոր մարդկության համար սա անհնարին բան է: 21-33 համարներում կան հինգ հռետորական հարցեր:

2:22 Բավականին դժվար է հասկանալ, թե հհ. 22-23 Պողոսն ինչ ինկատի ունի: Քանի որ այս նկարագրումը չի համապատասխանում այդ ժամանակվա հրեա մեծամասնությանը, միանգամայն հնարավոր է, որ այդ մեղքերը օգտագործված են հոգևոր իմաստով, նման այն բանի, թե ինչպես է Հիսուսը մեկնաբանում Օրենքը Մաթ. 5:20-48-ում: Ջորջ Լեդը «Նոր Կտակարանի աստվածաբանությունը» գրքում, էջ. 505 (George Ladd in *A Theology of the New Testament*,) ասում է. «Պողոսը պետք է, որ ինկատի ունենար Աստծո փառքի և մեծարման այն գողությունը, որը միայն

Նա ուներ, և նաև հոգևոր շնությունը և ճշմարիտ երկրպագության ոտնահարումը, որը միայն Աստծուն է պատկանում; և այս ամենն նրանք անում էին իրենք իրենց մեծարելով որպես դատավորներ և տեր իրենց հայրենակիցների վրա»:

2:22 «կուրքերիցը գարշում ես» Այս բայի հիմնական նշանակությունը սա է «ես կանգնել ինչ որ մի բանից, որից գարշում ես, զզվում ես»:

«սրբապղծութի՞ւն ես անում» Պատմականորեն այդպես էլ մինչև վերջ անորոշ մնաց, թե ստույգ ինչ էր ցույց տալիս այս արտահայտությունը, բայց շատ հավանական է, որ ինչ որ կերպ այն վերաբերվում էր կռապաշտությանը:

2:24 Սա մեջբերում է Եսայա 52:5-ից ըստ Սեպտուագիանի: Աստծո օրհնություններն Իսրայելին ուխտը պահելու և հետևելու համար էր (հմմտ. 2 Օրին. 27-28), որպեսզի նրանք վկաները լինեին ամբողջ աշխարհում: Ինչևէ, Իսրայելը երբեք չպահեց ուխտը, այդ պատճառով աշխարհը տեսնում էր միայն Աստծո դատաստանները (հմմտ. Եզ. 36:22-32): Իսրայելը պետք է քահանաների թագավորություն լիներ (հմմտ. Ել. 19:5-6), որպեսզի ամբողջ աշխարհին ԵՀՈՎԱ-յին առաջնորդեր (հմմտ. Ծննդ. 12:3; Եփ. 2:11-3:13):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 2:25-29

²⁵ Արդ թլփատութիւնը շահատր է՝ թէ որ օրէնքը պահող ես. ապա եթէ օրէնքի դէմ յանցատր ես, քո թլփատութիւնն անթլփատութիւն եղաւ:²⁶ Բայց թէ որ անթլփատութիւնն օրէնքի իրաւունքները պահէ, չէ՞ որ նորա անթլփատութիւնը՝ թլփատութիւն կը համարուի:²⁷ Եւ ի բնէ անթլփատութիւնը՝ օրէնքը կատարելով կդատապարտէ քեզ, որ գրով եւ թլփատութիւնով օրէնքի դէմ յանցատր ես:²⁸ Որովհետեւ նա չէ Հրէայ՝ որ դրսի երեւոյթով է, եւ այն չէ թլփատութիւնը՝ որ մարմնով դրսի երեւոյթով է:²⁹ Այլ նա՝ որ ծածուկ Հրէայ է, եւ սրտի թլփատութիւնը հոգով՝ եւ ոչ թէ գրով. որի գովասանքը ոչ թէ մարդկանցից է, այլ Աստուածանից:

NASB (UPDATED) TEXT: 2:25-29

²⁵For indeed circumcision is of value if you practice the Law; but if you are a transgressor of the Law, your circumcision has become uncircumcision. ²⁶So if the uncircumcised man keeps the requirements of the Law, will not his uncircumcision be regarded as circumcision? ²⁷And he who is physically uncircumcised, if he keeps the Law, will he not judge you who though having the letter of the Law and circumcision are a transgressor of the Law? ²⁸For he is not a Jew who is one outwardly, nor is circumcision that which is outward in the flesh. ²⁹But he is a Jew who is one inwardly; and circumcision is that which is of the heart, by the Spirit, not by the letter; and his praise is not from men, but from God. ²Great in every respect. First of all, that they were entrusted with the oracles of God.

2:25 «թլփատութիւն» Պողոսը կրկին օգտվում է սուր քննադատության ոճից: Նա կանխատեսում է, որ ինչ որ մեկը կանգնի, որ բավական է այն, որ իրենք թլպատված են (հմմտ. Ծննդ. 17:10-11) և որ իրենց սերնդաբանությունը գալիս է Աբրահամից: Պողոսն անկեղծորեն և քաջությամբ քանդում է այս փայփայված հրեական հույսը (հմմտ. Մաթ. 3:7-10; Հովհ. 8:31-59):

Իսրայելի բոլոր հարևան ազգերը, բացի փղշտացիներից, թլպատվում էին: Ինքնին ծեսը չէր կարևոր, այլ սա ընդունողի հավատքի շարունակությունն էր (հմմտ. հհ. 26-27): Սա հավասարաչափ վերաբերվում է բոլոր կրոնական ծեսերին: Աստվածապաշտ մարդիկ հաճախ ուզում են ստանալ Աստծո ուխտի օրհնությունները, բայց առանց պատասխանատվություն կրելու:

2:25-26 «թէ որ. . . եթէ. . . թէ որ» Այստեղ կան երեք ԵՐՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՍԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որոնք վերաբերվում են ապագայում հնարավոր գործողություններին: Հնազանդությունը (հմմտ. 2 Օրին. 27-30) բանալի թեման է Պողոսի փաստարկներում 2-րդ գլխում, բայց ոչ 3:21-31-ում (հմմտ. Գաղ. 3):

2:26-27 Այս համարներում հույսն այն է, որ որոշ հեթանոսներ հետևել են այն լույսին, որն իրենք ունեին: Սրա միակ հնարավոր աստվածաշնչյան օրինակը կարող է լինել Կռնելիոսը Գործք 10-րդ գլխում: Սակայն նա ամբողջությամբ չի համապատասխանում այս հատվածի մտքին, քանի որ նա ասվածավախ և աստվածապաշտ անձնավորություն էր տեղական ժողովարանում:

Իրականում այս համարները հանդիսանում են պարտադիր պահանջ՝ հաստատելով Պողոսի պնդումներն այն մասին, որ հրեաներն էլ փրկության կարիք ունեն: Հռոմեացիս 3:23-ը ամփոփում է այն, որ բոլոր մարդիկ առանց Քրիստոսի հոգևորապես կորսված են: Եթե կան հեթանոսներ, ովքեր ապրում են համաձայն այդ լույսի, որն ունեն արարչագործությունից սկսած և ներքին բարոյական զգացմունք, ապա Աստված նրանց հնարավորություն կտա Քրիստոսի դառնալու ինչ որ մի ձև, այս կամ այն կերպ, երբևէ:

2:28-29 «Որովհետև նա չէ Հրեայ. . . նա Հրեայ է» Այս պնդումները խիստ կարևոր են ժամանակակից աստվածաբանության զարգացման համար դիսպենցիոնալիզմ և փորձ անել առանձնացնել կամ կադապարի մեջ դնել Հին Կտակարանի մարդկանց Նոր Կտակարանի մարդկանցից: Կա միայն մեկ ուխտ և մեկ ժողովուրդ (հմմտ. Հռ. 9:6; Գաղ. 3:7-9, 29; 6:16; I Պետ. 3:6): Նոր ուխտը հնի զարգացումն ու իրականացումն է հանդիսանում: Աստծո ժողովուրդ միշտ եղել են հավատքով և ոչ թե ծագումով: Նրանք «սրտի մարդիկ» են , և ոչ թե ծեսի կամ ռասայական պատկանելության մարդիկ: Այստեղ որոշիչ դեր է խաղում հավատքը, և ոչ թե ծնողները: Եվ սրա հաստատումը հանդիսանում է մտածելը ըստ օրենքի և ոչ թե նշանի:

«մարմնով» Տես հատուկ թեմա 1:3.

2:29 Թլպատությունը որպես ուխտի նշան (հմմտ. Ծննդ. 17:14) Հին Կտակարանում փոխաբերություն էր հանդիսանում, այն մարդու համար, ով բաց էր Աստծո առաջ: Այն փոխաբերականորեն զարգացավ մի քանի ձևերով (1) սրտի թլպատություն (հմմտ. 2 Օրին. 10:16; Եր. 4:4); (2) ականջի թլպատություն (հմմտ. Եր. 6:10); և (3) լեզվի, բերանի թլպատություն (հմմտ. Ելից 6:12,30): Երբեք և ոչ մի տեղ չի համարվել, որ Օրենքը միայն արտաքին էր, ցուցադրելի կոդեքսով, այլ կյանք փոխող սկզբունք էր: Տես հատուկ թեմա: «Պողոսի հայացքները Մովսեսական Օրենքի վրա ուղղված» 7:12:

Արևելահայերեն «եւ սրտի թլփատութիւնը հոգով՝ եւ ոչ թէ գրով»
Արևմտահայերեն «սրտին թլփատութիւնն է հոգիով ու ո՛չ թէ գրով»

- NASB** “that which is of the heart, by the Spirit, not by the letter;”
- NKJV** “that of the heart, in the Spirit, and not in the letter;”
- NRSV** “a matter of the heart -- it is spiritual and not literal”
- TEV** “which is the work of God’s Spirit, not of the written Law.”
- JB** “in the heart -- something not of the letter but of the spirit.”

Հունարենում այս արտահայտությունը երկիմաստ է: Որոշ թարգմանություններ սրա ամբողջ իմաստը հոգևորի մասին է, որը հակառակ է բառացի իմաստին (հմմտ. NRSV, 20-րդ դարի Նոր Կտակարանը [the Twentieth Century New Testament], Նոկսի թարգմանություն [the Knox translation],

Լամսի թարգմանություն [the Lamsa translation of the Peshitta], Ուիլյամսի թարգմանություն [the Williams translation] և Բերկլիի Նոր տարբերակը [the New Berkeley Version]: Ուրիշ թարգմանությունները հակասությունը տեսնում են Սուրբ Հոգու (հմմտ. 7:6; II Կոր. 3:6, որտեղ զոյություն ունի նույն քերականական կառուցվածքը) և գրված տեքստի միջև (հմմտ. NASB, NKJV, NEB, NIV և TEV):

Պողոսը քննարկում է այն փաստը, երբ որոշ հեթանոսներ ունակ են Աստծու հաճելի գտնվել Օրենքից դուրս: Եթե դա այդպես է, ուրեմն Աստծո զավակների թվի մեջ նաև մտնում են ոչ ֆիզիկական թլպատություն ունեցողները (հմմտ. Գաղատացիս թուղթ): Աստծո ընտանիքը ավելի ընդարձակ է քան հրեա ազգը (հմմտ. Ծննդ. 3:15; 12:3; Ելից 19:5); Հոբ, Մելքիսեդեկ, Հոթոր, Քաղեր, Ռախաբ և Հռութ ծագումով հրեա չէին: Նույնիսկ Եփրայիմի և Մանասեի ցեղերը կիսով չափ եգիպտացիներ էին (հմմտ. Ծննդ. 41:50-52):

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչպե՞ս ազդեց հրեաների անհավատարմությունը Աստծո խոստման վրա (3:3-4)
2. Կա՞ որևէ առավելություն Աստծո առաջ հրեա լինելը (3:1-8)
3. Ի՞նչ է սուր քննադատություն:
4. Ո՞րն է հիմնական գաղափարը ենթադրված սուր քննադատության հի. 5-8
5. Արդյոք իրականում նշանակություն ունի այն, թե ինչպես է մարդն ապրում, եթե արդարացումը նա ստանում է շնորհքով հավատքի միջոցով, անկախ գործերից (3:8)
6. Ո՞րն է աստվածաբանական գաղափարը ամբողջական մեղավորության անբարոյականության (3:10-18)
7. Ո՞րն է Մովսեսական Օրենքի նպատակը, կամ օրենքն ընդհանրապես (3:20; Գաղ. 3:24-25)
8. Ի՞նչու սատանան չի հիշատակվում 1-3 գլուխներում, երբ խոսքը գնում է կորսված և մեղավոր մարդու մասին:
9. Հին Կտակարանի խոստումները պայմանական են թե՞ ոչ պայմանական:
10. Ո՞րն է Մովսեսական Օրենքի նպատակը (1) ոչ հրեայի և (2) հրեայի կյանքում:
11. Ձեր բառերով ուրվագծեք Պողոսի բանավեճերը/փաստարկները 1:18-3:20 հատված առ հատված

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 3**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Հրեաները և Օրենքը (2:17-3:8)	Աստծո Գատաստանը պաշտպանված է	Հրեաների Առավելությունը	Հրեաները և Օրենքը (2:17-3:8)	Աստծո Խոստումները չեն փրկի Նրանց
3:1-8	3:1-8	3:1-8	3:1-4	3:1-8
			3:5-6	
			3:7-8	
Արդար չկա	Բոլորը մեղանշել են	Բոլորը հանցավոր են	Ոչ մի մարդ արդար չէ	Բոլորը հանցավոր են
3:9-20	3:9-20	3:9-18	3:9-18	3:9-18
		3:19-20	3:19-20	3:19-20
Հավատքով Արդարացում	Աստծո Արդարությունը Հավատքի միջոցով	Ճշմարիտ Արդարություն	Ինչպե՞ս է Աստված մարդկանց արդարացնում	Աստծո Արդարության Հայտնությունը
3:21-26	3:21-26	3:21-26	3:21-26	3:21-26
	Պարծանքը խափանվեց	Պարծանքը խափանվեց		Ի՞նչ է Հավատք անում
3:27-31	3:27-31	3:27-31	3:27-31	3:27-31

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՐՏԵՔՍԱՅԻՆ ՆԵՐՈՄԲՈՒՄՆԵՐ

- Ա. 1-8հհ. կապակցված բովանդակություն են, բայց դժվար է հետևել Պողոսի տրամաբանությանը, որովհետև նա օգտագործում է գրական տեխնիկա որը կոչվում է սուր քննադատություն (ենթադրյալ ընդդիմախոս, հակառակորդ):
- Բ. Թվում է, թե Պողոսը կանխագգում է, թե ինչպես որոշ հրեաներ կարձագանքեն 2:17-29հհ. ուստի նա պատասխանում է նրանց հակաճառություններին/բողոքներին (Կռռլեյ, Վուգհան, Հոունեացիս, էջ 37-39):
 1. Առաջին հարց. Իրականում ոչ մի առավելություն չկա՞ հրեաների համար (1-2հհ.)
 2. Երկրորդ հարց. Արդյո՞ք Աստծո խոսքը նվազեց/ձախողվեց որոշ հրեաների անհավատարմության պատճառով (3-4հհ.):
 3. Երրորդ հարց. Եթե Աստված օգտագործեց հրեաներին Իր էությունը հայտնելու համար, ապա հրեաները դեռ պատասխանատու՞ են դատականորեն (5-8հհ.)
- Գ. Եզրավակումը/ամփոփումը հետ է տանում դեպի 2:11: Աստծո մոտ աչառություն չկա: Բոլոր մարդիկ հաշվետու/պատասխանատու են իրենց ունեցած լույսից անջատ ապրելու համար (բնական հայտնություն և/կամ հատուկ հայտնություն):
- Դ. 9-18հհ. Հին Կտակարանի մեջբերումներից են, որոնք նկարագրում են հրեաների մեղքը:
- Ե. 19-20հհ. ամփոփում են Իսրայելի հոգևոր վիճակը և Հին Կտակարանի նպատակը (հմմտ. Գաղ. 3):
- Զ. 21-31հհ. 1:18-3:20հհ.-ի ամփոփումն են: Սրանք ավետարանի առաջին աստվածաբանական հատկանիշն են (տես համառոտ ուրվագիծը, էջ 2):

NASB (UPDATED) TEXT: 3:1-8

¹Then what advantage has the Jew? Or what is the benefit of circumcision? ²Great in every respect. First of all, that they were entrusted with the oracles of God. ³What then? If some did not believe, their unbelief will not nullify the faithfulness of God, will it? ⁴May it never be! Rather, let God be found true, though every man *be found* a liar, as it is written, “THAT YOU MAY BE JUSTIFIED IN YOUR WORDS, AND PREVAIL WHEN YOU ARE JUDGED.” ⁵But if our unrighteousness demonstrates the righteousness of God, what shall we say? The God who inflicts wrath is not unrighteous, is He? (I am speaking in human terms.) ⁶May it never be! For otherwise, how will God judge the world? ⁷But if through my lie the truth of God abounded to His glory, why am I also still being judged as a sinner? ⁸And why not *say* (as we are slanderously reported and as some claim that we say), “Let us do evil that good may come”? Their condemnation is just.

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3:1-8

3 ¹Արդ ի՞նչ է Հրեայի առաելութիւնը, կամ ի՞նչ է թլփատութեան օգուտը: ²Շատ, ամեն կերպով. առաջ հէնց նա որ Աստուծոյ պատգամները նորանց հաւատացուեցան: ³ Բայց ի՞նչ էր նմանը չհաւատացին, մի՞թէ նորանց անհաւատութիւնն Աստուծոյ հաւատքը կխափանէ. քաւ լիցի: ⁴Արդ թող Աստուած ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ սուտ. ինչպէս գրուած է, Որ արդար լինես քո խոսքերումը, եւ յաղթես քո դատուելումը: ⁵ Բայց եթէ մեր անիրաւութիւնն Աստուծոյ արդարութիւնը յայտնի երեւացնում է, ի՞նչ ասենք. մի՞թէ անիրաւ է Աստուած, որ բարկութիւնը բերում է: ⁶Մարդի կերպով եմ ասում, քաւ լիցի. ապա Աստուած ի՞նչպէս կդատէ աշխարհքը: ⁷ Որովհետեւ եթէ Աստուծոյ ճշմարտութիւնն իմ ստութիւնովն ատելացավ նորա փառքի համար, էլ ի՞նչու եմ ես մեղաւորի պէս դատվում: ⁸ Եւ ի՞նչու համար այնպէս չանենք ինչպէս չարախօսվում ենք, եւ ինչպէս ոմանք ասում են մեզ համար, թէ ասում լինինք, թէ Չար գործքեն՝ որ բարին գայ. որոնց դատաստանը արդար է:

3:1 «ի՞նչ է Հրեայի առաելութիւնը» Պողոսը շարունակում է օգտագործել քննադատութեան բառացի տեխնիկան/հմտությունը, կամ ենթադրյալ ընդդիմություն, իր պատգամը հայտնելու համար: Հրեա ժողովրդի առանձնաշնորհները թվարկելով, տես 3:2 և 9:4-5հհ.

3:2 «Շատ, ...առաջ հէնց» Պողոսն օգտագործում է «առաջ» բառը 1:8հ., բայց առանց երկրորդ մասը նշելով: Նա նույնն անում է այստեղ: Պողոսի գրվածքն այնքան խիստ էր, ինչպէս նաև հրամայող ,որ հաճախ նրա քերականական կառուցվածքները թերի են:

«որ Աստուծոյ պատգամները նորանց հաւատացուեցան» Աստուծո հայտնությունն ունենալը դա ահարկու պատասխանատվություն է, ինչպէս նաև հսկայական առանձնաշնորհ (հմմտ. Դուկ.12:48): Նրանք Աստուծո պարզևի տնտեսներն էին (Անցյալ կրավորական հմմտ.1 Թես. 2:4): *logion* (պատգամներ) բառը օգտագործվում է Սեպտուագիւնդում որպէս Աստուծո կողմից ուղարկված խոսք (հմմտ. Թվոց 24:4,16; 2 Օրին. 33:9; Սաղ. 119:67; Ես. 5:24; 28:13): Այն հետևողականորեն օգտագործվում է նույն իմաստով Նոր Կտակարանում (հմմտ.Գործք 7:38; Եբր. 5:12; 1Պետ. 4:11):

3:3 «Եթէ» առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է ճիշտ հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար: 5 և 7հհ. նույնպէս առաջին կարգի պայմանական նախադասություններ են:

NASB, NKJV “some did not believe”
NRSV, JB “some were unfaithful”
TEV “what if some of them were unfaithful”

3:3 «ոմանք չհաւատացին»

Սա կարող է վերաբերի կամ անհատ Իսրայելացու անհավատարությանը կամ էլ Եհովայի վրա ունեցած անձնական հավատքի պակասությանը: Մտավորապէս դժվար է կապել Աստուծո անպայմանական խոստումները և մարդկային արձագանքի պայմանական հրամանը: Չնայած որ սա աստվածաշնչյան պարաֆրա է/հարակարծիք (հմմտ. 3:4-5): Աստված հավատարիմ նույնիսկ երբ Իր ժողովուրդը ոչ (Ովսեա 1,3):

«փչացնել, ոչնչացնել» Տես Հատուկ Թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆՎԱՎԵՐ (KATARGEZ)

Այս (*katargey*) Պողոսի ամենասիրելի խոսքերից մեկն է: Նա օգտագործեց այն ամենաքիչը 25 անգամ, բայց այն ունի շատ լայն իմաստային կարգ:

Ա. Սա հիմնական ստուգաբանական արմատն է *argos* բառի, որը նշանակում է

1. Անգործ
2. Ծույլ
3. Չօգտագործված
4. Անօգուտ
5. Չգործող

Բ. *Kata* բառի հետ օգտագործվում էր արտահայտելու համար

1. Անգործություն
2. Անգործաձեղիություն
3. Այն, ինչը ջնջվել էր
4. Այն, ինչը վերջ էր դրված
5. Այն, ինչը ամբողջությամբ չգործող էր

Գ. Այն մեկ անգամ օգտագործված է Դուկասի ավետարանում նկարագրելով անպաղտությունը, ուստի անպիտան ծառ (հմմտ. Գլուկ. 13:7)

Դ. Պողոսն օգտագործում է այն պատկերավոր լեզվով երկու հիմնական ձևերով

1. Աստված չգործող/անազու է անում այն բաները, որոնք թշնամի են մարդուն
 - ա. Մարդու մեղավոր բնությունը – Հն.6:6
 - բ. Մովսեսական օրենքը՝ «Ժառանգ»-ի հետ կապված Աստծո խոստման վերաբերմամբ - Հն. 4:14; Գաղ. 3:17; 5:4,11; Եփ. 2:15
 - գ. Հոգևոր ուժերը – 1Կոր.15:24
 - դ. «Անօրենք» - 2Թես. 2:8
 - ե. Ֆիզիկական մահը – 1Կոր.15:26; 2Տիմ. 1:16 (Եբ.2:14)
2. Աստված հինը (ուխտ, ժամանակաշրջան) փոխում է նորի
 - ա. Բաներ կապված մովսեսական օրենքի հետ – Հն.3:3,31; 4:14; 2Կոր. 3:7,11,13,14
 - բ. Ամուսնության նմանությունը ըստ Օրենքի – Հն. 7:2,6
 - գ. Այս ժամանակի բաները - 1Կոր. 13:8,10,11
 - դ. Այս մարմինը – 1Կոր. 6:13
 - ե. Այս ժամանակի առաջնորդները – 1Կոր. 1:28; 2:6

Այս բառը թարգմանվում է այնքան շատ ձևեր՞, բայց նրա հիմնական իմաստն է ինչ-որ մի բան անպիտան դարձնել, անվավեր, չգործող, անգոր բայց ոչ իհարկե գոյություն չունեցող, կործանված կամ բնաջնջված:

NASB	“May it never be!”
NKJV, TEV	“Certainly not!”
NRSV	“By no means!”
JB	“That would be absurd.”

3:3 Արևելահայերեն «քավ լիցի»
 Արևմտահայերեն «քավ լիցի»

Հազվագյուտ է օգտագործվում ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որն արտահայտում է իղձ, փափագ կամ աղոթք և պետք է թարգմանվի «Թող երբեք այդպես չլինի/ոչ երբեք»: Անհավատության այս զարմացնող արտահայտությունը հաճախ օգտագործվում էր Պողոսի կողմից սուր քննադատական գրական տեխնիկա ունենալու պատճառով (հմմտ.3:4,6,31; 6:2,15; 7:7,13; 9:14; 11:1; 1Կոր. 6:15; Գաղ.2:17; 3:21; 6:14) Մա նրա ընդունված հաստատումը շեշտակիորեն ուրանալու կերպն է:

Տես գրական ձևը, թե ինչպես է Պողոսը հերքում ընդունված հակառակող հարցերն ու դրույթները:

1. «քավ լիցի», հհ.4,6
2. «Արդ թող Աստված ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ սուտ», հ.4
3. («Մարդի կերպով եմ ասում»), հ.6
4. («ինչպես չարախոսվում ենք, և ինչպես ոմանք ասում են մեզ համար»), հ.8

«Արդ թող Աստված ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ սուտ», Մա ՆԵՐԿԱ ՄԻՋԻՆ ՀՐԱՄԱՅՈՂԱԿԱՆ է: Այս կառուցվածքը կենտրոնացվում է ենթակայի շարունակական վիճակի վրա; Աստված հավատարիմ է ու ճշմարիտ, մարդիկ անհավատարիմ ու ստախոսներ են: Մա Սաղ.116:11-ի ակնարկումն է և նման է այն բանին, թե ինչ պետք է սովորեր Հորը 32:2; 40:8:

Տես մեղավորության ամբողջական/տիեզերական տարրը այս գլխում, ներկայացված Պողոսի կողմից *pas* (բոլորը, ամենքը) 4,9,12,19,20,23,24հհ, բայց փառք Աստծո, որ կա նաև տիեզերական փրկության առաջարկը (հմմտ.3:22):

«ինչպես գրված է» Բառացիորեն նշանակում է «այն եղել և շարունակվում է գրվել»: Մա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐ Այն դարձավ տեխնիկական ոճ, որը հաստատում է Սուրբ Գրքի աստվածային ներշնչանքը (հմմտ. մաթ. 5:17-19): Մա մեջբերում է Սաղ. 51:4-ից Սեպտուագինդում(LXX):

3:5-6 Այն փաստարկը, որ Պողոսն անում է այս համարների մեջ վերաբերում է Աստծո հատուկ ընտրությանը՝ Իսրայելին, որպես աշխարհին հասնելու իմաստով (հմմտ. Ծննդ.12:3; Ելից. 19:5-6): Հին Կտակարանում «ընտրություն» վերաբերվում էր ծառայությանը, և ոչ թե որպես հատուկ արտոնություն: Աստված ուխտ կապեց նրանց հետ: Նա հավատարիմ էր, նրանք անհավատարմ (հմմտ. Նեեմիա 9): Այն փաստը, որ Աստված դատում է անհավատարիմ իսրայելացիներին ապացույցն է Իր արդարության:

Իսրայելը նշանակված էր որպես հեթանոսներին հասնելու միջոց: Նրանք թերացան (հմմտ. 3:24): Աստծո նպատակը տիեզերական փրկության (հմմտ. Ծննդ. 3:15) համար չի վնասվում Իսրայելի թերանալովը: Իրողությունն այն է, որ Աստծո հավատարմությունը Իր սկզբնական ուխտը հաստատվում է Հռոմեացի 9-11 գլուխներում: Անհավատ Իսրայելը մերժվում է, բայց հավատացյալ Իսրայելը Աստծո փրկագործման գազաթնակետին կհասնի:

Պողոսի քննադատությունը 5-6հհ. զուգահեռ է 7-8հհ.

3:5 «եթե» Մա ԱՌԱԻՋՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ, որը ենթադրվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար: 3 և 7հհ. նույնպես ԱՌԱԻՋՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ նախադասություններ են:

«եթե մեր անիրավությունն Աստուծոյ արդարութիւնը յայտնի երեւացնում է», Այս ԳԵՐԱՆՈՒՆԸ, մեր, պետք է վերաբերի հավաքական իմաստով բոլոր հրեաներին: Տես հատուկ թեմա 1:17-ում

«ի՞նչ ասենք.» Պողոսն օգտագործում էր քննադատություն (հմմտ. 3:5; 7:7; 8:31; 9:14,39). Պողոսն պարզաբանում է իր ներկայացումը՝ օգտագործելով սուր քննադատություն ենթադրյալ ընդդիմախոս, հակառակորդ (հմմտ. Մաղ. 1:2,6,7,12,13; 2:14,17 {երկու անգամ}; 3:7,13,14).

NASB “(I am speaking in human terms.)”
NKJV “(I speak as a man.)”
NRSV “(I speak in a human way.)”
TEV “(I speak here as men do.)”
JB “—to use a human analogy—”

Արևելահայերեն «Մարդի կերպով եմ ասում»
Արևմտահայերեն «Մարդկօրեն կըսեմ»

Պողոսը հաճախ իր աստվածաբանական փաստարկներում օգտագործում էր մարդկային տրամաբանություն (հմմտ. 6:19; I Կորն. 9:8; Գաղ. 3:15). Այստեղ այն գործում է, որպես սուր քննադատություն ենթադրյալ ընդդիմախոս, հակառակորդ-ի պնդումները/հայտարարությունները մերժելու ձև:

3:7-8 Ակնհայտ զուգահեռ կա 5 և 7հ. Պողոսը կամ (1) շարունակում է օգտագործել քննադատության գրական տեխնիկան սուր քննադատություն ենթադրյալ ընդդիմախոս, հակառակորդ (հմմտ. 3:5,7; 7:7; 8:31; 9:14,30) կամ (2) քննադատությամբ վարվելով իր արդարացում միայն հավատքով քարոզչությանը (հմմտ. 8հ.):

Պողոսը չբացատրեց կամ չպատասխանեց մեղադրանքին մանրամասնորեն, բայց ուժգնորեն դատապարտում է մեղադրանքը: Հնարավոր է, որ առարկությունը ձրի անարժան արդարացումը հավատքով, որը կարող էր առաջնորդել անօրենության կամ ավելին անհավատարիմ անհնազանդության: Պողոսը հավատաց, որ ձրի շնորհքը կտանի դեպի Քրիստոսանմանության՝ նոր հոգու և երախտագիտության կյանքի միջոցով: Հրեաները, հույն բարոյագետները և Պողոսը բոլորն էլ ուզում էին բարոյական ապրելակերպ իրենց փոխված կյանքերում: Բայց այն գալիս է ոչ թե ենթարկվելով արտաքին օրենքի կողին, այլ նոր սրտին (հմմտ. Եր. 31:31-34; Եզ. 26:22-32):

3:7 «եթե» Սա ԱՌԱԻՋՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (նաև 3 և 5հհ.) որը ենթադրվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար:

«աւելացալ» Տես Հատուկ Թեմա 15:3

«նորա փառքի» տես ծանուցում 3:23-ում

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3: 9-18

⁹Եւ հիմա ի՞նչ. աւելի՞ ենք. ամենեւին ոչ. որովհետեւ առաջ մեղադրեցինք Հրեաներին եւ հեթանոսներին, թէ ամենքը մեղքի տակ են. ¹⁰Ինչպէս որ գրուած է, թէ ամենքը մեղքի տակ են. Ինչպէս որ գրուած է, թէ Արդար չկայ՝ մէկն էլ չկայ: ¹¹Չկայ իմացող, չկայ Աստուծուն խնդրող, ¹²Ամենքը խտորեցան, միասին անպիտան եղան. չկայ բարութիւն անող, մինչեւ մէկն էլ չկայ: ¹³Նորանց կոկորդը բաց գերեզման է, եւ իրանց լեզուներովը նենգութիւն են անում. իժերի թոյն կայ նորանց շրթունքների տակ: ¹⁴Որոնց բերանը անէժքով եւ դառնութիւնով լիքն է: ¹⁵Որոնց ոտները շուտագնաց են արիւն թափելու համար: ¹⁶Կործանում եւ թշուառութիւն է նորանց ճանապարհներումը: ¹⁷Եւ խաղաղութեան ճանապարհը չճանաչեցին: ¹⁸Աստուծոյ երկիւղը նորանց աչքերի առաջին չէ:

NASB (UPDATED) TEXT: 3:9-18

⁹What then? Are we better than they? Not at all; for we have already charged that both Jews and Greeks are all under sin; ¹⁰as it is written, “THERE IS NONE RIGHTEOUS, NOT EVEN ONE; ¹¹THERE IS NONE WHO UNDERSTANDS, THERE IS NONE WHO SEEKS FOR GOD; ¹²ALL HAVE TURNED ASIDE, TOGETHER THEY HAVE BECOME USELESS; THERE IS NONE WHO DOES GOOD, THERE IS NOT EVEN ONE.” ¹³“THEIR THROAT IS AN OPEN GRAVE, WITH THEIR TONGUES THEY KEEP DECEIVING,” “THE POISON OF ASPES IS UNDER THEIR LIPS”; ¹⁴“WHOSE MOUTH IS FULL OF CURSING AND BITTERNESS”; ¹⁵“THEIR FEET SHARE SWIFT TO SHED BLOOD, ¹⁶DESTRUCTION AND MISERY ARE IN THEIR PATHS, ¹⁷AND THE PATH OF PEACE THEY HAVE NOT KNOWN.” ¹⁸“THERE IS NO FEAR OF GOD BEFORE THEIR EYES.”

3:9 «աւելի՞ ենք» Այստեղ քերականությունը երկդիմի է: Ակնհայտ է, որ այս հատվածում հիմնական ճշմարտությունն այն է, որ ամբողջ մարդկությունը Աստծո շնորհքի կարիքն ունի (հմմտ. 3:9,19,23; 11:32; Գաղ. 3:22): Ինչևէ, անորոշ է թե այս յուրահատուկ համարը հրեաների մասին էր (Պողոսը և իր ազգականները,) թե՞ քրիստոնյաների (Պողոսը և իր հավատակից ընկերները Աստծո շնորհքից անջատ): Հրեաներն որոշակի առավելություններ ունեին (հմմտ. 1-2; 9:4-5հհ.), բայց այս առավելությունները նրանց ավելի պատասխանատու դարձրեցին: Բոլոր մարդիկ հոգևորապես կորսված են և Աստծո շնորհքի կարիքն ունեն:

«Ավելի լավ» տերմինը աստվածաբան գիտնականների կողմից հասկացվում է, որպես ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՆ- փոխարենը ՉԵՁՈՔԻ («լավանալ»), արդյունքում թարգմանվում է «գերազանցել»:

Հռոմեացիս թուղթի մասին հաճախ ասվում է, որպես ամենաչեզոքը համեմատած Պողոսի մյուս նամակների հետ: Պողոսի թղթերից շատերը ուղղված են տեղական կարիքներին կամ ճգնաժամներին (պատահական փաստաթղթեր): Ինչևէ, նախանձությունը հավատացյալ հրեա առաջնորդների և հավատացյալ հեթանոս առաջնորդների միջև հնարավոր է տեսքների ֆոնի մեջ է ինչպես սա և 9-11 գլուխները:

«մեղքի տակ» Պողոսը անձնավորում/նմանեցնում է «մեղք», որպես անգութ տեր/տիրակալ ընկած մարդկության վրա (հմմտ. 6:16-23).

3:10-18 «Ինչպես որ գրուած է» Այս համարը նույնպես հանդիպում է 4հ-ում: Հետևյալ դրույթները Հին Կտակարանի մեջբերումներից են՝ օգտագործվելով որպես փոխաբերություններ մարդու մարմնի վերաբերյալ ընդգծելու համար մարդու անկումը : (1) 10-12հհ., Ժող. 7:20 կամ Սաղ. 14:1-3; (2) 13հ., Սաղ. 5:9 կամ 140:3; (3) 14հ., Սաղ. 10:7; (4) 15-17հհ., Ես. 59:7-8 և Առակ. 1:16, և (5).18հ., Սաղ. 36:1: Չարմանալի է, որ Պողոսը չօգտագործեց Ես.53:6:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3: 19-20

¹⁹Բայց գիտենք, թե ամեն ինչ որ օրէնքն ասում է նորանց է ասում, որ օրէնքի տակ են. որ ամեն բերան խփուի, եւ բոլոր աշխարհք Աստուծոյ առաջին դատապարտ լինի: ²⁰Որովհետեւ օրէնքի գործերիցը ոչ մի մարմին չի արդարանալ նորա առաջին. որովհետեւ օրէնքովը լինում է մեղքի գիտութիւն:

NASB (UPDATED) TEXT: 3:19-20

¹⁹Now we know that whatever the Law says, it speaks to those who are under the Law, so that every mouth may be closed and all the world may become accountable to God; ²⁰because by the works of the Law no flesh will be justified in His sight; for through the Law *comes* the knowledge of sin.

3:19 «գիտենք, թե» Տես ծանուցումը 2:2

«օրենքն» Այս կոնտեքստում, այն պետք է վերաբերի ամբողջ Հին Կտակարանին՝ 10-18հ. մեջբերված հատվածների պատճառով: Պողոսը անձնավորում/մմանեցնում է «օրենքը» ինչպես նաև արեց «մեղք»-ը 9հ. (հմմտ. 6:16-23):

«նորանց է ասում, որ օրենքի տակ են» Սա եզակիորեն վերաբերում է Հրեա և հեթանոս նորադարձներին: Չնայած պետք է ասվի, որ Հին Կտակարանի մեջբերումներից մի քանիսը վերաբերում են հեթանոսներին:

Արևելահայերեն «որ ամեն բերան խփուի, եւ բոլոր աշխարհք Աստուծոյ առաջին դատապարտ լինի»

Արևմտահայերեն «որպէս զի ամեն բերան գոցուի եւ բոլոր աշխարհ դատապարտուի Աստուծոյ առջեւ»

NASB “that every mouth may be closed, and all the world may become accountable to God”
NKJV “that every mouth may be stopped, and all the world may become guilty before God”
NRSV “so that every mouth may be silenced, and the whole world may be held accountable to God”
TEV “in order to stop all human excuses and bring the whole world under God’s judgment”
JB “but it is meant to silence everyone and to lay the whole world open to God’s judgment”

Սա 1:18-3:20 գլխի գլխավոր թեման է, որն ամփոփվում է 3:23h-ում:

«ամեն բերան» 19-20հ. կան մի քանի արտահայտություններ, որոնք ցույց են տալիս/արտահայտել ամբողջ մարդկությունը:

1. «ամեն բերան», 19հ.
2. «ամբողջ աշխարհը», 19հ.
3. «ոչ մի մարմին», 20հ.

3:20 «Որովհետեւ օրենքի գործերիցը ոչ մի մարմին չի արդարանալ նորա առաջին» Սա ակնարկ է Սաղ. 143:2-ի, բայց ավելացված արտահայտությունով: Սա Պողոսի ավետարանի գլխավոր ասպեկտն էր (հմմտ. Գաղ. 2:16; 3:11): Որպես նվիրված Փարիսեցի Պողոսը եզակիորեն գիտեր կրոնական խանդավառության անկարողությունն ու բժախնդիր արարքը՝ ներքին խաղաղություն տալու/ապահովելու համար:

Արևելահայերեն «օրենքովը լինում է մեղքի գիտութիւն»

Արևմտահայերեն «օրենքով մեղքը կը ճանաչցուի»

NASB, NRSV “through the Law comes the knowledge of sin”
NKJV “for by the law is the knowledge of sin”
TEV “what the Law does is to make man know that he has sinned”
JB “all that law does is to tell us what is sinful”

Սա Հին Կտակարանի արտահայտություններից մեկն էր: Տես Հատուկ Թեմա 13:9-ում: Դա երբեք չէր նշանակել բերել փրկություն ընկած մարդկության համար: Դրա նպատակն էր հայտնել

մեղավորությունը և մղել բոլոր մարդկանց դեպի Աստծո ողորմությանը (հմմտ. 4:15; 5:13,20; 7:7; Գաղ. 3:19-22, 23-29):

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Յուրաքանչյուրս պետք է քայլի մեր ունեցած լույսի ներքո: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Դրանք նախատեսված են լինել միտք գրգռող, ոչ թե հստակ/պարզ:

1. Ինչպե՞ս է հրեաների անհավատարմությունն ազդում Աստծո խոստումների վրա: (3:3-4)
2. Արդյոք կա որևէ առավելություն Աստծո առաջ/մոտ հրեա լինելը (3:1-8)
3. Ո՞րն է սուր քննադատության ենթադրյալ հակառակորդ/ընդդիմախոս (դիատրիք) իմաստը/միտքը 5-8հհ.-ում
4. Արդյո՞ք մարդու ապրելաոճը իրականում նշանակություն ունի, որ արդարացումը շնորհքով է հավատքի ձեռքով/միջոցով առանց գործերի (հմմտ. 3:8)?
5. Սահմանիր բացարձակ անբարոյականության աստվածաբանական (Կալվին) գաղափարը (հմմտ. 3:10-18):
6. Ո՞րն է Մովսեսական օրենքի նպատակը, կամ օրենքն ընդահրապես (հմմտ. 3:20; Գաղ. 3:24-25)
7. Ինչո՞ւ Սատանայի մասին չի նշվում ամբողջ 1-3գլուխներում, որտեղ խոսվում է մարդու կորսվածության մասին:

ՀՈՈՄԵԱՅԻՍ 3:21-31 ԿՈՐՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

Ա. Հռոմեացիս 3:21-31

1. 1:18-3:20-ի աստիճանական ամփոփումը
2. 1:16-17-ի ընդլայնումը
3. 4-8 գլուխների (բացի 3:28) ներածությունը

Բ. Հավատքով արդարացման վարդապետության այս աստիճանական ամփոփումը բնութագրվում էր Ռեֆորմատորների/Բարեփոխողների կողմից.

1. Մարտին Լյութերը որպես «նամակի և ամբողջ Աստվածաշնչի գլխավոր միտքը և ամենակենտրոնական տեղը»
2. Ջոն Կալվինը որպես «հավանական է ամբողջ Աստվածաշնչում չկա մի հատված , որը ավելի խորիմաստ է բացատրում Աստծո արդարությունը Քրիստոսում/ով»:

Գ. Սա ավետարանական Քրիստոնեության աստվածաբանական էությունն է: Հասկանալ այս կոնտեքստը նշանակում է հասկանալ Քրիստոնեությունը: Սա ավետարան է երկ-պարագրաֆ/բաժին ամփոփումով, ինչպես Հովհ. 3:16-ը ավետարան է մեկ համարով: Սա Պողոսի ավետարանի ներկայացման/մատուցման սիրտն ու հոգին է:

Երեք բանալի բացատրական հարցերն են.

1. Ի՞նչ է նշանակում «օրենք» տերմինը:

2. Ի՞նչ է նշանակում «Աստծո արդարություն» արտահայտությունը:

3. Ի՞նչ է նշանակում «հավատք» տերմինը:

Գ. Ես շնորհակալ եմ Աստծուց 23-ի-ում «ամենքը» բառի համար (հմմտ. 29հ.) և 24-ի «պարզ» բառի համար (հմմտ. 5:15,17; 6:23):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

NASB (UPDATED)TEXT: 3: 21-26

²¹But now apart from the Law *the* righteousness of God has been manifested, being witnessed by the Law and the Prophets, ²²even *the* righteousness of God through faith in Jesus Christ for all those who believe; for there is no distinction; ²³for all have sinned and fall short of the glory of God, ²⁴being justified as a gift by His grace through the redemption which is in Christ Jesus; ²⁵whom God displayed publicly as a propitiation in His blood through faith. *This was* to demonstrate His righteousness, because in the forbearance of God He passed over the sins previously committed; ²⁶for the demonstration, *I say*, of His righteousness at the present time, so that He would be just and the justifier of the one who has faith in Jesus.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3: 21-26

²¹Բայց հիմա առանց օրենքի Աստուծոյ արդարութիւնը յայտնուած է, օրենքից եւ մարգարէներից վկայուած լինելով. ²²Այսինքն Աստուծոյ արդարութիւնը որ Յիսուս Քրիստոսի հաւատքիցն է, այն ամենի համար եւ ամենի վերայ, որ հաւատում են. որովհետեւ խտրութիւն չկայ: ²³Որովհետեւ ամենքը մեղանշեցին, եւ Աստուծոյ փառքիցը պակասուած են. ²⁴Չորի են արդարանում նորա շնորհքովը՝ այն փրկութեան ձեռովը՝ որ Յիսուս Քրիստոսուն է: ²⁵Որին Աստուած առաջուց սահմանեց քարութիւն լինելու համար հաւատալով նորա արիւնովը, որ իր արդարութիւնը ցոյց տայ այն առաջուց գործուած մեղքերի թոյլտուութեան համար՝ Աստուծոյ ներելու ժամանակին: ²⁶Որ իր արդարութիւնը երեսցնէ այս ժամանակու՛մը. որ ինքն լինի արդար եւ արդարացնող նորան՝ որ Յիսուսի հաւատքիցն է.

3:21 «Բայց հիմա» Պողոսը հակադրում է Հին Ուխտը Նոր Ուխտի հետ, ըմբոստության հին շրջանը արդարության նոր շրջանի հետ: Սա ուրեմն կարող էր զուգահեռվել «ներկա ժամանակում» արտահայտության հետ (հմմտ. 26հ.; 6:22; 7:6հ. «բայց հիմա» հետ):

«հիմա առանց օրենքի» Հաճախ դժվար է վստահ լինել, արդյո՞ք Պողոսը վերագրում է Մովսեսական Օրենքին (NASB) թե ընդհանրապես օրենքին (NRSV, TEV, NJB, NIV) այս սկզբի գլուխներում: Այս կոնտեքստում Հրեական Օրենքը լավագույնն է համապատասխանում Պողոսի փաստարկին: Բոլոր մարդիկ խախտել/ոտնահարել են ամեն բարոյական նորմա, սոցիալական ուղեցույց/առաջնորդություն թե ներքին և թե արտաքին: Մեր խնդիրները, որպէս մեղավոր/ընկած մարդկություն այն է, որ մենք ընդհանրապես առաջնորդություն/ուղեցույց չենք ուզում բացի մեր սեփական եասեր, եսակենտրոն ցանկությունները/փափագները (հմմտ. Ծննդ. 3):

Արևելահայերեն «Աստուծոյ արդարութիւնը»
Արևմտահայերեն «Աստուծոյ արդարութիւնը»

NASB “the righteousness of God”

NKJV, NRSV“the righteousness of God”

TEV “God’s way of putting people right with himself”

NJB “God’s saving justice”

«Արդարություն» բառի հետ չկա որոշիչ ՀՈՒ: Սա չի վերաբերում Աստծո էությանը, այլ Աստծո ձևն է թողություն տել և մեղավոր մարդկանց ընդունված լինել: Այս արտահայտությունը օգտագործվում էր Հռ. 1:16-17-ի աստվածաբանական թեմայի մեջ: Սա պարզ հայտնի մեխանիզմը հավատքն է Խաչյալ Հիսուս Քրիստոսի վրա (հմմտ. 22,24-26հհ.):

Փաստը, որ այս տերմինը (*dikaionē*) և դրա ածանցները (տես ծանուցում 2:13) այսօրվա հաճախ են օգտագործվում այս կոնտեքստում ցույց է տալիս դրա կարևորությունը (հմմտ. 1:17; 3:5,21,22,25,26; 4:3,5,6,9,11,13,22; 5:17,21; 6:13,16,18,19,20; 8:10; 9:28,30,31; 10:3,4,5,6,10,17): Այս հունարեն տերմինը Հին Կտակարանի փոխաբերության կառուցվածքի ձև է (*tsadak*) «չափանիշ» կամ «չափող եղեգ»: Չափանիշը հենց Ինքն Աստված է: Այս տերմինը անդրադարձնում է Աստծո էությանը, որը ձրի տրվել է ընկած մարդկությանը Քրիստոսի ձեռքով (հմմտ. II Կոր. 5:21): Ընդունելով իրենց կարիքը և ընդունելով Աստծո պարզելը էր և է, հպարտին խոնարհեցնող, եսակենտրոն մարդուն -հատկապես օրինապաշտ, կրոնական մարդուն: Տես հատուկ թեմա 1:17.

«**յայտնուած է**» Այս արտահայտությունը շատ նման է 1:17-ին: Ինչևէ, բայց տարբեր է : Այստեղ բայը կարող է թարգմանվել « եղել է և շարունակում է հստակ հայտնվել»: Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ իսկ 1:17-ի հոմանիշը ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ: Աստված հստակ հայտնել է ավետարանը թե Հին Կտակարանում (հմմտ. գլուխ 4) և թե Հիսուսի մեջ:

«**օրենքից եւ մարգարէներից վկայուած լինելով**» Սա վերաբերվում էր Եբրայերեն կանոնի երեք բաժանումներից երկուսին (Օրենք, Մարգարեներ և Գրվածքներ): Այս երկուսը օգտագործվում էին վերաբերելով ամբողջին (տես ծանուցում 3:19-ում): Սա պարզ ցույց էր տալիս , որ ավետարանը պարունակում էր նախնական ձև Հին Կտակարանում (հմմտ. Դուկ. 24:27,44; Գործք 10:43): Սա ուշացած միտք չէր, «Պլան Բ», կամ վերջին բոլորի շտապ իրավիճակի շտկում (հմմտ. 1:2):

3:22 «Յիսուս Քրիստոսի հաւատքիցն է» Սա բառացի «Հիսուս Քրիստոսի հավատքի միջոցով» է: Սա ՍԵՌ՝ԱԿԱՆ ՀՈԼՈՎ կառուցվածք: Այն կրկնվում է Գաղ. 2:16 և Փիլ. 3:9 ինչպես նաև նմանատիպ ձև կա Հռ. 3:26; Գաղ. 2:16,20; 3:22: Այն կարող էր նշանակել (1) հավատքը կամ Հիսուսի հավատարմությունը (ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՍԵՌ՝ԱԿԱՆ ՀՈԼՈՎ) կամ (2) Հիսուսը որպես մեր հավատքի օբյեկտ (ՕԲԵԿՏԱՅԻՆ ՍԵՌ՝ԱԿԱՆ ՀՈԼՈՎ): Նույնպիսի քերականական կառուցվածք կա Գաղ. 2:16 , #2 տարբերակը լավագույնն է:

Սա ցույց է տալիս Աստծո արդարացման հիմնական տեսակետը: Քրիստոսի արդարությունն է, որ դարձնում է ներգործող անձի կյանքում Աստծո ձրի պարզելով Քրիստոսի միջոցով (հմմտ. 4:5; 6:23), որը պետք է ընդունվի հավատքով/հույսով/վստահությամբ (հմմտ. Եփ. 2:8-9) և պետք է ապրել առօրյա կյանքում (հմմտ. Եփ. 2:10):

«**ամենի համար**» Ավետարանը բոլոր մարդկանց համար է (հմմտ. 24հ.; Ես. 53:6; Եզ. 18:23; Հովհ. 3:16-17; 4:42; I Տիմ. 2:4; 4:10; Տիտոս 2:11; II Պետ. 3:9; I Հովհ. 4:14): Դա մեծ ճշմարտություն է: Սա պետք է հավասարակշռի աստվածաշնչյան ճշմարտությունը ընտրության վերաբերյալ: Աստծո ընտրությունը չպետք է հասկացվի սահմանությունը դետերմինիզմ/determinism իսլամական իմաստով և ոչ էլ որոշները ի հակառակ մյուսների ուլտրա-կալվինիստական իմաստով, այլ ուխտի իմաստով: Հին Կտակարանի ընտրությունը ծառայության համար էր, և ոչ թե արտոնություն: Աստված խոստացավ փրկել ընկած մարդուն (հմմտ. Ծննդ. 3:15): Աստված կանչեց և ընտրեց բոլոր

մարդկանց Իսրայելի միջոցով (հմմտ. Ծննդ. 12:3; Ելից 19:5-6): Աստված ընտրում է Քրիստոսի վրա ունեցած հավատքի միջոցով: Փրկության մեջ Աստված է միշտ առաջին քայլն անում (հմմտ. Հովհ. 6:44,65): Եփեսացիս 1 և Հռոմեացիս 9-րդ գլուխները ամենամեղ աստվածաշնչյան հատվածներն են՝ նախասահմանության վարդապետության վերաբերյալ, որոնք աստվածաբանորեն ընդգծվել են Օգոստինիոսի և Կալվինի կողմից:

Աստված ընտրեց հավատացյալներին ոչ միայն փրկության (արդարացման), այլ նաև սրբացման համար (հմմտ. Եփ. 1:4; Կող. 1:12): Սա կարող էր վերաբերել (1) մեր դիրքը Քրիստոսում (հմմտ. II Կոր. 5:21) կամ (2) Աստծո փափագն է վերարտադրել/վերականգնել Իր էությունը Իր զավակների մեջ (հմմտ. Հռ. 8:28-29; Գաղ. 4:19; Եփ. 2:10): Աստված կամենում է, որ Իր զավակները մեկ օր լինեն երկնքում և լինեն Քրիստոսանման հիմա:

Նախասահմանության նպատակը սրբությունն է, և ոչ թե արտոնություն: Աստծո կանչը Ադամի մի քանի ընտրված զավակների համար չէր, այլ բոլորի: Գա կանչ էր դեպի Աստծո սեփական էությունը (հմմտ. I Թեա. 5:23; II Թեա. 2:13): Նախասահմանությունը փոխել աստվածաբանական սուրբ կյանքի փոխարեն ողբերգություն է մարդկային աստվածաբանական համակարգերի: Հաճախ մեր աստվածաբանական չափանիշները/սահմանները խեղաթյուրում են աստվածաշնչյան տեքստը:

Տես Հատուկ Թեմա: Ընտրություն/Նախասահմանություն և Կարիք Աստվածաբանական հավասարակշռությունը պահելու համար 8:33-ում.

«որ հաստում են» Հիսուս մեռավ բոլոր մարդկանց համար: Ըստ հնարավորին բոլորը կարող են փրկվել: Գա մարդու անձնական ընդունումն է (ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՐԲԱՅ), որ Հիսուսի արդարությունը է հնարավորություն դարձնում իրենց կյանքերի համար (հմմտ. 1:16; Հովհ. 1:12; 3:16; 20:31; Հռ. 10:9-13; I Հովհ. 5:13): Աստվածաշունչը ներկայացնում է երկու չափանիշ imputed արդարության; հավատք և ապաշխարություն (հմմտ. Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:31 և տես ծանուցում 1:5): Տեքստը հստակ հայտնում է փրկության տիեզերական իրավասությունը/գործունեության շրջանակը, բայց ոչ բոլորը կփրկվեն:

«որովհետև խտրութիւն չկայ» Կա միայն մեկ ճանապարհ և մեկ Անձ, որով մարդիկ (հրեաներ և հեթանոսներ) կարող են փրկվել (հմմտ. Հովհ. 10:1-2,7; 11:25; 14:6): Ամեն մարդ կարող է փրկվել՝ Քրիստոսին հավատալով (հմմտ. 1:16; 4:11,16; 10:4,12; Գաղ. 3:28; Կող. 3:11).

3:23-26 Հունարենում սա մեկ նախադասություն է:

Արևելահայերեն «Որովհետև ամենքը մեղանչեցին, եւ Աստուծոյ փառքիցը պակասուած են.»
Արևմտահայերեն « Վասն զի ամէնքը մեղք գործեցին եւ Աստուծո փառքէն պակսեցան.»

3:23

NASB, NKJV,

NRSV “for all have sinned and fall short of”

TEV “all men have sinned and are far away from”

JB “sinned and forfeited”

Սա 1:18-3:20hh. ամփոփումն է: Ամենքը կարիք ունեն Քրիստոսով փրկվելու (հմմտ. 3:9,19; 11:32; Գաղ. 3:22; Եսա. 53:6): «Մեղանչեցին» ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, մինչ «փառքից պակասած են» ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՉԵՁՈՔ ՍԵՌ՝ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Հավանական է այս արտահայտությունը վերաբերում է թե մարդու ադամական մեղքին (հմմտ. 5:12-21) և թե իր շարունակական անհատական ըմբոստ գործողություններին:

Ժամանակակից անգլերեն թարգմանություններից ոչ մեկը յուրահատուկ չի անդրադարձնում այս տարբերությունը/բաժանումը:

Այս համարը աստվածաբանորեն կապվում է 21h. և անուղղակիորեն 24h.

«Աստծո փառքը» Տես Հատուկ Թեմա ներքևում

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ

«Փառք»-ի աստվածաշնչյան գաղափարը դժվար է սահմանել: Հավատացյալների փառքը այն է, որ նրանք հասկանում են ավետարանը և փառքը Աստծո մեջ, և ոչ թե իրենց (հմմտ. 1:29-31; Եր. 9:23-24):

Հին Կտակարանում ամենաընդունված երրայերեն բառը «փառք» բառի համար (*kbd*) իրականում կոմերցիոն/առևտրային տերմին էր կապված կշեռքի հետ («լինել ծանր»): Այն, որը ծանր էր՝ արժեքավոր էր կամ ուներ ներքին/հատուկ արժեք: Հաճախ բառին ավելացվում էր պայծառության գաղափարը արտահայտելու համար Աստծո վեհափառություն/մեծությունը (հմմտ. Ելից. 19:16-18; 24:17; Ես. 60:1-2): Միայն Նա է արժանի և պատվավոր: Նա չափից շատ պայծառ է նայելու համար ընկած մարդկության համար (հմմտ. Ելից 33:17-23; Ես. 6:5): ԵՀՈՎԱ-ն կարող է միայն ճշմարտապես իմացվել Քրիստոսի միջոցով (հմմտ. Եր. 1:14; Մաթ. 17:2; Եբր. 1:3; Հակ. 2:1):

Փառք» տերմինը որոշ չափով երկիմաստ/անորոշ է; (1) այն կարող է նման լինել/զուգահեռ «Աստծո արդարությանը»; (2) այն կարող է վերաբերել Աստծո «սրբությանը» կամ «կատարելությանը» կամ (3) այն կարող էր վերաբերել Աստծո կերպարին, ինչպիսին ստեղծվեց մարդկությունը (հմմտ. Ծննդ. 1:26-27; 5:1; 9:6), բայց որը հետո աղավաղվեց ապստամբության/ըմբոստության միջոցով/պատճառով (հմմտ. Ծննդ. 3:1-22): Այն առաջին անգամ օգտագործվում է ԵՀՈՎԱ-յի ներկայությունը Իր ժողովրդի հետ անապատում թափառելու ժամանակ/ընթացքում Ել. 16:7,10; Ղև. 9:23; և Թվ. 14:10.

3:24 «Ձրի են արդարանում նորա շնորհքովը» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ; Այսեղից է սկսվում ավետարանը -Աստծո շնորհքը, որը տալիս է արդարություն (հմմտ. 5:15,17; 6:23): Հունարեն «արդարացնել/ներել» (*dikaioō*) տերմինը նույն արմատից էր, ինչ «արդարություն» (*dikaioōsunē*): Աստված է միշտ առաջին քայլն անում (հմմտ. Հովհ. 6:44,65):

24-25hh. կան երեք փոխաբերություններ, որոնք օգտագործվում են փրկությունը նկարագրելու համար: (1) «արդարացվել/ներվել», որը օրինական տերմինն էր, որ նշանակում էր «պատիժ չի տրված» կամ մեկին անմեղ ճանաչել/հռչակել; (2) «փրկագին վճարել», որը գերիների շուկայից էր, որը նշանակում էր «ետ գնել» կամ ազատ արձակել» և (3) «հաշտեցում», որը զոհաբերության համակարգից էր և նշանակում է ծածկելու/ծածկոց տեղ կամ քավություն: Այն վերաբերում էր Ուխտի Տապանակի կափարիչին, որտեղ տեղադրվում էր զոհաբերված արյունը Քավության Օրը (հմմտ. Ղև. 16; Եբ. 9:5).

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍԱՐԴՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այն հիմնված է

1. Հոր կերպարը/բնույթը (հմմտ. Հովհ. 3:16), Որդու գործը (հմմտ. Ու Կորն. 5:21),և Հոգու ծառայությունը (հմմտ. Հռ. 8:14-16) ոչ թե մարդու արարքով, ոչ վարձք հնազանդության համար, ոչ միայն հավատք
2. Դա պարզ է (հմմտ. Հռ. 3:24; 6:23; Եփ. 2:5,8-9)
3. Դա նոր կյանք է, նոր աշխարհայացք (հմմտ. Հակոբոս և I Հովհ.)

4. Գա գիտելիք է (ավետարան), հաղորդակցություն (հավատք ներսում և Հիսուսի հետ), և նոր ապրելաոճ (հոգու- առաջնորդությունը Քրիստոսանմանության) բոլոր երեքը և ոչ թե միայն մեկը ինքն իրեն:

«պարզ» Պողոսը մի քանի անգամ օգտագործում է այս գաղափարը՝ օգտագործելով տարբեր տերմիններ

1. *dōrean*, ՄԱԿԲԱՅ, «ձրի»
2. *dōrea*, ԳՈՅԱԿԱՆ, «ձրի պարզ,անվճար»
3. *dōron*, ԳՈՅԱԿԱՆ, «պարզ» (հմմտ. Եփ. 2:8)
4. *charisma*, ԳՈՅԱԿԱՆ, «ձրի պարզ» կամ «ձրի շնորհ» (հմմտ. 1:11; 5:15,16; 6:23; 11:29; 12:6)
5. *charisomai*, ԲԱՅ, «պարզ որպես ձրի շնորհ» (հմմտ. 8:32)
6. *charis*, ԳՈՅԱԿԱՆ, «ձրի շնորհ» կամ «ձրի պարզ» (հմմտ. 4:4,16; 11:5,6; Եփ. 2:5,8)

«այն փրկութեան ձեռովը՝ որ Յիսուս Քրիստոսումն է» Մեր փրկության մեխանիզմը Հիսուս փոխանորդի մահն ու հարությունն է: Աստվածաշունչը չի կենտրոնանում այն փաստի վրա, թե որքա՞ն վճարվեց կամ թե ու՞մ կողմից վճարվեց (Օգոստոս), այլ այն փաստի, որ մարդկությունը ազատագրվել է մեղքի հանցանքից և պատժից անմեղ փոխանորդի միջոցով: (հմմտ. Հովհ. 1:29,36; II Կոր. 5:21; I Պետ. 1:19).

Համարը նաև ցույց է տալիս Ծննդ. 3:15 արժեքավոր լինելը: Հիսուսը կրեց անեծքը (հմմտ. Գաղ. 3:13) և մեռավ (հմմտ. II Կոր. 5:21) որպես փոխանորդ ընկած մարդկության համար: Փրկությունը հնարավոր է ձրի է, բայց այն անշուշտ էժան չէ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓՐԿԱՆՔ ՎՃԱՐԵԼ/ԱԶԱՏԵԼ

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Հիմնականում կան երկու եբրայերեն օրինական տերմիններ, որոնք հաղորդում են այս գաղափարը:

1. *Gaal*, որը հիմնականում նշանակում է «ազատել» գին վճարելու միջոցով: Տերմինի *go'el* ձևը ավելանում է գաղափարին, անձնական միջնորդ, սովորաբար ընտանիքի անդամ (այսինքն ազգականի փրկիչ/ազատարար): Այս մշակութային իրավունքի տեսակետը ետ գնել առարկաներ, կենդանիներ, հող (հմմտ. Գևտ. 25,27), կամ ազգականների (հմմտ. Հնութ 4:15; Ես. 29:22) տեղափոխվում է աստվածաբանորեն ԵՀՈՎԱՅԻ ազատագրումը Իսրայելին՝ Եգիպտոսից (հմմտ. Ելից 6:6; 15:13; Սաղ. 74:2; 77:15; Երեմ. 31:11). Նա դառնում է «փրկիչը/ազատարարը» (հմմտ. Հոբ 19:25; Սաղ. 19:14; 78:35; Առակ. 23:1; Ես. 41:14; 43:14; 44:6,24; 47:4; 48:17; 49:7,26; 54:5,8; 59:20; 60:16; 63:16; Երեմ. 50:34).

2. *Padah*, որը հիմնականում նշանակում է «ազատել» կամ «փրկել»

ա. անդրանիկի ետ գնումը, Ելից 13:13,14 և Թվոց 18:15-17

բ. Ֆիզիկական փրկագնումը հակադրվում է հոգևոր փրկագնման հետ, Սաղ. 49:7,8,15

գ. ԵՀՈՎԱՆ կփրկի Իսրայելին իրենց մեղքերից և ըմբոստությունից, Սաղ. 130:7-8

Բ. Աստվածաբանական գաղափարը ներգրավում է երեք կապակցված կետեր

1. Կա կարիք, գերություն, բռնագրավում, բանտարկություն:

ա. ֆիզիկական

բ. սոցիալական

գ. հոգևոր (հմմտ. Սաղ. 130:8)

2. Գին պետք է վճարվի ազատության, ազատ արձակման և վերականգնման համար:

ա. ազգի, Իսրայել (հմմտ. 2 Օրին. 7:8)

բ. անհատի (հմմտ. Հոբ 19:25-27; 33:28)

3. Մեկը պետք է գործի որպես միջնորդ և բարերար: *gaal* այս մեկը սովորաբար օգտագործվում է ընտանիքի անդամի կամ ազգականի համար (այսինքն *go'el*):
4. ԵՀՈՎԱՆ հաճախ ինքն իրեն նկարագրում է ընտանեկան տերմիններով:
 - ա. Հայր
 - բ. Ամուսին
 - գ. Մոտ ազգական
 Փրկագնումը հաստատված էր/ապահովված էր ԵՀՈՎԱ-յի անմիջական օգնությամբ; գինը վճարված էր, և փրկությունը կատարված:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. Կան մի քանի տերմիններ, որոնք օգտագործվում են փոխանցելու/հայտնելու համար աստվածաբանական գաղափար/միտք:

1. *Agorazō* (հմմտ. I Կոր. 6:20; 7:23; II Պետ. 2:1; Հայտ. 5:9; 14:34): Սա առևտրական տերմին է, որը պատկերում է գին վճարված ինչ որ մի բանի համար: Մենք արյունով գնված մաղիկ ենք, որոնք չեն կառավարում մեր կյանքերը: Մենք պատկանում ենք Քրիստոսին:
2. *Exagorazō* (հմմտ. Գաղ. 3:13; 4:5; Եփ. 5:16; Կող. 4:5): Սա նույնպես առևտրական տերմին է: Այն պատկերում է Հիսուսի փոխանող մահը մեր փոխարեն: Հիսուսը կրեց «անեծքը» հիմնված կատարման օրենքի վրա (այսինքն Մովսեսական Օրենք), որը մեղավոր մարդիկ չէին կարող կատարել: Նա կրեց անեծքը (հմմտ. 2 Օրին. 21:23) մեր բոլորի համար: Հիսուսում Աստծո արդարությունն ու սերը միաձուլում են ամբողջական ներում, ընդունում և մոտենալու հնարավորություն:
3. *Luō*, «ազատ արձակել»
 - ա. *Lutron*, «վճարված գին/փրկանք» (հմմտ. Մաթ. 20:28; Մարկ. 10:45): Սրանք զորավոր խոսքեր են հենց Հիսուսի բերանով ասված, կապված Իր գալստյան նպատակի հետ, աշխարհի Փրկիչ լինելու՝ վճարելով մեղքի վարձքը, Ինքը լինելով անմեղ (հմմտ. Հովհ. 1:29):
 - բ. *Lutroō*, «ազատել/թողնել»
 - (1) փրկել Բարայելին, Դուկ. 24:21
 - (2) Իր անձը տալ՝ փրկելու և սրբելու ժողովրդին, Տիտոս 2:14
 - (3) լինել անմեղ փոխանորդ, I Պետ. 1:18-19
 - գ. *Lutrosis*, «փրկագին տալ, ազատում, փրկում կամ ազատագրում»
 - (1) Չաքարիայի մարգարեությունը Հիսուսի մասին, Դուկ. 1:68
 - (2) Աննայի փառաբանումը Աստծուն՝ Հիսուսի համար, Դուկ. 2:38
 - (3) Հիսուսի կատարած զոհաբերությունը՝ մեկ անգամ և ընդմիշտ բոլորի համար, Եբ. 9:12
4. *Apolytrōsis*
 - ա. փրկություն Երկրորդ Գալստյան ժամանակ (հմմտ. Գործք 3:19-21)
 - (1) Դուկ. 21:28
 - (2) Հռ. 8:23
 - (3) Եփ. 1:14; 4:30
 - (4) Եբր. 9:15
 - բ. փրկություն Քրիստոսի մահով
 - (1) Հռ. 3:24
 - (2) I Կորն. 1:30
 - (3) Եփ. 1:7
 - (4) Կող. 1:14
5. *Antilytron* (հմմտ. I Տիմ. 2:6): Սա վճռական/կրիտիկական տեքստ է (ինչպես Տիտոս 2:14), որը փրկումը կապում է Հիսուս փոխանորդի խաչի մահի հետ: Նա է միայն և միակ ընդունելի

գոհը, մեկը, որ մեռնում է «բոլորի» համար (հմմտ. Հովհ. 1:29; 3:16-17; 4:42; I Տիմ. 2:4; 4:10; Տիտոս 2:11; II Պետ. 3:9; I Հովհ. 2:2; 4:14):

Բ. Նոր Կտակարանում աստվածաբանական գաղափարը նշանակում է

1. Մարդը գերի է մեղքին (հմմտ. Հովհ. 8:34; Հռ. 3:10-18; 6:23):

2. Մարդու մեղքին գերի լինելը բացահայտվել է Մովսեսական Օրենքով Հին Կտակարանում (հմմտ. Գաղ. 3) և Հիսուսի Լեռան Քարոզով (հմմտ. Մաթ. 5-7): Մարդու արարքը դարձել է մահապատիժ (հմմտ. Կող. 2:14):

3. Հիսուսը, Աստծո անմեղ գառը, եկել և մեռել է մեր փոխարեն (հմմտ. Հովհ. 1:29; II Կորն. 5:21): Մենք գնվել ենք մեղքից, որ կարող լինենք ծառայել Աստծուն (հմմտ. Հռ. 6):

4. Ըստ իմաստի թե ԵՀՈՎԱՆ և թե Հիսուսը «ազգականներ» են, որոնք գործում են մեր օգտին: Սա շարունակում է ընտանեկան փոխաբերությունները (այսինքն հայր, ամուսին, որդի, եղբայր, ազգական):

5. Փրկագիրը վճարված չէր սատանային (այսինքն, Սիջնադարյան աստվածաբանություն), բայց Աստծո խոսքի և Աստծո արդարության հաշտեցումը Աստծո սիրո և ամբողջական ապահովումն է/ նախապատրաստում Քրիստոսում: Խաչի մոտ խաղաղությունը վերականգնվեց/վել է, մարդու ըմբոստությունը ներվել է, Աստծո պատկերը մարդու մեջ այժմ ամբողջությամբ ֆունկցիոնալ է նորից մտերմիկ հարաբերության մեջ:

6. Սա դեռ ապագա տեսակետ է փրկության վերաբերյալ (հմմտ. Հռ. 8:23; Եփ. 1:14; 4:30), որը ներգրավում է մեր հարուցյալ մարմիններն ու ֆիզիկական մտերմություն Երրորդության հետ:

3:25

Արևելահայերեն «Որին Աստուած առաջուց սահմանեց»

Արևմտահայերեն «Որը Աստուած նախապէս սահմանած էր»

NASB “whom God displayed publicly”

NKJV “whom God set forth”

NRSV “whom God put forward”

TEV “God offered”

JB “who was appointed by God”

Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ՉԵՁՈՔ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որը նշանակում է, որ Աստված Ինքը հայտնեց Իր սեփական կամքն ու նպատակը՝ Հիսուսի մահով (հմմտ. Եփ. 1:9): Աստծո հավիտենական փրկության ծրագիրը ներգրավում է Հիսուսի զոհաբերությունը (հմմտ. Ես. 53:10; Հայտ. 13:8): Տես ծանուցում 9:11.

endeiknumai այս հունարեն տերմինը (*endeixis*, հմմտ. 3:25,26) մի քանի անգամ օգտագործվում է Հռոմեացիս գրքում (հմմտ. 2:15; 9:17,23; LXX Ելից. 9:16): Դրա հիմնական նշանակությունն է դրսևորել/ցույց տալ կամ ցուցաբերել: Աստված ուզում էր, որ մարդիկ պարզ հասկանան Իր փրկարար նպատակը, ծրագիրը և արդարությունը: Այս կոնտեքստը ցույց է տալիս աստվածաշնչյան աշխարհայացք

1. Աստծո էության մասին

2. Քրիստոսի գործի մասին

3. մարդկության կարիքի մասին

4. փրկության նպատակի մասին

Աստված ուզում է, որ մենք հասկանանք: Այս կոնտեքստը վճռական է Քրիստոնեությունը ճիշտ հասկանալու համար: Բառերից և արտահայտություններից մի քանիսը երկիմաստ/անորոշ են կամ

կարող են հասկացվել մի քանի ձևերով, բայց ամբողջի հարձակումը/թափանցումը պարզ է և հասկանալի: Այս կոնտեքստը աստվածաբանական բևեռային աստղ է Նոր Կտակարանի համար:

- NASB** “as a propitiation in His blood”
NKJV “to be a propitiation by His blood”
NRSV “as a sacrifice of atonement by his blood”
TEV “so that by his blood he should become the means by which people’s sins are forgiven”
JB “to sacrifice his life so as to win reconciliation”

**Արևելահայերեն «քաուֆին լինելու համար հաւատալով նորա արիւնովը»
Արևմտահայերեն «քաուֆին ըլլալու, եթէ անոր արեան հաւատան»**

Հունահռոմեական աշխարհում այս բառը կրում էր հարաբերության վերականգնման գաղափար օտարացած աստվածության հետ՝ զինը վճարված լինելու իմաստով, բայց ոչ այս իմաստով Սեպտուագիդում: Դա օգտագործվում էր Սեպտուագիդում և Եբրայեցիս 9:5 «քավություն տապանակի» թարգմանությամբ, որը Ուխտի Տապանակի կափարիչն էր, որը տեղակայված էր Սրբության Սրբոցում, տեղ, որտեղ քավություն էր ձեռք բերվում ազգերի անունից Քավության Օրը (հմմտ. Գև. 16):

Այս տերմինը պետք է բաշխվի/գործածվի այնպես, որ չփոքրացնի Աստծո զգվանքը/թշնամանքը մեղքի հանդեպ, այլ հաստատում է Նրա դրական փրկարար կեցվածքը/դիրքը մեղավորների հանդեպ: Լավ քննարկում է գտնվում/կա Ջեյմս Ստուարթսի *Մարդ Քրիստոսում/Քրիստոս Մարդը* գրքում, էջ 214-224, (James Stewart’s *A Man in Christ*, pp. 214-224): Սա կատարելու ձևերից մեկն է տերմինը թարգմանել այնպես, որ այն արտացոլի Աստծո գործը Քրիստոսի մեջ; «հաշտեցնող զոհ» կամ «հաշտեցնող զորության հետ»:

«Իր արյունով» եբրայական ձև է փոխանորդ զոհին՝ Աստծո անմեղ գառանը վերաբերող (հմմտ. Հովհ. 1:29). Ամբողջությամբ հասկանալու համար այս գաղափարը Գևտ. 1-7 գլուխներում վճռական է, ինչպես նաև, Քավության Օրը 16-րդ գլխում: Արյունը վերաբերում է անմեղ կյանքին՝ տրված մեղավորի անունից (հմմտ. Ես. 52:13-53:12):

«**հաւատալով**» Այստեղ կրկին (հմմտ. 1:17; 3:22,25,26,27,28,30) մեխանիզմ է ի օգուտ և հասանելի բոլորին Հիսուսի փոխանորդ մահով:

Այս արտահայտությունը անուշադրության էր մատնված հին երկաթագիր Ա ձեռագրում (հունարեն տեքստը օգտագործված է նաև Քրիստոսոմի կողմից): Դա ներգրավված է բոլոր մյուս հին հունական ձեռագրերում: Որոշներն ունեն որոշիչ ՀՈՂ «հավատք» բառի հետ իսկ որոշները ոչ, ինչևէ, սա չի ազդում նշանակության /իմաստի վրա:

«**որ իր արդարութիւնը ցոյց տայ**» Աստված պետք է արդար և անփոփոխ լինի Իր էությանն ու Իր խոսքին (հմմտ. Մաղ. 3:6): Հին Կտակարանում մեղավոր հոգին պետք է մեռներ (հմմտ. Եզ. 18:4,20): Աստված ասաց, որ Ինքը չի արդարացնի հանցանքը/մեղավորին (հմմտ. Ելից 23:7). Աստծո սերը ընկած մարդկության հանդեպ այնքան մեծ է, որ Նա կամեցավ մարդանալ/մարդեղանալ, կատարել Օրենքն ու մեռնել ընկած մարդկության փոխարեն: Սերն ու արդարությունը անփոփոխ են Հիսուսի մեջ (հմմտ. 26h.):

Արևելահայերեն «այն առաջուց գործուած մեղքերի թոյտութեան համար՝ Աստուծոյ ներելու ժամանակին»

Արևմտահայերեն «քանզի Աստուած իր երկայնամտութեամբ ջնջած էր նախապէս գործուած մեղքերը»

NASB, NKJV,

NRSV “He passed over the sins previously committed”

TEV “in the past he was patient and overlooked people’s sins”

NJB “for the past, when sins went unpunished”

«Չնկատել/ուշադրություն չդարձնել» տերմինը *paresis* է, որն օգտագործվում է միայն այստեղ Նոր Կտակարանում և ոչ երբեք Սեպտուագինդում: Հույն հայրերը և Ջերոմը ընդունում էին դրա հունարեն բառացի իմաստով «պարտքի ներում/թողություն» (հմմտ. Մյուլտոն և Միլիգան, էջ 493): Ինչևէ, *pariēmi*, ԲԱՅ-ը որից առաջ է գալիս դրա նշանակությունը «թույլ տալ անցնել կողքով» կամ «մեղմացնել/թուլացնել» (հմմտ. Դուկ. 11:42).

Ուրեմն հարցն այսպիսինն է. Աստված ներե՞ց մեղքերը անցյալում՝ նայելով Քրիստոսի ապագա գործին կամ արդյո՞ք Նա պարզապէս նայում է նրանց իմանալով, որ Քրիստոսի մահը կլուծի մեղքի խնդիրը: Արդյունքը նույնն է: Մարդու մեղքը, անցյալ, ներկա և ապագա, գործ ունի Քրիստոսի զոհաբերության հետ:

Սա Աստծո շնորհքի անցյալի գործողություններից էր ակնկալելով/կանխավայելելով Քրիստոսի գործը (հմմտ. Գործք 17:30; Հռ. 4:15; 5:13) ինչպէս նաև ներկա և ապագա գործողությունը (հմմտ. 26h.): Աստված չէր և չի ընդունում մեղքը թե՛ս, բայց Նա ընդունում է Հիսուսի զոհաբերությունը, որպէս ամբողջական և վերջնական միջոց/դեղ մարդկային ըմբոստության, որը որպէս արգելք էր հետ ունեցած հաղորդակցության:

3:26 «Արդարություն» տերմինը h.25 ստուգաբանորեն վերաբերում է 26h. «արդար» և «արդարացնող» տերմիններին: Աստված փափագում է, որ Իր կերպարը դրսևորվի հավատացյալների կյանքերում Քրիստոսի վրա ունեցած հավատքի միջոցով: Հիսուսը դառնում է մեր արդարությունը (հմմտ. II Կորն. 5:21) բայց հավատացյալները պետք է նաև համապատասխանեն Նրա արդարությանը, Նրա նմանությանը (հմմտ. Հռ. 8:29). տես Հատուկ Թեմա 1:17:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3:27-30

²⁷Հիմա ու՞ր է պարծանքը. խափանուեցաւ. ը՞ր օրէնքով, գործերի՞ օրէնքովը. ըչ, այլ հաւատքի օրէնքովը: ²⁸Ուրեմն համարում ենք, որ մարդը հաւատքով է արդարանում առանց օրէնքի գործերի: ²⁹Սի՞րթէ Աստուած միայն Հրէաներինն է, եւ հեթանոսներինն էլ չէ. այո, հեթանոսներինն էլ է: ³⁰Որովհետեւ մէկ Աստուած է՝ որ արդարացնում է թլփատութիւնը հաւատքից, եւ անթլփատութիւնը նոյն հաւատքովը:

NASB (UPDATED) TEXT: 3:27-30

²⁷Where then is boasting? It is excluded. By what kind of law? Of works? No, but by a law of faith.

²⁸For we maintain that a man is justified by faith apart from works of the Law. ²⁹Or is God *the God* of Jews only? Is He not *the God* of Gentiles also? Yes, of Gentiles also, ³⁰since indeed God who will justify the circumcised by faith and the uncircumcised through faith is one.

3:27 « ու՞ր է պարծանքը » ՀՈՒԻ առկայությունը «պարծանք»ի հետ կարող է վերաբերել/արտացոլել հրեաների հպարտությունը (հմմտ. 2:17,23): Ավետարանը խոնարհեցնող է: Ընկած մարդկությունը (Հրեաներ և Հեթանոսներ) չի կարող օգնել իրեն (հմմտ.Եփ. 2:8-9). տես Հատուկ Թեմա; Պարծենկոտություն 2:17:

«**խափանուեցաւ**» Այս տերմինը (*ek* [դուրս] գումարած *kleiō* [փակել]) օգտագործվում է միայն այստեղ և Գաղ. 4:17: Սա բառացիորեն նշանակում է «փակել, մեկուսացնել»:

«**հաւատքի օրէնքովը**» Աստծո Նոր Ուխտը Երեմիա 31:31-34 հիմնված չէ գործի վրա, այլ վստահության/հավատքի վրա (*pistis*) Նրա ողորմած կերպարի և խոստումների: Թե չի և թե Նոր Ուխտերը ընկած մարդկությանը Աստծո կերպարին (արդար) բերելու/փոխելու համար էին: չինը՝ արտաքին օրէնքով; Նորը՝ նոր սրտով (հմմտ. Եզեկ. 36:26-27): Նպատակը նույնն է:

3:28 «Ուրեմն համարում ենք, որ մարդը հաւատքով է արդարանում առանց օրէնքի գործերի»: Սա 3:21-26 ամփոփումն է և 4-8 գլուխների նախապատկերը (հմմտ. II Տիմ. 1:9; Տիտոս 3:5): Փրկությունը ձրի պարզ է և Քրիստոսի ավարտած գործի հավատքի միջոցով (հմմտ. 3:24; 5:15,17; 6:23; Եփ. 2:8-9): Ինչևէ, հասունությունն արժե ամեն ինչ՝ հնազանդության կյանք, ծառայություն և պաշտամունք, (հմմտ. Գաղ. 5:6; Եփ. 2:10; Փիլ. 2:12; և տես ծանուցումը 1:5):

3:29 Աստծո նպատակը միշտ եղել է ազատել ամբողջ մարդկությանը, որոնք ստեղծված են Իր պատկերով (Ծննդ. 1:26; 5:1; 9:6): Ծննդ. 3:15-ի ազատագրման խոստումը բոլորի համար է: Նա ընտրեց Աբրահամին որպեսզի ընտրի աշխարհը (հմմտ. Ծննդ. 12:31; Ելից 19:4-6; Հովհ. 3:16):

Այս համարը, ինչպես 3:9, հնարավոր է պատկերում/արտացոլում են լարվածությունը Հռոմի եկեղեցում հավատացյալ հրեա առաջնորդների միջև, որոնք հնարավոր է հեռացել էին Հռոմից՝ հետևելով Ներոնի/Կլավդիոս հրովարտակին և արդյունքում հեթանոս հավատացյալ առաջնորդները փոխարինեցին նրանց: 9-11 գլուխները հնարավոր է նույնպես ուղղում են այս նույն լարվածությունը:

3:30

Արևելահայերեն «Որովհետև մէկ Աստուած է՝»

Արևմտահայերեն «Որովհետև Աստուած մէկ է»

3:30

NASB “if indeed God is one”

NKJV “since there is one God”

NRSV “since God is one”

TEV “God is one”

JB “since there is only one God”

Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ, որը ենթադրվում է որպես ճիշտ հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Եթե Միաստվածությունը ճիշտ է, ուրեմն (հմմտ. Ելից 8:10; 9:14; 2 Օրին. 4:35,39; 6:4; I Թագ. 2:2; II Թագ. 7:22; 22:32; III Թագ. 8:23; Սաղ. 86:8,10; Ես. 43:11; 44:6,8; 45:6-7,14,18,21-22; 46:5,9; Եր. 2:11; 5:7; 10:6; 16:20), Նա պետք է բոլոր մարդկանց Աստվածը լինի:

«**որ արդարացնում է թլփատութիւնը**» Հունարեն «արդարացնել/անպարտ ճանաչել» բառը նույն արմատից է, ինչ «արդարություն,իրավունք»բառը: Տես Հատուկ Թեմա 1:17. Աստծո հետ ճիշտ հարաբերություն ունենալու համար կա միայն մեկ կերպ (հմմտ. Հռ. 9:30-32): Փրկության համար կա երկու չափանիշ՝ հավատք և ապաշխարություն (հմմտ. Մակկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21; տես նյութը 1:5): Սա ճշմարտություն է թե՛ Հրեաների և թե՛ Հույների համար:

«հաւատքից. . հաւատքով» Կա բացահայտ գուգահեռականություն այս երկու նախադասությունների միջև: *ek* և *dia* ՆԱԽԴԻՐՆԵՐՆ այստեղ օգտագործված են որպես հոմանիշ: Ոչ մի տարբերություն առաջադրված չէ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3:31

³¹Արդ մի՞թէ օրէնքը խափանում ենք հաւատքովը. քաւ լիցի. այլ օրէնքը հաստատում ենք:

NASB (UPDATED) TEXT: 3:31

³¹Do we then nullify the Law through faith? May it never be! On the contrary, we establish the Law.

Արևելահայերեն «Արդ մի՞թէ օրէնքը խափանում ենք հաւատքովը»
Արևմտահայերեն «Ուստի մենք հաւատքով օրէնքը կը խափանե՞նք:»

3:31

- NASB “Do we then nullify the Law through faith”
- NKJV “Do we then make void the law through faith”
- NRSV “Do we then overthrow the law by this faith”
- TEV “Does this mean that by this faith we do away with the Law”
- JB “Do we mean that faith makes the Law pointless”

Նոր Կտակարանը ներկայացնում է Հին Կտակարանը երկու տարբեր կերպերով

1. այն ներշնչված է, Աստծո տված հայտնությունը, որը երբեք չի անցնի (հմմտ. Մաթ. 5:17-19; Հռ. 7:12,14,16)

2. այն հնացած է և անցած (հմմտ. Եբր. 8:13)

Պողոսն օգտագործեց «ոչնչացնել» տերմինը ամենաքիչը 25 անգամ: Այն թարգմանվում է «անօգուտ/անվավեր», «գտնվել անգոր», և «ապարդյուն, անօգուտ անել»: Տես Հատուկ Թեմա 3:3. Պողոսի համար օրենքը թե՛ խնամակալ էր (հմմտ. Գաղ. 3:23) և թե՛ դայակ (հմմտ. Գաղ. 3:24), բայց հավիտենական կյանք տալ չէր կարող (հմմտ. Գաղ. 2:16,19; 3:19): Այն մարդու դատապարտության հիմնքն է (հմմտ. Գաղ. 3:13; Կող. 2:14): Մովսեսական օրենքը գործեց թե որպես հայտնություն և թե բարոյական փորձ, ինչպես արեց «Չարի և Բարու Գիտության Ծառը»:

Անորոշություն կա, թե ինչ ինկատի ունի Պողոսն «Օրենք» ասելով

- 1. արդարության համակարգ Հուդայականության գործեր
- 2. փուլ հեթանոս հավատացյալների համար՝ անցնելու Քրիստոսի փրկությանը (հուդայականները/հրեություն Գաղատացիս թղթում)
- 3. չափանիշ, որով բոլոր մարդիկ փառքից ընկան/պակասեցին (հմմտ. Հռ. 1:18-3:20; 7:7-25; Գաղ. 3:1-29).

«այլ օրենքը հաստատում ենք»Նախկին արտահայտության լույսի ներքո, ի՞նչ է նշանակում այս արտահայտությունը: Այն կարող է նշանակել, որ

- 1. Օրենքը փրկության միջոց չէր, բայց այն մնայուն բարոյական ուղեցույց է
- 2. այն հաստատում է «արդարացում հավատքով» վարդապետությունը 3:21; 4:3 (Ծննդ. 15:6; Սաղ. 32:1-2,10-11)
- 3. Օրենքի տկարությունը (մարդկային ապստամբություն, հմմտ. Հռ. 7; Գաղ. 3) անբողջությամբ բավարարվեց Քրիստոսի մահով, 8:3-4
- 4. հայտնության նպատակն է վերականգնել Աստծո պատկերը մարդու մեջ

Օրենքը, ատենական արդարությունից հետո, դառնում է ուղեցույց ճշմարիտ արդարության կամ Քրիստոսանմանության: Տես Հատուկ Թեմա; Պողոսի տեսակետերը Մովսեսական Օրենքի վերաբերյալ 13:9.

Յնցող հարակարծիքն/պարադոքսն այն է, որ Օրենքը թերացավ հաստատել Աստծո արդարությունը, քայց նրա ոչնչացման միջոցով, Աստծո շնորհքի պարզևի միջոցով հավատքի ձեռովը, քրիստոնյան ապրում է արդար, բարեպաշտ կյանքով: Օրենքի նպատակը ընդունվել է ոչ թե մարդու արարքով, այլ Աստծո ձրի պարզևի՝ շնորհքի միջոցով Քրիստոսում: «Հաստատել» բառի համար, տես Հատուկ Թեմա: Որը գտնվում է 5:2.

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Քո խոսքերով գրիր Հռոմեացիս 3:21-31 ուրվագիծը
2. Ինչու՞ Աստված անցավ մարդու մեղքերի վրայով անցյալում (հ. 25)
3. Ինչպե՞ս էր Հին Կտակարանի հավատացյալը փրկվում մեղքից (3:25)
4. Ինչպե՞ս է Հիսուսի վրա ունեցած հավատքը հաստատում Օրենքը (3:31)

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 4**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Աբրահամի Օրինակը	Աբրահամը Արդարացավ Հավատքով	Աբրահամը Արդարացավ Հավատքով	Աբրահամի Օրինակը	Աբրահամը Արդարացավ Հավատքով
4:1-12	4:1-4	4:1-8	4:1-8	4:1-8
	Դավիթը Հռչակում է Նույն Ճշմարտությունը			Արդարացավ Մինչև Թլպատությունը
	4:5-8			
	Աբրահամը Արդարացավ Մինչև Թլպատությունը			
	4:9-12	4:9-12	4:9-12	4:9-12
Խոստումը Իրականացավ Հավատքի միջոցով	Խոստումը տրված Հավատքի միջոցով	Աբրահամի Ճշմարիտ Սերունդները	Աստծո Խոստումը Ընդունվեց	Չարդարացավ Օրենքին Հնազանդվելով
4:13-25	4:13-25	4:13-15	4:13-15	4:13-17
		4:16-25	4:16-25	Աբրահամի Հավատքը Քրիստոնեա հավատքի մոդել
				4:18-25

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՐՏԵՔՍԱՅԻՆ ՆԵՐՈՄԲՈՆՈՒՄՆԵՐ

- Ա. Պողոսի ցնցող աստվածաբանությունը, որը գտնվում է 3:21-31-ում, հաստատեց, որ մեղավոր/ընկած մարդկությունը Աստծո առաջ հռչակված էր արդար որպես ձրի պարզև, ամբողջությամբ Մովսեսական Օրենքից անջատ: Հիմա Պողոսը փորձում է ապացուցել, որ դա նորամուծություն չէր (հմմտ. 3:21բ) բերելով Հին Կտակարանային օրինակներ Աբրահամին և Դավիթին (հմմտ. 6-8հհ.):
- Բ. Հռոմեացիս 4-ը ներկայացնում է ապացույց բերված Մովսեսի Օրենքից, Ծննդ. – 2 Օրին., հավատքով արդարացման վարդապետության համար: Սա ամփոփվում է 3:21-31: Հրեայի համար, Մովսեսի գրվածքներից մի մեջբերում ուներ մեծ աստվածաբանական կշիռ, հատկապես կապված Աբրահամի հետ, որը համարվում էր Հրեա ազգի հայրը: Դավիթը դիտվում էր ոչպես եկող Մեսիայի տիպար (հմմտ. II Թագ. 7): Լարվածությունը Հռոմում հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև հնարավոր է պատճառ է հանդիսացել այս քննարկման համար: Հնարավոր է, որ հրեա քրիստոնեա առաջնորդները բռնության էին մատնվել Ներոնի/Կլավդիոսի կողմից (որը վերացրեց հրեական բոլոր ծեսերը) թողնելու Հռոմը: Այդ ժամանակամիջոցում նրանք փոխարինվեցին հեթանոս քրիստոնեա առաջնորդներով: Առաջին խմբի վերադարձը վիճաբանություն առաջացրեց, թե ով պետք է լինի առաջնորդության պաշտոններում:
- Գ. Հռոմեացիս 4-ը ցույց է տալիս, որ ընկած/մեղավոր մարդկությունը միշտ փրկվել է հավատքով և ապաշխարությամբ առ Աստված՝ համապատասխան իրենց ունեցած հոգևոր լույսի (Ծննդ. 15:6; Հռ. 4:3): Շատ ձևերով Նոր Ուխտը (ավետարան) արմատականորեն տարբեր չէ Հին Ուխտից (հմմտ. Եր. 31:31-34; Եգ. 36:22-38):
- Դ. Հավատքով արդարանալու ձևը բաց է բոլորի համար, ոչ միայն Նախահայրերի, կամ էլ Իսրայել ազգի համար է: Այստեղ Պողոսը զարգացնում և ընդարձակում է իր աստվածաբանական փաստարկը՝ օգտագործելով Աբրահամին, որը նա սկսեց, իր առաջին թղթում/գրքում, Գաղ. 3-ում:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:1-8

¹Արդ ի՞նչ ասենք, թե մեր Աբրահամ հայրը գտաւ մարմնի կողմանէ: ²Որովհետեւ եթէ Աբրահամը գործերով արդարացած լինէր՝ պարծանք կունենար. բայց ոչ թէ Աստուծոյ առաջին: ³Որովհետեւ գիրքն ի՞նչ է ասում. Աբրահամը հաւատաց Աստուծուն, եւ արդարութիւն համարուեցաւ նորան: ⁴Բայց նորան՝ որ գործք է անում, վարձքը չէ համարվում շնորհքի պէս, այլ պարտքի պէս: ⁵Բայց նորան՝ որ գործք չէ անում այլ հաւատում է նորան, որ ամբարիշտին արդարացնում է, նորա հաւատքը համարվում է արդարութիւն: ⁶ Ինչպէս որ Դաւիթն էլ այն մարդի երանութիւնն է ասում, որին Աստուած արդարութիւն է համարում առանց գործերի: ⁷ Երանի նորանց՝ որոնց անօրէնութիւնները թողուեցան, եւ որոնց մեղքերը ծածկուեցան: ⁸ Երանի է այն մարդին, որին Տէրը մեղք չի համարիլ:

NASB (UPDATED) TEXT: 4: 1-8

¹What then shall we say that Abraham, our forefather according to the flesh, has found? ²For if Abraham was justified by works, he has something to boast about, but not before God. ³For what does the Scripture say? “ABRAHAM BELIEVED GOD, AND IT WAS CREDITED TO HIM AS RIGHTEOUSNESS.” ⁴Now to the one who works, his wage is not credited as a favor, but as what is due. ⁵But to the one who does not work, but believes in Him who justifies the ungodly, his faith is credited as righteousness, ⁶just as David also speaks of the blessing on the man to whom God credits righteousness apart from works: ⁷“BLESSED ARE THOSE WHOSE LAWLESS DEEDS HAVE BEEN FORGIVEN, AND WHOSE SINS HAVE BEEN COVERED.” ⁸“BLESSED IS THE MAN WHOSE SIN THE LORD WILL NOT TAKE INTO ACCOUNT.”

4:1 «Արդ ի՞նչ ասենք, թե մեր Աբրահամ հայրը » Աբրահամի անունը նշանակում էր «բազմության հայր» (հմմտ. 16-18հհ.): Նրա սկզբնական անունը Աբրամ էր, որը նշանակում էր «մեծարված հայր»:

Այստեղ օգտագործված գրական տեխնիկան կոչվում է սուր քննադատություն (հմմտ. 4:1; 6:1; 7:7; 8:31; 9:14,30): Աբրահամին (Ծննդ. 11:27-25:11) որպէս օրինակ օգտագործելու պատճառը կամ (1) որովհետև իրեաները մեծ տեղ էին տալիս իրենց ռասայական ակունքներին (հմմտ. Մաթ. 3:9; Հովհ. 8:33,37,39); (2) որովհետև նրա անձնական հավատքը ուխտի մոդելի օրինակ է ծառայում (Ծննդ. 15:6); (3) նրա հավատքը նախորդեց Մովսեսին Օրենք տալը (հմմտ. Ելից. 19-20):

4:2 «եթէ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ (հմմտ. Ա. Թ. Ռոբերթսոն, *Word Pictures*, Հատ. 4, 350 էջ), որը ճշմարտություն է ձևացնում հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակի համար: Սա շատ լավ օրինակ է ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ, որը կեղծ է իրականության մեջ, բայց ծառայում է աստվածաբանական միտք ասելու համար (հմմտ. 14հ.):

Ջոզեֆ Ա. Ֆիտսմայեռ, *The Anchor Bible*, Հատ. 33, 372 էջ, ասում է, որ սա հնարավոր է լինի խառը պայմանական նախադասություն/եղանակ, որի առաջին մասը ԵՐԿՐՈՐԳ ԿԱՐԳ (ճշմարտությանը/իրողությանը հակառակ) իսկ երկրորդը ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ:

«գործերով արդարացած» Սա հակառակն է Քրիստոսի հավատքով արդարացման ճշմարտության: Այս տեսակ մարդկային ջանքերով փրկությունը (4:4), եթե հնարավոր է Քրիստոսի ծառայությունը ավելորդ կդարձներ: Ինչևէ, Հին Կտակարանը հստակ ցույց է տալիս ընկած մարդկության Աստծո ուխտի գործերի կատարման անկարողությունը Ուստի Հին Կտակարանը/ Օրենքը անեծք՝ մահվան դատավճիռ դարձավ (հմմտ. Գաղ. 3:13; Կող. 2:14):

Հրեա գիտնականները գիտեին, որ Աբրահամը գոյություն ուներ մինչև Մովսեսի Օրենքը, բայց նրանք հավատում էին, որ նա նախատեսեց/կանխագագ Օրենքը և պահեց այն (հմմտ. Միր. 44:20 և Յուր. 6:19; 15:1-2):

«պարծանք կունենար» Այս թեման հաճախ հայտնվում է Պողոսի գրվածքներում: Նրա նախադրյալը որպես փարիսեցի զգայուն էր դարձրել այս խնդրի հանդեպ (հմմտ. 3:27; I Կոր. 1:29; Եփ. 2:8-9): Տես Հատուկ Թեմա: Պարծանք 2:17-ում:

4:3

Արևելահայերեն «Աբրահամը հաւատաց Աստուծուն »
Արևմտահայերեն «Աբրահամ Աստուծոյ հաւատաց »

NASB, NKJV,
NRSV, TEV
JB

“Abraham believed God”
“Abraham put his faith in God”

Սա մեջբերում է Ծննդ.15:6-ից: Այս գլխում Պողոսը երեք անգամ օգտագործում է այն (հմմտ. 4:3,9,22), որը ցույց է տալիս դրա կարևորությունը Պողոսի աստվածաբանական հասկացողությունը փրկության մասին: «հավատք» տերմինը Հին Կտակարանում նշանակում էր հավատարմություն, նվիրվածություն կամ հուսալիություն և Աստծո բնության նկարագիրն էր, և ոչ թե մեր: Այն առաջացել է եբրայերեն (*emun, emunah*) տերմինից, որը նշանակում էր «հավատացած կամ կայուն լինել»: Փրկարար հավատքը մտային համաձայնեցում (ճշմարտությունների հավաքածու/շարք), կամքի/ցանկության կատարում (որոշում), բարոյական կյանք (ապրելաոճ), և հիմնականում բարեկամական (անձի ողջունում):

Պետք է ընդգծվի, որ Աբրահամի հավատքը գալիք Մեսիայի վրա չէր այլ Աստծո խոստման վրա, որ նա զավակ և սերունդներ կունենա (հմմտ. Ծննդ. 12:2; 15:2-5; 17:4-8; 18:14): Աբրահամն այս խոստմանը արձագանքեց՝ Աստծուն վստահելով: Նա ուներ կասկածներ և խնդիրներ այս խոստման հետ կապված, բայց իրականում այն ևս **13** տարի պահանջեց իրականանալու համար: Ինչևէ նրա թերի հավատքն ընդունվեց Աստծո կողմից: Աստված կամենում է գործել թերի, պակասավոր մարդկանց հետ, ովքեր արձագանքում են Իրեն և Իր խոստումներին՝ հավատքով, եթե նույնիսկ դա մանանեխի հատիկի չափ է (հմմտ. Մաթ. 17:20):

4:3,4,5,6,8,9,10,22,23,24

Արևելահայերեն « արդարութիւն համարուեցաւ նորան»
Արևմտահայերեն «իրեն արդարութիւն սեպուեցաւ»

NASB, NRSV
NKJV
TEV
JB

“it was reckoned to him”
“it was accounted to him”
“for God accepted him”
“this faith was considered”

«Դա» վերաբերում է Աբրահամի հավատքը Աստծո խոստումներին:

«Համարվեց» (*logizomia*) հաշվապահական տերմին է, որը նշանակում էր «հանցանքը կամ պայմանական մեկի վրա դնել» (հմմտ. LXX Ծննդ. 15:6; Գև. 7:18; 17:4): Այս նույն ճշմարտությունը գեղեցիկ կերպով արտահայտվում է II Կոր. 5:21 և Գաղ. 3:6: Հնարավոր է, որ Պողոսը միացրեց

Ծննդ. 15:6 և Սաղ. 32:2, որովհետև այդ երկուսն էլ օգտագործում են «համարվեց» հաշվապահական տերմինը: Տեքստերի այս միացությունը հերմենևտիկ/մեկնաբանական սկզբունք էր օգտագործված բաբբիների կողմից:

Հին Կտակարանի այս տերմինը Սեպտուագինդում այնքան էլ բանկային տերմին չէ ինչպես հաշվապահական տերմին, հնարավոր է վերաբերում է «գրքեր»-ին Դան. 7:10; 12:1: Այս երկու փոխաբերական գրքերն (Աստծո հիշողություն) են

1. գործերի կամ հիշատակների գիրքը (հմմտ. Սաղ. 56:8; 139:16; Ես. 65:6; Մաղ. 3:16; Հայտ. 20:12-13)
2. կյանքի գիրքը (հմմտ. Ելից 32:32; Սաղ. 69:28; Ես. 4:3; Դան. 12:1; Դուկ 10:20; Փիլ. 4:3; Եբ. 12:23; Հայտ. 3:5; 13:8; 17:8; 20:15; 21:27):

Գիրքը, որտեղ Աբրահամի հավատքը Աստծո կողմից որակավորվում էր որպես արդարություն դա «կյանքի գիրքն» է:

4:3,5,6,9,10,11,13,22,25 «եւ արդարությին» Սա անդրադարձնում է Հին Կտակարանի «չափող եղեգ» (*tsadak*) տերմինը: Դա շինարարական փոխաբերություն էր օգտագործված Աստծո էության համար: Աստված ուղիղ է իսկ բոլոր մարդիկ կեռ/ծոված: Նոր Կտակարանում այն օգտագործվում էր պաշտոնական/դիրքային, իրավական (դատական) իմաստով, որը հույսով շարժվում է դեպի աստվածահաճո ապրելաճի առանձնահատկությունները: Աստծո նպատակը յուրաքանչյուր քրիստոնյայի համար Իր սեփական էությունն է, կամ այլ կերպ ասած՝ քրիստոսանմանությունը (հմմտ. 8:28-29; Գաղ. 4:19): Տես հատուկ թեմա 1:17:

4:5 Հավատքի էությունը դա պետքական արձագանք է Աստծո կանչին, որը Ինքն Իրեն հայտնում է մարդկանց, այնինչ հենց սկզբից այս արձագանքում առանց մարդկային ջանքերի կամ արժանիքների վրա հենվելով: Սա չի նշանակում, որ մի ժամանակ փրկվել ենք և Հոգին բնակվում է մեր մեջ, ուրեմն մեր ապրելաճը կարևոր չէ: Քրիստոնեության նպատակը միայն մահանալուց հետո երկինք գնալը չէ, այլ հիմա Քրիստոսանման լինելն է: Մենք չենք փրկվում, արդարանում կամ ճիշտ ճափանիշ ստանում մեր գործերով, այլ մենք փրկվում ենք դեպի բարի գործեր կատարելու (հմմտ. Եփ. 2:8-9 և 10; Հակոբոս և I Հովհաննես): Փոխված և փոխվող կյանքը ապացույց է, որ ևս մեկը փրկվեց:

«հավատում է» Ստորև տես հատուկ թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՔ (PISTIS [գոյական], PISTEUŌ, [բայ], PISTOS [ածական])

Ա. Սա շատ կարևոր տերմին է Աստվածաշնչում (հմմտ. Եբր. 11:1,6): Սա Հիսուսի վաղ քարոզների նյութն էր (հմմտ. Մարկ. 1:15): Գոյություն ունի ամենաքիչը երկու նոր ուխտի պահանջներ: ապաշխարություն և հավատք (հմմտ. 1:15; Գործք 3:16,19; 20:21):

Բ. Տերմինի ստուգաբանությունը

1. Հին Կտակարանում «հավատք» տերմինը նշանակում էր անձնվիրություն, նվիրվածություն կամ հուսալիություն և Աստծո բնության նկարագիրն էր և ոչ թե մեր:
2. Այն առաջացել է եբրայերեն (*emun, emunah*) տերմինից, որը նշանակում էր «վստահ լինել կամ կայուն, հաստատ մնալ»: Մարդու փրկարար հավատքը դա մտային համաձայնություն է (որոշակի ճշմարտությունների ընդունմանը), բարոյական կյանք (ապրելակերպ), և ամենակարևորը դա մարդկային փոխհարաբերություն է (բարիացակամություն ուրիշի հանդեպ) և ինքնակամ նվիրում (որոշում) այդ անձի նկատմամբ:

Գ. Տերմինի կիրառությունը Հին Կտակարանում

Պետք է նշել այն, որ Աբրահամի հավատքը գալիք Մեսիային հավատալը չէր, այլ Աստծո խոստմանը, որ նա զավակ և սերունդներ կունենա (հմմտ. Ծննդ. 12:2; 15:2-5; 17:4-8; 18:14): Աբրահամը արձագանքեց այս խոստմանը՝ Աստծուն վստահելով: Նա դեռ ուներ կասկածներ և խնդիրներ այս խոստման մասին, որը տևեց 13 տարի իրականանալու համար: Նրա անկատար հավատքը, ինչևէ ընդունվեց Աստծո կողմից: Աստված կամենում է գործել փչացած մարդ արարածների հետ, ովքեր հավատքով արձագանքում են Իրեն և Իր խոստումներին, եթե այն նույնիսկ անգամ մանանեխի հատիկի չափ է (հմմտ. Մաթ. 17:20):

Գ. Տերմինի կիրառությունը Նոր Կտակարանում
 «Հավատաց» տերմինը առաջացել է հունարեն (*pisteuō*) տերմինից, որը նաև կարող է թարգմանվել «հավատալ», «հավատք», կամ «վստահություն»: Օրինակ, որպես գոյական Հովհաննո Ավետարանում չի հանդիպում, բայց որպես բայ հաճախ է օգտագործվում: Հովհ. 2:23-25 գոյություն ունի որոշակի անորոշություն ժողովրդի անկեղծության մեջ Հիսուս Նազովրեցուն որպես Մեսիա ընդունելու առումով: Ուրիշ օրինակներ, երբ «հավատալ» տերմինը օգտագործվում է մակերեսորեն Հովհ. 8:31-59 և Գործք 8:13, 18-24: Ճշմարիտ աստվածաշնչյան հավատքն ավելին է քան սկզբնական արձագանքը: Գրան անպայման պետք է հետևի աշակերտության գործընթացը (հմմտ. Մաթ. 13:20-22,31-32):

Ե. Օգտագործվում է ՆԱԽԳԻՐՆԵՐՈՎ

1. *eis* նշանակում է «մեջ»: Այս հատուկ քերականական կառուցվածքը ընդգծում է հետևյալ միտքը, երբ հավատացյալներն իրենց վստահություն/հավատքը դնում են Հիսուսի վրա
 - ա. Նրա անվանը (Հովհ. 1:12; 2:23; 3:18; I Հովհ. 5:13)
 - բ. Նրան (Հովհ. 2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45,48; 17:37,42; Մաթ. 18:6; Գործք 10:43; Փիլ. 1:29; I Պետ. 1:8)
 - գ. Ինձ (Հովհ. 6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)
 - դ. Որդուն (Հովհ. 3:36; 9:35; I Հովհ. 5:10)
 - ե. Հիսուսին (Հովհ. 12:11; Գործք 19:4; Գաղ. 2:16)
 - զ. Լույսին (Հովհ. 12:36)
 - է. Աստծուն (Հովհ. 14:1)
2. *en* նշանակում է «մեջ» ինչպես Հովհ. 3:15; Մարկ. 1:15; Գործք 5:14
3. *epi* նշանակում է «մեջ» ինչպես, Մաթ. 27:42; Գործք 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռ. 4:5,24; 9:33; 10:11; I Տիմ. 1:16; I Պետ. 2:6
4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ առանց ՆԱԽԳԻՐԻ ինչպես Գաղ. 3:6; Գործք 18:8; 27:25; I Հովհ. 3:23; 5:10
5. *hoti*, որը նշանակում է «հավատալ, որ» ցույց է տալիս էությունը այն բանի, թե ինչին հավատալ
 - ա. Հիսուսն Աստծո Սուրբն է (Հովհ. 6:69)
 - բ. Հիսուսը - ԵՍ ԵՍ (Հովհ. 8:24)
 - գ. Հիսուսը Հոր մեջ է և Նա Հոր մեջ (Հովհ. 10:38)
 - դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ. 11:27; 20:31)
 - ե. Հիսուսն Աստծո Որդին է (Հովհ. 11:27; 20:31)
 - զ. Հիսուս ուղղարկված էր Հոր կողմից (Հովհ. 11:42; 17:8,21)
 - է. Հիսուսը մեկ է Հոր հետ (Հովհ. 14:10-11)
 - ը. Հիսուսը եկավ Հորից (Հովհ. 16:27,30)
 - թ. Հիսուսն իրեն ճանաչեցնում է Հոր ուխտի անվան հետ, «ԵՍ ԵՍ» (Հովհ. 8:24; 13:19)
 - ժ. Մենք կապրենք Նրա հետ (Հռ. 6:8)
 - ի. Հիսուս մեռավ և հարություն առավ (I Թես. 4:14)

**Արևելահայերեն «նորա հաւատքը»
Արևմտահայերեն «անոր հաւատքը»**

NASB, NKJV “his faith”
NRSV “such faith”
TEV, NJB “it is this faith”

Աբրահամի հավատքը իր համար արդարություն համարվեցավ: Դա չէր հիմնված Աբրահամի գործողությունների վրա, այլ կեցվածքի/վերաբերմունքի:

«Համարվեց» բառը նաև օգտագործվում է Ֆինեսում LXX Սաղ. 106:31, որը վերաբերում է Թվոց 25:11-13: Այս դեպքում համարվելը հիմնված էր Ֆինեսի գործողությունների վրա, բայց Աբրահամի հետ այդպես չէ Ծննդ. 15:6:

«այլ հաւատում է նորան, որ ամբարիշտին արդարացնում է, նորա հաւատքը համարվում է արդարութիւն» Սա ակնհայտ գուգահեռ է Աբրահամին 3հ-ում (Ծննդ. 15:6): Արդարությունը Աստծո պարգևն է, և ոչ թե մարդու արարքը: Տես հատուկ թեմա 1:17.

«Դավիթ» Ինչպես Աբրահամը կատարյալ անհատ չէր, սակայն հավատքով Աստծո առաջ ուղիղ էր, նույնպես էլ մեղավոր Դավիթը (հմմտ. Սաղ. 32 և 51): Աստված սիրում և գործում է ընկած/մեղավոր մարդկության հետ (Ծննդ. 3) ով հավատք է ցուցաբերում առ Աստված (ՀԿ) և Իր որդուն (ՆԿ):

4:6 «առանց գործերի» Պողոսն ընդգծում է այս արտահայտությունը գետեղելով այն մինչև Հին Կտակարանի իր մեջբերումը (հմմտ. Սաղ. 32:1-2): Մարդը ուղիղ է Աստծո հետ Իր շնորհքով միջնորդելով Քրիստոսի միջոցով անհատի հավատքի դրսևորմամբ և ոչ թե նրանց կրոնական արարքներով:

4:7-8 Սա մեջբերում է Սաղ. 32:1-2-ից: 7հ-ի բայերը «ներվեցին/թողվեցան» և «ծածկվեցան» ԱՕՐԻՍ ՏԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ: Այստեղ Աստված ենթադրվում է որպես գործող անձ: 8-րդ հ. պարունակում է ուժեղ ԿՐԿՆԱԿԻ ԺԽՏՈՒՄ, որը նշանակում է, որ «ոչ մի հանգամանքներում» մեղքերը չէին մեղսագրվում, հաշվվում, ուշադրության արժանանում: Տես այս մեջբերման մեջ երեք ԲԱՅ-երը, բոլորն էլ մատնանշում են մեղքի վճարումը:

4:7 «որոնց մեղքերը ծածկուեցան» Սա մեջբերում է Սաղ. 32:1-ից: «Ծածկվելու» գաղափարը Իսրայելի զոհաբերության տեսակետի կենտրոնական մասն էր: Աստված մեղքը ծածկելով, Նա դուրս է հանում այն Իր տեսադաշտից (Բրաուն, Դրայվր, Բրիգս, էջ 491): Այս նույն գաղափարը, չնայած «ծածկված» (*caphtar*) եբրայերեն ուրիշ բառ է, օգտագործվում էր Քավության Օր ծեսի ժամանակ (ծածկել), որտեղ արյունը դրվում էր «ողորմության նստարանի» վրա ծածկելու Իսրայելի մեղքերը: Աստվածաշնչյան փոխաբերությունը կլիներ մաքրել/ջնջել կամ ոչնչացնել/ծածկել ինչ որ մեկի մեղքը:

4:8 « Երանի է այն մարդին, որին Տէրը մեղք չի համարիլ» Սա մեջբերում է Սաղ. 32:2: Սա «համարել», «վերագրել» կամ «ինչ որ մեկի հաշվին դնել/ավանդ ներդնել» տերմինն է օգտագործված բացասական իմաստով: Աստված չի վերագրում մեղքը (ԿՐԿՆԱԿԻ ԺԽՏԱԿԱՆ) հավատացյալի հոգևոր բանկի հաշվի վրա; Նա վերագրում է արդարությունը: Սա հիմնված է Աստծո ողորմած էության/կերպարի, պարգևի և որոշման, ոչ թե մարդու կարևորության, նվաճման կամ արժանիքի:

NASB (UPDATED) TEXT: 4:9-12

⁹Is this blessing then on the circumcised, or on the uncircumcised also? For we say, “FAITH WAS CREDITED TO ABRAHAM AS RIGHTEOUSNESS.” ¹⁰How then was it credited? While he was circumcised, or uncircumcised? Not while circumcised, but while uncircumcised; ¹¹and he received the sign of circumcision, a seal of the righteousness of the faith which he had while uncircumcised, so that he might be the father of all who believe without being circumcised, that righteousness might be credited to them, ¹²and the father of circumcision to those who not only are of the circumcision, but who also follow in the steps of the faith of our father Abraham which he had while uncircumcised.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:9-12

⁹Արդ այս երանութիւնը՝ թլփատութեան վերայ է կամ թէ անթլփատութեան վերայ էլ է. որովհետեւ ասում ենք՝ թէ Աբրահամի հաւատքն արդարութիւն համարուեցաւ: ¹⁰Արդ ի՞նչպէս համարուեցաւ. երբոր թլփատութիւնում էր՝ թէ անթլփատութիւնումը. ոչ թէ թլփատութիւնում այլ անթլփատութիւնումը: ¹¹Եւ թլփատութեան նշանն առաւ իբրեւ արդարութեան կնիք այն հաւատքի որ անթլփատութիւնումն էր, որ նա հայր լինի այն ամեն հաւատացեալների՝ որ անթլփատութիւնիցն են՝ որ նորանց էլ համարուի արդարութիւնը: ¹² Եւ թլփատութեան հայր համարուի ոչ միայն նորանց՝ որ թլփատութիւնիցն են, այլ նորանց էլ՝ ար այն հաւատքի հետքովն են գնում, որ մեր հայր Աբրահամն անթլփատութիւնումն ունէր:

4:9-12 Հնարավոր է Պողոսը ներգրավեց այս թլփատության հետ կապված քննարկումը նրա համար, որ հուդայականներն ընդգծում էին փրկության համար թլպատվելու անհրաժեշտությունը (հմմտ. Գաղատացիս գիրքը և Գործք 15 Երուսաղեմի Խորհուրդը):

Պողոսը, վարժված/պատրաստված բաբբիական մեկնաբանությամբ exegesis, գիտեր, որ Ծննդ.15:5 և Սաղ. 32:2 նույն ԲԱՅՆ է հայտնվում (թե եբրայերենում և թե հունարենում): Այս հատվածները միացվել են աստվածաբանական նպատակներով:

4:9 9-րդ հ-ի հարցը ակնկալում է «ոչ» պատասխան: Աստված ընդունում է բոլոր մարդկանց, նույնիսկ հեթանոսներին, հավատքով: Ծննդ. 15:6 մեջբերված է կրկին: Աբրահամը, հրեա ազգի հայրը, արդար համարվեցավ մինչև թլպատվելը:

4:10-11 «Եւ թլփատութեան նշանն առաւ իբրեւ արդարութեան կնիք այն հաւատքի» Աբրահամի կանչվելուց և արդար սեպվելուց հետո, Աստված տվեց նրան թլպատություն, որպես ուխտի նշան (Ծննդ. 17:9-14): Հին Մերձավոր Արևելքի բոլոր մարդիկ թլպատվում էին, բացի փղշտացիներից, ովքեր հունական ծագում ունեին էին Էգեյան կղզիներից: Նրանց համար թլպատությունը ծեսի հաստատում է տղայից տղամարդու փոխվելու: Հրեայի կյանքում դա ուխտին անդամակցելու կրոնական խորհրդանիշ/սիմվոլ էր՝ տղա երեխաների համար ծնվելուց 8 օր հետո:

Այս համարում «նշան» և «կնիք» բառերը զուգահեռներ են և երկուսն էլ վերաբերում են Աբրահամի հավատքին: Թլպատությունը տելանելի նշան էր, որ անձը ունի հավատք առ Աստված: «Հավատքի արդարություն» ՄԵՌԱԿԱՆ ՀՈՒՆՎ արտահայտությունը կրկնվում է 13հ.: Սուրբ Աստծո հետ արդար հոչակվելու բանալին ոչ թե թլպատությունն է այլ հավատքը:

4:11 «որ նա հայր լինի այն ամեն հաւատացեալների՝ որ անթլփատութիւնիցն են» Հռոմեացիս գիրքը գրվել է Գաղատացիս գրքից հետո: Պողոսը շատ զգայուն էր հրեական հակում վստահելու (1) իրենց ռասայական ծագմանը (հմմտ. Մաթ. 3:9; Հովհ. 8:33,37,39) և (2) Մովսեսական ուխտի լայն տարածում ունեցող հրեական մեկնաբանությունների կատարմանը (Բանավոր Ավանդույթը,

կամ ծերերի ավանդույթը, որը ավելի ուշ գրի առնվեց և կոչվեց Թալմուդ): Ուստի նա օգտագործում էր Աբրահամին, որպես օրինակ բոլոր նրանց համար, ովքեր հավատքով (որ նա հայր լինի այն ամեն հաւատացեալների՝ որ անթլիատութիւնիցն են, հմմտ. Գաղ. 3:79):

□ «կնիք» ստորև տես հատուկ թեմա

ՀԱԿՈՒԿ ԹԵՄԱ: ԿՆԻՔ

Աստծո կնիք հասկացողությունը մեզ նորից ուղղում է դեպի Հայտնության գրքի 9:4 և 14:1 և հավանական է 22:4: Սատանայի կնիքի մասին խոսվում է 13:16; 14:9; և 20:4: Կնիքը հնում եղել է վավերացման կերպ

1. ճշմարտության (հմմտ. Հովհ. 3:33)
2. սեփականության (հմմտ. Հովհ. 6:27; II Տիմ. 2:19; Հայտ. 7:2-3)
3. անվտանգության կամ պաշտպանության (հմմտ. Հովհ. 4:15; Մաթ. 27:66; Հն. 15:28; II Կոր. 1:22; Եփ. 1:13; 4:30)
4. սա նաև կարող է Աստծո խոստման կապված Նրա պարզևի հետ նշան լինել (հմմտ. Հն. 4:11 և I Կոր. 9:2).

Այս նշանի նպատակն է ինքնությունը ճանաչել որպես Աստծո ժողովուրդ, որպեսզի Աստծո բարկությունը չհասնի նրանց: Սատանայի կնիքը ցույց է տալիս իր ժողովրդի պատկանելիությունն է, ովքեր ենթակա են Աստծո բարկությանը: Հայտնության գրքում «նեղություն» (այն է, *thlipsis*) երբ միշտ անհավատները հալածում են հավատացյալներին, այն ինչ ցասում/բարկությունը (այն է, *orgē* կամ *thumos*) միշտ Աստծո դատաստանն է անհավատների դեմ, որ նրանք ապաշխարեն և դառնան հավատք առ Քրիստոս: Դատաստանի այս դրական նպատակը շատ լավ երևում է 2Օրին. 27-28-ի անեծքների/օրհնությունների ուխտի մեջ:

«Կենդանի Աստված» արտահայտությունը բառախաղ է հիմնված ՅԱՀՎԵ-ի անվան վրա (հմմտ. Ել. 3:14; Սաղ. 42:4; 84:2; Մաթ. 16:16): Նմանատիպ բառախաղ հաճախ հանդիպում է աստվածաշնչյան երդումների մեջ «կենդանի է Տերը»:

4:12 «որ այն հաւատքի հետքովն են գնում» Սա ռազմական տերմին էր (*stoicheō*) զինվորների համար՝ մեկ շարքով քայլելիս (հմմտ. Գործք 21:24; Գաղ. 5:25; 6:16; Փիլ. 3:16): Այս համարում Պողոսը խոսում է հրեաների մասին («թլիատութեան հայր») ովքեր հավատում են: Աբրահամը բոլոր նրանց հայրն է, ովքեր հավատում են Աստծուն և Նրա խոստումներին:

Կրկնակի ՀՈԴԻ (*tois*) պատճառով հնարավոր է, որ այս երկրորդ տեսակետը («հետևելով ...քայլերին») ավելացնում է ապրելաճի/կյանքի հավատքի գաղափարը (ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՉԵՁՈՔ ՍԵՌ [deponent] ԴԵՐԲԱՅ) և ոչ միայն միայն-մեկ անգամ հավատք: Փրկությունը շարունակական հարաբերություն է, և ոչ թե միայն որոշում կամ ցանկության պահ:

NASB (UPDATED) TEXT: 4:13-15

¹³For the promise to Abraham or to his descendants that he would be heir of the world was not through the Law, but through the righteousness of faith. ¹⁴For if those who are of the Law are heirs, faith is made void and the promise is nullified; ¹⁵for the Law brings about wrath, but where there is no law, there also is no violation.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:13-15

¹³Որովհետև ոչ թե օրէնքովը եղավ Աբրահամին կամ նորա զաւակին այն խոստմունքը թէ նա աշխարհի ժառանգն է, այլ հաւատքի արդարութիւնիցը: ¹⁴Որովհետև եթէ օրէնքից լինողներն են ժառանգ, ապա հաւատքն ունայն էր՝ եւ խոստմունքը կխափանուէր: ¹⁵Որովհետև օրէնքը բարկութիւն է գործում. որովհետև ուր օրէնք չկայ օրինազանցութիւն էլ չկայ:

4:13 «Աբրահամին կամ նորա զաւակին այն խոստմունքը» Աստված խոստացավ «երկիր և սերունդ» Աբրահամին (հմմտ. Ծննդ. 12:1-3; 15:1-6; 17:1-8; 22:17-18): Հին Կտակարանը կենտրոնացավ երկրի վրա (Պաղեստին), բայց Նոր Կտակարանը կենտրոնացավ «սերնդի» վրա (Հիսուս Մեսիան, հմմտ. Գաղ. 3:16,19), սակայն այստեղ «սերունդ» վերաբերում է հավատացյալ ժողովրդին (հմմտ. Գաղ. 3:29): Աստծո խոստումները բոլոր հավատացյալների հավատքի հիմքն է (հմմտ. Գաղ. 3:14,17,18,19, 21, 22,29; 4:28; Եբր. 5:13-18):

«Քէ նա աշխարհքի ժառանգն է» Այս տիեզերական դրույթը/միտքը շատ նշանակալից է Ծննդ. 12:3; 18:18; 22:18 և Ելից. 19:5-6 լույսի մեջ: Աստված կանչեց Աբրահամին կանչելու բոլոր մարդկանց (հմմտ. Ծննդ. 1:26-27; 3:15): Աբրահամն ու իր սերունդները ամբողջ աշխարհի համար պետք է հայտնություն լինեին: Սա Աստծո Թագավորությունը երկրի վրա հասկացողության մեկ ուրիշ ձև է (հմմտ. Մաթ. 6:10):

« ոչ թէ օրէնքովը» Մովսեսական Օրենքը դեռ չէր հայտնվել: Այս արտահայտությունը առաջին անգամ դրվեց հունարեն նախադասության մեջ արտահայտելու համար դրա կարևորությունը: Սա շատ կարևոր միտք էր, որը ընդգծում է տարբերությունը մարդկային ջանքի և աստվածային շնորհքի միջև (հմմտ. 3:21-31): Շնորհքը հնացած օրենքը դարձրել էր փրկության ճանապարհ (հմմտ. Եբր. 8:7, 13): Տես Հատուկ Թեմա: Պողոսի կարծիքները Մովսեսական Օրենքի վերաբերյալ 13:9-ում:

4:14 «եթէ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ, որը ենթադրվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: պողոսն օգտագործում էր այս սարսափելի/զարմանալի դրույթը իր տրամաբանական փաստարկը անելու համար: Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ լավ օրինակ է օգտագործված հռետորությունն ընդգծելու համար: Նա չէր հավատում, որ այս դրույթը ճիշտ է, սակայն հաստատեց այն ցույց տալու համար դրա ակնհայտ մոլորությունը/սխալը (հմմտ. 2h.):

Ռասայական հրեաները թլպատության տեսանելի նշանով չեն ժառանգի աշխարհը սակայն նրանք ովքեր հավատում են Աստծո կամքին և խոսքին նրանք են ժառանգները Ֆիզիկական թլպատությունը ճշմարիտ նշանը չէ, այլ հավատքը (հմմտ. 2:28-29):

Արևելահայերեն «հաւատքն ունայն էր»
Արևմտահայերեն « հաւատքը փուն պիտի ըլլար»

NASB, NKJV “faith is made void”
NRSV “faith is null”
TEV “man’s faith means nothing”
JB “faith becomes pointless”

Սա *kenoō* ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որն ընդգծում է որոշված պայման/վիճակ ուժեղ հունարեն ԲԱՅ-ի, որը նշանակում է «դատարկել,թափվել, դատարկվել», «ցույց տալ, առանց հիմք լինելը », նույնիսկ «կեղծավորություն, նենգություն» (հմմտ. I Կոր. 1:17): Այս տերմինը նաև օգտագործվում է Պողոսի կողմից I Կոր. 1:17; 9:15; II Կոր. 9:3 և Փիլ. 2:7:

**Արևելահայերեն «խոստմունքը կխափանուէր»
Արևմտահայերեն « խոստումը պիտի խափանուէր»**

NASB “the promise is nullified”
NKJV “the promise is made of no effect”
NRSV “the promise is void”
TEV “God’s promise is worthless”
JB “the promise is worth nothing”

Սա նույնպէս ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որն ընդգծում է որոշված պայման/վիճակ հունարեն ուժեղ բայի, որը նշանակում է «դատարկել», «վերացնել/չեղյալ հայտարարել», «վերջանալ», և նույնիսկ « կործանել կամ բնաջնջել, ոչնչացնել»: Այս տերմինը նաև օգտագործվում է Պողոսի կողմից Հռ. 3:3,31; 6:6; 7:2,6; I Կոր. 2:6; 13:8; 15:24,26; II Կոր. 3:7; Գաղ. 5:4; II Թեա. 2:8. Այս համարում կա բացահայտ զուգահեռականություն: Չկան փրկության երկու ճանապարհ: Շնորհքի նոր ուխտը գործերի հին ուխտը դարձրել է անվավեր: Տես Հատուկ Թեմա; Անվավեր 3:3.

4:15 «օրենքը. . . օրենք» Այս տերմինի առաջին օգտագործումը ունի հունարեն ՀՈՒ իսկ երկրորդը չունի: Չնայած, որ վտանգավոր է չափից շատ ուշադրություն գրավել հունարեն ՀՈՒ-ի ներկայությունը կամ բացակայությունը, թվում է թե այս դեպքում օգնել ցույց տալ, որ Պողոսը օգտագործում էր այս տերմինը երկու իմաստով (1) Մովսեսական Օրենքը իր Բանավոր Ավանդույթներով, որտեղ որոշ հրեաներ վստահում էին իրենց փրկությանը և (2) ընդհանուր առմամբ օրենքի գաղափարը: Այս լայնածավալ իմաստը կներգրավի ինքնա-արդար հեթանոսներին, ովքեր համապատասխանում են այս կամ այն մշակույթի էթիկային կամ կրոնական ծեսերին և զգում էին ընդունված աստվածության կողմից հիմնված իրենց գործերի:

«օրենքը բարկութիւն է գործում» Սա ցնցող միտք/դրույթ է (հմմտ. 3:20; Գաղ. 3:10-13; Կող. 2:14): Մովսեսական Օրենքը երբեք չէր նշանակում որպէս փրկության ճանապարհ (հմմտ. Գաղ. 3:23-29): Սա շատ ծանր ճշմարտություն էր հասկանալու կամ ընդունելու համար ցանկացած հրեայի (կամ օրինականի) համար, սակայն սա Պողոսի ապացույցն/փաստարկն է: Տես Հատուկ Թեմա 13:9.

«որովհետեւ ուր ճրէնքը չկայ՝ օրինազանցութիւն էլ չկայ» Աստված հաշվետու է պահում մարդուն իր ունեցած լույսի համար: Հեթանոսները չեն դատվելու Մովսեսական Օրենքով, որը նրանք երբեք չեն լսել: Նրանք հաշվետու էին բնական/բնության հայտնությանը (հմմտ. 1:19-20; 2:14-15):

Այս ճշմարտությունը մեկ քայլ առաջ է տարվում Պողոսի ապացույցի/փաստարկի մեջ այստեղ: Մինչև Աստված հստակ հայտնեց Մովսեսական Օրենքը, Նա չարձանագրեց մարդու օրինազանցությունները (հմմտ. 3:20,25; 4:15; 5:13,20; 7:5,7-8; Գործք 17:30; I Կոր. 15:56):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:16-25

¹⁶Սորա համար հաւատքիցն է, որ շնորհքով լինի. որ խոստմունքը հաստատ լինի ամեն զաւակի համար, ոչ միայն օրէնքիցը լինողի համար, այլ նորա համար էլ որ Աբրահամի հաւատքիցն է, որ մեր ամենի հայրն է: ¹⁷Ինչպէս որ էլ գրուած է, թէ Շատ ազգերի հայր արի քեզ Աստուծոյ առաջին, որին հաւատաց, որ մեռելներին կենդանի է անում՝ եւ չլինող բաները լինողի պէս է կանչում: ¹⁸Որ առանց յոյսի՝ յոյսով հաւատացէ թէ շատ ազգերի հայր կլինի. ինչպէս ասուեցաւ՝ թէ Այնպէս պիտի լինի քո զաւակը: ¹⁹Եւ չտկարացաւ հաւատքով, այսինքն մտիկ չարաւ իր մարմնին որ արդէն մեռած էր, ինքը իբրեւ հարիւրամեայ լինելով, եւ ոչ էլ Սառայի արգանդի մեռած լինելուն: ²⁰Եւ Աստուծոյ խոստմունքի համար չերկմտեց անհաւատութիւնով, այլ զօրացաւ հաւատքով, եւ Աստուծուն փառք տուաւ: ²¹Եւ իր մտքումը համոզուած էր, թէ նա որ խոստացաւ, կարող է եւ անել: ²²Նորա համար էլ արդարութիւն համարուեցաւ նորան: ²³Բայց ոչ միայն նորա համար գրուեցաւ թէ նորան

համարուեցաւ արդարութիւն. ²⁴Այլ մեզ համար էլ, որ մեզ պիտի համարուի, որ հաւատում ենք նորանէ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի յարութիւն տուաւ մեռելներից. ²⁵ Որ մատնուեցաւ մեր յանցանքների համար. եւ յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար:

NASB (UPDATED) TEXT: 4:16-25

¹⁶For this reason it is by faith, in order that it *may be* in accordance with grace, so that the promise will be guaranteed to all the descendants, not only to those who are of the Law, but also to those who are of the faith of Abraham, who is the father of us all, ¹⁷(as it is written, “A FATHER OF MANY NATIONS HAVE I MADE YOU”) in the presence of Him whom he believed, *even God*, who gives life to the dead and calls into being that which does not exist. ¹⁸In hope against hope he believed, so that he might become a father of many nations according to that which had been spoken, “SO SHALL YOUR DESCENDANTS BE.” ¹⁹Without becoming weak in faith he contemplated his own body, now as good as dead since he was about a hundred years old, and the deadness of Sarah’s womb; ²⁰yet, with respect to the promise of God, he did not waver in unbelief but grew strong in faith, giving glory to God, ²¹and being fully assured that what God had promised, He was able also to perform. ²²Therefore also IT WAS CREDITED TO HIM AS RIGHTEOUSNESS. ²³Now not for his sake only was it written that it was credited to him, ²⁴but for our sake also, to whom it will be credited, as those who believe in Him who raised Jesus our Lord from the dead, ²⁵*He* who was delivered over because of our transgressions, and was raised because of our justification.

4:16 Սա Պողոսի փաստարկի գեղեցիկ ամփոփումն է 14h-ից (1) մարդիկ պետք է արձագանքեն հավատքով; (2) Աստծո շնորհքի խոստում; (3) խոստումը որոշակի էր Աբրահամի բոլոր սերունդների համար (հրեա և հեթանոս), որ ցուցաբերում են հավատք; և (4) Աբրահամը օրինակ էր բոլորի համար ովքեր հավատքից են:

«խոստացված» ստորև տես հատուկ թեման

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԱՇԽԻՔ/ ԽՈՍՏՈՒՆՔ

Սա հունարեն *bebaios* տերմինն է, որը ունի երեք լրացուցիչ իմաստներ:

1. որը համոզված, հաստատուն, որոշակի կամ ի վիճակի լինել հավատարու, վստահելու (հմմտ. Հն. 4:16; II Կոր. 1:7; Եբ. 2:20; 3:6,14; 6:19; II Պետ. 1:10,19):
2. գործընթացը, որով ցույց է տրվում կամ հաստատվում ինչ որ բանի վստահության արժանի լինելը (հմմտ. Հն. 15:8; Եբր. 2:2, հմմտ. *Լոու և Նիդա, Նոր Կտակարանի հույն-անգլերեն լեքսիկոն*, Հատոր. 1, էջ. 340,377,670):
3. պապիրուսների մեջ այն դարձավ տեխնիկական տերմին իրավական երաշխիքի համար (հմմտ. Մյուլտոն և Սիլիգան, *Նոր Կտակարանի հունարեն բառարան The Vocabulary of the Greek New Testament*, էջ. 107-8):

Սա 14h-ի հակադրույթն է/հակաթեզիս: Աստծո խոստումները հաստատ են:

«ամեն. . .ամենի» Սա վերաբերվում է բոլոր հավատացյալներին (թե հրեաներից և թե հեթանոսներից):

4:17-23 Պողոսը նորից օգտագործում է Աբրահամին ցույց տալու համար (1) Աստծո նախաձեռնած շնորհքի խոստումներ (ուխտ); և (2) մարդուց պահանջվող սկզբնական հավատք և շարունակական

հավատքի պատասխան (ուխտ) նախապատվությունը: (Տես ծանուցում 1:5.) Ուխտը միշտ ներգավում է երկու կողմերի գործողությունը:

4:17 «Ինչպես որ էլ գրուած է, թէ Շատ ազգերի հայր» Սա մեջբերում է Ծննդ. 17:5. Սեպտուագինը (LXX) ունի «Հեթանոսներ»: Աստված միշտ ցանկացել է Ադամի բոլոր զավակների փրկությունը (հմմտ. Ծննդ. 3:15), և ոչ միայն Աբրահամի զավակների: Աբրամի նոր անունը՝ Աբրահամ նշանակում է «բազմության հայր»: Այժմ մենք գիտենք, որ այն ներգրավում է ոչ միայն ֆիզիկական սերունդներին այլ նաև հավատքի սերունդներին:

«որ մեռելներին կենդանի է անում» Կոնտեքստում սա վերաբերում է Աբրահամի և Սառայի վերածնված/վերականգնված սեռական ուժերին (հմմտ. 19հ.):

«Եւ չլինող բաները լինողի պէս է կանչում» Կոնտեքստում սա վերաբերում է Սառայի հղիությանը Իսահակով, բայց այն նաև ցույց է տալիս հավատքի վճռական տեսակետը (հմմտ. Եբր. 11:1):

4:18

Արևելահայերեն «Որ առանց յոյսի՝ յոյսով հաւատաց»

Արևմտահայերեն «Որ չյուսացուած բանին՝ յուսով հաւատաց»

4:18

NASB “in hope against hope he believed”

NKJV “who, contrary to hope, in hope believed”

NRSV “hoping against hope, he believed”

TEV “Abraham believed and hoped, even when there was no reason for hoping”

NJB “Though there seemed no hope, he hoped and believed”

Հատուկ թեմա «հույս»-ը գտնվում է 12:12: Տերմինն ունի լայն իմաստային դաշտ: Հարող Կ. Մյուլթոն, «*Վերլուծական հունարեն բառարան, վերահրատարակված» The analytical Greek Lexicon Revised*, էջ 133, թվարկված մի քանի կիրառումներ

1. հիմնական իմաստը, հույս (հմմտ. Հն. 5:4; Գործք 24:15)
2. հույսի նպատակը (հմմտ. Հն. 8:24; Գաղ. 5:5)
3. սկզբնաղբյուրի հեղինակը (հմմտ. Կող. 1:27; I Տիմ. 1:1)
4. վստահություն, համարձակություն (հմմտ. I Պետ. 1:21)
5. ապահովություն երաշխիքի հետ (հմմտ. Գործք 2:26; Հն. 8:20)

Այս կոնտեքստում հույսը օգտագործվում է երկու տարբեր իմաստներով: Հույս մարդու ընդունակության և գործության վրա (հմմտ. 19-21հհ.) ի հակադրություն Աստծո խոստման հույսի (հմմտ. 17հ.):

4:18

Արևելահայերեն «Այնպէս պիտի լինի քո զաւակը»

Արևմտահայերեն «Զու սերունդդ այսպէս պիտի ըլլայ»

NASB, NKJV “So shall your descendants be”

NRSV “So numerous shall your descendants be”

TEV “your descendants will be many”

JB “your descendants will be as many as the stars”

Սա մեջբերում է Ծննդ. 15:5, որը ընդգծում էր որդու մասին Աբրահամին տված Աստծո խոստման գրավը (հմմտ. 19-22հհ.): Հիշեք, որ Իսահակը ծնվեց

1. խոստումից 13 տարի անց
2. այն բանից հետո, երբ Աբրահամը փորձեց Սառային կնության տալ (2 անգամ, հմմտ. Ծննդ. 12:10-19; 20:1-7)
3. այն բանից հետո, երբ Աբրահամը Հագարից՝ Սառայի ծառայից որդի ունեցր (հմմտ. Ծննդ. 16:1-16)
4. (4) այն բանից հետո, երբ Սառան (հմմտ. Ծննդ. 18:12) և Աբրահամը (հմմտ. Ծննդ. 17:17) ծիծաղեցին խոստման վրա:

Նրանք չունեին կատարյալ հավատք: Փառք Աստծուն, որ փրկությունը չի պահանջում կատարյալ հավատք, սակայն հատուկ նպատակ (Աստված ՀԿ և Նրա Որդին ՆԿ):

4:20 Սկզբում Աբրահամը ամբողջությամբ չհասկացավ խոստումը, որ երեխան Սառայից կլինի: Նույնիսկ Աբրահամի հավատքը կատարյալ չէր: Աստված ընդունում և գործ է ունենում անկատար հավատքի հետ, որովհետև Նա սիրում է անկատար մարդկանց:

«**չերկմտեց անհաւատքիւնով**» Նույն ԲԱՅ-ը, *diakrinō*, օգտագործում է Հիսուսը Մաթ. 21:21; Մարկ. 11:23: Բոլոր ֆիզիկական պատճառներից ելնելով (հմմտ. 19հ.) Աստծո խոսքը կասկածի ենթարկելու փոխարենը Աբրահամը զորացավ:

Երկու ԲԱՅ-երն էլ 20հ-ում ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ պարունակում Աստծո աջակցությունը, բայց Աբրահամը պետք է թույլ տար, որ Աստծո զորությունը ուժ տար իրեն:

«**Աստուծուն փառք տուա** » Տես Հատուկ Թեմա 3:23.

4:21

Արևելահայերեն «**Եւ իր մտքումը համոզուած էր**»

Արևմտահայերեն «**Եւ իր մտքին մէջ հաստատ պահեց**»

4:21

NASB “being fully assured”

NKJV, NRSV “being fully convinced”

TEV “was absolutely sure”

NJB “fully convinced”

Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ԳԵՐԲԱՅ, որը ցույց է տալիս ամբողջական վստահություն ինչ որ մի բանի (հմմտ. Գուկ. 1:1; Կող. 4:12) կամ ինչ որ մեկի հանդեպ (հմմտ. 4:21; 14:5): ԳՈՅԱԿԱՆ-ը օգտագործվում է ամբողջական վստահությամբ Կող. 2:2 և I Թես. 1:5: Այս վստահությունը Աստծո կամքին, խոսքին և զորությանը ունակ է դարձնում մարդկանց՝ գործել հավատքով:

«**թէ նա որ խոստացաւ, կարող է եւ անել**» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՉԵՉՈՔ ՍԵՌ՝ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որը նշանակում էր մի գործողություն անցյալում հասել է իր վախճանին և արդյուքում ներկա վիճակի մեջ է: Հավատքի էությունն այն է, որ մեկը վստահում է Աստծո էությանն ու խոստումներին (հմմտ. 16:25; Եփ. 3:20; Հուդա 24) և ոչ թե մարդու արաքների (հմմտ. Ես. 55:11): Հավատքը վստահում է խոստումների Աստծուն (հմմտ. Ես. 55:11), որոնք Նա իրականացնում է (Ծննդ. 12:1-3 և 15:6, 12-21; Եզ. 36:22-36):

4:22 Սա ակնարկ է Ճննդ.15:6 (հմմտ. 3հ.), որը Պողոսի փաստարկների բանալի աստվածաբանական միտքն է՝ թե ինչպես է Աստված տալիս Իր արդարությունը մեղավոր մարդկանց:

4:23-25 Հունարենում այս համարները մեկ նախադասություն են: Տեսեք առաջընթացը

1. Աբրահամի համար, 23հ.
2. բոլոր հավատացյալների համար, 24հ.
3. Աստված Հիսուսին հարություն տալով, 24հ.
4. Հիսուս տրվեցավ մեր մեղքերի համար (հմմտ. Հովհ .3:16), Հիսուս հարություն առավ, որ մեր մեղքերը ներվեն (արդարացում), 25հ.:

4:24 Աբրահամի հավատքը դարձավ օրինակ բոլոր ճշմարիտ սերունդների համար, որին պետք է հետևել: Աբրահամը հավատաց Աստծուն՝ խոստացյալ որդու և սերունդների հետ կապված: Նոր Ուխտի հավատացյալները հավատացին, որ Հիսուս Մեսիան Աստծո բոլոր խոստումների՝ տրված ընկած մարդկությանը, իրականացումն է: «զավակ» տերմինը թե եզակի է և թե հոգնակի (որդի, ժողովուրդ):

«հարություն տվեց» նայիր ծանուցում 8:11

4:25 «Որ մատնուեցաւ մեր յանցանքների համար» Սա իրավական տերմին էր, որը նշանակում էր « մեկին հանձնել/տալ պատժի համար»: 25հ-ը հոյակապ Քրիստոլոգիական միտք/դրույթ է Սեպտուագինդումի (LXX) Ես. 53:11-12-ի վերցված:

«յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար» 25հ-ի երկու նախադասությունները զուգահեռներ են (նույն ՆԱԽԴԻՐԸ և երկուսն էլ ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ են): Ֆրենկ Ստեջի թարգմանությունը (*Նոր Կտակարանի Աստվածաբանություն*, էջ 97) «որ մատնուեցաւ մեր յանցանքների համար և յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար» որ էլ ավելի լավ է արտացոլում նրա իմաստը: Այս մեկնաբանությունը/թարգմանությունը ներգրավում է Պողոսի կիրառած «արդարացնել» տերմինի երկու տեսակետերը (1) դատական (իրավական) դիրք/պաշտոն և (2) աստվածահաճո/բարեպաշտ, Քրիստոսանման կյանք:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եր առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞ է Հռոմեացիս գրքի այս բաժինն այսքան կարևոր:
2. Ինչու՞ Պողոսը որպես օրինակ օգտագործեց Աբրահամին և Դավիթին:
3. Սահմանեք հետևյալ բանալի բառերը համաձայն Պողոսի կիրառման (ոչ ձեր սահմանումը):
 - ա. «արդարություն»
 - բ. «համարվել»
 - գ. «հավատք»
 - դ. «խոստում»
4. Ինչու՞ էր թլպատությունն այնքան կարևոր հրեաների համար (9-12 հհ.)
5. Ու՞մ է վերաբերում 13 և 16հհ. «զավակ/ժառանգ» բառը:

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՑԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 5**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Արդարացման արդյունքները	Հավատքի հաղթանակները նեղության մեջ	Արդարացման հետևանքները	Ուղիղ Աստծո հետ	Հավատքը երաշխավորում է փրկություն
5:1-11	5:1-5	5:1-5	5:1-5	5:1-11
	Քրիստոսը մեր փոխարեն			
	5:6-11	5:6-11	5:6-11	
Ադամ և Քրիստոս	Մահ Ադամով Կյանք Քրիստոսով	Ադամ և Քրիստոս; Նմանություն և հակասություն	Ադամ և Քրիստոս	Ադամ և Հիսուս Քրիստոս
5:12-14	5:12-21	5:12-14	5:12-14	5:12-14
			5:14-17	
5:15-21		5:15-17		5:15-21
		5:18-21	5:18-19	
			5:20-21	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ և միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՐՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ

- Ա. 1-11հ. հունարենում մեկ նախադասությունը: Դրանք զարգացնում են Պողոսի «Հավատքով Արդարացում» հիմնական գաղափարը (հմմտ. 3:21-4:25):
- Բ. 1-11հ. հնարավոր ուրվագծերը:

1-5 համարներ	6-8 համարներ	9-11 համարներ
Փրկության օգուտները /շահերը	Հիմքեր փրկության համար	Փրկության վստահություն
Արդարացման օբյեկտիվ դեպքերը	Արդարացման օբյեկտիվ փաստերը	Փրկության վստահություն
Արդարացում	Առաջընթաց սրբացում	Փառավորում
Մարդաբանություն	Աստվածաբանություն	Վախճանաբանություն

Գ. 12-21հ. քննարկում են Հիսուսի որպես երկրորդ Ադամ լինելը (հմմտ. I Կոր. 15:21-22, 45-49; Փիլ. 2:6-8): Այն տալիս է շեշտադրություն թե անձնական մեղքի և թե ընդհանուր հանցանքի աստվածաբանական գաղափարին: Պողոսի զարգացումը/հանդես բերելը մարդկության (և արարչագործության) մեղանչելը Ադամով այնքան եզակի ու տարբեր էր ռաբբիներից, այնինչ նրա մամնավորության տեսակետը շատ էր կապվում ռաբբիական ուսմունքի հետ: Այն ցույց է տալիս Պողոսի կարողությունը ներշնչանքի ներքո կիրառել կամ ավելացնել այն ճշմարտությունները, որը նա սովորել է Երուսաղեմում Գամաղիելի մոտ ուսանելու ժամանակ (հմմտ. Գործք 22:3):

Բարեփոխված Ավետարանական վարդապետությունը բուն մեղքի մասին ճնշող 3 զարգացվել/երևան էր հանվել Օգոստինոսի և Կալվինի կողմից: Սա հիմնականում հաստատում է, որ մարդիկ մեղավոր են ծնվում (ամբողջական կորուստ): Հաճախ Սաղ. 51:5; 58:3; և Հոբ 15:14; 25:4 օգտագործվում են որպես Հին Կտակարանի ապացուցող-տեքստեր: Ընդմիջվող/փոխադարձ աստվածաբանական դիրքն այն է, որ մարդիկ աստիճանաբար սաստկացող բարոյապես և հոգևորապես պատասխանատու են իրենց սեփական ընտրության համար և վիճակը զարգացվեց Պելագոսի և Արմինյուսի կողմից: Կա մի քանի ապացույց նրանց տեսակետի համար 2 Օրին. 1:39; Ես. 7:15; և Հովնան 4:11; Հովհ. 9:41; 15:22,24; Գործք 17:30; Հռ. 4:15: Այս աստվածաբանական դիրքի հարձակումը հետևյալն է, որ երեխաները անմեղ են մինչև իրենց բարոյական պատասխանատվության տարիքը (ռաբբիների համար սա 13տ. տղաների կամ 12տ աղջիկների համար էր):

Կա միջանկյալ դիրք, որտեղ թե բնածին չար հակումը և թե բարոյական պատասխանատվության տարիքը երկուսն էլ ճիշտ են: Չարը ոչ միայն ընդհանուր է, այլ նաև, անհատի եսի զարգացող չար հակում դեպի մեղքը (կյանքը առաջ ընթանալով ավելի ու ավելի է հեռանում Աստծուց): Մարդկության չարությունը չէ հարցը (հմմտ. Ծննդ. 6:5,11-12,13; Հռ. 3:9-18,23), այլ երբ, ծննդով թե ավելի ուշ կյանքում:

- Դ. Եղել են մի քանի թեորիաներ 12հ-ի ենթադրությունների մասին;
1. բոլոր մարդիկ մահանում են, որովհետև բոլոր մարդիկ մեղք են գործում (Պելագոս),

2. Աղամի մեղքը ազդեց ամբողջ արարչագործության վրա և ուստի բոլորը մահանում են (18-19հհ., Օգոստինոս),
3. իրականում հավանական է, որ դա սկզբնական/բուն մեղքի և սեփական մեղքի միացությունն է:

Ե. Պողոսի համեմատությունը «ինչպես» սկսեց 12հ. և չի ավարտվում մինչև 18հ.: 13-17հհ. միջանկյալ բառ/միջախաղի ձև է, որն այնքան բնորոշ է Պողոսի գրվածքներին:

Չ. Հիշիր թե ինչպես է Պողոսը ներկայացնում ավետարանը, 1:18-8:39 մեկ երկարատև փաստարկ է: Ամբողջը պետք է երևա, որպեսզի պատշաճ կերպով մեկնաբանվի և գնահատվի բաժինները/մասերը:

Է. Մարտին Լյութերն ասել է 5-րդ գլխի մասին, «Ամբողջ Աստվածաշնչում դժվար թե կա մի գլուխ, որը կարող է հավասարվել այս հաղթական տեքստին»:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:1-5

¹Արդ մենք՝ հաւատքով արդարացած լինելով Աստուծոյ հետ խաղաղութիւն ունինք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը: ²Որով ընդունեցինք հաւատքով այս շնորհքի մէջ մտնելն էլ, որ նորանում կանգնած ենք, եւ պարծենում ենք Աստուծոյ փառքի յոյսովը: ³Եւ ոչ միայն այսքան, այլ նեղութիւնների մէջ էլ պարծենում ենք. գիտենալով որ նեղութիւնը համբերութիւն է գործում, ⁴Համբերութիւնը՝ փորձառութիւն, փորձառութիւնը՝ յոյս. ⁵Յոյսն էլ չէ ամաչեցնում. որովհետեւ Աստուծոյ սէրը փռուած է մեր սրտերի մէջ Սուրբ Հոգու ձեռովը՝ որ տրուեցավ մեզ:

NASB (UPDATED) TEXT: 5:1-5

¹Therefore, having been justified by faith, we have peace with God through our Lord Jesus Christ, ²through whom also we have obtained our introduction by faith into this grace in which we stand; and we exult in hope of the glory of God. ³And not only this, but we also exult in our tribulations, knowing that tribulation brings about perseverance; ⁴and perseverance, proven character; and proven character, hope; ⁵and hope does not disappoint, because the love of God has been poured out within our hearts through the Holy Spirit who was given to us.

5:1 «Արդ» Այս բառը հաճախ ազդանշան էր տալիս (1) աստվածաբանական փաստարկի ամփոփումը մինչև այս պահը; (2) եզրակացություններ հիմնված այս աստվածաբանական ներկայացման վրա; և (3) նոր ճշմարտության ներկայացում (հմմտ. 5:1; 8:1; 12:1):

«արդարացած լինելով» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ԴԵՐԲԱՅ է; Աստված արդարացրել է հավատացյալներին: Հունարեն նախադասության մեջ (հհ. 1-2) այս արտահայտությունը տեղադրված է սկզբում միտքն ավելի ընդգծելու համար: 1-11հհ-ում թվում է թե կա ժամանակի համաձայնեցում; (1) հհ. 1-5, մեր ընթացիկ շնորհքի փորձառությունը մեր կյանքում; (2) հհ. 6-8, Քրիստոսի կատարած և ավարտած գործը ի օգուտ մեզ; և (3) հհ. 9-11, մեր ապագա հույսը և փրկության վստահությունը:

«արդարացված» (*dikaioō*) բառի հիմնկտակարանային արմատը «ուղիղ եզր, սահման» կամ «չափող եղեգ» էր նշանակում: Այն դարձավ փոխաբերություն և օգտագործվեց Աստծո համար:

Աստծո կերպարը, սրբությունը ահա սա է դատաստանի միակ չափանիշը (հմմտ. LXX of Ղև. 24:22; և աստվածաբանորեն Մաթ. 5:48): Հիսուսի գոհաբերական, փոխանող մահվան շնորհիվ հավատացյալներն ունեն օրինական (դատական) դիրք Աստծո առաջ (տես ծանուցում 5:2): Բայց սա չի նշանակում, որ հավատացյալի հանցանքը քիչ է, այլ սա ավելի նման է ներման/ամնիստիայի: Ինչ որ մեկը վճարել է պատժի գինը (հմմտ. II Կոր. 5:21): Հավատացյալները ներված են հռչակվել:

«հավատքով» Հավատքն այն ձեռքն է, որն ընդունում է Աստծո պարզը (հմմտ. 2հ.; Հռ. 4:1): Հավատքը չի կենտրոնանում հավատացյալի աստիճանի կամ նվիրվածության կամ վճռականության (հմմտ. Մաթ. 17:20), այլ Աստծո կերպարի և խոստումների վրա (հմմտ. Եփ. 2:8-9): Հին Կտակարանի «հավատք» բառը բնագրում վերաբերում էր հաստատ կանգնած մնալուն: Այն կարող է օգտագործվել փոխաբերականորեն մեկի համար, որը հավատարիմ էր, հուսալի և վստահելի: Հավատքը չի կենտրոնանում մեր հավատարմության կամ արժանի լինելու վրա, այլ Աստծո:

«խաղաղություն ունինք» Այստեղ հունարեն ձեռագրի տարբերակն է: Այս ԲԱՅ-ը կամ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (*echōmen*) կամ էլ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ (*echomen*): Այս նույն քերականական անորոշությունը գտնվում է հհ. 1, 2 և 3: Հին հունարեն ձեռագրերը հակված են ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ-ի տարբերակին (հմմտ. MSS Ռ*, A, B*, C, D): Եթե այն ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ-ով է ապա արտահայտությունը պետք է թարգմանվի այսպես «եկեք շարունակենք վայելել խաղաղությունը» կամ «շարունակենք վայելել խաղաղությունը»: Իսկ եթե սա ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ-ով է, ապա պետք է թարգմանվի «մենք ունենք խաղաղություն»: 1-11 հհ. կոնտեքստը ցույց է տալիս, որ սա քարոզ չէ կամ կոչ, այլ հռչակում այն բանի, ինչ արդեն ունեն հավատացյալներ Քրիստոսով: Ուստի ԲԱՅ-ը հավանական է ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է «մենք ունենք խաղաղություն»: USB⁴ թարգմանությունը այս տարբերակը հաշվում է որպես “A” (հավանական):

Մեր ունեցած հին հունարեն ձեռագրերից շատերն այսպես են ստեղծվել, մեկը կարդացել է տեքստը, իսկ մի քանի հոգի լսելով գրել են: Այդ իսկ պատճառով բառերը, որոնք նույն ձևով են հնչել, շատ անգամ շփոթել են: Այսպիսի դեպքերում կոնտեքստը, և երբեմն հեղինակի գրելաոճը և օգտագործված բառապաշարն օգնում է թարգմանչին ճիշտ որոշում կայացնել:

«խաղաղություն» Տես Հատուկ Թեմա ներքևում

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Բնագրում հունարեն այս տերմինը նշանակում էր «միասին կապել այն, ինչը կոտրված էր» (հմմտ. Հովհ. 14:27; 16:33; Փիլ. 4:7): Նոր Կտակարանում խոսվում է խաղաղության երեք իմաստների մասին

1. որպես օբյեկտիվ կողմ, մեր խաղաղությունը Աստծո հետ Քրիստոսի միջոցով (հմմտ. Կող. 1:20)
2. որպես սուբյեկտիվ կողմը մեր ուղիղ լինելը Աստծո առաջ (հմմտ. Հովհ. 14:27; 16:33; Փիլ. 4:7)
3. որ Աստված միավորել է մեկ նոր մարմնում, Հիսուս Քրիստոսի միջոցով, թե հավատացյալ հրեաներին և թե հույներին (հմմտ. Եփ. 2:14-17; Կող. 3:15):

«Խաղաղություն» բառի հետ կապված կա լավ մեկնաբանություն Նյումանի և Նիդայի գրքում «Թարգմանիչի տեղեկատու/ձեռնարկ Newman and Nida, *A Translator's Handbook on Paul's Letter to the Romans*, p. 92:

«Թե Հին և թե Նոր Կտակարանում «խաղաղություն» բառը ունի շատ լայն իմաստային նշանակություն: Հիմնականում այն նկարագրում է մարդկային կյանքի բարեկեցությունը;

սա նաև որդեգրվեց հրեաների կողմից որպես ողջյունի ձև: Այս բառն ուներ այնքան խորը իմաստ, որ կարող էր օգտագործվել նաև հրեաների կողմից՝ Մեսիական փրկությունը նկարագրելու համար: Այդ իսկ պատճառով եղել են ժամանակներ, երբ այն նաև օգտագործվել է որպես հոմանիշ «Աստծո հետ ճիշտ հարաբերություն ունենալ» տերմինի: Այստեղ տերմինը հանդես է գալիս որպես ներդաշնակ հարաբերության նկարագրություն՝ հաստատված մարդու և Աստծո միջև ընկած այն հիմքի վրա, որ Աստված մարդուն Իր առջև արդար կանգնեցրեց»:

«Աստուծոյ հետ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը» Հիսուսն է, որ խաղաղություն է բերում Աստծո հետ: Նա է միակ խաղաղության ճանապարհն Աստծո հետ (հմմտ. Հովհ. 10:7-8; 14:6; Գործք 4:12; I Տիմ. 2:5): Ինչ վերաբերվում է «Հիսուս Քրիստոս» անվան իմաստի հետ նայիք ծանուցում 1:4:

5:2 «Որով ընդունեցինք մտնելն էլ» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ; սա խոսում է այն մասին, որ գործողությունը կատարվել է անցյալում, իսկ արդյունքը շարունակում է տեղ գտնել նաև ներկայում: «Մտնել» տերմինը բառացի նշանակում էր «մուտքի իրավունք» կամ «թույլատրել, մուտք» (*prosagōge*, հմմտ. Եփ. 2:18; 3:12): Փոխաբերականորեն այն օգտագործվում էր որպես (1) անձնապես ներկայացվել թագավորական իշխանությանը կամ (2) ապահով նավահանգիստ բերվել/հասցվել:

Այս արտահայտությունը պարունակում է հունարեն ձեռագրի թարգմանության տարբերակ: Որոշ վաղ ձեռագրեր ավելացրել են «հավատքով» բառը (հմմտ. Ք^{*2}, C ինչպես նաև որոշ հին լատիներեն, Վուլգատը, սիրիական և Գլադի տարբերակները): Ուրիշ ձեռագրերում «հավատքով» բառին նաև ավելացված է ՆԱԽԴԻՐ (հմմտ. Ք¹, A, և մի քանի Վուլգատի տարբերակներ): Ինչևէ, երկաթագիր ձեռագրերում B, D, F, և G բացակայում է թե նա և թե սա: Թվում է, թե դպիրները պարզապես այս արտահայտությունը դրել են որպես զուգահեռ 5:1 և 4:16 (երկու անգամ), 19, և 20: «Հավատքով» սա մի թեմա է որին մշտապես անդրադառնում է Պողոս առաքյալը:

«այս շնորհքի մեջ» Այս տերմինը (*charis*) նշանակում է Աստծո անարժան, առանց ինչ որ պայմանի սեր մարդու հանդեպ, որը երբեք արժանի չի եղել դրան (հմմտ. Եփ. 2:4-9): Սա հստակ երևում է Քրիստոսի մահվան մեջ ի օգուտ մեղավոր մարդկության (հմմտ. 8h.):

«որ նորանում կանգնած ենք» Սա մեկ ուրիշ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ; բառացի «մենք կանգնած ենք և շարունակում ենք կանգնել»: Սա անդրադարձնում է հավատացյալների աստվածաբանական դիրքը Քրիստոսում և իրենց կատարումը մնալ հավատքի մեջ, որը միացնում է Աստծո սուվերենության աստվածաբանական պարադոքսը (հմմտ. I Կոր. 15:1) և մարդու ազատ կամքը (հմմտ. Եփ. 6:11, 13,14):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԱՆԳՈՒՆ» ՀԱՍՏԱՏ (HIST:MI)

Այս հասարակ տերմինը օգտագործվում է մի քանի աստվածաբանական իմաստներով Նոր Կտակարանում

1. հաստատել
 - ա. Հին Կտակարանի Օրենքը, Հռ. 3:31
 - բ. որևէ մեկի արդարությունը, Հռ. 10:3
 - գ. նոր ուխտը, Եբր. 10:9
 - դ. ղեկավարություն/խնամք, II Կոր. 13:1
 - ե. Աստծո ճշմարտությունը, II Տիմ. 2:19
2. հոգևորապես դեմ կենալ/դիմադրել
 - ա. չարը, Եփ. 6:11
 - բ. դատաստանի օրը, Հայտ. 6:17

3. դիմադրել՝ կանգնելով ինչ որ մեկի տեսակետի վրա
 ա. ռազմական փոխաբերություն, Եփ. 6:14
 բ. քաղաքացիական փոխաբերություն, Հռ. 14:4
4. դիրք ճշմարտության մեջ, Հովհ. 8:44
5. դիրք շնորհքի մեջ
 ա. Հռ. 5:2
 բ. I Կոր. 15:1
 գ. I Պետ. 5:12
6. դիրք հավատքի մեջ
 ա. Հռ. 11:20
 բ. I Կոր. 7:37
 գ. I Կոր. 15:1
 դ. II Կոր. 1:24
7. ամբարտավանության դիրք, I Կոր. 10:12

Այս տերմինը արտահայտում է թե շնորհքի ուխտը և թե սուվերեն Աստծո ողորմածությունը և այն փաստը, որ հավատացյալները պետք է արձագանքեն դրան և կառչել դրանից հավատքով: Երկուսն էլ աստվածաշնչյան ճշմարտություններ են: Դրանք պետք է միասին վերցնել:

«պարծենում ենք/հրճվել» Այս քերականական ձևը կարող է հասկացվել որպես (1) ՆԵՐԿԱ ԺԱՍՆԱԿ ՉԵԶՈՔ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, «մենք հրճվում ենք/պարծենում» կամ (2) ՆԵՐԿԱ ԺԱՍՆԱԿ ՉԵԶՈՔ ՍԵՌ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, «եկեք հրճվենք/պարծենանք»: Գիտնականները բաժանվում են այս տարբերակների միջև: Եթե մեկը վերցնում է «մենք ունենք» 1h-ում որպես ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, ուրեմն թարգմանությունը պետք է համատեղվի/հաստատվի 3h. միջոցով:

Բառի արմատը «հրճվել» «պարծենալն» է (NRSV, JB): Տես Հատուկ Թեմա 2:17: Հավատացյալները չեն հրճվում/պարծենում իրենք իրենցով (հմմտ. 3:27), այլ այն բանով, ինչ Տերն արել է նրանց համար (հմմտ. Եր. 9:23-24): Այս նույն հունարեն արմատը կրկնվում է 3 և 11հհ..

«հոյսովը» Պողոսը հաճախ օգտագործում էր այս տերմինը մի քանի տարբեր բայց իրար հետ կապված իմաստներով: Տես ծանուցում 4:18: Հաճախ այն զուգորդվում էր/միավորվում էր հավատացյալի հավատքի իրագործման/վախճանի հետ: Սա կարող է արտահայտվել որպես փառք, հավիտենական կյանք, վերջնական փրկություն, Երկրորդ Գալուստ և այլն: Վախճանը/իրականացումը անտարակուսելի է, բայց ժամանակի տարրը գալիքում է և անհայտ: Այն հաճախ զուգորդվում էր/միավորվում էր «հավատք» և «սիրո» հետ (հմմտ. I Կոր. 13:13; Գաղ. 5:5-6; Եփ. 4:2-5; I Թես. 1:3; 5:8); Պողոսի մի քանի կիրառման մասնակի ցանկը .

1. Երկրորդ Գալուստը, Գաղ. 5:5; Եփ. 1:18; Տիտոս 2:13
2. Հիսուս մեր հույսն է, I Տիմ. 1:1
3. Հավատացյալը ներկայացվում է Աստծո առաջ, Կող. 1:22-23; I Թես. 2:19
4. Հույսը պահվում է/դիզվում է երկնքում, Կող. 1:5
5. Վերջնական փրկություն, I Թես. 4:13
6. Աստծո փառքը, Հռ. 5:2; II Կոր. 3:12; Կող. 1:27
7. Քրիստոսով հեթանոսների փրկությունը, Կող. 1:27
8. Փրկության վստահություն, I Թես. 5:8-9
9. Հավիտենական կյանք, Տիտոս 1:2; 3:7
10. Քրիստոնեական հասունության արդյունքները, Հռ. 5:2-5
11. Ամբողջ արարչագործության ազատագրումը, Հռ. 8:20-22
12. Անուն/տիտղոս Աստծո համար, Հռ. 15:13

13. Որդեգրության ավարտում, Հռ. 8:23-25
14. Հին Կտակարանը որպես ուղեցույց Նոր Կտակարանի հավատացյալների համար, Հռ. 15:4
15. Պողոսի փափագը բոլոր հավատացյալների համար, I Կոր. 1:7

«Աստուծոյ փառքը» Սա վերաբերում էր հավատացյալներին որոնք կանգնած են Աստծո առաջ հավատքով արդարացած Հիսուսի կողմից Հարության Օրը (հմմտ. II Կոր. 5:21): Սա հաճախ կոչվում է աստվածաբանական «փառավորում» տերմինով (հմմտ. vv. 9-10; 8:30): Հավատացյալները կրաժնեկցեն Հիսուսի նմանությանը (հմմտ. I Հովհ. 3:2; II Պետ. 1:4): Տես Հատուկ Թեմա: Փառք 3:23:

Արևելահայերեն «Եւ ոչ միայն այսքան, այլ»
Արևմտահայերեն «Ոչ միայն այսքան, հասպա»

5:3

- NASB** “and not only this, but”
- NKJV** “and not only *that*, but”
- NRSV** “and not only *that*, but”
- TEV** –omit–
- NJB** “not only *that*”

Պողոսն օգտագործում է տերմինների այս միացությունը մի քանի անգամ (հմմտ. 5:3,11; 8:23; 9:10, և II Կոր. 8:19):

Արևելահայերեն «նեղութիւնների մէջ էլ պարծենում ենք.»
Արևմտահայերեն « նաեւ նեղութիւններու մէջ կը պարծինք»

□

- NASB** “we also exult in our tribulations”
- NKJV** “we also glory in tribulations”
- NRSV** “we also boast in our sufferings”
- TEV** “we also boast in our troubles”
- NJB** “let us exult, too, in our hardships”

Եթե աշխարհն ատեց Հիսուսին, այն կատի նաև Իր հետևորդներին (հմմտ. Մաթ. 10:22; 24:9; Հովհ. 15:18-21): Հիսուսը հասունացավ/կատարելության հասավ, մարդկայնորեն ասած, այն քաներով որով Նա տառապեց (հմմտ. Եր. 5:8): Տառապանքը բերում է արդարություն, որը Աստծո ծրագիրն է ամեն մեկ հավատացյալի համար (հմմտ. 8:17-19; Գործք 14:22; Հակ. 1:2-4; I Պետ. 4:12-19):

«գիտենալով» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԳԵՐԲԱՅ է “*oida*.” Սա ժամանակով ՎԱՂԱԿԱՏԱՐ է, սակայն գործում է որպես ՆԵՐԿԱ ԺԱՍՆԱԿ: Հավատացյալների հասկացողությունը ավետարանի ճշմարտությունների վերաբերյալ՝ կապված տառապանքի հետ, թույլ է տալիս նրանց նայել կյանքին ուրախությամբ և վստահությամբ, որը կախված չէ հանգամանքներից, նույնիսկ հալածանքի ժամանակ (հմմտ. Փիլ. 4:4; I Թես. 5:16,18):

5:3,4 «համբերութիւն» Այս տերմինը նշանակում է «հոժարակամ/միտումնավոր», «ակտիվ/եռանդուն», «կայուն/անասասան», «համբերատարություն/դիմացկունություն»: Սա այն տերմինն էր, որը վերաբերում էր թե համբերություն մարդկանց հետ և թե նաև հանգամանքների հետ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆԵՂՈՒԹՅՈՒՆ

Պետք է որ աստվածաբանական տարբերություն լինի այս տերմինի (*thlipsis*) Պողոսի օգտագործման և Հովհաննեսի միջև:

1. Պողոսի կիրառումը (որը արտացոլում է Հիսուսի կիրառումը)
 - ա. խնդիրներ, տառապանքներ, չարը ներգրավված է մեղավոր/ընկած աշխարհում
 - (1) Մաթ. 13:21
 - (2) Հն. 5:3
 - (3) I Կոր. 7:28
 - (4) II Կոր. 7:4
 - (5) Եփ. 3:13
 - բ. խնդիրներ, տառապանքներ, չարիք պատճառվածանհավատների կողմից
 - (1) Հն. 5:3; 8:35; 12:12
 - (2) II Կոր. 1:4,8; 6:4; 7:4; 8:2,13
 - (3) Եփ. 3:13
 - (4) Փիլ. 4:14
 - (5) I Թես. 1:6
 - (6) II Թես. 1:4
 - գ. խնդիրներ, տառապանքներ, վերջին ժամանակի չարը
 - (1) Մաթ. 24:21,29
 - (2) Մարկ. 13:19,24
 - (3) II Թես. 1:6
2. Հովհաննեսի կիրառումը
 - Ա. Հովհաննեսը դնում է ուրույն տարբերություն *thlipsis* և *orgē* կամ *thumos* (բարկություն) միջև Հայտնության գրքում: *Thlipsis* այն է, ինչ անհավատներն անում են հավատացյալներին իսկ *orgē* այն է ինչ Աստված է անում անհավատներին:
 - (1) *thlipsis* – Հայտ. 1:9; 2:9-10,22; 7:14
 - (2) *orgē* – Հայտ. 6:16-17; 11:18; 16:19; 19:15
 - (3) *thumos* – Հայտ. 12:12; 14:8,10,19; 15:2,7; 16:1; 18:3
 - Բ. Հովհաննեսը նաև օգտագործում է տերմինը իր Ավետարանում արտացոլելով այն խնդիրները, որ հավատացյալներն հանդիպում էին ամեն ժամանակ– Հովհ. 16:33

5:4

Արևելահայերեն «փորձառութիւն»

Արևմտահայերեն «փորձառութիւն»

5:4

NASB “proven character”

NKJV, NRSV “character”

TEV “God’s approval”

NJB “tested character”

LXX-ի մեջ Ծննդ. 23:16; 3 Թագ. 10:18; I Մնաց. 28:18 այս տերմինը օգտագործվում էր մետաղների մաքրությունը և իսկականը փորձելու համար (հմմտ. II Կոր. 2:9; 8:2; 9:13; 13:3; Փիլ. 2:22; II Տիմ. 2:15; Հակոբոս 1:12): Աստծո փորձարկումները ուժեղանալու համար (հմմտ. Եբր. 12:10-11): Տես Հատուկ Թեմա: Փորձել 2:18.

5:5 «որովհետև Աստուծոյ սերը փռուած է մեր սրտերի մէջ» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, բառացիորեն, «Աստծո սերը եղել և

շարունակվում է թափվել»: Այս ԲԱՅ-ը հաճախ օգտագործվել է Սուրբ Հոգու համար (հմմտ. Գործք 2:17,18,33; 10:45 և Տիտոս 3:6), որը կարող է արտացոլել Հովել 2:28-29:

ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ «Աստծո սերը» արտահայտությունը, քերականորեն կարող է վերաբերել (1) մեր սերը Աստծո հանդեպ; կամ (2) Աստծո սերը մեր հանդեպ (հմմտ. II Կոր. 5:14): Երկրորդը միակ կոնտեքստուալ տարբերակն է:

«Սուրբ Հոգու ձեռովը՝ որ տրուեցաւ մեզ» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ-ԳԵՐԲԱՅ: Հաճախ օգտագործվում է ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ- արտահայտելու համար Աստծո աջակցությունը/միջնորդությունը: Սա նշանակում է, որ հավատացյալները կարիք չունեն ավելին Հոգուց: Կամ նրանք ունեն Հոգին կամ էլ նրանք քրիստոնեաներ չեն (հմմտ. 8:9): Սուրբ Հոգու տրվելը Նոր Գարի նշանն էր (հմմտ. Հովել 2:28-29), Նոր Ուխտը (հմմտ. Եր. 31:31-34; Եզ. 36:22-32):

Այս բաժնում տես Երրորդության երեք անձերի ներկայությունը

1. Աստված, 1,2,5,8,10hh.
2. Հիսուս, 1,6,8,9,10hh.
3. Հոգին, 5h.

Տես Հատուկ Թեմա: Երրորդությունը 8:11.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:6-11

⁶Որովհետև երբոր մենք դեռ տկար էինք՝ Քրիստոսը մեզ համար իր ժամանակումն ամբարիշտների տեղ մեռաւ: ⁷Վասնզի հազիւ թէ մի արդարի համար մէկը մեռնի. (բայց մի բարի մարդի համար իցէ թէ մէկը համարձակի մեռնիլ.) ⁸Բայց Աստուած յայտնեց իր սէրը դէպի մեզ, որ՝ երբոր մենք դեռ մեղաւոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռաւ. ⁹Ապա ո՞րքան ատելի հիմա, որ արդարացանք նորա արհունովը կփրկուինք նորանով բարկութիւնիցը: ¹⁰Որովհետև թէ որ դեռ թշնամի էինք, Աստուծոյ հետ հաշտուեցանք նորա Որդու մահովը, ո՞րքան ատելի որ հաշտուած ենք, կապրինք նորա կեանքովը: ¹¹Եւ ոչ միայն այսքան. այլ Աստուծով էլ պարծենում ենք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը, որով հիմա հաշտութիւնն ընդունեցինք:

NASB (UPDATED) TEXT: 5: 6-11

⁶For while we were still helpless, at the right time Christ died for the ungodly. ⁷For one will hardly die for a righteous man; though perhaps for the good man someone would dare even to die. ⁸But God demonstrates His own love toward us, in that while we were yet sinners, Christ died for us. ⁹Much more then, having now been justified by His blood, we shall be saved from the wrath of God through Him. ¹⁰For if while we were enemies we were reconciled to God through the death of His Son, much more, having been reconciled, we shall be saved by His life. ¹¹And not only this, but we also exult in God through our Lord Jesus Christ, through whom we have now received the reconciliation.

5:6

Արևելահայերեն «Որովհետև երբոր մենք դեռ տկար էինք»

Արևմտահայերեն «Վասնզի երբ մենք դեռ տկար էինք»

5:6

NASB “for while we were still helpless”

NKJV “for when we were still without strength”

NRSV “for while we were still weak”

TEV “for when we were still helpless”

NJB “when we were still helpless”

Այս արտահայտության մեջ ԲԱՅ-ը ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ԳԵՐԲԱՅ է: Այսբաների իմաստը վերաբերում էր ընկած/մեղավոր մարդկության Ադամական բնությանը: Մարդիկ անգոր են մեղքի դեմ: «Մենք» դերանունը բացատրում և զուգահեռ է տանում համեմատական ԳՈՅԱԿԱՆ-ների հետ հ. 6 «ամբարիշտ», հ. 8 «մեղավորներ» և հ. 10 «թշնամիներ»: 6 և 8հհ. աստվածաբանորեն և կառուցվածքով զուգահեռ են:

Արևելահայերեն «իր ժամանակումն»

Արևմտահայերեն «յարմար ժամանակին»

□

NASB, NRSV “at the right time”

NKJV “in due time”

TEV “at the time that God chose”

JB “at his appointed moment”

Պատմական առումով սա կարող էր վերաբերել (1) Հռոմեական կայսրության մեջ տիրող խաղաղ իրավիճակին, որը թույլ էր տալիս ազատ ճամփորդել; (2) Հունարեն լեզվին, որը հաղորդակցության միջոցն էր միջնակույթների միջև; և (3) Հունա-հռոմեական աստվածների նախկին ազդեցիկ դիրքի վախճանին, որը մարդկանց մեջ հոգևոր կարիք սոված էր բերել աշխարհում (հմմտ. Մարկ. 1:15; Գաղ. 4:4; Եփ. 1:10; Տիմ. 1:3): Աստվածաբանորեն մարմնացումը պլանավորված, աստվածային իրադարձություն էր (հմմտ. Ղուկ. 22:22; Գործք 2:23; 3:18; 4:28; Եփ. 1:11):

5:6,8,10 «ամբարիշտների տեղ մեռալ» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Սա ստիպում է նայել Հիսուս Քրիստոսի կյանքին ու մահվանը որպես միավորված/մեկ իրադարձություն: «Հիսուս վճարեց պարտքը, որը Իրենը չէր և մենք էինք պարտք, որը չէինք կարող վճարել» (հմմտ. Գաղ. 3:13; I Հովհ. 4:10):

Քրիստոսի մահը հաճախակի հանդիպող թեման է Պողոսի գրվածքներում: Նա օգտագործում էր մի քանի տարբեր տերմիններ և արտահայտություններ, երբ խոսում էր Հիսուսի փոխանորդ մահվան մասին:

1. «արյուն» (հմմտ. 3:25; 5:9; I Կոր. 11:25,27; Եփ. 1:7; 2:13; Կող. 1:20)
2. «Իր անձը տվեց» (հմմտ. Եփ. 5:2,25)
3. “մատնվեցավ» (հմմտ. Հռ. 4:25; 8:32)
4. «զոհ, զոհաբերել» (հմմտ. I Կորն. 5:7)
5. «մեռավ» (հմմտ. Հռ. 5:6; 8:34; 14:9,15; I Կորն. 8:11; 15:3; II Կորն. 5:15; Գաղ. 5:21; I Թես. 4:14; 5:10)
6. «խաչ» (հմմտ. I Կորն. 1:17-18; Գաղ. 5:11; 6:12-14; Եփ. 2:16; Փիլ. 2:8; Կող. 1:20; 2:14)
7. «խաչելություն» (հմմտ. I Կորն. 1:23; 2:2; II Կորն. 13:4; Գաղ. 3:1)

Գոյություն ունեցող *hyper* ՆԱԽԳԻՐԸ այս կոնտեքստում նշանակում է

1. ներկայացուցչություն «ի օգուտ մեզ»
2. փոխանորդ/փոխարինում «մեր փոխարեն»

Որպես կանոն *hyper* հիմնական իմաստը դրված ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ-ով ստանում է հետևյալ իմաստը «մեր անունից, հանուն, ի սեր» (Լոուր և Նիդա): Այն արտահայտում է որոշ առավելություն, որը բաժին է հասնում մարդկանց (Նոր Կտակարանի աստվածաբանության Նոր միջազգային բառարան, հատ. 3, էջ 1196; *The New International dictionary of New Testament Theology*, vol. 3, p. 1196): Ինչևէ, իրականում *hyper* ունի *anti* իմաստ, որը նշանակում է «փոխարեն» և այդ կերպ աստվածաբանորեն սա վերաբերվում է քավչարար և փոխարինող

գոհաբերությանը (հմմտ. Մարկ. 10:45; Հովհ. 11:50; 18:14; II Կոր. 5:14; I Տիմ. 2:6). Մ. Ջ. Հարիս «ՆԿԱՆՍԲ», հատ.3, էջ 1197; M. J. Harris (*NIDNTT*, vol. 3, p. 1197) գրում է, «...բայց ինչու Պողոսն երբեք չի ասում, որ Հիսուսը մեռավ *anti hēmōn* (I Տիմ. 2:6 նա օգտագործում է ամենամոտ տարբերակը—*antilytron hyper pantōn*): Հնարավոր է որովհետև *hyper* նախդիրը ի տարբերություն *anti*-ին կարող էր միառժամանակ արտահայտել ներկայացուցչություն և փոխարինում»:

Մ. Ռ. Վինսենտը «Բառային սերտողություններ» գրքում, հատ. 2; M. R. Vincent, *Word Studies*, vol. 2, ասում է

«Սա բավականին վիճելի հարց է, լինում են երբևէ դեպքեր, երբ *hyper* «անունից, ի օգուտ, ի սեր» հավասարագոր է/համարժեք *anti*-ին «փոխարեն»։ Դասական գրողները ներկայացնում են բավականին օրինակներ այնպիսի բառերով, որոնք իրենց իմաստով փոխարնվող են։ Այս հատվածի իմաստն, ինչևէ, այնքան անորոշ է, որ այն չի կարող ծառայել որպես օրինակ/փաստ։ Նախդիրը կարող է ունենալ և տեղային իմաստ «վրա, վրայով» մեռածի։ Այս մոտեցումներից ոչ մեկն էլ չի կարող բավարար վստահելի լինել։ Ամենաշատը, որ կարող ենք ասել հետևյալն է, որ *hyper* սահմանափակում է *anti*-ի իմաստը։ «Փոխարեն» իմաստն ավելի շատ ունի դոգմատիկ հիմքեր։ Հատվածների մեծամասնության մեջ իմաստը բավականին պարզ է «*անունից, անունով, ի օգուտ, ի սեր*»։ Թվում է, թե ճիշտ բացատրությունը կլինի այն, որ այսպիսի հատվածներում, որտեղ, հիմնականում խոսքը գնում է Քրիստոսի մահվան մասին, ինչպես օրինակ, Գաղ. 3:13; Հռ. 14:15; I Պետ. 3:18, *hyper* արտահայտում է էլ ավելի հստակ և ընդհանուր հիմնավորում – Քրիստոս մեռավ հանուն – թողնելով ուրույն իմաստ «հանուն, ի սեր» անորոշ և որ պետք է հաստատվի ուրիշ հատվածների միջոցով։ Դրան կարելի է ներառել «փոխարեն» իմաստը, բայց միայն տրամաբանական հետևությանը» (էջ 692):

5:7 Այս համարը ցույց է տալիս մարդկային սերը, իսկ համար 8 ցույց է տալիս Աստծո սերը:

Արևելահայերեն «մի արդարի համար»

Արևմտահայերեն «արդարի մը համար»



NASB, NKJV,

TEV “for a righteous man,”

NRSV “for a righteous person,”

JB “for a good man,”

Այս տերմինը նույն իմաստով օգտագործվում է Նոյին և Հոբին նկարագրելիս, որպես արդար և անմեղ մարդիկ։ Նրանք հետևեցին իրենց օրերի կրոնական պահանջներին։ Բայց սա չի նշանակում, որ նրանք մեղավորներ չէին։ Տես հատուկ թեմա 1:17.

5:8 «Աստուած յայտնեց իր սերը» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (հմմտ. 3:5): Հայրն ուղարկեց Որդուն (հմմտ. 8:3,32; II Կոր. 5:19): Աստծո սերը դյուրագայուն/սենտիմենտալ չէ, այլ կենտրոնացված է գործողության վրա (հմմտ. Հովհ. 3:16; I Հովհ. 4:10) և հաստատ է ու անփոփոխ:

5:9 «ո՞րքան աւելի» Սա Պողոսի ամենասիրելի արտահայտություններից մեկն էր (հմմտ. հհ. 10,15,17): Եթե Աստված այդքան շատ սիրեց հավատացյալներին մինչ նրանք մեղավոր էրին, ապա որքան ավելի է Նա սիրում նրանց հիմա, երբ Իր զավակներն են (հմմտ. 5:10; 8:22):

«հիմա, որ արդարացանք» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ԴԵՐԲԱՅ է, որն ընդգծում է արդարացումը որպես ավարտված գործողություն իրականացված Աստծո կողմից:

Պողոսը կրկնում է հ. 1-ի ճշմարտությունը: Նաև ուշադրություն դարձրեք «արդարացած» (հ. 9) և «հաշտված» (հ. 10-11) բառերի միջև գոյություն ունեցող զուգահեռներին:

«նորա արինովը» Սա վերաբերում էր Քրիստոսի զոհաբերվող մահվանը (հմմտ. 3:5; Մարկ. 10:45; II Կոր. 5:21): Չոհաբերություն և անմեղ կյանք, տրված մեղավոր կյանքի փոխարեն գաղափարը, մեղ հետ է տանում Գև. 1-7 և հնարավոր է Ել. 12 (գատկի գառը), և աստվածաբանորեն այն վերաբերում էր Հիսուս Քրիստոսին Ես. 53:4-6: Քրիստոսագիտության իմաստով այս գաղափարը իր զարգացումն ունեցավ Եբրայեցիներին ուղղված գրքում: Փաստորեն այս գրքում համեմատություն է գնում Հին և Նոր Կտակարանների միջև մի շարք կարևոր մտքերի շուրջ:

«կապրինք» Սա ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (հմմտ. հ. 10): Սա վերաբերվում է մեր վերջնական փրկությանը, որը կոչվում է «փառավորում» (հմմտ. հ. 2; 8:30, I Հովհ. 3:2):

Նոր Կտակարանը փրկությունը նկարագրում է ԲԱՅ-ական բոլոր ժամանակաձևերով:

1. ավարտված գործողություն (ԱՕՐԻՍՏ), Գործք 15:11; Հն. 8:24; II Տիմ. 1:9; Տիտոս 3:5
2. անցյալի գործողություն, որի արդյունքը ներկա ժամանակում է (ՎԱԳԱԿԱՍԱՐ), Եփ. 2:5,8
3. շարունակական գործընթաց (ՆԵՐԿԱ), I Կոր. 1:18; 15:2; II Կոր. 2:15; I Թես. 4:14; I Պետ. 3:21
4. ապագայում ավարտին հասցվող (ԱՊԱՌՆԻ), Հն. 5:9,10; 10:9.

Տես հատուկ թեմա 10:13. Փրկությունը սկսում է սկզբնական որոշումից, բայց այն շարունակվում է նոր հարաբերությունների մեջ, որի վախճանը կիրականանա մեկ օր: Այս գաղափարը հաճախ բնութագրվում է երեք աստվածաբանական տերմիններով արդարացում, որը նշանակում է «մեղքի պատժից ազատվել», սրբացում, որը նշանակում է «մեղքի գործունից ազատվել»; և փառավորում, որը նշանակում է «մեղքի ներկայությունից ազատվել»:

Արժե մեկ անգամ ևս նշել, որ արդարացումն ու սրբացումը Աստծո շնորհքի գործերն են, տրված հավատացյալին Քրիստոսի հավատքի միջոցով: Ինչևէ Նոր Կտակարանը նաև սրբացման մասին ասում է, որ շարունակական գործընթաց է, որը հավատացյալներին քրիստոսանման է դարձնում: Այդ իսկ պատճառով աստվածաբանները օգտագործում են հետևյալ հասկացողությունը «դիրքային սրբացում, տեղում» և «շարունակական սրբացում»: Սա փրկության պարզևի խորհուրդն է, որը կապված է աստվածահաճո կյանքի հետ:

«Աստծո բարկութիւնիցը» Սա վախճանաբանական կոնտեքստ է: Աստվածաշունչը խոսում է Աստծո մեծ, անարժան մարդու հանդեպ եղած սիրո մասին, բայց նաև հստակ խոսում է այն մասին, որ Աստծո հակառակ է/ չի ընդունում մեղքին և ամբարտավանությանը: Աստված սահմանեց փրկության և ներման ճանապարհի Քրիստոսի միջոցով, բայց նրանք, ովքեր մերժում են Իրեն բարկության տակ են մնում (հմմտ. 1:18-3:20): Սա մարդակերպային արտահայտություն է, բայց այն արտահայտում է իրականություն: Սարսափելի բան է բարկացած/կենդանի Աստծո ձեռքն ընկնելը (Եբր. 10:31):

5:10 «եթէ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ Է, որը ճիշտ է երևում գրողի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Մարդկությունը՝ Աստծո զերբազույն ստեղծագործությունը, դարձավ թշնամի: Մարդն (հմմտ. Ծննդ. 3:5) ու սատանան (հմմտ. Ես. 14:14; Եզ. 28:2,12-17) ունեին նույն խնդիրը, փափագ անկախանալու, փափագ ղեկավարելու և աստվածներ լինելու ձգտում:

«Աստուծոյ հետ հաշտուեցանք . . . հաշտուած ենք» Սա թե ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է և թե ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ԴԵՐԲԱՅ:

«հաշտվել» ԲԱՅ-ը բնագրում նշանակում էր «փոխել»: Աստված մեր մեղքը փոխել է Հիսուսի արդարությամբ (հմմտ. Ես. 53:4-6): Խաղաղությունը վերականգնվել է (հմմտ. հ. 1):

«նորա Որդու մահովը» Ներման ավետարանը հիմնավորված է (1) Աստծո սիրո; (2) Քրիստոսի ծառայության; (3) Հոգու պատրաստողական աշխատանքի, և (4) անհատի հավատքի/ապաշխարության արձագանքի վրա: Աստծո հետ ուղիղ լինելու ուրիշ տարբերակ չկա (հմմտ. Հովհ. 14:6): Փրկության վստահությունը հիմնված է Եռյակ Աստծո կերպարի վրա, և ոչ թե մարդու կարողության: Պարադոքսն այն է, որ փրկությունից հետո մարդու գործերն են, որ փաստում են փրկության պարզևի ձեռքբերումը (հմմտ. Հակոբոս և I Հովհ.):

«կապրինք» Նոր Կտակարանը փրկության մասին խոսում է, որպես անցյալ, ներկա և ապառնի գործողություն: Այստեղ ապառնին վերաբերում է մեր վերջնական, գերագույն փրկությանը Քրիստոսի Երկրորդ Գալստյան ժամանակ: Տես ծանուցում հ. 9 և հատուկ թեմա 10:13:

«նորա կեանքովը» Այս հունարեն տերմինը կյանք բառի համար *zoa* է: Այս տերմինը Հովհաննեսի գրվածքներում միշտ վերաբերում է հարուցյալ կյանքին, հավիտենական կյանքին կամ թագավորության կյանքին: Պողոսը միշտ օգտագործում էր այն այս աստվածաբանական իմաստով: Այս կոնտեքստի վստահությունն այն է, որ քանի որ Աստված վճարեց այնպիսի բարձր գին հավատացյալների ներման համար, որ Նա անշուշտ կշարունակի դրա ներգործությունը :

«Կյանք»ը կարող է վերաբերել կամ (1) Հիսուսի հարությանը (հմմտ. 8:34; I Կոր. 15); (2) Հիսուսի բարեխոսությունը (հմմտ. 8:34; Եբր. 7:25; I Հովհ. 2:1); կամ էլ (3) Հոգու ձևավորելը Քրիստոսին մեր մեջ (հմմտ. Հռ. 8:29; Գաղ. 4:19): Պողոսը հաստատում էր, որ Հիսուսի երկրային կյանքը և մահը ինչպես նաև Նրա մեծարված/փառաբանված կյանքը մեր հաշտեցման հիմքն են:

5:11 «Եւ ոչ միայն այսքան. այլ» Տես ծանուցում 3հ.

«այլ պարծենում ենք» Տես ծանուցում 5:2. Սա երրորդ կիրառումն է «հրճվել» (պարծենալ) այս կոնտեքստում:

1. պարծենում/հրճվում ենք փառքի հույսովը, 2հ.
2. պարծենում/հրճվում ենք նեղությունների մեջ, 3հ.
3. պարծենում/հրճվում ենք հաշտություն ընդունելով, 11հ.

Բացասական պարծենալը երևում է 2:17 և 23հ.

«որով հիմա հաշտությունն ընդունեցինք» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, կատարված ավարտված գործողություն: Հավատացյալների հաշտեցման մասին նաև խոսվում է 10հ-ում և II Կոր. 5:18-21; Եփ. 2:16-22; Կող. 1:19-23: Այս կոնտեքստում «հաշտություն»ը «արդարացման» աստվածաբանական հոմանիշն է:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:12-14

¹²Սորա համար՝ ինչպես մեկ մարդի ձեռովը մեղքը մտաւ աշխարհքը, եւ այն մեղքովն էլ մահը. եւ այսպէս մահն ամեն մարդկանց վերայ տարածուեցաւ, ըստ որում ամենքը մեղանչեցին:

¹³Որովհետեւ մինչեւ օրէնքը՝ մեղք կար աշխարհքումը, բայց մեղքը չէ համարվում քանի որ օրէնքը չկայ: ¹⁴Բայց մահը թագաւորեց Ադամից մինչեւ Մովսէսը Ադամի մեղքի նման չմեղանչողների վերայ էլ. որ օրինակ է նորան որ գալու էր:

NASB (UPDATED) TEXT: 5: 12-14

¹²Therefore, just as through one man sin entered into the world, and death through sin, and so death spread to all men, because all sinned—¹³for until the Law sin was in the world, but sin is not imputed when there is no law. ¹⁴Nevertheless death reigned from Adam until Moses, even over those who had not sinned in the likeness of the offense of Adam, who is a type of Him who was to come.

5:12 «Մորա համար» Հռոմեացիս թուղթն ունի մի քանի ռազմավարականորեն տեղադրված «արդ, ուրեմն» եր (հմմտ. 5:1; 8:1; 12:1): Մեկնաբանական հարցն է թե ինչին են նրանք կապվում: Գրանք կարող են վերաբերել Պողոսի ամբողջ փաստարկին: հնդգված լինելու համար այս մեկը կապված է Ծննդոցին և ուստի հավանական է տանում է դեպի Հռ. 1:18-32.

«ինչպես մեկ մարդի ձեռովը մեղքը մտաւ աշխարհքը» 12h-ի բոլոր երեք բայերն էլ ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ ԵՆ: Ադամի անկումը/մեղանչելը բերեց մահ (հմմտ. I Կոր. 15:22): Աստվածաշունչը հանգամանորեն չի խոսում մեղքի ծագման մասին: Մեղքը նաև տեղի ունեցավ հրեշտակների թագավորությունում (հմմտ. Ծննդ. 3 և Հայտ. 12:7-9): Ինչպես և երբ, անորոշ է (հմմտ. Ես. 14:12-27; Եզ. 28:12-19; Հոբ 4:18; Մաթ. 25:41; Գուկ. 10:18; Հովհ. 12:31; Հայտ. 12:7-9):

Ադամական մեղքը ներգրավեց երկու տեսակետ (1) անհնազանդություն հատուկ պատվիրանին (հմմտ. Ծննդ. 2:16-17), և (2) ինքնորոշ հպարտություն (հմմտ. Ծննդ. 3:5-6): Սա շարունակում է ակնարկը Հռ. 1:18-32 սկսած Ծննդ. 3-ից:

Սա մեղքի աստվածաբանությունն է, որն այնքան պարզ բաժանում է Պողոսին բաբբիական մտածելակերպից: Բաբբիները չէին կենտրոնանում Ծննդ. 3-ի վրա; փոխարենը նրանք պնդում էին, որ յուրաքանչյուր մարդու մեջ կար երկու «մտադրություն/հակվածություն» (*yetzers*): Նրանց հայտնի բաբբիական ասացվածքը «Ամեն մարդու սրտում կա սև և սպիտակ շուն: Ում ամենաշատն ես կերակրում նա էլ դառնում է ամենամեծը»: Պողոսը տեսավ մեղքը որպես արգելք սուրբ Աստծո և Իր արարչագործության միջև: Պողոսը սխտեմատիկ աստվածաբան չէր (հմմտ. Ջեյմս Ստուարդի Մարդ Քրիստոսում/James Steward's *A Man in Christ*): Նա տվեց մեղքի մի քանի ծագումներ (1) Ադամի մեղանչելը, (2) սատանայի փորձելը, և (3) մարդու շարունակական ըմբոստությունը:

Աստվածաբանական հակասություններում և զուգահեռներում Ադամի և Հիսուսի միջև կան երկու հնարավոր առընչություններ:

1. Ադամը իրական պատմական անձ էր:
2. Հիսուսը իրական մարդ արարած էր:

Այս երկու ճշմարտություններն էլ հաստատում են Աստվածաշունչը կեղծ վարդապետների առջև: Ուշադրություն դարձրեք կրկնվող բառին «մեկ մարդ» կամ «մեկը»: Այս կոնտեքստում Ադամին և Հիսուսին վերաբերող այս երկու կերպերը օգտագործված են 11 անգամ:

« մեղքովն էլ մահը. » Աստվածաշունչը հայտնում է մահվան երեք փուլեր (1) հոգևոր մահ (հմմտ. Ծննդ. 2:17; 3:1-7; Եփ. 2:1); (2) ֆիզիկական մահ (հմմտ. Ծննդ. 5); և (3) հավիտենական մահ (հմմտ. Հայտ. 2:11; 20:6,14; 21:8): Այս հատվածում խոսվում է Ադամի հոգևոր մահվան մասին (հմմտ. Ծննդ. 3:14-19), որը մարդկության ֆիզիկական մահվան պատճառը հանդիսացավ (հմմտ. Ծննդ. 5):

«մահն ամեն մարդկանց վերայ տարածուեցաւ» Այս բաժնի ամենագլխավոր հարվածը մեղքի (հմմտ. 16-19հհ.; I Կոր. 15:22; Գաղ. 1:10) և մահվան համընդհանրությունն է կամ տիեզերականությունը:

« ըստ որում ամենքը մեղանչեցին » Բոլոր մարդիկ մեղանչեցին Ադամով ընդհանուր (այն է, ժառանգեցին մեղավոր վիճակ և մեղավոր հակում): Այդ պատճառով յուրաքանչյուր մարդ ընտրում

է մեղանչել անձնապես և հաճախ: Աստվածաշունչը շեշտված է, որ բոլոր մարդիկ մեղավորներ են թե ընդհանուր և թե անհատական (հմմտ. 3 Թագ. 8:46; II Մնաց. 6:36; Սաղ. 14:1-2; 130:3; 143:2; Առ. 20:9; Ժող. 7:20; Ես. 9:17; 53:6; Հն. 3:9-18,23; 5:18; 11:32; Գաղ. 3:22; I Հովհ. 1:8-10).

Բայց և այնպես պետք է ասվի, որ կոնտեքստուալ շեշտավորումը (հմմտ. 15-19հհ.) այն է, որ մի գործողությունը պատճառեց մահ (Ադամ) իսկ մյուսը բերեց կյանք (Հիտու): Ինչևէ, Աստված այնպես է կառուցել Իր հարաբերությունը մարդկության հետ, որ մարդկային արձագանքը կարևոր տեսակետ է «կորսվածության» և «արդարացման»: Մարդիկ կամավոր կերպով ներգրավվում են իրենց ապագայի մեջ: Նրանք շարունակում են ընտրել մեղքը կամ նրանք ընտրում են Զրիստոսին: Նրանք չեն կարող ազդել այս երկու ընտրությունների վրա, սակայն նրանք ինքնակամ ցույց են տալիս թե որին են իրենք պատկանում «Բայց/որովհետև» թարգմանությունը հասարակ է, բայց նրա նշանակությունը հաճախ կասկածի է ենթարկվում: Պողոսն օգտագործեց *eph' hō* II Կոր. 5:4; Փիլ. 3:12; և 4:10 «բայց» իմաստով: Ուստի յուրաքանչյուր և ամեն մարդ անձնապես մասնակցում է մեղքի և Աստծո դեմ ապստամբելու մեջ: Ոմանք մերժելով հատուկ հայտնությունը, սակայն բոլորը մերժելով բնական հայտնությունը (հմմտ. 1:18-3:20):

5:13-14 Այս նույն ճշմարտությունը ուսուցանվում է Հն. 4:15 և Գործք 17:30: Աստված արդար է/ազնիվ է: Մարդիկ միայն պատասխանատու են միայն նրա համար ինչ մատչելի նրանց: Այս համարը խոսում է բացառապես հատուկ հայտնության մասին (Հին Կտակարան, Հիտուս, Նոր Կտակարան), ոչ թե բնական հայտնության մասին (Սաղ. 19; Հն. 1:18-23; 2:11-16):

Ուշադրություն դարձրեք, որ NKJV թարգմանության մեջ հ. 12 գտնվող համեմատությունը հանդես է գալիս որպես առանձին մեծ միջանկյալ նախադասություն (հմմտ. հհ. 13-17) իր եզրափակիչ մասից հհ. 18-10:

5:14

Արևելահայերեն «մահը թագաւորեց»
Արևմտահայերեն «մահը թագաւորեց»

NASB, NKJV,

JB

“death reigned”

NRSV

“death exercised dominion”

TEV

“death ruled”

Մահը թագավորեց որպես Թագավոր (հմմտ. 17 և 21հհ): Մահվան և մեղքի մարմնավորումը որպես բռնակալներ շարունակվում է այս գլուխում և 6-րդ գլխում: Մահվան տիեզերական փորձառությունը հաստատում է մարդկության տիեզերական մեղքը: 17 և 21հհ., շնորհքը մարմնավորված է: Շնորհքն է թագավորում: Մարդիկ ունեն ընտրություն (Հին Կտակարանի երկու կերպերը/ճանապարհները); մահ կամ կյանք: Ռ՞վ է թագավորում քո կյանքում:

«Ադամի մեղքի նման չմեղանչողների վերայ էլ» Ադամը խախտեց Աստծո հաստատ հրամանը, սակայն Եվան չմեղանչեց այս նույն կերպով: Նա Ադամից էր լսել ծառի մասին և ոչ թե անմիջապես Աստծոց: Մարդիկ Ադամից մինչև Մովսես վնասվեցին Ադամի ապստամբության պատճառով: Նրանք չխախտեցին/չոտնահարեցին հատուկ հրամանը/պատվերը անմիջապես Աստծուց ստացած, այլ 1:18-32, որը իհարկե այս աստվածաբանական կոնտեքստի մասն է, արտահայտում է այն ճշմարտությունը, որը նրանք ոտնահարեցին/խախտեցին/պղծեցին այն լույսը, որն ունեին արարչագործությունից սկսած և ուստի պատասխանատու են Աստծուն ըմբոստության/մեղքի համար: Ադամի մեղավոր հակումը տարածվեց իր բոլոր զավակների վրա:

Արևելահայերեն «Ադամի մեղքի նման չմեղանչողների վերայ էլ. որ օրինակ է նորան որ գալու էր»
Արևմտահայերեն «Ադամին յանցանքին նման չմեղանչողներուն վերայ ալ. որ օրինակ էր անոր որ
ետքը պիտի գար»

□

NASB, NKJV,

NRSV “who is a type of Him who was to come”

TEV “Adam was a figure of the one who was to come”

JB “Adam prefigured the One to come”

Սա շատ ռեալ կերպով արտահայտում է Ադամ-Քրիստոս տիպաբանությունը (հմմտ. I Կոր. 15:21-22, 45-49; Փիլ. 2:6-8): Նրանցից երկուսն էլ դիտվում են որպես առաջինը շարքում, մարդկության սկիզբ (հմմտ. I Կոր. 15:45-49): Ադամն է միակ անձը Հին Կտակարանում, որ հատուկ կոչվում է «տեսակ/տիպ» Նոր Կտակարանով: Տես Հատուկ Թեմա: Տեսակ/ձև (*Typos*) 6:17.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:15-17

¹⁵Բայց շնորհքն այնպես չէ՝ ինչպես յանցանքը. որովհետև եթե մեկի յանցանքովը շատերը մեռան, էլ ո՞րքան անելի Աստուծոյ շնորհքն ու պարգեւը մեկ մարդի՝ Յիսուս Քրիստոսի շնորհքովն անելացաւ շատերի վերայ: ¹⁶Եւ պարգեւն այնպես չէ՝ ինչպես այն մեկ մեղանչողից եղածը, որովհետև դատաստանն այն մեկ մեղքիցը դէպի դատապարտութիւն տարաւ. բայց շնորհքը շատ մեղքերից արդարութեան մէջ է տանում: ¹⁷Որովհետև եթե մեկի մեղքովը մահը թագաւորեց այն մեկի ձեռովն, էլ ո՞րքան անելի նորանք, որ ընդունում են շնորհքի լիութիւնն ու արդարութեան պարգեւները կեանքով կթագաւորեն՝ այն մեկ Յիսուս Քրիստոսի ձեռովը:

NASB (UPDATED) TEXT: 5: 15-17

¹⁵But the free gift is not like the transgression. For if by the transgression of the one the many died, much more did the grace of God and the gift by the grace of the one Man, Jesus Christ, abound to the many. ¹⁶The gift is not like *that which* came through the one who sinned; for on the one hand the judgment *arose* from one *transgression* resulting in condemnation, but on the other hand the free gift *arose* from many transgressions resulting in justification. ¹⁷For if by the transgression of the one, death reigned through the one, much more those who receive the abundance of grace and of the gift of righteousness will reign in life through the One, Jesus Christ.

5:15-19 Սա իր ծավալով բավականին շարունակվող փաստարկ է՝ օգտագործվելով զուգահեռ արտահայտություններ: NASB, NRSV և TEV անգլերեն թարգմանություններում բաժինը բաժանվում է 18h-ից: Սակայն UBS⁴, NKJV, և JB տարբերակներում այն դիտվում է որպես մեկ հատված: Մի մոռացեք, որ բուն հեղինակի մտադրության ճիշտ հասկանալու բանալին հանդիսանում է յուրաքանչյուր պարբերության հիմնական ճշմարտության որոշումն է: Ուշադրություն դարձրեք, որ «շատ» տերմինը հհ. 15 և 19, հոմանիշ է հհ. 12 և 18 «բոլոր» տերմինի: Սա նույնպես ճշմարտություն է Ես. 53:11-12 և հ. 6. Ոչ մի աստվածաբանական տարբերություն (Կավլին ընտրության վարկածը ի տարբերություն ընտրության բացակայության գաղափարի) չարժե փնտրել և հիմնվել այս տերմինների վրա:

5:15 «ձրի պարգև» Կան երկու տարբեր հունարեն բառեր «պարգև» բառի համար օգտագործված այս կոնտեքստում *charisma*, 15,16հհ. (6:23) և *dorea/dorama*, 15, 16, 17հհ. (տես ծանուցում 3:24) — բայց նրանք հոմանիշներ են: Իրոք սա փրկության Բարի Լուրն է: Այն ձրի պարգև է Աստուծոց Հիսուս Քրիստոսի միջոցով (հմմտ. 3:24; 6:23; Եփ. 2:8,9) բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Քրիստոսին:

«եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը հաստատվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար: Աղամի մեղքը մահ բերեց ամբողջ մարդկությանը: Սա զուգորդվում է 17հ.

«որքան ավելի/առատ» Տես Հատուկ Թեմա 15:13.

5:16 «դատապարտություն. . արդարություն» Այս երկուսն էլ դատական, իրավական տերմիններ են: Հաճախ Հին Կտակարանը ներկայացնում է մարգարեի պատգամը որպես դատարանի տեսարան: Պողոսն օգտագործում է այս ձևը (հմմտ. Հռ. 8:1, 31-34):

5:17 «եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը հաստատվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար: Աղամի մեղքը մահ բերեց ամբողջ մարդկությանը: Աղամի մեղքը/հանցանքը բոլոր մարդկանց մահվան պատճառը դարձավ:

«էլ որքա՞ն անլի նորանք, որ ընդունում են» 18-19հհ. ստույգ/ճշգրիտ աստվածաբանորեն հավասարակշռված չեն: Այս արտահայտությունը չի կարող տեղահանվել Հռ. 1-8-ի կոնտեքստից և օգտագործվի որպես հաստատող տեքստ համընդհանուրի/ ունիվերսալիզմի համար (որ վերջիվերջո բոլորն էլ կփրկվեն): Մարդիկ պետք է ընդունեն (17հ.) Աստծո առաջարկածը Քրիստոսում: Փրկությունը հասանելի է բոլորին, բայց պետք է ընդունվի անհատականորեն (հմմտ. Հովհ. 1:12; 3:16; Հռ. 10:9-13):

Աղամի մեկ ապստամբ գործողությամբ սկիզբ դրվեց ամբողջ մարդկության ամբողջական ընթրոտացմանը: Մեկ մեղավոր գործողությունը նշանավորվում է/չափազանցվում է: Բայց Քրիստոսում մեկ արդար զոհաբերություն նշանավորվում է ծածկելու համար ինչպես շատ անհատական մեղքեր այնպես էլ մեղքի ընդհանուր ներգործությունը: Քրիստոսի գործողության «էլ որքան ավելի» ընդգծվում է (հմմտ. 9,10,15,17հհ.): Շնորհքն ավելանում է:

5:17,18 «արդարութան պարզեւները կեանքով կթագաւորեն. . կեանքի արդարութիւնը» Հիսուսն Աստծո պարզեւն է և պայմանը բոլոր մեղավոր մարդկության հոգևոր կարիքների համար (հմմտ. I Կոր. 1:30): Այս զուգահեռ արտահայտությունները կարող են նշանակել (1) մեղավոր մարդկությանը տրված է իրավունք կանգնել Աստծո հետ Քրիստոսի ավարտած գործի միջոցով, որը տալիս է «աստվածահաճո/բարեպաշտ կյանք»; կամ (2) այս արտահայտությունը հոմանիշ է «հավիտենական կյանք»ին: Կոնտեքստը աջակցում է առաջին տարբերակը: Արդարություն բառը սերտելու համար տես հատուկ թեմա 1:17.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԹԱԳԱՎՈՐԵԼ ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Քրիստոսի հետ թագավորելու գաղափարը ավելի ծավալուն/ընդարձակ աստվածաբանական կատեգորիայի մասն է կոչված «Աստծո Թագավորություն»: Սա Աստծո գաղափարն է Հին Կտակարանից բերված՝ որպես Իսրայելի ճշմարիտ թագավոր (հմմտ. I Թագ. 8:7): Նա խորհրդանշական կերպով/սիմվոլիկ թագավորեց (I Թագ. 8:7; 10:17-19) Հուդայի ցեղի սերնդի միջոցով (հմմտ. Ծննդ. 49:10) և Յեսսեի ընտանիքի (հմմտ. II Թագ. 7):

Հիսուսը Հին Կտակարանի մարգարեության խոստացված իրականացումն էր կապված Մեսիայի հետ: Նա Աստծո Թագավորության սկիզբը դրեց Իր մարմնացումով Բեթլեհեմում: Աստծո Թագավորությունը դարձավ Հիսուսի քարոզչության կենտրոնական սյունը: Թագավորությունը ամբողջությամբ եկել էր Նրանով (հմմտ. Մաթ. 10:7; 11:12; 12:28; Մարկ. 1:15; Գուկ. 10:9,11; 11:20; 16:16; 17:20-21):

Ինչևէ, Թագավորությունը նաև ապագայում էր (վախճանաբանական): Այն ներկայում էր բայց ոչ ավարտված (հմմտ. Մաթ. 6:10; 8:11; 16:28; 22:1-14; 26:29; Բուկ. 9:27; 11:2; 13:29; 14:10-24; 22:16,18): Հիսուսն առաջին անգամ եկավ որպես տառապող ծառա (հմմտ. Ես. 52:13-53:12); որպես հեզ (հմմտ. Չաք. 9:9) բայց Նա կվերադառնա որպես Թագավորների Թագավոր (հմմտ. Մաթ. 2:2; 21:5; 27:11-14): «Թագավորելու» գաղափարը անշուշտ այս «թագավորության» աստվածաբանության մասն է կազմում: Աստված Հիսուսի հետևորդներին տվել է թագավորություն (տես Բուկ. 12:32):

Քրիստոսի հետ թագավորելու գաղափարը ունի մի քանի տեսակետեր և հարցեր.

1. Արդյո՞ք հատվածը, որը հաստատում է, որ Աստված տվել է հավատացյալներին «թագավորությունը» Քրիստոսի միջոցով վերաբերում է «թագավորելուն» (հմմտ. Մաթ. 5:3,10; Բուկ. 12:32):
2. Արդյո՞ք Հիսուսի խոսքերը ուղղված իր աշակերտներին, առաջին դարի հրեական կոնտեքստում, վերաբերվում է բոլոր հավատացյալներին (հմմտ. Մաթ. 19:28; Բուկ. 22:28-30):
3. Արդյո՞ք Պողոսի շեշտադրությունը այս կյանքում թագավորելու վրա հակասում կամ լրացնում է վերևի տեքստերը (հմմտ. Հռ. 5:17; I Կոր. 4:8):
4. Ինչպե՞ս են տառապանքն ու թագավորելը կապվում իրար (հմմտ. Հռ. 8:17; II Տիմ. 2:11-12; I Պետ. 4:13; Հայտ. 1:9)
5. Հայտնության կրկնվող/հակադարձ թեման բաժնեկցում է փառավորված Քրիստոսի թագավորելը
ա. երկրային, 5:10
բ. հազարամյա, 20:5,6
գ. հավիտենական, 2:26; 3:21; 22:5 և Գան. 7:14,18,27

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:18-21

¹⁸Արդ ուրեմն՝ ինչպես որ մեկի յանցանքովն ամեն մարդկանց դատապարտութիւն եկավ, նոյնպէս էլ մեկի արդարութիւնովն ամեն մարդկանց վերայ կեանքի արդարութիւն է գալիս: ¹⁹Որովհետեւ ինչպէս որ մեկ մարդի անհնազանդութիւնովը շատերը մեղաւորներ եղան, այնպէս էլ մեկի հնազանդութիւնովը շատերը արդարներ կլինին: ²⁰Բայց օրէնքը մէջ ընկաւ՝ որ յանցանքը շատանայ. բայց ուր որ աւելի եղաւ մեղքը, այնտեղ աւելի եւս շատացաւ շնորհքը: ²¹Որպէսզի ինչպէս մեղքը թագաւորեց մահի ձեռովը, այնպէս էլ շնորհքը թագաւորէ արդարութիւնով յաւիտենական կեանքի մէջ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը:

NASB (UPDATED) TEXT: 5:18-21

¹⁸So then as through one transgression there resulted condemnation to all men, even so through one act of righteousness there resulted justification of life to all men. ¹⁹For as through the one man's disobedience the many were made sinners, even so through the obedience of the One the many will be made righteous. ²⁰The Law came in so that the transgression would increase; but where sin increased, grace abounded all the more, ²¹so that, as sin reigned in death, even so grace would reign through righteousness to eternal life through Jesus Christ our Lord.

5:18

Արևելահայերեն «նոյնպէս էլ մեկի արդարութիւնովն ամեն մարդկանց վերայ կեանքի արդարութիւն է գալիս »

Արևմտահայերեն «այնպես՝ մեկուն արդարութիւնովը բոլոր մարդոց կեանքի արդարութեան շնորհք եղաւ»

5:18

NASB “even so through one act of righteousness there resulted justification of life to all men”

NKJV “even so through one Man’s righteous act the free gift came to all men”

NRSV “so one man’s act of righteousness leads to justification and life for all”

TEV “in the same way the one righteous act set all men free and gives them life”

JB “so the good act of one man brings everyone life and makes them justified”

Այստեղ չի խոսվում այն մասին, որ ամեն մարդ պիտի փրկվի (ունիվերսալիզմ): Այս համարը նաև չի կարելի մեկնաբանել ամբողջ Հռոմեացիս թղթից և անմիջական կոնտեքստից անկախ: Սա վերաբերում է ամբողջ մարդկության պոտենցիալ փրկությանը Հիսուսի կյանքի/մահվան/հարության միջոցով: Մարդը պետք է արձագանքի Ավետարանին ապաշխարությամբ և հավատքով (հմմտ. Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21): Աստված է միշտ նախաձեռնողը, առաջին քայլը Նա է անում (հմմտ. Հովհ. 6:44,65), բայց Նա ընտրել է, որ յուրաքանչյուր անհատ պետք է արձագանքի անձնապես (հմմտ. Մարկ. 1:15; Հովհ. 1:12; և Հռ. 10:9-13): Նրա առաջարկը բոլորի համար է (հմմտ. I Տիմ. 2:4,6; II Պետ. 3:9; I Հովհ. 2:2), սակայն անօրենության գաղտնիքը նրանում է, որ շատերը Նրան «ոչ» են ասում:

«Արդարության գործողություն»-ը նշանակում է կամ (1) Հիսուսի ամբողջ հնազանդության կյանքը և Հոր հայտնությունը կամ (2) հատկապես Նրա մահը մեղավոր մարդկության օգտին: Ինչպես մեկ մարդու կյանքը ազդեց բոլորի վրա (հրեաների ընդհանուր պատասխանատվությունը, հմմտ. Հեսու 7), այդպես էլ մեկ անմեղ կյանք ազդեց բոլորի կյանքի վրա: Այս երկու գործողությունները զուգահեռ են իրենց իմաստով, բայց հավասար չեն: Ադամի մեղքը տարածվեց բոլորի վրա առանց բացառության, և հնարավորություն Քրիստոսի կյանքի ազդեցության տակ լինելով նորից բոլոր մարդկանց համար է, սակայն միայն պոտենցիալ առումով; միայն հավատացյալներն են ընդունում արդարության պարգևը: Հիսուսի գործողությունը նաև աղդեց ամբողջ մարդկության մեղքի վրա, նրանց համար ովքեր հավատում և ընդունում են Նրան անցյալում, ներկայում և ապագայում:

5:18-19 «ամեն մարդկանց դատապարտութիւն ... ամեն մարդկանց կեանքի արդարութիւն... շատերը մեղաւորներ եղան...շատերը արդարներ կլինին»

Սրանք զուգահեռ արտահայտություններ են, որոնք ցույց են տալիս, որ «շատ» տերմինը սահմանափակող չէ այլ ներփակող/պարունակող: Այս նույն զուգահեռությունը գտնվում է Ես. 53:6 «ամենքս» և 53:11,12 «շատերին»: «Շատ/երին» տերմինը չի կարող օգտագործվել սահմանափակող իմաստով սահմանափակելու համար Աստծո առաջարկած փրկությունը ամբողջ մարդկությանը (Կալվին ընտրության վարկածը ի տարբերություն ընտրության բացակայության գաղափարի):

Ուշադրություն դարձրեք երկու ԲԱՅԵՐԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻՆ: Դրանք վերաբերվում են Աստծո գործողությանը: Մարդիկ մեղանշում են Աստծո էության դեմ և նրանք արդարացվում են Նրա էության համաձայն:

5:19 «մեկ մարդի անհնազանդութիւնովը . . . մեկի հնազանդութիւնովը»

Պողոսն օգտագործում էր Հին Կտակարանի համընդհանուր աստվածաբանական գաղափարը: Մեկ մարդու արարքը ազդեց ամբողջ հասարակության վրա (հմմտ. Աքարը Հեսու 7): Ադամի և Եվայի անհնազանդությունը ամբողջ արարչագործության վրա Աստծո դատաստանը բերեց (հմմտ. Ծննդ. 3): Ամբողջ արարչագործությունը կրում է Ադամի ընթոստության հետևանքները (հմմտ. 8:18-25): Աշխարհը նույնը չէ: Մարդիկ նույնը չեն: Մահը դարձավ ամբողջ երկրային կյանքի վերջը (հմմտ. Ծննդ. 5): Աշխարհը այն չէ ինչպիսին Աստված ուզում էր տեսնել:

Այս նույն համընդհանուր իմաստով, Հիսուսի հնազանդության մեկ գործողությամբ Գողգոթայի վրա, արդյունքում եղավ (1) նոր դարաշրջան, (2) նոր մարդիկ, և (3) Նոր Ուխտ: Այս հատկանշական աստվածաբանությունը կոչվում է «Ադամ-Քրիստոս նախատիպ» (հմմտ. Փիլ. 2:6): Հիսուսը երկրորդ Ադամն է: Նա նոր սկիզբն է ընկած մարդկության համար:

«արդարներ կլինին» Տես հատուկ թեմա 1:17.

5:20

NASB “And the Law came in that the transgression might increase”

NKJV “Moreover the law entered that the offense might abound”

NRSV “But law came in, with the result and the trespass multiplied”

TEV “Law was introduced in order to increase wrongdoing”

JB “When law came, it was to multiply the opportunities of falling”

Օրենքի նպատակը երբեք չի եղել մարդուն փրկելը այլ ցույց տալ ընկած/մեղավոր մարդու կարիքը և անօգնական լինելը (հմմտ. Եփ. 2:1-3) և ուստի նրանց բերել Քրիստոսին (հմմտ. 3:20; 4:15; 7:5; Գաղ. 3:19, 23-26): Օրենքը բարի/լավ է, բայց մարդը մեղավոր:

«աւելի եւս շատացաւ շնորհքը» Սա Պողոսի հիմնական իմաստն էր այս ամբողջ բաժնում: Մեղքը սարսափելի է և այն ընդարձակվում է, բայց շնորհքը կրկնապատկվում է և առաջ բերում իր մահացու ներգործությունը: Սա կերպ էր առաջին դարի նոր ուղի կանգնող եկեղեցուն քաջալերելու համար: Նրանք Քրիստոսով հաղթողներ էին (հմմտ. 5:9-11; 8:31-39; I Հովհ. 5:4): Բայց սա ոչ մի դեպքում չի տալիս իրավունք նորից մեղանշելու: Տես Հատուկ Թեմա: *Huper* նախդիրի գործածումը Պողոսի կողմից բարդ բառեր կազմելու համար 1:30:

5:21 Թե «մեղքը» և թե «շնորհքը» մարմնավորվում են որպես թագավորներ: Մեղքը թագավորեց տիեզերական մահվան գործությամբ (14, 17hh.): Շնորհքը թագավորում է վերագրած արդարության գործության միջոցով Հիսուս Քրիստոսի կատարած գործի միջոցով և հավատացյալների անձնական հավատքի և ապաշխարությամբ ավետարանին արձագանքելով:

Որպես Աստծո նոր ժաղովուրդ, որպես Քրիստոսի մարմին, քրիստոնեաները նույնպես թագավորում են Քրիստոսի հետ (հմմտ. 5:17; II Տիմ. 2:12; Հայտ. 22:5): Սա կարող է դիտվել թե երկրային և թե հազարամյա թագավորություն (հմմտ. Հայտ. 5:9-10; 20): Աստվածաշունչը նաև խոսում է նույն ճշմարտության մասին հաստատելով, որ Թագավորությունը տրվել է սուրբերին (հմմտ. Մաթ. 5:3,10; Գուկ. 12:32; Եփ. 2:5-6): Տես Հատուկ Թեմա 5:17.

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Սահմանիր Աստծո «արդարությունը»
2. Ո՞րն է աստվածաբանական տարբերությունը «դիրքային սրբացում» և «առաջընթացային սրբացում» հասկացողությունների միջև:
3. Մենք փրկվում ենք շնորհքով թե՞ հավատքով (հմմտ. Եփ. 2:8-9)
4. Ինչու՞ են քրիստոնեաները տառապում:
5. Մենք փրկված ենք, փրկվում ենք թե՞ կփրկվենք:
6. Մենք մեղավորներ ենք որովհետև մեղք ենք գործում թե՞ մենք մեղք ենք գործում որովհետև մեղավորներ ենք
7. Ինչպե՞ս են «արդարացած», «փրկված» և «հաշտված» տերմինները կապված այս գլխում:
8. Ինչու՞ է Աստված ինձ պատասխանատու համարում ուրիշ մարդու մեղքի համար, որը ապրել է հազարավոր տարիներ առաջ (12-21հհ.)
9. Ինչու՞ էին բոլոր մեռնու Ադամից մինչև Մովսես ընկած ժամանակահատվածում եթե մեղքը չէր հաշվվում այդ ժամանակ (13-14հհ.)
10. Արդյո՞ք «ամեն,բոլոր» և «շատ» տերմինները հոմանիշներ են (18-19հհ., Ես. 53:6, 11-12):

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 6**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Մեռած մեղքին բայց կենդանի Քրիստոսով	Մեռած մեղքին, կենդանի Աստծո համար	Մեռնելով և հարություն առնելով Քրիստոսի հետ	Մեռած մեղքին բայց կենդանի Քրիստոսով	Սկրստություն
6:1-11	6:1-14	6:1-4	6:1-4	6:1-7
		6:5-11	6:5-11	
				6:8-11
				Պետք է տիրի սրբությունը և ոչ թե մեղքը
6:12-14		6:12-14	6:12-14	6:12-14
Արդարության ժառանգներ	Մեղքի ծառայից Աստծո ծառա	Երկու տեսակի ծառայությունը	Արդարության ժառանգներ	Մրիստոնյան ազատ է մեղքի ծառա լինելուց
6:15-23	6:15-23	6:15-19	6:15-19	6:15-19
				Մեղքի վարձքը և սրբության վարձքը
		6:20-23	6:20-23	6:20-23

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՐՏԵՔՍՈՒԱԼ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ

Ա. 6:1-8:39 գլուխները կազմում են մտքի մի բաժին (գրական բաժին/մաս), որը կապված է/գործ է ունենում քրիստոնեական հարաբերությունը մեղքի հետ: Սա շատ կարևոր հարց է, որովհետև ավետարանը հիմնված է ձրի անարժան Աստծո շնորհքի վրա Քրիստոսի միջոցով (3:21-5:21) ուստի, ինչպես է մեղքը ազդում/ներգործում հավատացյալի վրա: 6-րդ գլուխ հիմնված է երկու ենթադրյալ/կարծեցյալ հարցերի վրա, հհ. 1 և 15: Համար 1 կապված է/վերաբերում է 5:20, իսկ հ. 15 կապված է/վերաբերում է 6:14: Առաջինը վերաբերում է մեղքին որպես ապրելաճ (ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ), երկրորդը մեղքի առանձին/մասնավոր գործողություններին (ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ); Ակնհայտ է նաև, որ հհ. 1-14 վերաբերում է հավատացյալի ազատությունը մեղքի իշխանությունից/տիրապետությունից, իսկ հհ. 15-23 վերաբերում է հավատացյալների ազատությանը Աստծուն ծառայելու համար, ինչպես սկզբում նրանք ծառայեցին մեղքին — ամբողջությամբ և ամբողջ սրտով:

Բ. Սրբացումը թե:

1. դիրք է/վիճակ (ինչպես արդարացումը փրկության ժամանակ, 3:21-5:21)
2. և թե Քրիստոսին նմանվելու գործընթաց

ա. 6:1-8:39 արտահայտում է այս ճշմարտությունը աստվածաբանորեն

բ. 12:1-15:13 արտահայտում է այն գործնականորեն (Տես հատուկ Թեմա 6:4)

Գ. Հաճախ մեկնաբանները պետք է աստվածաբանորեն բաժանեն արդարացման և սրբագործման թեման, որպեսզի օգնեն ընկալելու/ըմբռնելու նրանց աստվածաշնչյան իմաստները: Իրականում դրանք շնորհքի միաժամանակյա գործողություններ են (I Կոր. 1:30; 6:11): Մեխանիզմը երկուսի համար էլ նույնն է— Աստծո շնորհքը երևեցավ Հիսուսի կյանքի և մահվան մեջ, որը ընդունվում է հավատքով (հմմտ. Եփ. 2:8-9):

Դ. Այս գլուխը սովորեցնում է Քրիստոսում Աստծո զավակների պոտենցիալ/հնարավոր ամբողջական հասունությունը (անմեղություն, հմմտ. I Հովհ. 3:6,9; 5:18): Գլուխ 7 և I Հովհ. 1:8-2:1 ցույց են տալիս հավատացյալների շարունակական մեղանչելու իրականությունը:

Ընդհարումներից շատերը՝ ներման մասին Պողոսի տեսակետը շուրջ կապված էր բարոյականության հարցի հետ: Հրեաները ցանկանում էին հավաստիացնել աստվածահաճո կյանքը՝ պահանջելով, որ նորադարձները ենթարկվեն մովսեսական օրենքին: Պետք է համաձայնվել, որ ոմանք օգտագործեցին և օգտագործում են Պողոսի տեսակետները/կարծիքները, որպես մեղքի արտոնություն/թույլտվություն (հմմտ. հհ. 1,15; II Պետ. 3:15-16): Պողոսը հավատում է, որ բնակվող Հոգին, ոչ որպես արտաքին օրենսգիրք/ձածկագիր, կատեղծի աստվածահաճո Քրիստոսանման հետևորդներ: Իրականում սա է տարբերությունը Հին ուխտի (հմմտ. 2 Օրին. 27-28) և Նոր ուխտի միջև (հմմտ. Եր. 31:31-34; Եզ. 36:26-27):

Ե. Մկրտությունը պարզապես ֆիզիկական պատկերում է արդարացման/սրբացման հոգևոր իրականություն: Հռոմեացիս գրքում երկու վարդապետություններն էլ թե վիճակ/դրություն սրբացում, (այսինքն այն պահին, երբ անձը ապաշխարում է սրբվում է) (արդարացում) և թե փորձառու սրբացումը, (այսինքն անձը իր կյանքի ընթացքում շարունակում է սրբվել)

(Քրիստոսանման) երկուսն էլ ընդգծված են: Թաղվել Նրա հետ(հ. 4) զուգահեռ է «խաչվել Նրա հետ» (հ. 6):

2. Քրիստոնեայի կյանքում փորձությունն ու մեղքը հաղթահարելու բանալիներն են:

1. Իմացիր, թե ով ես դու Քրիստոսում: Իմացիր, թե ինչ է Նա արել քեզ համար: Դու ազատ ես մեղքից: դու մեռած ես մեղքին:
2. Հաշվիր քո դիրքը/վիճակը Քրիստոսում առօրյա կյանքի իրավիճակներում ինչպիսին է:
3. Մենք մեր սեփականությունը չենք: Մենք պետք է ծառայենք/հնազանդվենք մեր Տիրոջը: Մենք ծառայում/հնազանդվում ենք երախտագիտությունից ելնելով և սիրում Մեկին, ով սիրում է մեզ:
4. Քրիստոնեայի կյանքը գերբնական կյանք է: Այն, ինչպես փրկությունը, պարզ է Աստծուց Քրիստոսում: Նա նախաձեռնում է այն և մատակարարում/տալիս դրա զորությունը: Մենք պետք է արձագանքենք ապաշխարությամբ և հավատքով, թե սկզբում և թե շարունակաբար:
5. Մեղքի հետ խաղ մի արա: Անվանիր ինչպես, որ կա: Շրջվիր դրանից, փախիր դրանից: Մի գցիր քեզ փորձության մեջ:
6. Մեղքը կապվածություն է, որը կարող է կոտրվել/քանդվել, բայց այն ժամանակ է պահանջում, ջանք և ցանկություն/կամք:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:1-7

¹Արդ ի՞նչ ասենք. մնա՞նք մեղքի մեջ, որ շնորհքը շատանայ:²Քա՛յ լիցի. մենք որ մեռանք մեղքին, էլ ի՞նչպէս դեռ կապրենք նորանում:³Կամ չգիտե՞ք թէ քանիներս որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք՝ նորա մահուանը մկրտուեցանք:⁴Սկրտութիւնովը նորա հետ թաղուեցանք մահի մեջ. որ ինչպէս Քրիստոսը Հօր փառքովը մեռելների միջից յարութիւն առաւ, այնպէս մենք էլ կեանքի նորոգութեան մեջ ման գանք:⁵Որովհետեւ եթէ նորա մահի նմանութիւնովը նորա հետ տնկուեցանք, ապա նորա յարութեանն էլ նման կլինինք:⁶Այս գիտենալով, որ մեր հին մարդը նորա հետ խաչուեցաւ, որ մեղքի մարմինը խափանուի, որ այլ ես չծառայենք մեղքին:⁷Որովհետեւ նա որ մեռնում է՝ արդարացած է մեղքիցը:

NASB (UPDATED) TEXT : 6: 1-7

¹What shall we say then? Are we to continue in sin so that grace may increase? ²May it never be! How shall we who died to sin still live in it? ³Or do you not know that all of us who have been baptized into Christ Jesus have been baptized into His death? ⁴Therefore we have been buried with Him through baptism into death, so that as Christ was raised from the dead through the glory of the Father, so we too might walk in newness of life. ⁵For if we have become united with *Him* in the likeness of His death, certainly we shall also be *in the likeness* of His resurrection, ⁶knowing this, that our old self was crucified with *Him*, in order that our body of sin might be done away with, so that we would no longer be slaves to sin; ⁷for he who has died is freed from sin.

Արևելահայերեն «մնա՞նք մեղքի մեջ, որ շնորհքը շատանայ»

Արևմտահայերեն «մեղքի մեջ մնա՞նք արդեօք, որպէս զի շնորհքը շատանայ»

6:1

NASB “Are we to continue to sin that grace might increase”

NKJV “Shall we continue in sin that grace may abound”

NRSV “Should we continue in sin in order that grace may abound”

TEV “That we should continue to live in sin so that God’s grace will increase”

JB “Does it follow that we should remain in sin so as to let grace have greater scope”

Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Այն ուղղակի հարցնում է, քրիստոնեաները «ասարում ե՞ն» կամ «հարում ե՞ն» մեղքը: Այս հարցը ետ է նայում դեպի 5:20. Պողոսը նորից օգտագործում է ենթադրյալ ընդդիմություն (սուր քննադատություն) որպեսզի պաշտպանի ընթերցողներին սխալ հասկացողությունից և շնորհքի կիրառությունից (հմմտ. I Հովհ. 3:6,9; 5:18): Աստծո շնորհքն ու ողորմությունը ոչ մի դեպքում չեն հանդիսանում Աստծուն անհնազանդ կյանքի թույլտվություն:

Ձրի փրկության Պողոսի ավետարանը, որպես Աստծո շնորհքի պարզև Քրիստոսի միջոցով (հմմտ. 3:24; 5:15,17; 6:23) շատ հարցեր է բարձրացնում արդար կյանք ասարելու մասին: Ինչպե՞ս է ձրի պարզևը մարդու մեջ արտադրում բարոյական մաքրություն: Արդարությունն ու սրբացումը չպետք է բաժանվեն իրարից (հմմտ. Մաթ. 7:24-27; Գուկ. 8:21; 11:28; Հովհ. 13:17; Հն. 2:13; Հակ.1:22-25; 2:14-26):

Այս առումով թույլ տվեք մեջբերել Ֆ. Ֆ. Բրյուսի գրքից «Պողոս՝ սրտեր ազատագրող առաքյալ» (F. F. Bruce in *Paul: Apostle of the Heart Set Free*,) «...քրիստոնյաների մկրտությունը սահման դրեց իրենց հին անապաշխար գոյության և Քրիստոսով իրենց նոր կյանքի միջև; սա նշանակում էր նրանց մեռած վիճակը՝ նախկին կյանքի նկատմամբ, այնպես որ մկրտված քրիստոնյան շարունակել մեղք գործել անհասկանալի էր, արտուրդ էր , ինչպես ազատված ծառան մնալ իր նախկին տիրոջ մոտ ծառայության (հմմտ. Հն. 6:1-4, 15-23) կամ ինչպես որբևայրին մնալ «իր ամուսնու օրենքի, ենթակայության տակ», էջ 281-82 (հմմտ. Հն. 7:1-6):

Ջեյմս Ս. Ստյուարտի «Մարդը Քրիստոսի մեջ» գրքում նա գրում է (James S. Stewart’s book, *A Man in Christ*,): «Դասական տեքստը առաքյալների բոլոր մտքերի մասին գտնվում է Հռոմեացի 6-րդ գլխում: Այնտեղ Պողոսը տարօրինակ ուժով և ջանքերով, հիասքանչ դաս է տալիս և սրտին և խղճին, բացատրելով, որ որպեսզի միվորված լինես Քրիստոսի հետ Իր մահվան մեջ հավատացյալի համար նշանակում է լիարժեք և վճռական բաժանում մեղքից» էջ 187-88:

6:2 «Քաւ լիցի» Սա հազվագյուտ օգտագործվող քերականական ձև է, ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որը արտահայտում էր ցանկություն կամ աղոթք: Դա Պողոսի ոճն էր՝ պատասխանելու ենթադրական ընդդիմությանը: Պողոսն արտահայտում էր իր ցնցումը և սարսափը այն գիտակցության, թե ինչպես են սխալ շնորհքը անհավատ մարդիկ (հմմտ. 3:4,6):

«որ մեռանք մեղքին» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, նշանակում է «մենք մեռել ենք»: ԵՋԱԿԻ թվով «մեղք»-ը շատ հաճախ է օգտագործվում ամբողջ այս գլխում: Թվում է, թե դա վերաբերվում է Ադամից ժառանգած մեր «մեղավոր բնությանը» (հմմտ. Հն. 5:12-21; I Կոր. 15:21-22): Պողոսը հաճախ օգտագործում է մահվան գաղափարը որպես փոխաբերություն ցույց տալու համար հավատացյալի նոր հարաբերությունը Հիսուսի հետ: Նրանք այլևս ենթակա չեն մեղքի իշխանությանը:

«էլ ի՞նչպես դեռ կապրենք նորանում» Սա բառացիորեն «քայլել» է: Այս փոխաբերությունը օգտագործվում էր շեշտելու կամ մեր հավատքի կյանքը (հմմտ. Եփ. 4:1; 5:2,15) կամ էլ մեղքի կյանքը (հմմտ. 4): Հավատացյալները չեն կարող ուրախ ասարել մեղքի մեջ:

6:3-4 «մկրտուեցանք. . . թաղուեցանք» Սրանք երկուսն էլ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ են: Այս քերականական ձևը ընդգծում է ավարտված

գործողություն կատարված, դրսից ինչ որ մեկի կողմից, այստեղ Հոգին է: Այս կոնտեքստում նրանք զուգահեռներ են:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Կուրտիս Վաուգհանի «Գործք Առաքելոց» գրքում (Curtis Vaughan, *Acts*,) էջ 28, կա հետաքրքիր մի ծանոթագրություն.

Հունարեն «մկրտված, մկրտել» բառը արտահայտված է երրորդ դեմքով և հրամայական եղանակով; «ապաշխարել» բառը երկրորդ դեմք հրամայական եղանակով: Այս փոփոխությունը երկրորդ դեմքի ավելի ուղղակի պատվերից դեպի ավելի քիչ ուղիղ երրորդ դեմքի «մկրտվել» պատվերին, ենթադրում է, որ Պետրոսի հիմնական պահանջը ապաշխարությունն էր, որը իր համար առաջնակարգ էր:

Սա համապատասխանում է քարոզչության հիմնական թեմային թե Հովհաննես Սկրտիչի (հմմտ. Մաթ. 3:2) և թե Հիսուսի (հմմտ. Մաթ. 4:17): Ապաշխարությունը հոգևորության բանալին է իսկ մկրտությունը այս հոգևոր փոփոխության արտաքին արտահայտման ձևն է: Նոր Կտակարանում չկան չմկրտված հավատացյալներ: Վաղ եկեղեցու մկրտությունը հրապարակավ հավատքի խոստովանությունն է: Այն առիթ է հրապարակավ հավատքի խոստովանության Քրիստոսին, ոչ թե մեխանիզմ փրկության համար: Պետք է հիշել, որ Պետրոսի 2-րդ քարոզի մեջ չի նշվում մկրտությունը, բայց ապաշխարության մասին այո (հմմտ. 3:19; Բուկ. 24:17): Քրիստոսը օրինակ եղավ նաև մկրտության մեջ (հմմտ. Մաթ. 3:13-18): Մկրտությունը պատվիրված էր Հիսուսի կողմից (հմմտ. Մաթ. 28:19): Նոր Կտակարանում ոչ մի տեղ հարց չի առաջանում մկրտության մասին, ենթադրվում է, որ բոլոր հավատացյալները կմկրտվեն: Ինչևէ, պետք է զգուշանալ մկրտությանը խորհրդոր իմաստ տալուց կամ ձևական, ֆորմալ բնույթ տալուց: Փրկությունը դա հավատքի արդյունք է, և ոչ թե, որ մարդը ճիշտ տեղում հայտնվեց, ճիշտ խոսքեր ասաց կամ էլ ճիշտ ծեսը կատարեց:

«Յիսուս Քրիստոսով» Այստեղ *eis* (մեջ) նախդիրի կիրառությունը Մաթ.28:19-ի Մեծ Պատվիրանի հետ, որտեղ նորադարձները մկրտվում են *eis* (մեջ) Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Ի Կոր. 12:13-ում այս ՆԱԽԳԻՐԸ նաև օգտագործվում է նկարագրելու համար հավատացյալների մկրտությունը Սուրբ Հոգով Քրիստոսի մարմնի մեջ: *Eis* –ը այս կոնտեքստում հոմանիշ է *en*-ին (Քրիստոսում) հ. 11, որը Պողոսի սիրած ձևն էր հավատացյալների մասին խոսելիս: Սա ներգոյական հոլովի տեղի պարագա է: Հավատացյալները ապրում և շարժվում են և գոյություն ունեն Քրիստոսում: Այս ՆԱԽԳԻՐՆԵՐԸ արտահայտում են այս մտերմիկ միությունը, այս հաղորդակցության ոլորտը, այս որթատունկի և ճյուղերի կապը: Հավատացյալները նույնացվում և մանում են Քրիստոսին Իր մահով, Իր հարությանը, Իր հնազանդությունով Աստծուն ծառայելով և Իր Թագավորությանը:

«Նորա մահուանը... նորա հետ թաղուեցանք» Մկրտությունը ամբողջությամբ թաղվելով ջրի մեջ պատկերում է մահն ու թաղումը (հմմտ. հ. 5 և Կող. 2:12): Հիսուսն օգտագործեց մկրտությունը որպես փոխաբերություն Իր մահվան համար (հմմտ. Մարկ. 10:38-39; Բուկ. 12:50): Այստեղ շեշտը մկրտության վարդապետության վրա չէ, այլ քրիստոնյայի նոր, Քրիստոսի մահվան և թաղման մտերմիկ հարաբերության վրա: Հավատացյալները նույնացնում են իրենց Քրիստոսի մկրտությունով, Նրա բնավորությամբ, Նրա զոհով և Նրա առաքելությունով: Մեղքն այլևս իշխանություն չունի հավատացյալների վրա:

6:4 «Մկրտութիւնովը նորա հետ թաղուեցանք մահի մեջ» Այս գլխում Պողոսը, ինչը բնորոշ է իր բոլոր գրվածքներին, շատ է օգտագործում *sun* (հետ, միասին) նախդիրները.

1. *sun + thaptō* = թառվել համարտեղ, հ. 4; Կող. 2:12; նաև տես հ. 8

2. *sun + stauroō* = տնկվել համատեղ, հ. 5
3. *sun + azō* = համատեղ կյանք, հ. 8; II Տիմ. 2:11 (նաև և մահ և թագավորություն միասին)

«այնպես մենք էլ կեանքի նորոգութեան մէջ ման գանք» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Սրբացումը փրկության սպասված արդյունքն է: Քանի որ հավատացյալները ճանաչում են Աստծո շնորհքը Քրիստոսի միջոցով, ապա նրանց կյանքը պետք է տարբեր լինի: Մեր նոր կյանքը մեզ փրկություն չի բերում, այլ այն փրկության արդյունքն է (հմմտ. հհ. 16, 19; և Եփ. 2:8-9,10; Հակ. 2:14-26): Սա կամ- կամ-ի հարց չէ, հավատք թե գործեր, այլ կա մարդու փոխված կյանքի տրամաբանական շարունակությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՐԲԱՑՈՒՄ

Նոր Կտակարանը պնդում է, որ երբ մեղավորը դարձի է գալիս դեպի Հիսուսը՝ ապաշխարելով և հավատալով, նա մեկ ակնթարթում, անմիջապես արդարացվում և սրբվում է: Սա նրա նոր դիրքն է Քրիստոսում: Նրա արդարությունը դրվում է նորադարձի վրա (Հռ. 4): Նա հռչակվում է արդար և սուրբ (Աստծո կողմից ընդունված դատական որոշումը):

Բայց Նոր Կտակարանը նաև ստիպում է հավատացյալներին սրբացման ընթացքը պահել: Սա թե աստվածաբանական դիրք է Հիսուս Քրիստոսի կատարած գործի միջոցով և թե կոչ է քրիստոսանման լինելու վարքով և գործերով առօրյա կյանքում: Եթե փրկությունը ձրի պարգև է և նոր, հիանալի և անգին ապրելակերպ, ապա նաև սա նույնն է սրբության համար:

Առաջին արձագանքը, ապաշխարության պահը	Աստիճանաբար քրիստոսանման դառնալը
Գործք 20: 23; 26:18	Հռոմեացիս 6:19
Հռոմեացիս 15:16	II Կորնթացիս 7:1
I Կորնթացիս 1:2-3; 6:11	I Թեսաղոնիկեցիս 3:13; 4:3-4,7; 5:23
II Թեսաղոնիկեցիս 2:13	I Տիմոթեոս 2: 15
Եբրայեցիս 2:11; 10:10,14; 13:12	II Տիմոթեոս 2:21
I Պետրոս 1:1	Եբրայեցիս 12: 14
	I Պետրոս 1:15-16

«Քրիստոսը մեռելների միջից յարութիւն առաւ» Այս կոնտեքստում Հոր ընդունելությունը և հաստատումը, հավանությունը Իր Որդու խոսքերի և գործերի՝ արտահայտված է երկու մեծ իրադարձություններում

1. Հիսուսի հարությունը մեռելներից
2. Հիսուսի համաբարձումը և Հոր աջ կողմում լինելը

«Հօր փառքովը» «փառք»-ի համար տես Հատուկ Թեմա 3:23: «Հայր» տես Հատուկ Թեմա 1:7:

6:5 «եթէ» Այստեղ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Պողոսը ենթադրում էր, որ իր ընթերցողները հավատացյալներ էին:

«նորա հետ տնկուեցանք» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿԱՏԱՐՅԱԼ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, որը կարող էր թարգմանվել «եղել և շարունակում են իրար միացած մնալ» կամ «եղել և շարունակում են տնկված լինել իրար հետ»: Այս ճշմարտությունը աստվածաբանորեն նման է «մնալ, ապրել» Հովհ.15: Եթե հավատացյալները ճանաչվել կամ նույնացվել են Հիսուսի մահվան հետ (հմմտ. Գաղ. 2:19-20; Կող. 2:20; 3:3-5), ապա աստվածաբանորեն նրանք պետք է մեկ լինեն Նրա հարուցյալ կյանքի հետ (հմմտ. հ. 10):

Սկրտության վերաբերյալ այս փոխաբերությունը, որպես մահ նշանակում էր և ցույց էր տալիս (1) մենք մեռել ենք հին կյանքի համար, հին ուխտին, (2) մենք կենդանի ենք Հոգու համար , նոր

ուխտին: Քրիստոնեական մկրտությունը նույնը չէ ինչ Հովհաննես Մկրտիչի մկրտությունը, որը Հին Կտակարանի վերջին մարգարեն էր: Մկրտությունը վաղ եկեղեցու հնարավորությունն էր նորադարձի համար հրապարակավ իր հավատքը դավանելու համար: Մկրտության ամենավաղ ֆորմուլան, որը պիտի կրկնվեր թեկնածուի կողմից մկրտության պահին, այս էր «Ես հավատում եմ, որ Հիսուսը Տեր է» (հմմտ. Հռ. 10:9-13): Այս հրապարակային հռչակումը արտաքին երևույթ էր, ծիսական գործողություն այն բանի, ինչ որ նախկինում տեղի էր ունեցել մարդու կյանքում: Մկրտությունը միջոց չէ ներում, փրկություն կամ Սուրբ Հոգի ստանալու միջոց, այլ հնարավորություն հրապարակավ իրենց հավատքը խոստովանելու և դավանելու (հմմտ. Գործք 2:38): Բայց և այնպես, սա անպարտադիր չէր: Հիսուսը պատվիրեց այն (հմմտ. Մաթ. 28:19-20), և Ինքն էլ օրինակ ծառայեց (հմմտ. Մաթ. 3; Մարկ. 1; Դուկ. 3):

Արևելահայերեն «գիտենալով, որ մեր հին մարդը նորա հետ խաչուեցաւ»
Արևմտահայերեն «Այս գիտնանք թէ մեր հին մարդը անոր հետ խաչուեցաւ »

- 6:6**
NASB “knowing this, that our old self was crucified with Him”
NKJV “knowing this, that our old man was crucified with him”
NRSV “We know that our old self was crucified with him”
TEV “And we know this: our old being has been put to death with Christ on his cross”
JB “We must realize that our former selves have been crucified with him”

Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որը նշանակում է «մեր հին ես-ը խաչվել է մեկընդմիջ Սուրբ Հոգով»: Այս ճշմարտությունը հանդիսանում է գլխավոր բան հաղթական քրիստոնեական կյանքի համար: Հավատացյալները պետք է գիտակցեն իրենց նոր հարաբերությունը մեղքի հանդեպ (հմմտ. Գաղ. 2:20; 6:14): Մարդու հին, ընկած, մեղավոր էությունը (Ադամական բնություն) մեռել է Քրիստոսի հետ (հմմտ. հ. 7; Եփ. 4:22 և Կող. 3:9): Որպես հավատացյալ մենք հիմա ունենք ընտրություն մեղքն ընտրելու մեջ, ինչպես Ադամն ուներ սկզբում:

Արևելահայերեն «որ մեղքի մարմինը խափանուի»
Արևմտահայերեն « որ մեղաւոր մարմինը փճանայ »

- **NASB, NKJV** “that our body of sin might be done away with”
NRSV “so that the body of sin might be destroyed”
TEV “in order that the power of the sinful self might be destroyed”
JB “to destroy the sinful body”

Պողոսն օգտագործում է «մարմին» (*soma*) բառը մի քանի արտահայտություններում ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ-ով

1. մեղքի մարմինը, Հռ. 6:6
2. այս մահի մարմինը, Հռ. 7:24
3. մարմնական մարմինը, Կող. 2:11

Պողոսը խոսում է այս մեղքի և ապստամբ ժամանակաշրջանի ֆիզիկական կյանքի մասին: Հիսուսի նոր հարուցյալ մարմինը արդարության նոր դարի մարմինն է (հմմտ. II Կոր. 5:17): Ֆիզիկական լինելը չէ խնդիրը (ինչպես հունարեն փիլիսոփայության մեջ), այլ մեղքն ու ըմբոստությունը: Մարմինը չար չէ: Քրիստոնեությունը պնդում է հավատք մարդկանց գոյությունը ֆիզիկական մարմնով մասն հավիտենականության մեջ (հմմտ. I Կոր. 15): Ինչևէ, ֆիզիկական մարմինը ռազմի դաշտ է փորձության, մեղքի և ես-ի համար:

Այս արտահայտության մեջ օգտագործված է ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՈՒՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ: Արտահայտությունը, անգլերենում այսպես հնչող (ոչնչացնել, բնաջնջել) նշանակում էր «չգործող դարձնել», «անգոր անել» կամ «անարդյունավետ դարձնել, բայց ոչ կործանված հիմնահատակ: Այս բառը Պողոսի ամենասիրելի խոսքերից մեկն էր, որն օգտագործված է ավելի քան 25 անգամ: Տես հատուկ թեմա 3:3: Մեր ֆիզիկական մարմինը բարոյապես չեզոք է, բայց այն նաև ռազմադաշտ է հոգևոր շարունակական կոնֆլիկտի համար (հմմտ. հհ. 12-13; 5:12-21; 12:1-2):

6:7 «Ո՞ր մեռնում է՝ արդարացած է մեղքից» Այստեղ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՈՒ ԴԵԲԱՅ Է կամ ԿԱՏԱՐՅԱԼ/ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՈՒ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որը նշանակում է «ո՞ր ով մեռել է եղել և շարունակում է ազատ լինել մեղքից»: Քանի որ հավատացյալները նոր արարածներ են Քրիստոսով, նրանք եղել և շարունակում են ազատված լինել մեղքի և ես-ի գերությունից, որը ժառանգել էին Ադամի անկումից (հմմտ. 7:1-6):

Հունարեն տերմինը այստեղ թարգմանված որպես «ազատված» սկզբի գլուխներում մի քանի ուրիշ տարբերակներում թարգմանված է որպես «արդարացած» (ASV): Այս կոնտեքստում «ազատված» թարգմանությունն է էլ ավելի իմաստ տալիս (նման, թե ինչպես է օգտագործված Գործք 13:38): Հիշեք, որ բառի իմաստը կոնտեքստն է որոշում, և ոչ թե բառարանը կամ ներկա տեխնիկական սահմանումը: Բառերը ստանում են իրենց վերջնական իմաստը միայն նախադասության մեջ իսկ նախադասությունն էլ միայն ունի իմաստ բաժնի, հատվածի մեջ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:8-11

⁸ Եւ եթէ Քրիստոսի հետ մեռանք, հաւատում ենք՝ որ նորա հետ էլ կապրենք:⁹ Գիտենալով որ՝ Քրիստոսը մեռելների միջից յարութիւն առած լինելով, այլ եւս չէ մեռնում, եւ մահը նորա վերայ այլ եւս չէ տիրում:¹⁰ Որովհետեւ այն որ մեռաւ՝ մեղքին մեռաւ մէկ անգամ, եւ այն որ կենդանի է՝ Աստուծուն է կենդանի:¹¹ Նոյնպէս էլ դուք ձեր անձերը մեղքին մեռած համարեցէք, եւ Աստուծուն կենդանի՝ մեր Տէր Քրիստոս Յիսուսի ձեռովը:

NASB (UPDATED) TEXT : 6: 8-11

⁸Now if we have died with Christ, we believe that we shall also live with Him, ⁹knowing that Christ, having been raised from the dead, is never to die again; death no longer is master over Him. ¹⁰For the death that He died, He died to sin once for all; but the life that He lives, He lives to God. ¹¹Even so consider yourselves to be dead to sin, but alive to God in Christ Jesus.

6:8 «Եթէ» Այստեղ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Հավատացյալի մկրտությունը դա տեսանելի պնդում է այն, որ այդ մարդը մեռել է Քրիստոսի հետ:

«Նորա հետ էլ կապրենք» Այս կոնտեքստը պահանջում է, որ այս արտահայտության իմաստը տարածվեր և «այստեղ և հիմա» (հմմտ. I Հովհ. 1:7), և ոչ միայն բացառապես ապառնի ժամանակի: Համար 5-ը խոսում է այն մասին, որ մենք կիսում ենք Քրիստոսի մահը Իր հետ, այն ինչ համար 8-ը պնդում է նույն բանը կապված մեր կյանքի հետ Նրա հետ: Նույն կապը կա նաև Աստծո թագավորության աստվածաշնչյան գաղափարի մեջ: Անշուշտ այն վերբերում է հավատացյալի կյանքին այստեղ և հիմա, և միևնույն ժամանակ մեր ապագային: Մարդուն տրված ձրի շնորհքի պարզևը պետք է արտադրի ինքնակառավարում, և ոչ թե արտոնություն հանդիսանա:

6:9 «մեռելների միջից յարութիւն առած լինելով» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԵՐԲԱՅ Է (տես 6:4, ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ):

Նոր Կտակարանը պնդում է, որ Երրորդության բոլոր երեք անձերն էլ գործել են Հիսուսի հարության ժամանակ (1) Հոգին (հմմտ. Հն. 8:11); (2) Որդին (հմմտ. Հովհ. 2:19-22; 10:17-18); և ավելի հաճախակի (3) Հայրը (հմմտ. Գործք 2:24,32; 3:15,26; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հն. 6:4,9): Հոր գործողությունը հաստատում էին, որ Նա ընդունում է Հիսուսի կյանքը, մահն ու ուսմունքները: Այս ամենը շատ կարևոր էր վաղ եկեղեցու առաքյալների քարոզների մեջ: Տես Հատուկ Թեմա: «*Kerygma*» 2:14.

**Արևելահայերեն «մահը նորա վերայ այլ ես չէ տիրում»
Արևմտահայերեն « ալ մահը անոր վրայ իշխանութիւն չունի »**

□

NASB “death no longer is master over Him”
NKJV, NRSV “Death no longer has dominion over Him”
TEV “death will no longer rule over him”
NJB “Death has no power over him anymore”

kurieuō ԲԱՅ-ը ձևավորվել է *kurios* բառից, որը նշանակում է «սեփականատեր», «տեր», «ամուսին» կամ «պարոն»: Հիսուսն հիմա տեր է մահվան վրա (հմմտ. Հայտ. 1:18): Հիսուսն առաջինն է, Ով կտրեց մահվան գորությունը (հմմտ. I Կոր. 15):

6:10 «Որովհետև այն որ մեռա՝ մեղքին մեռա» Հիսուսն ապրեց մեղավոր աշխարհում, և չնայած Նա չմեղանչեց, մեղավոր աշխարհը խաչեց Նրան (հմմտ. Եբ. 10:10): Հիսուսի փոխարկոխանորդ մահը մարդու օգտի համար չեղյալ համարեց Օրենքի պահանջներն ու հետևանքները նրանց վրա (հմմտ. Գաղ. 3:13; Կող. 2:13-14):

«մեկ անգամ» Այս կոնտեքստում Պողոսն ընդգծում է Հիսուսի խաչելությունը: Նա մեկ անգամ մեռավ մեղքի համար բայց Իր մահը թողեց այնպիսի ազդեցություն, որ բոլոր Իր հետևորդները մեռան մեղքի համար/մեղքին:

Երբայցիս թողթը նաև ընդգծում է Հիսուսի մեկ անգամ կատարած զոհաբերական մահվան ultimacy: Այս մեկ անգամ կատարած փրկությունն ու ներումը հավիտյան իրականացավ և ամբողջացավ (հմմտ. «մեկ անգամ» [*ephapax*], 7:27; 9:12; 10:10 և «մեկ անգամ և ընդմիշտ» [*hapax*], 6:4; 9:7,26,27,28; 10:2; 12:26,27): Սա պարբերաբար կրկնվող նորկտակարանյան պնդում է Քրիստոսի զոհի ամբողջության մասին:

«այն որ կենդանի է՝ Աստուծուն է կենդանի» Երկու ԱՕՐԻՍՏ ժամանակաձևի բայերը հ. 10ա հակասում են ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ երկու բայերին հ. 10բ: Հավատացյալները մեռան Քրիստոսի հետ և հավատացյալներն ապրում են Աստծո համար Քրիստոսի միջոցով: Ավետարանի նպատակը միայն ներումը չէ (արդարացում) այլ Աստծուն ծառայելը (սրբացում): Հավատացյալները փրկված են ծառայելու համար:

6:11 «Նոյնպես էլ դուք ձեր անձերը մեղքին մեռած համարեցեք» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ԶԵԶՈՔ ՍԵՌ՝ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է: Սա շարունակական ր հավատացյալների համար սովորական դարձած պատվեր է: Քրիստոնյաներն իմանալով, թե ինչ արեց Քրիստոսն իրենց համար որոշիչ դեր ունի նրանց առօրյա կյանքում: «Համարեցեք» տերմինը (հմմտ. 4:4,9), օգտագործվում էր հաշվապահական տերմինաբանության մեջ, որը նշանակում էր «ուշադիր/զգուշորեն գումարել, հանրագումարի բերել» իսկ այնուհետև վարվել ելնելով դրանից:

Համարներ 1-11-ը ցույց են տալիս հավատացյալի դիրքը Քրիստոսում (դիրքային սրբացում) իսկ 12-13 հատուկ ուշադրություն է տալիս Նրա մեջ քայլելու, ապրելուն, թե ինչպես է քրիստոնյան ապրում՝ լինելով Քրիստոսի մեջ (պրոգրեսիվ, առաջընթացող սրբացում): Տես Հատուկ Թեմա հ. 4:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:12-14

¹² Սորա համար թող մեղքը չթագաւորէ ձեր մահկանացու մարմնի մեջ, որ հնազանդիք նորա ցանկութիւններին: ¹³ Եւ ձեր անդամները անիրաւութեան գործիք մի ներկայացնէք մեղքին. այլ ձեր անձերը ներկայացրէք Աստուծուն՝ ինչպէս մեռելներից կենդանացածներ, եւ ձեր անդամներն արդարութեան գործիք՝ Աստուծուն. ¹⁴ Որովհետեւ մեղքը չի տիրիլ ձեզ վերայ. որովհետեւ օրէնքի տակ չէք, այլ շնորհքի տակ:

NASB (UPDATED) TEXT : 6: 12-14

¹²Therefore do not let sin reign in your mortal body so that you obey its lusts, ¹³and do not go on presenting the members of your body to sin as instruments of unrighteousness; but present yourselves to God as those alive from the dead, and your members as instruments of righteousness to God. ¹⁴For sin shall not be master over you, for you are not under law but under grace.

6:12 «Սորա համար թող մեղքը չթագաւորէ ձեր մահկանացու մարմնի մեջ» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ-ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է ԺԽՏԱԿԱՆ ՍԱՄՆԻԿ-ով, որը սովորաբար նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար: «Թագավորել» տերմինը կապված է 5:17-21 և 6:23-ի հետ: Պողոսը անձնավորում է/մարմնացնում է մի քանի աստվածաբանական գաղափարներ (1) մահը թագավորեց որպես թագավոր (հմմտ. 5:14,17; 6:23); (2) շնորհքը թագավորեց որպես թագավոր (հմմտ. 5:21); և (3) մեղքը թագավորեց որպես թագավոր (հմմտ. 6:12,14): Իրականում հարցը սա է, ո՞վ է թագավորում քո կյանքում: Հավատացյալն ունի Քրիստոսով գործություն ճիշտ ընտրություն կատարելու: Անհատի, տեղական եկեղեցու և Աստծո Թագավորության ողբերգությունն այն է, երբ հավատացյալներն ընտրում են ես-ն ու մեղքը, նույնիսկ իր իրավունքները շնորհքին հանձնալ լինելով:

6:13 «ձեր անդամները անիրաւութեան գործիք մի ներկայացնէք մեղքին» Այստեղ նույնպես ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ-ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է ԺԽՏԱԿԱՆ ՍԱՄՆԻԿ-ով, որը սովորաբար նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար: Սա ցույց է տալիս, որ հավատացյալները մեղք գործելու ներուժ, պոտենցյալ ունեն (հմմտ. 7:1; I Հովհ. 1:8-2:1): Բայց մեղանչելու անհրաժեշտությունը վերանում է երբ հավատացյալը ճիշտ հարաբերության մեջ է Քրիստոսի հետ, հհ. 1-11:

«գործիքներ» Այս տերմինը վերաբերում է «զինվորական զենքերին»: Մեր ֆիզիկական մարմինը ռազմադաշտ է փորձությունների համար (հմմտ. հհ. 12-13; 12:1-2; I Կոր. 6:20; Փիլ. 1:20): Բայց մեր կյանքը բաց Ավետարան է բոլորի համար:

«այլ ձեր անձերը ներկայացրէք Աստուծուն» Այստեղ ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ-ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է, որը կոչ էր մարդու կյանքում կարևոր որոշում կայացնելու համար: Հավատացյալները սա անում են հավատքով ապաշխարության/փրկության ժամանակ, բայց նրանք պետք է շարունակեն դա անել իրենց կյանքի ընթացքում:

- Ուշադրություն դարձրեք այս համարի զուգահեռականությանը
1. նույն ԲԱՅԸ և երկու դեպքում էլ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ
 2. պատերազմական փոխաբերությունն ա. անիրավության գործիք/զենք

բ. արդարության գործիք/զենք

3. հավատացյալները կարող են իրենց մարմինները ներկայացնել մեղքին կամ ամբողջությամբ տրվել Աստծուն:

Հիշեք, որ այս համարը վերաբերվում է հավատացյալներին՝ անհրաժեշտ ընտրությունը պահպանվում է, պատերազմը շարունակվում է:

6:14 «Որովհետև մեղքը չի տիրիլ ձեզ վերայ.» Այստեղ ԱՊԱՌՆԻ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (հմմտ. Սաղ. 19:13) բայց կատարում է ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԴԵՐ, «մեղքը չպետք է տիրի ձեր վրա»: Մեղքը չի տիրում հավատացյալների վրա, որովհետև նա չի տիրում Քրիստոսի վրա (հմմտ. հ. 9; Հովհ. 16:33):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:15-19

¹⁵Արդ ի՞նչ. մե՞ղք գործենք, որովհետև օրէնքի տակ չենք՝ այլ շնորհքի տակ. քա՛վ լիցի:¹⁶ Դուք չգիտէ՞ք, թէ ում որ ձեր անձերը ծառայ էք ներկայացնում՝ նորան հնազանդելու, ծառաներ էք նորան որին հնազանդում էք. թէ մեղքին՝ դէպի մահ, եւ թէ հնազանդութեան՝ դէպի արդարութիւն:
¹⁷Բայց շնորհակալութիւն Աստուծոյ. որ մեղքի ծառայ էիք, բայց սրտով հնազանդեցիք այն վարդապետութեան օրինակին՝ որին յանձնուեցաք:¹⁸Ուրեմն դուք մեղքիցն ազատուած՝ ծառայեցիք արդարութեանը:¹⁹Մարդկօրէն եմ ասում ձեր մարմնի տկարութեան համար. որ ինչպէս ձեր անդամները ծառայ ներկայացրիք պղծութեանն ու անօրէնութեանը՝ անօրէնութեան համար, նոյնպէս էլ հիմա ձեր անդամները ծառայ ներկայացրէք արդարութեանը սրբանալու համար:

NASB (UPDATED) TEXT : 6: 15-19

¹⁵What then? Shall we sin because we are not under law but under grace? May it never be! ¹⁶Do you not know that when you present yourselves to someone as slaves for obedience, you are slaves of the one whom you obey, either of sin resulting in death, or of obedience resulting in righteousness?
¹⁷But thanks be to God that though you were slaves of sin, you became obedient from the heart to that form of teaching to which you were committed, ¹⁸and having been freed from sin, you became slaves of righteousness. ¹⁹I am speaking in human terms because of the weakness of your flesh. For just as you presented your members as slaves to impurity and to lawlessness, resulting in further lawlessness, so now present your members as slaves to righteousness, resulting in sanctification.

6:15 Այս երկրորդ ենթադրյալ հարցը (սուր քննադատություն) շատ նման է 6:1-ին: Երկուսն էլ պատասխանում են տարբեր հարցերի՝ քրիստոնյայի կապը մեղքի հետ: Համար 1-ը խոսում է այն մասին, որ շնորհքը չի կարելի ընդունել որպես մեղանշելու թույլատրություն, երբ հ. 15-ում խոսքը գնում է քրիստոնյայի համար մեղքի դեմ պայքարելու, դրան հակառակ կենալու անհրաժեշտության մասին: Այն ինչ, հիմա քրիստոնյան պետք է ծառայի Աստծուն նույն եռանդով և խանդավառությամբ, ինչպես նախկինում ծառայում էր մեղքին (հմմտ. 6:14):

**Արևելահայերեն «մե՞ղք գործենք»
Արևմտահայերեն «մե՞ղք գործենք»**

- NASB, NKJV, TEV “Shall we sin”
- NRSV “Should we sin”
- JB “that we are free to sin”

Վիլիամսի և Ֆիլիպսի թարգմանությունները, երկուսն էլ այս ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ թարգմանում են որպես ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ, ինչպես հ. 1-ում: Բայց սա չի կարելի հավաստի համարել: Ուշադրություն դարձրեք թարգմանության այլընտրանքային տարբերակներին (1) KJV, ASV, NIV - «մեղք գործե՞նք»; (2) «Centenary» թարգմանության հրատարակչություն [The Centenary Translation] - «Մեղավոր գործեր կգործե՞նք»; (3) RSV - «պարտավոր ե՞նք մեղք գործելու»: Հունարեն տարբերակում այս հարցը ունի բավականին ուժեղ շեշտադրություն և ակնկալում է դրական պատասխան: Սա Պողոսի ճշմարտությունը հաղորդելու սուր քննադատական մեթոդն էր: Այս համարը արտահայտում է կեղծ աստվածաբանություն: Պողոսը պատասխանում է իրեն հատուկ ձևով «Քավ լիցի»: Շատ կեղծ վարդապետներ չէին հասկանում և աղավաղում էին Պողոսի ավետարանը կապված բացարձակապես ձրի Աստծո շնորհքի պարզևի հետ:

6:16 Հարցն ակնկալում է դրական պատասխան «այո»: Մարդիկ ծառայում են ինչ որ բանի կամ ինչ որ մեկին: Ո՞վ է թագավորում քո կյանքում, մեղքը թե՞ Աստված: Ում մարդիկ հնազանդվում են նրան էլ ծառայում են (հմմտ. Գաղ. 6:7-8):

6:17 «Բայց շնորհակալություն Աստուծոյ» Պողոսը հաճախ ընդհատում է իր քննարկումը՝ Աստծուն փառաբանելու համար: Նրա գրվածքները սկիզբ են առնում իր աղոթքներից, իսկ իր աղոթքներն էլ իր ավետարանի իմացությունից: Տես Հատուկ Թեմա: Պողոսի աղոթքը, փառաբանությունը և գոհությունը 7:25.

«էիք. . հնազանդեցիք» Այստեղ «լինել» ԲԱՅ-ի ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ, որը նկարագրում է նրանց իրավիճակը և դիրքը անցյալում (մեղքի ծառա), հետևում է «դառնալ» ԲԱՅ-ի ԱՕՐԻՍ ԺԱՄԱՆԱԿԸ, որը պնդում է, որ իրենց ամպստամբ վիճակը ավելացել է:

«Բայց սրտով հնազանդեցիք այն վարդապետության օրինակին» Կոնտեքստում, սա վերաբերում է նրանց հավատքով արդարացմանը, որը պետք է տանի դեպի ամենօրյա քրիստոսամանություն: «Վարդապետություն» տերմինը վերաբերվում էր Առաքյալների ուսմունքին կամ ավետարանին:

«սիրտ» Տես Հատուկ Թեմա: Սիրտ 1:24

Արևելահայերեն «հնազանդեցիք այն վարդապետության օրինակին»
Արևմտահայերեն «հնազանդեցաք այն վարդապետության գաղափարին»

- NASB “that form of teaching to which you were committed”
- NKJV “that form of doctrine to which you were delivered”
- NRSV, NIV “to the form of teaching to which you were entrusted”
- TEV “the truth found in the teaching you received”
- NJB “to the pattern of teaching to which you were introduced”

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆԱԽԱՏԻՊ ՕՐԻՆԱԿ (TUPOS)
 Խնդիրը *tupos* բառն է, որն ունի զանազան գործածություններ.

1. Մոուլտոն և Միլլիգան, «Հունարեն Նոր Կտակարանի բառարան», էջ 645 [Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*, p. 645]
 - ա. օրինակ
 - բ. պլան
 - գ. ձև կամ միջոց, ոճ նամակի
 - դ. որոշում, վճիռ կամ հրաման, հրովարտակ
 - ե. վճիռ կամ որոշում
 - զ. մարդու մարմնի կառուցվածք, որպես գոհաբերության ծես բժշկող աստծուն
 - է. բայ, իմաստն ավելի ամրապնդելու համար օրենքի որոշակի դիրքում
2. Լաուվ և Նիդա, «Հունարեն-Անգլերեն բառարան», հատ.2, էջ 249 [Louw and Nida, *Greek-English Lexicon*, vol. 2, p. 249]
 - ա. սպի, (հմմտ. Հովհ. 20:25)
 - բ. պատկեր (հմմտ. Գործք 7:43)
 - գ. մոդել (հմմտ. Եբր. 8:5)
 - դ. օրինակ (հմմտ. I Կոր. 10:6; Փիլ. 3:17)
 - ե. նախատիպ (հմմտ. Հն. 5:14)
 - զ. կեսակ (հմմտ. Գործք 23:25)
 - է. բովանդակություն, պարունակություն (հմմտ. Գործք 23:25)
3. Հարոլդ Կ. Մոուլտոն «Վերլուծական հունարեն բառարան, (վերահիրատարակած), էջ 411 [Harold K. Moulton, *The Analytical Greek Lexicon Revised*, p. 411]:
 - ա. փշում, տպավորություն, նշան (հմմտ. Հովհ. 20:25)
 - բ. ուրվագծում, շրջագծում
 - գ. պատկեր (հմմտ. Գործք 7:43)
 - դ. ֆորմուլա, պլան գծագիր (հմմտ. Հն. 6:17)
 - ե. ձև, բովանդակություն, իմաստ (հմմտ. Գործք 23:25)
 - զ. կերպար, պատճեն, նմանություն (հմմտ. I Կոր. 10:6)
 - է. սպասված կերպար, տեսակ (հմմտ. Հն. 5:14; I Կոր. 10:11)
 - ը. օրինակ (հմմտ. Գործք 7:44; Եբր. 8:5)
 - թ. բարոյական կերպար, օրինակ (հմմտ. Փիլ. 3:17; I Թես. 1:7; II Թես. 3:9; I Տիմ. 4:12; I Պետ. 5:3)

Այս կոնտեքստից կարելի է եզրակացություն անել, որ # I տարբերակը ավելի լավ է համապատասխանում: Չէ որ Ավետարանը ունի իր մեջ թե վարդապետություն և թե գործնական ազդեցություն մարդու սպրեյակերպի վրա: Քրիստոսի ձրի պարզևը նաև պահանջում է քրիստոսանման կյանք:

6:18 «մեղքիցն ազատուած» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ԴԵԲԱՅ Է: Ավետարանը ազատագրել է հավատացյալներին Սուրբ Հոգու միջոցով Քրիստոսի կատարած գործի միջոցով: Հավատացյալները ազատագրվել են մեղքի պատժից (արդարացում) մեղքի բռնապետությունից (սրբացում, հմմտ. հհ. 7 և 22):

«ծառայեցիք արդարութեանը» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է, «դուք դարձաք ծառա արդարութեանը»: Տես հատուկ թեմա 1:17: Հավատացյալները ազատ են մեղքից՝ Աստծուն ծառայելու համար (հմմտ. հհ. 14,19,22; 7:4; 8:2): Չրի շնորհքի նպատակը բարեպաշտ կյանքն է: Արդարացումը թե օրինական հռչակում է և թե խթան անձնական արդարության: Աստված ուզում է փրկել և փոխել մեզ՝ ուրիշներին հասնելու համար: Շնորհքը մեզանով չի ավարտվում:

6:19 «Մարդկօրէն եմ ասում ձեր մարմնի տկարութեան համար.» Պողոսն իր խոսքը ուղղում է Հռոմի հավատացյալներին: Նա հասցեագրում է տեղական խնդիրը, որի մասին լսել էր (նախանձություն հրեա հավատացյալների և հեթանոս հավատացյալների միջև) թե նա պնդում է մի ճշմարտություն բոլոր հավատացյալների մասին: Ավելի վաղ Պողոսն օգտագործեց այս արտահայտությունը Հռ. 3:5, և նաև Գաղ. 3:15:

Համար 19-ը գուցա հետ է հ. 16-ին: Պողոսը կրկնում է իր աստվածաբանական պնդումներ էլ ավելի ընդգծելու դրանց իմաստը:

Ոմանք կասեն, որ այս արտահայտությունը նշանակում է, որ Պողոսը ներեղություն էր խնդրում ծառա, գերի փոխաբերությունը օգտագործելու համար: Ինչևէ, «ձեր մարմնի տկարության պատճառով» չի համապատասխանում այս մեկնաբանությանը: Ծառաները չէի դիտվում որպես չար բան առաջին դարի հասարակության մեջ, հատկապես Հռոմում: Դա պարզապես մշակույթ էր այդ օրերում:

«մարմին» Տես Հատուկ Թեմա 1:3.

«սրբանալու համար» Սա արդարացման նպատակն է (հմմտ. հ. 22): Նոր Կտակարանը օղտագործում է այս տերմինը երկու աստվածաբանական իմաստներով կապված փրկության (1) դիրքային սրբացում, որը Աստծո պարգևն է (օբյեկտիվ ասպեկտ) տրվում է փրկության ժամանակ արդարացման հետ միասին Քրիստոսի վրա ունեցած հավատքի միջոցով (հմմտ. Գործք 26:18; I Կոր. 1:2; 6:11; Եփ. 5:26-27; I Թես. 5:23; II Թես. 2:13; Եբ. 10:10; 13:12; I Պետ. 1:2) և (2) առաջադիմական/պրոգրեսիվ սրբացում, որը նույնպես Աստծո գործն է Սուրբ Հոգու միջոցով, որի միջոցով հավատացյալի կյանքը ձևափոխվում է Քրիստոսի պատկերին և հասունությանը նմանվելով (սուբյեկտիվ ասպեկտ, հմմտ. II Կոր. 7:1; I Թես. 4:3,7; I Տիմ. 2:15; II Տիմ. 2:21; Եբ. 12:10,14). Նայիր Հատուկ Թեմա 6:4.

Դա թե պարզ է և թե պատվեր: Այն դիրք/վիճակ է (օբյեկտիվ) և ակտիվ գործունեություն (սուբյեկտիվ): Դա թե ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (դրույթ) և թե ՀՐԱՍԱՅԱԿԱՆ (հրաման, պատվեր): Սրբացումն ունի սկիզբ, բայց իր կատարելությանը չի հասնում նույնիսկ մինչև վերջը (հմմտ. Փիլ. 1:6; 2:12-13):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:20-23

²⁰Որովհետև երբոր մեղքի ծառայ էիք՝ ազատ էիք արդարութիւնիցը: ²¹Արդ ի՞նչ պտուղ ունէիք այն ժամանակ, որոնց համար հիմա ամոթ էք քաշում. որովհետև նորանց վերջը մահ է: ²²Բայց հիմա որ մեղքիցնազատուած եւ Աստուծոյ ծառայ եղած էք՝ ձեր պտուղն ունիք սրբանալու համար, եւ նորա վերջը յաւիտենական կեանքն է: ²² Որովհետև մեղքի վարձքը մահն է, բայց Աստուծոյ շնորհքը՝ յաւիտենական կեանք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը:

NASB (UPDATED) TEXT: 6:20-23

²⁰For when you were slaves of sin, you were free in regard to righteousness. ²¹Therefore what benefit were you then deriving from the things of which you are now ashamed? For the outcome of those things is death. ²²But now having been freed from sin and enslaved to God, you derive your benefit, resulting in sanctification, and the outcome, eternal life. ²³For the wages of sin is death, but the free gift of God is eternal life in Christ Jesus our Lord.

6:20-21 Սա պարզապես հաստատում/բացատրում է հհ. 18 և 19 հակառակը: Հավատացյալները կարող են միայն ծառայել մեկ տիրոջ (հմմտ. Թես. 16:13):

6:22-23 Այս համարների իմաստը իրենից ներկայացնում է տրամաբանական շարունակական խորհրդածություն այն թեմայի շուրջ, թե ինչպես է վճարվում այն մարդը, ում նա ծառայում է: Փառք

Աստծուն, մեղքի և հավատացյալի միջև եղած վեճն ավարտվում է Աստծո շնորհքով: Առաջինը փրկության պարզևն է մեր համագործակցության միջոցով, և ապա քրիստոնեական կյանքի պարզևր, նույնպես մեր համագործակցության միջոցով: Երկուսն էլ ստացած պարզևներ/ընծա են հավատքի և ապաշխարության միջոցով:

6:22 «ձեր պտուղն (անգլ. օգուտ/շահ) ունիք սրբանալու համար, եւ նորա վերջը յաիտենական կեանքն է» (անգլ. օգուտ/շահ) տերմինը, որը բառացիորեն նշանակում է «պտուղ», օգտագործվում է հ. 21 խոսելով մեղքի հետևանքների մասին, սակայն հ. 22 այն խոսում է Աստծուն ծառայելու հետևանքների մասին: Ծտապ/անմիջական (անգլ. օգուտ/շահ) պտուղը դա հավատացյալի Քրիստոսանմանությունն է: Վերջնական/գերագույն (անգլ. օգուտ/շահ) պտուղը դա՝ լինել Նրա հետ և Նրա նման հավիտենական լինել (հմմտ. I Հովհ. 3:2): Եթե չկա շտապ/անմիջական արդյունք (փոխված կյանք, հմմտ. Հակոբ. 2) վերջնական արդյունքը կարող է լինել օրինական հիմքի վրա կարող է կասկածանքի տակ վերցվել (հավիտենական կյանք, հմմտ. Մաթ. 7): «Չկա պտուղ, չկա արմատ»:

6:23 Սա ամբողջ գլխի ամփոփումն է: Պողոսը պատկերեց ընտրությունը սև ու սպիտակով: Ընտրությունը մերն է —մեղք և մահ կամ ձրի պարզև կամ ձրի շնորհք Քրիստոսի միջոցով և հավիտենական կյանք: Այն շատ նման է Հին Կտակարանի իմաստուն գրականության «երկու ճանապարհներին» (Սաղ. 1; Առ. 4; 10-19; Մաթ. 7:13-14):

«մեղքի վարձքը» Մեղքը անձնավորվում/մարմնավորվում է որպես (1) ստրկատեր, (2) ռազմական զենեղա/գորավար, կամ (3) թագավոր, որը վճարում է հատուցում/վարձք (հմմտ. 3:9; 5:21; 6:9,14,17):

«Աստուծո շնորհքը՝ (անգլ. ձրի պարզև) յաիտենական կեանք» Այս բառը, թարգմանված « ձրի պարզև» (*charisma*) շնորհք բառի արմատից էր (*charis*, հմմտ. 3:24; 5:15, 16, 17; Եփ. 2:8-9): Տես հատուկ թեմա 3:24-ում:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչպե՞ս են բարի գործերը կապվում փրկության հետ (հմմտ. Եփ. 2:8-9,10)
2. Ինչպե՞ս է շարունակական մեղքը հավատացյալի կյանքում կապվում փրկության հետ (հմմտ. I Հովհ. 3:6,9)
3. Արդյո՞ք գլուխը սովորեցնում է «անմեղ կատարելություն»:
4. Ինչպե՞ս է 6-րդ գլուխը կապվում 5 և 7 գլուխների հետ:
5. Ի՞նչու է մկրտությունը քննարկվում այստեղ:
6. Քրիստոնեանեղը պահպանո՞ւմ են իրենց հին բնությունը: Ի՞նչու
7. Ի՞նչ լրացուցիչ իմաստ է բերում այն փաստը, որ հ. 1-14-ը ունեն բայեր և դրանցով կազմված բառեր ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ-ով, այն դեպքում, երբ հ. 15-23-ում հիմնականում օգտագործված է ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ-ով:

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 7**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Նմանություն ամուսնությունից	Ազատություն Օրենքից	Նմանություն ամուսնությունից	Օրինակ ամուսնությունից	Քրիստոնյան կապված չէ Օրենքով
7:1-6	7:1-6	7:1-3	7:1-6	7:1-6
		7:4-6		
Մարդու մեջ բնակվող մեղքի խնդիրը	Մեղքի նպաստելը Օրենքում	Օրենքը և մեղքը	Օրենք և մեղք	Օրենքի նշանակությունը
7:7-12	7:7-12	7:7-12	7:7-11	7:7-8
				7:9-11
	Օրենքը չի կարող փրկել մեղքից		7:12-13	7:12-13
7:13-25	7:13-25	7:13		
		Ներքին բախում/ընդհար ում	Բախումը մարդու մեջ	Վարձքի պայքար
		7:14-20	7:14-20	7:14-20
		7:21-25	7:21-25	7:21-23
				7:24-25
		7:25	7:25	7:25

Ծ

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած

լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՐՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՒՄՆԵՐ 1-6

Ա. Գլուխ 7 պետք է մեկնաբանվի (1) գլուխ 6 լույսի ներքո, հատկապես 12-14hh. (նաև 3:20,21-31; 4:13-16; 5:20), ինչևէ, (2) այն նաև պետք է կապվի/նայվի Հռոմի եկեղեցում տիրող լարվածության հետ, որը գոյություն ուներ հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև, որը երևում է 9-11 գլուխներում: Խնդրի ստույգ բնույթը հստակ չէ; այն կարող էր լինել

1. օրինականությունը հիմնված Մովսեսական Օրենքի վրա,
2. Հուդայականության կենտրոնացումը նախ և առաջ Մովսեսի վրա, հետո Քրիստոսի
3. անհասկացողություն, թե ինչպես է ավետարանը կիրառելի հրեաների համար
4. անհասկացողություն, Հին և Նոր Կտակարանների միջև գոյություն ունեցող կապի վերաբերյալ
5. Հավատացյալ հրեա առաջնորդների նախանձությունը, որոնց փոխարինեցին հավատացյալ հեթանոս առաջնորդները կայսրի հրովարտակի ժամանակ, որը դադարեցրեց բոլոր հրեական ծեսերը Հռոմում: Շատ հավատացյալ հրեաներ նույնպես լքեցին քաղաքը:

Բ. Հռոմեացիս 7:1-6 շարունակում է գլուխ 6 պատկերավոր լեզուն, որտեղ նկարագրված է քրիստոնյայի կապը իր հին կյանքի հետ: Օգտագործված փոխաբերությունները

1. մահ և ազատագրում գերությունից ուրիշ տիրոջ ծառայելու համար (գլուխ 6)
2. մահ և ազատագրում ամուսնական պարտավորություններից (գլուխ 7)

Գ. Գլուխներ 6 և 7 գրական զուգահեռներ են; գլուխ 6 խոսում է հավատացյալի կապը «մեղքի» հետ, իսկ գլուխ 7 հավատացյալի կապը «օրենքի» հետ: Մահվան նմանությունը գերությունից ազատագրվելու հետ (6:12-23) զուգահեռ է մահ ազատագրում է ամուսնական կապանքը (7:1-6):

Գլուխ 6	Գլուխ 7
6:1 «մեղք»	7:1 «օրենք»
6:2 «մեռած մեղքին»	7:4 «մեռած օրենքին»
6:4 «այնպես մենք էլ կյանքի նորոգության մեջ ման գանք»	7:6 «որպեսզի հոգու նորոգությունովը ծառայենք»

6:7 «նա որ մեռել է ազատված է մեղքից»	7:6 «հիմա արձակվեցանք օրենքիցը մեռնելով նրան՝ որով որ բռնված էինք»
6:18 «մեղքից ազատված»	7:3 «օրենքից ազատված»

(վերցված է Անդերս Նիգրենի «Հռոմեացիներին ուղված թղթի մեկնաբանությունը» գրքից, թարգմանված Կառլ Կ. Լասմուսենի կողմից (taken from Anders Nygren's *Commentary on Romans*, translated by Carl C. Rasmussen, p. 268)

Գ. Օրենքի վճիռը մահապատիժն էր: Օրենքի համաձայն բոլոր մարդիկ հանդես են գալիս որպես մեղադրյալ (հմմտ. Հռ. 6:14; 7:4; Գաղ. 3:13; Եփ. 2:15; Կող. 2:14): Օրենքը անեծք էր:

Ե. Գոյություն ունեն 4 գլխավոր թեորիաներ այն մասին թե ինչպես մեկնաբանել գլուխ 7-ը

1. Պողոսը խոսում է իր մասին (ինքնակենսագրական)
2. Պողոսը խոսում է որպես ամբողջ մարդկության ներկայացուցիչ (Քրիզոստոմ)
3. Պողոսը խոսում է Ադամի փորձառության մասին (Թեոդոր Մոպսուեստացին)
4. Պողոսը խոսում է Իսրայելի փորձառության մասին

Զ. Շատ ձևերով Հռոմեցիս 7-ը նման է Ծննդոց 3-ին: Այն ցույց է տալիս կործանարար ուժը մարդկանց մղելով ամստամբության նույնիսկ նրանց ովքեր ճանաչել են Աստծուն: Գիտությունը չի կարող ազատել ընկած մարդկությանը; միայն Աստծո շնորհքը, միայն նոր սիրտը կարող է դա անել (Նոր Ուխտը, հմմտ. Եր. 31:31-34; Եզ. 36:26-27): Եվ նույնիսկ այդ դեպքում էլ պայքարը շարունակվում է:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:1-3

¹Կամ չգիտե՞ք, եղբարք, (որովհետև օրենք գիտացողների հետ եմ խօսում) որ օրենքը մարդի վերայ տիրում է՝ քանի որ նա կենդանի է: ²Որովհետև մարդ ունեցող կնիկը՝ իր կենդանի մարդի հետ կապուած է օրենքով. բայց եթէ մարդը մեռնի՝ մարդի օրենքիցն արձակուած է: ³Ուրեմն քանի որ մարդը կենդանի է՝ նա շնացող է կոչվում, եթէ ուրիշ մարդի գնայ. բայց եթէ մարդը մեռնի, օրենքիցն ազատ է՝ որ շնացող չլինի եթէ ուրիշ մարդի գնայ:

NASB (UPDATED) TEXT: 7:1-3

¹Or do you not know, brethren (for I am speaking to those who know the law), that the law has jurisdiction over a person as long as he lives? ²For the married woman is bound by law to her husband while he is living; but if her husband dies, she is released from the law concerning the husband. ³So then, if while her husband is living she is joined to another man, she shall be called an adulteress; but if her husband dies, she is free from the law, so that she is not an adulteress though she is joined to another man.

7:1 «(որովհետև օրենք գիտացողների հետ եմ խօսում)» Այս բառերը կարող էին վերաբերվել (1) միայն հավատացյալ հրեաներին; (2) Հռոմի եկեղեցում տիրող հավատացյալ հրեաների և հեթանոսների միջև գոյություն ունեցող կոնֆլիկտին; (3) ընդհանուր իմաստով օրենքին կապված ամբողջ մարդկության հետ (հմմտ. 2:14-15); կամ (4) նոր հեթանոս հավատացյալներին

ներգրավված իրենց նոր հավատքի ուսումնասիրման մեջ (կրոնագիրտություն) Հին Կտակարանի հիմքի վրա

«**օրենք**» Այս բառի վրա է կենտրոնացած ամբողջ գլխի հիմնական ուշադրությունը (հմմտ. հհ. 1,2,4,5,6, և այլն): Ինչևէ, Պողոսը օգտագործում է այս տերմինը մի քանի տարբեր իմաստներով: Թվում է, թե Պողոսի այս թեմայի քննարկումը սկսվում է 6:14: Նրա ներկայացվող նյութ զուգահեռ է գլուխ 6: Տես Կոնտեքստի ներըմբռնում, Գ: Օրենքի թեման և Քրիստոսով նրա կապը Նոր Ուխտի հետ նաև քննարկվում է 3:21-31 և 4:13-16:

Արևելահայերեն « որ օրենքը մարդի վերայ տիրում է՝ քանի որ նա կենդանի է»
Արևմտահայերեն « որ օրենքը մարդու վերա կիշխե՛ որչափ ժամանակ որ ողջ է»

□

NASB “that the law has jurisdiction over a person as long as he lives”
NKJV “that the law has dominion over a man as long as he lives”
NRSV “that the law is binding on a person only during that person’s lifetime”
TEV “The law rules over a man only as long as he lives”
JB “that laws affect a person only during his lifetime”

Այս բայի բառացի նշանակությունն է «տիրել, ունենալ գերագույն իշխանություն» (*kurieuō*, հմմտ. 6:9,14): Մովսեսական Օրենքը միառժամանակ թե մեծ օրհնություն էր (հմմտ. Սաղ. 19; 119), և թե սարսափելի անեծք (հմմտ. Գաղ. 3:13; Եփ. 2:15; Կող. 2:14): Ֆիզիկական մահից հետո, մարդն այլևս օրենքի պարտավորության տակ չէր: Այս նույն փոխաբերությունը օգտագործված է գլուխ 6 երբ ասվում է, որ հավատացյալը մեռած է մեղքի համար:

7:2 «մարդ ունեցող կնիկը» հհ. 1-6 բովանդակում են Պողոսի գլխավոր պատերազմը նկարագրությունը: Գլուխ 6 Պողոսն ընդգծում էր այն միտքը, որ մարդու մահով դադարում է որպես գերի իր պատականությունը: Այստեղ կենտրոնում ամուսնական հարաբերություններն են: Բայց այս պատկերավորումը շրջած է, որովհետև մահացողը ամուսինն է, և այդ իսկ պատճառով կինը կարող էր ամուսնանալ: հետևելով Պողոսի համանմանությանը, հավատացյալը մահանում է, և ուստի կենդանի է Աստծո համար:

«արձակուած է» Այստեղ օգտագործված է նույն ԲԱՅ-ը ինչ 6:6; այն նշանակում է «դարձնել չգործող», «հասցնել անպիտան վիճակի» կամ «ոչնչացված լինել»: 6:6-ում, այն ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ-ով է դրված, իսկ այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ, որը նշանակում է «եղել է արձակված և շարունակում է արձակված նմալ»: Տես հատուկ թեմա 3:3.

7:3 «նա շնացող է կոչվում» Այս մեկնաբանությունը վերաբերվում է հրեական ռաբիական դպրոցների՝ Շամայի և Հիլելի (Shammai and Hillel) միջև 2 Օրին. 24:1-4-ի շուրջ եղած վիճարանությանը, մասնավորապես «որոշ անպարկեշտություն»: Հիլելի դպրոցը լիբերալ/ազատամիտ հայացքներ ուներ, որը թույլ էր տալիս բաժանություն ցանկացած առիթով: Շամայի դպրոցը պահպանողական էր, որը թույլ էր տալիս բաժանություն միայն շնության կամ որևէ ուրիշ բարոյական չափանիշի խախտման դեպքում (հմմտ. Մաթ. 5:32; 19:9):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:4-6

⁴Այսպէս էլ, եղբարք, դուք Քրիստոսի մարմնովը մեռաք օրէնքին՝ որ ուրիշի լինիք՝ նորան որ մեռելների միջից յարութիւն է առել, որ պտուղ բերենք Աստուծուն: ⁵Որովհետեւ քանի որ մարմնով էինք, մեղքերի կիրքերը՝ որ օրէնքովն էին՝ զօրանում էին մեր անդամներումը, որ մենք պտուղ բերենք մահին: ⁶ Բայց հիմա արձակուեցանք օրէնքիցը մեռնելով նորան՝ որով որ բռնուած էինք, որպէս զի հոգու նորոգութիւնովը ծառայենք՝ եւ ոչ թէ գրի հնութիւնովը:

NASB (UPDATED) TEXT : 7: 4-6

⁴Therefore, my brethren, you also were made to die to the Law through the body of Christ, so that you might be joined to another, to Him who was raised from the dead, in order that we might bear fruit for God. ⁵For while we were in the flesh, the sinful passions, which were *aroused* by the Law, were at work in the members of our body to bear fruit for death. ⁶But now we have been released from the Law, having died to that by which we were bound, so that we serve in newness of the Spirit and not in oldness of the letter.

7:4 «դուք մեռաք օրէնքին» Սա այս բաժնի հիմնական իմաստն է: Այն կապված է գլուխ 6-ի համանմանությանը, անալոգին, որտեղ խոսվում է այն մասին, որ քրիստոնյաները մեռած են մեղքին, ինչպէս Քրիստոսն արեց: Հավատացյալները նոր արարածներ են Քրիստոսով, Հոգու այս նոր ժամանակաշրջանում (հմմտ. II Կոր. 5:17):

«Քրիստոսի մարմնովը» Սա չի վերաբերում եկեղեցու աստվածաբանական գաղափարին, որպէս Քրիստոսի մարմին (հմմտ. I Կոր. 12:12,27), այլ Քրիստոսի ֆիզիկական մարմնին, ինչպէս 6:3-11 որտեղ, երբ Քրիստոսը մեռավ, հավատացյալները մկրտության միջոցով, մեռան Նրա հետ: Նրա մահը իրենց մահն է (հմմտ. II Կոր. 5:14-15; Գաղ. 2:20): Նրա հարուցյալ կյանքը ազատեց նրանց՝ Աստծուն և ուրիշներին ծառայելու համար:

«որ պտուղ բերենք Աստուծուն» Սա նաև զուգահեռ էր գլուխ 6-ին, հատկապէս 6:22: Հավատացյալները հիմա ազատ են Քրիստոսով, իրենք իրենց կապելով Քրիստոսին: Սա ամուսնության նմանության շարունակությունն է: Ինչպէս Քրիստոս մեռավ հավատացյալների համար, հիմա նրանք պետք է մեռնեն մեղքի համար (II Կոր. 5:13-14; Գաղ. 2:2): Ինչպէս Քրիստոսը հարություն առավ, նրանք նրան նույնպէս հարություն են առնում դեպի նոր հոգևոր կյանք Աստծուն ծառայելու համար (հմմտ. Հռ. 6:22):

Արևելահայերեն «Որովհետեւ քանի որ մարմնով էինք» Արևմտահայերեն «Քանզի երբ մենք մարմնով էինք»

7:5

NASB “For while we were in the flesh”

NKJV “For when we were in the flesh”

NRSV “While we were living in the flesh”

TEV “For when we lived according to our human nature”

JB “Before our conversion”

Այս համարը հակադրում է համար 4-ին: Համար 4-ը հավատացյալի փորձառության մասին է, ինչպէս համար 6-ը: Համար 5-ը նկարագրում է կյանքի «պտուղը» առանց Աստծո գործության (Գաղ. 5:18-24.): Օրենքը հավատացյալներին ցույց է տալիս իրենց մեղքը (հհ. 7-9; Գաղ. 3:23-25), բայց չի կարող տալ նրանց գործություն այն հաղթահարելու համար:

Կոնտեքստում սա վերաբերվում է հավատացյալների ընկած, մեղավոր բնությանը՝ ժառանգած Ադամից (հմմտ. 6:19): Պողոսն օգտագործում է այս տերմինը *sarx* երկու տարբեր ձևերով (1)

մեղավոր բնություն (հին մարդը), և (2) ֆիզիկական մարմին (հմմտ. 1:3; 4:1; 9:3,5): Այստեղ այն բացասական է, ուշադրություն դարձրեք Հռ. 1:3; 4:1; 9:3,5; Գաղ. 2:20: Մարմինը (*sarx/soma*) ինքնին չար չէ, բայց ինչպես միտքը (*nous*), մարտի դաշտ է համարվում, այս դարի չար ուժերի և Սուրբ Հոգու առերեսման վայր: Պողոսն օգտագործում է այս տերմինները, որը համատեղելի է Սեպտուագինդի հետ, ոչ թե հունարեն գրականության հետ:

«որ օրենքովն էին» Մարդկային բնության այս ըմբոստության ասպեկտը, որը ագրեսիվ կերպով ներգործում է ցանկացած սահմանափակումների վրա, հստակ երևում է Ծննդ. 3 և բոլոր մարդկանց մեջ: Օրենքը դնում է սահմաններ (հմմտ. հհ. 7-8): Այս սահմանները մարդու պաշտպանության համար էին, բայց մարդիկ դա դիտում էին որպես շխթաներ և սահմանափակումներ: Մեղավոր, անկախ հոգին գրգռվում էր Աստծո Օրենքով: Խնդիրը սահմանափակումները չէին (Օրենքում, հմմտ. հհ. 12-13), այլ մարդու անկախությունը և իր կամքը:

7:6 «Բայց հիմա» Հետաքրքիր մեկնաբանություն կա այս հարցի շուրջ Նյումանի և Նիդայի «Պողոս առաքյալի Հռոմեացիս թղթի մեկնության ուղեցույցը» գրքում (Newman and Nida, *A Translator's Handbook on Paul's Letter to the Romans*,):

«Կարևոր է տեսնել 5 և 6 համարների միջև եղած զուգահեռները, և միառժամանակ նրանց կապը հաջորդին: Համար 5-ը նկարագրում է նախա-քրիստոնեական փորձառությունը, և դրա զուգահեռը գտնվում է 7.7-25-ում; համար 6-ը նկարագրում է հավատքի ներկա կյանքը Աստծո Հոգու առաջնորդության ներքո, և սա զուգահեռ է 8.1-11-ին» (էջ 130):

«արձակուեցանք» Այստեղ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է: Սա հակասում է ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՉԵԶՈՔ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ հ. 5-ում: Հավատացյալները շարունակաբար բռնված են եղել մեղքով, ինչպես երևում էր օրենքում, բայց հիմա ազատված են Սուրբ հոգու միջոցով՝ ավետարանի բարի լուրի միջոցով: Այս նույն բառը օգտագործվում է կնոջ համար, ում ամուսինը մահանում հ. 2-ում:

«օրենքիցը մեռնելով նորան՝ որով որ բռնուած էինք» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ԴԵՐԲԱՅ Է, որին հետևում է ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ: Աստված հավատացյալներին ազատագրում է Քրիստոսի մահվան միջոցով (1) Հին Կտակարանի անեծքից և (2) իրենց ներքին մեղավոր ես-ից: Նրանք շարունակաբար կապված են եղել իրենց ըմբոստությամբ Աստծո դեմ՝ իրենց կամքով, մեղավոր բնությամբ, անձնական մեղքով և գերբնական փորձությունով (հմմտ. Եփ. 2:2-3):

«նորոգութիւնովը . . . հնութիւնովը» Այս նոր հոգևոր ձևը կարծես վերաբերվում է Նոր Ուխտին (հմմտ. Եր. 31:31-34; Եզ. 36:22-32): Հունարեն «նոր» տերմինը (*kainos - kainot[is]*) օգտագործվում է Պողոսի կողմից որպես

1. կյանքի նորոգություն, Հռ. 6:4
2. Հոգու նորոգություն, Հռ. 7:6
3. նոր ուխտ, I Կոր. 11:2; II Կոր. 3:6
4. նոր արարչագործություն, II Կոր. 5:17; Գաղ. 6:15
5. նոր մարդ, Եփ. 2:15; 4:24

«Հին» տերմինը կիրառվում է Մովսեսական Օրենքի համար, որը նշանակում է «ամբողջությամբ մաշված»: Պողոսը հակադրում է Հին Ուխտը Նորի հետ, ինչպես անում է Եբրայեցիս թղթի հեղինակը (հմմտ. 8:7 և 13):

Արևելահայերեն « որպէս զի հոգու նորոգութիւնովը ծառայենք »
Արևմտահայերեն «որպէս զի մենք ծառայենք հոգիին նորոգութիւնովը»



NASB, NKJV “so that we serve in newness of the Spirit”

NRSV “so that we are slaves not under the old written code but in the new life of the Spirit”

TEV “but in the new way of the Spirit”

JB “free to serve in the new spiritual way”

Բառացիորեն սա «հոգու նորոգություն» է: Անորոշ է, սա վերաբերում է վերստին ծնունդ ունեցած մարդու հոգուն թե՞ Սուրբ Հոգուն: Շատ անգլերեն թարգմանություններ այն մեծատառով են ներկայացնում, որը նշանակում է Սուրբ Հոգի, որը երկիմաստրեն նշված է առաջին անգամ Հռ. 8-ում (15 անգամ): «Հոգի» տերմինը կարող էր վերաբերվել և ավետարանի միջոցով վերածնված և զորացած մարդու հոգուն և Սուրբ Հոգուն Հռ. 1:4,9; 2:29; 7:6; 8:15; 11:8; 12:11; I Կոր. 2:11; 4:21; 5:3,4,5; 7:34; 14:15,16,32; 16:18:

Պողոսի գրվածքներում «մարմին» կամ «հոգի» տերմինները հաճախ հակադրվում են որպես երկու տարբեր ձևեր՝ մտածելու և ապրելու (հմմտ. 7:14; 8:4; Գաղ. 3:3; 5:16,17,25; 6:8). Ֆիզիկական կյանքն առանց Աստծո՝ պարզապես «մարմին» է, իսկ Աստծով կյանքը «հոգի» կամ «Հոգի»: Հավատացյալի մեջ բնակվող Սուրբ Հոգին (հմմտ. 8:9,11) փոխում է նրան դարձնելով նոր արարած Քրիստոսով (նոր դիրք և վիճակ և նոր կյանքի փորձառություն):

ԿՈՐՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՈՄԲՈՒՄՆԵՐ 7:7-25

Ա. Հռոմեացիս 7:7-25-ը արտահայտում է մարդու իրականությունը: Բոլոր մարդ արարածները, թե փրկված և թե ոչ, փորձառել են չարի և բարիու պայքարը իրենց աշխարհում և իրենց իսկ սրտերում և մտքերում: Հերմենևտիկական տեսանկյունից այստեղ հարց կա « Պողոսի կարծիքով, ինչպե՞ս պետք է հասկացվեր այս հատվածը»: կոնտեքստային առումով այն պետք է կապված լինի 1:18-6:23 և 8:1-39 գլուխների հետ: Ոմանք սա դիտում են որպես կենտրոնացում բոլոր մարդկանց վրա և ուստի Պողոսի անձնական փորձառությունը դիտում են որպես օրինակ: Այս մեկնաբանությունը կոչվում է «ինքնակենսագրական վարկած»: I Կոր. 13:1-3-ում Պողոսը օգտագործեց «ես» դերանունը ոչ իր անձի համար: Այսպիսի կիրառությունը ոչ անձնական «ես»-ի փաստացի կարող է հաստատվել հրեական բաբբիների կողմից: Եթե դա այդպես է, ապա այս հատվածը կարող էր վերաբերվել «ներկայացուցչական վարկած»-ին՝ մարդկության անցումը անմեղությունից, փրկության համոզմունքով (գլուխ 8):

Ինչևէ, ուրիշները այս համարներում տեսել են հավատացյալի սարսապելի պայքարը ընկած մեղավոր բնության հետ: Սրտածնվիկ աղաղակը հ. 24-ում արտահայտում է այս ներքին լարվածությունը: 7-13 համարներում գերիշխում են ԱՕՐԻՍՏ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԻ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ, մինչ 14-25 համարներում ՆԵՐԿԱ և ԿԱՏԱՐՅԱԼ ԲԱՅԻ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ: Այս ամենը ամենաշատը խոսում է ի օգուտ «ինքնակենսագրական վարկած»-ի, որը Պողոսը նկարագրում է իր սեփական փորձառությունը անմեղությունից դեպի դատապարտում, արդարացում և պրոգրեսիվ սրբացման պայքարով լեցուն ճանապարհի (հմմտ. *autos egō*, «ես ինքս», հմմտ. հ. 25):

Միանգամայն հնարավոր է, որ երկու տեսակետերն էլ ճիշտ լինեն: 7-13 և 25 համարներում Պողոսը խոսում է ինքնակենսագրականորեն, իսկ 14-25 համարներում նա խոսում է իր մեղքի դեմ ունեցած ներքին պայքար փորձառության մասին, որպես ամբողջ փրկված մարդկության ներկայացուցիչ: Ինչևէ, արժե հիշեցնել, որ այս ամբողջ հատվածը

նաև պետք է դիտել և որպես ուղղված Պողոսի անցյալի դեմ, որպես նվիրյալ և կրոնասեր հրեա, մինչև նրա դարձը գալը: Պողոսի փորձառությունը իր տեսակի մեջ միակն էր:

Բ. Օրենքը բարի է: Այն Աստծուց է: Այն ծառայում էր, և շարունակում է ծառայել աստվածային նպատակին (հմմտ. 7:7, 12, 14, 22, 25): Այն չի կարող խաղաղություն կամ փրկություն բերել: Ջեյմս Ստյուարտը իր «Մարդը Քրիստոսի մեջ» գրքում (James Stewart, *A Man in Christ*,) ցույց է տալիս Պողոսի պարադոքսալ մտածելակերպը և գրվածքը.

«Բնականում, դուք կակնկալեիք, որ մարդը, որը իր համար դնում է մտքի և վարդապետության համակարգի կառուցվածք, հաստատելու այնքան անդրդվելությամբ ինչքան հնարավոր է իր կողմից օգտագործվող տերմինների նշանակությունները: Դուք կուզենայիք, որ նա ունենար լուրջ մտադրություն ինչքան հնարավոր է ստույգ ձևավորելով իր հիմնական գաղափարները: Դուք կպահանջեիք, որպեսզի կոնկրետ բառը, օգտագործված այս ձեր գրողի կողմից որոշակի տեղում և որոշակի իմաստով, պահպաներ այն նույն իմաստը ամբողջ ընթացքում: Բայց եթե այդպես նայենք Պողոսի գործին, նշանակում է հիասթափություն ունենալ: Շատ դեպքերում նրա դարձվածաբանությունը հոսում է և ոչ թե անասան. . . «Օրենքը սուրբ է,» գրում է նա, «ներսի մարդով ես հավանում եմ Աստծո օրենքը» (հմմտ. Հռ. 7:12-13), բայց *nomos* բառի միանգամայն ուրիշ տեսանկյունը ստիպում է նրան ինչ որ մեկ ուրիշ տեղ ասել, «Քրիստոսը գնեց մեզ օրենքի անեծքից(հմմտ. Գաղ. 3:13)» (էջ 26):

Գ. Ի՞նչ վերաբերում է այս հարցի պատասխանին « 14-25 համարներում Պողոսը որ մարդկանց մասին է խոսում, փրկված թե՞ չփրկված», տեքստի փաստերը հետևյալն են,

1. Չփրկված անձ

ա. Սա վաղ հույն եկեղեցու Հայրերի մեկնաբանությունն էր

բ. Հետևյալ արտահայտությունները հաստատում են այս տեսանկյանը

(1) «Ես մարմնավոր եմ», հ. 14

(2) «մեղքի կապանքի տակ ծախված», հ. 14

(3) «ինձանում ոչ մի բարի բան չի բնակվում», հ. 18

(4) «և ինձ գերի է բռնում այն մեղքի օրենքով՝ որ իմ անդամներում է», հ. 23

(5) «Ես ինչ խեղճ մարդ եմ. Ո՞վ կազատի ինձ այս մահի մարմնիցը», հ. 24

գ. Գլուխ 6-ի անմիջական, մոտ կոնտեքստն այն է, որ մենք ազատ ենք մեղքի իշխանությունից: Գլուխ 8-ի կոնտեքստը սկսվում է «Ուրեմն» բառով:

դ. Մինչև այս կոնտեքստի վերջը բացակայում է Հոգու կամ Քրիստոսի մասին ակնարկը (հ. 25):

2. Փրկված մարդ

ա. Սա Օգոստինոսի, Կալվինի և Ռեֆորմատորական ավանդության մեկնաբանությունն էր

բ. Հետևյալ արտահայտությունները հաստատում են այս տեսանկյանը

(1) «մենք գիտենք, որ Օրենքը հոգևոր է,» հ. 14

(2) «Ես համաձայն եմ Օրենքի հետ, վկայելով, որ այն բարի է» հ. 16

(3) «բարին, որ կամենում եմ, ես չեմ անում...» հ. 19

(4) «Ես ուրախությամբ հավանում եմ Աստծո օրենքը ներսի մարդովը» հ. 22

գ. Հռոմեացիս թղթի ավելի լայն կոնտեքստը գլուխ 7-ը դնում է սրբացման բաժնի մեջ:

դ. Ակնհայտ փոփոխությունը բայական ժամանակաձևերի ԱՆԿԱՏԱՐ և ԱՕՐԻՍՏ-ից հհ. 7-13 շարունակական կիրառումը ՆԵՐԿԱ ժամանակի, հհ. 14-24-ում ցույց է տալիս ուրիշ և նոր բաժին Պողոսի կյանքում (այն է, դարձի գալը):

Գ. Ինչքան շատ է հավատացյալը ձգտում քրիստոսանմանությանը, այնքան շատ է զգում իր մեղավոր վիճակը: Այս պարադոքսը լավ է համապատասխանում այս կոնտեքստին և Պողոսի անձեղությանը (և, այդ իսկ պատճառով, շատ հավատացյալներ):

Տողեր մեթոդիստական հիմնից:

«Եվ ոչ ոք, ով Տեր, չունի կատարյալ հանգիստ,
Քանզի ոչ ոք ազատված չէ մեղքից ամբողջությամբ,
Եվ նրանք, ովքեր թույլ են Քեզ կծառայեն ամենալավը
Խիղճն է ամենասխալը նրանց մեջ»:

(Հեղինակի անունն ու հիմնի վերնագիրն անհայտ է)

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:7-12

⁷Արդ ի՞նչ ասենք. օրենքը մե՞ղք է. քաւ լիցի. բայց ես մեղքը չէի գիտենալ՝ եթէ ոչ օրենքով. եւ ցանկութիւնը չէի ճանաչել՝ եթէ օրենքը չէր ասել՝ Սի ցանկանար: ⁸Մեղքը առիթ առնելով պատուիրանքովը, ինձանում ամեն ցանկութիւն գործեց. որովհետեւ առանց օրենքի մեղքը մեռած է: ⁹ Եւ ես առանց օրենքի մի ժամանակ կենդանի էի. բայց երբոր պատուիրանքը եկաւ, մեղքը կենդանացաւ: ¹⁰ Իսկ ես մեռայ եւ այն պատուիրանքն՝ որ կեանքի համար էր, ինձ մահի պատճառ եղաւ: ¹¹ Որովհետեւ մեղքը առիթ առած պատվիրանքովը՝ խաբեց ինձ եւ նորանով սպանեց: ¹² Ուրեմն՝ օրենքը սուրբ է՝ եւ պատուիրանքն էլ սուրբ եւ արդար եւ բարի:

NASB (UPDATED) TEXT: 7:7-12

⁷What shall we say then? Is the Law sin? May it never be! On the contrary, I would not have come to know sin except through the Law; for I would not have known about coveting if the Law had not said, “YOU SHALL NOT COVET.” ⁸But sin, taking opportunity through the commandment, produced in me coveting of every kind; for apart from the Law sin is dead. ⁹I was once alive apart from the Law; but when the commandment came, sin became alive and I died; ¹⁰and this commandment, which was to result in life, proved to result in death for me; ¹¹for sin, taking an opportunity through the commandment, deceived me and through it killed me. ¹²So then, the Law is holy, and the commandment is holy and righteous and good.

7:7 «Արդ ի՞նչ ասենք» Պողոսը կրկին դառնում է սուր քննադատության կիրառմանը (հմմտ. 6:1,15; 7:1,13):

«օրենքը մե՞ղք է» Աստծո հայտնության պարադոքսներից մեկն այն է, որ Նա օգտագործում է Օրենքի սրբությունն ու բարությունը որպես հայելի՝ մեղքը երևան բերելու համար, որպեսզի մեղավոր մարդկությանը բերի ապաշխարության և հավատքի (հմմտ. հհ. 12-13; Գաղ. 3): Նաև զարմանալիս այն է, որ Օրենքը շարունակում է գործել մարդու սրբացման գործընթացում, բայց ոչ արդարացման մեջ:

«քաւ լիցի» Պողոսին հատուկ արտահայտություն՝ կեղծ պնդումները հերքելու համար (հմմտ. հ. 13; 3:4,6,31; 6:2,15; 9:14; 11:1,11; Գաղ. 2:17; 3:21):

«բայց» Հռոմեացիս թղթում Պողոսի գրական ոճը օգտագործում է խիստ հակադրություններ, որպեսզի հաստատի իր միտքը (հմմտ. 3:4,6,31; 6:2,15; 7:13; 9:14; 11:1,11):

«ես» Չեր Աստվածաշնչում նշեք թե քանի անգամ է հանդիմում «ես», «իմ», կամ «ինձ» անձնական դերանուններն այս կոնտեքստում հհ. 7-25: Դուք կզարմանաք: Ավելի քան քառասուն անգամ:

«ես մեղքը չէի գիտենալ՝ եթե ոչ օրէնքով» Սա բանալի հատվածներից մեկն է, որը հայտնում է Մովսեսական Օրենքի գաղափարը, որը հայելի է անձնական մեղքերը հայտնելու համար (հմմտ. 3:20; 4:65; 5:20; Գաղ. 3:14-29, հատկապես հ. 24): Մեկ անգամ քանդել օրենքը նշանակում էր քանդել Ուխտը, և ուստի, կրել դրա հետևանքները (հմմտ. հ. 10 և Հակ. 2:10):

«եթե ոչ օրէնքով» Այստեղ ԵՐԿՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է «ի հակադրություն փաստի», չէ որ Պողոսը մեղքի հանդիմանություն ուներ: Սա այսպիսի քերականական կառուցվածքի միակ օրինակն է Հռոմեացիս թղթում: Պողոսը սա օգտագործում է Գաղ. 1:10; 3:21, ինչպես նաև I Կոր. 2:8; 5:10; 11:31; և II Կոր. 12:11:

«Մի ցանկանար» Սա Տասը Պատվիրանների վերջին պատվերի մեջքերումն է (հմմտ. Ելից 20:17; 2 Օրին. 5:21): Այս վերջին պատվիրանը կենտրոնանում է ճիշտ կեցվածքի վրա, որն իրականում ամենքի էությունն է, իմաստն է (հմմտ. Մաթ. 5-7): Օրենքինչը հաճախ վերաբերվում են որպես «պատվիրան» (հմմտ. հհ. 8,9,11,12,13): «Ցանկանալ» տերմինը նշանակում է «ձգտել ինչ որ բանի» կամ «խիստ ցանկանալ ինչ որ բան»: Աստված տվել է մարդկանց (կորսված և փրկված) շատ լավ բաներ արարչագործության միջոցով, բայց մարդիկ հակված են վերցնելու Աստծո պարգևները Աստծո-տված սահմաններից այն կողմ: «Ինձ պետք է ավելի ու ավելի շատ և այն էլ ցանկացած գնով» մարդու համար դառնում է կյանքի նշանաբան: Մարդկային եսասեր էությունը սարսափելի բռնակալ է: Տես հատուկ թեմա: Նշումներ Ելից գրքից 13:8-9-ում:

Արևելահայերեն «առիթ առած»

Արևմտահայերեն «առիթ սեպելով»

7:8

NASB, NKJV “taking opportunity”

NRSV “seizing an opportunity”

TEV “found its chance”

JB “took advantage of”

Սա ռազմական տերմին էր, որն օգտագործվում էր ափամերձ հատվածը գրավելու գործողությունների ժամանակ (հմմտ. հհ. 8 և 11): Այս կոնտեքստում այն անձնավորված է (հմմտ. հհ. 9,11): Մեղքը բնութագրված էր որպես ռազմական գործողություն (հմմտ. հ.11) ռազմական առաջնորդի գլխավորությամբ (հմմտ. հհ. 11 and 17; 6:12, 14, 16):

«որովհետև առանց օրէնքի մեղքը մեռած է» Մեղքը ըմբոստություն է Աստծո կամքի դեմ (հմմտ. Հռ. 4:15; 5:13; I Կոր. 15:56): Այս արտահայտության մեջ բայ չկա; բայց մեկը պետք է լինի: Եթե այն լինի ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿՈՎ, դա կդիտվի որպես տիեզերական, համընդհանուր սկզբունք: Եթե լինի ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿՈՎ» այն կվերաբերվեր մասնավորապես Պողոսի կյանքին:

7:9 «Եւ ես մի ժամանակ կենդանի էի» Այս բառերն կարող էին վերաբերվել Պողոսին երբ (1) նա երեխա էր՝ մաքուր և անմեղ; կամ (2) նա նվիրված փարիսեցի էր մինչև այն պահը, երբ ավետարանի ճշմարտությունը կտորեց իր սիրտը (հմմտ. Գործք 23:1; Փիլ. 3:6; II Տիմ. 1:3): Առաջինը ներկայացնում է գլուխ 7-ի մեկնաբանության «ինքնակենսագրական վարկածը» իսկ երկրորդը գլուխ 7-ի մեկնաբանության «ներկայացուցչական վարկածը»:

«երբոր պատուիրանքը եկա, մեղքը կենդանացաւ: իսկ ես մեռայ» Մարդու ըմբոստ հոգին ուժեղանում է արգելքներով/չի կարելիներով: Աստծո Օրենքի պատվերները «մի արա» ընկած մարդկությանը տանում են ինքնատուղող հպարտության (հմմտ. Ծննդ. 2:16-17; 3:1-6):

Ուշադրություն դարձրեք թե ինչպես է մեղքը դառնում մարմնավորմամբ, անձնավորված, ինչպես 5:21 և 7:8,11,17,20:

7:10 «եւ այն պատուիրանքն՝ որ կեանքի համար էր, ինձ մահի պատճառ եղաւ» Հավանական է սա մեջբերում է Ղև. 18:5-ի խոստումը կամ էլ Հռ. 2:13: Օրենքը խոստացավ այն ինչը չկարողացավ կատարվել, և ոչ թե մեղքի պատճառով այլ որովհետև մարդն անկարող և ընթոստ է: Օրենքը դարձավ մահվան վճիռ (հմմտ. Գաղ. 3:13; Եփ. 2:15; Կող. 2:14):

7:11 «խաբեց ինձ եւ նորանով սպանեց» Այս երկու ԲԱՅԵՐ-ն էլ ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ԵՆ: Այս տերմինը՝ խաբեց, օգտագործում է Եվան Սեպտուագինդի մեջ (LXX) Ծննդ. 3:13: Պողոսն այս տերմինն օգտագործում է մի քանի անգամ (հմմտ. Հռ. 16:18; I Կոր. 3:18; II Կոր. 11:3; II Թեմ. 2:3; I Տիմ. 2:14): Ադամի ու Եվայի խնդիրը նույնպես իրենց կրքոտ ցանկությունն էր (հմմտ. II Կոր. 11:3; I Տիմ. 2:14): Աստծո պատվերին չհնազանդվելով, Ադամն ու Եվան հոգևորապես մեռան, և այդպես էլ Պողոսն ու բոլոր մարդիկ (1:18-3:20):

7:12 Պողոսը պնդում է, որ Օրենքը բարի է : Եվ խնդիրը նրա մեջ չէ: Ինչևէ, Պողոսի գուգահեռ իմաստային կառուցվածքը գլուխ 6-ում «մեղքը» իսկ գլուխ 7-ում «օրենքը», պետք է, որ տխրեցներ օրինապաշտ հրեա հավատացյալներին (տկարները 14:1-15:13) Հռոմի եկեղեցում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7: 13

¹³ Ապա բարի^ն ինձ մահ եղաւ. մաւ լիցի. այլ մեղքը. որ մեղքն երեսի որ բարիովն ինձ մահ գործեց. որ մեղքն աւելի ես մեղաւոր լինի պատուիրանքի ձեռովը:

NASB (UPDATED) TEXT: 7:7-12

¹³Therefore did that which is good become *a cause of death* for me? May it never be! Rather it was sin, in order that it might be shown to be sin by effecting my death through that which is good, so that through the commandment sin would become utterly sinful.

Արևելահայերեն «որ մեղքն երեսի որ... մեղքն աւելի ես մեղաւոր լինի պատուիրանքի ձեռովը»
Արևմտահայերեն «որպէս զի մեղքին իսկական բնոյթը յայտնուի,... պատուիրանքով մեղքին շիտակ մեղք ըլլալը հաստատուի»

7:13

NASB “sin, in order that it might be shown to be sin...sin might become utterly sinful”

NKJV “sin, that it might appear sin...might become exceedingly sinful”

NRSV “that sin might be shown to be sin...sinful beyond measure”

TEV “in order that its true nature as sin might be revealed”

JB “sin, to show itself in its true colors...was able to exercise all its sinful power”

Մեղքի չար բնությունը հստակ երևում է այն փաստում, որ նա վերցրեց բարի, օգտակար և աստվածահաճո մի բան , ինչպիսին Մովսեսական Օրենքն է (հմմտ. Մաղ. 19, 119) և այնպես շրջեց, փոխեց դա, որ այն դարձավ դատապարտության և մահվան գործիք (հմմտ. Եփ. 2:15; Կող. 2:14): Մեղավոր մարդկությունը վերցրել է Աստծո տված ամեն բարի պարգև և անցնել տրված սահմանները:

Ուշադրություն դարձրեք երկու *hina* (նպատակ) նախադասություններին:

«աւելի ես մեղաւոր» Տես Հատուկ Թեմա: Պողոսն օգտագործում է «*Huper*» նախդիրը բարդ բառեր կազմելու համար 1:30:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7: 14-20

¹⁴Որովհետեւ գիտենք՝ որ օրէնքը հոգեւոր է. բայց ես եմ մարմնաւոր՝ մեղքի տակ ծախուած: ¹⁵Որովհետեւ ինչ որ գործում եմ չգիտեմ. որովհետեւ ոչ թէ ինչ որ կամենում եմ՝ այն եմ գործում. այլ ինչ որ ատում եմ, այն եմ գործում: ¹⁶Եւ եթէ ինչ որ չեմ կամենում՝ այն եմ գործում, օրէնքի համար վկայում եմ՝ թէ բարի է: ¹⁷Արդ ուրեմն ոչ թէ ես եմ գործում այն, այլ ինձանում բնակուած մեղքը: ¹⁸Որովհետեւ գիտեմ որ ինձանում (այսինքն իմ մարմնումը) մի բարի բան չէ բնակվում. քանզի կամենալն կայ իմ մօտը. բայց բարին անելը չեմ գտնում: ¹⁹Քանզի ոչ թէ բարին՝ որ կամենում եմ, անում եմ. այլ չարը՝ որ չեմ կամենում, այն եմ գործում: ²⁰Ուրեմն եթէ այն որ չեմ կամենում ես, այն եմ անում. էլ ես չեմ անում այն, բայց ինձանում բնակուած մեղքը:

NASB (UPDATED) TEXT: 7:14-20

¹⁴For we know that the Law is spiritual, but I am of flesh, sold into bondage to sin. ¹⁵For what I am doing, I do not understand; for I am not practicing what I *would* like to do, but I am doing the very thing I hate. ¹⁶But if I do the very thing I do not want to do, I agree with the Law, *confessing* that the Law is good. ¹⁷So now, no longer am I the one doing it, but sin which dwells in me. ¹⁸For I know that nothing good dwells in me, that is, in my flesh; for the willing is present in me, but the doing of the good is not. ¹⁹For the good that I want, I do not do, but I practice the very evil that I do not want. ²⁰But if I am doing the very thing I do not want, I am no longer the one doing it, but sin which dwells in me.

7:14 «օրէնքը հոգեւոր է» Աստծո Օրէնքը բարի է: Այն չէ խնդիրը (հմմտ. հհ. 12 և 16բ):

«եւ եմ մարմնաւոր» Այս տերմինը օգտագործվում է Պողոսի կողմից (1) չեզոք իմաստով նկատի ունենալով ֆիզիկական մարմինը (հմմտ. 1:3; 2:28; 4:1; 9:3,5); և (2) բացասական իմաստով նկատի ունենալով մարդու մեղավոր բնութայունը Ադամում (հմմտ. հ. 5): Անորոշ է, թե որ մեկին է վերաբերվում այս արտահայտությունը:

«մեղքի տակ ծախուած» Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ/ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԵՐԲԱՅ է, որը նշանակում է «ես ծախված եմ եղել և շարունակում եմ ծախվել մեղքի կապանքին»: Նորից մեղքը անձնավորվում է, այստեղ որպէս ստրկատեր: Ում կողմից է իրականանում ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ-Ը հստակ չէ: Այն կարող էր վերաբերվել սատանային, մեղքին, Պողոսին կամ Աստծուն:

Հին Կտակարանում հիմնական տերմինը, որով բնութագրվում էր Աստված մարդուն կրկին Իրեն վերադարձնելու գործողությամբ «փրկագին» կամ «փրկանք» (և նրանց հոմանիշները): Այն իրականում նշանակում էր « ետ գնել» (և նրանց հոմանիշները. Տես Հատուկ Թեմա 3:24): Հակառակ գաղափարը այն արտահայտությունն, որն օգտագործված է այստեղ, «վաճառված, տրված ուրիշի ձեռքը...» (հմմտ. Դատավ. 4:2; 10:7; I Թագ. 12:9):

7:15-24 Յուրաքանչյուր Աստծո զավակ ունի «աստվածային բնություն» (հմմտ. II Պետ. 1:4), բայց նաև մեղավոր բնություն (հմմտ. Գաղ. 5:17): Ըստ հնարավորին, մեղքը գրկված է ուժից և գործելու ընդունակությունից (հմմտ. Հռ. 6:6), բայց հավատացյալի կյանքի փորձառությունը համապատասխանում է գլուխ 7-ի նկարագրությանը; Հրեաներն ասում են, որ յուրաքանչյուր

մարդու սրտում ապրում են սև և սպիտակ շներ: Ում ամենաշատն է կերակրում, նա էլ դառնում է ամենամեծը:

Երբ ես կարդում եմ այս հատվածը ես բառացիորեն ֆիզիկապես զգում եմ այն ցավը, որն ուներ Պողոսը, որը նա նկարագրում է մեր երկու բնությունների առօրյա կոնֆլիկտը: Հավատացյալները ազատագրվել են իրենց մեղավոր բնությունից, բայց Աստված օգնում է մեզ, մենք շարունակում ենք տրվել նրա գայթակղություններին: Հաճախ զարմացնող ճշմարտություն է այն, որ իսկական հոգևոր պատերազմը սկսում է փրկությունից հետո: Դրա համար էլ հոգևոր հասունությունը լարվածությամբ լեցուն է Եռյակ Աստծո հետ առօրյա հարաբերությունների ընթացքում և ամենօրյա կոնֆլիկտ չարի հետ:

7:16,20 «եթե» Այս երկուսն էլ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՍԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ են, որոնք ենթադրվում են որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար:

7:18 «Որովհետև գիտեմ որ ինձանում (այսինքն իմ մարմնում) մի բարի բան չէ բնակվում» Պողոսը չի պնդում, որ ֆիզիկական մարմինը չար է, այլ որ նա ռազմի դաշտ է մեղավոր բնության և Աստծո Հոգու միջև: Հույները համարում էին, որ մարմինը ամբողջ նյութականի հետ միասին, չար էր: Այստեղից զարգացավ Գնոստիցիզմի դուալիստիկ հերետիկոսությունը (հմմտ. Եփ., Կող. և I Հովհ.): Հույները հակված էին մեղադրելու ֆիզիկականը հոգևոր խնդիրների համար: Պողոսը հոգևոր խնդիրները այս կերպ չի տեսնում: Նա անձնավորում է մեղքը և օգտագործում մարդու ըմբոստությունը Աստծո Օրենքի դեմ, որպես չարի հնարավորություն մարդու բնությունը նվաճելու համար: «Մարմին» տերմինը Պողոսի գրվածքներում կարող է նշանակել (1) ֆիզիկական մարմինը, որը բարոյապես չեզոք է (հմմտ. 1:3; 2:28; 4:1; 9:3,5); և (2) ընկած մեղավոր բնությունը՝ ժառանգած Ադամից (հմմտ. հ. 5):

7:20 «այլ ինձանում բնակուած մեղքը» Հետաքրքիր է, որ Հռոմեացիս գիրքն այնքան հստակ է ցույց տալիս մարդու մեղքը, բայց սատանայի մասին չի նշվում մինչև 16:20-ը: Մարդիկ չեն կարող մեղադրել սատանային իրենց մեղքի խնդրի համար: Մենք ունենք ընտրություն: Մեղքը ներկայացված է որպես թագավոր, բռնակալ և ստրկատեր: Այն , գրավում և գայթակղում է մեզ և մեր մեջ ձգտում առաջացնում լինել անկախ Աստծուց, և ինքնահաստատում ցանկացած գնով: Պողոսի անձնավորումը մեղքի կապվում է մարդու ընտրության հետ Ծննդ. 4:7:

Այս գլխում Պողոսն օգտագործում է « բնակվում է» տերմինը մի քանի անգամ (հմմտ. հհ. 17,18,20): Մեղքի բնությունը չի կործանվում կամ վերացվում փրկության ժամանակ, այլ այն դառնում է հնարավորինս անկարող: Այն շարունակում է ավելի ու ավելի անգոր լինել այն դեպքում, երբ մենք շատ ենք համագործակցում մեր մեջ բնակվող Սուրբ Հոգու հետ (հմմտ. 8:9,11): Աստված ապահովել է հավատացյալների համար ամեն ինչ, ինչն անհրաժեշտ է պայքարելու մարմնավորված (գրական) և անձնական (սատանան և դևերը) չարի դեմ: Սա Սուրբ Հոգու ներկայությունն ու գործությունն է: Երբ մենք ընդունում ենք Աստծո փրկության ձրի պարզևր, մենք նաև պետք է ընդունենք Սուրբ Հոգու արդյունավետ պաշտապանության ուժը: Փրկությունը և քրիստոնեական կյանքը ամենօրյա գործընթաց է, որը սկսվում և վերջանում է հավատացյալների ամեն օր կատարված որոշումների հետ: Աստված տվել է մեզ այն ամենը, ինչի կարիքը որ ունենք; Սուրբ Հոգին (Հռ. 8), հոգևոր գրահները (Եփ. 6:11), հայտնություն (Եփ. 6:17), և աղոթք (Եփ. 6:18):

Պատերազմը կատարի է (Հռ. 7), բայց պատերազմը հաղթական է (Հռ. 8):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7: 21-25

²¹ Ուրեմն գտնում եմ այդ օրէնքը՝ որ երբ ես կամենում եմ բարին անել, չարն իմ մօտը կայ: ²² Որովհետև ես հաւանում եմ Աստուծոյ օրէնքին՝ ներսի մարդովը: ²³ Բայց տեսնում եմ ուրիշ օրէնք

իմ անդամներումը՝ որ իմ մտքի օրենքի դեմ պատերազմում է, եւ ինձ գերի է բռնում այն մեղքի օրենքովը՝ որ իմ անդամներումն է: ²⁴ Ես ինչ խեղճ մարդ եմ. ո՞վ կապրեցնէ ինձ այս մահի մարմնիցը: ²⁵ Շնորհակալ եմ Աստուածանից մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը: Արդ ուրեմն ես ինքս մտքով ծառայում եմ Աստուծոյ օրենքին, իսկ մարմնով մեղքի օրենքին:

NASB (UPDATED) TEXT: 7:21-25

²¹I find then the principle that evil is present in me, the one who wants to do good. ²²For I joyfully concur with the law of God in the inner man, ²³but I see a different law in the members of my body, waging war against the law of my mind and making me a prisoner of the law of sin which is in my members. ²⁴Wretched man that I am! Who will set me free from the body of this death? ²⁵Thanks be to God through Jesus Christ our Lord! So then, on the one hand I myself with my mind am serving the law of God, but on the other, with my flesh the law of sin.

7:22 «Աստուծոյ օրենքին» Հրեաների համար դա Մովսեսի Օրենքն էր: Ոչ հրեայի համար սա վերաբերվում էր (1) բնության վկան (հմմտ. Հն. 1:19-20; Մաղ. 19:1-6); (2) ներքին - բարոյական խիղճ (հմմտ. Հն. 2:14-15); և (3) սոցիալական նորմերին և ավանդույթների:

Արևելահայերեն «ներսի մարդովը»

Արևմտահայերեն « ներսի մարդուն»



NASB “in the inner man”
NKJV “according to the inward man”
NRSV, NJB “in my inmost self”
TEV “my inner being”

Պողոսը հակադրում է դրսի մարդուն (ֆիզիկական) նեւսի մարդու հետ (հոգևոր) II Կոր. 4:16: Այս կոնտրաստում այս արտահայտությունը վերաբերվում է Պողոսի այն մասին կամ ցանկացած փրկված մարդուն, որը հաստատում և համաձայնվում է Աստծո կամքի և օրենքի հետ:

1. «Օրենքը հոգևոր է» 7:14
2. «Ինչ որ կամենում եմ» 7:15
3. «օրենքի համար վկայում եմ՝ թե բարի է» 7:16
4. «կամենալն կայ իմ մոտը» 7:18
5. «բարին՝ որ կամենում եմ» 7:19
6. «չարը՝ որ չեմ կամենում» 7:19
7. «չեմ կամենում ես, այն եմ անում» 7:20
8. «ես կամենում եմ բարին անել» 7:21
9. « ես հաւանում եմ Աստուծոյ օրենքին » 7:22
10. «իմ մտքի օրենքի» 7:23
11. «ես ինքս մտքով ծառայում եմ Աստուծոյ օրենքին» 7:25

Գլուխ 7 ցույց է տալիս, որ Աստծո և Իր խոսքի իմացությունը բավարար չէ: Հավատացյալները Հոգու կարիքն ունեն (գլուխ 8):

7:23 6:2; 8:2 և 7:23-ի միջև կա իրական հակադրություն: Այս համարը հստակ ցույց է տալիս թե Պողոսն ինչպես է օգտագործում օրենք տերմինը (*nomos*) որպես (1) մեղքի օրենք (հմմտ. հհ. 21,25) և (2) Աստծո օրենք (հմմտ. հհ. 22, 25): Ավելի շուտ 4,5,6,7,9 և 12 համարներում Պողոսը օգտագործեց տերմինը Հին Կտակարանի համար: Պողոսը սիստեմատիկ աստվածաբան չէր: Նա պայքարեց «օրենք»-ի գաղափարի հետ: Ինչ որ իմաստով այն Աստծո հայտնությունն էր, հիանալի

պարզեր տրված մարդուն, իսկ մյուս կողմից այն որոշում էր մեղքը և պարզ սահմաններ դնում մեղավոր մարդու համար, որը անկարող էր պահել: Այս սահմանները միայն Հին Կտակարանի հայտնությունը չէր, այլ բոլոր բարոյական չափանիշները: Բնական հայտնություն (հմմտ. Սաղ. 19; Հռ. 1:18-3:31) կամ սոցիալական նորմեր և բարքեր: Մարդիկ ամստամբներ են, որոնք ուզում են ամբողջությամբ իրենք կառավարել իրենց կյանքերը:

7:24 Կարող է՞ սա հիմնավորված դրույթ լինել՝ փրկված մարդու կողմից ասված: Ոմանք ասում են ոչ, և ուստի, այս գլուխը վերաբերվում է բարոյական, կրոնական բայց չփրկված մարդկանց: Մյուսներն ասում են այո, դա վերաբերվում է ավետարանի «արդեն բայց դեռ ոչ» լարված տարրին հավատացյալների կյանքում: Վախճանաբանական իրականացումը դեռ ամբողջությամբ չի հայտնվել: Հասուն հավատացյալը զգում է այս անդունդը ավելի խիստ ձևով:

Արևելահայերեն «այս մահի մարմնիցը»
Արևմտահայերեն « այս մահկանացու մարմնին»

-
- NASB “the body of this death”
- NKJV, NRSV “this body of death”
- TEV “this body that is taking me to death”
- NJB “this body doomed to die”

Ֆիզիկական մարմինն ու միտքը ինքնին չար չեն: Նրանք ստեղծված էին Աստծո կողմից երկրի վրա կյանք լինելու համար և Իր հետ հաղորդակություն ունենալու համար: Նրանք ստեղծված էին «չատ բարի, լավ» (հմմտ. Ծննդ. 1:31): Բայց Ծննդ. 3 փոխեց մարդկությանը և Աստծո նպատակը: Այսպես չէր մտադրվել Աստված տեսնել այս աշխարհը, և այսպես չափտի լինել մարդը: Մեղքը ունի վճռորոշ ազդեցություն արարչագործության վրա: Մեղքը վերցրել է այն ինչ բարի է և փոխել եսակենտրոն չարի: Մարմինն ու միտքը դարձել են փորձության և մեղքի պատերազմի դաշտ: Պողոսը զգում է այս պայքարը սուր ձևով: Նա փափագում է նոր դարաշրջանին, նոր մարմնին, Աստծո հետ նոր հաղորդակությանը (հմմտ. 8:23):

7:25 Այս համարում բովանդակվում է նախորդ մտորումների ամփոփումը և միառժամանակ, նա բավարարում է անցումը հաջորդին էլ ավելի բարձր մակարդակով: Ինչևէ, նույնիսկ գլուխ 8-ում այս նույն լարվածությունը երևում է հհ. 5-11:

Մեկնաբանների համար շարունակում է մնալ անլուծելի հարց, թե ո՞ւմ մասին է խոսում Պողոսը:

1. իր և հուդայականության մեջ իր ունեցած փորձառության մասին
 2. բոլոր քրիստոնյաների
 3. Ադամի, որպես օրինակ ամբողջ մարդկության
 4. Իսրայելի, որն ունի Օրենքի գիտություն, բայց չկարողացավ հնազանդվել դրան
- Անձնապես, ես #1 (հհ. 7-13,25բ) և #2 (հհ. 14-25ա) միասին են տեսնում: Տես Հռ. 7:7-25 Կոնտեքստի ներըմբռնումը
- Գլուխ 7-ի ցավն ու տառապանքը համեմատվում և գերազանցվում է գլուխ 8-ի մեծությամբ:

«Շնորհակալ եմ Աստուածանից» Ստորև տես հատուկ թեմա.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԻ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱԴՈԹՔԸ ԵՎ ԳՈՀՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՍՎԱԾ

Պողոսը Աստծուն փառաբանող մարդ էր: Նա գիտեր Հին Կտակարանը: Սաղմոսաց գրքի յուրաքանչյուր առաջին չորս բաժանումները (այն է, գրքեր) ավարտվում է օրհներգությամբ, փառաբանությամբ (հմմտ. Սաղ. 41:13; 72:19; 89:52; 106:48): Նա փառաբանում և գովաբանում է Աստծուն մի քանի տարբեր կերպերով:

1. Իր գրվածքների բացման խոսքի մեջ
 - ա. բացման փառաբանություն կամ ողջույն (հմմտ. Հն. 1:7; I Կոր. 1:3; II Կոր. 1:2)
 - բ. բացման օրհնություններ (*eulogētos*, հմմտ. II Կոր. 1:3-4; Եփ. 1:3-14)
2. փառաբանություն արտահայտող կարճ պոռթկումներով
 - ա. Հն. 1:25; 9:5
 - բ. II Կոր. 11:31
3. օրհներգություն, փառաբանություն (բնութագրված որպես (1) *doxa* (այն է, փառք) և (2) «հավիտյան», «հավիտյան հավիտենից»)
 - ա. Հն. 11:36; 16:25
 - բ. Եփ. 3:20-21
 - գ. Փիլ. 4:20
 - դ. I Տիմ. 1:17
 - ե. II Տիմ. 4:18
4. գոհություն հայտնելով (այն է, *eucharisteō*)
 - ա. նամակի բացման խոսքեր (հմմտ. Հն. 1:8; I Կոր. 1:4; II Կոր. 1:11; Եփ. 1:16; Փիլ. 1:3; Կող. 1:3,12; I Թես. 1:2; II Թես. 1:3; Փիլեմոն հ. 4; I Տիմ. 1:12; II Տիմ. 1:3)
 - բ. Աստծուն գոհություն հայտնելու կոչ (հմմտ. Եփ. 5:4,20; Փիլ. 4:6; Կող. 3:15,17; 4:2; I Թես. 5:18)
5. գոհություն արտահայտող կարճ պոռթկումներով
 - ա. Հն. 6:17; 7:25
 - բ. I Կոր. 15:57
 - գ. II Կոր. 2:14; 8:16; 9:15
 - դ. I Թես. 2:13
 - ե. II Թես. 2:13
6. ամփոփիչ օրհներգությամբ, փառաբանությամբ
 - ա. Հն. 16:20,24
 - բ. I Կոր. 16:23-24
 - գ. II Կոր. 13:13
 - դ. Գաղ. 6:18
 - ե. Եփ. 6:24

Պողոսը գիտեր ճշմարիտ Երրորդությունը ոչ միայն աստվածաբանական տեսանկյունից, այլ իր իսկ սեփական փորձից ելնելով: Իր գրվածքներում նա սկսում է աղոթքով և փառաբանությամբ: Իր մտքերի շարադրանքի մեջտեղում նա ընդհատում է՝ Աստծուն կրկին փառք տալու և գոհություն հայտնելու համար: Իր նամակների ամփոփիչ մասում, նա երբեք չի մոռանում աղոթել, փառաբանել և գոհանալ Աստծուց: Պողոսի գրվածքը բառացիորեն շնչում է աղոթքով, փառաբանությամբ և գոհությամբ: Նա ճանաչում էր Աստծուն, նա գիտեր իրեն և նա գիտեր ավետարանը:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչպե՞ս է գլուխ 6-ը կապվում գլուխ 7-ին
2. Ի՞նչ կապ ունի Հին Կտակարանի օրենքը Նոր Կտակարանի հավատացյալների հետ (հմմտ. II Կոր. 3:1-11; Եբր. 8:7, 13)
3. Ի՞նչ երկու պատկերավոր օրինակներ է Պողոսը բերում 6 և 7 գլուխներում նկարագրելու համար մեր կապը հին կյանքի հետ:
4. Ի՞նչ կապ ունի Մովսեսական Օրենքը քրիստոնյայի հետ:
5. Քո բառերով բացատրիր տարբերությունը ինքնակենսագրական և ներկայացուցչական վարկածների միջև, Հռոմեացիս 7:7-25 մեկնաբանելու համար:
6. Ո՞վ է նկարագրված 7-րդ գլխում, չփրկված մեղավորը, հոգևորապես տկար հավատացյալը, թե՞ բոլոր հավատացյալները:

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 8**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Կյանք Հոգու մեջ	Ազատություն ներսում բնակվող մեղքից	Աստծո փրկարար գործը	Կյանք Հոգու մեջ	Հոգու կյանքը
8:1-11	8:1-11	8:1-4	8:1-8	8:1-4
		Կյանք մարմինի և Հոգու մեջ		
		8:5-8		8:5-11
		8:9-11	8:9-11	
		Հոգին և որդեգրությունը		
8:12-17	8:12-17	8:12-17	8:12-17	8:12-13
				Աստծո որդիները
				8:14-17
Փառքը որը կլինի	Տառապանքից դեպի փառք	Իրականացման հույսը	Գալիք փառքը	Փառքը որպես մեր վերջնական նպատակ
8:18-25	8:18-30	8:18-25	8:18-25	8:18-25
		Մարդկային տկարությունը հաստատվում է		
8:26-30		8:26-27	8:26-27	8:26-27
				Աստված կանչել է մեզ կիսելու Իր փառքը
		8:28-30	8:28-30	8:28-30

Աստծո սերը	Աստծո հավիտենական սերը	Մեր վատահոբյունը Աստծո սիրո մեջ	Աստծո սերը Հիսուս Քրիստոսում	Աստծո սիրո հիմնը
8:31-39	8:31-39	8:31-39	8:31-39	8:31-34
				8:35-37
				8:38-39

ԸԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՇՐՋԱՆ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. և այլն

ԿՈՐՏԵՔՍԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ

Ա. Այս գլուխը համարվում է Պողոսի փաստարկների գագաթնակետը, որը սկսվել էր 1:18-ում: Այն սկսվում է «չկա դատապարտություն» (օրինական կարգավիճակ) և ավարտվում «չկա բաժանում»-ով (անձնական հարաբերություն): Աստվածաբանորեն, այն արդարացումից գնում է սրբացման միջոցով դեպի փառավորում (հմմտ. հհ. 29-30):

Բ. Սա Պողոսի աստվածաբանական զարգացումն է, երբ Աստված Իր Հոգին է տալիս հավատացյալներին (հմմտ. Հովհաննեսի շարադրանքը Հովհ. 14:12-31; 16:7-16): Հոգին իրականացնում է այն ինչն արտահայտված է ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅՈՎ հ. 14, և որ ավետարանի գործը իրականանում է ընկած, մեղավոր մարդկանց կյանքում: Հոգին կլինի նրանց հետ և կբնակվի նրանց մեջ և կսկսի ձևավորել Քրիստոսին նրան մեջ: Գլուխ 8-ը օգտագործում է հոգի բառը, *pneuma*, ավելի քան 21 անգամ, այն ինչ գլուխ 7-ում ամբողջապես բացակայում է այդ բառը (ինչպես նաև 3-6 գլուխներում և միայն հանդիպում է 1-2 գլուխներում այն էլ ընդամենը 3 անգամ):

Գ. Կյանքում կան երկու հեռանկար (անձնական աշխարհայացքներ), երկու ապրելաճ, երկու առաջնություն, երկու ճանապարհ (լայն ճանապարհը և նեղ ճանապարհը) որ մարդիկ հետևում են, այստեղ մարմին կամ Հոգի: Մեկը տանում է մահվան մյուսը՝ կյանքի: Այս հասկացողությունները ավանդորեն կոչվել են Հին Կտակարանի իմաստուն գրականության «երկու ճանապարհները» (հմմտ. Մադ. 1 և Առ. 4:10-19): Հավիտենական կյանքը, հոգևոր կյանքը ունի նկատելի առանձնահատկություններ (այն է, Հոգով կյանքը հակառակ է մարմնավոր կյանքին):

Ուշադրություն դարձրեք, որ այս ամբողջ աստվածաբանական կոնտեքստում կա աստանայի ակնհայտ բացակայությունը (հմմտ. Հռ. 1-8): Նրա մասին չի խոսվում մինչև Հռ. 16:20-ը: Մարդու ընկած աղանակյան բնությունն է գտնվում ուշադրության կենտրոնում: Սա Պողոսի ձևն էր, որով նա մասամբ արդարացնում էր ընկած մարդկության արդարացումները գերբնական բնության վերաբերյալ, Աստծո դեմ ունեցած իր ըմբոստ վիճակի համար: Մարդն է պատասխանատու դրա համար:

- Գ. Այս գլուխը շատ դժվար է ուրվագծել, քանի որ միտքը զարգանում է հյուսվելով մի քանի ճշմարտություններ միառժամանակ իրար կապելով և կրկնվող ձևով, բայց առանց կոնտեքստային բաժինների:
- Ե. 12-17 համարները հավատացյալին տեղեկացնում են հետևյալ վատահեղի երաշխիքների մասին, որն իրեն տալիս է հավատքը.
1. Առաջինը դա փոխված աշխարհայացքն ու ապրելակերպն է, որը տեղի է ունենում Սուրբ Հոգու միջոցով:
 2. Երկրորդը, որ մեր մեջ եղած Աստծո վախը փոխարինվել է Սուրբ Հոգով ընտանեկան սիրո փոխհարաբերության:
 3. Երրորդը ներքին համոզմունքն է մեր որդիության, մեր մեջ բնակվող Սուրբ Հոգու կողմից:
 4. Չորրորդն այն է, որ այս համոզմունքը իրական է և հաստատ նույնիսկ խնդիրների և պայքարների մեջ այս ընկած աշխարհում:
- Զ. 31-39 համարները դատական ատյանի տեսարան են ներկայացնում, որը տիպիկ Հին Կտակարանի մարգարեների կողմից օգտագործվող գրական տեխնիկական ձև է: Աստված դատավոր; աստանան մեղադրող կողմ; Հիսուսը դատապաշտպան (paraclete), հրեշտակները ականատեսներ իսկ աստանան մեղադրում է հավատացյալ մարդկանց:
1. իրավաբանական տերմիններ
 - ա. մեր դեմ (հ. 31)
 - բ. մեղադրանք ներկայացնել (հ. 33)
 - գ. արդարացնել (հ. 33)
 - դ. դատապարտել (հ. 34)
 - ե. բարեխոսել (հ. 34)
 2. դատական հետապնդում, «ով» (հհ. 31,33,34[մի քանի անգամ],35)
 3. Աստծո երաշխիքի ապահովումը Քրիստոսում (հհ. 32, 34)
 4. չկա բաժանում Աստծուց
 - ա. երկրային հանգամանքներ (հ. 35)
 - բ. Հին Կտակարանի մեջբերում Սաղ. 44:22 (հ. 36)
 - գ. հաղթանակ (հհ. 37,39)
 - դ. գերբնական հանգամանքներ կամ գործոններ (հհ. 37-39)

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8-1-8

¹Ուրեմն հիմա դատապարտութիւն չկայ Յիսուս Քրիստոսումը լինողների համար, որ մարմնաւորապէս չեն վարվում, այլ հոգեւորապէս: ²Որովհետեւ կեանքի հոգու օրէնքը Յիսուս Քրիստոսումն ազատեց ինձ մեղքի եւ մահի օրէնքիցը: ³Որովհետեւ այն որ անկարելի էր օրէնքին, որ տկար էր մարմնի պատճառովը, Աստուած իր Որդին ուղարկելով մեղքի մարմնի նմանութիւնովը եւ մեղքի համար՝ մեղքին դատապարտեց այն մարմնումը. ⁴Որ օրէնքի արդարութիւնը կատարուի մեզանում, որ մարմնաւորապէս չենք վարվում՝ այլ հոգեւորապէս: ⁵Որովհետեւ մարմնաւոր

լինողները մարմնի բաներն են մտածում. իսկ հոգետր լինողները՝ հոգու բաները: ⁶ Որովհետև մարմնի խորհուրդը մահ է. եւ հոգու խորհուրդը՝ կեանք եւ խաղաղութիւն: ⁷ Որովհետև մարմնի խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. որովհետև Աստուծոյ օրէնքին չէ հնազանդում, եւ կարող էլ չէ: ⁸ Եւ նորանք՝ որ մարմնով են, չեն կարող Աստուծուն հաճոյ լինիլ:

NASB (UPDATED) TEXT: 8:1-8

¹Therefore there is now no condemnation for those who are in Christ Jesus. ²For the law of the Spirit of life in Christ Jesus has set you free from the law of sin and of death. ³For what the Law could not do, weak as it was through the flesh, God *did*: sending His own Son in the likeness of sinful flesh and *as an offering* for sin, He condemned sin in the flesh, ⁴so that the requirement of the Law might be fulfilled in us, who do not walk according to the flesh but according to the Spirit. ⁵For those who are according to the flesh set their minds on the things of the flesh, but those who are according to the Spirit, the things of the Spirit. ⁶For the mind set on the flesh is death, but the mind set on the Spirit is life and peace, ⁷because the mind set on the flesh is hostile toward God; for it does not subject itself to the law of God, for it is not even able *to do so*, ⁸and those who are in the flesh cannot please God.

8:1

Արևելահայերեն «Ուրեմն հիմա»

Արևմտահայերեն «Իսկ արդ»

NASB “Therefore there is now”

NKJV, NRSV “there is therefore now”

TEV “There is”

JB “the reason, therefore”

Այս բառերը կապված են մախորդ կոնտեքստի հետ: Ոմանք համարում են, որ դրանք 7:24-25 համարներն են, բայց կարծում են ավելի լավ է էլ ավելի առաջ գնալ մինչև 3:21-7:25 համարները:

«չկայ» Հունարենում մախադասությունը սկսվում է այս բառով: Այն ունի ընդգծված նշանակություն «չկա ոչ մի դատապարտություն» նրանց համար, ովքեր Քրիստոսի մեջ են (հմմտ. հհ. 1-3), և նրանց համար, ովքեր քայլում են Հոգով (հմմտ. հհ. 4-11): Այստեղ գտնվում են նոր ուխտի երկու կողմերը (1) այն ձրի պարզ և Քրիստոսում; և (2) նոր կյանք, ապրելաճ, որպես պարտադիր արձագանք ուխտին որպես քրիստոնյա: Արդարացումը թե օբյեկտիվ է (ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ) և թե սուբյեկտիվ (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ): Սա թե վիճակ է և թե կյանքի ապրելակերպ:

«դատապարտություն» Այս տերմինը *katakrima* հաճախ չէ օգտագործված Սեպտուագիմոյի մեջ, բայց այն արտացոլում է անեծքը՝ Աստծուն անհնազանդ լինելու համար 2 Օրին. 27:26: Սա նշանակում է «ըստ դատավճռի կատարվող պատիժ»: Այն իրավական է, դատական տերմին է, որի իմաստը հակառակ է արդարացմանը: Պողոսի գրվածքներում այն հազվագյուտ տերմին է (հմմտ. 5:16,18) և ուրիշ ոչ մի տեղ Նոր Կտակարանում չի հանդիպում:

KJV թարգմանության մեջ համար 1-ը ունի լրացում, «ով չի ապրում մարմնով, այլ Հոգով»: Այս արտահայտությունը շատ հին հունարեն ձեռագրերում չկա: UBS⁴ թարգմանությունը այս բացակայությունը դասակարգում է որպես «A» կատեգորիա (հուսալի, վստահելի տարբերակ): Այն հանդիպում է 4-րդ համարում: Աստվածաբանական տեսանկյունից ավելացրած արտահայտությունը ոչ մի կերպ չի համապատասխանում համար 1-ին, բայց բացարձակորեն համաձայնեցվում է հ. 4-ի հետ: 1-3 համարները խոսում են դիրքային, վիճակի սրբացման մասին (ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ), մինչ 4-11 համարները խոսում են գործնական, փորձառական

սրբացման մասին կամ քրիստոսանմանության (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ): Հետաքրքիր տողատակի ծանոթագրություն կա Վիլիամ Ռ. Նյուելլայի «Հռոմեացիս թուղթը համար առ համար» գրքի 289 էջում (William R. Newell's *Romans Verse by Verse*) (Moody, 1938):

«Վերանայված տարբերակը (The Revised Version) շատ ճիշտ չի ընդգրկում «ով չի քայլում մարմնով, այլ Հոգով» արտահայտությունը: KJV թարգմանության սկզբից անցել է ավելի քան 300 տարի, և այդ ժամանակաշրջանում շատ և ավելի լավ, ամենաճշգրիտ հին հունարեն ձեռագրերն են հայտնաբերվել, որոնք մենք ունենք և լուրջ, աստվածապաշտ մարդիկ հաստատուն քայլերով առաջ են ընթացել այս ձանձրալի, բայց և պտղաբեր գործում՝ սխալներ գտնելով և ուղղելով, որոնք տարածվել են արտագրության ժամանակ: Քանի որ մեզ բոլորիս հայտնի է, որ մենք չունենք Սուրբ Գրքի կեղծված ձեռագրերը: Աստված հաճեց գաղտնի պահել դա Իր ստեղծագործությունից, մարդու որդիներից, որոնք հակված են կռապաշտության:

Համար 1-ը պետք է ավարտվի «Հիսուս Քրիստոսում» բառերով, այս 4 պատճառով:

(1) Հունարեն ձեռագրերը իրենց շատությամբ վկայում են, որ «ով մարմնավորապես չի վարվում, այլ Հոգով» արտահայտությունը հ. 1-ում չպետք է լինի,—բայց փաստում է հ. 4-ում այս խոսքերը ներգրավելու անհրաժեշտությունը:

(2) Հոգևոր խորաթափանցությունը նաև համաձայնեցվում է հ.1-ում այս բառերի ներածության հետ, որ մեր փրկությունը կախված է մեր ապրելակերպից, և ոչ թե Աստծո Սուրբ Հոգուց: Բայց, ինչպես Նոր Կտակարանի թղթերն են սովորեցնում, Հիսուս Քրիստոսում եղողների համար չկա դատապարտություն: Այա թե ոչ, մեր հուսալիությունը կախված կլինի մեր ապրելակերպից, և ոչ թե Քրիստոսում ունեցած մեր դիրքից:

(3) Միանգամայն ակնհայտ է, որ այս արտահայտության տեղը հ. 4-ի վերջում է, հենց այնտեղ, որտեղ խոսքը գնում է հավատացյալի ապրելակերպի մասին, և ոչ թե դատապարտությունից պաշտպանված լինելու մասին:

(4) Այն, որ այս արտահայտությունը Հակոբոս Թագավորի թարգմանության մեջ հ. 1-ի վերջում է հանդիսանում է գլոսա՝ բացատրություն (անհասկանալի բառի կամ արտահայտության մեկնություններ լուսանցքում կամ բնագրում) հանդիպում է ոչ միայն ամենալավ երկաթագիր ձեռագրերում Aleph, A, B, C, D, F, G; A, D (ճշտ.); կամ մի քանի լավ արագագիր, ձեռագիր և ամենահիմնիկ տարբերակներում (տես Օլշաուսեն, Մեյեր, Ալֆորդ Ջ. Ֆ. և Բ., (Olshausen, Meyer, Alford, J. F. and B.), և նաև Դարբիի հիանալի քննարկումը այս հարցի շուրջ իր «Միևուպսիս» գրքում (Darby, *Synopsis, in loc*); այլ նաև այն, որ այս գլոսան շատ նման է այն լրացումներին, որոնք հայտնաբերվել են ուրիշ տեքստերում, որ չլինի թե մի քան բաց թողնեն:

Այն, որ Աստված նախընտրեց, որ Իր Խոսքը թարգմանվի՝ առանց հեղինակությունը կորցնելու, ակնհայտ է այն բանից, որ Նոր Կտակարանում շատ է օգտագործվում եբրայերեն Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը՝ Սեպտուագինը:

Մենք պետք է շնորհակալ լինենք Աստծուն այն նվիրյալ մարդկանց համար, ովքեր իրենց կյանք անցկացրել են ձեռագրերի խորը ուսումնասիրությամբ, և որոնք մեզ նվիրել են հիանալի անթերի թարգմանություն: Մենք պետք է հստակ սահման գծենք, անշուշտ ընդմիջտ, այնպիսի գիտնականների և ինքնահավան «մոդեռնիստների» միջև (կամ, անցյալում «բարձր քննադատներ»), ովքեր իրենց վրա են վերցնում պատասխանատվություն՝ մեզ պատմելու այն, ինչ Աստված պետք է ասի Աստվածաշնչում, փոխարենը խորը խոնարհությամբ փնտրելու այն ինչ Աստված արդեն ասել է» (էջ 289):

«Յիսուս Քրիստոսումը լինողների համար» Պողոսին բնորոշ այս արտահայտությունը (ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ) հավասարազոր է «անձնական հարաբերություն» ժամանակակից արտահայտությանը: Պողոսը ճանաչում էր Հիսուսին, սիրում էր Նրան, ծառայեց Նրան և ցնծում էր Նրանում: Ավետարանը թե պատգամ է, որին պետք է հավատալ, և թե Անձ, որին պետք է ընդունել:

Ապրելու գործությունը Պողոսը վերցնում է Հարուցյալ Քրիստոսի հետ ունեցած անձնական հարաբերությունից, որին նա հանդիպեց Դամասկոսի ճանապարհին: Նրա անձնական փորձառությունը Հիսուսի հետ ձևավորում է նրա աստվածաբանությունը Հիսուսի մասին: Եվ այս փորձառությունը չի առաջանում վանական միստիցիզմից, այլ եռանդուն միստիկական ծառայությունից: Քրիստոսին ճանաչել նշանակում է Նրան ծառայել: Հասուն քրիստոնեությունը դա թե պատգամ է, թե Անձ և թե ապրելակերպ: (Տես ծանուցում 1:5)

8:2 «Կեանքի հոգու օրենքը. . . մեղքի եւ մահի օրենք» Այս բառերի իմաստը կարող է նշանակել: (1) հակասություն մեղքի օրենքի (հմմտ. Հռ. 7:10,23,25) և Աստծո նոր օրենքի միջև (հմմտ. Հռ. 7:6,22,25); (2) «սիրո օրենքը» (հմմտ. Հակ. 1:25; 2:8,12) ի տարբերություն «Մովսեսի Օրենքի» (հմմտ. 7:6-12); (3) հին դարը ի տարբերություն նոր դարի; կամ (4) հին ուխտը նոր ուխտի հետ (հմմտ. Եր. 31:31-34; Եբրայեցիս Թուղթը Նոր Կտակարանում):

Հակադրության այսպիսի ոճը պահպանվում է բավականին երկար.

1. մեղքի և մահվան օրենքը, հ. 2
2. մարմնավորապես և հոգևորապես, հհ. 4 և 5
3. մարմնի բաները և Հոգու բաները, հ. 5
4. մարմնատուր լինողները մարմնի բաները և հոգետուր լինողները՝ հոգու բաները, հ. 5
5. մարմնի խորհուրդ և հոգու խորհուրդ, հ. 6
6. մարմնով այլ Հոգով, հ. 9
7. մարմինը մեռած է իսկ Հոգին կենդանի, հ. 10
8. դուք պետք է մեռնեք և դուք կապրեք, հ. 13
9. ոչ թե ծառայության հոգին այլ որդեգրության հոգին, հ. 15

Արևելահայերեն «ազատեց ինձ»

Արևմտահայերեն «զիս ազատեց»

□

NASB, NRSV, JB “has set you free”

NKJV, TEV “had made me free”

2-3 համարներ 6-րդ գլխի աստվածաբանական պատգամն են: Հին հունարեն տեքստերում այստեղ օգտագործված են տարբեր դերանուններ; «ինձ» A, D, K և P ձեռագրերում, իսկ «քեզ» R, B, F և G: «Մեզ» դերանունը հանդիպում է ավելի ուշ երկաթագիր ձեռագրերում, Մ: UBS⁴ կազմողները «քեզ» տարբերակը գնահատում են ըստ «B» կատեգորիայի (գրեթե հավանական): UBS³ տալիս են դրան «D» կատեգորիա (մեծ դժվարությամբ):

Նյումեն և Նիդա «Թարգմանչի օրագիրը ըստ Պողոսի Հռոմեացիներին ուղղված թղթի» մեջ գրում են (Newman and Nida, *A Translator's Handbook on Paul's Letter to the Romans*),

«... UBS թարգմանության հունարեն տեքստը առաջարկում է «ինձ» դերանունը, չնայած այս տարբերակը պատկանում է «C» կատեգորիային, ցույց է տալիս կասկածանք այն բանի հանդեպ, որ դա համապատասխանում է կեղծ տարբերակին (էջ 145-146):

ԳԵՐԱՆՈՒՆ-ների հետ կապված այս խնդիրը «մեզ/ձեզ», կամ «ես/մենք», ժամանակ առ ժամանակ հանդիպում է Պողոսի գրվածքների հունարեն տեքստերում:

8:3 «այն որ անկարելի էր օրենքին» Մովսեսի Օրենքը բարի է և սուրբ, իսկ մարդկությունը՝ տկար և մեղավոր (հմմտ. 7:12, 16): ԲԱՅ-ի փոխարեն այստեղ իրականում ԱԾԱԿԱՆ է *adunaton*, որը սովորաբար նշանակում է «անհնարին, անիրականանալի» (հմմտ. Եբր. 6:4,18; 10:4; 11:6), բայց այն կարող է նաև նշանակել «առանց ուժի» (հմմտ. Գործք 14:8; Հռ. 15:1): Օրենքն անկարող էր տալ ազատագրում: Այլ ընդհակառակը, այն միայն կարող էր բերել դատապարտություն, մահ և անեծք:

«որ տկար էր մարմնի պատճառովը» Սա է Պողոսի հիմնական փաստարկը գլուխ 7-ում: Աստծո Օրենքը բարի է և սուրբ, բայց մեղավոր, ընկած, ապստամբ մարդը չի կարող կատարել դրա պահանջները: Պողոսը, ի տարբերություն ռաբբիների, շեշտը դնում էր մեղքի հետևանքների վրա Ճննդ. 3:

«Աստուած իր Որդին ուղարկելով» Այն, ինչ ընկած մարդը չկարողացավ անել Հին Ուխտի ներքո, Աստված արեց Նոր Ուխտի մեջ (հմմտ. Եր. 31:31-34; Եզ. 36:22-36) Հիսուսի միջոցով (հմմտ. Ես. 53; Հովհ. 3:16): Արտաքին պահանջների փոխարեն Աստված մարդու մեջ Հոգի և նոր սիրտ դրեց: Այս Նոր Ուխտը հիմնված է ապաշխարության և Հիսուսի ավարտած գործի հավատքի վրա, և ոչ թե մարդու գործերի: Ինչևէ, երկու ուխտերն էլ պահանջում են նոր, աստվածահաճո ապրելակերպ:

«մեղքի մարմնի նմանութիւնովը» Այս նույն ճշմարտությունը հաստատվում է Փիլ. 2:7-8: Հիսուսն ուներ իրական մարդկային մարմին (բայց ոչ մեղավոր բնություն, հմմտ. Փիլ. 2:7-8; Եր. 7:26): Նա իրապես մեզանից մեկն է: Նա փորձվեց բոլոր կերպերով ինչպես մենք, բայց առանց մեղքի (հմմտ. Եր. 4:15): Նա լավ է հասկանում մեզ:

«մեղքի համար» Այս նույն գաղափարը հաստատված է II Կոր. 5:21 և I Պետ. 2:24: Հիսուս եկավ մեռնելու (հմմտ. Ես. 53:4-6,10-12; Մարկ. 10:45): Հիսուսի անմեղ (անարատ) կյանքը դարձավ մեղքի պատարագ, զոհ (հմմտ. Հովհ. 1:29):

«մեղքին դատապարտեց այն մարմնումը» Հիսուսի մահը ընդգծեց և լուծեց մարդկային մեղավոր բնության խնդիրը, և ոչ թե մեղքի առանձին գործողությունները (ինչպես արվում էր Մովսեսական Օրենքում): Նրա կյանքը, մահն ու հարությունն էր, որ իրականացրեց Աստծո հավիտենական փրկության նպատակը (հմմտ. Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29): Նա նաև ցույց տվեց մեզ, որ մարդիկ կարող են լինել և պետք է լինեն (հմմտ. Հովհ. 13:15; I Պետ. 2:21):

8:4 Հավանական է, այս համարը վերաբերվում է Նոր Ուխտին (հմմտ. Եր. 31:33 և Եզ. 36:26-27): Այն առընչվում է մեր փրկության երկու ասպեկտների հետ: Նախ, Հիսուսն իրականացրեց Հին Կտակարանի պահանջները, իսկ Նրա արդարության վրա ունեցած հավատքի միջոցով, որպես ձրի պարզև, դա փոխանցվում է հավատացյալներին՝ անկախ իրենց արժանիքների և կարողությունների: Սա մենք կոչում ենք արդարացում կամ դիրքային սրբացում: Աստված տալիս է հավատացյալներին նոր սիրտ և նոր հոգի: Հիմա մենք քայլում ենք Հոգով և ոչ թե մարմնով: Սա կոչվում է «պրոգրեսիվ կամ աստիճանաբար կատարվող սրբացում»: Քրիստոնեությունը նոր ուխտ է, որն ունի թե իրավունքներ (փրկության պարզև) և թե պատասխանատվություններ (քրիստոսանմանություն, հմմտ. 6:13): Դժբախտաբար, որոշ հավատացյալներ ապրում են մարմնավոր, անհամապատասխան կյանքով (հմմտ. I Կոր. 3:1-3):

«որ մարմնատրապես չենք վարվում՝ այլ հոգետրապես» Այս նույն հակադրությունը գտնվում է Գաղ. 5:16-25: Իրավական արդարությունը պետք է ուղեկցվի ապրելակերպի արդարությունով: Նոր Ուխտի նոր սիրտն ու միտքը մեր փրկության հիմքը չէ, այլ հետևանքը: Հավիտենական կյանքն ունի տեսանելի առանձնահատկություններ:

8:5 Պողոսը հակադրում է կյանքը «մարմնով» և կյանք «Հոգով» հի. 5-8 («մարմնի գործերը» հմմտ. Գաղ. 5:19-21 «Հոգու պտուղ», հմմտ. 5:22-25):

8:6 «հոգու խորհուրդը» Հրեաները գիտակցեցին, որ աչքերն ու ականջները հոգու պատուհաններն են: Մեղքը սկսվում է կյանքի մտային բաժնում: Մենք դառնում ենք այն, ինչի մասին երկար և հանգամանորեն ենք մտածում (հմմտ. Հռ. 12:1-2; Փիլ. 4:8):

Պողոսը հատակորեն չի հետևում ավանդական ռաբբիական կարծիքին մարդկանց մեջ գոյություն ունեցող երկու «մտադրությունների» (*yetzers*) վերաբերյալ: Պողոսի համար պարզ է, որ բարի մտադրությունները գոյություն չեն ունեցել ընկած արարչագործության մեջ, դրանք սկսվում են ապաշխարությունից հետո: Պողոսը համոզված է, որ հենց Սուրբ Հոգին է սկսում ներքին հոգևոր կոնֆլիկտը մարդու մեջ (հմմտ. Հովհ. 16:7-14):

«կյանք» Սա վերաբերվում է հավիտենական կյանքին, նոր դարաշրժանի կյանքին:

«խաղաղություն» Այս տերմինը բնագրում նշանակում էր «իրար կապել մի բան, որը կոտրվել էր» (հմմտ. Հովհ. 14:27; 16:33; Փիլ. 4:7): Տես Հատուկ Թեմա: Խաղաղություն 5:1: Նոր Կտակարանը խոսում է խաղաղության երեք կերպերի մասին.

1. Մեր խաղաղությունը Աստծո հետ Քրիստոսի միջոցով (հմմտ. Կող. 1:20)
2. մեր սուբյեկտիվ զգացողությունը Աստծո հետ ուղիղ լինելու մասին (հմմտ. Հովհ. 14:27; 16:33; Փիլ. 4:7)
3. Աստված, Քրիստոսի միջոցով միավորելով մեկ նոր մարմնում, թե հրեային և թե հեթանոսին (հմմտ. Եփ. 2:14-17; Կող. 3:15):

8:7-11 Պողոսը մի քանի կերպերով նկարագրում է մարդու վիճակն առանց Աստծո (1) թշնամություն Աստծո դեմ, հ. 7; (2) չի ենթարկվում Աստծուն, հ. 7; (3) չի կարող Աստծուն հաճելի լինել, հ. 8; և (4) հոգևորապես մեռած, որի արդյունքում հավիտենական մահն է, հ. 10-11:

8:7

Արևելահայերեն «մարմնի խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է»

Արևմտահայերեն «Զանգի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է»

NASB, NRSV “the mind set on the flesh is hostile toward God”

NKJV “the carnal mind is enmity against God”

TEV “people become enemies of God”

NJB “the outlook of disordered human nature is opposed to God”

Նկատեք, որ այս արտահայտությունը զուգահեռ է «մարմնի խորհուրդը մահ է» հ. 6 և «որ մարմնավորապես չենք քայլում» հ. 4: Նաև ուշադրություն դարձրեք այն փաստի վրա, որ ընկած մարդկային բնությունը թե մտածելու վրա է անդրադարձել (աշխարհայացք) և թե կյանքի ապրելակերպի (հմմտ. 7:5):

«եւ կարող էլ չէ» Ընկած, մեղավոր մարդկությունը ոչ միայն ընտրություն չի անում՝ Աստծուն հետևելու համար, այլ նաև ունակ չէ Նրան հետևելու: Ընկած, մեղավոր մարդկությունը, առանց Սուրբ Հոգու օգնության, չի կարող արձագանքել հոգևոր բաներին (հմմտ. Ես. 53:6; I Պետ. 2:24-25): Աստված նախաձեռնությունը միշտ Իր ձեռքն է վերցնում (հմմտ. Հովհ. 6:44,65):

8:8 «նորանք՝ որ մարմնով են» Պողոսն օգտագործում է այս արտահայտությունը երկու իմաստով (1) ֆիզիկական մարմին (հմմտ. Հռ. 1:3; 2:28; 4:1; 9:3,5); և (2) Աստրծուց հեռու ապրելու մարդու ջանքերը (հմմտ. Հռ. 7:5; 8:4-5): Այստեղ 2-րդ տարբերակն է: Սա վերաբերվում է ըմբոստ, անհավատ մարդկությանը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:9-11

⁹ Բայց դուք մարմնով չէք՝ այլ հոգով, եթե Աստուծոյ Հոգին ձեզանում բնակուած է. իսկ եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի՝ նա նորանը չէ: ¹⁰Եւ եթէ Քրիստոսը ձեզանում է՝ ապա մարմինը մեռած է մեղքի համար, եւ հոգին կենդանի է արդարութեան համար: ¹¹Եւ եթէ Յիսուսին մեռելներից յարուցանողը ձեր մահկանացու մարմիններն էլ կը կենդանացնէ իր Հոգովը, որ ձեզանում բնակուած է:

NASB (UPDATED) TEXT: 8:9-11

⁹However, you are not in the flesh but in the Spirit, if indeed the Spirit of God dwells in you. But if anyone does not have the Spirit of Christ, he does not belong to Him. ¹⁰If Christ is in you, though the body is dead because of sin, yet the spirit is alive because of righteousness. ¹¹But if the Spirit of Him who raised Jesus from the dead dwells in you, He who raised Christ Jesus from the dead will also give life to your mortal bodies through His Spirit who dwells in you.

8:9 «եթէ» 9,10,11,13(2անգամ), 17(2անգամ) համարներում մենք տեսնում ենք մի շարք ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Նրանք բոլորն էլ հանդիսանում են ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Պողոսը ենթադրում էր այն, որ իր ընթերցողները Հռոմի եկեղեցում քրիստոնյաներ էին (հմմտ. հ. 9):

«Քրիստոսի Հոգին» Մարդիկ կամ ունեն Հոգին և ուստի հավատացյալներ են, կամ էլ նրանք չունեն Հոգին և հոգևորապես մեռած են: Փրկության պահին մենք ամբողջությամբ ստանում ենք Սուրբ Հոգին: Մենք Նրա ավելիի կարիքը չունենք, այլ Նա ունի մեր կարիքը, որ մնանք Նրա մեջ: «Հոգին» հ.9, «Աստծո Հոգին» հ.9 և «Քրիստոսի Հոգին» հ.9 արտահայտությունները հոմանիշներ են:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՍՈՒՄԸ և ՀՈԳԻՆ

Գոյություն ունի սահուն անցում Սուրբ Հոգու և Աստծո Որդու գործունեության միջև: Ջ. Քեմբել Սորգանն (G. Campbell Morgan) ասում է, որ լավագույն անունը Սուրբ Հոգու համար «ուրիշ Հիսուս» անունն է: Ստորև բերված է զուգահեռ Որդու և Հոգու գործի և անունների միջև:

1. Սուրբ Հոգին կոչվում է «Հիսուսի Հոգին» կամ նմանատիպ անուններով (հմմտ. Հռ. 8:9; II Կոր. 3:17; Գաղ. 4:6; I Պետ. 1:11):
2. Երկուսի համար էլ օգտագործված են նույն տերմինները
 - ա. «ճշմարտություն»
 - 1) Հիսուս (Հովհ. 14:6)
 - 2) Հոգի(Հովհ. 14:17; 16:13)
 - բ. «բարեխոս»
 - 1) Հիսուս (I Հովհ. 2:1)
 - 2) Հոգի (Հովհ. 14:16,26; 15:26; 16:7)
 - գ. «Սուրբ»
 - 1) Հիսուս (Բուկ. 1:35; 14:26)
 - 2) Հոգի (Բուկ. 1:35)
3. Երկուսն էլ ապրում են հավատացյալի մեջ
 - ա. Հիսուս (Մաթ. 28:20; Հովհ. 14:20,23; 15:4-5; Հռ. 8:10; II Կոր. 13:5; Գաղ. 2:20; Եփ. 3:17; Կող. 1:27)

- բ. Հոգի (Հովհ. 14:16-17; Հռ. 8:9,11; I Կոր. 3:16; 6:19; II Տիմ. 1:14)
գ. և նույնիսկ Հայրը (Հովհ. 14:23; II Կոր. 6:16)

8:10 «Քրիստոսը ձեզանում է» «Ձեզ» դերանունը ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ է: «Քրիստոս» տերմինը վերաբերում է հավատացյալի մեջ բնակվող Որդուն/Հոգուն (հմմտ. Հովհ. 14:16-17; Կող. 1:27): Մարդիկ կամ ունեն Որդուն/Հոգին, կամ էլ չունեն և քրիստոնյա չեն (հմմտ. I Հովհ. 5:12): Պողոսի համար, աստվածաբանական տեսանկյունից, «Քրիստոսի մեջ» նույն նշանակությունը ունի ինչ «Հոգու մեջ»:

«Ապա մարմինը մեռած է մեղքի համար» Նույնիսկ քրիստոնյաները ենթակա են ֆիզիկական մահվան ադամական մեղքի, ընկած աշխարհի և անձնական ըմբոստության պատճառով (հմմտ. 5:12-21): Մեղքը միշտ հասնում է իր ուզածին: Հոգևոր մահը (հմմտ. Ծննդ. 3; Եփ. 2:1) տանում է ֆիզիկական մահվան (հմմտ. Ծննդ. 5; Եբր. 9:27): Հավատացյալներն միառժամանակ ապրում են թե Հոգու նոր դարաշրջանում (հմմտ. Հովել 2:28-29; Գործք 2:16), և թե մեղքի ու ապստամբության հին դարաշրջանում (հմմտ. հհ. 21, 35):

«Եւ հոգին կենդանի է արդարութեան համար» Գոյություն ունի որոշակի տարածայնություն թարգմանիչների և մեկնաբանների միջև, այն առիթով, թե ինչ հասկանալ «հոգի» բառի տակ, մարդու հոգի (հմմտ. թարգմանություններ NASB, ASV, NIV, Williams, Jerusalem Bible), թե Սուրբ Հոգի (հմմտ. KJV, TEV, REB, Karl Barth, C. K. Barrett, John Murray, and Everett Harrison):

Ավելի ընդարձակ կոնտեքստը օգնում է մեզ ավելի լավ հասկանալ այս կարճ արտահայտությունը: Նույնիսկ նրանք, ովքեր հավատում են Հիսուսին շարունակում են մահանալ, քանի որ նրանք ապրում են ընկած աշխարհում: Ինչևէ, արդարության շնորհիվ, որը տրվում է Հիսուսին հավատալու միջոցով, նրանք արդեն ունեն հավիտենական կյանք (հմմտ. Եփ. 2:4-6): Այս հակասող իրավիճակը «արդեն, բայց ոչ դեռ» բնորոշ է Աստծո թագավորությանը: Հին դարաշրջանն ու նոր դարաշրջանը մասամբ համընկնում են ժամանակի մեջ:

«արդարություն» Տես հատուկ թեմա 1:17

8:11 «Եթե» Տես ծանուցում հ. 9

«Հիսուսին մեռելներից յարուցանողի Հոգին ձեզանում բնակուած է» Երրորդության ո՞ր Անձն է բնակվում հավատացյալի մեջ: Շատ քրիստոնյաներ կպատասխանեն Հոգին: Անշուշտ դա ճիշտ է, բայց իրականում, Երրորդության բոլոր Անձերն էլ բնակվում են:

1. Հոգին, Հովհ. 14:16-17; Հռ. 8:11; I Կոր. 3:16; 6:19; II Տիմ. 1:14
2. Որդին, Մաթ. 28:20; Հովհ. 14:20,23; 15:4-5; Հռ. 8:10; II Կոր. 13:5; Գաղ. 2:20; Եփ. 3:17; Կող.1:27
3. Հայրը, Հովհ. 14:23; II Կոր. 6:16

Այս արտահայտությունը գերազանց հնարավորություն է ցույց տալու համար, որ Նոր Կտակարանը հաճախ մարդկության փրկության գործը վերագրում է Երրորդության բոլոր Անձերին:

1. Հայր Աստվածը հարություն տվեց Հիսուսին (հմմտ. Գործք 2:24; 3:15; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռ. 6:4,9; 8:11; 10:9; I Կոր. 6:14; II Կոր. 4:14; Գաղ. 1:1; Եփ. 1:20; Կող. 2:12; I Թես. 1:10)
2. Որդի Աստվածը հարություն տվեց Ինքն իրեն (հմմտ. Հովհ. 2:19-22; 10:17-18)
3. Հոգի Աստվածը հարություն տվեց Հիսուսին (հմմտ. Հռ. 8:11)

Այս նույն շեշտադրումը Երրորդության հետ կապված կարելի է տեսնել նաև հհ. 9-10.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ուշադրություն դարձրեք Երրորդության բոլոր երեք Անձերի գործունեությանը: «Եչչոչություն» տերմինը առաջինը օգտագործվել է Տերտուլիանի կողմից, այն աստվածաշնչյան չէ, բայց գաղափարը առկա է Սուրբ Գրքում:

1. Ավետարաններ
 - ա. Մաթ. 3:16-17; 28:19 (և զուգահեռ տեքստերը)
 - բ. Հովհ. 14:26
2. Գործք Առաքելոց - Գործք 2:32-33, 38-39
3. Պողոս
 - ա. Հռ. 1:4-5; 5:1,5; 8:1-4,8-10
 - բ. I Կոր. 2:8-10; 12:4-6
 - գ. II Կոր. 1:21; 13:14
 - դ. Գաղ. 4:4-6
 - ե. Եփ. 1:3-14,17; 2:18; 3:14-17; 4:4-6
 - զ. I Թես. 1:2-5
 - է. II Թես. 2:13
 - ը. Տիտոս 3:4-6
4. Պետրոս- I Պետ. 1:2
5. Հուդա - հհ. 20-21

Հին Կտակարանը նույնպես ակնարկում է Երրորդության մասին

1. Աստծո համար օգտագործված է հոգնակի թիվ
 - ա. *Elohim* անունը հոգնակի է, բայց երբ Աստծո համար է օգտագործվում միշտ եզակի թվի բայով է հանդես գալիս
 - բ. «Մեր» Ծննդ. 1:26-27; 3:22; 11:7
 - գ. «Մեկ» *Shema*-ում 2 Օրին. 6:4 հոգնակի է (ինչպես Ծննդ. 2:24; Եզ. 37:17)
2. Տիրոջ հրեշտակը, որպես աստվածության տեսանելի ներկայացուցիչ
 - ա. Ծննդ. 16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16
 - բ. Ելից 3:2,4; 13:21; 14:19
 - գ. Դատ. 2:1; 6:22-23; 13:3-22
 - դ. Չաք. 3:1-2
3. Աստված և Հոգին առանձին են , Ծննդ. 1:1-2; Սաղ. 104:30; Ես. 63:9-11; Եզ. 37:13-14
4. Աստված (YHWH) և Մեսիան (*Adon*) առանձին են, Սաղ. 45:6-7; 110:1; Չաք. 2:8-11; 10:9-12
5. Մեսիան և Հոգին առանձին են, Չաք. 12:10
6. Բոլոր երեքն էլ նշված են Ես. 48:16; 61:1

Հիսուսի և Հոգու աստվածությունն ու Անձ լինելը լուրջ խնդիր էր ներկայացնում իրենից վաղ հավատացյալների համար, որոնք ուժեղ հարում էին միաստվածության/մոնոթեիստիկ գաղափարին:

1. Տերտուլիան – Որդուն ստորադասեց Հորից
 2. Օրիգեն – ստորադասեց Որդու և Հոգու աստվածային էությունը
 3. Արիպցի – մերժեց Որդու և Հոգու աստվածությունը
 4. Միապետություն – հավատում էին նույն Աստծո հաջորդական արտահայտմանը
- Երրորդությունը դա պատմականորեն զարգացված ձևակերպում է, բայց աստվածաշնչյան նյութի հիմքի վրա:
1. Հիսուսի ամբողջական աստվածությունը և Նրա հավասարությունը Հորը հաստատվեց 325 Ք.Հ. Նիկիայի ժողովի ժամանակ

2. Սուրբ Հոգու ամբողջական աստվածությունը և անձեղությունը, Նրա հավասարությունը Հոր և Որդու հետ հաստատվեց (381 Ք.Հ.) Կոնստանդնուպոլիսի ժողովի ժամանակ
3. Երրորդության վարդապետությունը ամբողջությամբ արտահայտվում է Օգոստինոսի կողմից իր աշխատության մեջ «*De Trinitate*»:

Իրականում այստեղ խորհուրդ կա: Բայց Նոր Կտակարանը լրիվ պնդում է մեկ աստվածային էությունը երեք հավիտենական անձերի արտահայտմամբ:

«ձեր մահկանացու մարմիններն էլ կը կենդանացնե՛ք» Հիսուսի և Նրա հետևորդների հարությունը կարևոր վարդապետություն է հանդիսանում (հմմտ. I Կոր. 15:1; II Կոր. 4:14): Քրիստոնեությունը պնդում է, որ հավիտենականության մեջ հավատացյալները կլինեն մարմնով (հմմտ. I Հովհ. 3:2): Եթե Հոգին հարություն է տվել Քրիստոսին, ապա նաև Նրա հետևորդներին էլ կտա (հմմտ. հ. 23):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:12-17

¹²Ապա ուրեմն, եղբարք, պարտական ենք ոչ թե մարմնին՝ մարմնի պես ապրելու: ¹³Որովհետև եթե մարմնաւորապէս ապրէք՝ կմեռնէք. բայց եթե հոգով մարմնի գործերն սպանէք՝ կապրէք: ¹⁴Որովհետև որոնք որ Աստուծոյ Հոգովն են վարվում, նորանք Աստուծոյ որդիք են: ¹⁵Որովհետև դուք ծառայութեան հոգին չառաք որ դարձեալ վախենաք. այլ որդեգրութեան հոգին առաք, որով աղաղակում ենք՝ Աբբա, Հայր: ¹⁶Նոյն ինքն Հոգին վկայութիւն է տալիս մեր հոգուն հետ, որ մենք Աստուծոյ որդիք ենք: ¹⁷Եւ եթե որդիք՝ ապա ժառանգներ էլ, Աստուծոյ ժառանգներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ. որ եթե նորա չարչարանքներին կցորդ ենք՝ փառքին էլ մասնակից լինինք:

NASB (UPDATED) TEXT: 8:12-17

¹²So then, brethren, we are under obligation, not to the flesh, to live according to the flesh—
¹³for if you are living according to the flesh, you must die; but if by the Spirit you are putting to death the deeds of the body, you will live. ¹⁴For all who are being led by the Spirit of God, these are sons of God. ¹⁵For you have not received a spirit of slavery leading to fear again, but you have received a spirit of adoption as sons by which we cry out, “Abba! Father!” ¹⁶The Spirit Himself testifies with our spirit that we are children of God, ¹⁷and if children, heirs also, heirs of God and fellow heirs with Christ, if indeed we suffer with *Him* so that we may also be glorified with *Him*.

8:12 «Ապա ուրեմն» Պողոսը հաջորդաբար շարունակում է կառուցել իր եզրակացությունները, ներկայացված հհ. 1-11:

«պարտական ենք» Սա քրիստոնեական ազատության մյուս կողմն է (հմմտ. 14:1-15:13): Սա ամփոփումն է, որը վրցված է սրբացման մասին քննարկումից հհ. 1-11, որը թե տեղային է (ՍԱՀՍԱՆԱԿԱՆ) և թե պրոգրեսային (ՀՐԱՍԱՅԱԿԱՆ): Այն նաև հստակ ցույց է տալիս, որ հավատացյալները դեռևս պետք է պայքարեն հին մեղավոր բնության հետ (հմմտ. Հռ. 7): Մարդը պետք է մեկ անգամ ընտրություն կատարի (նախասկզբնական հավատք) իսկ դրանից հետո կա շարունակական ընտրություն (հավատքով կյանք):

8:13 «եթե» 9,10,11,13(2անգամ), 17(2անգամ) համարներում մենք տեսնում ենք մի շարք ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Նրանք բոլորն էլ հանդիսանում են ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Պողոսը ենթադրում էր այն, որ իր ընթերցողները Հռոմի եկեղեցում քրիստոնյաներ էին ապրելով Հոգով:

«մարմնատրասալես ապրեք՝ կմեռնեք» Երկու ԲԱՅԵՐ-ն էլ հ. 13 ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ են, որը խոսում է շարունակական գործողության մասին: Աստվածաշունչը հայտնում է մահվան երեք փուլ (1) հոգևոր մահ (հմմտ. Ծննդ. 2:17; 3:1-7; Եփ. 2:1); (2) ֆիզիկական մահ (հմմտ. Ծննդ. 5); և (3) հավիտենական մահ (հմմտ. Հայտ. 2:11; 20:6,14; 21:8): Տվյալ տեքստում խոսքը Ադամի հոգևոր մահվան մասին է (հմմտ. Ծննդ. 3:14-19), որի արդյունքում մարդկությունը ունեցավ ֆիզիկական մահ (հմմտ. Ծննդ. 5):

Ադամի մեղքը բերեց մահ մարդու փորձառության մեջ (հմմտ. 5:12-21): Մեզանից ամեն մեկը ընտրել է մասնակցել մեղքին կամավոր կերպով: Եթե մենք ընտրում ենք մնալ դրա մեջ, այն կսպանի մեզ «հավիտենան» (հմմտ. Հայտ. 20:6, 14, «երկրորդ մահ»): Որպես քրիստոնյա մենք պետք է մեռնենք մեղքին և ես-ին և կենդանի Աստծո համար (հմմտ. Հռ. 6):

«բայց եթե հոգով մարմնի գործերն սպանեք՝ կապրեք» Հավատացյալների փրկության վստահությունը երևում և հաստատվում է իրենց քրիստոնեական ապրելակերպով (հմմտ. Հակոբոս և I Հովհ. գրքերը): Հավատացյալները չեն ապրում այս նոր կյանքը իրենց սեփական ջանքերով, այլ իրենց մեջ բնակվող Սուրբ Հոգու գործությամբ (հմմտ. հ.14): Ուստի, նրանք պետք է ամեն օր իրենց դնեն Նրա ենթակայության տակ (հմմտ. Եփ. 5:17-18):

Այս կոնտեքստում «մարմնի գործերը» հասկացվում է կյանք հին մեղավոր դարաշրջանի մեջ: Սա մերժում չէ մարմնի փորձառության հավիտենականության (հմմտ. 8:23) այլ հակադրությունը բնակվող Սուրբ Հոգու (նոր դարաշրջան) և մեղքի դեմ պայքարի միջև (հին դարաշրջան):

8:14 «որոնք որ Աստուծոյ Հոգովն են վարվում» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՂԵՐԲԱՅ է, որը ցույց է տալիս Սուրբ Հոգու կողմից շարունակաբար առաջնորդվելը: Հոգին մեզ մոտեցնում է Քրիստոսին և հետո ձևավորում Նրան մեր մեջ (հմմտ. հ. 29): Եվ սա ավելի մեծ նշանակություն ունի քան մեղավորի դարձի գալու որոշումը: Իրականում հավատացյալը գտնվում է անվերջանալի աշակերտության մեջ, որը սկսվում է դարձի գալու որոշումից: Սա չի վերաբերվում միայն հատուկ իրադարձություններին, ժամանակներին կամ ծառայություններին, այլ առօրյա գործողություններին:

«Աստուծոյ որդիք» Հին Կտակարանում այս արտահայտությունը ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ օգտագործվում էր հրեշտակների համար և հազվագյուտ դեպքերում մարդկանց համար: ԵԶԱԿԻ ԹՎՈՎ օգտագործվում էր Ադամի, Իսրայելի, նրա Թագավորի և Մեսսիայի համար: Այստեղ այն վերաբերվում է բոլոր հավատացյալներին: 14 հ-ում օգտագործված է հունարեն *huioi* (որդիներ) տերմինը, իսկ 16-ում, *tekna* (երեխաներ): Տվյալ կոնտեքստում դրանք օգտագործված են որպես հոմանիշ:

8:15 «հոգին» Այս համարը, ինչպես հ. 10, երկիմաստ է: Այն կարող է վերաբերվել ինչպես մարդու նոր փրկված հոգուն, այնպես էլ Սուրբ Հոգուն: Երկուսն էլ գտնվում են հ. 16-ում:

Պողոսի գրվածքներում կան մի քանի տեղեր, որտեղ այս քերականական կառուցվածքը օգտագործվում է նկարագրելու այն, ինչ Սուրբ Հոգին արտադրում է անհատ հավատացյալի մեջ;

1. այստեղ «ոչ թե ծառայության հոգի», «այլ որդեգրության հոգի», հ. 15
2. «հեզության հոգի» I Կոր. 4:21
3. «հավատքի հոգի (հավատարմություն), II Կոր. 4:13
4. «իմաստության և հայտնության հոգի» Եփ. 1:17

Կան մի քանի տեղեր, հատկապես I Կորնթացիս, որտեղ Պողոսն օգտագործում է *pneuma* ինքն իր համար (հմմտ. I Կոր. 2:11; 5:3,14; 7:34; 16:8; և Կող. 2:5): Այս կոնտեքստում, անշուշտ, հհ. 10 և 15 ամենաճիշտ համապատասխան ձևն է այս հասկացողության:

«ծառայութեան հոգին... որ դարձեալ վախենաք» Հին բնութեան առանձնահատկությունը վախն է: Նոր բնութեան առանձնահատկությունը նկարագրված է հհ. 14-17:

«որդեգրութեան» Համաձայն հռոմեական օրենսդրության որդեգրությունը շատ բարդ գործ էր, բայց եթե դա տեղի էր ունենում, ապա դա արդեն համարվում էր անփոփոխ (հմմտ. Գաղ. 4:4-6): Այս փոխաբերությունը ամրացնում է հավատացյալի ապահովության մասին աստվածաբանական ճշմարտությունը: Հարազատ որդին կարող էր գրկվել ժառանգությունից, բայց ոչ որդեգրածը: Սա Պողոսի ամենասիրած ընտանեկան փոխաբերություններից մեկն էր՝ փրկությունը նկարագրելու համար (հմմտ. հհ. 15, 23): Հովհաննեսն ու Պետրոսը նույնպես օգտագործել են ընտանեկան փոխաբերություն «վերստին ծնված» (հմմտ. Հովհ. 3:30; I Պետ. 1:3,23):

«Աբբա» Արամերեն այս տերմինը օգտագործում են երեխաները իրենց հայրիկներին դիմելու ժամանակ ընտանեկան միջավայրում («հայրիկ» կամ «պապա»): Հիսուսն ու առաքյալները խոսել են արամերեն: Հիմա բոլոր հավատացյալները կարող են մոտենալ Սուրբ Աստծո մոտ Հիսուսի թափած արյան շնորհիվ, իրենց մեջ բնակվող Սուրբ Հոգու միջոցով հաստատ հավատքով և Նրան վստահելով (հմմտ. Մարկ. 14:36; Գաղ. 4:6): Արդյո՞ք զարմանալի չէ, որ ընկած մարդկությունը Աստծուն կարող է Հայր կոչել, և որ Նա՝ Հինավուրցը փափագում է դա: Տես Հատուկ Թեմա: Հայր 1:7.

8:16 «Նոյն ինքն Հոգին» Հունարենում «Հոգի» գոյականը ՉԵԶՈԲ ՍԵՌ է, ուստի, KJV այս բառակապակցությունը թարգմանվում է որպես « Հոգին ինքը», որտեղ «itself» դերանունը անշունչ առարկայի իմաստ է տալիս: Բայց Սուրբ Հոգին Անձ է, Որին կարող ես տրտմեցնել, վիրավորել (հմմտ. Եփ. 4:30; I Թես. 5:19), ուստի “Himself” ավելի լավ թարգմանություն է:

«վկայութիւն է տալիս մեր հոգուն հետ, որ մենք Աստուծոյ որդիք ենք» Ինչպես արդեն ասվեց հ. 13-ում, փրկության վստահության փաստարկներից մեկը հավատացյալների փոխված և փոփոխվող կյանքն է (հմմտ. Հակոբոս և I Հովհ. թղթերը): Փրկության վստահության մեկ ուրիշ փաստարկն այն է, որ հավատացյալի մեջ բնակվող Սուրբ Հոգին Աստծու վախը փոխարինել է ընտանեկան ջերմ սիրով: Ուշադրություն դարձրեք RSV և NRSV թարգմանություններին և կետադրությանը, «երբ մենք աղաղակում ենք Աբբա, Հայր- Սուրբ Հոգին է, որ վկայում է մեր հոգու հետ, որ մենք Աստծո զավակներ ենք» (հմմտ. Գաղ. 4:6): Սա նշանակում է, որ վստահությունը գալիս է այն ժամանակ, երբ հավատացյալները Սուրբ Հոգով կարող են կանչել Աստծուն որպես Հայր: Հոգու ներքին վկայությունը ոչ թե պարզորոշ մի բան է, այլ գործնական, երևացող.

1. մեղքի վարձք
2. Քրիստոսին նմանվելու փափագ
3. Աստծո ընտանիքի հետ լինելու փափագ
4. սով Աստծո խոսքի հանդեպ
5. Ավետարանչություն անելու կարիքի զգացում
6. Քրիստոնյայի զոհաբերությամբ տալու կարիքի զգացում

Սրանք մարդու ներքին ձգտումներն են, որոնք ապացուցում են ճշմարիտ դարձի գալու հավատքի գոյությունը:

Փրկության վստահությունը դարձել է վիճելի խնդիր հարանվանություններում

1. Հռոմեական կաթոլիկ աստվածաբանությունը մերժում է այն փաստը, որ հավատացյալն այս կյանքում, կարող է վստահ լինել իր փրկությանը, այլ վստահությունը հիմնվում է «ճշմարիտ» եկեղեցու անդամ լինելով
2. Ջոն Կալվինը (ռեֆորմատորական ավանդույթ) փրկության վստահությունը հիմնավորեց ընտրության վրա (նախասահմանություն), բայց ոչ ոք հաստատ չի կարող իմանալ մինչև երկրային կյանքի ավարտը, երբ Դատաստանի Օրը կանգնի Աստծո առաջ

3. Ջոն Վեսլին (մեթոդիստական ավանդույթ) փրկության վստահությունը հիմնավորեց կատարյալ սիրո վրա (իշխելով մեղքի վրա)
4. շատ Սկրտականներ հակված են հիմնվելու ձրի շնորհքի աստվածաշնչյան խոստումների վրա (բայց անտեսելով բոլոր զգուշացումներն ու հանդիմանությունները):

Գոյություն ունի երկու լուրջ վտանգ, Նոր Կտակարանում բավականի պարադոքսալ ներկայացնում է քրիստոնյայի փրկության վստահությունը.

1. չափից ավելի ընդգծվածություն «մեկ անգամ փրկված, ընդմիշտ փրկված»
2. չափից ավելի ընդգծվածություն- մարդկային կարողությունները, որ ապահովում և երաշխավորում են փրկությունը

Եբրայեցիս 6-րդ գլուխը հստակ ցույց է տալիս «ընկավ մեկ անգամ, ընկավ ընդմիշտ»: Մարդկային ջանքը (բարի գործեր) հավատացյալներին փրկված չի պահում (հմմտ. Գաղ. 3:1-14): Բայց բարի գործերը քրիստոնեական կյանքի նպատակն է (հմմտ. Եփ. 2:10): Նրանք իրենցից ներկայացնում են բնական արդյունքն այն բանի, որ մարդը հանդիպեց Աստծուն և հիմա նրա մեջ ապրում է Սուրբ Հոգին: Նրանք հաստատում են նրա դարձի գալու ճշմարտությունը:

Փրկության վստահությունը չի նշանակում մեղմացնել Աստվածաշնչի կանչը դեպի սրբություն: Աստվածաբանորեն ասած, փրկության վստահությունը հիմնված է Եռյակ Աստծո կերպարի և գործունեության վրա.

1. Հոր սերն ու ողորմությունը
2. Որդու ավարտին հասցրած զոհաբերությունը
3. Սուրբ Հոգին մեղավորին քաշում է դեպի Քրիստոսին և հետո կերպարանափոխում այդ ապաշխարած անձին՝ Քրիստոսին նմանեցնելով:

Այս փրկության ապացույցը հանդիսանում է փոխված աշխարհայացքը, փոխված սիրտը, փոխված ապրելակերպը և փոխված հույսը: Այն չի կարող հիմնվել միայն անցյալում կայացրած զգացմունքային որոշման վրա, որը չունի ապրելակերպի փոփոխության ապացույց (այն է, պտուղ, հմմտ. Մաթ. 7:15-23; 13:20-22): Վստահությունը, ինչպես նաև փրկությունը, և ինչպես նաև քրիստոնեական կյանքը սկսվում է Աստծո որողմությանը առաջին իսկ արձագանքից և այդ արձագանքը շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում: Սա հավատքի փոխված և փոխվող կյանք է:

«վկայութիւն է տալիս» Սա ևս մեկ բարդ բառ է *syn* –ով կազմված: Սուրբ Հոգին վկայում է հավատացյալի հոգու հետ համատեղ: Պողոսն օգտագործում է այս բարդ տերմինը 2:15; 8:16 և 9:1:

8:17 «եթէ» 9,10,11,13(2անգամ), 17(2անգամ) համարներում մենք տեսնում ենք մի շարք ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Նրանք բոլորն էլ հանդիսանում են ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Պողոսը ենթադրում էր այն, որ իր ընթերցողները Հռոմի եկեղեցում քրիստոնյաներ էին:

Այս համարում կան երեք ԲԱՐԳ բառեր, կազմված *syn* բառից, որը նշանակում է «միասնական մասնակցություն ... հետ»: Հավատացյալները ժառանգությունը բաժնեկցում են Քրիստոսի հետ; հավատացյալները տառապանքները բաժնեկցում են Քրիստոսի հետ; և հավատացյալները կրթնեկցեն փառքը Քրիստոսի հետ: Բարդ բառեր *syn* –ով հանդիպում են նաև հհ. 22 (2 անգամ), 26 և 28: Եփ. 2:5-6 նույնպես ունի երեք բարդ բառեր *syn*-ով կազմված, որոնք նկարագրում են հավատացյալի կյանքի Քրիստոսի մեջ:

«ժառանգներ» Սա ևս մեկ ընտանեկան փոխաբերություն է, որը վերաբերվում է հավատացյալների (հմմտ. 4:13-14; 4:1,7; Գաղ. 3:29): Ստորև տես հատուկ թեմա.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏԱՅՅԱԼՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Գիրքը խոսում է այն մասին, որ հավատացյալները ժառանգելու են շատ բաներ, քանի որ նրանք կապ ունեն չիսուսի հետ, որը և ժառանգն է ամեն բաների (հմմտ. Եբր. 1:2), և նրանք ժառանգակիցներ են (հմմտ. Հռ. 8:17; Գաղ. 4:7)

1. Թագավորության (հմմտ. Մաթ. 25:34, I Կոր. 6:9-10; 15:50)
2. հավիտենական կյանքի (հմմտ. Մաթ. 19:29)
3. Աստծո խոստումների (հմմտ. Եբր. 6:12)
4. Աստծո երաշխավորության Իր խոստումները պահելու մեջ (հմմտ. I Պետ. 1:4; 5:9)

Արևելահայերեն «Եթե նորա չարչարանքներին կցորդ ենք»

Արևմտահայերեն «որպես զի եթե իր չարչարանքներուն կցորդ ըլլանք»

□

NASB, NKJV “if indeed we suffer with Him”

NRSV “if, in fact, we suffer with him”

TEV “for if we share Christ’s sufferings”

JB “sharing his sufferings”

Տառապանքը բնական բան է հավատացյալների համար այս մեղավոր աշխարհում (հմմտ. Մաթ. 5:10-12; Հովհ. 15:18-21; 16:1-2; 17:14; Գործք 14:22; Հռ.5:3-4; 8:17; II Կոր. 4:16-18; Փիլ. 1:29; I Թեա. 3:3; II Տիմ. 3:12; Հակ. 1:2-4; I Պետ. 4:12-19): Հիսուսն օրինակ թողեց (հմմտ. Եբր. 5:8): Այս գլխի մնացած մասը զարգացնում է այս թեման:

«Վառքին էլ մասնակից լինինք» Հովհաննեսի գրվածքներում, երբ որ Հիսուսը խոսում էր Իր մահվան մասին, Նա կոչում էր դա «փառավորվել»: Հիսուսը փառավորվեց Իր տառապանքով: Հավատացյալները, իրենց դիրքով և հաճախ փորձով, գործնականում, բաժնեկցում են Հիսուսի կյանքի իրադարձություններ (հմմտ. Հռ. 6): Տես հատուկ թեմա: Թագավորել Աստծո Թագավորության մեջ 5:17-18:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:18-25

¹⁸Որովհետեւ այնպէս եմ դատում որ այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատելու այն գալու փառքին հետ, որ մեզանում պիտի յայտնուի: ¹⁹Որովհետեւ ստեղծուածների եռանդալից ակնկալութիւնը Աստուծոյ որդկանց յայտնութեանն է սպասում: ²⁰Նորա համար որ ստեղծուածները հնազանդեցին ունայնութեան, ոչ թէ կամքով այլ նորա համար՝ որ հնազանդեցրեց այն յոյսով: ²¹Որ՝ ստեղծուածներն իրանք էլ սպականութեան ծառայութիւնիցը կազատուին՝ Աստուծոյ որդկանց փառաւոր ազատութեան մէջ մտնելով: ²²Որովհետեւ գիտենք որ բոլոր ստեղծուածները մինչեւ հիմա միասին հառաչում են եւ ցաւի մէջ են: ²³Եւ ոչ միայն նորանք, այլ ինքներս էլ որ Հոգու առաջին պտուղն ունինք, մենք էլ մեր անձերունը հառաչում ենք՝ որդեգրութեանն սպասելով այսինքն մեր մարմնի ազատութեանը: ²⁴Որովհետեւ յոյսով փրկուեցանք. բայց յոյսը որ տեսնվում է, յոյս չէ. վասնզի այն բանը, որ մէկը տեսնում է՝ էլ ի՞նչպէս կյուսայ: ²⁵Բայց եթէ այն որ չենք տեսնում, նորան յոյս ունինք, ապա համբերութեամբ սպասում ենք:

NASB (UPDATED) TEXT: 8:18-25

¹⁸For I consider that the sufferings of this present time are not worthy to be compared with the glory that is to be revealed to us. ¹⁹For the anxious longing of the creation waits eagerly for the revealing of the sons of God. ²⁰For the creation was subjected to futility, not willingly, but because

of Him who subjected it, in hope ²¹that the creation itself also will be set free from its slavery to corruption into the freedom of the glory of the children of God. ²²For we know that the whole creation groans and suffers the pains of childbirth together until now. ²³And not only this, but also we ourselves, having the first fruits of the Spirit, even we ourselves groan within ourselves, waiting eagerly for *our* adoption as sons, the redemption of our body. ²⁴For in hope we have been saved, but hope that is seen is not hope; for who hopes for what he *already* sees? ²⁵But if we hope for what we do not see, with perseverance we wait eagerly for it.

8:18 «դատում եմ, համարում եմ» Այստեղ բառացի իմաստը սա է «գումարել, հանրագումարի բերել»: Այս ձևը ՆԵՐԿԱ ԺԱՍՆԱԿ ՉԵՉՈՔ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Պողոսը շարունակում է քննարկել քրիստոնյայի չարչարանքի հետևանքի մասին: Այս բառը հաշվապահական տեմին է, որն օգտագործվում է վերջնական արդյունքների հասնելու ամփոփման համար: Հռոմեացիս թղթում սա շարունակաբար կրկնվող թեմա է (տես ծանուցում 2:3): Հավատացյալները պետք է ապրեն իրենց հասկացած հոգևոր ճշմարտությունների լույսի ներքո:

«չարչարանքները» Քրիստոսին ծառայելու մեջ ներգրավված է տառապանք, որի բացատրությունը տեսնում ենք I Կոր. 4:9-12; II Կոր. 4:7-12; 6:4-10; 11:24-27; Եբր. 11:35-38:

«այս ժամանակի» Հրեաներն հավատում էին, որ աշխարհի պատմությունը բաժանվում էր երկու ժամանակաշրջանի, ներկա չար դարաշրջանը և գալիք արդարության դարաշրջանը (հմմտ. Մաթ. 12:32; Մարկ. 10:30): Հին Կտակարանը լեցուն էր Մեսսիայի գալստյան ակնկալիքով, Որը սկիզբ կդնէր այս նոր արդարության դարաշրջանի: Ինչևէ, Քրիստոսի երկու գալուստները, մեկը որպես Փրկիչ (մարմնացում), իսկ երկրորդը որպես Տեր (Երկրորդ Գալուստը), պատճառ են դառնում այս երկու ժամանակաշրջանների միաձուլման: Հավատացյալներն ապրում են որոշակի լարվածության պայմաններում, որը գոյություն ունի «արդեն» և «դեռ ոչ հիմա»-յի միջև կապված Աստծո թագավորության հետ: Տես Հատուկ Թեմա: Ներկա դարաշրջան և գալիք դարաշրջան 12:2:

«արժանի. . փառքի» Այս երկու տերմիններն էլ կապված են հինկտակարանյան քաշի գաղափարի հետ, արժեքավոր էր այն, ինչը ծանր էր կշռում: «Արժենալ, արժանի» տերմինը կոմերցիան/առևտրական տերմին էր համարվում, որը նշանակում էր «ինչ որ չափի քաշ ունենալ»: Եբրայերեն «փառք» տերմինը առաջացել է «ծանր լինել» բառի արմատից, արժեքավոր լինելու իմաստով, ինչպես ոսկին: Տես ամբողջ նյութը 3:23

«Փառք» տերմինը Պողոսի գրվածքներում ուներ վախճանաբանական կողմնորոշում: Այն վերաբերվում էր բարձրյալ Քրիստոսի փառավոր վերադարձի մեծությանն ու գործությանը (հմմտ. Կող. 3:4): Տես Հատուկ Թեմա: Փառք 3:23.

«որ մեզանում պիտի յայտնուի» Այս ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ-Ը վերաբերվում էր Աստծո կամ Սուրբ Հոգու գործունեությանը (հմմտ. v. 20): Այս կյանքում հավատացյալներն ապրում են հավատքով, և ոչ թե տեսանելի բաներով (հմմտ. հ. 24 և I Կոր. 2:9; 13:12; II Կոր. 5:7 և Եբր. 11:1):

8:19 «ստեղծումների եռանդալից ակնկալութիւնը... յայտնութեանն է սպասում» Ֆիզիկական արարչագործությունը անձնավորում է նմանվելով անձի, որը լարված ձգում է իր վիզը շարժող նայելով հորիզոնին: Արարչագործությունը ենթարկվեց բացասական ազդեցության, երբ Ադամն ու Եվան ըմբոստացան (հմմտ. Ծննդ. 3:17-19): Վերջիվերջո ամբողջ արարչագործությունը կազատագրվի (բացի ապատամբ հրեշտակներից, անհավատ մարդկանցից և նրանց համար պատրաստված մեկուսարանից, հմմտ. Բրյուս Կորլի և Կյորտիս Վոզհեն, «Հռոմեացիս թուղթը», էջ 95, (Bruce Corley and Curtis Vaughan, *Romans*, p. 95, footnote 46):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԲՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ/ՇՐՋԱՊԱՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ

I. Ներածություն

Ա. Ամբողջ արարչագործությունը հանդիսանում է ֆոն կամ բեմ Աստծո սիրո և մարդկության փոխհարաբերության համար:

Բ. Այն բաժանում է մեղքի անկման հետևանքը (հմմտ. Ծննդ. 3:17; 6:1; Հռ. 8:18-20): Նաև, կբաժնեկցի վախճանաբանական փրկության մեջ (հմմտ. Ես. 11:6-9; Հռ. 8:20-22; Հայտ. 21-22):

Գ. Մեղավոր, ընկած մարդկությունը բռնության ենթարկեց շրջապատող միջավայրը և եսասիրաբար ու անխղճորեն շարտել մի կողմ: Մեջբերում էրվարդ Կապենտերի «Ուեստմինստերի Կանոնը» գրքից.

« . .մարդու անխիղճ բռնությունը, գլոբալ մասշտաբով, իրեն շրջապատող աշխարհի վրա - այն է Աստծո արարչագործության վրա - հարձակում օդի վրա, որը ինքն է կեղտոտում; բնության ջրային ուղիները, որը ինքն է կեղտոտում; հողը, որը թունավորում է; անտառները, որը կտրում վերացնում է, ընդհանրապես չմտածելով երկարատև հետևանքների մասին՝ այս առանց պատճառի և բարբարոս ավերվածության: Այս հարձակումը իրականանում է տարբեր տեղերում և քառասյին ձևով: Քիչ ուշադրություն է դարձվում բնության հավասարակշռությունը պահելու համար, և որպես հետևանք, պատասխանատվության քիչ զգացողություն մի սերունդ մյուս սերնդի վրա»:

Դ. Մենք ոչ միայն քաղում ենք աղտոտվածության պտուղները, այլ մեր սերունդները էլ ավելի շատ խիստ և դաժան հետևանքները կտեսնեն:

II. Աստվածաշնչյան նյութ

Ա. Հին Կտակարան

1. Ծննդոց 1-3

ա. Արարչագործությունը դա մի հատուկ վայր է, ստեղծված Աստծո կողմից, մարդու հետ հաղորդակցվելու համար (հմմտ. Ծննդ. 1:1-25):

բ. Արարչագործությունը բարի է (հմմտ. Ծննդ. 1:4,10,12,18,21,25), նույնիսկ շատ բարի (հմմտ. Ծննդ. 1:31): Սա պետք է վկայի Աստծո մասին (հմմտ. Սաղ. 19:1-16):

գ. Մարդկությունը Աստծո ստեղծագործության գլխավոր նպատակն ու թագն է (հմմտ. Ծննդ. 1:26-27):

դ. Մարդկությունը պետք է իշխեր արարչագործության վրա (հին եբրայերեն, «ճնշել, իշխել») որպես Աստծո տնտես (հմմտ. Ծննդ. 1:28-30; Սաղ. 8:3-8; Եբ. 2:6-8): Աստված կա և մնում է որպես ստեղծագործության Արարիչ/Կրող, Պահող/Ազատարար, Փրկիչ/Տեր (հմմտ. Ել. 19:5; Հոբ 37-41; Սաղ. 24:1-2; 95:3-5; 102:25; 115:15; 121:2; 124:8; 134:3; 146:6; Ես. 37:16):

ե. Մարդը որպես ստեղծագործության տնտես կարելի է տեսնել Ծննդ. 2:15, «մշակել, պահել և պաշտպանել այն» (հմմտ. Գև. 25:23; I Մնաց. 29:14):

2. Աստված սիրում է Իր ստեղծագործությանը, հատկապես կենդանիների:

ա. Մովսեսական օրենք հատուկ վարվեցողություն կենդանիների հետ

բ. ԵՀՈՎԱՆ խաղում է լևիաթանի հետ (հմմտ. Սաղ. 104:26)

գ. Աստված հոգ է տանում կենդանիների մասին (հմմտ. Հովնան 4:11)

դ. Բնության վախճանաբանական գոյությունը, ներկայությունը (հմմտ. Ես. 11:6-9; Հայտ. 21-22):

3. Բնությունը, ինչ որ աստիճանի, փառավորում է Աստծու,

ա. Սաղ. 19:1-6

բ. Սաղ. 29:1-9

գ. Հոբ 37-41

4. Բնությունը մի միջոց է, որի միջոցով Աստված ցույց է տալիս Իր սերն ու հավատարմությունը ուխտի հանդեպ,
 - ա. 2 Օրին. 27-28; 3 Թագ. 17
 - բ. Մարգարեների գրքերում

Բ. Նոր Կտակարան

1. Աստված դիտվում է որպես արարիչ: Կա միայն մեկ Արարիչ, Երրորդություն Աստված (Elohim, Ծննդ. 1:1; Սուրբ Հոգին, Ծննդ. 1:2; և Հիսուսը, Նոր Կտակարան): Մնացած ամեն բան ստեղծված է.

- ա. Գործք 17:24
- բ. Եբր. 11:3
- գ. Հայտ. 4:11

2. Հիսուսը Աստծո կատարողն է, Որում և Որի միջոցով ամեն բան ստեղծվեց

- ա. Հովհ. 1:3,10
- բ. I Կորն. 8:6
- գ. Կող. 1:16
- դ. Եբր. 1:2

3. Հիսուսն Իր քարոզներում անուղղակիորեն խոսում է բնության հանդեպ ունեցած Աստծո հոգատարության մասին

- ա. Մաթ. 6:26,28-30, երկնքի թռչունները և դաշտի շուշանները
- բ. Մաթ. 10:29, ճնճողուկները

4. Պողոսը պնդում է, որ բոլոր մարդիկ պատասխանատու են Աստծո մասին ունեցած իրենց գիտության համար Նրա ստեղծագործության միջոցով (օր. բնական հայտնություն, հմմտ. Հռ. 1:19-20; Հայտ. 21-22):

III. Ամփոփում

Ա. Մենք ամուր կապված ենք այս բնական հերթականությանը կամ այսպես ասած կարգ ու կանոնին:

Բ. Մեղավոր մարդկությունը աղավաղել է Աստծո պարզև՝ բնությունը, ինչպես նաև Աստծո մնացած բոլոր պարզևները:

Գ. Գոյություն ունեցող բնության համակարգը ժամանակավոր է: Շուտով այն անցնելու է և վերանա (II Պետ. 3:7): Աստված մեր աշխարհը մոտեցնում է պատմական մի պահի, երբ ամեն բան պիտի միավորվի: Մեղքը պիտի հետապնդի իր նպատակները, բայց Աստված սահմաններ է դրել նրա համար : Արարչագործությունը պիտի ազատագրվի (հմմտ. Հռ. 8:18-25):

«յայտնութեանն է սպասում» Այս տերմինը նշանակում էր «վարագույրը քաշել, բացել քողը» այնպես, որ ինչ որ բան բացահայտվի կամ հայտնի դառնա: Սա նաև Նոր Կտակարանի վերջին գրքի վերնագիրն է «Ապոկալիպսիս»: Երկրորդ գալստյան մասին հաճախ խոսվում է որպես հայտնություն կամ գալուստ (հմմտ. I Կոր. 1:7-8; I Պետ. 17,13):

«Աստուծոյ որդկանց» Այս արտահայտությունը ընդունված ընտանեկան փոխաբերություն էր, որով նկարագրում էին քրիստոնյաներին (հմմտ. 8:14,16): Այն խոսում է Աստծո մասին որպես Հայր և Հիսուսը որպես Իր միածին որդին (հմմտ. Հովհ. 1:18; 3:16,18; Եբր. 1:2; 3:6; 5:8; 7:28; I Հովհ. 4:9):

Հին Կտակարանում Իսրայելը Աստծո որդին էր (հմմտ. Ովսիա 11:1), բայց նաև թագավորն էր կոչվում Աստծո որդի (հմմտ. II Թագ. 7): Այս գաղափարն առաջին անգամ նշվում է Մաթ. 5:9 (նաև հմմտ. Հովհ. 1:12; II Կոր. 6:18; Գաղ. 3:26; I Հովհ. 3:1,10; Հայտ. 21:7):

Արևելահայերեն «Նորա համար որ ստեղծուածները հնազանդեցին ունայնութեան»
Արևմտահայերեն «Վասն զի ունայնութեան հնազանդեցան ստեղծուածները»

8:20

NASB, NKJV,

NRSV

“for the creation was subjected to futility”

TEV

“For creation was condemned to become worthless”

JB

“It was not for any fault on the part of creation that it was made unable to attain its purpose”

Սա կարող էր թարգմանվել որպես «ունայնություն»: Այս հասկացողությունը օգտագործված է Սեպտուագինդի մեջ մի քանի իմաստով` անիմաստ, անարժան, անպիտան, անօգուտ, կեղծ աստվածներ (կուռքեր) և դատարկություն: Ամբողջ արարչագործությունը դարձավ անպիտան Աստծո մտադրված նպատակի համար (հմմտ. Ծննդ. 3:17-19), բայց մեկ օր Աստված պիտի վերցնի մեղքի անեծքը (հմմտ. Հայտ. 22:3): Այսպիսին չէ Աստծո մտադրված աշխարհը:

«այլ նորա համար՝ որ հնազանդեցրեց այն յոյսով» ԲԱՅԸ ԱՕՐԻՍՍ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ Է և անշուշտ վերաբերվում է Աստծուն (հմմտ. NASB, NKJV, TEV): Նա այնպես արեց, որ ֆիզիկական արարչագործությունը դառնար ունայն և անօգուտ

1. մարդու ընթրստության պատճառով

2. որպես փորձ՝ մարդուն Իրեն դարձնելու համար (հմմտ. 2 Օրին. 27-29)

Այս նպատակապաշար ունայնությունը կլինի միայն մի որոշ ժամանակ: Ազատագրված մարդկությունը ունի խոստացված ֆիզիկական ապագա (մարմին և աշխարհ):

Աստված նախապես գիտեր Ադամի ընթրստության մասին: Նա թույլ տվեց, որ դա տեղի ունենա և ընտրեց գործելու մեղավոր մարդկության հետ մեղավոր աշխարհում: Այսպիսին չէ Աստծո մտադրված աշխարհը: Մի օր այսպիսին չի լինելու աշխարհը (հմմտ. II Պետ. 3:10; Հայտ. 21:1-3): Տես ծանուցում « հույս» 5:2:

8:21 «ստեղծուածներն իրանք էլ ապականութեան ծառայութիւնիցը կազատուին» Բնությունը հավիտենականության մաս է կազմելու (հմմտ. Ես. 11:6-10): Երկինքը վերադառնում է երկրին (հմմտ. Մաթ. 5:18; 24:35; II Պետ. 3:10; Հայտ. 21:1): Ապագան հնարավոր է վերադառնա եղենական վիճակին; հրաշալի հաղորդակցությունը Աստծո և մարդու միջև, մարդը մարդու հետ, մարդը կենդանու հետ և մարդը երկրի հետ: Աստվածաշունչը սկսվում է Աստծո, մարդկանց և կենդանիների հետաքրքիր և ներդաշնակ հարաբերություններով Եղենի պարտեզում (հմմտ. Ծննդ. 1-2) և Աստվածաշունչն ավարտվում է նույն կերպ (հմմտ. Հայտ. 21-22):

«ապականութեան» Տես հատուկ թեմա 1:23.

«Աստուծոյ որդկանց փառաւոր ազատութեան մեջ մտնելով» 14h-ում հավատացյալները կոչվում են «Աստծո որդիներ»; 16h-ում «Աստծո զավակներ» իսկ 17-ում «Աստծո ժառանգներ»: 18h-ում Աստծո վախճանաբանական փառքը հայտնվում է հավատացյալներին: 19h-ում խոսվում է այն մասին, որ արարչագործությունը սպասում է Աստծո որդիների հայտնությանը, քանի որ այն բաժնեկցում է վախճանաբանական փառքը նրանց հետ (հմմտ. հ. 21): Արարչագործության վերականգնումը, և հատկապես մարդկանց, թույլ կտա իրականանալու արարչագործության բուն նպատակը՝ Աստված և մարդը, որը ստեղծված է Իր պատկերով, մտերմիկ հարաբերության մեջ լինեն:

8:22 «բոլոր ստեղծուածները հառաչում են» Սա ևս մեկ Պողոսի օգտագործած բարդ բառի կազմություն է *syn*, «հառաչել ինչ որ բանի հետ»: Նա բավականին շատ է օգտագործել այսպիսի բառեր: Հավանական է, այստեղ Պողոսը ակնարկում է Եր. 12:4,11 (հմմտ. 2 Օրին. 27-29), որտեղ Իսրայելի երկիրը ողբում էր մարդու մեղքի պատճառով առաջացած ավերածության համար:

«ցավի մեջ են» Հրեական շրջանակներում այս գաղափարը հաճախ կոչվում էր «նոր դարի ծննդաբերության ցավեր» (հմմտ. Մարկ. 13:8): Նոր արդարության օրվա լուսաբացը չի լինելու առանց խնդիրների: Այս մեղավոր, ընկած երկիր մոլորակի բարոյական և հոգևոր պայմանները ավելի ու ավելի են վատանալու (հմմտ. II Թես. 2:1-12; և նաև յոթ կնիքները, փողերը և սկավառակները Հայտ. 5-18):

Այս կոնտեքստում կան երեք «հառաչանքներ»: (1) արարչագործություն (հ. 22); (2) հավատացյալներ (հ. 23); և (3) Հոգին որպես բարեխոս (հ. 26), բոլոր երեքն էլ Ծննդ. 3-ի պատճառով (փոխաբերությունը գալիս է հ. 16-ից):

8:23 «ինքներս. . . ինքներս. . . ինքներս» ԳԵՐԱՆՈՒՆ-ներն ընդգծված և կրկնվող են:

«Հոգու առաջին պտուղն» Ժամանակակից հունարեն լեզվի մեջ այս տերմինը նշանակում է «ամուսնական կամ նշանադրության մատանի»: Այս արտահայտությունը նման է հետևյալ բառակապակցություններին «Հոգու կնիքը» II Կոր. 1:22; և «Հոգու գրավը» II Կոր. 5:5; և Եփ. 1:14:

Առաջին պտուղները, կամ երախայրին, սպասվող հուճքի խոստումն էր: Գրանք խորհրդապատկերում էին, որ ամբողջ բերքը, հունձքը Աստծո սեփականությունն է: Ինչպես Հիսուսը հարության անդրանիկն էր, այնպես էլ Սուրբ Հոգին նոր դարի երախայրին (հմմտ. I Կոր. 15:20): Հավատացյալները, որպես Աստծո զավակներ, նույնիսկ հիմա փորձառում են որոշակի երկնային ուրախություն Սուրբ Հոգու միջոցով, որը բնակվում է նրանց հետ և մեջ: Սա «արդեն» բայց «ոչ դեռ» լարվածությունն ստեղծող վիճակն է, որը գոյություն ունի հրեական երկու դարաշրջանների միջև: Հավատացյալները երկնքի քաղաքացիներ են, բայց բնակվում են երկրի վրա:

«մենք էլ մեր անձերումը հառաչում ենք» Թվում է, սա նույնպես վերաբերվում է դիալեկտիկական հակասությանը «արդեն» բայց «ոչ դեռ»-ի միջև, որը լրացնում է հրեական երկու դարաշրջանները: Աստծո Թագավորությունը ներկա է, բայց ոչ ավարտված տեսքով: Հավատացյալներն ունեն հարուցյալ կյանք, բայց նրանք շարունակում են մահանալ ֆիզիկապես (հմմտ. II Կոր. 5:2-4): Մենք փրկված ենք, բայց դեռ հակված ենք մեղանչելու (Հռ. 7):

«որդեգրության սպասելով» Որդեգրությունը Պողոսի սիրելի ընտանեկան փոխաբերություններից մեկն է փրկության համար (հմմտ. հ. 15): Հավատացյալների փրկությունը մի գործընթաց է, որը սկսվում է ապաշխարության և հավատքի որոշում կայացնելով և զարգանում քրիստոսամանության մեջ աճելով: Հավատացյալներն ամբողջությամբ չեն փրկվի մինչև Հարության Օրը (հմմտ. հ. 30 և I Հովհ. 3:2):

«Որդեգրություն» բառը բացակայում է որոշ հունարեն ձեռագրերում (հմմտ. MSS P⁴⁶, D, F, G, և մի քանի լատիներեն տարբերակներում: Ինչևէ, այն հանդիպում է Ք, A, B, C, մի քանի հին լատիներեն ձեռագրերում, Վուլգատի, սիրիական, դպտի և հայերեն թարգմանություններում: UBS⁴ դասակարգում է «A» կատեգորիայի մեջ (հուսալի):

«մեր մարմնի ազատութեանը» Այս տերմինը նշանակում է «ետ գնել»: Այս գաղափարը օգտագործված է Հին Կտակարանում նկարագրելու համար մի իրավիճակ, երբ ինչ որ մեկը ազատվում է գերությունից ազգականի կողմից (*go'el*): Փոխաբերական իմաստով սկսվեց օգտագործվել, երբ Աստված ազատագրում է ընկած մարդկությանը մեղքի գերությունից: Վճարված գինը Աստծո Որդու անմեղ կյանքն էր: Տես հատուկ թեմա 3:24.

Քրիստոնեությունը, ինչպես և հուդայականությունը (հմմտ. Հոր 14:14-15; 19:25-26; Գան. 12:2), պնդում են, որ հավատացյալներ կունենան ֆիզիկական (չնայած պարտադիր չէ, որ մարդկային մարմին լինի, հմմտ. I Կոր. 15:35-49) մարմին հավիտենականության մեջ: Հավատացյալների

հոգևոր մարմինները կատարելապես պատրաստված կլինեն նոր դարաշրջանի կյանքի համար, կյանք որը Աստծո հետ սերտ հարաբերության մեջ կլինի:

8:24 «յոյսով փրկուեցանք» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Ինչպես հ. 23 վերաբերվում է մեր գալիք փրկությանը, այնպես էլ հ. 24 վերաբերվում է մեր անցյալում Սուրբ Հոգու միջոցով կատարված փրկությանը: Նոր Կտակարանում փրկությունը նկարագրելու համար օգտագործված են մի քանի ԲԱՅԱԿԱՆ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎԵՐ:

1. ԱՕՐԻՍՏ, Գործք 15:11 (Հն. 8:24; II Տիմ. 1:9; Տիտոս 3:5; և Հն. 13:11 ԱՕՐԻՍՏԸ ԱՊԱՌՆԻ – ի հետ)
2. ՎԱՂԱԿԱՏԱՐ, Եփ. 2:5,8
3. ՆԵՐԿԱ, I Կոր. 1:18; 15:2; II Կոր. 2:15; I Պետ. 3:21; 4:18
4. ԱՊԱՌՆԻ (ԲԱՅԱԿԱՆ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎՈՒՄ կամ կոնտեքստային ենթադրություն), Հն. 5:9,10; 10:9; I Կոր. 3:15; Փիլ. 1:28; I Թես. 5:8-9; Եբր. 1:14; 9:28:

Ուստի, փրկությունը սկսվում է հավատքով որոշում կայացնելուց և շարունակվում հավատքով ամբողջ կյանքի ընթացքում, որ մի օր կգա դրա վերջնական իրականացումը (հմմտ. I Հովհ. 3:2):

8:25 «յոյս» Ստորև տես հատուկ թեմա.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՅՍ

Պողոսն օգտագործեց այս տերմինը մի քանի տարբեր, բայց բացարձակ հստակ իմաստներով: Հաճախ հաղորդակցվում էր այն բանի իրականացմամբ, ինչին հավատում էին քրիստոնյաները (հմմտ. I Տիմ. 1:1): Սա կարող է լինել փառքը, հավիտենական կյանքը, վերջնական փրկությունը, Երկրորդ Գալուստը և այլն: Այս հույսի իրականացումը հստակ է, բայց վերաբերվում է ապագային և պահը անհայտ է: Հույսը հաճախ կապվում էր «հավատքի» և «սիրո» հետ (հմմտ. I Կոր. 13:13; I Թես. 1:3; II Թես. 2:16): Պողոսի կիրառած տերմինների ցանկի մի մասը

1. Երկրորդ Գալուստը, Գաղ. 5:5; Եփ. 1:18; 4:4; Տիտոս 2:13
2. Հիսուսը մեր հույսն է, I Տիմ. 1:1
3. Հավատացյալը կանգնելու է Աստծո առաջ, Կող. 1:22-23; I Թես. 2:19
4. Հույս երկնքի համար, Կող. 1:5
5. Վստահել Ավետարանին, Կող. 1:23; I Թես. 2:19
6. Վերջնական փրկությունը, Կող. 1:5; I Թես. 4:13; 5:8
7. Աստծո փառքը, Հն. 5:2, II Կորն. 3:12; Կող. 1:27
8. Քրիստոսով հեթանոսների փրկությունը, Կող. 1:27
9. Փրկության վստահություն, I Թես. 5:8
10. Հավիտենական կյանք, Տիտոս 1:2; 3:7
11. Քրիստոնեական հասունության արդյունքները, Հն. 5:2-5
12. Ամբողջ արարչագործության ազատագրումը, Հն. 8:20-22
13. Որդեգրության վախճանը, Հն. 8:23-25
14. Աստծո անունը, Հն. 15:13
15. Պողոսի փափազը հավատացյալների համար, II Կորն. 1:7
16. Հին Կտակարանը որպես ուղեցույց Նոր Կտակարանի հավատացյալների համար, Հն. 15:4

«համբերութեամբ» *hupomonē* տերմինը նաև հանդիպում է 5:3 և 15:4-5-ում: Հավատացյալների փրկությունը հասունության գործընթացի մեջ է և մեկ օր կավարտվի: Համբերությունը (հմմտ. Հայտ. 2:8,11,17,26; 3:5,12,21; 21:7) անհրաժեշտ աստվածաշնչյան հավասարակշռություն է, որը հստակ ընդգծում է մկրտականների սկզբունք «մեկ անգամ փրկված՝ ընդմիշտ փրկված»: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ հանդես են գալիս դիալեկտիկական, լարվածությամբ լեցուն գույգերով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՄԱԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԻՔ

Աստվածաշնչյան վարդապետությունները, կապված քրկատոնեական կյանքի հետ, դժվար է բացատրել, որովհետև դրանք ներկայացվում են տիպիկ արևելյան դիալեկտիկական գույգերով: Այս գույգերը թվում են իրար հակասող, բայց երկուսն էլ աստվածաշնչյան են: Արևմուտքի քրիստոնյաները հակված են ընտրելու մեկ ճշմարտությունը և մերժելու և արժեզրկելու մյուս ճշմարտությունը, իրեն հակասող: Թույլ տվեք բացատրեմ օրինակներով.

1. Փրկությունը դա միայն Քրիստոսին վստահելու նախասկզբնական որոշումն է, թե՞ սրբացման գործընթաց ամբողջ կյանքի ընթացքում, որպես Քրիստոսի աշակերտ:
2. Փրկությունը դա գերիշխան Աստոծ շնորհքի ընտրությունն է, թե՞ մարդու հավատքի արդյունքն ու ապաշխարության արձագանքն Աստծո կանչին:
3. Փրկությունը դա մեկ անգամ ստացած, անհնարին կորցնել, թե՞ հավատացյալը պետք է շարունակաբար ջանք թափի դրան հասնելու և պահելու համար:

Համբերության թեման թննարկման առիթ է հանդիսացել հավատացյալների համար ամբողջ եկեղեցու պատմության ընթացքում: Խնդիրը սկսվում է Նոր Կտակարանում հանդիպող ակնհայտ իրարամերժ տեքստերից.

1. վստահություն տվող և երաշխավորող համարներ հավատայալի համար
 - ա. Հիսուսի պնդումները (Հովհ. 6:37; 10:28-29)
 - բ. Պողոսի պնդումները (Հռ. 8:35-39; Եփ. 1:13; 2:5,8-9; Փիլ. 1:6; 2:13; II Թես. 3:3; II Տիմ. 1:12; 4:18)
 - գ. Պետրոսի պնդումները (I Պետ. 1:4-5)
2. տեքստեր, այն մասին, որ հավատացյալը պետք է ջանք թափի համբերելու համար
 - ա. Հիսուսի պնդումները (Մաթ. 10:22; 13:1-9,24-30; 24:13; Մարկ. 13:13; Հովհ. 8:31; 15:4-10; Հայտ. 2:7,17,20; 3:5,12,21)
 - բ. Պողոսի պնդումները (Հռ. 11:22; I Կոր. 15:2; II Կոր. 13:5; Գաղ. 1:6; 3:4; 5:4; 6:9; Փիլ. 2:12; 3:18-20; Կող. 1:23)
 - գ. Եբրայեցիս թղթի հեղինակի պնդումները (2:1; 3:6,14; 4:14; 6:11)
 - դ. Հովհաննեսի պնդումները (I Հովհ. 2:6; II Հովհ 9)
 - ե. Երկնային Հոր պնդումները (Հայտ. 21:7)

Աստվածաշնչյան փրկության աղբյուրը գերիշխան Եռյակ Աստծո սիրո, ողորմության և շնորհքի արտահայտությունն է: Ոչ մեկ մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (հմմտ. Հովհ. 6:44,65): Աստված անում է առաջին քայլը և հաստատում բոլոր կանոնները, բայց և պահանջում, որ մարդիկ արձագանքեն Իր կանչին՝ հավատքով և ապաշխարությամբ, թե մեկ անգամ սկզբում և թե շարունակաբար ամբողջ կյանքի ընթացքում: Աստված հարաբերություններ է հաստատում մարդու հետ ուխտի հիման վրա: Փրկված լինել- դա թե արտոնություն է, և թե պատասխանատվություն:

Փրկությունը առաջարկվում է բոլոր մարդկանց: Հիսուսի մահը լուծեց ընկած արարչագործության մեղքի խնդիրը: Աստված հոգացել է փրկության ճանապարհը և ուզում է, որ նրանք, որ ստեղծված են Իր պատկերով և նմանությամբ, արձագանքեն Իր սիրուն և ինչ որ առաջակվում է Հիսուսի միջոցով:

Եթե ցանկանում եք ավելի շատ բան իմանալ այս հարցի մասին, ոչ կալվինիստական տեսանկյունից, կարող եք կարդալ հետևյալ գրքերը

1. Դեյլ Մուդի «Ճշմարտության Խոսքը» (Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (pp. 348-365)
2. Հովարդ Մարշալ «Պահված Աստծո Չորությամբ» (Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969)
3. Ռոբերտ Շենք «Կյանք Որդու մեջ» (Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961)

Աստվածաշունչը խոսում է երկու տարբեր խնդիրների մասին այս բնագավառում (1) ապահովագրության երաշխիք ապրելու անպտուղ և եսասեր կյանքով (2) քաջալերելով նրանց, ովքեր ծառայության մեջ են և պայքարում են անձնական մեղքի դեմ: Խնդիրն այն է, որ սխալ խմբերը վերցնում են սխալ պատգամը և սահմանափակ աստվածաշնչյան հաստատման հիման վրա աստվածաբանական համակարգեր շինում: Որոշ քրիստոնյաներ պետք ունեն միայն փրկության վստահությանը վերաբերող հաստատման, մյուսներին նախազգուշացուցուց և զգոնություն: Ո՞ր խմբին ես պատկանում դու:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:26-27

²⁶ Այսպես էլ հոգին օգնում է մեր տկարություններին, որովհետև թե ինչ բանի համար աղօթք անենք՝ ինչպես արժան է, չգիտենք. բայց ինքը Հոգին անբարբառ հառաչանքով բարեխօս է լինում: ²⁷ Եւ սրտերը քննողը գիտե թե ինչ է հոգու խորհուրդը. որովհետև Աստծուն վայելած կերպով սուրբերի համար բարեխօսում է:

NASB (UPDATED) TEXT: 8:26-27

²⁶**In the same way the Spirit also helps our weakness; for we do not know how to pray as we should, but the Spirit Himself intercedes for us with groanings too deep for words; ²⁷and He who searches the hearts knows what the mind of the Spirit is, because He intercedes for the saints according to the will of God.**

8:26 «Այսպես էլ» Այս արտահայտությունը Հոգու բարեխոսական ծառայությունը կապում է «հառաչել և հուսալ» հետ, որի մասին խոսվում է հ. 23-25:

«**հոգին օգնում է**» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՉԵԶՈՔ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Բառը բարդ է, կազմված միառժամանակ *syn* (հմմտ. հ. 28) և *anti*. Լավագույն թարգմանությունը կլինի « բռնել, կառչել մի բանից», այս տերմինը գտնվում է միայն այստեղ և Գուկ. 10:40: Եռյակ Աստվածն իր ամբողջ լիությանը գործում է հավատացյալների օգտին: Հայրն ուղարկեց Որդուն մեռնելու մարդկանց համար, և Նա հիմա նաև բարեխոսում է մեզ համար (հմմտ. հ. 34; I Հովհ. 2:1): Սուրբ Հոգին մեղավոր մարդկությանը բերում է Քրիստոսի մոտ և Քրիստոսին ձևավորում նրանց մեջ (հմմտ. Հովհ. 16:8-15): Ինչևէ, «օգնել» տերմինը, որը նշանակում է « ինչ որ բան ձեռնարկել ինչ որ մեկի հետ», նշանակում էր, որ հավատացյալները նույնպես մաս ունեն Սուրբ հոգու օգնության մեջ (բարեխոսություն):

«**ինքը Հոգին անբարբառ հառաչանքով բարեխօս է լինում**» Հավատացյալները հառաչում են իրենց մեղավոր վիճակի մեջ իսկ Հոգին հառաչանքով բարեխոսում է նրանց համար: Սուրբ Հոգին, գտնվելով քավության մեջ, աղոթում է նրանց համար, և Հիսուսը, Աստծո աջ կողմում, նույնպես աղոթում է նրանց համար (հմմտ. հ. 27,34; Եբ. 9:24; I Հովհ. 2:1): Այս բարեխոսությունը գորացնում է հավատացյալներին աղոթքի կյանք ապրելու (հմմտ. հ. 15; Գաղ. 4:6): Տվյալ կոնտեքստում այս հաստատման չի վերաբերվում լեզուներով խոսելու հոգևոր պարզեցում, այլ Սուրբ Հոգու բարեխոսությունը Հոր Աստծուն հավատացյալների համար:

«**բարեխօսում է**» Տես Հատուկ Թեմա: Պողոսն օգտագործում է *Huper* նախդիրը բարդ բառեր կազմելու համար 1:30.

8:27 «Եւ սրտերը քննողը գիտե» Այս թեման շարունակաբար կրկնվում էր Հին Կտակարանում (հմմտ. I Թագ. 2:7; 16:7; III Թագ. 8:39; I Մնաց. 28:9; II Մնաց. 6:30; Սաղ. 7:9; 44:21; Առ. 15:11; 20:27; 21:2; Եբ. 11:20; 17:9-10; 20:12; Գուկ. 16:15; Գործք 1:24; 15:8): Աստված շատ լավ ճանաչում է մեզ, բայց միևնույն ժամանակ շարունակում է սիրել (հմմտ. Սաղ. 139):

«սուրբերի համար բարեխօսում է» Սուրբ Հոգու առաջադրանքը հստակ շարադրված է Հովհ. 16:2-15: Դրանցից մեկը բարեխոսությունն է:

«Սուրբեր» տերմինը միշտ հանդես է եկել ՀՈԳՆԱԿԻ թվով, բացի Փիլ. 4:21, որտեղ այն նաև վերաբերում է բոլոր հավատացյալներին: Քրիստոնյաները Աստծո ընտանիքի, Քրիստոսի մարմնի, նոր տաճարի անդամներն են, կառուցված անհատ հավատացյալներից: Այս հասկացողությունը խիստ անհրաժեշտ է աստվածաբանական հավասարակշռությունը պահելու համար ի տարբերություն արևմտյան (ամերիկյան) անհատականության: Տես հատուկ թեմա: Սուրբեր 1:7.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՈՐՊԵՍ ԱՆՉ

Այստեղ, առաջին անգամ Հռոմեացիս Թղթում, Սուրբ Հոգին հանդիսանում է որպես Անձ: Հին Կտակարանում «Աստծո Հոգին» (այն է *ruach*) հանդիսանում էր այն ուժը, որը կատարում էր ԵՀՈՎԱ-յի նպատակը, բայց ոչ մի ակնարկ չկա, որ Նա Անձ էր (այն է, հինկտակարանյան մոնոթեիզմ/միաստվածություն): Ինչևէ, Նոր Կտակարանում Սուրբ հոգու անձեղությունն ու Նրա բնավորության առանձնահատկություններն արձանագրված են:

1. Նրան կարող են հայհոյել ուղղել (հմմտ. Մաթ. 12:31; Մարկ. 3:29)
2. Նա սովորեցնում է (հմմտ. Գուկ. 12:12; Հովհ. 14:26)
3. Նա վկայում է (հմմտ. Հովհ. 15:26)
4. Նա հանդիմանում և խրատում է (հմմտ. Հովհ. 16:7-15)
5. Նա հաղթ է գալիս «ով» դերամունով (այն է, *hos*) (հմմտ. Եփ. 1:14)
6. Նրան կարող են տրտմեցնել (հմմտ. Եփ. 4:30)
7. Նրան կարող են հանգցնել (հմմտ. Ի Թես. 5:19)

Մի շարք աստվածաշնչյան տեքստեր, որոնց վրա է հիմնված Երրորդության գաղափարը, նաև խոսում է երեք Անձերի մասին

1. Մաթ. 28:19
2. Ի Կոր. 13:14
3. Ի Պետ. 1:2

Սուրբ Հոգին կապված է մարդկային գործողությունների հետ

1. Գործք 15:28
2. Հռ. 8:26
3. Ի Կոր. 12:11
4. Եփ. 4:30
5. Ի Թես. 5:15

Գործք Առաքելոց գրքի հենց սկզբում ընդգծված է Սուրբ Հոգու դերը: Պենտեկոստեր օրը Սուրբ Հոգու գործունեության սկիզբը չէր, այլ մի նոր փուլ: Հիսուսը միշտ ուներ Հոգին: Նրա մկրտությունը Սուրբ Հոգու գործունեության սկիզբը չէր, այլ մի նոր գլուխ: Գուկասը պատրաստում է եկեղեցուն մի նոր արդյունավետ ծառայության: Հիսուսը ուշադրության կենտրոնում է, Սուրբ Հոգին առաջվա պես հանդիսանում է գործող միջոց, իսկ նպատակը մնում է Աստծո սերը, ներողամտությունը և բոլոր մարդկանց վերականգնումը Իր պատկերին և նմանությանը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:28-30

²⁸ Բայց գիտե՞ք, որ Աստուծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դեպի բարին նորանց՝ որ նախասահմանելովը կանչուած են: ²⁹ Որովհետեւ նորանց որ առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց իր Որդու պատկերին կերպարանակից լինելու. որ նա անդրանիկ լինի շատ եղբայրների մէջ: ³⁰ Եւ որոնց առաջուց սահմանեց, նորանց կանչեց էլ. եւ որոնց կանչեց, նորանց արդարացրեց էլ. եւ որոնց արդարացրեց, նորանց փառաւոր էլ արաւ:

NASB (UPDATED) TEXT: 8:28-30

²⁸And we know that God causes all things to work together for good to those who love God, to those who are called according to His purpose. ²⁹For those whom He foreknew, He also predestined to become conformed to the image of His Son, so that He would be the firstborn among many brethren; ³⁰and these whom He predestined, He also called; and these whom He called, He also justified; and these whom He justified, He also glorified.

8:28 «ամեն բաները» A և B հին հունարեն երկաթագիր ձեռագրերում գրված է այսպես «Աստված հոգում է ամեն բան»: Պապիրուս ձեռագրում P⁴⁶ «Աստված» բառի հետ որպես ենթակա գրված է « համատեղ գործող»: Նույնիսկ քերականորեն հնարավոր է, որ հ. 28-ում ենթական «Հոգին» է (հմմտ. հ. 27 և NEB և REB): Այս համարը նաև վերաբերվում է «տառապանքներ» հհ. 17-18; և «հառաչանքներ» բառերին հ. 23: Հավատացյալների համար արդեն գոյություն չունեն այնպիսի բաներ ինչպիսիք են բախտ, հաջողություն կամ պատահականություն:

«դէպի բարին» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Այստեղ նաև բարդ բառ է «*syn*» հիմքով (հմմտ. հ. 26): Ուստի, արտահայտության բառացի իմաստն այս է « բոլոր հանգամանքները համատեղ շարունակում են գործել դէպի բարին»: Չարի և տառապանքի աշխարհում սա բարդ միտք է հասկանալու համար (երկու գիրք կօգնեն հասկանալու այս թեման; Վենհեմ «Աստծո Բարությունը» (*The Goodness of God by Wenham*) և Հաննա Ուայթհոլ Սմիթ «Երջանիկ կյանքի քրիստոնեական գաղտնիքը» (Hannah Whithall Smith, *The Christian's Secret of a Happy Life*): «Բարի» բառը այստեղ հ. 29-ում սահմանված է որպես «Իր Որդու պատկերին կերպարանակից լինել»: Աստծո անփոփոխ ծրագրում յուրաքանչյուր հավատացյալի համար հանդիսանում է քրիստոսանման լինելը, և ոչ թե բարգավաճելը, հեղինակավոր լինելը կամ առողջությունը:

«Աստուծուն սիրողներին, նորանց՝ որ նախասահմանելովը կանչուած են» Երկու դեպքում էլ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ԴԵՐԲԱՅ է: Սրանք այն երկու պայմաններն են, որոնք թույլ են տալիս հավատացյալին նայել կյանքին դրական կողմից, անկախ հանգամանքներից (հմմտ. հ. 15): Եվ նորից ուշադրություն դարձրեք Ուիստի երկու կողմերին՝ մարդու ազատությունը («ով սիրում է») և Աստծո գերիշխանությունը («ով կանչված է»):

8:29-30 Այս համարների բոլոր բայերը ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ են: Նրանք կազմում են գործողության շղթա սկզբից մինչև ժամանակի վախճանը: Աստված ճանաչում է մեզ և Նա մեր կողմից է և ուզում է, որ Իր հետ լինենք: Կոնտեքստը ցույց է տալիս ոչ թե մեկ անհատ հավատացյալի այլ նրանց համախմբվածությունը: Փառավորման վերջնական գործողությունը ապագայում է սպասվում, բայց այս կոնտեքստում հանդես է գալիս որպես իրականացված գործողություն:

8:29 «առաջուց ճանաչեց» Պողոսն այս տերմինը օգտագործել է երկու անգամ, այստեղ և 11:2-ում: 11:2-ում այն վերաբերում է Իսրայելի հանդեպ ունեցած Աստծո սիրուն, որն Աստված ուներ ժամանակներից առաջ: Հիշեք, որ «ճանաչել, իմանալ» տերմինը եբրայերենում կապված էր ինտիմ, մտերմիկ, անձնական հարաբերությանը, և ոչ թե ինչ որ մեկի մասին փաստեր ունենալուն (հմմտ. Ծննդ. 4:1; Եր. 1:5): Այստեղ պատկերված են իրար կապակցված մի շարք իրադարձություններ (հմմտ. հհ. 29-30): Այս տերմինը կապված է նախասահմանության հետ: Ինչևէ, պետք է հստակ սահմանել, որ Աստծո կանխագիտությունը ընտրության հիմքը չէ, եթե դա այդպես լիներ, ապա ընտրությունը կհիմնվեր ապագայում մեղավոր մարդկության արձագանքի

վրա, որը կնշանակեր, որ ընտրությունը կախված է մարդու գործերից ու վարքից: Այս տերմինը նաև հանդիպում է Գործք 26:5; I Պետ. 1:2,20 և II Պետ. 3:17:

«առաջուց սահմանեց» Երկու տերմիններն էլ «կանխագիտություն» (*proginōskō*) կամ «նախասահմանություն» (*proorizō*) բարդ բառեր են, կազմված «առաջուց, մինչև, նախօրոք» (*pro*) նախդիրից և ուստի պետք է թարգմանվի «իմանալ նախապես», «նախապես սահման դնել» կամ «նախապես չափել»:

Նոր Կտակարանում նախասահմանության մասին որոշ չափով հստակ հատվածներն են Հռ. 8:28-30; Եփ. 1:3-14 և Հռ. 9: Այս տեքստերը միանշանակ ընդգծում են Աստծո գերիշխանությունը: Նա է ամեն բանի լիիրավ հսկողը, ներառյալ մարդու պատմությունը: Գոյություն ունի աստվածային փրկության ծրագիր, որը իրականանում է ժամանակի մեջ: Ինչևէ, այս ծրագիրը պատահական կամ ընտրողական չէ: Այն հիմնված է ոչ միայն Աստծո գերիշխանության և կանխագիտության վրա, այլ Նրա անփոփոխ կերպարի, որի մեջ մտնում է սերը, ողորմությունը և անարժան շնորհքը:

Մենք պետք է գգույշ լինենք մեր արևմտյան (ամերիկյան) ինդիվիդուալիզմ/անհատապաշտություն կամ մեր ավետարանչական նախաձավորության համար, չգունավորելու համար այս ճշմարտությունը: Մենք նաև պետք է հսկենք այն, որ չհայտնվենք պատմական աստվածաբանական կոնֆլիկտի մեջ Օգոստինոսի և Պելագիոսի կամ կալվինիզմի և արմինիականության միջև:

Նախասահմանությունը մի վարդապետություն չէ, որը նշանակում է սահմանափակել Աստծո սերը, շնորհքն ու ողորմությունը, և ոչ էլ դուրս մղել որոշ բաներ ավետարանից: Նրա նշանակությունը ամրապնդում է հավատացյալներին՝ շարունակելով ձևավորել նրանց աշխարհայացքը: Աստված բոլոր մարդկանց համար է (հմմտ. Հովհ. 3:16; I Տիմ. 2:4; II Պետ. 3:9): Աստված է հսկում ամեն բան: Ո՞վ կամ ի՞նչը կարող է մեզ բաժանել Նրանից (հմմտ. Հռ. 8:31-39): Նախասահմանությունը ձևավորում է երկու կերպերից մեկ կյանքին նայելու համար: Աստված նայում է ամբողջ պատմությանը որպես ներկայում կատարվող գործողություն: Մարդիկ սահմանափակ են ժամանակի մեջ: Մեր հեռանկարային և մտային կարողությունները սահմանափակ են: Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև չկա հակասություն: Սա ուխտի յուրահատկությունն է, այսպես է կառուցված այն: Եվ սա մեկ ուրիշ օրինակ է այն բանի, որ աստվածաշնչյան ճշմարտությունը տրվում է ներքին դիպեկտիկական հակասությունով: Աստվածաշնչյան վարդապետությունները սովորաբար ներկայացվում են տարբեր տեսանկյուններից: Նրանք հաճախ թվում են պարադոքսալին: Ճշմարտությունը հավասարակշռություն է թվացյալ հակառակ գույգերի միջև: Մենք չպետք է դիտավորյալ հեռացնենք այդ լարվածությունը, ընտրելով երկուսից միայն մեկը: Մենք նաև չպետք է մեկուսացնենք որևէ աստվածաշնչյան ճշմարտություն միայն իր սեփական սահմաններով և մտքերով:

Կարևոր է նաև ավելացնել, որ ընտրության նպատակը ոչ միայն երկինքն է մեր մահից հետո, այլ քրիստոսանմանությունը հիմա ներկայում (հմմտ. Եփ. 1:4; 2:10): Մենք ընտրվել ենք «սուրբ և անարատ» լինելու համար: Աստված գերադասում է մեզ փոխել այնպես, որ ուրիշները կարողանան տեսնել այդ փոփոխությունները և Քրիստոսի հավատքով արձագանքեն Աստծո կանչին: Նախասահմանությունը անձնական առանձնաշնորհում չէ, այլ պատասխանատվություն ուխտի համաձայն:

«իր Որդու պատկերին կերպարանակից լինելու» Սա այս հատվածի գլխավոր ճշմարտությունն է: Սա է քրիստոնեության նպատակը (հմմտ. Գաղ. 4:19; Եփ. 4:13): Մրբությունը Աստծո կամքն է յուրաքանչյուր հավատացյալի համար: Աստծո ընտրությունը դա քրիստոսանման լինելն է (հմմտ. Եփ. 1:4), և ոչ թե հատուկ դիրք: Աստծո պատկերը, որը տրվել է մարդուն արարչագործության ժամանակ, (հմմտ. Ծննդ. 1:26; 5:1,3; 9:6) պետք է վերականգնվի (հմմտ. Կող. 3:10): Տես ծանուցում 8:21 և Հատուկ Թեմա: Կանչված 1:6.

«որ նա անդրանիկ լինի շատ եղբայրների մեջ» Սաղմոս 89:27 «անդրանիկ» բառը Մեսիայի անունն է : Հին Կտակարանում առաջին որդին ուներ արտոնություններ և առավելություններ: Տերմինը օգտագործված է Կող. 1:15 ցույց տալու համար Հիսուսի գերապատվությունը արարչագործության մեջ և Կող. 1:18 և Հայտ. 1:5 ցույց տալու համար Հիսուսի գերապատվությունը հարության մեջ: Այս տեքստում հավատացյալները Քրիստոսի միջոցով ձեռք են բերում Նրա անդրանիկության առավելությունը:

Այս տերմինը չի վերաբերում Հիսուսի մարմնավորմանը, այլ Նրան որպես նոր սերնդի գլուխ (հմմտ. 5:12-21), առաջինը շարքի մեջ, մեր հավատքի լուսակիր, Հոր օրհնությունների փոխանցման ճանապարհը հավատքի ընտանիքին: Ստորև տես հատուկ թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆԴՐԱՆԻԿՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշնչում «անդրանիկ» բառը (*prōtotos*) օգտագործված է մի քանի պարզորոշ իմաստներով.

1. այս բառի հինկտակարանյան ծագումը վերաբերվում է ընտանիքում առաջին որդու արտոնություններին և առավելություններին (հմմտ. Սաղ. 89:27; Դուկ. 2:7; Հն. 8:29; Եբ. 11:28)
2. Կող. 1:15-ը խոսում է Հիսուսի մասին, որպես ստեղծագործության առաջինը, որը հնարավոր է ակնարկ է հանդիսանում Առ. 8:22-31, կամ Աստծո գործիչ (հմմտ. Հովհ. 1:3; I Կոր. 8:6; Կող. 1:15-16; Եբ. 1:2)
3. Կող. 1:18; I Կոր. 15:20 (և այստեղ) վերաբերվում է Հիսուսին, որպես մեռելներից անդրանիկը
4. հինկտակարանյան անուն է, օգտագործված Մեսիայի համար (հմմտ. Սաղ. 89:27; Եբ. 1:6; 12:23): Այս անունը իր մեջ ներառում էր մի քանի ասպեկտներ, որոնք արտացոլում էին Հիսուսի բացարձակ և կենտրոնական լինելը: Այս կոնտեքստում #3 կամ #4 է:

8:30 «փառատը էլ արա» Աստվածաշնչում Աստված հաճախ նկարագրվում է «փառք» տերմինով: Այս բառի արմատը առաջացել է առևտրի բնագավառից «ծանր» բառից, և որը նշանակում էր արժեքավոր ինչպես ոսկին: Տես Հատուկ Թեմա 3:23. Աստվածաբանորեն Աստված ազատագրում է մեղավոր մարդկությանը մի շարք քայլերի միջոցով, որոնք թվարկված են հհ. 29-30: Վերջին քայլը «փառավորումն» է: Սա կլինի հավատացյալների ամբողջական փրկությունը: Այն կլինի Հարության Օրը, երբ նրանց կտրվեն իրենց նոր հոգևոր մարմինները (հմմտ. I Կոր. 15:50-58) և կմիավորվեն Եռյակ Աստծու և միմյանց հետ (հմմտ. I Թես. 4:13-18; I Հովհ. 3:2):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:31-39

³¹ Ապա ի՞նչ ասենք այս բաների համար, եթե Աստուած մեր կողմն է՝ ո՞վ է մեզ հակառակ. ³² Որ իր Որդին էլ չխնայեց, այլ մեր ամենի համար մատնեց նորան. էլ ի՞նչպես նորան հետ ամեն բան չի շնորհիլ մեզ: ³³ Ո՞վ է որ Աստուծոյ ընտրուածների դէմ մեղադիր լինի. Աստուած էոր արդարացնում է: ³⁴ Ո՞վ է որ դատապարտէ. Քրիստոսը որ մեռաւ եւ աւելի՛ որ յարութիւն էլ առաւ եւ Աստուծոյ աջ կողմն է, որ մեզ համար բարեխօս էլ է: ³⁵ Ապա ո՞վ կբաժանէ մեզ Քրիստոսի սէրիցը. կառապա՞նք, թէ նեղութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ, թէ մերկութի՞ւն, թէ վտա՞նգ, թէ սու՞ր: ³⁶ Ինչպէս գրուած է, թէ Քեզ համար մեռցնվում ենք բոլոր օրը եւ մորթուելու ոչխարի պէս համարուեցանք: ³⁷ Բայց այս ամեն բաներումն առաւել եւս յաղթում ենք նորա միջոցովը՝ որ մեզ սիրեց, ³⁸ Որովհետեւ հաստատ գիտեմ, որ ոչ մահ, ոչ կեանք, ոչ հրեշտակներ, ոչ իշխանութիւններ, ոչ զօրութիւններ, ոչ ներկայ բաներ, ոչ գալու բաներ, ³⁹ Եւ ոչ բարձրութիւն, ոչ խորութիւն, եւ ոչ մէկ ուրիշ ստեղծուած բան կարող է մեզ բաժանել Աստուծոյ սէրիցը՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն է:

NASB (UPDATED) TEXT: 8:31-39

³¹What then shall we say to these things? If God *is* for us, who *is* against us? ³²He who did not spare His own Son, but delivered Him over for us all, how will He not also with Him freely give us all things? ³³Who will bring a charge against God's elect? God is the one who justifies; ³⁴who is the one who condemns? Christ Jesus is He who died, yes, rather who was raised, who is at the right hand of God, who also intercedes for us. ³⁵Who will separate us from the love of Christ? Will tribulation, or distress, or persecution, or famine, or nakedness, or peril, or sword? ³⁶Just as it is written, "FOR YOUR SAKE WE ARE BEING PUT TO DEATH ALL DAY LONG; WE WERE CONSIDERED AS SHEEP TO BE SLAUGHTERED." ³⁷But in all these things we overwhelmingly conquer through Him who loved us. ³⁸For I am convinced that neither death, nor life, nor angels, nor principalities, nor things present, nor things to come, nor powers, ³⁹nor height, nor depth, nor any other created thing, will be able to separate us from the love of God, which is in Christ Jesus our Lord.

8:31 «Ապա ի՞նչ ասենք այս բաների համար» Սա Պողոսի սիրելի արտահայտությունն է, որը ցույց է տալիս նրա սուր քննադատության ոճի ներկայացումը (հմմտ. 3:5; 4:1; 6:1; 7:7; 9:14,30): Այս հարցը վերաբերվում է նախկինում ասված մտքերին: Դժվար է միայն որոշել, թե ինչքան հեռուն է ուզում Պողոսը տանել ընթերցողի ուշադրությունը 3:21-31-ին, թե 8:1, թե՞ 8:18: Հաշվի առնելով կոնտեքստը, և որ 8:1 սկսվում է «ուրեմն» բառով, կարելի է ենթադրել, որ ամենալավը համապատասխանում է 8:18 համարը:

«եթե» Այստեղ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Պարզապես զարմանալի է, որ այս ամբողջ մեղքի պայքարների մեջ Աստված մեզ հետ է:

«ո՞վ է մեզ հակառակ» «Ով» դերանունը կրկնվում է հ. 33,34 և 35: Այն վերաբերվում է սատանային: 31-39 հատվածը օգտագործվում է Հին Կտակարանում, որպես գրական տեխնիկական միջոց, մարգարեների կողմից, դատական ատյանում կատավող գործողություն (հմմտ. Միքիա 1 և 6): ԵՀՈՎԱ-ն Իր ժողովրդին դատի է տալիս հոգևոր շնության մեղքի համար: Այստեղ նաև ակնարկ կա Ես. 50:8-9:

Ուշադրություն դարձրեք իրավական տերմիններին: «դեմ» հ. 31; «մեղադրանք ներկայացնել» հ. 33; «արդարացնում է» հ. 33; «դատապարտում է» հ. 34; և «բարեխոսում է» հ. 34: Աստված Դատավորն է: Քրիստոսը դատապաշտպան-իրավաբանը: Սատանան մեղադրողն է (բայց նա լուռ է մնում): Հրեշտակները, որպես ականատեսներ, լցնում են դատարանի դահլիճը (հմմտ. I Կոր. 4:9; Եփ. 2:7; 3:10):

8:32 «Որ իր Որդին էլ չխնայեց» Հայր Աստվածը մեղավոր մարդկությանը տվել է Իր լավագույնը: Նա հիմա չի թողնի հավատացյալներին և ոչ էլ քիչ կտա նրանց (հմմտ. Հովհ. 3:16; Հռ. 5:8): Որքան հինկտակարանյան վրիժառու Աստծո գաղափարը հեռու է սիրող Քրիստոսից: Այս վերջին և կատարյալ պարզև արտացոլված է Աբրահամին տրված Աստծո խոսքի մեջ Ծննդ. 22:12, 16: Ռաբիներն օգտագործում են Հին Կտակարանի այս տեքստը փախսանորդ քավությունը Աբրահամի սերնդի համար վարդապետությունը հաստատելու համար:

«այլ մեր ամենի համար մատնեց նորան» «Ամենի, բոլորի» բառը այս տեքստում շատ կարևոր է: Հիսուս մեռավ ամբողջ աշխարհի մեղքերի համար (հմմտ. Գուկ. 2:10-11; Հովհ. 3:16; 4:42; 11:51; I Տիմ. 4:10; I Հովհ. 2:2; 4:14): Սա վերաբերվում է Ադամ – Քրիստոս նմանություն 5:12-21: Հիսուսի մահը լուծեց մեղքի խնդիրը: Հիմա մարդու համար մնում է «հավատալ և ընդունել» խնդիրը:

«ամեն բան չի՞ շնորհիլ մեզ» Այս բայը կազմված է հունարեն «շնորհք» տերմինի արմատից: «Ամեն բան» վերաբերվում է հ. 17: Տես ծանուցում 3:24.

8:33-34 «մեղադիր լինի. . արդարացում է. . դատապարտ. . բարեխօս է» Այս բոլոր բառերը հանդիսանում են իրավաբանական տերմիններ: 31-39հ-ը դատական ատյանի տեսարան է երկնքում: Հնարավոր է սա ակնարկ է Ես. 50:8-9:

8:33 «Աստուծոյ ընտրուածների» Հիսուսն Աստծո ընտրյալ մարդն է ամբողջ մարդկության համար (Բարտ): Նոր Կտակարանում ամենահատակ և ամբողջական տեքստն այս ճշմարտության մասին գտնվում է Եփ. 1:3-4 և Հռ. 9:14-26: Հայրն ընտրեց Հիսուսին ընտրելու բոլոր մարդկությանը: Հիսուս Քրիստոսը Աստծո «այո»-ն է մեղավոր մարդկանց «ոչ»-ին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՍԱ: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ/ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ

Ընտրությունը հիանալի վրադապետություն է: Բայց ընտրությունը դա ֆավորիտ/սիրելի լինելը չէ, այլ որ հավատացյալը լինի ճանապարհ, գործիք կամ միջոց, որը կնպաստի ուրիշների փրկությանը: Հին Կտակարանում տերմինը հիմնականում օգտագործվում էր ծառայության համար: Նոր Կտակարանում այն հիմնականում օգտագործվում է փրկության համար, որին հաջորդում է ծառայությունը: Աստվածաշունչը երբեք չի հաշտեցնում թվացյալ կոնֆլիկտը Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև, բայց հաստատում է երկուսն էլ: Աստվածաշունչյան լարվածության լավ օրինակ կարող է լինել Հռ. 9-ը Աստծո գերիշխան ընտրության վերաբերյալ և Հռ. 10-ը մարդու անհրաժեշտ արձագանքի մասին (հմմտ. 10:11,13):

Այս աստվածաբանական լարվածության բանալին կարելի է գտնել Եփ. 1:4: Հիսուսը Աստծո ընտրյալ մարդն է և բոլոր մարդիկ ըստ հնարավորին ընտրված են Նրանում (Կարլ Բարտ): Հիսուսն Աստծո «այո»-ն է՝ ուղղված մեղավոր մարդու կարիքին (Կարլ Բարտ): Եփեսացիս 1:4 օգնում է հստակեցնել այս վիճելի հարցը, պնդելով, որ նախասահմանության նպատակը երկինքը չէ, այլ սրբությունը (քրիստոսանմանություն): Ավետարանում մեզ հաճախ գրավում է հավատացյալի շահն ու արտոնությունը, բայց մենք հակված ենք անտեսելու մեր պատասխանատվությունները: Աստծու կանչը (ընտրություն) թե երկրային կյանքի համար է, և թե հավիտենականության:

Աստվածաշունչյան վարդապետություններն ունեն սերտ համագործակցություն միմյանց հետ, և նրանցից ոչ մեկը անհատապես և անկախ հանդես չի գալիս: Ինչպես օրինակ համաստեղությունը և մեկ առանձին աստղը: Աստված ներկայացնում է Իր ճշմարտությունները արևելյան ժանրով և ոչ թե արևմտյան: Եվ մենք չպետք է հեռացնենք լարվածությունը, որ կան որոշ վարդապետական ճշմարտությունների մեջ, որ ակնհայտ գոյություն ունեն երկու դիալեկտիկական (պարադոքսալ) կողմերում.

1. Նախասահմանությունը և մարդու ազատ կամքը
2. Հավատացյալների ապահովությունը և համբերատարության կարիքը
3. Ադամական մեղքը և անձնական մեղքը
4. Անմեղություն (կատարելություն) և քիչ մեղանչելը
5. Նախասկզբնական ակնթարթային արդարացումն ու սրբացումը և աստիճանաբար սրբացումը
6. Քրիստոնեական ազատություն և քրիստոնեական պատասխանատվություն
7. Աստծո գերազանցությունը և Աստծո ներունակությունը
8. Աստված որպես անճանաչելի վերջնականապես և ամբողջությամբ և Աստված որպես ճանաչված Սուրբ Գրքի միջոցով
9. Աստծո Թագավորությունը ներկայում և վերջնական իրականացումը ապագայում
10. Ապաշխարությունը որպես Աստծո պարգև և ապաշխարությունը որպես ուխտի մարդու անհրաժեշտ արձագանք
11. Հիսուսը որպես Աստված և Հիսուսը որպես մարդ

12. Հիսուսը հավասար է Հորը և Հիսուսը ենթարկվում է Հորը

«Ուխտ»-ի աստվածաբանական հասկացողությունը միավորում է Աստծո գերիշխանությունը (Ով միշտ նախաձեռնում և կանոններ է հաստատում) պարտադիր նախասկզբնական և շարունակական ապաշխարությունը և հավատքի արձագանքը մարդկանց կողմից: Ջգուշացեք փնտրելուց հաստատող տեքստ պարադոքսի միայն մեկ կողմը և նվազեցնել մյուսի իմաստը: Ջգուշացեք հաստատելու միայն ձեր սիրելի վարդապետությունը կամ աստվածաբանական համակարգը:

8:34 Այս համարում թվարկված են Հիսուսի ծառայության մի քանի ասպեկտները (1) Նա մահացավ, (2) Նա հարություն առավ, (3) Նա Աստծո աջ կողմում է և (4) Նա բարեխոսում է հավատացյալների համար:

Հիսուսի մահը վճարեց մեր մեղքի վարձքը (հմմտ. Ես. 53; Մարկ. 10:45; II Կոր. 5:21): Հիսուսի հարությունը ցույց է տալիս Որդու ծառայության Հոր ընդունելությունը և հույս է տալիս հալածանքի և մահվան ժամանակ: Հիսուսի փառավորումը Հոր աջ կողմում և բարեխոսությունը հավատացյալների համար տալիս է նրանց համարձակություն պատերազմելու հավատքի բարի պատերազմը:

«Աստուծոյ աջ կողմն է» Սա մարդաբանական փոխաբերություն է: Աստված չունի ֆիզիկական մարմին: Նա «հոգի» է: Այս փոխաբերությունը խոսում է մի վայրի մասին, որտեղ կա զորություն, իշխանություն և գերապատվություն: Պողոսը հազվադեպ է օգտագործում այս արտահայտությունը (հմմտ. Եփ. 1:20; Կոր. 3:1): Շատ հնարավոր է, որ 34 հ-ում Պողոսը մեջբերում է կատարում վաղ քրիստոնյաների հավատքի դավանությունը (հմմտ. Փիլ. 2:6; I Տիմ. 3:16):

«բարեխօս էլ է» Հիսուսի ծառայությունը շարունակվում է: Հիսուսը բարեխոսում է մեզ համար (հմմտ. Եր. 4:4-16; 7:25) ինչպես դա անում է Սուրբ Հոգին (հհ. 26-27): Այս բառը առաջացել է «*paraclete*» տերմինից, որը օգտագործված է Հովհ. 16:14 Հոգու համար և I Հովհ 2:1-ում Որդու համար: Սա ևս մեկ ակնարկ է տառապող ծառայի հիմնի մասին (հմմտ. Ես. 53:12):

8:35 «Քրիստոսի սերիցը» Սա կամ ՈՒՂՂԱԿԱՆ կամ ՕԲՅԵԿՏԱՅԻՆ ՀՈՒՆՎ է: Այս խոսքերի տակ կարող ենք հասկանալ (1) Քրիստոսի սերը հավատացյալների հանդեպ կամ (2) հավատացյալների սերը Քրիստոսի հանդեպ: Առաջինը ավելի լավ է համապատասխանում այս կոնտեքստին (և II Կոր. 5:14), որովհետև հավատացյալների սերը Քրիստոսի հանդեպ գալիս ու գնում է, իսկ Քրիստոսի սերը մեր հանդեպ հաստատ է և կայուն:

Հունարեն ձեռագրերում այս արտահայտության մի քանի տարբերակներ կան: Հին հունարեն տեքստերից մեկում գրված է «Աստծո սերը» արտահայտությունը (հմմտ. MS X): Մեկ ուրիշ հին ձեռագիր միացնում է երկու արտահայտությունները ասելով «Աստծո սերը Քրիստոսում» (հմմտ. MS B): UBS⁴ թարգմանության կազմողները «Քրիստոսի սերը» արտահայտությունները որակավորում են որպես «A» կատեգորիա (հուսալի տարբերակ): Այն հայտնվում է MSS C, D, F, G, ձեռագրերում, շատ հին լատիներեն թարգմանություններում, Վուլգաթի մեջ և Պեշիտայում (Peshitta):

«տառապա՞նք, թե նեղութի՞ւն, թե հալածա՞նք» Քրիստոնյաներն աշխարհում խնդիրներ կունենան, բայց ոչ այս խնդիրները, և ոչ էլ չար ուժերը չեն կարող նրանց բաժանել Աստծուց: Տես հատուկ թեմա: Նեղություններ 5:3.

8:36 Սա մեջբերում է Սաղ. 44:22-ից: Այս Սաղմոսում Աստծուն դիմում են տառապող ժողովրդին փրկելու համար:

Արևելահայերեն «Բայց այս ամեն բաներումն առաել ես յաղթում եմք»
Արևմտահայերեն «Հապա այս ամեն բաներուն մէջ ալ ատելի յաղթող կըլլանք»

8:37

NASB “But in all these things we overwhelmingly conquer”
NKJV “Yet in all these things we are more than conquerors”
NRSV “No, in all these things we are more than conquerors”
TEV “No, in all these things we have complete victory through him”
JB “these are the trials through which we triumph”

Այստեղ օգտագործված է *ἀλε*, որը ամրացնում է տերմինի իմաստը «գրավել, նվաճել, հաղթել»: Պողոսն է միավորել այս տերմինը (*hyper + nikaō*): Սա հիանալի փոխաբերություն է հավատացյալի մասին «հաղթող ոչխար»: Հավատացյալները հաղթող են Հիսուս Քրիստոսի միջոցով (հմմտ. Հովհ. 16:33; I Հովհ. 2:13-14; 4:4; 5:4): Տես հատուկ թեմա: Պողոսը օգտագործում է *Hyper* նախդիրը, բարդ բառեր կազմելու համար 1:30.

«նորա միջոցովը՝ որ մեզ սիրեց» Այս ԳԵՐԱՆՈՒՆԸ կարող է վերաբերվել թե Հորը թե Որդուն:

8:38 «հաստատ գիտեմ» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՐԱՆԱԿ է, որը նշանակում է «ես եղել և շարունակում եմ լինել վստահ»:

«հրեշտակներ» Ռաբիները մտածում էին, որ հրեշտակները նախանձել են մարդկանց Աստծո սիրո և ուշադրության համար, և դրա համար թշնամությամբ են լցվել նրանց հանդեպ: Գնոստիկ կեղծ վարդապետները պնդում էին, որ մարդու փրկությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ նրան հայտնի է ինչ որ գաղտնագիր, որի միջոցով նա կարող է հաղթահարել թշնամությունը հրեշտակային ոլորտում (Հմմտ. Կող. և Եփ):

Չորջ Էլդոն Լեդը իր «Նոր Կտակարանի աստվածաբանություն» (George Eldon Ladd *A Theology of the New Testament*) գրքում տերմինների լավ ամփոփում է բերում, որոնք Պողոսն օգտագործում է հրեշտակներին նկարագրելու համար

«Պողոսը առընչվում է ոչ միայն լավ ու վատ հրեշտակներին, սատանային և դևերին, բայց նաև օգտագործում է մի շարք ուրիշ բառեր հրեշտակային հոգիների դասակարգին պատկանող: Ահա նրա տերմինաբանությունը.

«Իշխանություն» [*arche*], I Կոր. 15:24; Եփ. 1:21; Կող. 2:10

«Իշխանություններ» [*archai*; RSV, «իշխանություններ»], Եփ. 3:10; 6:12; Կող. 1:16; 2:15; Հռ. 8:38

«Պետություն», [*exousia*], I Կոր. 15:24; Եփ. 1:21; Կող. 2:10

«Պետություններ» [*exousiai*; RSV, «իշխանություններ»], Եփ. 3:10; 6:12; Կող. 1:16; 2:15

«Իշխանություն» [*dynamis*], I Կոր. 15:24; Եփ. 1:21

«Իշխանություններ» [*dynameis*], Հռ. 8:38

«Աթոռները» [*thronoi*], Կող. 1:16

«Տերություն» [*kyriotes*; RSV, «տիրապետություն»], Եփ. 1:21

«Տերություններ» [*kyriotetes*], Կող. 1:16

«Այս աշխարհի խառնի աշխարհակալների հետ» Եփ. 6:12

«Չար հոգիների հետ որ երկնատրների մէջ են» Եփ. 6:12

«Խավարի իշխանությունը» Կող. 1:13

«Ամեն անունից վեր՝ որ անուանվում է» Եփ. 1:21

«Երկնատրների եւ երկրատրների եւ երկրի տակ լինողների» Փիլ. 2:10» (էջ 401):

Գոյություն չունի հստակ աստվածաշնչյան տեղեկություն այն բանի մասին, թե ինչպես են Հին Կտակարանի ընկած հրեշտակներն առընչվում Նոր Կտակարանի դիվային ուժերի հետ: Շատերը

ենթադրում են, որ դրանք նույն հրեշտակներն են: Ինչևէ, համաձայն հրեական վախճանաբանական գրականության, դևերը հսկաների հոգիներն էին Ծննդ. 6, որոնք կես հրեշտակ կես մարդ էին: Նրանց մարմինները կործանվեցին ջրհեղեղի ժամանակ, ուստի նրանք ամեն հնարավորություն փնտրում են նորից մարմնավորվելու: Սա միայն ենթադրություն է: Աստվածաշունչը չի պատասխանում մեր բոլոր հարցերին ծագումնաբանության մասին, այն միայն մարդու փրկության համար է, և ոչ թե նրանց հետաքրքրասիրությունը բավարարելու համար:

«Իշխանություններ. . . զորություններ» Այս խոսքերը վերաբերում են կամ (1) այս ժամանակաշրջանի չար ընկած հրեշտակներին կամ դիվային ուժերին (հմմտ. Եփ. 2:2; 6:12; I Կոր. 15:24; Կող. 1:16), կամ (2) էլ անդեմ կառուցվածքներին ու ինստիտուտներին մեղավոր աշխարհի (կրոն, կառավարություն, կրթություն, բժշկություն և այլն), որոնք թույլ են տալիս ընկած մարդկությանը Աստծուց անկախ լինել (հմմտ. Հենդրիկ Բերկհոֆի «Իշխանություններ և զորություններ» գիրքը (Hendrickus Berkhoff, *Principalities and Powers*): Տես ծանուցում 13:1.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍԿԻԶԲԸ (*ARCHE*)

Անգլերեն լեզվում կա «domain» բառը, որը համապատասխանում է հունարեն *archē* տերմինին, որը և նշանակում է «սկիզբ, աղբյուր» կամ «ծագումը» ինչ որ մի բանի.

1. ստեղծագործության կարգ ու կանոնի կամ հերթականության սկիզբը (հմմտ. Հովհ. 1:1; I Հովհ. 1:1)
2. ավետարանի սկիզբը (հմմտ. Մարկ. 1:1; Փիլ. 4:15)
3. առաջին վկաները կամ ականատեսները (հմմտ. Գուկ. 1:2)
4. նշանների սկիզբը (հրաշքներ, հմմտ. Հովհ. 2:11)
5. առաջին սկզբունքները (հմմտ. Եբ. 5:12)
6. վստահության/ապահովության սկիզբը (հմմտ. Եբ. 3:14)

Այս տերմինը նաև օգտագործվում է հետևյալ իմաստով «իշխանություն» կամ «կառավարություն, հեղինակություն, տերություն»:

1. մարդկային իշխանություններ
 - ա. Գուկ. 12:11
 - բ. Գուկ. 20:20
 - գ. Հռ. 13:3; Տիտոս 3:1
2. հրեշտակային իշխանություններ
 - ա. Հռ. 8:38
 - բ. I Կոր. 15:24
 - գ. Եփ. 1:21; 3:10; 6:10
 - դ. Կող. 1:16; 2:10,15

Այս կեղծ վարդապետները արհամարհանքով էին վերաբերվում իշխանությունների հետ, թե երկրային և թե երկնային: Նրանք հակաօրինականության կողմնակիցներ էին: Նրանք իրենց ցանկություններն ու ձգտումները վեր դասեցին Աստծուց, հրեշտակներից, քաղաքացիական իշխանություններից, և եկեղեցու առաջնորդներից:

8:39 «ոչ բարձրություն, ոչ խորություն» Այս տերմիններն օգտագործվել են գագաթնակետ (*apogee*) և երկրամերձ կետ (*perigee*) հանդիսացող աստղերի համար, որոնք հին հավատքի մեջ համարվում էին չաստվածներ, որոնք կառավարում էին մարդու կյանք (աստղագուշակություն): Ավելի ուշ դրանք դարձան տեխնիկական տերմիններ գնոստիցիզմ կոչվող հերետիկոսության մեջ, *eons* կամ հրեշտակային մակարդակներ սուրբ չաստծո և ավելի ցածր չաստծո միջև, որը և ստեղծեց մեղավոր նյութը:

«ոչ մէկ ուրիշ ստեղծուած բան» Բառացիորեն նշանակում է «մի ուրիշ տեսակի ստեղծված բան» (*heteros*): Կոնտեքստը պահանջում է, որ դա հասկացվի որպես հետագա ակնարկ հրեշտակային գործությունների մասին: Կա տարբերություն հունարեն նախդիրի *heteros*, և մի ուրիշ տեսակի, և *allos*, և նույն տեսակի, որոնք դուրս են եկել հունարեն Կոյնե լեզվի գերծածությունից, բայց այս կոնտեքստը դեռ ցույց է տալիս որոշ տարբերություն:

«ոչ . . ոչ . . կարող է մեզ բաժանել Աստուծոյ սէրիցը» Ինչպիսի հիանալի միտք մեր վստահության համար: Այս գլուխը սկսվում է այն բանով, որ Քրիստոսում լինողների համար չկա դատապարտություն, և ավարտվում նրանով, որ ոչ ոք և ոչինչ չի կարող բաժանել մեզ Աստուծոց: Ոչ ոք չի կարող վերցնել հավատացյալի փրկությունը: Ինչևէ, հավատացյալն ինքը պետք է արձագանքի Աստուծո կանչին սկզբում (հմմտ. 3:21-31) և հետո շարունակաբար կյանքի ընթացքում (հմմտ. գլուխներ 4-8): Որոշիչ դեր է խաղում Սուրբ Հոգու գործունեությունը, սակայն անհրաժեշտ է նաև հավատացյալի արձագանքը պայմանական ուխտի հանդեպ: Պահանջվում է ապաշխարություն և հավատք (հմմտ. Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21), ինչպես նաև հնազանդություն և համբերատարություն:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշունչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչպե՞ս է գլուխ 8 կապվում գլուխ 7 հետ:
2. Եթե դատապարտություն չկա, ապա ինչ է լինելու մեղքի հետ հավատացյալի կյանքում:
3. Հոգին թե՞ Հիսուսն է ապրում հավատացյալի մեջ (հ. 9):
4. Ինչպե՞ս ազդեց մարդու մեղքը բնության վրա (հհ. 19-22): Արդյո՞ք բնությունը մաս կունենա երկնքում (հմմտ. Ես. 11:6-10):
5. Ինչպե՞ս է Հոգին աղոթում մեզ համար (հհ. 26-27): Արդյո՞ք սա վերաբերում է «լեզուներով խոսելուն»:
6. Ինչպե՞ս կարող է Աստվածաշունչն ասել , որ ամեն բան բարի գործակից է լինում այսպիսի չար աշխարհում (հ. 28): Տվեք «բարի» բառի սահմանումը:
7. Ինչո՞ւ է սրբացումը դուրս մնացել աստվածաբանական իրադարձությունների շղթայից հ. 30-ում:
8. Ինչի՞ հիման վրա կարող ենք ասել, որ հհ. 31-39 պատկերված է դատական ատյանի տեսարան:
9. Թվարկեք 4 բաներ հ. 34-ում, որ վերաբերում են Հիսուսին:

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 9**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Աստծո ընտրությունը	Իսրայելի Քրիստոսին չընդունելը	Իսրայելի անհավատության խնդիրը	Աստված և Իր ժողովուրդը	Իսրայելի արտոնությունները
9:1-5	9:1-5	9:1-5	9:1-5	9:1-5
	Իսրայելի մերժումը և Աստծո խոստումը	Աստծո խոստումը Իսրայելին չի ձախողել		Աստված պահել է Իր խոստումը
9:6-13	9:6-13	9:6-13	9:6-9	9:6-13
			9:10-13	
	Իսրայելի մերժումը և Աստծո արդարությունը	Աստծո ընտրելու իրավունքը		Աստված անարդար չէ
9:14-18	9:14-29	9:14-18	9:14-18	9:14-18
Աստծո բարկությունը և ողորմությունը			Աստծո բարկությունը և ողորմությունը	
9:19-29		9:19-26	9:19-21	9:19-21
			9:22-29	9:22-24
				Ամենը կանխատեսված էր Հին Կտ-ում
				9:25-29
		9:27-29		
Իսրայելը և Ավետարանը	Իսրայելի ներկա վիճակը	Ճշմարիտ արդարությունը հավատքով է	Իսրայելը և Ավետարանը	
9:30-10:4	9:30-33	9:30-10:4	9:30-10:4	9:30-33

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտորոյթյան մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եր առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ կամ միայն մեկ թեմա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

9-11 ԳԼՈՒԽՆԵՐԻ ԿԱՊԸ 1-8 ԳԼՈՒԽՆԵՐԻ ՀԵՏ

Ա. Գոյություն ունի հասկացողության երկու մոտեցում կապված այս գրական բաժնի մեջ 1-8 գլուխներում

1. Սա ամբողջությամբ առանձին թեմա է, աստվածաբանական փակագծեր/միջանկյալ բառ
 - ա. Այստեղ հստակ գոյություն ունի կարուկ հակադրություն և տրամաբանական կապի բացակայություն 8:39 և 9:1 համարների միջև:
 - բ. Սա ուղղակիորեն կապված է Հռոմի եկեղեցում տիրող պատմական լարվածության հետ, որը հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև էր: Հնարավոր է, որ կոնֆլիկտի իմաստը կապված էր հեթանոս առաջնորդների աճը եկեղեցում:
 - գ. Իսրայելի (և Օրենքի) հետ կապված Պողոսի քարոզչության մասին կար սխար ըմբռնում և նրա հեթանոսներին առաքյալ լինելու ծառայության մասին (ճրի շնորհքի պարզևր), ուստի, նա խոսում է այս թեմայի մասին այս բաժնում:
2. Սա գազաթնակետ և տրամաբանական ամփոփումն է Պողոսի ավետարանի ներկայացման:
 - ա. Պողոսն ամփոփում է գլուխ 8-ը խոստման խոսքերով «չկա բաժանում Աստծո սիրուց»: Ուրեմն ի՞նչ կլինի ուխտի անհավատ ժողովրդի հետ:
 - բ. Հռոմեացիս 9-11 պատասխանում է ավետարանի պարադոքս կապված Իսրայելի անհավատության հետ:
 - գ. Պողոսն այս թեմային անդրադառնում է ամբողջ նամակի ընթացքում (հմմտ. 1:3,16; 3:21,31 և 4:1):
 - դ. Պողոսը պնդում է, որ Աստված հավատարիմ է Իր Խոսքին: Իսկ հիմա ինչպե՞ս հասկանանք Հին Կտակարանում Իսրայելի մասին ասվածը: Արդյոք բոլոր խոստումները կորցրցին իրենց ուժը:

- Բ. Կան մի քանի հնարավոր տարբերակներ այս գրական բաժինը ուրվագծելու համար
1. Պողոսի հարցադրումների օգտագործումը ելնելով ենթադրյալ հակառակորդից (սուր քննադատություն)
 - ա. 9:6
 - բ. 9:14
 - գ. 9:19
 - դ. 9:30
 - ե. 11:1
 - զ. 11:11
 2. Հռոմեացիս 9-11 գլուխները ձևավորում է գրական բաժին: Այն պետք է թարգմանվի միասին որպես մեկ ամբողջ: Ինչևէ, կան ամենաքիչը երեք գլխավոր թեմաների բաժանումներ:
 - ա. 9:1-29 (կենտրոնացած է Աստծո սուվերենության վրա)
 - բ. 9:30-10:21 (կենտրոնացած է մարդու պատասխանատվության վրա)
 - գ. 11:1-32 (Աստծո ներփակող, հավիտենական, քավչարար նպատակը)
 3. գլխավոր թեմաներով: Հռոմեացիսի այս բաժնի լավ պլանը գտնվում է NKJV թարգմանության Thomas Nelson հրատարակչության մեջ, համապատասխան պարբերության բաժանումների:
 - ա. Իսրայելի Քրիստոսին մերժելը, 9:1-5
 - բ. Իսրայելի մերժումը Աստծո խոստման, 9:6-13
 - գ. Իսրայելի մերժումը Աստծո արդարության, 9:14-29
 - դ. Իսրայելի ներկա վիճակը, 9:30-33
 - ե. Իսրայելը և ավետարանը, 10:1-13
 - զ. Իսրայելի ավետարանի մերժումը, 10:14-21
 - է. Իսրայելի մերժումը ամբողջը չէ, 11:1-10
 - ը. Իսրայելի մերժումը վերջնական չէ, 11:11-36
- Գ. Այս բաժինը հանդիսանում է թե հոգու ճիշ և թե հստակ արտահայտված միտք (տրամաբանական ուրվագիծ): Փափգով լի շարադրանքը հիշեցնում է ընթերցողին Ովսիա 11:1-4,8-9, որտեղ խոսվում է այն մասին, թե ինչպես է կոտրվում Աստծո սիրտը՝ տեսնելով Իսրայելի ապստամբությունը: Շատ հարցերում գլուխ 7-ում Օրենքի ցավն ու բարությունը զուգահեռ է գտնում գլուխներ 9-10-ում: Երկու դեպքերում էլ Պողոսի սիրտը խորը ցավ էր ապրում Աստծուց ստացած օրենքի հեզմանքի համար, որը կյանքի փոխարեն մահ բերեց:
- Դ. Այն որ 9-11 գլուխներում Պողոսը ավելի քան 25 անգամ օգտագործում է հինկտակարանային մեջբերումներ, ցույց է տալիս իր փափագը պատկերելու Իսրայելի պարադոքսը՝ Հին Կտակարանի օրնակների հիման վրա, ինչպես նա արեց գլուխ 4-ում, և ոչ միայն ներկա իրավիճակի հիման վրա: Աբրահամի ֆիզիկական սերունդների մեծամասնությունը մերժել էր Աստծուն, նույնիսկ անցյալում:
- Ե. Այս տեքստը, ինչպես Եփ. 1:3-14, խոսում է Աստծո հավիտենական նպատակների մասին կապված մարդու փրկության հետ: Սկզբում կարող է թվալ, որ նրանում նկարագրված է, թե ինչպես Աստված ընտրում որոշ անհատների և մերժում մյուսներին (նախազանցական կավիճիզմ; supralapsarian Calvinism), ինչևէ, ես կարծում եմ շեշտը անհատների վրա չէ դրված, այլ Աստծո հավիտենական փրկության ծրագրի վրա (հմմտ. Ծննդ. 3:15; Գործք 2:23; 3:18; 4:28; և 13:29):
- «Ձերոմի աստվածաշնչյան մեկնաբանությունը» խմբ. Ջոզեֆ Ա. Ֆիթսմայեր ր Ռայմոնդ Ե. Բրաուն, (*The Jerome Biblical Commentary*, “The New Testament,” edited by Joseph A. Fitzmyer and Raymond E. Brown), հատ. 2 «Նոր Կտակարան» բաժնում ասվում է.

«Կարևոր է գիտակցել հենց սկզբից, որ Պողոսի հայացքը ունի ընդհանուր բնութագիր, առանձնահատկություն; նա չի քննարկում անհատների պատասխանատվությունները: Եվ եթե տպավորություն է ստեղծվում, որ նա հարց է բարձրացնում աստվածային նախասահմանության մասին, ապա սա ոչ մի կապ չունի անհատների փառքին գնալու նախասահմանության հետ » (Էջ 318):

ԳԼՈՒԽ 9-ի ԿՈՐՏԵՔՍԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ

- Ա. Որչափ դիրքի արմատական փոփոխություն է տեղի ունենում գլուխ 8-ի և գլուխ 9-ի միջև:
- Բ. Այս գրական բաժինը (9-11) անդրադառնում է (1) փրկության հիմքին (2) Աստծո ընտրողական կամ ընտրության նպատակին, և (3) անհավատ Իսրայելի անհավատությունը ի տարբերություն ԵՀՈՎԱ-յի հավատարմության:
- Գ. Գլուխ 9-ը Նոր Կտակարանի ամենաուժեղ հատվածներից մեկն է Աստծո սովերենության մասին (այն է, ուրիշ էակ, Եփ. 1:3-14) մինչ գլուխ 10-ը հստակ և շարունակաբար ընդգծում է մարդու ազատ կամքը (հմմտ. «յուրաքանչյուրը» հ. 4; «ով որ» հհ. 11,13; «բոլորը» հ. 12 {երկու անգամ}): Պողոսը երբեք չի փորձում հաշտեցնել այս աստվածաբանական լարվածությունը: Նրանք երկուսն էլ ճշմարտություն են: Աստվածաշնչյան վարդապետություններից շատերը ներկայացված են պարադոքսալ կամ դիալեկտիկական գույգերով: Աստվածաբանության համակարգերից շատերը տրամաբանական են, բայց ունեն հակում ապացուցելու տեքստը աստվածաշնչի ճշմարտության միայն մեկ տարրը: Ինչպես Օգոստինոսիանիզմը և կալվինիզմը, նմանապես կիսա-պեդագյանիզմն ու արմինիանիզմը ունեն ճշմարտության տարրեր և սխալներ: Վարդապետությունների միջև գոյություն ունեցող աստվածաշնչյան լարվածությունը գերադասելի է նայել հիմնավորված տեքստին դոգմատիկ, ռացիոնալ, աստվածաբանական համակարգը, որը Աստվածաշունչը դնում է որոշակի մեկնաբանական սահմանների մեջ:
- Դ. 9:30-33-ը գլուխ 9-ի ամփոփումն է և գլուխ 10-ի թեման:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9:1-5

¹Ճշմարիտն են ասում Քրիստոսումը՝ եվ սուտ չեմ ասում, իմ խղճմտանքն էլ վկայում է ինձ Սուրբ Հոգով: ² Որ մեծ տրտմութիւն է ինձ եւ անպակաս ցաւ իմ սրտին. ³ Որ կխնդրէի՝ ես ինքս նգովուած լինիլ Քրիստոսիցն իմ եղբայրների եւ մարմնաւոր ազգականների համար. ⁴ Որոնք Իսրայելացի են. որոնցն է որդեգրութիւնը, եւ փառքը եւ ուխտերը, եւ օրինադրութիւնը եւ պաշտօնը եւ խոստումները. ⁵ Որոնց են հայրերը՝ եւ որոնցից է Քրիստոսը մարմնի կողմանէ, որ է ամենի վերայ Աստուած, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

NASB (UPDATED) TEXT: 9: 1-5

¹I am telling the truth in Christ, I am not lying, my conscience testifies with me in the Holy Spirit, ²that I have great sorrow and unceasing grief in my heart. ³For I could wish that I myself were

accursed, *separated* from Christ for the sake of my brethren, my kinsmen according to the flesh, ⁴who are Israelites, to whom belongs the adoption as sons, and the glory and the covenants and the giving of the Law and the *temple* service and the promises, ⁵whose are the fathers, and from whom is the Christ according to the flesh, who is over all, God blessed forever. Amen.

9:1-2 Հունարենում 1 և 2 համարները մեկ նախադասություն է: Պողոսը տալիս է մի քանի պատճառներ, թե ինչպես նրանք (Հռոմի եկեղեցին) կարող էին համոզվել, որ նա ճիշտն է ասում; (1) նրա խիղճը, Սուրբ Հոգով առաջնորդված, հ.1; (2) նրա միությունը Քրիստոսի հետ, հ. 1; և (3) նրա խորը զգացմունքները Իսրայելի հանդեպ, հ.2 :

9:1 «Ճշմարիտն եմ ասում Քրիստոսունը՝ եվ սուտ չեմ ասում» Պողոսը հաճախ անում է այսպիսի (հմմտ. II Կոր. 11:10; Գաղ. 1:20; I Տիմ. 2:7) կամ նմանատիպ հայտարարություն այն մասին, որ իր վկան հենց Ինքն Աստված է (հմմտ. Հռ. 1:9; II Կոր. 1:23; 11:31; Փիլ. 1:8; I Թեա. 2:5,10): Սա իր ուսմունքների և քարոզչության ճշմարիտությունը պնդելու կերպն էր:

«Իմ խղճնտանքն էլ» Սա վերաբերում է հավատացյալի Աստծուց տրված, Հոգով առաջնորդված քարոյական զգացմունքին: Որոշակի իմաստով սա հեղինակության բանալի աղբյուրն է հավատացյալների համար: Դա Աստծո խոսքն է, հասկացված և կիրառված մեր մտքերին Աստծո Հոգու կողմից (հմմտ. I Տիմ. 1:5,19): Խնդիրը ծագում է, երբ հավատացյալները և նաև անհավատները շարունակում են մերժել Խոսքը և Հոգուն; այդ ժամ այն դառնում է ավելի հեշտ բացատրություն գտնել իր մեղքի համար (հմմտ. I Տիմ. 2:14-16; 4:2): Մեր խիղճը ունակ է ենթարկվելու մշակույթային առանձնահատկություններին և կյանքի գործնական փորձառության ազդեցությանը:

Արևելահայերեն «վկայում է ինձ Սուրբ Հոգով»
Արևմտահայերեն « կվկայե ինձ Սուրբ Հոգիով»

NASB, NKJV “bearing me witness in the Holy Spirit”
NRSV “confirms it by the Holy Spirit”
TEV “ruled by the Holy Spirit”
JB “in union with the Holy Spirit assumes me”

Պողոսը հավատում էր, որ ինքն ուներ հատուկ կանչ և հանձնարարություն Քրիստոսից (հմմտ. Գործք 9:1-22; Գաղ. 1:1): Նա Առաքյալ էր և խոսեց աստվածային իշխանությամբ (հմմտ. I Կոր. 7:25,40): Նա կիսեց Աստծո տիրությունը կապված Իսրայել ազգի անհավատության և անհնազանդության հետ (հմմտ. հ. 2): Նրանք ունեին այնքան շատ առանձնաշնորհներ (հմմտ. հհ. 4-5):

Պողոսը հաստատում է երեք պատճառ, թե ինչու ինքը հավատաց, որ ինքը խոսեց ճշմարտությունը

1. նրա միությունը Քրիստոսի հետ
2. նրա խիղճը
3. նրա Հոգով առաջնորդված հասկացողությունը (հմմտ. 8:14,16)

Արևելահայերեն «Որ կխնդրեի՝ ես ինքս»
Արևմտահայերեն «Քանզի ես ինքս կփափաքեի»

9:3

NASB, NKJV,

NRSV

“For I could wish . . .”

TEV

“For their sake I could wish”

JB

“I would be willing . . .”

Պողոսն այնքան խորը և սրտանց ցավում էր իր Իսրայել ժողովրդի համար, որ եթե նրա բաժանումը Քրիստոսից կնպաստեր Իսրայելի փրկությանը, ապա նա պատրաստ էր գնալ այդ քայլին, հ. 3: Այս համարն ունի ուժեղ, ընդգծված, շեշտադրված քերականական կառուցվածք (ԱՆԿԱՏԱՐ ԺԱՍԱՆԱԿ ՉԵՁՈՔ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ օգտագործված թե *autos* և *egō*, և ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ԻՆՖԻՆԻՏԻՎ): Այս աղոթքի լարվածությունն ու բեռը շատ նման է Մովսեսի բարեխոսական աղոթքին՝ մեղավոր Իսրայելի համար, Ելից 32:30-35: Սա լավագույն ձևն է հասկանալ որպես փափագ, ցանկություն, և ոչ թե որպես փաստ: Նմանապես Գաղ. 4:20 օգտագործված է ԱՆԿԱՏԱՐ ԺԱՍԱՆԱԿԻ քերականական ձևը: Ստորև տես հատուկ թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԱՂՈԹՔ

I. Ներածություն

- Ա. Հիսուս Քրիստոսը ցույց տվեց հսկայական աղոթքի կարևորություն Իր իսկ օրինակով
 - 1. անձնական աղոթք, Մարկ. 1:35; Դուկ. 3:21; 6:12; 9:29; 22:29-46
 - 2. տաճարի մաքրումը, Մաթ. 21:13; Մարկ. 11:17; Դուկ. 19:46
 - 3. աղոթքի օրինակ, Մաթ. 6:5-13; Դուկ. 11:2-4
- Բ. Աղոթքը դա հնարավորություն է մեզ համար արտահայտել հստակ գործողությամբ մեր հավատքը, հոգատար Աստծո անձի հանդեպ, որը ներկա է, պատրաստ է և կարող է գործել ի օգուտ մեզ և ուրիշ հավատացյալների:
- Գ. Աստված Ինքը որոշակի ձևով սահմանափակել է Իրեն, որպեսզի գործի շատ հարցերում և դեպքերում հատկապես Իր զավակների աղոթքներում (հմմտ. Հակոբոս 4:2):
- Դ. Աղոթքի գլխավոր նպատակը դա Եռյակ Աստծո հետ հաղորդակցվել և ժամանակ անցկացնել է:
- Ե. Աղոթքի առարկան ինչ որ բան կամ ինչ որ մեկն է, որը վերբերում և մտահոգում է հավատացյալներին: Մենք կարող ենք հավատքով մեկ անգամ աղոթել, կամ էլ կարող ենք աղոթել կրկին անգամներ երբ մտքերը և մտահոգությունները վերադառնում են:
- Զ. Աղոթքը կարող է ներգրավել մի քանի տարրեր
 - 1. փառաբանություն և երկրպագություն Եռյակ Աստծուն
 - 2. Գոհություն Աստծուն Իր ներկայության, հաղորդակցության և մեր կարիքները հոգալու համար
 - 3. մեր մեղքերի խոստովանություն, թե անցյալի և թե ներկայի
 - 4. խնդրանք մեր կարիքների կամ փափագների համար
 - 5. բարեխոսություն ուրիշի կարիքների համար Հոր Աստծո մոտ
- Է. Բարեխոսական աղոթքը գաղտնիք է: Աստված ավելի շատ է սիրում նրանց, ում համար մենք աղոթում ենք քան մենք, բայց և այնպես մեր աղոթքները հաճախ ենթարկվում են փոփոխության, արձագանքի, կամ կարիքի, ոչ միայն մեր այլ նաև նրանցն էլ:

II. Աստվածաշնչյան նյութ

- Ա. Հին Կտակարան
 - 1. Բարեխոսական աղոթքի օրինակներ
 - ա. Աբրահամը բարեխոսում է Սողոմի համար, Ծննդ. 18:22-ից
 - բ. Մովսեսի աղոթքները Իսրայելի համար
 - (1) Ելից 5:22-23
 - (2) Ելից 32:31-ից
 - (3) 2 Օրինաց 5:5

- (4) 2 Օրինաց 9:18,25-ից
 - զ. Սամուելի աղոթքները Իսրայելի համար
 - (1) I Թագ. 7:5-6,8-9
 - (2) I Թագ. 12:16-23
 - (3) I Թագ. 15:11
 - դ. Դավիթը աղոթեց իր որդու համար, II Թագ. 12:16-18
 - 2. Աստված փնտրում է բարեխոսողների, Եսայի 59:16
 - 3. Հայտնի, չխոստովանված մեղքը կամ չապաշխարած վիճակը ազդում է մեր աղոթքների վրա
 - ա. Սաղմոս 66:1
 - բ. Առակաց28:9
 - գ. Եսայի 59:1-2; 64:7
- Բ. Նոր Կտակարան
- 1. Որդու և Սուրբ Հոգու բարեխոսական ծառայությունը
 - ա. Հիսուս
 - (1) Հռոմեացիս 8:34
 - (2) Եբրայեցիս 7:25
 - (3) I Հովհ. 2:1
 - բ. Սուրբ Հոգի, Հռոմեացիս 8:26-27
 - 2. Պողոսի բարեխոսական ծառայությունը
 - ա. Աղոթում է հրեաների համար
 - (1) Հռոմեացիս 9:1-ից
 - (2) Հռոմեացիս 10:1
 - բ. Աղոթք եկեղեցիների համար
 - (1) Հռոմեացիս 1:9
 - (2) Եփեսացիս 1:16
 - (3) Փիլիպեցիս 1:3-4,9
 - (4) Կողոսացիս 1:3,9
 - (5) I Թեսաղ. 1:2-3
 - (6) II Թեսաղ. 1:11
 - (7) II Տիմոթեոս 1:3
 - (8) Փիլեմոն, հ. 4
 - գ. Պողոսը խնդրում է եկեղեցիներին աղոթել իր համար
 - (1) Հռոմեացիս 15:30
 - (2) II Կորնթացիս 1:11
 - (3) Եփեսացիս 6:19
 - (4) Կողոսացիս 4:3
 - (5) I Թեսաղ. 5:25
 - (6) II Թեսաղ. 3:1
 - 3. Եկեղեցու բարեխոսական ծառայությունը
 - ա. Աղոթք միմյանց համար
 - (1) Եփեսացիս 6:18
 - (2) I Տիմոթեոս 2:1
 - (3) Հակոբոս 5:16
 - բ. Աղոթքի խնդրանքներ հատուկ խմբերի համար
 - (1) մեր թշնամիների, Մաթ. 5:44
 - (2) քրիստոնյա ծառայողների, Եբր. 13:18
 - (3) իշխանավորների, I Տիմ. 2:2

(4) հիվանդների, Հակ. 5:13-16

(5) հավատքից ընկածների, I Հովհ. 5:16

գ. Աղոթք բոլոր մարդկանց համար, I Տիմ. 2:1

III. Պայմաններ պատասխանված աղոթքի

Ա. Մեր հարաբերությունը Քրիստոսի և Սուրբ Հոգու հետ

1. Նրա մեջ մնալով, Հովհ. 15:7

2. Նրա անունով, Հովհ. 14:13,14; 15:16; 16:23-24

3. Հոգով, Եփ. 6:18; Հուդա 20

4. Համաձայն Աստծո կամքի, Մաթ. 6:10; I Հովհ. 3:22; 5:14-15

Բ. Մղոլ շարժառիթները

1. չտատանվելով, Մաթ. 21:22; Հակ. 1:6-7

2. Խոնարհություն և ապաշխարություն, Գուկ. 18:9-14

3. Չար կերպով խնդրել, Հակ. 4:3

4. Եսասիրություն, Հակ. 4:2-3

Գ. Ուրիշ առանձնահատկություններ

1. Համառություն, համբերատարություն

ա. Գուկաս 18:1-8

բ. Կողոսացիս 4:2

գ. Հակոբոս 5:16

2. Շարունակել աղոթել

ա. Մաթևոս 7:7-8

բ. Գուկաս 11:5-13

գ. Հակոբոս 1:5

3. Անհամերաշխություն ընտանիքում, I Պետրոս 3:7

4. Հայտնի մեղքի բացակայություն

ա. Սաղմոս 66:18

բ. Առակաց 28:9

գ. Եսայի 59:1-2

դ. Եսայի 64:7

IV. Աստվածաբանական եզրակացություն

Ա. Ինչպիսի առանձնաշնորհում: Ինչպիսի հնարավորություն: Ինչպիսի պարտավորություն և պատասխանատվություն:

Բ. Հիսուսը մեր օրինակն է: Սուրբ Հոգին մեր ուղեկցորդն է: Հայրը մեզ անհամբեր սպասում է:

Գ. Այն կարող է փոխել քեզ, քո ընտանիքը, քո ընկերներին և աշխարհը:

Արևելահայերեն «նզովուած լինիլ Քրիստոսիցն»

Արևմտահայերեն «նզովուիլ Քրիստոսէն»



NASB “were accursed, *separated* from Christ”

NKJV “were accursed from Christ”

NRSV “were accursed and cut off from Christ”

TEV “were under God’s curse and separated from Christ”

JB “willingly be condemned and cut off from Christ”

«Սուրբ» բառի ստուգաբանությունը հիմնականում նշանակում է «առանձնացված Աստծո համար, Իր կողմից օգտագործվելու համար»: Այդ նույն գաղափարը գտնվում է այս տերմինների մեջ էլ «անեծք, նզովք, հայիոյանք, վիրավորանք»: Ինչ որ բան կամ ինչ որ մեկը առանձնանալ

Աստծո համար: Այդ բաժանումը կարող է լինել թե դրական իմաստով (հմմտ. Ղև. 27:28; Ղուկ. 21:5) և թե բացասական (հմմտ. Հեսու 6-7; Հռ. 9:3), կախված կոնտեքստից:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆԵԾՔ (ANATHEMA)

Հին եբրայերենում «անեծք» բառի համար կան մի քանի բառեր: *Herem* բառը օգտագործվում էր ինչ որ բան տրված Աստծուն (հմմտ. LXX ինչպես anathema, Ղև. 27:28), սովորաբար կործանման համար (հմմտ. 2 Օրին. 7:26; Հեսու 6:17-18; 17:12): Այն օգտագործվում էր «սուրբ պատերազմ» գաղափարի մեջ: Աստված պատվիրեց կործանել և վերացնել քանանացիներին, և Երիքովը սկիզբն էր «առաջին պտուղները»՝ իսրայելացիների առաջին հնարավորությունը:

Նոր Կտակարանում *anathema* և այս բառից առաջացած ձևերը օգտագործվում էին մի քանի տարբեր իմաստներով.

1. որպես ընծա կամ պատարագ Աստծուն (հմմտ. Ղուկ. 21:5)
2. որպես նզովք, երդում (հմմտ. Գործք 23:14)
3. անիծել և երդվել (հմմտ. Մարկ. 14:71)
4. անեծք Հիսուսի հասցեին (հմմտ. I Կոր. 12:3)
5. ինչ որ բան կամ ինչ որ մեկին հանձնել Աստծո դատաստանին կամ կործանմանը (հմմտ. Հռ. 9:3; I Կոր. 16:22; Գաղ. 1:8-9):

9:4-5 Այս համարներում գոյություն ունեցող ԳՈՅԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ շարքը ակնհայտ է և մանրակրկիտ շարադրում է այն արտոնությունները, որն ուներ Իսրայելը: Այս առավելությունների լույսի ներքո իսրայել ազգի անհավատությունը ավելի շատ քննադատության է արժանի: Ում շատ է տրվում, նրանից շատ է պահանջվում (հմմտ. Ղուկ. 12:48):

9:4 «Իսրայելացի» Սա Հին Կտակարանի անունն էր Աբրահամի սերնդի համար: Հակոբի անունը Աստծո հետ գլխավոր հանդիպումն ունենալուց հետո փոխվեց Իսրայել (հմմտ. Ծննդ. 32:28): Այն դարձավ հրեա ազգի հավաքական անունը: Այս բառի ստուգաբանությունը, հնարավոր է, տալիս է հետևյալ իմաստը «թող *El* (Աստված) համառությամբ պայքարի» և չի ենթադրվում ոչ մի խաբեբայություն Հակոբի կողմից:

«որոնցն է որդեգրությունը որպես որդիներ» Հին Կտակարանում «որդիներ» բառի ՀՈԳՆԱԿԻՆ սովորաբար վերաբերում էր հրեշտակներին (հմմտ. Հոր 1:6; 2:1; 38:7; Գան. 3:25; Սաղ. 29:1; 89:6-7), իսկ ԵԶԱԿԻՆ վերաբերում էր:

1. Իսրայելի թագավոր (հմմտ. II Թագ. 7:14)
2. իսրայել ազգը (հմմտ. Ել. 4:22,23; 2 Օրին. 14:1; Ովսիա 11:1)
3. Մեսիան (հմմտ. Սաղ. 2:7)
4. այն կարող է վերաբերվել մարդկանց (հմմտ. 2 Օրին. 32:5; Սաղ. 73:15; Եզ. 2:1; Ովս. 1:10. Ծննդ. 6:2 անորոշ է, այն կարող է ունենալ երկու մեկնություն): Նոր Կտակարանում այն վերաբերում է մեկին, ով պատկանում է Աստծո ընտանիքին:

Փրկությունը նկարագրելու համար Պողոսն օգտագործում էր «որդեգրություն» տերմին փոխաբերությունը, իսկ Պետրոսն ու Հովհաննեսը՝ «վերստին ծնունդ» արտահայտությունը: Սրանք երկուսն էլ ընտանեկան փոխաբերություններ են: Այն հրեական չէ, այլ հռոմեական փոխաբերություն է: Որդեգրությունը շատ թանկարժեք և ժամանակատար իրավական գործընթաց է: Մեկ անգամ որդեգրված մարդը համարվում էր նոր անձ, և նրան որդեգրած հայրը չէր կարող օրինականորեն հրաժարվել կամ սպանել նրան:

«փառքը» Այս բառի հին եբրայերեն արմատը նշանակում էր «լինել ծանր», որը դարձավ փոխաբերություն այն ամենի համար ինչը թանկ էր գնահատվում: Այստեղ այն վերաբերում է (1) Աստված հայտնում է Իրեն Սինա լեռան վրա (հմմտ. Ելից 19:18-19); կամ (2) փառքը ամպի տեսքով

(*Shekinah*) առաջնորդեց իսրայելացիներին անապատում թափառելու ժամանակ (հմմտ. Ելից 40:34-38): ՅԵՀՈՎԱՆ Իրեն հայտնեց եզակի կերպով Իսրայելին: ՅԵՀՈՎԱ-յի ներկայությունը նաև նշանակում էր Նրա փառքը (հմմտ. 3 Թագ. 8:10-11; Եզ. 1:28): Տես հատուկ թեմա 3:23.

«**ուխտերը**» Հին հունարեն ձեռագրերում P⁴⁶, B, և D «ուխտ» բառը օգտագործված է ԵԶԱԿԻ ԹՎՈՎ: Ինչևէ, ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ այն հանդես է գալիս MSS X, C, և մի քանի հին լատինական ձեռագրերում, Վուլգատում և Ղպտի տարբերակներում: UBS⁴ կազմողները ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ տարբերակը գնահատում են որպես «B» կատեգորիա (գրեթե հուսալի): Հին Կտակարանում այս բառը ոչ մի տեղ չի հանդիպում ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ: Հին Կտակարանում կան մի քանի յուրահատուկ ուխտեր՝ Ադամ, Նոյ, Աբրահամ, Մովսես, և Դավիթ: Քանի որ Օրենքի տալը նշվում է հաջորդում, հավանական է սա վերաբերում է Աբրահամին տրված ուխտին, որը Պողոսի համար հիմնական էր և հիմք հանդիսացող (հմմտ. 4:1-25; Գաղ. 3:16-17) և մի քանի անգամ կրկնվեց (հմմտ. Ծննդ. 12, 15, 17) և նախահայրերից յուրաքանչյուրի հետ կապեց:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒՒՏ

Հին Կտակարանյան *berith* «ուխտ» տերմինը հեշտ չէ սահմանում տալ: Իրեն համապատասխան ԲԱՅ եբրայերենում չկա: Բոլոր ջանքերը ստուգաբանական սահմանում տալու ոչ համոզիչ եղան: Ինչևէ, ակնհայտ գաղափարի բացառիկ կարևորությունը պարտադրեց գիտնականներին հետազոտել, ուսումնասիրել բառի կիրառությունը՝ դրա ֆունկցիոնալ իմաստը սահմանելու նպատակով:

Ուխտը դա միջոց է, որի օգնությամբ միակ ճշմարիտ Աստվածը փոխհարաբերություն է ստեղծում Իր ստեղծած մարդկության հետ: Ուխտի գաղափարը, պայմանագիրը կամ համաձանությունը կարևոր է աստվածաշնչյան հայտնությունը հասկանալու մեջ: Կոնֆլիկտը, լարվածությունը Աստծո սուվերենության և մարդու ազատ կամքի միջև հստակ երևում է ուխտի գաղափարի մեջ:

Որոշ ուխտեր հիմնված են Աստծո կերպարի, գործողությունների և նպատակների վրա:

1. ինքնին արարչագործությունը (հմմտ. Ծննդ. 1-2)
2. Աբրահամի կանչը (հմմտ. Ծննդ. 12)
3. ուխտը Աբրահամի հետ (հմմտ. Ծննդ. 15)
4. կենդանի պահելը և խոստումը Նոյին (հմմտ. Ծննդ. 6-9)

Ինչևէ, ուխտի բնությունը պահանջում է արձագանք

1. հավատքով Ադամը պետք է հնազանդվեր Աստծուն և չուտեր Եդեմի պարտեզի մեջտեղի ծառից (հմմտ. Ծննդ. 2)
2. հավատքով Աբրահամը պետք է լքեր իր ընտանիքը, հետևեր Աստծուն և հավատար գալիք սերունդներին (հմմտ. Ծննդ. 12,15)
3. հավատքով Նոյը պետք է կառուցեր հսկայական նավը ջրից հեռու և հավաքեր կենդանիներին (հմմտ. Ծննդ. 6-9)
4. հավատքով Մովսեսը իսրայելացիներին հանեց Եգիպտոսից և ստացավ հատուկ առաջնորդության սկզբունքներ կրոնական և սոցիալական կյանքի համար՝ օրհնությունների և անեծքների խոստումներով (հմմտ. 2 Օրին. 27-28)

Այս նույն լարվածությունը, ներքին կոնֆլիկտը կապված Աստծո և մարդկության փոխհարաբերությունների հետ հանդիպում է նաև «նոր ուխտի» մեջ: Լարվածությունը հստակ կարելի է տեսնել համեմատելով Եզեկ. 18-ը Եզեկ. 36:27-37-ի հետ: Ուրեմն ինչի՞ վրա է հիմնված ուխտը՝ Աստծո շնորհքի գործողությունների թե՞ մարդու արձագանքի պատասխանատվության վրա: Սա էական հարց էր թե Հին և թե Նոր Կտակարաններում: Երկուսի նպատակներն էլ նույնն են: (1) Ծննդ. 3-ում կորցրած հարաբերության վերականգնում և (2) արդար մարդկանց հիմնում, ովքեր արտացոլում են Աստծո կերպարը:

Եր. 31:31-34-ի նոր ուխտը լուծում է այս խնդիրը հեռացնելով մարդու գործերը, որպես Աստծո կողմից ընդունվելու միջոց: Աստծո օրենքը դառնում է ճշմարիտ և ուժեղ ներքին ցանկություն արտաքին կատարման փոխարեն: Բարեպաշտ, արդար մարդկանց նպատակը մնում է նույնը, բայց մեթոդաբանությունը փոխվում է: Մեղավոր մարդկությունը համոզվեց Աստծո պատկերը անդրադարձնելու իր անկարողության մեջ (հմմտ. Հռ. 3:9-18): Խնդիրը ուխտը չէր, այլ մարդու մեղավորությունն ու տկարությունը (հմմտ. Հռ. 7; Գաղ. 3):

Նույն լարվածությունը հինկտակարանյան պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև մնում է նաև Նոր Կտակարանում: Փրկությունը բացարձակ ձրի է Հիսուս Քրիստոսի ավարտած գործի շնորհիվ, բայց այն պահանջում է ապաշխարություն և հավատք (թե սկզբնական քայլի դեպքում և թե շարունակաբար, ամբողջ կյանքի ընթացքում): Սա թե օրինականորեն ձեռք բերած կարգավիճակ է, և թե քրիստոսանման լինելու կանչ, թե Աստծո կողմից ընդունված լինելու հաստատ պնդում, և թե սրբության կյանք վարելու հրաման: Հավատացյալները չեն փրկվում իրենց գործերով, այլ կանչված են հնազանդ կյանք ապրելու (հմմտ. Եփ. 2:8-10): Աստվածահաճո կյանքը փրկության ապագույցն է, և ոչ թե փրկության միջոցը:

«օրինադրութիւնը եւ պաշտօնը» Սա կարող է վերաբերել (1) երբ Մովսեսը Օրենքը ստացավ Սինա լեռան վրա (հմմտ. Ելից 19-20) և երբ Դավիթը կատարեց Տաճարի ծառայությունը, պաշտոնը, կամ (2) հնարավոր է խորանը՝ անապատում թափառելու ժամանակ (հմմտ. Ելից 25-40 և Ղևտացոց):

«եւ խոստումները» Հին Կտակարանի միջոցով Աստված հայտնել է Իր ապագայի պլանները (հմմտ. 1:2; Գործք 13:32; Տիտոս 1:2; Եբր. 1:1):

Քանի որ «ուխտերը» տեքստում նշվում են և ավելի շուտ, ապա «խոստումները» հավանական է վերաբերում է Մեսիային (այն է, Ծննդ. 3:15; 49:10; 2 Օրին. 18:15,18-19; II Թագ. 7; Սաղ. 16:10,22; 118:22; Ես. 7:14; 9:6; 11:1-5; Գան. 7:13,27; Միքիա 5:2-5ա; Չաք. 2:6-13; 6:12-13; 9:9; 11:12):

Այս խոստումները (ուխտերը) թե անպայմանական են և թե պայմանական: Նրանք անպայմանական էին միայն այն առումով, ինչ Աստված արեց (հմմտ. Ծննդ. 15:12-21), բայց պայմանական մարդու հավատքի և հնազանդության պայմանով (հմմտ. Ծննդ. 15:6 և Հռ. 4): Միայն Իսրայելն ուներ Աստծո հայտնությունը մինչև Քրիստոսի գալը:

9:5 «հայրերը» Սա վերաբերում էր Աբրահամին, Իսահակին և Հակոբին, Ծննդ. 12-50 նախահայրերը (հմմտ. Հռ. 11:28; 2 Օրին. 7:8; 10:15):

«որոնցից է Քրիստոսը մարմնի կողմանէ» Սա վերաբերվում էր ֆիզիկական ծագումնաբանությանը, սերնդաբանությանը Մեսիայի, Օծյալի, Աստծո հատուկ ընտրյալ ծառային, որը կարողացավ իրականացնել Աստծո խոստումներն ու ծրագրերը (հմմտ. 10:6):

«Քրիստոս» տերմինը հունարեն թարգմանությունն է եբրայերեն «Օծյալ» բառի: Հին Կտակարանում երեք խմբի առաջնորդներն էին օժվում հատուկ սուրբ յուղով (1) Իսրայելի թագավորները, (2) Իսրայելի քահանայապետերը և (3) Իսրայելի մարգարեները: Այն Աստծո նրանց ընտրելու և սպառազինելու խորհրդանիշն էր՝ Իր ծառայության համար: Հիսուսը կատարեց այս բոլոր երեք օծյալ պաշտոնները (հմմտ. Եբր. 1:2-3): Նա Աստծո ամբողջական հայտնությունն է, որովհետև Նա Աստված էր մարմնացած (հմմտ. Ես. 7:14; 9:6; Միքիա 5:2-5ա; Կող. 1:13-20):

Արևելահայերեն « Քրիստոսը մարմնի կողմանէ, որ է ամենի վերայ Աստուած, օրհնեալ յաիտեանս»

Արևմտահայերեն «Քրիստոս ալ իրենցմէ եկաւ մարմնի կողմանէ, որ ինքը օրհնեալ Աստուած է ամենուն վերայ յաիտեանս»



- NASB** “the Christ according to the flesh, who is over all, God blessed forever”
- NKJV** “Christ came, who is over all, the eternally blessed God”
- NRSV** “comes the Messiah, who is over all, God blessed forever”
- TEV** “and Christ as a human being, belongs to their race. May God, who rules over all, be praised forever”
- JB** “came Christ who is above all, God for ever blessed”

Քերականորեն սա կարող էր լինել փառաբանություն Հորը (TEV), բայց տեքստն ասում է ի օգուտ այն բանի, որ Պողոսն այս խոսքերով պնդում է Քրիստոսի աստվածությունը: Պողոսը ոչ հաճախ, բայց և այնպես օգտագործում է «Աստված» բառը (*Theos*) Հիսուսի համար (հմմտ. Գործք 20:28; Տիտոս 2:13; Փիլ. 2:6): Վաղ եկեղեցու բոլոր հայրերը այս տեքստը մեկնաբանել են հենց Հիսուսի վերաբերյալ:

«որ է ամենի վերայ» Այս արտահայտությունը նաև կարող էր նկարագրել ինչպես Հոր Աստծուն, այնպես էլ Որդի Աստծուն: Այն արտացոլում է Հիսուսի պնդումը Մաթ. 28:19 և Պողոսի խոսքը Կոր. 1:15-20: Այս վեհասքանչ արտահայտությունը ցույց էր տալիս, թե որքան մեծ էր Իսրայելի անմտությունը Հիսուս Նազովրեցուն մերժելու մեջ:

«յալիտեանս» Բառացի նշանակությունը այս բառի համապատասխանում է հունարեն իդիոմատիկ արտահայտությանը « դեպի դարեր» (հմմտ. Ղուկ. 1:33; Հն. 1:25; 11:36; Գաղ. 1:5; I Տիմ. 1:17): Սա մի քանի կապակցված արտահայտություններից մեկն է (1) «ի դար» (հմմտ. Մաթ. 21:19 {Մարկ. 11:14}; Ղուկ. 1:55; Հովհ. 6:5,58; 8:35; 12:34; 12:8; 14:16; II Կոր. 9:9) կամ «դարերից դար» (հմմտ. Եփ. 3:21): Թվում է, թե տարբերություն չկա այս իդիոմաների միջև, որ նշանակում են «հավիտյան»: «Դարեր» տերմինը կարող է լինել ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ պատկերավոր իմաստով ռաբինական քերականական կառուցվածքի համաձայն, որը կոչվում է «մեծափառության հոգնակիությունը» կամ այն կարող է վերաբերել մի քանի «դար, ժամանակ, դարաշրջան» գաղափարների, հրեական իմաստով «մաքրման կամ անմեղության շրջան», «անօրենության դար», «գալիք դարաշրջան» կամ « արդարության դար»:

«ամեն» Տես Հատուկ Թեմա 1:25.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9: 6-13

⁶Բայց ոչ իբր թէ Աստուծոյ խօսքը գետինն է ընկել. որովհետեւ ոչ թէ ամենքը որ Իսրայելիցն են՝ նորանք են Իսրայելը: ⁷Եւ ոչ թէ նորանք որովհետեւ Աբրահամի սերունդ են, ամենքը որդիք են. այլ Իսահակով քեզ համար սերունդ պիտի կոչուի: ⁸Այսինքն՝ ոչ թէ մարմնի որդիք են Աստուծոյ որդիք. այլ խոստման որդիք են սերունդ համարվում: ⁹Որովհետեւ խոստման խօսքը սա է. թէ Այս ժամանակումը կգամ եւ Սառային որդի կլինի: ¹⁰Եւ ոչ միայն այսքան. բայց Ռեբեկան էլ որ մէկից յղացաւ՝ մեր հայր Իսահակիցը. ¹¹Քանզի նորանք տակաւին չճնուած, եւ մի բարի կամ չար բան էլ չգործած, որպէս զի ընտրութեան պէս Աստուծոյ նախասահմանութիւնը հաստատ մնայ, ¹²Ոչ թէ գործերիցն՝ այլ կանչողիցը, ասուեցաւ նորան. ¹³Թէ մեծը պիտի ծառայէ փոքրին. ինչպէս գրուած է, Յակոբին սիրեցի, եւ Եսաւին ատեցի:

NASB (UPDATED) TEXT: 9:6-13

⁶But it is not as though the word of God has failed. For they are not all Israel who are *descended* from Israel; ⁷nor are they all children because they are Abraham’s descendants, but: “THROUGH ISAAC YOUR DESCENDANTS WILL BE NAMED.” ⁸That is, it is not the children of the flesh who are

children of God, but the children of the promise are regarded as descendants. ⁹For this is the word of promise: “AT THIS TIME I WILL COME, AND SARAH SHALL HAVE A SON.” ¹⁰And not only this, but there was Rebekah also, when she had conceived *twins* by one man, our father Isaac; ¹¹for though *the twins* were not yet born and had not done anything good or bad, so that God’s purpose according to *His* choice would stand, not because of works but because of Him who calls, ¹²it was said to her, “THE OLDER WILL SERVE THE YOUNGER.” ¹³Just as it is written, “JACOB I LOVED, BUT ESAU I HATED.”

9:6 «Աստուծոյ խօսքը» Այս կոնտեքստում այս արտահայտությունը վերաբերում է Հին Կտակարանի խոստումներին: Աստծո խոստումները վստահելի են և հաստատ (հմմտ. Թվ. 23:19; Ես. 40:8; 55:11; 59:21):

Արևելահայերեն «գետինն է ընկել»
Արևմտահայերեն «երբեք գետին ինկած չէ»

□

NASB, NRSV,
TEV, JB “has failed”
NKJV “has taken no effect”

Այս տերմինը (*ekpiptō*) օգտագործված է Սեպտուագիդի մեջ մի քանի անգամ ինչ որ մի քանի (հմմտ. Ես. 6:13) կամ ինչ որ մեկի (հմմտ. Ես. 14:12) անկում կամ ընկնելը: Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, որը նշանակում է ընթացիկ վիճակ երկարատև արդյունքներով (բայց այն ժխտվում է): Աստծո խոսքի հաստատ և վստահելի լինելու համար, նայեք ծանուցումը վերևում:

Արևելահայերեն «որովհետև ոչ թե ամենքը որ Իսրայելիցն են՝ նորանք են Իսրայելը»
Արևմտահայերեն «քանզի ոչ թե ամեն անոնք որ Իսրայելէն են՝ Իսրայելացի են»

□

NASB “For they are not all Israel who are descended from Israel”
NKJV “For they are not all Israel who are of Israel”
NRSV “For not all Israelites truly belong to Israel”
TEV “For not all the people of Israel are the people of God”
JB “Not all those who descend from Israel are Israel”

Այս պարաֆրասալ պնդման իմաստն այն է, որ դրա հիմքում ընկած են մի քանի տարբեր աստվածաշնչյան իմաստներ «Իսրայել» բառի (1) Իսրայել, որպես Հակոբի սերունդներ (հմմտ. Ծննդ. 32:22-32); (2) Իսրայել, որպես Աստծո ընտրյալ ժողովուրդ (հմմտ. TEV); կամ (3) հոգևոր Իսրայել, որպես եկեղեցի (հմմտ. Գաղ. 6:16; I Պետ. 2:8,9; Հայտ. 1:6) ի տարբերություն իսկական բուն Իսրայելի (հմմտ. հհ. 3-6): Նույնիսկ հրեաները երբեք ուղիղ չէին Աստծո հետ իրենց ծագումնաբանության պատճառով (հմմտ. հ. 7), բայց շնորհիվ իրենց հավատքի (հմմտ. 2:28-29; 4:1; Հովհ. 8:31-59; Գաղ. 3:7-9; 4:23): Դա հավատացյալ մնացորդն էր, որ ստացավ Աստծո խոստումներն ու քայլեց համաձայն դրանց՝ հավատքով (հմմտ. 9:27; 11:5):

Համար 6-ը սկսում է մի շարք ենթադրյալ մերժումներ (հմմտ. 9:14,19,30; 11:1): Սա շարունակում է Պողոսի քննադատական ձևը: Դժմարտությունը փոխանցում է ենթադրյալ հակառակորդին դիմելով (հմմտ. Սաղ. 1:2,6,7 [երկու անգամ],12,13; 2:14,17 [երկու անգամ]; 3:7,13,14):

9:7 Այս համարի երկրորդ կեսը մեջբերում է Ծննդոց 21:12-ից: Աբրահամի ոչ բոլոր զավակներն էին Աստծո ուխտի խոստման զավակները (հմմտ. Ծննդ. 12:1-3; 15:1-11; 17:1-21; 18:1-15; Գաղ. 4:23):

Սա ցույց է տալիս տարբերությունը Իսմայելի և Իսահակի միջև հհ. 8-9, և Հակոբի և Եսավի հհ. 10-11:

9:8 Այստեղ Պողոսը օգտագործում է «մարմին» տերմինը վերաբերում է ազգային ծագմանը (հմմտ. 1:3; 4:1; 9:3,5): Նա հակադրում է Աբրահամի բիոլոգիական զավակներին (հրեաները 9:3) հոգևոր զավակների հետ (խոստման զավակները) Աբրահամի (նրանք ովքեր կվստահեն Աստծո խոստացյալ Մեսիային հավատքով): Սա նույն հակադրությունը չէ ինչ 8:4-11-ում, որտեղ համեմատվում է մարդկությունը ընկած և փրկված:

9:9 Այս մեջբերումը Ծննդոց 18:10,14-ից է: Խոստացյալ երեխան («սերունդը») կծնվի Սառայից Աստծո նախաձեռնությամբ: Սա իվերջո գազաթնակետին կհասնի Մեսիան ծնվելու ժամանակ: Իսահակը հատուկ իրականացումն էր Աստծո խոստման Ծննդ. 12:1-3, որը Աբրահամին տրվեց տասներեք տարի առաջ:

9:10 Աբրահամի, Իսահակի և Հակոբի կանայք ամուլ էին, նրանք չէին կարողանում հղիանալ: Նրանց երեխա ունենալու անկարողությունը Աստծո կերպերից մեկն էր, ցույց տալու համար, որ Նա էր հսկում ուխտի խոստումները, Մեսիական սերնդաբանությունը:

Մյուս կերպն այն էր, որ ճշմարիտ մեսիական շառավիղը երբեք չի փոխանցվում □ախահայրերի ավագ որդու միջոցով (որը մշակույթորեն ընդունված էր): Բանալին Աստծո ընտրությունն է (հմմտ. հհ. 11-12):

9:11-12 Համարներ 11-12-ը հունարենում մեկ նախադասություն են: Այս միտքը վերցված է Ծննդ. 25:19-34-ից: Այս օրինակը օգտագործվում է ապացուցելու համար, որ Աստծո ընտրությունը (հմմտ. հ. 16), ոչ (1) մարդկային ծագումով է և ոչ էլ (2) մարդկային վաստակով կամ նվաճումներով է (հմմտ. հ. 16): Սա ավետարանի սիրտն է, նոր ուխտը (հմմտ. Եր. 31:31-34; Եզեկ. 36:22-36): Ինչևէ, պետք է հիշել, որ Աստծո ընտրությունը նշանակում էր ոչ թե հեռացնել այլ ընդհակառակը՝ միավորել: Մեսիան կգա ընտրված սերնդից, բայց Նա կգա բոլորի համար (ով կհավատա, հմմտ. գլուխ 10):

9:11 «նպատակ» Սա բարդ բառ է, կազմված *pro* և *tithēmi*, և ունի մի քանի իմաստային նշանակություններ;

1. Հն. 3:25
 - ա. բացահայտ, հրապարակավ բացատրել
 - բ. ողորմության, կարեկցանքի ընծա
2. նախօրոք պլանավորել
 - ա. Պողոս, Հն. 1:13
 - բ. Աստված, Եփ. 1:9

Տվյալ տեքստում օգտագործված ԳՈՅԱԿԱՆ (*prothesis*) ձևը նշանակում է « առաջ դնել

1. մոտեցում տաճարում առաջարկված հացի նկատմամբ, Մաթ. 12:4; Մարկ. 2:26; Գուլ. 6:4
2. մոտեցում Աստծո նախասահմանած, փրկարար նպատակի հանդեպ, Հն. 8:28; 9:11; Եփ. 1:5,11; 3:10; II Տիմ. 1:9; 3:10

Պողոսն օգտագործում է մի քանի բարդ տերմիններ *pro* (նախքան, շատ առաջ, վաղուց)

ՆԱԽԴԻՐԻ հետ գլուխ 8 և 9 Հն. և Եփ. 1-ում:

1. *proginōskō* (բայց գիտենք, նախապես իմանալ), Հն. 8:29
2. *proorizō* (առաջուց դրեց, որոշեց), Հն. 8:29 (Եփ. 1:5,11), 30 (Եփ. 1:9)
3. *prothesis* (նախասահմանության նպատակը), Հն. 9:11
4. *proctoimazō* (առաջուց պատրաստեց), Հն. 9:23
5. *prolegō* (առաջուց ասաց), Հն. 9:29

6. *proclpizō* (առաջուց հուսացել ենք), Եփ. 1:12)

9:12 Այս մեջբերումը Ծննդ. 25:23-ի մարգարեությունից է կապված Եսայի և Հակոբի հետ: Սա ցույց է տալիս, որ Ռեբեկան և Հակոբը մարգարեությունից դուրս գործեցին, ոչ անձնական շահից ելնելով խաբեցին Իսահակին՝ օրհնությունը ստանալու համար:

9:13 «Եւ Եսային ասեցի» Սա մեջբերում է Մաղ. 1:2-3: «Ատել» բառը հին եբրայերեն արտահայտություն է, որը նշանակում է համեմատություն: Անգլերենում այն ունի շատ խիստ իմաստ, բայց համեմատեք Ծննդ. 29:31-33; 2 Օրին. 21:15; Մաթ. 10:37-38; Դուկաս 14:26; և Հովհ.12:25: «Սիրել» և «ատել» մարդակերպային տերմինները կապված չեն Աստծո զգացմունքների հետ դեպի այս անհատները, այլ Նրա վճռականությունը իրականացնելու մեսսիական սերնդաբանությունը և կատարելու Իր խոստումները: Հակոբը խոստացված որդին էր հիմնված Ծննդ. 25:23-ի մարգարեության վրա: Եսայ, Մաղ. 1:2-3-ում, վերաբերվում է Եղովմի ցեղին (Եսայի սերունդը):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9: 14-18

¹⁴ Հիմա ի՞նչ ասենք. մի՞թէ Աստուծոյ մօտ անիրաւութիւն կայ. քաւ լիցի: ¹⁵ Որովհետեւ Մովսէսին ասում է. Կողորմիմ ում որ կողորմիմ, եւ կը գթամ ում որ կգթամ: ¹⁶ Ապա ուրեմն ոչ կամեցողիցն է, եւ ոչ էլ վագողիցը, այլ Աստուածանից որ ողորմում է: ¹⁷ Որովհետեւ գիրքն ասում է Փարաւօնին, թէ հէնց նորա համար գրգռեցի քեզ որ քեզանում ցոյց տամ իմ գորութիւնը եւ իմ անունն ամեն երկրի մէջ պատմուի: ¹⁸ Ապա ուրեմն ում որ կամենում է ողորմում է. եւ ում կամենում է խստացնում է:

NASB (UPDATED) TEXT: 9:14-18

¹⁴What shall we say then? There is no injustice with God, is there? May it never be! ¹⁵For He says to Moses, “I WILL HAVE MERCY ON WHOM I HAVE MERCY, AND I WILL HAVE COMPASSION ON WHOM I HAVE COMPASSION.” ¹⁶So then it *does not depend* on the man who wills or the man who runs, but on God who has mercy. ¹⁷For the Scripture says to Pharaoh, “FOR THIS VERY PURPOSE I RAISED YOU UP, TO DEMONSTRATE MY POWER IN YOU, AND THAT MY NAME MIGHT BE PROCLAIMED THROUGHOUT THE WHOLE EARTH.” ¹⁸So then He has mercy on whom He desires, and He hardens whom He desires.

9:14 «Հիմա ի՞նչ ասենք» Պողոսը հաճախ օգտագործում էր քննադատության այս ձևը (հմմտ. 3:5; 4:1; 6:1; 7:7; 8:31; 9:14,19,30):

«մի՞թէ Աստուծոյ մօտ անիրաւութիւն կայ» Ինչպես կարող է Աստված մարդկանց պատասխանատու պահել, եթե Աստծո գերիշխանությունը վճռորոշ գործոն է (հմմտ. հ. 19): Սա ընտրության առեղծվածն է: Այս կոնտրաստում բանալի պահը հանդիսանում է այն, որ Աստված ազատ է մարդկության հետ անելու այն, ինչ կամենում է (ապստամբ մարդ), ինչևէ, Աստծո գերիշխանությունը արտահայտվում է ողորմության մեջ (տես ծանուցում հ. 15), և ոչ թե բռնի ուժի մեջ:

Նաև հարկ է նշել, որ Աստծո գերիշխան ընտրությունը չի հիմնված մարդու ապագա ընտրությունների և գործողությունների վրա: Եթե դա այդպես լիներ, ապա Աստծո ընտրությունը կհիմնվեր այն բանի վրա, թե ինչպես կվարվեին մարդիկ և ինչ կընտրեին, նրանց արժանիքների և բարեգործության վրա (հմմտ. հ. 16; I Պետ. 1:2): Հենց սրանում էլ հանդիսանում է ազգային հրեական հայացքը արդարության հասնելու ձգտումը (հմմտ. 2 Օրին. 27-28; Հոբ և Մաղ. 73): Սակայն Աստված ընտրում է օրհնել անարժանին հավատքի միջոցով (և ոչ թե գործերի): Աստված

ամեն բան գիտի բայց Նա ընտրել է սահմանափակել Իր ընտրությունները (1) ողորմության և (2) խոստումի մեջ: Այո մարդու արձագանքը Աստծո կանչին անհրաժեշտ պայման է, բայց դրան հետևում է և հաստատում Աստծո ընտրությունն իր կյանքում:

«քառ լիցի» Այս ձևը հազվադեպ է օգտագործվում ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ, որն հաճախ օգտագործվում էր Պողոսի կողմից որպես սուր քննադատություն ի պատասխան իր ենթադրյալ հակառակորդի հարցերին (հմմտ. 3:4,6,31; 6:2,15; 7:7,13; 11:1,11 նաև I Կոր. 6:15; Գաղ. 2:17; 3:21; 6:14):

9:15 Սա մեջբերում է Ելից 33:19: Աստված ազատ է գործելու համաձայն Իր սեփական փրկարար նպատակների: Նույնիսկ Մովսեսը չժառանգեց Աստծո օրհնությունը (հմմտ. Ել. 33:20): Բանալին այն է, որ Իր ընտրությունները ողորմության մեջ է (հմմտ. հհ. 16,18-23; 11:30,31,32):

9:15-16 «ողորմութուն» Այս հունարեն բառը (*eleos*) օգտագործվում է Սեպտուագինի մեջ (LXX) թարգմանելու եբրայերեն *hesed* տերմինը, որը նշանակում է «կայուն, անասան, ուխտի հավատարմություն, օրինապահություն» (հմմտ. հհ. 15,16,18,23; 11:30,31,32): Աստծո ողորմությունն ու ընտրությունը հանդես է գալիս հոգնակի, համագործակցող, (հրեաներ [Իսահակ], և ոչ թե արաբներ [Իսմայիլ]; Իսրայել [Հակոբ], ոչ թե Եդովմ [Եսավ]), այլ հավատացյալ հրեաներ և հավատացյալ հեթանոսներ, հմմտ. հ. 24) ինչպես նաև անհատներ: Այս ճշմարտությունը բանալիներից մեկն է՝ նախասահմանության վարդապետության գաղտնիքը բացելու համար (տիեզերական փրկագնում/փրկություն): Մյուս բանալին 9-11-րդ գլուխների կոնտեքստում է գտնվում, այն է Աստծո անփոփոխ առանձնահատկությունը՝ ողորմությունը (հմմտ. 9:15,16,18,23; 11:30,31,32), և ոչ թե մարդու գործերն ու վարքագիծը: Վերջին հաշվով ողորմությունը ընտրության միջոցով կհասնի բոլոր նրանց, ոքեր հավատում են Քրիստոսին: մեկն է, որ բաց է անում հավատքի դուռը բոլորի համար (հմմտ. 5:18-19):

9:17-18 Համար 17-ը մեջբերում է Ելից 9:16; համար 18-ը եզրահանգումն է, դուրս բերված մեջբերումից: Ելից. 8:15,32; 9:34 ասվում է, որ փարավոնը խստացրեց իր սիրտը: Ելից. 4:21; 7:3; 9:12; 10:20,27; 11:10 ասվում է, որ Աստված խստացրեց նրա սիրտը: Այս օրինակը ցույց է տալիս Աստծո գերիշխանությունը (հմմտ. հ. 18): Փարավոնը պատասխանատու է իր ընտրությունների համար: Աստված օգտագործում է փարավոնի ամբարտաձան, համառ բնավորությունը իրականացնելու Իր կամքը Իսրայելի համար (հմմտ. հ. 18):

Նաև ուշադրություն դարձրեք այն բանին, որ Աստծո գործողությունները փարավոնի հետ փրկարար էին և հանդիսանում էին ընդհանուր ծրագրի մասը: Նրանց նպատակն էր.

1. ցույց տալ Աստծո գործությունը (ի տարբերություն եգիպտական չաստվածների)
2. բացահայտել Աստծուն Եգիպտոսին, և ըստ իմաստի ամբողջ աշխարհին (հմմտ. հ. 17).

Արևմտյան (ամերիկյան) մտածելակերպը մեծացնում է անհատի դերը, բայց արևելյան մտածելակերպը կենտրոնանում է մարդկանց համայնքի կարիքի վրա, որպես մեկ ամբողջ: Աստված օգտագործեց փարավոնին հայտնելու Իրեն կարիքավոր աշխարհին: Նա նույնը կանի անհավատ Իսրայելի հետ (հմմտ. գլուխ 11): Այս կոնտեքստում մի մարդու իրավունքները նվազում են ամբողջի կարիքների լույսի ներքո: Հիշեք հինկտակարանյան օրինակները:

1. Հոբի առաջին երեխաները մահանում են սատանայի հետ ունեցած Աստծո քննարկման պատճառով (հմմտ. Հոբ 1-2)
2. իսրայելական զինվորները մեռնում են Աքարի մեղքի պատճառով (հմմտ. Հեսու 7)
3. Դավիթի առաջին երեխան Բերսաբեից ծնված մահանում է Դավիթի մեղքի պատճառով (հմմտ. II Թագ. 12:15):

Մեզ բոլորիս վրա որոշակի կերպով ազդում են ուրիշների կատարած ընտրությունները: Այսպիսի փոխկապակցում կարելի է տեսնել Նոր Կտակարանում Հռ. 5:12-21:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9: 19-26

¹⁹ Ապա ինձ կասես, էլ ի՞նչու է մեղադրում. նորա կամքին ո՞վ հակառակ կկենայ: ²⁰ Բայց դու ո՞վ ես, մարդ, որ Աստուծուն դեմ պատասխան ես տալիս. մի՞թե ստեղծուածը կասէ իր Ստեղծողին՝ թէ Ի՞նչու այդպէս արիր ինձ: ²¹ Մի՞թե բրուտը իշխանութիւն չունի հողի վերայ, որ միեւնոյն զանգուածիցը շինէ մէկը պատիւի անօթ, եւ միւսը անարգութեան: ²² Եւ ի՞նչ եթէ Աստուած՝ կամենում էր ցոյց տալ բարկութիւնը եւ յայտնել իր զօրութիւնը, շատ երկայնմտութեամբ համբերեց բարկութեան անօթներին՝ որ կորուստի համար պատրաստուած էին. ²³ Եւ որ յայտնի ցոյց տայ իր փառքի մեծութիւնը՝ ողորմութեան անօթների վերայ, որոնց առաջուց պատրաստեց փառքի համար. ²⁴ Որ մեզ էլ կանչեց, ոչ թէ միայն Հրէաներից, այլ հեթանոսներից էլ. ²⁵ Ինչպէս որ Ովսէէի գրքումն էլ ասում է. Այն որ իմ ժողովուրդը չէ, ինձ ժողովուրդ կկանչեն. եւ չսիրուածը սիրուած. ²⁶ Եւ կլինի որ այնտեղ որ ասուեցաւ նորանց՝ թէ դուք իմ ժողովուրդ չէք, այնտեղ նորանք կենդանի Աստուծոյ որդիք կկոչուին:

NASB (UPDATED) TEXT: 9:19-26

¹⁹ You will say to me then, “Why does He still find fault? For who resists His will?” ²⁰ On the contrary, who are you, O man, who answers back to God? The thing molded will not say to the molder, “Why did you make me like this,” will it? ²¹ Or does not the potter have a right over the clay, to make from the same lump one vessel for honorable use and another for common use? ²² What if God, although willing to demonstrate His wrath and to make His power known, endured with much patience vessels of wrath prepared for destruction? ²³ And He did so to make known the riches of His glory upon vessels of mercy, which He prepared beforehand for glory, ²⁴ even us, whom He also called, not from among Jews only, but also from among Gentiles. ²⁵ As He says also in Hosea, “I WILL CALL THOSE WHO WERE NOT MY PEOPLE, ‘MY PEOPLE,’ AND HER WHO WAS NOT BELOVED, ‘BELOVED.’” ²⁶ AND IT SHALL BE THAT IN THE PLACE WHERE IT WAS SAID TO THEM, ‘YOU ARE NOT MY PEOPLE,’ THERE THEY SHALL BE CALLED SONS OF THE LIVING GOD.”

9:19 «նորա կամքին ո՞վ հակառակ կկենայ» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՍՄՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, որն ընդգծում էր կատարված փաստ, շարունակվող հետևանքներով (հմմտ. II Մնաց. 20:6; Հոբ 9:12; Մաղ. 135:6; Դան. 4:35): Սուր քննադատությունը շարունակվում է: Տրամաբանական տեսանկյունից, Պողոսի հարցերին հետևելու լավագույն միջոցը՝ ուրվագծել և հասկանալ Պողոսի մտքերը: Աստծո կամքը պետք է նայել երկու մակարդակներով: Առաջին, Նրա քավչարար ծրագրերը բոլոր մեղավոր մարդկանց համար (հմմտ. Ծննդ. 3:15): Այս ծրագրի մեջ մարդու ընտրությունը ոչ մի ազդեցություն չի գործում: Բայց երկրորդ մակարդակում, Աստված մարդուն ընտրում է և գործածում որպես գործիք (հմմտ. Ել. 3:7-9 և 10): Մարդիկ ընտրված են իրականացնելու Իր ծրագրերը (թե դրական՝ Մովսես և թե բացասական՝ փարավոն):

9:20-21 Այս կերպարը վերցված է Ես. 29:16; 45:9-13; 64:8 և Եր. 18:1-12: ԵՀՈՎԱ-յի համար օգտագործված փոխաբերությունը որպես բրուտ հաճախ օգտագործվում էր Աստծո համար որպես արարիչ, իսկ մարդուն որպես կավ (հմմտ. Ծննդ. 2:7): Պողոսն առաջ է քաշում արարչի գերիշխան լինելու փաստը, օգտագործելով ևս երեք հարց—առաջին երկուսը հ. 20-ում, իսկ երրորդը հ. 21: Վերջին հարցը մեզ բերում է Աստծո դրական ընտրությանը՝ Մովսես իսկ բացասականը փարավոն: Այս նույն հակադրությունը երևում է (1) Իսահակ – Իսմայել, հհ. 8-9; (2) Հակոբ - Եսավ, հհ. 10-12; և (3) Իսրայել ցեղը և Եդովմի ցեղը հ. 13: Այս նույն նմանությունը զարգացված է ցույց տալու Պողոսի ժամանակակից իրավիճակը հավատացյալ և անհավատ հրեաների: Աստծո դրական ընտրությունը վերջիվերջո արտահայտվում է հավատացյալ հեթանոսների ներգրավվման մեջ (հհ. 24-29 և 30-33):

9:22 «եթէ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար, բայց ոչ քերականական եզրակացությամբ: Հունարենում 22-24 հհ. մեկ նախադասություն են: Համար 22-ը արտահայտում է Աստծո փրկարար կերպարը: Աստված արդարության Աստված է: Նա հաշվետու է պահում մարդկությանը իրենց կատարած գործերի համար: Բայց Նա նաև ողորմության Աստված է: Բոլոր մարդիկ արժանի են մահվան: Արդարությունը բարի լուր չէ: Աստծո կերպարում հիմնականում ողորմությունն է, և ոչ թե բարկությունը (հմմտ. 2 Օրին.5:9-10; 7:9; Ովս. 11:8-9): Նրա ընտրությունները փրկության համար են (հմմտ. Եզ. 36:22-33): Նա երկայնամիտ է և համբերատար մեղավոր մարդկության հանդեպ (հմմտ. Եզ. 18): Նա նույնիսկ չարին է օգտագործում Իր փրկարար նպատակների համար (օր. սատանա, փարավոն, Ենդորի կախարդը, Ասորեստան, Նաբուգոդոնոսոր, Կյուրոս, իսկ գլուխ 11, անհավատ Իսրայել):

**Արևելահայերեն «կամենում էր ցոյց տալ իր բարկութիւնը»
Արևմտահայերեն «իր բարկութիւնը ցուցնելէ առաջ»**

- NASB “willing to demonstrate His wrath”
- NKJV “wanting to show His wrath”
- NRSV “desiring to show his wrath”
- TEV “wanted to show his anger”
- JB “is ready to show his anger”

Աստված ցոյց է տալիս Իր բարկությունը, որ բոլորին հայտնի անի Իր գործությունը (հմմտ. հ. 22) և Իր փառքի ճոխությունը (հմմտ. հ. 23): Աստծո գործողությունները միշտ ունեն փրկարար նպատակներ (բացի *Gehenna*, որը վերջնական մեկուսացման վայրն է՝ համառ անհավատության և մեղքի):

«բարկութեան անօթներ» Այս տերմինը շարունակում է Պողոսի փոխաբերությունը հողի/կավի մասին հհ. 20 և 21: Այնհայտ է, որ դրանք վերաբերում են անհավատ մարդկանց, որոնց Աստված օգտագործում է հետագա գործողությունների համար փրկության Իր ծրագիրն իրականացնելու համար:

**Արևելահայերեն «պատրաստուած էին»
Արևմտահայերեն «եղած են»**

- NASB, NKJV “prepared”
- NRSV “are made”
- TEV “doomed”
- NJB “designed”

Այս ձևը ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԵՐԲԱՅ Է: Պապիրուսի տեքստերում այս բառն օգտագործում էին նկարագրելու համար ինչ-որ բանի պատրաստում իր նպատակի վերջնական և ամբողջական կատարման համար: Ապստամբ անհավատությունը կունենա իր դատաստանի օրը և հետևանքները: Ինչևէ, Աստված ընտրում է օգտագործել անհավատներին իրականացնելու Իր ավելի լայն, ներգարվող փրկարար նպատակները:

Մ. Ռ. Վինսենթը «Բառային սերտողություններ» հատ.2, գրքում ասում է. M. R. Vincent, *Word Studies*, «Աստծո կողմից չի եղել սահմանված կործանման համար, բայց ածականային իմաստով, *պատրաստ, հասունացած* կործանման համար, և նշանակում է փաստացի իրավիճակ ներկայում,

ձևավորված նախապես, բայց ոչ մի ակնարկ չի տալիս, թե ինչպես է այդ վիճակը ձևավորվել» (Էջ 716):

«կորուստ» Տես հատուկ թեմա 3:3.

9:23 «Եւ որ յայտնի ցոյց տայ իր փառքի մեծութիւնը» Այս նույն ճշմարտությունը հաստատված է Հն. 8:29-30 և Եփ.1:4,11: Այս գլուխը Նոր Կտակարանում Աստծո գերիշխանության ամենաուժեղ արտահայտությունն է: Այն որ Աստված պատասխանատու է Իր ամբողջ արարչագործության և դրա փրկագնման համար չի կարող վեճի առարկա լինել: Այս մեծ ճշմարտությունը երբեք չպետք է փոքրացնել և ոչ էլ կողքով անցնել: Ինչևէ, պետք է հավասարակշռությունը պահվի ուխտի Աստծո ընտրության որպես միջոց մարդ արարածի հետ հաղորդակցության, Իր պատկերով ստեղծված. Անշուշտ ճիշտ է, որ որոշ հինկտակարանային ուխտեր, ինչպես Ծննդ. 9:8-17 և 15:12-21, անպայմանական են և ընդհանրապես կախված չեն մարդու արձագանքից, բայց մյուս ուխտերը պայմանական են՝ կախված մարդու արձագանքից (օր. Եդեմ, Նոյ, Մովսես, Գավիթ): Աստված Իր ստեղծագործության համար ունի փրկության ծրագիր և ոչ մի մարդ չի կարող ազդել այս ծրագրի վրա: Աստծո կամքով որոշ անհատներ մասնակցում են Իր ծրագրերի իրականացմանը: Մասնակցության այս հնարավորության մեջ կա աստվածաբանական ճնշում գերիշխանության (Հն. 9) և մարդու ազատ կամքի միջև (Հն. 10):

Ճիշտ չէ վերցնել աստվածաշնչյան մեկ համար և անտեսել մյուսները: Վարդապետությունների միջև կա լարվածություն, որովհետև արևելյան մտածելակերպ ունեցող մարդիկ ճշմարտությունը ներկայացնում են դիալեկտիկական կամ լարվածությամբ լցված զույգեր: Յանկացած վարդապետություն պետք է փոխկապակցված լինի մյուս վարդապետությունների հետ: Ճշմարտությունը դա ճշմարտությունների մոզայկա է:

Անշուշտ այստեղ խորհուրդ կա: Պողոսը ոչ մի տրամաբանական եզրակացության չի հանգում, ոչ անհավատների հետ կապված (*kataptizō*) բարկության համար (հ. 22), և ոչ էլ հավատացյալների՝ պատրաստված (*proetomiazō*) փառքի համար (հ. 23): Արդյոք Աստծո ընտրությունը միակ գործոնն է, թե Աստծո ընտրությունը իմնված է բոլորին ողորմելու վրա, սակայն որոշները մերժում են Նրա առաջարկը: Արդյոք մարդկությունը որևէ մաս ունի իրենց ապագայի հետ կապված (հմմտ. 9:30-10:21): Երկու կողմերում էլ կան չափազանցություններ (Օգոստինոս – Փելագիոս): Ինձ համար, ուխտի գաղափարը միավորում է նրանց՝ շեշտը դնելով Աստծո վրա: Մարդը կարող է միայն արձագանքել Աստծո նախապատվություններին: Բայց ինձ համար, Աստված քմահաճ և փոփոխամիտ չէ, այլ ողորմած: Նա հասնում է Իր պատկերով ստեղծված բոլոր մարդկանց: Ես չեմ համակերպվում այս կոնտրաստի հետ: Այն այնքան զորավոր է, սակայն ամեն ինչ սև ու սպիտակով է հանդես գալիս: Կենտրոնում հրեաների անհավատարմությունն է, որի արդյունքում փրկություն ստացան նաև հեթանոսները: Բայց սա էր միակ տեքստը, որ բացահայտում է Աստծո կերպարը:

«**Քիառք**» Տես ծանուցում 3:23.

9:24 Այս համարը ցույց է տալիս, որ Աստծո խոստման նպատակը ավելի լայն է, քան միայն Իսրայելը որպես ազգ: Աստված Իր ողորմությունն է ցույց տվել մարդկության վրա հիմնված Իր ընտրության վրա: Ծննդ. 3:15-ի խոստումը վերաբերվում է ամբողջ մարդկությանը: Աբրահամի կանչը վերաբերվում է ամբողջ մարդկությանը, Ծննդ. 12:3: Իսրայելի կանչը որպես քահանաների թագավորություն վերաբերվում է ամբողջ մարդկությանը (հմմտ. Ել. 19:5-6): Սա Աստծո խորհուրդն է, որը թաքնված էր, բայց հիմա ամբողջությամբ հայտնված (հմմտ. Եփ. 2:11-3:13):

Պողոսի պնդումը հ. 24-ում կպատկերավորվի մի շարք հինկտակարանյան մեջբերումներով (հհ. 25-29):

1. համար 25, Ովսիա 2:23
2. համար 26, Ովսիա 1:10

3. համար 27, Եսայա 10:22 և/կամ Ովսիա 1:10
4. համար 28, Եսայա 10:23
5. համար 29, Եսայա 1:9

9:25-26 Կոնտեքստում այս հատվածը վերցված է Սեպտուագինդից (LXX) Ովսե. 2:23 (մի քանի փոփոխություններով) և 1:10, որոնք հասցեագրված էին Իսրայելի հյուսիսային տաս ցեղերին, բայց այստեղ Պողոսը խոսում է հեթանոսների մասին: Սա տիպիկ Նոր Կտակարանի հեղինակների Հին Կտակարանից օգտվելու ձևն է: Նրանք եկեղեցին տեսնում էին որպես Իսրայելին տրված խոստումների իրականացում (հմմտ. II Կոր. 6:16; Տիտոս 2:14; I Պետ. 2:5-9): Այս դեպքում այն վերաբերում է անհավատ Իսրայելին: Եթե Աստված կարողանար վերականգնել կռապաշտ հյուսիսային տաս ցեղերին, Պողոսը սրանում տեսավ Աստծո սիրո և ներման ապացույցը, որ մեկ օր նույնիսկ կռապաշտ հեթանոսները կներգրավվեն փրկվածների մեջ (հեթանոսներ):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9:27-29

²⁷ Եսայիան աղաղակում է Իսրայելի համար. Թեև Իսրայելի որդկանց համարը ծովի ալազին պէս շատ լինի, միայն մնացորդը կփրկուի: ²⁸ Որովհետև մի կարճ եւ համառօտ բան կանէ Տէրը արդարութեամբ. Տէրը մի կարճ բան կանէ երկրի վերայ: ²⁹ Եւ ինչպէս որ Եսայիան առաջուց ասեց. Եթէ Սաբաւովք Տէրը մեզ համար սերունդ չէր թողել, մենք Սողոմի պէս կլինէինք եւ Գոմորին կնմանէինք:

NASB (UPDATED) TEXT: 9:27-29

²⁷Isaiah cries out concerning Israel, “THOUGH THE NUMBER OF THE SONS OF ISRAEL BE LIKE THE SAND OF THE SEA, IT IS THE REMNANT THAT WILL BE SAVED; ²⁸FOR THE LORD WILL EXECUTE HIS WORD ON THE EARTH, THOROUGHLY AND QUICKLY.” ²⁹And just as Isaiah foretold, “UNLESS THE LORD OF SABAOTH HAD LEFT TO US A POSTERITY, WE WOULD HAVE BECOME LIKE SODOM, AND WOULD HAVE RESEMBLED GOMORRAH.”

9:27

Արևելահայերեն «Թեև»
 Արևմտահայերեն «Եթե»

NASB, NKJV,
 NRSV, NJB “though”
 TEV “even if”

Այստեղ ԵՐՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է (*ean* գումարած ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ), որը նշանակում է հնարավոր գործողություն:

9:27-28 Սա ոչ ճիշտ մեջբերումն է Սեպտուագինդից (LXX) Ես. 10:22-23: *Textus Receptus* տարբերակը ավելացրեց եզրափակող արտահայտությունը Սեպտուագինդից Ես. 10:23: Բայց այն բացակայում է հին հունարեն ձեռագրերից P⁴⁶, Ռ, A, և B, որը ցույց է տալիս, որ այն ավելի ուշ է ավելացվել արտագրողի կողմից: UBS⁴ կազմողները այս տարբերակը գնահատում են որպես «հուսալի/վստահելի»:

«ծովի ալազի պէս» Սա փոխաբերական լեզմի մաս է, օգտագործված նկարագրելու համար մի շարք արդյունքները Աբրահամին տրված Աստծո խոստման (հմմտ. Ծննդ. 15:5; 22:17; 26:4):

«միայն մնացորդը կփրկուի» «Մնացորդ» տերմինը հաճախ օգտագործվում է Հին Կտակարանի մարգարեությունների մեջ կապված այն իսրայելացիների հետ, ովքեր տարվեցին գերության, բայց հետ կրեով են Աստծո կողմից խոստացյալ երկիր: Պողոսն օգտագործում է այս տերմինը, ինկատի ունենալով այն հրեաներին, ովքեր հավատքի հիման վրա ունեին ճիշտ հարաբերություն Աստծո հետ և/կամ նրանք, ովքեր լսել էին ավետարանը և հավատքով արձագանքել Քրիստոսին:

Նույնիսկ Ուխտի Իսրայելի մեջ միշտ գոյություն է ունեցել հոգևոր բաժանում, և միայն քչերն էին, որ ուղիղ էին Աստծո հետ եղած հարաբերություններում: Իսրայելի ընտրությունը երբեք չներգրավեց անձնական հավատքի արձագանք ունենալու կարևորությունը և անհրաժեշտությունը (հմմտ. Ես. 1:16-20):

Պողոսն օգտագործում է արտահայտություն Հին Կտակարանից, որը սկզբնականում վերաբերում էր հրեա գերիներին, որոնցից քչերը վերադարձան Պաղեստին, բայց կապված նրանց հետ, ովքեր լսեցին Ավետարանը, բայց նրանցից շատերը չհավատացին ու չընդունեցին Քրիստոսին: Միայն քիչ տոկոսը լսողների առաջին դարի (հրեաներ և հեթանոսներ) արձագանքեցին ավետարանի բարի լուրին: Պողոսը այս անողներին կոչում է մնացորդ:

9:29 Այս մեջբերումը LXX-ից է Ես. 1:9, որը դատապարտում է Իսրայել ազգի մեղավոր վիճակը:

«Սաքառավթ Տերը» Սա Հին Կտակարանի ԵՀՈՎԱ-յի անունն էր, որը սովորաբար թարգմանվում էր «Չորքերի Տեր» (հմմտ. Հակ. 5:4): Ելնելով կոնտեքստից, սա ռազմականորեն բնութագրում է Աստծուն որպես «երկնքի զորքերի հրամանատար» (հմմտ. Հեսու 5:13-15), կամ ադմինիստրատիվ/կառավարման իմաստով, սովորաբար, բաբելոնյան աստղային քաղաքաստվածության կոնտեքստում, կապված է երկնային մարմիններին «երկնային մարմինների Տեր»: Աստղերը ստեղծված են, և ոչ թե աստվածներ, նրանք չեն կառավարում կամ ստեղծում իրադարձություններ (հմմտ. Ծննդ. 1:16; Սաղ. 8:3; 147:4; Ես. 40:26):

Արևելահայերեն «Եթե... մեզ համար սերունդ չէր թողել»
Արևմտահայերեն «Եթե... մեզի սերունդ թողուցած չլար»



NASB “unless. . .had left to us a posterity”

NKJV “unless. . .had left us a seed”

NRSV “had not left survivors”

TEV “had not left us some descendants”

NJB “not left us a few survivors”

Հին եբրայերեն տեքստում Ես. 1:9 ունի «մնացորդ» բառը, բայց Սեպտուագիկոնը թարգմանեց այն որպես «սերմ» (NKJV): Աստծո դատաստանը Իսրայելի վրա միշտ խնայեց և պահպանեց (1) հավատացյալ մնացորդին կամ (2) Մեսիայի սերունդը: Աստված պահպանեց քչերին, որպեսզի հասնի շատերին:

«Սողոմ . . .Գոմոր» Համար 28-ը Աստծո դատաստանի մասին է: Այստեղ հստակ հիշատակվում է երկու հեթանոս քաղաքների մասին, որ կործանվեցին Աստծո կողմից Ծննդ. 19:24-26, բայց այն դարձավ իդիոմա/հատկաբանություն Աստծո դատաստանի վերաբերյալ (հմմտ. 2 Օրին. 29:34; Ես. 13:19; Եր. 20:16; 49:18; 50:40; Ամովս 4:11):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9:30-33

³⁰ Արդ ի՞նչ ասենք. թե հեթանոսները, որ արդարութեան ետեւից չէին գնում, արդարութեան հասան՝ այն արդարութեանն որ հաւատքիցն է: ³¹ Բայց Իսրայելը որ գնում էր արդարութեան օրէնքի ետեւից, արդարութեան օրէնքին չհասաւ: ³² Ի՞նչու համար. որովհետեւ ոչ թէ հաւատքիցը, այլ իբր

օրենքի գործերիցը ուզում էին արդարանալ. որովհետեւ գայթակղութեան քարի վերայ գլորուեցան:
³³ Ինչպէս գրուած է. Ահա եւ Սիօնի մէջ գայթակղութեան քար եւ գլորուելու վէմ եւն դնում. եւ ամեն
նորան հաւատացողը չի ամաչիլ:

NASB (UPDATED) TEXT: 9:30-33

³⁰What shall we say then? That Gentiles, who did not pursue righteousness, attained righteousness, even the righteousness which is by faith; ³¹but Israel, pursuing a law of righteousness, did not arrive at that law. ³²Why? Because they did not pursue it by faith, but as though it were by works. They stumbled over the stumbling stone, ³³just as it is written, “BEHOLD, I LAY IN ZION A STONE OF STUMBLING AND A ROCK OF OFFENSE, AND HE WHO BELIEVES IN HIM WILL NOT BE DISAPPOINTED.”

9:30-31 Սա ապշեցնող եզրահանգումն է Աստծո ընտրության նպատակի: 30-33 համարները ամփոփումն են գլուխ 9-ի և գլուխ 10-ի ներածությունը: Հավատացող հեթանոսները արդար դարձան Աստծո առաջ, բայց ոչ բոլոր հրեաները:

Աստված մարդու հետ հարաբերություն է հաստատում ուխտի պայմանով: Աստված միշտ նախաձեռնությունը Ինքն է վերցնում և դնում է պայմաններ: Յուրաքանչյուր մարդ պետք է ապաշխարի և հավատա, հնազանդվի և համբերի: Մարդիկ փրկվում են (1) Աստծո սուվերենությամբ (2) Աստծո ողորմությամբ, Մեսիայի կատարած գործի վրա ունեցած հավատքի միջոցով; թե՞ (3) անձնական հավատքի գործողության միջոցով: Այո!

«Ձգտել, գնալ» բառի համար տես ծանուցում 14:19.

«արդարութեան» Տես հատուկ թեմա 1:17.

9:32 «գործերիցը» *Textus Receptus* տարբերակում ավելացրած է «օրենքի»: Այս լրացումը արվել է ավելի ուշ արտագրողի կողմից: Պողոսը հաճախ օգտագործում էր այս արտահայտությունը «օրենքի գործեր» (հմմտ. 3:20,28; Գաղ. 2:16; 3:2,5,10): Ինչևէ, հին հունական ձեռագրերում P⁴⁶, Ռ*, A, B, G, և G այս համարում տվյալ լրացումը չկա: UBS⁴ կազմողները գնահատում են ավելի կարճ տարբերակը որպես «B» կատեգորիա (գրեթե հավաստի):

Աստծո արդարության բանալին մարդու գործերը չեն այլ Աստծո կերպարն ու պարզև Քրիստոսի միջոցով: Արդարություն անհնարին է ձեռք բերել մեղավոր, ընկած մարդու կողմից, այլ այն ձրի տրվում է որպես պարզև Քրիստոսի վրա ունեցած հավատքի միջոցով: Ինչևէ, այն պետք է ընդունել (հմմտ. հ. 33; Հովհ. 1:12; 3:16; Հռ. 4:1; 20:9-13; Եփ. 2:8-9): Սա այն ճշմարտությունն է, որ անկեղծ, կրոնասեր, բարոյական հրեաները (և բոլոր օրինապաշտները) բաց են թողել:

Ջորջ Էլդոն Լադն իր գրքում այդ առիթով գեղեցիկ է գրում. «Նոր Կտակարանի Աստվածաբանություն» [George Eldon Ladd in his book *A Theology of the New Testament*],

«Պողոսի ուսմունքը Օրենքի մասին հաճախ մատուցվում է պատմական փորձառության տեսանկյունից կամ հենց Պողոսի, որպես հրեա բաբբի, կամ էլ տիպիկ առաջին դարի Օրենքի տակ լինող հրեայի: Ինչևէ, Պողոսի միտքը պետք է դիտվի ոչ որպես իր հոգևոր ինքնակենսագրության խոստովանություն, ոչ էլ որպես առաջին դարի փարիսեականության օրինապաշտ բնութագրի նկարագրությունը, այլ որպես աստվածաբանական մեկնաբանություն քրիստոնյա մտածողի արդարության երկու ճանապարհները՝ օրենքի կատարում և հավատք» (էջ 495):

9:33 Սա վերցված է Ես. 28:16 կապակցված 8:14-ի հետ.

«Ահա եւ եմ որ Սիօնը դրել եմ վեմը,» 28:16

«գայթակղութեան քար եւ գլորման վեմ,» 8:14

«ով որ նորան հաւատայ, չի փախչիլ,» 28:16

Այս համարներն այս կերպ միացնելով (րաբբիական մեթոդ) նա փոխում է Ես. 28:16-ի իմաստը դրականից բացասական: Պողոսը հմտորեն օգտվում է Հին Կտակարանից իր իսկ սեփական նպատակների համար.

1. Նա ընտրում է, թե որ թարգմանությունը (LXX, MT, կամ իր սեփականը)
2. Նա փոխում է համարները (գերությունից դեպի հեթանոսները)
3. Նա միացնում է տեքստերը
4. Նա փոխում է տիտղոսները և ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ, որ ԵՀՈՎԱ-յինն էին, դրանք կիրառելով Հիսուսի վրա

«Եւ ամեն նորան հաւատացողը չի ամաչիլ» Սա Ես. 28:16-ից է: Այն նաև մեջբերված է Հն. 10:11 և նման է Հովել 2:32, մեջբերված Հն. 10:13: Փրկության բանալին թե (1) օբյեկտն է (անկյունաքարը) և թե (2) Նրան ընդունելը անձնապես (հավատք առ Նա): Տես հատուկ թեմա: Հավատալ/հավատք 4:5:

«ՔԱՐՎԵՄ» Սկզբում սա Աստծո տիտղոսն էր (հմմտ. Սաղ. 18:1-2,31,46; 2 Օրին. 32:18; I Թագ. 2:2; Սաղ. 28:1; 31:3; 42:4; 21:3; 78:15), բայց դարձավ Մեսիական տիտղոս (հմմտ. Ծննդ. 49:24; Սաղ. 118:22; Ես. 8:14; 28:16; Գան. 2:34-35, 44-45; Մաթ. 21:42-44): Աստծո ուխտի խոստման բանալի տարրը (Մեսիան) սխալ հասկացվեց և մերժվեց (հմմտ. I Կոր. 1:23): Հրեաները սխալ հասկացան ոչ միայն Մեսիայի նպատակը, այլ Աստծո ուխտի հիմնական պահանջները: Քրիստոսը հրեաների համար դարձավ ընկնելու պատճառ, գլորման վեմ (հմմտ. Ես. 8:14; Գուկ. 2:34), բայց հավատացյալների համար, թե հրեա և թե հեթանոս, Նա դարձավ հիմքի քարը (հմմտ. Ես. 28:16; I Պետ. 2:6-10):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ

I. Կիրառությունը Հին Կտակարանում

Ա. Քարի գաղափարը, որպես դժվար, ամուր և հուսալի նյութ, որն օգտագործվում է, որպես լավ հիմք, օգտագործվում էր ԵՀՈՎԱ-յին նկարագրելու համար (հմմտ. Սաղ. 18:1):

Բ. Հետազայում այդ հասկացողությունը դարձավ մեսիական տիտղոս (հմմտ. Ծննդ. 49:24; Սաղ. 118:22; Ես. 28:16):

Գ. Գրանով պատկերվում էր դատաստանը, որը ԵՀՈՎԱՆ կիրականացնի Մեսիայի միջոցով (հմմտ. Ես. 8:14; Գան. 2:34-35,44-45):

Դ. Սա զարգացավ՝ դառնալով շինարարական փոխաբերություն

1. հիմքի քար, որը դրվում էր առաջինը և որով դրվում էր ամբողջ շինության անկյունները և ապահով էր, կոչվում էր «անկյունաքար»:
2. այն կարող էր վերաբերել գլխավոր քարին, դրված այն տեղում, որը պատերը պահում է միասին (հմմտ. Չաք. 4:7; Եփ. 2:20,21), կոչվում է «գլխի քար» եբրայերեն *rush* (այն է, գլուխ):
3. այն կարող էր վերաբերել «բանալի քար», որը դռան կամար կենտրոնն է և պահում է ամբողջ պատի ծանրությունը:

II. Կիրառությունը Նոր Կտակարանում

Ա. Հիսուսը մեջբերում արեց Սաղ. 118 մի քանի անգամ Իր մասին (հմմտ. Մաթ. 21:41-46; Մարկ. 12:10-11; Գուկ. 20:17):

Բ. Պողոսն օգտագործում է Սաղ. 118 կապված անհավատ, ապստամբ Իսրայելի ԵՀՈՎԱՅ-ին մերժելու հետ (հմմտ. Հն. 9:33):

Գ. Պողոսն օգտագործում է «անկյունի գլուխ/քար» Եփ. 2:20-22 կապված Քրիստոսի հետ

Դ. Պետրոսն օգտագործում է Հիսուսի այս գաղափարը I Պետ. 2:1-10: Հիսուսն անկյունաքարն է իսկ հավատացյալները կենդանի քարերը (այն է, հավատացյալները որպես տաճար,

հմմտ. I Կոր. 6:19), շինված Նրա վրա (Հիսուսը նոր Տաճարն է, հմմտ. Մարկ. 14:58; Մաթ. 12:6; Հովհ. 2:19-20):

Երբ հրեաները մերժեցին Հիսուսին որպես Մեսիա, դրանով իսկ մերժեցին իրենց հույսի հենց հիմքը:

III. Աստվածաբանական պնդումներ

Ա. ԵՀՈՎԱՆ թույլատրեց Դավիթին/Մողոմոնին կառուցել տաճար: Նա ասաց նրանց, որ եթե նրանք պահեն ուխտը Նա կօրհնի նրանց և նրանց հետ կլինի, բայց եթե չպահեն տաճարը ավերակների մեջ կլինի (հմմտ. 3 Թագ. 9:1-9):

Բ. Բաբբիական հուղայականությունը կենտրոնացած էր ծեսերի և ավանդական ձևերի վրա՝ մերժելով հավատքի անձնական ասպեկտը (անշունչ ոչ բոլոր բաբբիներն են եղել այդպիսին): Աստված փափագում է ամենօրյա, անձնական, աստվածահաճո հարաբերություն նրանց հետ, ում ստեղծել է Իր պատկերով և նմանությամբ (հմմտ. Ծննդ. 1:26-27). Դուկ. 20:17-18 պարունակում է սարսափեցնող բառեր դատաստանի մասին:

Գ. Հիսուսն օգտագործեց տաճարի գաղափարը Իր ֆիզիկական մարմինը ներկայացնելու համար: Սա շարունակում և ընդարձակում է անձի գաղափարը; Հիսուսի վրա ունեցած հավատքը որպես Մեսիա գլխավոր պայմանն է հանդիսանում ԵՀՈՎԱ-յի հետ ունեցած հարաբերության մեջ:

Դ. Փրկություն նշանակում է վերականգնել Աստծո պատկերը մարդ արարածի մեջ, այնպես որ կարելի լինի հաղորդակցվել Աստծո հետ: Քրիստոնեության նպատակը քրիստոսանման լինել հիմա: Հավատացյալները պետք է կենդանի քարեր լինեն՝ դրված Քրիստոսի վրա և Քրիստոսի օրհնակին հետևելով (նոր տաճարը):

Ե. Հիսուսը մեր հավատքի հիմքն է և մեր հավատքի անկյունաքարը (այն է, Ալֆան և Օմեգան): Բայց նաև գլորման վեմ և գայթակղության քար: Նրա կողքով անցնել նշանակում է կորցնել ամեն ինչ: Այստեղ երրորդ տարբերակ չկա:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչպե՞ս է գլուխ 9-ը (նախասահմանություն) կապվում գլուխ 10-ի հետ (մարդու ազատ կամքը)
2. Ո՞րն է գլուխ 9:1-29-ի հիմնական թեման:
3. Աստված քանդե՞լ է Իսրայելին տված խոստումը:
4. Թվարկեք արտոնություններն ու առանձնաշնորհները, որ ունեն Իսրայել ազգը (9:4-5).
5. Բոլո՞ր հրեաներն էին ուղիղ Աստծո առաջ: Ի՞նչու կամ ի՞նչու ոչ (9:6)
6. Եթե մարդուն ուժով ստիպեն անելու Աստծո կամքը, կլինի բարոյապես պատասխանատու
7. Ինչպե՞ս է «ողորմությունը» բանալի համարվում նախասահմանության համար (հմմտ. 15, 16, 18, 23; 11:30-32)

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 10**

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	JB
Իսրայելը և Ավետարանը	Իսրայելը կարիք ունի Ավետարանի	Ճշմարիտ արդարությունը հավատքով է	Իսրայելը և Ավետարանը	Իսրայելը թեացավ տեսնել, որ Աստված է որ Սուրբ է
9:30-10:4		9:30-10:4	9:30-10:4	
	10:1-13			10:1-4
Փրկություն բոլորի համար			Փրկությունը բոլորի համար է	
10:5-13		10:5-13	10:5-13	10:5-13
	Իսրայելը մերժում է Ավետարանը	Իսրայելի պատասխանատվությունը իր թերացումների համար		Մովսեսի վկայությունը
10:14-21	10:14-21	10:14-17	10:14-17	10:14-17
		10:18-21	10:18-21	10:18-21

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՐՏԵՔՍԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ

- Ա. 10-րդ գլուխը կենտրոնանում է Իսրայելի լավ հնարավորությունների վրա, պատշաճ ձևով արձագանքելու ՅԱՀՎԵՅԻ առաջարկած փրկությանը: 9-րդ գլխում քննարկվում է Աստծո հրեաներին ընտրելու մասին, ում միջոցով աշխարհը պիտի ներգրավեր Աստծո ընտրության ծրագրի մեջ, սակայն հրեաները մերժեցին ընդունել Աստծո ընտրությունը:
- Բ. Պողոսը շարունակում է օգտագործել Հին Կտակարանը որպես փաստարկ Ավետարանի պաշտպանության համար: Այս առանձնահատուկ է Գործք Առաքելոցում առաքելական քարոզներին, որոնք հայտնի են որպես *կերիզմա kerygma* (այն ինչ հռչակվեց): Տես հատուկ թեմա: *Kerygma «վաղ եկեղեցու քարոզը»* 1:2.
- Գ. 9:30-10:4 կենտրոնական ճշմարտություններն են:
1. Հեթանոսները ձեռք բերեցին Աստծո արդարությունը՝ Քրիստոսի վրա ունեցած հավատքի միջոցով,
 2. Հրեաները չունեն Աստծո արդարությունը, Քրիստոսի վրա ունեցած հավատքի պակասության պատճառով,
 3. Օրենքը չէր կարող մարդկանց արդարություն տալ: Քանի որ արդարությունը Աստծո պարգևն էր Քրիստոսի վրա ունեցած հավատքով և մարդկային ջանքերով անհնարին էր դա ձեռք բերել:
- Դ. Բրյուս Կորլեյ և Կարտիս Վաուգան «Հռոմեացիս թողթի Սերտողության Մեկնաբանության Ուղեցույց» (Bruce Corley, Curtis Vaughan, *A Study Guide Commentary, Romans*, հրատ. Zondervan, էջ 115-116), գիրքն ունի օգտակար ուրվագիծ հրեաների մեղքերը հետ կապված
1. կրոնական հպարտություն, 10:2ա
 2. հոգևոր կուրություն, 10:2բ, 3ա
 3. ինքնա-արդարություն, 10:3բ
 4. անկոտրում համառություն, անհնազանդություն, 10:4ա
- Ինձ նաև դուր է գալիս նրանց ամփոփիչ նշումները 9 գլխի վերջում 10 գլխի մասին, «Ընտրությունը տեղի է ունենում խաչի քարոզչության միջոցով (հմմտ. I Թես. 1:4-10), որը բացատրում է, թե ինչպես աստվածային սուվերենության դասական պաշտպանությանը (9:6-29) կարող է հետևել Պողոսի թղթերի միջի ամենաշքեղ միսիոներական հատվածը (10:1-21): Ավետարանը քարոզելու իրավունքի ամենաբարձր գիտելիքն այն է, որ այդ պատգամի միջոցով Աստված ցուցաբերում է հավատարմություն՝ իրականացնելու համար ընտրության Իր ծրագիրը Քրիստոսում» (էջ. 114):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:1-4

¹Եղբարք, իմ սրտի փափաքը եւ դէպի Աստուած աղօթքը Իսրայելի համար փրկութեան մասին է: ² Որովհետեւ վկայում եմ նորանց՝ որ Աստուծոյ նախանձն ունին, բայց զիտութեամբ չէ: ³ Որովհետեւ Աստուծոյ արդարութիւնը չգիտենալով, եւ իրանց արդարութիւնը կանգնեցնել կամենալով՝ Աստուծոյ արդարութեանը չհնազանդեցին: ⁴ Վասնզի օրէնքի վախճանը Քրիստոսն է ամեն հաւատացողի համար դէպի արդարութիւն:

NASB (UPDATED) TEXT: 10: 1-4

¹Brethren, my heart's desire and my prayer to God for them is for *their* salvation. ²For I testify about them that they have a zeal for God, but not in accordance with knowledge. ³For not knowing about God's righteousness and seeking to establish their own, they did not subject themselves to the righteousness of God. ⁴For Christ is the end of the law for righteousness to everyone who believes.

10:1 «Եղբայրք» Այս բառը Պողոսը հաճախ օգտագործում է, երբ նոր թեմա է ներկայացնում (հմմտ. 1:13; 7:1,4; 8:12):

«Իմ սրտի փափաքը եւ դէպի Աստուած աղօթքը Իսրայելի համար փրկութեան մասին է» Պողոսը հավատում էր, որ հրեաները կարող էին փրկվել, և որ իր աղոթքը նրանց համար ազդեցություն կունենար: Այս անսպասելի հայտարարությունը հակասում էր նախասահմանության գաղափարին: Տես հատուկ թեմա: Բարեխոսական աղոթք 9:3.

Հունարեն ձեռագրերում «նրանց համար» (անգլերեն թարգմանության մեջ) արտահայտության ուրիշ տարբերակ կա: Textus Receptus տարբերակում գրված է «Իսրայելի համար»: Ինչևէ, շատ ձեռագրեր (ձեռագիր P⁴⁶, Ռ^{*}, B, C, D^{*}, F, G) ունեն «նրանց համար» տարբերակը: UBS⁴ կազմողները այս տարբերակը գնահատում են որպես «A» կատեգորիա (հուսալի):

10:2 «Աստուծոյ նախանձն ունին» Անկեղծությունն ու խանդավառությունը բավական չեն (հմմտ. 3-4hh). Պողոսը սա լավ գիտեր (հմմտ. Գործք 9:1; Գաղ. 1:14; Փիլ. 3:6):

10:2-3 «բայց գիտութեամբ չէ: Որովհետեւ Աստուծոյ արդարութիւնը չգիտենալով» «Իմանալ» տերմինը (հ. 2, *epiginōskō*) կարող է ունենալ երկու իմաստ: (1) հրեաները չէին հասկանում ձրի Ավետարանի պարզևի մասին (հունարեն «իմանալ» բառի իմաստը); կամ (2) հրեաները չունեին հավատքի ճիշտ հարաբերություն Աստծո հետ (եբրայերեն «իմանալ» բառի իմաստը, հմմտ. Ծննդ. 4:1; Եր. 1:5): Հրեաները չէին գտնվում անտեղյակության մեջ այն իմաստով, թե ինչպիսի պատշաճ պատասխան պետք է տալին Աստծուն (հհ. 16,18,19), բայց նրանք հավատքը փոխեցին մարդկային գործերի, որն էլ նրանց տարավ հպարտության, ամբարտավանության և բացառիկ լինելու զգացողությանը (հ. 3ա):

10:3 «Աստուծոյ արդարութիւնը» 9-11 գլուխների կոնտեքստում այս արտահայտությունը վերաբերվում է Աստծո վերագրած մարդու ճիշտ դիրքին (Հռ. 4) Իր հետ հիմնված սոսկ Իր ողորմության վրա, Քրիստոսի ավարտած գործի վրա, Սուրբ Հոգու մղումով և մեղավոր մարդու ապաշխարության վրա, Աստծո կանչին մարդու արձագանքի վրա և հետագայում համբերության և հնազանդության վրա:

Հիմա յուրաքանչյուրին պարզ է, թե ինչպես հրեաները չհասկացան Աստծո արդարությունը: Հին Կտակարանը շեշտը դնում էր Օրենքի հնազանդության վրա (հմմտ. 2 Օրին. 4:28-6:3,17,24-25): Ինչ նրանք իրականում չճանաչեցին, դա հավատքի և ապաշխարության միջև եղած հավասարակշռությունն էր (հմմտ. 2 Օրին. 5:29-30; 6:5). 2 Օրինաց գրքում հստակ հաստատում է, որ Աստված գործեց ի օգուտ Իսրայելի ոչ թե նրանց արդարության համար, այլ Իր էության առանձնահատկությունից ելնելով (հմմտ. 9:6,7,13,24,27; 10:12-22; Եզեկ. 36:22-38): Նույնիսկ քանանացիներն իրենց հողերից զրկված են եղել, ոչ թե Իսրայելի արդարության պատճառով, այլ իրենց մեղքի պատճառով (հմմտ. 9:4-6; Ծննդ. 15:16): Տես հատուկ թեմա 1:17.

«Աստուծոյ արդարութեանը չհնազանդեցին » Այստեղ ԲԱՅԸ ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎ Է ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, բայց այն թարգմանված է որպես ՉԵԶՈՔ ՍԵՌ (հմմտ. TEV): Հունարեն քոյնեում ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ֆունկցիանիր վրա է վերցնում ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ Կոնտեքստը վճռորոշ գործոն է:

Այս բառի բառացի իմաստն է «հնազանդվել, ենթարկվել», որը ռազմական/զինվորական տերմին է, որը նշանակում է ենթակայություն իշխանություններին: Հրեաները փորձում էին վաստակել Աստծո արդարությունը, բայց դա պարզև էր (հմմտ. 3:24; 5:15; 6:23; Եփ. 2:8-9): Պողոսն այս ճշմարտությունը հստակ տեսավ Դամասկոսի ճանապարհին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ (HUPOTASSŌ)

Մեպտուագինդում այս տերմինը օգտագործվում է տասը տարբեր եբրայերեն բառեր քարգմանելու համար: Դրա հիմնական Հին կտակարանային իմաստը « կարգադրել» կամ «հրամայել» էր: Այս ամենը գտնվում է LXX;

1. Աստված պատվիրում է/հրամայում է (հմմտ. Գև. 10:1; Հովնան 2:1; 4:6-8)
2. Մովսեսը պատվիրում է/հրամայում է (հմմտ. Ել. 36:6; 2 Օրին. 27:1)
3. թագավորները պատվիրում են/հրամայում են (հմմտ. II Մնաց. 31:13)

Նոր Կտակարանում այս իմաստը շարունակվում է օգտագործվել, ինչպես օրինակ Գործք 10:48, որտեղ առաքյալն է պատվիրում: Ինչևէ, Նոր Կտակարանում լրացուցիչ իմաստներ են զարգացվում.

1. կամավորականության տեսակետ (հաճախ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՈՎ)
2. նմանատիպ ինքնասահմանափակում կարող ենք տեսնել Հիսուսի հնազանդությունը Հորը (հմմտ. Գուկ. 2:51)
3. հավատացյալները ենթարկվում են/հնազանդվում են մշակութային տեսանկյուններին և հանգամանքներին, որպեսզի Ավետարանին վնաս չհասցվի
 - ա. բոլոր հավատացյալները (հմմտ. Եփ. 5:21)
 - բ. հավատացյալ կանայք (հմմտ. Կող. 3:18; Եփ. 5:22-24; Տիտոս 2:5; I Պետ. 3:1)
 - գ. հավատացյալները հեթանոս իշխանավորներին (հմմտ. Հռ. 13:1-7; I Պետ. 2:13):

Հավատացյալները գործում են սիրուց դրդված առ Աստված, Քրիստոս, Աստծո թագավորության և ուրիշների բարօրության համար:

Ինչպես *agapaō*, եկեղեցին այս տերմինը լցրեց նոր իմաստով Աստծո թագավորության պահանջների և ուրիշների կարիքների վրա հիմնված: Այս տերմինը ձեռք է բերում ինքնամերժման և անշահախնդրության նոր իմաստ, ոչ թե պատվերի վրա հիմնված, այլ հավատացյալի նոր հարաբերության վրա՝ Իրեն զոհաբերող Աստծո և Մեսիայի վրա: Հավատացյալները հնազանդվում և ենթարկվում են ի օգուտ ուրիշների բարօրության և Աստծո ընտանիքի օրհնության համար:

10:4

NASB, NKJV,

NRSV “for Christ is the end of the law”

TEV “for Christ has brought the law to an end”

JB “but now the law has come to an end with Christ”

Արևելահայերեն «Վասնզի օրէնքի վախճանը Քրիստոսն է»

Արևմտահայերեն «Քանզի օրէնքին վախճանը Քրիստոսն է»

Այս միտքը համապատասխանում է Մաթ. 5:17-48: Օրենքի ծրագիրը, նպատակը կամ վերջը (*telos*) փրկությունը չէր, այլ դատապարտությունը և այդ նպատակը շարունակում է (հմմտ. Գաղ. 3:24-25): Նոր կտակարանային դասական տեքստը այս թեմայի մասին գտնվում է Գաղ. 3:1-29.

Այս հարցը քննարկելու ժամանակ, կոնտեքստը վճռական դեր է խաղում: Պողոսը մի քանի տարբեր ձևերով է օգտագործում Հին Կտակարանը: Երբ խոսքը գնում է քրիստոնեական կյանքի մասին, ապա Հին Կտակարանը Աստծո հայտնությունն է (հմմտ. Հռ. 15:4; I Կոր. 10:6,11), բայց երբ քննարկվում է փրկության մասին, ապա այն ուժերը վատնեց և դադարեցրեց իր գործողությունը

(հմմտ. Եբ. 8:13): Որովհետև սա փոխաբերություն է անցյալ դարաշրջանի համար: Հիսուսի վրա ունեցած հավատքի Ավետարանը Սուրբ Հոգու նոր դարաշրջանն է: Օրենքը կորցրել է իր գործությունը և գործածությունից դուրս եկել: Տես հատուկ թեմա: Պողոսի հայացքները Մովսեսական Օրենքի հանդեպ 13:9:



- NASB, NKJV** “for righteousness to everyone who believes”
- NRSV** “so that there may be righteousness for everyone who believes”
- TEV** “so that everyone who believes is put right with God”
- NJB** “so that all who have faith will be justified”

Արևելահայերեն «ամեն հաւատացողի համար դէպի արդարութիւն»
Արևմտահայերեն «ամէն հաւատացեալի արդարութեան համար»

9-11 գլուխները պետք է մեկնաբանվեն միասին: Աստծո սուվերենության շեշտը, որն այնքան ցայտուն ներկայացված է 9 գլխում, պետք է ընդունել Աստծո կանչը հավատալու, ինչպես նկարագրվում է 10 գլխում (հմմտ. հհ. 4,9,11,13; 3:22; 4:11,16):

Աստծո սիրո և փրկագործության ծրագրի համընդհանրությունը հռչակվել է դեռևս Ծննդ. 3:15 և ակնհայտ հաստատվել Ծննդ. 12:3 և Ելից 19:5-6: Մարգարեները հաճախ խոսել են ամբողջ մարդկությանը ուղղված Աստծո տիեզերական սիրո և ծրագրի մասին: Փաստն այն է, որ կա մեկ ճշմարիտ Աստված և Նա է ստեղծել բոլոր մարդկանց Իր պատկերով և նմանությամբ, և Նա բոլորին է կանչում փրկության : Ինչևէ, խորհուրդն այն է, որ ոչ ոք չի կարող Աստծուն դառնալ առանց Սուրբ Հոգու համագործակցության (հմմտ. Հովհ. 6:44,65): Այդ ժամ հարց է ծագում, «Աստված բոլո՞ր մարդկանց է քաշում փրկության»: Պատասխանը պետք է լինի «Այո» (հմմտ. Հովհ. 3:16; 4:42; I Հովհ. 2:2; 4:14; I Տիմ. 2:4; II Պետ. 3:9): Հանգիստ չտվող մեղքի, մեղանչելու և Սատանայի պարադոքսն այն է, որ ոմանք ասում են «Ոչ»: Երբ Պողոսը առաքյալը քարոզում էր, որոշ հերաներ դարձի էին գալիս և որոշներն էլ ոչ, նույնը նաև հեթանոսների մոտ էր:

«*pisteu*» բառը անգլերենում թարգմանվում է երեք տերմիններով «believe» (հավատալ, վստահել), «faith» (հավատք, վստահություն, համոզվածություն, հավատարմություն), և «trust» (հավատք, վստահություն, հույս, ապավինություն): Այստեղ օգտագործված է ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ, որը խոսում է շարունակական հավատքի մասին: Հավատքը դա որոշակի փաստերի իմացությունը չէ (աստվածաբանություն, պատմական մանրամասնություններ, Ավետարանի բովանդակությունը), որի միջոցով կարելի կլիներ ստանալ Աստծո շնորհքի պարզև քրիստոսի միջոցով: Նոր Կտակարանը ուխտ է; Աստված հաստատում է Իր պայմանները և նախաձեռնությունները, որը մարդկանց մղում է ապաշխարության, բայց մարդն ինքը պետք է արձագանքի Աստծո կանչին հավատքով և ապաշխարությամբ, և կյանքի ընթացքում շարունակվող հավատքի և խոստովանության կյանքն ապրելով: Վճռական նշանակություն ունեն հնազանդությունն ու համբերությունը, հավատքի մեջ հաստատ մնալը: Իսկ նպատակը քրիստոսանման լինելն է և Աստծուն ծառայելը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՅԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ՝ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԿԱՐԱԳՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Փրկությունը դա արդյունք չէ, այլ հարաբերություն: Այն չի ավարտվում այն պահին երբ մարդն ընդունում է Հիսուսին, այլ հենց այդ պահին է սկսվում այն: Սա կրակից ապավոհագրություն չէ, ոչ

էլ երկինք գնալու տոմս, այլ մի կյանք, որը պահանջում է աճել Քրիստոսի մեջ Նրան նմանվելու պայմանով:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՕՐԻՍ)

- S Գործք 15:11
- S Հռոմեացիս 8:24
- S II Տիմոթեոս 1:9
- S Տիտոս 3:5
- S Հռոմեացիս 13:11 (ԱՕՐԻՍԻ միացությունը և կողմնորոշումը ԱՊԱՌՆԻԻ վրա)

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԸՆԹԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ (ՎԱՂԱԿԱՏԱՐ/ԿԱՏԱՐՅԱԼ)

- S Եփեսացիս 2:5,8

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ (ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ)

- S I Կորնթացիս 1:18; 15:2
- S II Կորնթացիս 2:15

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ ԲԱՅ ըստ կոնտեքստի)

- S Հռոմեացիս 5:9,10; 10:9,13
- S I Կորնթացիս 3:15; 5:5
- S Փիլիպեցիս 1:28; I Թեսաղոնիկեցիս 5:8-9
- S Եբրայեցիս 1:14; 9:28
- S (Ենթադրվում է Մաթ. 10:22, 24:13; Մարկ. 13:13)

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:5-13

⁵Որովհետև Մովսեսը գրում է այն արդարութեան համար որ օրէնքիցն է, Թէ այս բաներն անող մարդը կապրի նորանցով: ⁶Բայց հաւատքից լինող արդարութիւնը այսպէս է ասում. Չասես քո սրտումը, Ո՞վ վեր կելնէ երկինքն, այսինքն Քրիստոսնին վայր բերելու համար: ⁷Կամ՝ ո՞վ կիջնէ անդունդն այսինքն Քրիստոսնին մեռելների միջից հանելու համար: ⁸Բայց գիրքն ի՞նչ է ասում. Մօտիկ է քեզ խօսքը, քո բերանումն ու քո սրտումն է, այսինքն հաւատքի խօսքն որ մենք քարոզում ենք: ⁹Որովհետև եթէ բերանովդ Յիսուսին Տէր դաւանես, եւ սրտումդ հաւատաս թէ Աստուած յարութիւն տուաւ նորան մեռելներից, կապրես: ¹⁰Քանզի սրտով հաւատում ենք արդարանալու համար, եւ բերանով դաւանում ենք փրկուելու համար: ¹¹Որովհետև գիրքն ասում է. Ամեն ով որ հաւատայ նորան՝ չի ամաչիլ: ¹²Որովհետև խտրութիւն չկայ Հրէայի եւ Յոյնի մէջ. որովհետև նոյն Տէրը ամենի Տէրն է, առատ ամենի համար՝ որ կանչում են նորան: ¹³Վասնզի ամեն ով որ Տիրոջ անունը կանչէ կապրի:

NASB (UPDATED) TEXT: 10:5-13

⁵For Moses writes that the man who practices the righteousness which is based on law shall live by that righteousness. ⁶But the righteousness based on faith speaks as follows: “DO NOT SAY IN YOUR HEART, ‘WHO WILL ASCEND INTO HEAVEN?’ (that is, to bring Christ down), ⁷or ‘WHO WILL DESCEND INTO THE ABYSS?’ (that is, to bring Christ up from the dead).” ⁸But what does it say? “THE WORD IS NEAR YOU, in your mouth and in your heart”— that is, the word of faith which we are preaching, ⁹if you confess with your mouth Jesus as Lord, and believe in your heart that God raised Him from the dead, you will be saved; ¹⁰for with the heart a person believes, resulting in righteousness, and with the mouth he confesses, resulting in salvation. ¹¹For the Scripture says, “WHOEVER BELIEVES IN

HIM WILL NOT BE DISAPPOINTED.”¹²For there is no distinction between Jew and Greek; for the same Lord is Lord of all, abounding in riches for all who call on Him; ¹³for “WHOEVER WILL CALL ON THE NAME OF THE LORD WILL BE SAVED.”

10:5 Այս համարը ակնարկ է Ղև. 18:5: Այդ խոստումը ճշմարիտ է: Եթե մեկը կարողանար Օրենքը պահել, նա Աստծո կողմից կընդունվեր (հմմտ. Ղուկ. 10:28; Գաղ. 3:12): Խնդիրն այն է, որ Հռ. 3:9,10-18,19,23; 5:18; 11:32 հաստատում է իրականությունը: Բոլորը մեղանչել են: Եվ մեղանչող հոգին պետք է մահանա (հմմտ. Ծննդ. 2:17; 2 Օրին. 30:18; Եզ. 18:4,20): Այս հին ուխտի ճանապարհը փակված է: Այն դարձավ մահվան դատավճիռ, անեծք (հմմտ. 7:10; Գաղ. 3:13; Կող. 2:14):

10:6-8 Այս համարները ակնարկ են 2 Օրին. 30:11-14 Սեպտուագիևից (LXX), որը Պողոսը ձևափոխել է իր նպատակների համար: Սկզբում Օրենքի հետ կապված այս խոսքերն ասվել են Մովսեսի կողմից, բայց այստեղ այն վերաբերվում է Հիսուսի մարմնացմանը, մահվանն ու հարությանը (հմմտ. հ. 9; Եփ. 4:9-10): Պողոսի միտքն այն է, որ փրկությունը հեշտ հասանելի է Քրիստոսում հավատքի միջոցով (հմմտ. 2 Օրին. 30:15-20): Այն հեշտ է, այն հասանելի է, այն բոլորի համար է, որն այնքան տարբեր Մովսեսական Օրենքից:

«Բայց հաստատվեց լինող արդարությունը այսպես է ասում» Առաջուց Պողոսը անձնավորել է «մեղք» և «շնորհք» հասկացողությունները, հիմա նա անձնավորում է «հավատքով արդարանալ» հասկացողությունը : Այդ մասին խոսվում է Հին Կտակարանի մեջբերումների մեջ հհ. 6,7, և 8:

«վեր կելնե. . . վայր բերելու» Մարդը պետք չունի ինչ որ տեղ գնալու՝ Քրիստոսին գտնելու համար: Աստված ուղարկել է Նրան բոլորի համար և տեսանելի կերպով: Կարիք չկա, որ մարդն ընկնի փնտրտուքի մեջ:

«սրտում» Սիրտը դա մարդու բանականությունն է, խելքը և խոհերը: Տես հատուկ թեմա 1:24.

10:9 «եթե» Սա ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՍԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է հնարավոր գործողություն ապագայում: Հ. 9 հավատքի պատգամի բովանդակությունն է (*hoti*):

«դասանես» Այս բարդ բառի *homologeō* բառացի իմաստն է «ասել» և «նույնը», և նաև նշանակում է « համաձայնվել հրապարակալ» (այնքան բարձր ասել, որ ուրիշները լսեն): Քրիստոսի վրա ունեցած հավատքի հրապարակային խոստովանությունը շատ կարևոր է (հմմտ. Մաթ. 10:32; Ղուկ. 12:8; Հովհ. 9:22; 12:42; I Տիմ. 6:12; I Հովհ 2:23; 4:15): Վաղ եկեղեցու հրապարակային խոստովանությունը մկրտությունն էր: Սկրտվողը պետք է դավաներ Քրիստոսի վրա ունեցած իր հավատքը այս արտահայտությամ «Ես հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսը Տեր է» Տես հատուկ թեմա ներքևում.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ, ԴԱՎԱՆԱՆՔ

- Ա. Խոստովանություն կամ դավանանք բառի համար կան նույն հունարեն արմատը ունեցող երկու ձևեր, *homologeō* և *exomologeō*: Բարդ տերմինը, որ Հակոբոսն օգտագործում է *homo* (նույն) բառի հիմքից, *legō* (խոսել), և *ex* (-ից): Դրա հիմնական իմաստն է «ասել նույն բանը, համաձայնվել ինչ որ մի բանի հետ»: *ex* նախածանցը ավելացված է, որպեսզի ընդգծի հրապարակային հռչակման գաղափարը
- Բ. Այս խմբի մեջ մտնող բառերի անգլերեն թարգմանությունը

1. «praise» - փառաբանել, գովերգել, ներբողել
2. «agree» - համաձայնվել
3. «declare» - հայտարարել, հռչակել, հրապարակել
4. «profess» - բացահայտ կերպով հայտարարել, դավանել
5. «confess» - խոստովանել, դավանել

Գ. Այս բառերի խումբն ունի երկու արտաքին հակադիր տեսանկյուններ

1. փառաբանել (Աստծուն)
2. խոստովանել մեղքը

Այսպիսի կապակցություն կարող էր լինել, երբ մարդը գիտակցեց Աստծո սրբությունը և միառժամանակ զգաց իր մեղավոր վիճակը: Այս ճշմարտություններից մեկը գիտակցելու համար պետք է երկուսն էլ ընդունել: Սա նաև կարող է կացատրել երեք հարցերը: առաջինն ու երրորդը առընչվում են տառապանքին և հիվանդությանը (հնարավոր է մեղքի պատճառով) իսկ երկրորդը՝ սրտանց փառաբանությանը:

Գ. Նոր Կտակարանում այս բառախմբի գործածությունը

1. խոստանալ (հմմտ. Մաթ. 14:7; Գործք 7:17)
2. համաձայնվել կամ ինչ որ մի բանի թույլատրություն (հմմտ. Հովհ 1:20; Գուկ. 22:6; Գործք 24:14; Եբր. 11:13)
3. փառաբանել (հմմտ. Մաթ. 11:25; Գուկ. 10:21; Հն. 14:11; 15:9)
4. հաստատել, համաձայնվել
ա. մարդու հետ (հմմտ. Մաթ. 10:32; Գուկ. 12:8; Հովհ. 9:22; 12:42; Հն. 10:9; Փիլ. 2:11; I Հովհ. 2:23; Հայտ. 3:5)
բ. ճշմարտության հետ (հմմտ. Գործք 23:8; II Կոր. 11:13; I Հովհ. 4:2)
5. հայտարարել հրապարակավ (իրավաբանական իմաստը ձևափոխվում է կրոնական հաստատման, հմմտ. Գործք 24:14; I Տիմ. 6:13)
ա. առանց հանցանքի խոստովանության (հմմտ. I Տիմ. 6:12; Եբր. 10:23)
բ. հանցանքի խոստովանություն (հմմտ. Մաթ. 3:6; Գործք 19:18; Եբր. 4:14; Հակոբոս 5:16; I Հովհ. 1:9)



NASB	“Jesus as Lord”
NKJV	“the Lord Jesus”
NRSV, TEV, JB	“Jesus is Lord”

Արևելահայերեն « Յիսուսին Տէր »

Արևմտահայերեն « Յիսուսը Տէր »

Սա վաղ եկեղեցու հավատքի դավանաքի և մկրտության արարողության աստվածաբանական բովանդակության իմաստն էր: Հիսուս Քրիստոսին «Տէր» կոչելը հաստատում էր Նրա աստվածությունը (հմմտ. Հովել 2:32; Գործք 2:32-33,36; Փիլ. 2:6-11) մինչ «Հիսուս» անունը հաստատում էր Նրա պատմական մարդկությունը (հմմտ. I Հովհ 4:1-6):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆԸ

Սա համընդհանուր ընդունված Նոր կտակարանային արտահայտություն էր, որն ընդգծում էր Երրորդության անմիջական ներկայությունն ու ակտիվ գործողությունը եկեղեցում: Այն կախարդական բանաձև չէր, այլ Աստծուն ապավինելու և վստահելու ձև:

Հաճախ այս արտահայտությունը վերաբերում էր Հիսուսին որպես Տէր (հմմտ. Փիլ. 2:11)

1. մկրտության ժամանակ Հիսուսի վրա ունեցած հավատքի դավանանք (հմմտ. Հն. 10:9-13; Գործք 2:38; 8:12,16; 10:48; 19:5; 22:16; I Կոր. 1:13,15; Հակոբոս 2:7)

2. չար ոգիներին հալածելու ժամանակ (հմմտ. Մաթ. 7:22; Մարկ. 9:38; Գուկ. 9:49; 10:17; Գործք19:13)
3. բժշկության ժամանակ (հմմտ. Գործք 3:6,16; 4:10; 9:34; Հակոբոս 5:14)
4. ծառայության գործողություն կատարելու ժամանակ (հմմտ. Մաթ. 10:42; 18:5; Գուկ. 9:48)
5. եկեղեցու դիսցիպլինայի ժամանակ (հմմտ. Մաթ. 18:15-20)
6. հեթանոսներին քարոզելու ժամանակ (հմմտ. Գուկ. 24:47; Գործք 9:15; 15:17; Հռ. 1:5)
7. աղոթքի մեջ (հմմտ. Հովհ. 14:13-14; 15:2,16; 16:23; I Կոր. 1:2)
8. քրիստոնեության հետ կապ ունեցող կերպ (հմմտ. Գործք 26:9; I Կոր. 1:10; II Տիմ. 2:19; Հակոբոս 2:7; I Պետ. 4:14)

Ինչ էլ որ մենք անենք որպես հոշակողներ, ծառայողներ, օգնականներ, բժշկողներ, չար ոգիներ հանողներ և այլն, մենք կատարում ենք Իր կամքով և էությանը, Իր իշխանությանը և Իր օգնությանը - Իր Անվան համար:

«սրտունդ հաւատաս» Այս արտահայտությունը զուգահեռ է «խոստովանել» հասկացողությանը, որն ընդգծում է հավատքի ևս մեկ իրար նման առանձնահատկություն «Հավատալ» (*pistis*) աստվածաշնչյան տերմինն իր մեջ ընդգրկում է (1) անձնական հավատք, վստահություն (եբրայերեն իմաստը), (2) ինտելեկտուալ, ռացիոնալ բովանդակություն (հունարեն), և (3) շարունակական ընթացող ինքնակամ նվիրում (հմմտ. 2 Օրին. 30:20):

«Սիրտ» տերմինի հիմնկտակարանային իմաստը հասկացվում էր մարդու էությունը: Տվյալ կոնտեքստում Պողոսն օգտագործում է «բերան» և «սիրտ» բառերը միայն այն պատճառով, որ նա հ. 8 մեջբերում էր արել 2 Օրին. 30:14: Դա չի նշանակում, որ նա հաստատում էր մի խիստ օրենք, որ փրկվելու համար պետք է որ մարդն անպայման բարձրաձայն աղոթի:

10:10 «արդարանալու համար» Աստծո նպատակը յուրաքանչյուր հավատացյալի համար այն չէ, որ մի օր երկնքում կլինի նա, այլ հիմա քրիստոսանման լինելն է: Մեկ ուրիշ կարևոր հատված նախասահմանության հետ կապված Եփ. 1:3-14 է, այս ճշմարտությունը հաստատող զորավոր շեշտը դրված է հ. 4: Հավատացյալները պետք է սուրբ և կատարյալ լինեն: Ընտրությունը ոչ միայն վարդապետություն է, այլ նաև ապրելակերպ (հմմտ. 2 Օրին. 30:15-20):

Համար 10 ընդգծվում են Մեծ Պատվիրանի երկու գլխավոր առանձնահատկություններ (հմմտ. Մաթ. 28:19-29), փրկություն (աշակերտներ պատրաստել) և արդարություն (սովորեցնելով նրանց պահել իմ բոլոր պատվիրանները): Այս նույն համակցությունը գտնվում է Եփ. 2:8-9 (ձրի փրկություն Աստծո շնորհքով Քրիստոսի միջոցով) և «բարի գործեր» անելու կոչ Եփ. 2:10: Աստծո փափագն է միշտ եղել տեսնել մարդուն Իր պատկերով և նմանությամբ:

10:11 Սա մեջբերում է Ես. 28:16, Պողոսի ավելացրած «ով որ» բառով: Եսայիի գրքում այս խոսքը վերաբերում է Մեսիայի հավատքին, Աստծո անկյունաքարին (հմմտ. 9:32-33): Ինչպես Հռ. 9 մեծարվում է Աստծո սուվերենությունը, գլուխ 10 ընդգծվում է անհրաժեշտությունը բոլորի համար արձագանքել Քրիստոսի կանչին: Այն որ Աստծուն դառնալու առաջարկությունը բոլորին է ուղղված հստակ հաստատում է հ. 4 «բոլորը» բառը, հհ. 11, 13 «ով որ» և հ. 12 «բոլորին» (երկու անգամ): Սա տալիս է աստվածաբանական հավասարակշռություն հատուկ շեշտով ընտրության վրա (նախասահմանություն) գլուխ 9:

« հաւատայ նորան » Սա ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ *epi* ՆԱԽԴԻՐՈՎ (հմմտ. 4:24; 9:33; I Տիմ. 1:16): Հավատքը ոչ միայն սկզբանական արձագանքն է Աստծո կանչին, այլ հետագա ամենօրյա ապրելակերպ, որը պահանջվում է փրկության համար: Փրկության համար կարևոր է ոչ միայն ճիշտ աստվածաբանությունը (ավետարանական ճշմարտություններ), այլ անձնական հարաբերությունը Աստծո հետ (բարեպաշտ անձ), որը տանում է աստվածահաճո կյանքի (կյանք ըստ Ավետարանի): Զգուշացեք հեշտ հավատքից, որը

ճշմարտությունը բաժանում է կյանքից: Փրկարար հավատքն է, որ տարբերվում է և կյանքեր է փոխում: Տես հատուկ թեմա: Հավատում է, հավատք 4:5:



NASB, TEV “not be disappointed”
NKJV, NRSV “will not to put to shame”
JB “will have no cause for shame”

Արևելահայերեն « չի ամաչիլ »
Արևմտահայերեն « պիտի չամչնայ »

Նրանք ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին մերժված, անտեսված չեն լինի: Սա մեջբերում է Ես. 28:16, որը Պողոսի համար դարձավ բանալի համար 9:33:

10:12 « Որովհետև խտրութիւն չկայ Հրեայի եւ Յոյնի մեջ » Սա Նոր Ուխտի մեծագույն եռթյուն է (հմմտ. Հռ. 3:22,29; Գաղ. 3:28; Եփ. 2:11-3:13; Կող. 3:11): Միակ ճշմարիտ Աստվածը գնեց Իր ընկած, կորսված արարչագործությունը Իր իսկ սեփական գործերով: Նա փափագում է, որ Իր նմանությամբ և պատկերով ստեղծված բոլոր մարդիկ Իրեն դառնան և Իրեն նմանվեն: Իր մոտ կարող են գալ բոլորը:

Ավետարանի համընդհանուր սկզբունքը (հ. 12 երկու անգամ օգտագործված է « բոլորը») երկու կարևոր մասերի է բաժանվում; (1) հրեաների և հեթանոսների միջև տարբերություն չկա; բոլորն էլ մեղանչել են (հմմտ. 3:9,19,22-23; 11:32) և (2) հրեաների և հեթանոսների միջև տարբերություն չկա; բոլորն էլ կարող են փրկվել: Ավետարանը հեռացնում է բոլոր մարդկային արգելքները (հմմտ. Հովել 2:28-29; I Կոր. 12:13; Գաղ. 3:28; Կող. 3:11), համենայն դեպս փրկության գործում:

«առատ ամենի համար» Երբ Պողոսը մտածում է Քրիստոսում Աստծո շնորհքի մասին, նա հաճախ օգտագործում է «հարստություն» բառը (հմմտ. 2:4; 9:23; 11:12[երկու անգամ],33; I Կոր. 1:5; II Կոր. 8:9; Եփ. 1:7,18; 2:7; 3:8,16; Փիլ. 4:19; Կող. 1:27; 2:2):

10:13 Սա շատ հայտնի մեջբերում է Հովել 2:32, Պողոսի կողմից օգտագործված, այստեղ ստանում է երկու բացարձակ նոր շեշտադրություն (1) Հովել մարգարեության մեջ օգտագործված էր ՅԱՀՎԵ անունը, իսկ Պողոսը Հռոմեացիս թղթում ինչպես և Պետչոսը Գործք 2:21 այն փոխարինել են Հիսուսի անունով (նաև ուշադրություն դարձրեք Հովհ. 12:41 և Ես. 6:9-10; Փիլ. 2:9 և Ես. 45:22-25; Հռ. 9:33 և Ես. 8:13-14); և (2) Հովել մարգարեության մեջ «կփրկվի» արտահայտությունը ֆիզիկական փրկության իմաստով էր հասկացվում, իսկ Հռոմեացիներին ուղղված թղթում այն վերաբերվում է հոգևոր ներմանը և հավիտենական փրկությանը:

«Անունը կանչել» գաղափարի հինկտակարանային իմաստն էր՝ պաշտամունքի ժամանակ հավատքի հրապարակավ խոստովանություն: Այս նույն գաղափարը երևում է Գործք 7:59; 9:14,21; 22:16; I Կոր. 1:2; II Տիմ. 2:22. Տես հատուկ թեմա: Կանչված 1:6.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՍՈՒՄ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԿԱՄ ՀԻՍՈՒՄԸ ՆԱԶԱՐԵԹԻՑ

Կան մի քանի տարբեր հունարեն տերմիններ, որ օգտագործվում է Նոր Կտակարանում, որը հստակ մատնացույց է անում Հիսուս Քրիստոսին:

Ա. Նորկտակարանային տերմիններ

1. Նազարեթ – քաղաք Գալիլիայում (հմմտ. Գուկ. 1:26; 2:4,39,51; 4:16; Գործք 10:38): Այս քաղաքը մասին չի հիշատակվում ժամանակակից աղբյուրներում, բայց այն հայտնաբերվել է ավելի ուշ արձանագրություններում:
Հիսուսի համար Նազարեթից լինելը շնորհ, հաճոյախոսություն (հմմտ. Հովհ. 1:46):
Հիսուսի խաչի վրայի նշանն ուներ այս քաղաքի անունը, որը ցույց էր տալիս Իր հանդեպ ունեցած հրեաների արհամարհանքը:
 2. *Nazarēnos* - ամենայն հավանականությամբ այս բառը աշխարհագրական տեղանքի անուն է (հմմտ. Գուկ 4:34; 24:19):
 3. *Nazōraios* – կարող է նշանակել քաղաքի անուն, բայց նաև կարող է օգտագործվել է հին եբրայերեն «ճյուղ» Մեսիական տերմինի համար (*netzer*, հմմտ. Ես. 4:2; 11:1; 53:2; Եր. 23:5; 33:15; Չաք. 3:8; 6:12): Գուկասն այս բառն օգտագործում է 18:37 և Գործք 2:22; 3:6; 4:10; 6:14; 22:8; 24:5; 26:9:
- Բ. Այս տերմինների կիրառության պատմական օրինակները Նոր Կտակարանում չկան: Նրանց նշանակությունը պատմականորեն այլ է.
1. Այդպես կոչում էին հրեական համայնքներում գտնվող հերետիկոսների խմբին, որոնք զոյություն ունեին մինչև քրիստոնեությունը:
 2. Հրեական միջավայրերում Հիսուս Քրիստոսին հավատացողներին այդպես էին նկարագրում (հմմտ. Գործք 24:5,14; 28:22):
 3. Սիրիական (Արամեական) եկեղեցիներում հավատացյալներին դիմելու ընդունված տերմին էր : Հավատացյալները «քրիստոնեա» անվանվում էին հունական եկեղեցիներում
 4. Որոշ ժամանակ անց, Երուսաղեմի անկումից հետո փարիսեցիները Յամնիայում վերակազմավորեցին և ուժեղ թափով հրահրում էին բաժանումներ ժողովարանի և եկեղեցու միջև: «Տասնութ օրհնությունները» (the Eighteen Benedictions) աշխատությունում, Բերակոտի (*Berakoth*) 28բ-29ա տեքստում գտնվում է քրիստոնեաներին անիծելու տիպիկ բանաձևը, որտեղ հավատացյալներին անվանում են «նագովրեցիներ»:
«Թող որ բոլոր նագովրեցիներն ու հերետիկոսները անհետանան մեկ ակնթարթում; ջնջվեն կյանքի գրքից և հավատարիմների կողքին չպիտի դասվեն»:
- Գ. Հեղինակի կարծիքը
- Ես զարմացած եմ այսքան շատ քանակությամբ տարբերակների համար, որ այս բառն ունի, չնայած Ես գիտեմ որ նման բան մեկ անգամ չի հանդիպում Հին Կտակարանում: Օրինակ «Հիսուս» բառը հին եբրայերենում ունի մի քանի տարբեր արտասանություններ: Բայց և այնպես, (1) սերտ կապը մեսիական տերմինի «Ճյուղ» հետ; (2) միացված բացասական իմաստի հետ; (3) բացակայող կամ շատ քիչ հաստատումը Գալիլիա քաղաքի մասին, այս ամենը մղում է ինձ մնալ որոշ անորոշության մեջ դրա իրական իմաստը պնդելու համար; և (4) այն հնչում է չար ոգու բերանից վախճանաբանական իմաստով («Դու եկել ես՝ մեզ կործանելու»):
- Ամբողջական բիբլիոգրաֆիական/ մատենագրություն բառային սերտողության համար կարող եք օգտվել հետևյալ գրքից, Կոլին Բրաուն « Նոր Կտակարանի աստվածաբանության նոր միջազգային բառարան» (Colin Brown (հրատ.), *New International Dictionary of New Testament Theology*), հատ. 2, էջ. 346:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:14-15

¹⁴ Արդ ի՞նչպես կանչեն, որին չհաւատացին. եւ ի՞նչպէս հաւատան, որից չլսեցին. եւ ի՞նչպէս լսեն առանց քարոզողի. ¹⁵ Եւ ի՞նչպէս քարոզեն, եթէ չուղարկուին. ինչպէս գրուած է, Որպէս զեղեցիկ են նորանց ոտները՝ որ խաղաղութիւն են քարոզում եւ բարի բաներ են աւետիք տալիս:

NASB (UPDATED) TEXT: 10:14-15

¹⁴How then will they call on Him in whom they have not believed? How will they believe in Him whom they have not heard? And how will they hear without a preacher? ¹⁵How will they preach unless they are sent? Just as it is written, “HOW BEAUTIFUL ARE THE FEET OF THOSE WHO BRING GOOD NEWS OF GOOD THINGS!”

10:14-15 Մի շարք հարցեր և դրանց հետևող հինկտակարանային մեջբերումները ընդգծում են , որ Իսրայելը երբեք պատշաճ կերպով չարձագանքեց ՅԱՀՎԵԻ պատգամին կամ էլ Նրա պատգամաբերներին: Աստված ուղարկում է Իր պատգամաբերներին (մարգարեներ, առաքյալներ, քարոզիչներ, ուսուցիչներ, ավետարանիչներ): Այս պատգամաբերները օրհնություն են աշխարհի համար, որը փրկության կարիք ունի: Քանի որ Աստված մեծահոգաբար ուղարկում է Իր բարի լուրը տարածողներին, լսողները պետք է արձագանքեն այդ լուրին համապատասխան կերպով: Պողոսն ամրապնդում է այս միտքը մեջբերելով Ես. 52:7: Պողոսն ընդարձակում է այս համարի իմաստը Ավետարանի քարոզիչների մասին:

Փրկարար հավատքն ունի մի քանի տարրեր (1) բարի լուր, որին պետք է հավատալ; (2) մարդ, որին պետք է ձեռք բերել; (3) ապաշխարություն և շարունակվող խոստովանություն և հավատք; (4) հնազանդության կյանք; և (5) համբերություն (տես ծանուցումը 1:5):

10:15 Սա Հռոմեացիներին ուղղված Թղթի մեծ պատվիրանն է: Փրկությունը գալիս է Ավետարանը լսելուց և ընդունելուց: Քարոզիչներն ուղարկվում են նրա համար, որ «բոլորը» փրկվեն:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:16-17

¹⁶Բայց ոչ թե ամենքը հնազանդ եղան ատետարանին: Որովհետեւ Եսայիան ասում է. Տէր, ո՞վ հաւատաց մեր լուրին: ¹⁷Ուրեմն հաւատքը լսելուցն է, եւ լսելը՝ Աստուծոյ խօսքից:

NASB (UPDATED) TEXT: 10:16-17

¹⁶However, they did not all heed the good news; for Isaiah says, “LORD, WHO HAS BELIEVED OUR REPORT?” ¹⁷So faith comes from hearing, and hearing by the word of Christ.

10:16 Եվ նորից Պողոսն օգտագործում է Հին Կտակարանի մարգարեական հաստատումները, որոնք սկզբում եղել են ՅԱՀՎԵԻ խոսքերը, ուղղված Իսրայելին Հիսուս –Մեսիայի մասին բարի լուրին: Եվ ինչպես որ Հին Կտակարանի հրեաները մերժեցին Աստծո պատգամը, այնպես էլ Պողոսի ժամանակների հրեաները մերժեցին: Սա մեջբերում է Ես. 53:1 բայց նաև աստվածաբանորեն կապված է Իսրայելի Աստծո պատգամը մերժելու հետ Ես. 6:9-13:

10:17 Ավետարանը նախ և առաջ պատգամ է (հմմտ. Գաղ. 3:2): Բայց այդ պատգամը դառնում է խոսք «Քրիստոսի խոսքը» (հմմտ. Կող. 3:15-16):

«Աստուծոյ խօսքիցը» Ըստ կոնտեքստի այս արտահայտությունը պետք է նշանակի լուր Քրիստոսի մասին, որը տարածում էին քարոզիչները: Ավետարանի պատգամը դա Քրիստոսի միջոցով պատգամը ընկած, մեղավոր աշխարհին փոխանցելու Աստծո գործելու ձևն է:

Հին հունարեն ձեռագրերում այս առիթով կա մի քանի տարբերակ; (1) P⁴⁶, Ռ^{*}, B, C, D^{*} ձեռագրերում գրված է «Քրիստոսի խոսքը», այնինչ (2) Ռ^c, A, D^c, K, P ձեռագրերում «Աստծո խոսքը»: Առաջին տարբերակը ամենաանսովորն է (հմմտ. Կող. 3:16) և, ուստի, շատ հավանական է ավելի մոտ է բնագրին (Մա տեքստային քննադատության հիմնական կանոններից մեկն է): UBS⁴ կազմողները այս տարբերակը գնահատում են «A» կատեգորիայի (հուսալի): Այն Նոր Կտակարանում հանդիպում է միայն մեկ անգամ: Երկրորդ տարբերակը «Աստծո խոսքը» հատնվում է մի քանի անգամ (հմմտ. Գուկ. 3:2; Հովհ. 3:34; Եփ. 6:17; Եբր. 6:5 և 11:3):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:18-21

¹⁸Բայց ես ասում եմ. Մի՞թե չլսեցին. մանաւանդ որ նորանց ձայնը դուրս գնաց բոլոր երկիրը. եւ նորանց խօսքը՝ մինրեւ աշխարհքի ծայրերը:¹⁹Բայց ասում եմ. Մի՞թե Իսրայելը չգիտաց. առաջ Մովսէսն է ասում. Ես ձեզ նախանձատր կշինեմ մի ոչինչ ժողովրդով, եւ մի անմիտ ազգով կը կսկծացնեմ ձեզ:²⁰Բայց Եսայիան ւաւելի համարձակում է եւ ասում. Ես գտնուեցայ նորանցից որ ինձ չէին որոնում. յայտնի եղայ նորանց որ ինձ համար չէին հարցնում:²¹Բայց Իսրայելին ասում է. Բոլոր օրն իմ ձեռքերը մեկնեցի դէպի մի անհնազանդ եւ հսկառակող ժողովուրդ:

NASB (UPDATED) TEXT: 10:18-21

¹⁸**But I say, surely they have never heard, have they? Indeed they have; “THEIR VOICE HAS GONE OUT INTO ALL THE EARTH, AND THEIR WORDS TO THE ENDS OF THE WORLD.”** ¹⁹**But I say, surely Israel did not know, did they? First Moses says, “I WILL MAKE YOU JEALOUS BY THAT WHICH IS NOT A NATION, BY A NATION WITHOUT UNDERSTANDING WILL I ANGER YOU.”** ²⁰**And Isaiah is very bold and says, “I WAS FOUND BY THOSE WHO DID NOT SEEK ME, I BECAME MANIFEST TO THOSE WHO DID NOT ASK FOR ME.”** ²¹**But as for Israel He says, “ALL THE DAY LONG I HAVE STRETCHED OUT MY HANDS TO A DISOBEDIENT AND OBSTINATE PEOPLE.”**

10:18 Այս համարը պնդում է, որ հրեաների մեծամասնությունը լսել էր Աստծո պատգամը, և որ նրանք պատասխանատու էին այն մերժելու համար (ԿԲԿՆԱԿԻ ԺԽՏԱԿԱՆ հունարեն արտահայտություն՝ ընդգծելու համար): Նրանց հիմնական խնդիրը ոչ թե անտեղյակությունն էր, այլ անհավատությունը:

Պողոսը մեջբերում է Սաղ. 19:4. Այս Սաղմոսի մեջ 1-6 համարները վերաբերվում են բնական կամ ընդհանուր հայտնությանը, որն Աստված հայտնում է ստեղծագործության միջոցով (հմմտ. Հռ. 1-2): Պողոսը փոխում է (1) տիեզերական վկայությունը («բոլոր երկիրը») և (2) Աստծո արարչագործության պատգամի լռածայն փոխանցումը Ավետարանի քարոզիչների միջոցով (առաքյալներ, մարգարեներ, ավետարանիչներ, հովիվներ և ուսուցիչներ, հմմտ. Եփ. 4:11), որը վերաբերում է հատուկ հայտնությանը (հմմտ. Սաղ. 19:8-14): Հիմնական միտքն այն է, որ ավետարանի պատգամը մտել էր Պողոսի օրերում ծանոթ աշխարհի մեջ (հունա-հռոմեական աշխարհ): Պողոսն օգտագործում է ռաբբիական հերմենևտիկա; նա ձևափոխում է սկզբնական հինկտակարանային կոնտեքստը համապատասխանեցնելով իր աստվածաբանությանը և բանավեճի նպատակներին: Պետք է հստակ որոշված լինի, որ Հին Կտակարանի օգտագործումը Պողոսի կողմից ինչպես նաև մյուս առաքյալների, անկասկած եղել է Սուրբ Հոգու առաջնորդությամբ (հմմտ. Ուղեւ. 1:20-21): Այսօր հավատացյալները Հոգու լուսավորվածության ներքո չեն կարող մեկնաբանության մեթոդներ վերարտադրել, որոնցից օգտվել են Նոր Կտակարանի հեղինակները:

10:19-20 Հրեաները լսել էին Աստծո պատգամը, թեկուզ նույնիսկ Մովսեսից: Հրեաները լսել էին և ի վիճակի էին հասկանալու այն, որ հաշտությունը Աստծո հետ, բայց միայն հավատքի միջոցով, բոլոր մարդիկ կարող են ձեռք բերել:

Այս համարներում, Աստված ասաց Իր ընտրյալ ազգին, որ հեթանոսներն էլ են ներգրավված փրկության ծրագրի մեջ: Սա ասվում է մեջբերելով 2 Օրին. 32:21 հ. 19-ում և Ես. 65:1-2 հհ. 20-21-ում: Հրեաներին ցնցող այս լուրը հեթանոսների հետ կապված նրա համար էր, որ հրեաների մոտ արթնանար հավատքի հանդեպ նախանձավորություն (հմմտ. 11:11,14).

10:21 Այս հաստատուն միտքը մեջբերում է Ես. 65:2 Սեպտուագիանից և խոսում է թե ինչպես ՅԱՀՎԵՆ մերժվում է ուխտի ժողովրդի կողմից(հմմտ. Ես. 65:1-7): Աստված միշտ հավատարիմ է եղել, իսկ Իսրայելն անհավատարիմ: Նրանց անհավատարմությունը անցյալում բերեց ժամանակավոր դատապարտություն ինչպես ազգի, այնպես էլ անհատների վրա, սակայն նրանց մերժումը Աստծո արդարության Քրիստոսի վրա ունեցած հավատքի միջոցով կբերի հավիտենական դատաստան:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Եթե Աստծո ընտրությունն ունի վճռական նշանակություն, ապա ինչու՞ է Պողոսն աղոթում Իսրայելի համար 10:1? Եվ ինչու՞ 10:9-13 հատվածում շեշտվում է այն փաստը, որ մարդն ինքը պետք է արձագանքի Աստծո կանչին:
2. Ի՞նչ է նշանակում 4-րդ համարը: «Քրիստոսը վերջ դրե՞ց Օրենքին»:
3. Թվարկեք հավատքի բոլոր տարրերը 10:9-10 հատվածում:
4. Ինչու՞ է Պողոսը հաճախ մեջբերում անում Հին Կտակարանից: Ինչպե՞ս է սա համապատասխանում այն փաստին, որ Հռոմի եկեղեցին հիմնականում կազմված էր նախկին հեթանոսներից:
5. Ինչպե՞ս են հհ. 11-13 կապվում գլուխ 9 հետ:
6. Ինչպե՞ս են հհ. 14-15 իմաստով կապվում աշխարհի միսիոներության հետ:
7. Ինչպե՞ս է 10 գլխում երևում, որ մարդու ազատ կամքը մասնակցություն ունի իր փրկության մեջ:

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 11**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Իսրայելի մնացորդը	Իսրայելը մերժված է ոչ ամբողջությամբ	Իսրայելը մերժված է ոչ վերջնականապես	Աստծո Ողորմությունը Իսրայելին	Իսրայելի մնացորդը
11:1-10	11:1-10	11:1-10	11:1-6 11:7-10	11:1-10
Հեթանոսների փրկությունը	Իսրայելը մերժված է ոչ վերջնականապես			Հրեաները կվերականգնվեն ապագայում
11:11-12	11:11-36	11:11-12	11:11-12	11:11-15
			Հեթանոսների փրկությունը	
11:13-16		11:13-16	11:13-15	Հրեաները դեռևս ընտրված ժողովուրդ են
		Ձիթենու փոխաբերությունը	11:16-18	11:16-24
11:17-24		11:17-24		
			11:19-24	
Իսրայելի վերականգնումը		Ամբողջ Իսրայելը կփրկվի	Աստծո Ողորմությունը բոլորին	Հրեաների դարձի գալը
11:25-32		11:25-32	11:25-32	11:25-27 11:28-29 11:30-32
			Փառաբանություն Աստծուն	Աստծո ողորմության և իմաստության հիմնը
11:33-36		11:33-36	11:33-36	11:33-36

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ

Ա. Գլուխ 11 շարունակում է պարադոքսալ հարաբերությունը ընտրության և ավետարանի միջև: Հին Կտակարանի ընտրությունը ծառայության համար էր, իսկ Նոր Կտակարանի ընտրությունը փրկության համար էր: Որոշ իմաստով հավատացյալները կանչված են լինելու թե Աստծո ընտանիքի անդամ (ՆԿ) և թե ծառաներ (ՀԿ): Ընտրությունը թե համընդահանուր է և թե անհատական, դրական և բացասական (Հակոբ/Իսրայել - Եսավ/Եդովմ; Մովսես/Փարավոն): Վերջին հաշվով ներքին լարվածություն գոյություն ունի ոչ միայն Աստծո սուվերենության և մարդու ազատ կամքի միջև, այլ հենց Աստծո էության մեջ: 9-11 գլուխները կրկին ու կրկին ընդգծում են Աստծո ողորմությունը և մեղավոր մարդկության ըմբոստությունը: Աստված հավատարիմ է, մարդիկ անհավատ:

Ընտրությունը վարդապետություն չէ, հիմնավորված որոշ բաների մերժման վրա, այլ հույսի, ապահովության և վստահության հիմք նրանց համար ովքեր ընդունել են խոստումներն ու ուխտը- հաստատող Աստծո Որդուն:

Բ. 9 գլխում Պողոսը հաստատեց Աստծո սուվերենությունն ու ազատությունը: Նույնիսկ ուխտի առկայության դեպքում Աստված ազատ է վարվելու այնպես ինչպես հարմար է գտնում: 10 գլխում Պողոսը հաստատում է, որ հրեաներն ազատ էին ընդունելու կամ մերժելու Աստծո խոստումներն ու ուխտերը: Քանի որ նրանք ընտրեցին անհավատարմությունն ու մերժեցին Աստծո խոստումներն ու ուխտերը, որոշ իմաստով նրանք էլ մերժվեցին Աստծո կողմից: Ինչևէ, 11 գլխում Պողոսը կհաստատի Աստծո հավատարմությունը, նույնիսկ չնայելով Իսրայելի անհավատարմությանը (հմմտ. 2 Օրին 8):

Գ. Անցյալում, ինչպես նաև հիմա, հրեական մնացորդը հավատաց և ապրեց Աստծո Մեսիայի հավատքով: Պողոսը սրա օրինակն էր: Անհավատ հրեաների մերժումը թույլ տվեց փրկված հեթանոս հավատացյալների ներգրավումը: Հեթանոսների փրկվելը կրեթի (1) Աստծո ժողովրդի համալրմանը, կամ (2) հրեաներից և հեթանոսներից կազմված Աստծո ընտրյալների ամբողջական թվին: Հեթանոսների այս արտոնությունը կմղի Իսրայելին հավատալ Աստծո Մեսիային՝ Հիսուսին:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:1-6

¹Արդ ասում եմ, Մի՞թե Աստուած դէն զգեց իր ժողովուրդը. քաւ լիցի. որովհետեւ ես էլ Իսրայելացի եմ՝ Աբրահամի սերունդիցն: Բենիամինի ցեղիցը: ²Աստուած դէն չզգեց իր ժողովուրդը որին առաջուց ճանաչեց. կամ թէ չգիտէ՞ք թէ գիրքն ինչ է ասում Եղիայի համար գրուածքումը. ի՞նչպէս նա Իսրայելի դէմ զանգատում է Աստուծոյ առաջին. ³Տէր, քո մարգարէներին կոտորեցին եւ քո սեղանները կործանեցին. եւ միայն ես մնացի, եւ իմ անձն որոնում եմ: ⁴Բայց աստուածային պատգամն ի՞նչ է ասում նորան. Եօթը հազար մարդ թողի ինձ համար, որ Բահադին ծունր չդրին: ⁵Հէնց այսպէս էլ այս ժամանակումը շնորհքի ընտրութեան պէս մի մնացորդ եղաւ: ⁶Բայց եթէ շնորհքով է՝ էլ գործերից չէ. ապա թէ ոչ՝ շնորհքն էլ շնորհք չի լինիլ. բայց եթէ գործերից է, էլ շնորհք չէ:

NASB (UPDATED) TEXT: 11:1-6

¹I say then, God has not rejected His people, has He? May it never be! For I too am an Israelite, a descendant of Abraham, of the tribe of Benjamin. ²God has not rejected His people whom He foreknew. Or do you not know what the Scripture says in *the passage about Elijah*, how he pleads with God against Israel? ³“Lord, THEY HAVE KILLED YOUR PROPHETS, THEY HAVE TORN DOWN YOUR ALTARS, AND I ALONE AM LEFT, AND THEY ARE SEEKING MY LIFE.” ⁴But what is the divine response to him? “I HAVE KEPT for Myself SEVEN THOUSAND MEN WHO HAVE NOT BOWED THE KNEE TO BAAL.” ⁵In the same way then, there has also come to be at the present time a remnant according to *God’s* gracious choice. ⁶But if it is by grace, it is no longer on the basis of works, otherwise grace is no longer grace.

11:1 « Մի՞թե Աստուած դէն զգեց իր ժողովուրդը» Այս հարցի ակնկալվող պատասխանը «ոչ» է: Պողոսն այս հարցին պատասխանում է հ. 1բ-10: Այս բաժինը պետք է կապել Պողոսի նախորդ փաստարկի հետ: 9-11 գլուխները կազմում են գրական բաժին, մեկ երկարատև, շարունակական փաստարկ:

Հետաքրքիր է նշել, որ վաղ հունարեն պապիրուսե ձեռագրերը P⁴⁶ և երկաթագիր ձեռագրերում F և G «ժողովուրդ» բառի փոխարեն օգտագործված է «ժառանգություն» բառը, որը հնարավոր է վերցված է Սաղ. 94:14 Սեպտուագիմի:

« քաւ լիցի» Այս արտահայտությունը հատուկ է Պողոսին վարկածային/ենթադրական ընդդիմության հնարավոր հարցերը մերժելիս (սուր քննադատություն, հմմտ. 3:4,6,31; 6:2,15; 7:7,13; 9:14; 11:1,11):

«եւ էլ Իսրայելացի եմ» Պողոսն իր օրինակն է բերում, ապացուցելու համար հավատացյալ հրեա մնացորդի գոյությունը: Ավելի ուժեղ տեղեկություն իր հրեական ծագման մասին Պողոսը շարադրում է Փիլ. 3:5:

11:2 «Աստուած դէն չզգեց իր ժողովուրդը» Հնարավոր է սա ակնարկ է Սաղ. 94:14 (հմմտ. 2 Օրին. 31:6; I Թագ. 12:22; III Թագ. 6:13; Ողբ 3:31-32): Եվ սա հ. 1 հարցի հստակ պատասխանն է:

«որին առաջուց ճանաչեց» Սա ակնհայտ հաստատում է Աստծո ընտրությունը Իսրայել ազգին: Տես ծանուցում 8:29: Այս փաստարկը միառժամանակ վերաբերվում է և 9 գլխին, և նաև հ. 4-6: Բանալի իմաստը ոչ թե Իսրայելի արարքներն էին, այլ Աստծո ընտրությունը: Աստված

հավատարիմ է Իր խոստումներին Իր էությունից ելնելով, և ոչ թե Իսրայելի ճիշտ արարքի համար (հմմտ. Եզ. 36:22-32):

«գիրքն ինչ է ասում» Սա ակնարկ է այն նկարագրության, երբ Եղիայն խափավ Հեզաբելից III Թագ. 19:10, մեջբերված հ. 3:

11:4 «Եօթը հազար մարդ թողի ինձ համար, որ Բահադին ծունր չդրին» « Ինձ համար» արտահայտությունը բացակայում է հին եբրայերեն Մագորեթիկ/Մագորական I Թագ. 19:18 տեքստում (Պողոսը չի մեջբերում MT կամ LXX), այլ այն ավելացված է Պողոսի կողմից ընդգծելու համար Աստծո ընտրությունը: I Թագ. 19:18 հավատարիմ մնացորդը Աստծո ընտրությամբ էր, և ոչ թե այն բանի համար, որ նրանք չերկրպագեցին Բահադին:

Պողոսն այն միտքն է արտահայտում, որ Եղիայի օրերում նույնիսկ անհավատ, կռապաշտ Իսրայելի մեջ կար հավատացյալների փոքր խումբ: Եվ նաև Պողոսի օրերում կար հրեա հավատացյալ մնացորդ: Բոլոր ժամանակներում եղել են այն հրեաները, որոնք հավատքով են արձագանքել և ոչ թե իրենց գործերով: Պողոսը հաստատում է, որ այս հավատացյալ հրեաներին ոգեշնչում էր Աստծո ողորմությունն ու շնորհքը (հհ . 5-6):

«Բահադին» Այստեղ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ՀՈԳԸ միացած է ԳՈՅԱԿԱՆԻ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻՆ: Հրեաները սիստեմատիկ կերպով հին եբրայերեն բառի ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ (*bosheth*) ձայնավորները, որը նշանակում է «ամոթ, անպատվություն» տեղադրում էին հեթանոս աստվածների անունների բաղաձայների մեջ, նրանց ծաղրելու համար:

11:5-6 Սրանք բանալի համարներ են: Նրանք Հին Կտակարանում Աստծո գործողությունները կապում են ներկա իրավիճակի հետ: Եվ այդ կապը ընտրությունն է Աստծո շնորհքով (հմմտ. 9:15,16,18; 11:30,31,32): Աստծո շնորհքը առաջնային է, բայց և նաև անհրաժեշտ է մարդու հավատքը (հմմտ. Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21), միառժամանակ չհիմնվելով մարդու գործերի և արժանիքների վրա (հմմտ. Եփ. 2:8-9; II Տիմ. 1:9; Տիտոս 3:5): Այս ճշմարտությունները վճռորոշ նշանակություն ունեն Պողոսի փաստարկի մեջ ամբողջ 9-11 գլուխներում:

11:6 «եթե» Այստեղ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը հաստատվում է որպես ճշմարտություն ելնելով հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակներից: Փրկությունը Աստծո շնորհքով է (տես ծանուցում 3:24, հմմտ. 6:23; Եփ. 2:8-9):

KJV տարբերակում հ. 6 հանդիպում է «Բայց եթե այն գործերից է, ուրեմն նա այլևս շնորհք չէ; հակառակ դեպքում գործը այլևս գործ չէ» արտահայտությունը: Այս նախադասությունը ընդգրկված չէ շատ հին հունարեն ձեռագրերում P⁴⁶, Ռ^{*}, A, C, D, G, կամ P, և հին լատիներեն տարբերակներում, բայց այս արտահայտության երկու տարբեր ձևեր են հանդիպում Ռ^c և B ձեռագրերում: UBS⁴ կազմողները տարբերակը գնահատում են առանց այս արտահայտության որպես «A» կատեգորիա (հուսալի/վստահելի):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:7-10

⁷Ուրեմն ի՞նչ. այն որ Իսրայելը որոնում էր՝ նորան չհասաւ, բայց ընտրուածները հասան, եւ միւսները կուրացան:⁸ Ինչպէս գրուած է. Աստուած տուաւ նորանց թմրութեան հոգի. աչքեր՝ որ չտեսնեն, եւ ականջներ՝ որ չլսեն, մինչեւ այս օրուայ օրը:⁹ Եւ Դաւիթն ասում է. Նորանց սեղանը թող որոգայթ լինի նորանց՝ եւ որս եւ գայթակղութիւն՝ եւ հատուցումն նորանց համար:¹⁰ Թող նորանց աչքերը խաւարուին՝ որ չտեսնեն. եւ նորանց թիկունքները միշտ ծռեցրու:

NASB (UPDATED) TEXT: 11:7-10

⁷What then? What Israel is seeking, it has not obtained, but those who were chosen obtained it, and the rest were hardened; ⁸just as it is written, “GOD GAVE THEM A SPIRIT OF STUPOR, EYES TO SEE NOT AND EARS TO HEAR NOT, DOWN TO THIS VERY DAY.” ⁹And David says, “LET THEIR TABLE BECOME A SNARE AND A TRAP, AND A STUMBLING BLOCK AND A RETRIBUTION TO THEM. ¹⁰“LET THEIR EYES BE DARKENED TO SEE NOT, AND BEND THEIR BACKS FOREVER.”

11:7 «այն որ Իսրայէլը որոնում էր՝ նորան չհասաւ» Հունարեն նախադասության մեջ այս բառերը տեղադրված են սկզբում, որպեսզի ընդգծվի Պողոսի միտքը: Շատ հրեաներ ուզում էին Աստծո հաշտ ապրել, բայց նրանք ձգտում էին հասնել դրան կրոնական ծեսերը պահելով, շնորհիվ իր ռասայական ծագումից և ջանքերի: Նրանք չհասան իրենց նպատակին: Ոչ մի մարմին չի կարող արժանի կերպով կանգնել Աստծո առջև (հմմտ. I Կոր. 1:29; Եփ. 2:9):

Արևելահայերեն « բայց ընտրուածները հասան»

Արևմտահայերեն « Ընտրուածները հասան»



- NASB** “but those who were chosen obtained it”
- NKJV** “but the elect have obtained it”
- NRSV** “The elect obtained it”
- TEV** “It was only the small group that God chose who found it”
- JB** “but only the chosen few”

Այս հինկտակարանային գաղափարը «մնացորդի» վերաբերում է III Թագ. 19:18-ի 7,000-ին: Բանալի իմաստը մարդկային ջանքերը, ազգային պատկանելիությունը կամ կրոնական լինելը չէ (հ. 6), այլ ընտրության մեջ Աստծո շնորհքն է (հմմտ. Եփ. 1:3-14):

«միւսները կորացան» Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (հմմտ. II Կոր. 3:14): Ենթադրվում է, որ Աստված էր խստացրել նրանց (հմմտ. հհ. 8-10): Խստացման միջոցը չարն էր (հմմտ. II Կոր. 4:4): «Կարծրացած» (*pōroō*) սա բժշկական տերմին է, որը նշանակում է կոպտություն, քարսրտություն կամ կուրություն (հմմտ. Հռ. 11:25; II Կոր. 3:14; Եփ. 4:18): Այս նույն տերմինը օգտագործված է առաքյալների հետ կապված Մարկ. 6:52: Այս բառը տարբերվում է մեկ ուրիշ հունարեն տերմինից 9:18 (*sklērunō*), որը իմաստը ողորմության հակառակն է (հմմտ. Եբր. 3:8,15; 4:7):

Այս համարը շատ պարզ է և 11:1-6-ի ամփոփումն է: Նրանք ովքեր ընտրված են եղել հավատացել են, իսկ նրանք ովքեր ընտրված չեն եղել կարծրացվել են: Ինչևէ, այս համարը չի գրվել մյուսներից առանձին, որպես աստվածաբանական լոգունգ: Այն կապակցված և շարունակական աստվածաբանական ապացույցի մասն է կազմում: Բայց գոյություն ունի որոշակի ներքին լարվածություն այս համարում գոյություն ունեցող հասատման և 10 գլխի տիեզերական/ընդահնրական փրկության հրավերի միջև: Այստեղ գաղտնիք կա: Բայց լուծումն այն չէ, որպեսզի ժխտելը կամ փոքրացնելը դիվեմա/երկասյրաբանության երկու փաստարկներից մեկը, որոնք հանդիսանում են պարադոքսալ քննարկման տարբեր բևեռները:

11:8-10 Այս համարները մեջբերումներ են վերցված Ես. 29:10 (հ. 8ա), 2 Օրին. 29:4 (հ. 8բ, բայց ոչ մագորեթիկ տեքստից կամ էլ LXX) և Մաղ. 69:22-23 (հ. 9-10): Դրանք իրականում արտացոլում են Եսայի մարգարեի կանչն ու առաքելությունը ըմբոստ Իսրայելին 6:9-13: Եսայի առաջադրանքն էր ներկայացնել Աստծո խոսքը, բայց Աստծո ժողովուրդը ի վիճակի չէր արձագանքել դրան, և չարեց էլ: Այստեղ Պողոսը, ինչպես նաև 9:13,15,17, օգտագործում է հինկտակարանային վկայություն, տվյալ դեպքում հաստատում է այն, որ Աստված արդեն խստացրել էր որոշ մարդկանց:

Արևելահայերեն «Աստուած տուաւ նորանց թմրութեան հոգի»
Արևմտահայերեն «Աստուած անոնց թմրութեան ոգի տուաւ »

11:8
NASB, NKJV “God gave them a spirit of stupor”
NRSV, JB “God gave them a sluggish spirit”
TEV “God made their minds and hearts dull”

Հունարեն (*katanuxis*) բառը Նոր Կտակարանում միայն այստեղ է օգտագործված, իսկ կիրառում էին այն որպես միջատի խայթոց իմաստով, որից մարդու մոտ առաջանում էր չափից շատ զգայունություն:

11:10 «Թող նորանց աչքերը խաւարուին՝ որ չտեսնեն. եւ նորանց թիկունքները միշտ ծռեցրու» Այս արտահայտության մեջ ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ- ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ձևին հետևում է ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ- ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ: Սա Աստծո սուվերենության և Աստծո կանչին արձագանքելու անհրաժեշտության գաղտնիքն է/խորհրդավորությունն է: Աստված ամեն բանի աղբյուրն է, ամեն ինչի նախաձեռնողը, բայց և միառժամանակ Իր սուվերեն կամքով Նա վճռեց, որ մարդիկ՝ Իր վեհ ստեղծագործությունը, ազատ կամքով արձագանքի Իրեն: Նրանք ուլքեր հավատքով չեն արձագանքում խստացված են իրենց անհավատության մեջ:

Այս կոնտեքստում Պողոսը հաստատում է Աստծո հավիտենական ծրագիրը Ադամի բոլոր զավակներին փրկագնելու համար: Հրեաների անհավատությունը հեթանոսների համար հավատքի դուռ կբացի և հրեաների նախաձեռնության պատճառով նրանք կվերականգնվեն որպես Իսրայել ազգ: Սա ներառման, միավորման ծրագիր է (հմմտ. Եփ. 2:11-3:13), և ոչ թե արտաքսման և բաժանման: Խստացումը բերում է էլ ավելի մեծ հունձքի:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:11-16

¹¹Ուրեմն ասում եմ. Սի՞թե գլորուեցան՝ որ կործանուին. քաւ լիցի. բայց նորանց գլորուելովը հեթանոսների փրկութիւնն եղաւ որ նախանձի գրգռէ նորանց:¹² Բայց եթէ նորանց յանցանքը աշխարհքի մեծութիւն է, եւ նորանց նուաստութիւնը հեթանոսների մեծութիւն, էլ ո՞րքան աւելի նորանց լիութիւնը:¹³ Բայց ձեզ հեթանոսներիդ ասում եմ, Որովհետեւ ես հեթանոսների առաքեալ եմ՝ իմ պաշտօնը փառատր կանեմ. ¹⁴Որ գուցէ իմ մարմինը լինողներին նախանձի գրգռեմ, եւ նորանցից մի քանիսն ապրեցնեմ: ¹⁵Բանգի եթէ նորանց մերժումը աշխարհքի հաշտութիւն է, ապա նորանց ընդունելութի՞ւնն ինչ է, եթէ ոչ՝ կենդանութիւն մեռելներից. ¹⁶Եւ եթէ երախայրին սուրբ է՝ ապա զանգուածն էլ. եւ եթէ արմատը սուրբ է՝ ապա ճիւղերն էլ:

NASB (UPDATED) TEXT: 11:11-16

¹¹I say then, they did not stumble so as to fall, did they? May it never be! But by their transgression salvation *has come* to the Gentiles, to make them jealous. ¹²Now if their transgression is riches for the world and their failure is riches for the Gentiles, how much more will their fulfillment be! ¹³But I am speaking to you who are Gentiles. Inasmuch then as I am an apostle of Gentiles, I magnify my ministry, ¹⁴if somehow I might move to jealousy my fellow countrymen and save some of them. ¹⁵For if their rejection is the reconciliation of the world, what will *their* acceptance be but life from the dead? ¹⁶If the first piece *of dough* is holy, the lump is also; and if the root is holy, the branches are too.

11:11 «Ուրեմն ասում եմ» Սա նույն հռետորական արտահայտությունն էր, ինչ որ 11:1: Սա ևս մեկ միջոց է, որից օգտվում է Պողոսը, որպեսզի ընդգծի իր աստվածաբանական ապացույցի շարունակությունը: հհ. 1-10 ոչ ամբողջ Իսրայելն էր մերժված Աստծո կողմից; հհ. 11-24 Իսրայելի մերժումը մշտատև չէ; այն Աստծո հատուկ նպատակի համար է: Դրա միջոցով հեթանոսները փրկության իրավունք ստացան:

Արևելահայերեն «Մի՞թե գլորուեցան՝ որ կործանուին»
 Արևմտահայերեն « Մի՞թե անո՞ր համար անոնք յանցանք գործեցին որ կործանին»

-
- NASB “they did not stumble so as to fall, did they”
- NKJV, NRSV “have they stumbled that they should fall”
- TEV “When the Jews stumbled, did they fall to their ruin”
- JB “Have the Jews fallen for ever, or have they just stumbled”

Այս հարցի պատասխան ակնկալվում է «Ոչ»: Իսրայելի անհավատությունը մշտական իրավիճակ չէ:

Արևելահայերեն « բայց նորանց գլորուելովը »
 Արևմտահայերեն « հապա իրենց յանցանքովը »

-
- NASB “by their transgression”
- NKJV “through their fall”
- NRSV “through their stumbling”
- TEV “Because they sinned”
- JB “their fall”

Կոնտեքստում սա վերաբերում է հրեաների Հիսուսին որպես Մեսիա մերժելուն (հմմտ. հ. 12):

«հեթանոսների փրկութիւնն եղաւ» Սա առաջին դարի հրեաների համար ցնցող դրույթ/պնդում, հաստատուն միտք էր (հմմտ. հ. 12; Գործք 13:46; 18:6; 22:21; 28:28):

«որ նախանձի գրգռե նորանց» Աստծո ծրագիրը հեթանոսներին փրկության ցուցակի մեջ մտցնելու հետապնդում է երկու նպատակ (1) Աստծո քավությունը ամբողջ մարդկության; և (2) Իսրայելի ապաշխարած մնացորդի անձնական հավատքի Աստծո վերականգնումը:

11:12-14 Այս համարներում կա տասը ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ մի շարք, որը խոսում է Իսրայելի անհավատության մասին ի տարբերություն հեթանոսների հավատքի: 12,14,15,16,17,18,21,24 համարները ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ նախադասություններ են, որոնք հաստատվում են որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ նրա գրական նպատակի համար, իսկ հհ. 22 և 23 ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԵՐՐՈՐԳ ԿԱՐԳԻ նախադասություններ են, որոնք վերաբերվում են ապագայում կատարվելիք հնարավոր գործողություններին:

Արևելահայերեն «էլ ո՞րքան աւելի նորանց լիութիւնը»
Արևմտահայերեն «ալ որչափ աւելի անոնց լրութիւնը»

11:12

NASB “how much more will their fulfillment be”

NKJV “how much more their fullness”

NRSV “How much more will their full inclusion mean”

TEV “Then, how much greater the blessings will be, when the complete number of Jews is included”

JB “then think how much more it will benefit from the conversion of them all”

Այս տեքստը մեկնաբանելու գլխավոր դժվարությունը «նրանց լիությունը» արտահայտությունը հասկանալու մեջ է: Սա վերաբերվում է (1) հրեաների փրկվելուն, հհ. 14բ, 26ա, թե՞ (2) ընտրված հավատացյալ հրեաների և հեթանոսների վերջնական թվին/քանակին:

11:13 «Բայց ձեզ հեթանոսներիդ ասում են» 9-11 գլուխները կազմում են գրական բաժին, որտեղ գտնվում է հարցի պատասխանը, «Ի՞նչու է հրեական Մեսիան մեծվել հրեաների կողմից»: Սակայն մնում է անհասկանալի թե, ինչու՞ Պողոսը անհրաժեշտություն համարեց քննարկել այս հարցը հենց այս թղթում:

հհ. 13-24, 25գ հնարավոր է արտացոլում են այն խնդիրը, որը կար Հռոմի եկեղեցում հրեաների և հեթանոսների միջև, ազգային պատկանելիության հողի վրա: Արդյոք այս լարվածությունը հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև էր, կամ հավատացյալ հեթանոսների և անհավատ հրեաների (ժողովարանի) միջև պարզ չէ:

«ես հեթանոսների առաքեալ եմ» Պողոսը վստահ էր, որ ինքը կանչված է հեթանոսներին առաքյալ լինելու համար (հմմտ. Գործք 9:15; 22:21; 26:17; Հռ. 1:5; 15:16; Գաղ. 1:16; 2:7,9; I Տիմ. 2:7; II Տիմ. 4:17):

Արևելահայերեն «իմ պաշտօնը փառաւոր կանեն»

Արևմտահայերեն «իմ պաշտօնս կը մեծարեն»

□

NASB, NKJV “I magnify my ministry”
NRSV “I glorify my ministry”
TEV “I will take pride in my work”
JB “and I am proud of being sent”

«Մեծարել» տերմինը կարող էր նշանակել (1) գոհունակություն; (2) հպարտանալ մի բանով; կամ հնարավոր է (3) ինչ որ բան լավագույն ձևով օգտագործել: Մա նաև կարող էր արտացոլել այն խնդիրը, որը կար Հռոմի եկեղեցուն: Պողոսն ուրախ էր ծառայելու հեթանոսներին; կամ էլ (2) Պողոսի ծառայության նպատակը հրեաների մեջ նախանձ արթնացնելն էր, որը նրանց փրկության կտաներ (հմմտ. հհ. 11,14 և 9:1-3):

11:14 « նորանցից մի քանիսն ապրեցնեմ» Մա Պողոսի միսիոներական կանչն էր: Նա գիտեր, որ ոմանք կարճագանքեն իր Ավետարանի քարոզչությանը (հմմտ. I Կոր. 1:21) իսկ ոմանք էլ ոչ (հմմտ. I Կոր. 9:22): Մա ընտրության գաղտնիքն է/խորհրդավորությունն է (Հին Կտակարան և Նոր Կտակարան):

11:15 Հին Կտակարանի ընտրված Իսրայելի մերժումը Աստծո ծրագրի մի մասն էր՝ ամբողջ մարդկությունը փրկելու համար (*kosmos*): Հրեական ինքնա-արդարությունը, ազգային ամբարտավանությունը և օրինականացումը էլ ավելի շատ ընդգծեցին հավատքի կարիքը (հմմտ. 9:30-33): Հավատք ուղղված ՅԱՀՎԵԻՆ և Իր Մեսիային, և ոչ թե մարդու կրոնական ջանքերին, ունեն վճռորոշ նշանակություն Աստծո հետ հաշտվելու համար: Բայց հիշեք, Իսրայելին մերժելը ամբողջ մարդկությանը փրկելու համար էր: Հպարտանալու տեղ չկա, ոչ հրեաների և ոչ էլ հեթանոսների համար: Մա հենց այն էր ինչի կարիքն ուներ լսելու Հռոմի եկեղեցին:

«աշխարհի հաշտութիւն է» Այս արտահայտությունը կազմում է աստվածաբանական զուգահեռականություն «Աստծո արդարությունը» հետ: Տերմինները կազմված են *kata + allassō* նախդիրի օգնությամբ (փոխել, վերափոխել կամ ձևափոխել): Այն նշանակում է փոխել թշնամությունը խաղաղության, դրա շնորհիվ բարեհաճության վերականգնում (հմմտ. Հռ. 5:11; 11:15; II Կոր. 5:18,19): Աստված փափագում է վերականգնել Եղեմի պարտեզի հարաբերությունը: Մեղքը խախտեց այդ հարաբերությունը, բայց Քրիստոսը վերականգնեց Աստծո պատկերը ընկած մարդկության մեջ բոլոր նրանց համար, ովքեր ապրում են հավատքով: Նրանք ստացան հաշտություն և ընդունելություն (զուգահեռականություն հ. 15): Մարդկությունն ինքը չէր կարող վերականգնել այս մտերմիկ հարաբերությունները Աստծո հետ, բայց Աստված կարող է դա անել և արեց:

11:16 «Եւ եթէ երախայրին սուրբ է» Այստեղ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթարվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Մա ակնարկ է Թվոց. 15:17-21: Մա փոխաբերություն է, որը նման է Առաջին Պտուղներ «Երախայրի» հինկտակարանային գաղափարին, որոնք տրվում էին Աստծուն՝ ցույց տալու համար, որ ամբողջ հունձքը պատկանում է Աստծուն:

Վաղ հավատացյալ հրեա մնացորդը դեռևս շարունակում էր ազդեցություն ունենալ ամբողջ ազգի վրա (հմմտ. Ծննդ. 18:27-33; II Սնաց. 7:14): «Առաջին կտոր» փոխաբերությունը զուգահեռ է «արմատը» բառին (հմմտ. Եր. 11:16-17), և երկուսն էլ վերաբերում են Իսրայելի հավատացյալներին, մասնավորապես Հին Կտակարանի նախահայրերին (հմմտ. հ. 28):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:17-24

¹⁷Բայց եթէ ճիւղերիցը ոմանք կոտորուեցան, եւ դու որ վայրի ձիթենի էիր՝ նորանցում պատուաստուեցար, եւ հաղորդ եղար արմատին՝ եւ ձիթենու պարարտութեանը, ¹⁸Մի պարծենար

այն ճիւղերի դեմ. բայց եթէ պարծենաս, դու չես արմատը վեր բռնում, այլ արմատը՝ քեզ: ¹⁹Արդ կասես, Ճիւղերը կոտրուեցան՝ որ ես պատուաստուիմ: ²⁰Լաւ. նորանք անհաւատութիւնով կոտրուեցան, եւ դու հաւատքով հաստատուեցար. մի ամբարտաւանանար, այլ վախեցիր: ²¹Որովհետեւ եթէ Աստուած բնական ճիւղերին չխնայեց, մի գուցէ քեզ էլ չխնայէ: ²²Արդ տես Աստուծոյ քաղցրութիւնը եւ սասակութիւնը. կործանուածների վերայ սասակութիւնը, եւ քեզ վերայ քաղցրութիւնը, եթէ այն քաղցրութիւնունը կենաս. ապա թէ ոչ՝ դու էլ կկտրուիս: ²³Եւ նորանք էլ՝ եթէ անհաւատութիւնունը չկենան՝ կպատուաստուին. որովհետեւ Աստուած կարող է դարձեալ պատուաստել նորանց: ²⁴Վասնզի եթէ դու ի բնէ վայրի ձիթենուցը կտրուեցար եւ բնութեան դէմ բարի ձիթենու վերայ պատուաստուեցար, էլ ո՞րքան ատելի նորանք որ բնական են կպատուաստուին իրանց ձիթենու վերայ:

NASB (UPDATED) TEXT: 11:17-24

¹⁷**But if some of the branches were broken off, and you, being a wild olive, were grafted in among them and became partaker with them of the rich root of the olive tree, ¹⁸do not be arrogant toward the branches; but if you are arrogant, *remember that* it is not you who supports the root, but the root supports you. ¹⁹You will say then, “Branches were broken off so that I might be grafted in.”** ²⁰**Quite right, they were broken off for their unbelief, but you stand by your faith. Do not be conceited, but fear; ²¹for if God did not spare the natural branches, He will not spare you, either. ²²Behold then the kindness and severity of God; to those who fell, severity, but to you, God’s kindness, if you continue in His kindness; otherwise you also will be cut off. ²³And they also, if they do not continue in their unbelief, will be grafted in, for God is able to graft them in again. ²⁴For if you were cut off from what is by nature a wild olive tree, and were grafted contrary to nature into a cultivated olive tree, how much more will these who are the natural *branches* be grafted into their own olive tree?**

11:17 «եթէ» Տես ծանուցում 11:12-14:

«Ճիւղերիցը ոմանք կոտրուեցան» Սա վերաբերվում է անհավատ իսրայելացիներին (հմմտ. հհ. 18,19, «բնական ճյուղեր», հ. 21):

«վայրի ձիթենի էիր» Սա վերաբերվում է հավատացյալ հեթանոսներին, ովքեր արձագանքում են Ավետարանի քարոզչությանը:

«պատուաստուեցար» Պողոսը շարունակում է գյուղատնտեսական փոխաբերությունը/պատկեր սկսած հ. 16: Վայրի ձիթենու ճյուղերի պատվաստումը տնկված ծառին օգնեց դրա պտղատալությանը (հմմտ. հ. 24):

«ձիթենու» Սա Իսրայել ազգի խորհրդանիշն է (հմմտ. հ. 24; Սաղ. 52:8; 128:3; Եր. 11:16; Ովս. 14:6): Սա հանդիսանում է երկրորդ հինկտակարանային փոխաբերությունը, որն օգտագործում է Պողոսը նկարագրելու համար հրեաների և հեթանոսների միջև եղած հարաբերությունը:

11:18 «Մի պարծենար այն ճիւղերի դեմ» Այստեղ ՆԵՐԱԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ԺԽՏԱԿԱՆ ՍԱՄՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է գործողության դադար, որն արդեն իրականացման գործըթացի մեջ է: Այս համարը, ինչպես նաև հհ. 13, 20, 25, ենթադրվում է, որ Հռոմի եկեղեցում կար խնդիր հրեաների և հեթանոսների միջև:

11:19-20 Հ. 19 մեկ ուրիշ սուր քննադատությունն է (ենթադրյալ հակառակորդի առկայությամբ): Պողոսը բացատրում է, թե ինչու էին հրեանը մերժված: Դ-ա նրանց անհավատության պատճառով էր, և ոչ թե նրա համար, որ Աստված հեթանոսներին ավելի շատ էր սիրում: Հեթանոսների ներգրավումը փրկվածների թվի մեջ Աստծո սիրո շնորհիվ էր (հմմտ. Ծննդ. 3:15) և իրենց հավատքի: Նրանք մաս կարող էին նախանձից ելնելով արթնացնել հրեաների մոտ Աստծուն վերադառնալու ցանկություն (հմմտ. հհ. 11,14):

Արևելահայերեն «**եւ դու հաւատքով հաստատուեցար**»
Արևմտահայերեն «**ու դուն հաւատքով հաստատուեցար**»

11:20

NASB “and you stand only by your faith”
NKJV “and you stand by faith”
NRSV “but you stand only through faith”
TEV “while you remain in place because you do believe”
JB “if you still hold firm, it is only thanks to your faith”

Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ/ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՍՆԱԿԱԶԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Մեր կարգավիճակը Աստծո մեջ և ընթացիկ փաստացի դիրքը Աստծո առաջ որոշվում է հավատքով: Եթե հավատքը պակասում է, մեր դիրքն էլ է պակասում: Փրկությունը դա (1) սկզբնական արձագանքն է հավատքով; (2) հավատքի մեջ մնալու իրավիճակն է; (3) հավատքի կյանքն ապրելու գործընթացն է; և (4) հավատքի վերջնական գագաթնակետն է: Զգուշացեք ցանկացած աստվածաբանական համակարգից, որը միայն կենտրոնանում է այս աստվածաշնչյան ճշմարտություններից միայն մեկի վրա: Տես հատուկ թեմա 10:4:

Աստված է փրկության հեղինակը, նախաձեռնողը, հենարանը և իրականացնողը, սակայն ուխտի պայմանով: Նա նախընտրել է, որ մեղավոր մարդը պետք է արձագանքի Իր կանչին ապաշխարությամբ և հավատքով և շարունակի պահել այդ վիճակը իր կյանքի յուրաքանչյուր րոպեում:

Արևելահայերեն «**մի ամբարտաւանանար, այլ վախեցիր**»
Արևմտահայերեն «**մի հպարտանար, հապա վախցիր**»

NASB “Do not be conceited, but fear”
NKJV “Do not be haughty, but fear”
NRSV “So do not become proud, but stand in awe”
TEV “But do not be proud of it; instead, be afraid”
JB “Rather than making you proud, that should make you afraid”

Այս երկու պնդումները ՆԵՐԿԱ ԺԱՍՆԱԿԱԶԵՎ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ են: Առաջինն ունի ԺԽՏԱԿԱՆ ՍԱՄՆԻԿ, որը սովորաբար նշանակում է գործողության դադար, որն արդեն իրականացման գործընթացի մեջ է: Այն հայտնում է Հռոմի եկեղեցում զոյություն ունեցող խնդիրը: Վախի պատճառը գտնվում է հ. 21:

11:21 «**մի գուցէ քեզ էլ յխնայէ**» Քանի որ Իսրայելը հետ կանգնեց հավատքից և հպարտ անհավատությամբ հեռացավ ՅԱՀՎԵԻՅ, որի արդյունքում կտրվեց, նույնպես էլ եկեղեցին կկտրվի, եթե հեռանա Քրիստոսի հավատքից և հպարտ ինքնա-արդարության հետևից գնա: Սկզբնական հավատքին պետք է հետևի կյանքն ապրելու հավատքը (հմմտ. Մաթ. 13:1-23; Մարկ.

4:1-12; Ղուկ. 8:4-10): Հպարտության միշտ պետք է դիմադրել/հակառակվել: Այն ինչ կանք Աստծո շնորհքով ենք և մենք բոլոր նրանց եղբայրներն ենք ովքեր հավատում են Քրիստոսին:

11:22 «Աստուծոյ քաղցրութիւնը եւ սասակութիւնը» Աստծո ճանապարհներն ու մեթոդները միշտ պարադոքս են թվում մեղավոր մարդկանց համար (հմմտ. Ես. 55:8-11): Մեր յուրաքանչյուր ընտրություն ունի հետևանք: Աստծո ընտրությունը չի բացատում/ժխտում մարդու պատասխանատվությունը: Իսրայել ազգի ընտրությունը չէր երաշխավորում հրեա անհատի փրկությունը:

«Եթէ այն քաղցրութիւնունը կենաս» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ Է ՆԵՐԿԱ ԺԱՍՄՆԱԿԱԶԵՎԻ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՆՎ: Այս կառուցվածքը նշանակում էր, որ հավատացյալ հեթանոսների հավատքի շարունակելիությունը ունի պայման (սա Աստծո սուվերենության հակառակ կողմն է, որի մասին խոսվում է Հռ. 9); մենք պետք է ջանք թափենք մեր հավատքը պահել (հմմտ. Փիլ. 2:12-13): Այս հաստատակամությունը պահանջվում է թե խմբից և թե անհատից (հմմտ. Գաղ. 6:9; Հայտ. 2:7,17; 3:6,13,22): Սա կրկին համայնքային և անհատականության գաղտնիքն է/խորհրդավորությունն է Աստվածաշնչում: Կան թե խոստումները (հիմնված Աստծո եռթյան վրա) և թե պայմանական ուխտերը (հիմնված մարդու արձագանքի վրա): Տես հատուկ թեմա: Հաստատակամ լինելու կարիքը 8:25:

11:23 Այս համարը քերականական և աստվածաբանական կառուցվածքով նման է հ. 22: Եթե հրեաներն ապաշխարեն և հավատան, նրանք կմտնեն փրկվածների մեջ: Եթե հեթանոսները դադարեն հավատալ, նրանք կմերժվեն (հմմտ. հ. 20): Նրանց և բոլորի համար վճռական նշանակություն ունի թե սկզբնական հավատքը և թե շարունակական հավատքը Քրիստոսում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:25-32

²⁵Որովհետեւ չեմ կամենում, եղբարք, որ չզիտենաք այս խորհուրդը, որ ձեր անձերունը իմաստուն չլինիք, որ մի մասով Իսրայելին կուրութիւն եղաւ, մինչեւ որ հեթանոսների լրութիւնը մտնէ: ²⁶Եւ այսպէս բոլոր Իսրայելը կապրի. ինչպէս գրուած է, թէ Սիօնիցը Փրկիչը կգայ՝ եւ ամբարշտութիւնները դէն կզցէ Յակոբիցը: ²⁷Եւ այս է իմ ուխտը նորանց հետ, երբոր նորանց մեղքերը վեր կառնեն: ²⁸Աւետարանի նկատմամբ նորանք թշնամի են ձեր պատճառովը, ընտրութեան նկատմամբ՝ սիրելի են հայրերի համար: ²⁹Որովհետեւ Աստուծոյ շնորհքը եւ կոչումը գոջալ չունի: ³⁰Վասնզի ինչպէս դուք էլ մի ժամանակ չէիք հաւատում Աստուծուն, եւ հիմա ողորմութիւն գտաք նորանք անհաւատութիւնովը: ³¹Այնպէս էլ նորանք հիմա չհաւատացին ձեր ողորմութիւնովը. որ նորանք էլ ողորմութիւն գտնեն: ³²Որովհետեւ Աստուած ամենին անհաւատութեան մէջ արգիլեց որ ամենին ողորմի:

NASB (UPDATED) TEXT: 11:25-32

²⁵For I do not want you, brethren, to be uninformed of this mystery— so that you will not be wise in your own estimation—that a partial hardening has happened to Israel until the fullness of the Gentiles has come in; ²⁶and so all Israel will be saved; just as it is written, “THE DELIVERER WILL COME FROM ZION, HE WILL REMOVE UNGODLINESS FROM JACOB.” ²⁷“THIS IS MY COVENANT WITH THEM, WHEN I TAKE AWAY THEIR SINS.” ²⁸From the standpoint of the gospel they are enemies for your sake, but from the standpoint of God’s choice they are beloved for the sake of the fathers; ²⁹for the gifts and the calling of God are irrevocable. ³⁰For just as you once were disobedient to God, but now have been shown mercy because of their disobedience, ³¹so these also now have been disobedient, that because of the mercy shown to you they also may now be shown mercy. ³²For God has shut up all in disobedience so that He may show mercy to all.

11:25 «Որովհետև չեմ կամենում, եղբարք, որ չգիտենաք» Սա Պողոսին բնորոշ առանձնահատուկ իդիոմա է/արտահայտություն (հմմտ. 1:13; I Կոր. 10:1; 12:1; II Կոր. 1:8; I Թես. 4:13): Սա սովորաբար ներկայացնում է կարևոր քննարկման սկիզբը: Սա նույն գործողությունն է կատարում, ինչ Հիսուսի ասած «Ճշմարիտ, ճշմարիտ» արտահայտությունը: Պողոսը հաճախ օգտագործում է այս արտահայտությունը, ցույց տալու համար նոր թեմայի սկիզբ:

Արևելահայերեն «խորհուրդը»
Արևմտահայերեն «խորհուրդը»

□
NASB, NKJV, “mystery”
NRSV “a secret truth”
TEV “a hidden reason for all of this”
JB

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽՈՐՀՈՒՐԴ/ ԳԱՂՏՆԻՔ

Աստված մարդու փրկագործման համար ունի միասնական նպատակ, որը գոյություն ուներ նույնիսկ մինչև մեղքը (հմմտ. Ծննդ. 3): Այս ծրագրի ակնարկները հայտնված են Հին Կտակարանում (հմմտ. Ծննդ. 3:15; 12:3; Ել. 19:5-6; և ամբողջ աշխարհին վերաբերվող հատվածները՝ մարգարեական գրքերում): Ինչևէ, այս ծրագիրն իր ամբողջությամբ հստակ չէր (հմմտ. I Կոր. 2:6-8): Հիսուսի և Սուրբ Հոգու գալուստով այն դառնում է ավելի ակնհայտ: Պողոսն օգտագործում է «խորհուրդ» տերմինը՝ նկարագրելու համար այս ամբողջական փրկության ծրագիրը (հմմտ. I Կոր. 4:1; Եփ. 6:19; Կող. 4:3; I Տիմ. 1:9): Չնայած նա դա օգտագործում է մի քանի իմաստներով.

1. Իսրայելի մասնակի խստացման պատճառով հեթանոսները ներգրավվեցին: Հեթանոսների այս հոսքը կգործի այնպես, որ հրաների մոտ արթնանա Քրիստոսին ընդունելու ցանկություն, մարգարեների կողմից ասված (հմմտ. Հռ. 11:25-32):
2. Ավետարանը հայտնի դարձավ բոլոր ազգերին, որոնք փրկվելու իրավունք ձեռք բերեցին Քրիստոսին հավատալով և Նրա միջոցով (հմմտ. Հռ. 16:25-27; Կող. 2:2):
3. Հավատացյալների նոր մարմինները Հիսուսի Երկրորդ Գալստյան ժամանակ (հմմտ. I Կոր. 15:5-57; I Թես. 4:13-18):
4. Ամեն բաների ամբողջացումը Քրիստոսում (հմմտ. Եփ. 1:8-11):
5. Հեթանոսներն ու հրեաները համաժառանգներ են (հմմտ. Եփ. 2:11-3:13):
6. Քրիստոսի և եկեղեցու միջև եղած մտերմիկ հարաբերությունը նկարագրվում է ամուսնական տերմիններով (հմմտ. Եփ. 5:22-33):
7. Հեթանոսները ներգրավվեցին ուխտի ժողովրդի կազմի մեջ և հիմա նրանց մեջ բնակվում է Քրիստոսի Հոգին, որը նրանց հոգևոր հասունության է տանում, և նպատակն է մեղավոր մարդու մեջ վերականգնել Աստծո խեղաթյուրված պատկերը (հմմտ. Ծննդ. 6:5,11-13; 8:21) Աստծո մարդու մեջ (հմմտ. Ծննդ. 1:26-27; 5:1; 9:6; Կող. 1:26-28):
8. Վերջին ժամանակվա հակա-քրիստոսը (հմմտ. II Թես. 2:1-11):
9. Վաղ եկեղեցու պատկերացումը խորհուրդի, գաղտնիքի մասին գտնվում է I Տիմ. 3:16.

«որ ձեր անձերումը իմաստուն չլինիք» Սա ևս մեկ ակնարկ է այն մասին, որ Հռոմի եկեղեցուն(ներում) որոշակի լարվածություն կար (հմմտ. հ. 18):

Արևելահայերեն «որ մի մասով Իսրայելին կուրոթին եղաւ»
Արևմտահայերեն «որ Իսրայելին մասամբ կուրոթին եղաւ»



NASB “that a partial hardening has happened to Israel”
NKJV “that a hardening in part has happened to Israel”
NRSV “a hardening has come upon part of Israel”
TEV “that the stubbornness of the people of Israel is not permanent”
JB “One section of Israel has become blind”

Այս հաստատումը պետք է որ վերաբերի ամբողջ 11-րդ գլխին: Հրեաների մեջ միշտ եղել և կլինեն ճշմարիտ հավատացողներ: Աստված թույլ տվեց այս մասնակի կուրոթյունը (հհ. 8-10) որովհետև հրեաները մերժեցին Հիսուսին, և սա մտնում էր ամբողջ մարդկությանը փրկելու Աստծո ծրագրի մեջ: Աստված խոստացավ փրկություն բոլոր մարդկանց (հմմտ. Ծննդ. 3:15): Նա ընտրեց Աբրահամին բոլոր մարդկանց հասնելու համար (հմմտ. Ծննդ. 12:3): Նա ընտրեց Իսրայելին բոլոր մարդկանց հասնելու համար (հմմտ. Ել. 19:5-6): Իսրայելը չկատարեց իր առաքելությունը հպարտության, անհավատարմության և անհավատության պատճառով: Աստված ուզում էր հասնել հեթանոս աշխարհին Իր օրհնած Իսրայելի միջոցով (հմմտ. 2 Օրին. 27-29): Իսրայելը չկարողացավ Ուխտը հավատարմությամբ պահել, ուստի Աստված ժամանակավոր պատժի արժանացրեց նրան: Հիմա Աստված վերցրել է այս պատիժը, որպեսզի իրականացնի հավատքի միջոցով մարդկության փրկության Իր բուն նպատակը (հմմտ. հհ. 30-31):

«մինչև որ հեթանոսների լրութիւնը մտնէ» Այս նույն տերմինը (*pleroma*) օգտագործված է հ. 12-ում հրեաների համար: Երկու համարներն էլ խոսում են Աստծո կանխագիտության և ընտրության մասին: «Մինչև» կապը խոսում է այս հեթանոսներին փրկելու ժամանակաշրջանի ժամանակի սահմանափակման մասին (հմմտ. Գուլ. 21:24):

11:26 «բոլոր Իսրայելը կապրի» Կան երկու հնարավոր մեկնաբանություններ (1) Սա վերաբերվում է Իսրայել ազգին—ոչ յուրաքանչյուր առանձին անհատ հրեայի, այլ մեծամասնությանը, այն էլ որոշակի պատմական ժամանակահատվածում: (2) Ինչ որ իմաստով սա վերաբերվում է հոգևոր Իսրայելին՝ Եկեղեցուն: Այս գաղափարը Պողոսն օգտագործում է Գաղ. 6:16-ում: Համար 12-ում «նորանց(հրեաների) լրութիւնը» և համար 25-ում «հեթանոսների լրութիւնը» իմաստով զուգահեռ են իրար: «Բոլոր» բառը Աստծո ընտրության իմաստով է և ոչ թե յուրաքանչյուր անհատի իմաստով: Կգա այն օրը երբ կիրականանա ձիթենու խոստումը:

Որոշ մեկնաբաններ ասում են, որ սա պետք է որ վերաբերի միայն Իսրայել ազգին, քանի որ (1) 9-11-րդ գլուխների կոնտեքստը; (2) Հին Կտակարանի մեջբերումները հհ. 26-27; և (3) սա հստակ հաստատվում է հ. 28: Աստված դեռևս սիրում է և փափագում է փրկել Աբրահամի բնական ճյուղին: Բայց նրանք պետք է գան Հիսուս Քրիստոսին հավատալով (Չաք. 12:10):

Այս կամ ցանկացած ուրիշ տեքստեր չեն տալիս այս հարցի պատասխանը; արդյոք այն հրեաներին, որոնք «խոստացվել էին», վերջին ժամանակներում առիթ կտրվի արձագանքելու Աստծո կանչին: Մենք ամերիկացիներս համապատասխան մեր մշակույթի ավելի հակված ենք անհատական հարցեր տալուն, բայց Աստվածաշունչը կենտրոնանում է ամբողջի վրա: Այս բոլոր հարցերը պետք է հանձնենք Աստծուն: Նա միշտ արդար կլինի Իր արարչագործության հետ, որին Նա շատ է սիրում:

« ինչպէս գրուած է» Այստեղ երկու մեջբերումներ կան Մեպտուագինդից Ես. 59:20-21(հ. 26) և 27:9 (հ. 27): Փրկության մեխանիզմը կլինի Հիսուս Մեսիայի վրա ունեցած հավատքով: Գոյություն ունի

միայն սա, միակն ու անփոխարինելի ծրագիրը, երկրորդը չկա: Փրկության միայն մեկ ճանապարհ կա (հմմտ. Հովհ 10:7-18; 11:25-29;14:6):

11:27 Ես. 27:9-ը, որը մեջքերված է հ. 27-ում, Իսրայելի վերականգնումը Խոստացյալ Երկրում միավորում է (հհ. 1-11) իր ավանդական թշնամու հրավերքի հետ (հեթանոս ազգերը) փրկվածների մեջ ներգրավվելու (հմմտ. հհ. 12-13): Եթե այս վերականգնումը հասկանանք բառացիորեն, ուրեմն այն տեղի կունենա հազարամյայի ժամանակ, որ կատարվի մարգարեությունը: Եթե այն պատկերավոր լեզու է, ուրեմն նպատակը կլինի Նոր Ուխտը, Ավետարանի խորհուրդը, որին միացված են հրեաներն ու հեթանոսները Աստծո Մեսիայի հավատքով (հմմտ. Եփ. 2:11-3:13): Սա դժվար է որոշել: Որոշ հինկտակարանային մարգարեություններ վերաբերում են Նոր Ուխտի եկեղեցուն: Աստված հավատարիմ է Իր խոստումներին, նույնիսկ այն ժամանակ երբ մարդիկ հավատարիմ չեն (հմմտ. Եզ. 36:22-36):

11:28 Այս համարը արտացոլում է ընտրության երկու առանձնահատկությունները (1) Հին Կտակարանում ընտրությունը ծառայության համար էր: Աստված ընտրում էր մարդկանց, որոնց միջոցով կիրականացներ մարդկության փրկագործման Իր նպատակները; (2) Նոր Կտակարանի ընտրությունը կապված է Ավետարանի և հավիտենական փրկության հետ: Աստծո պատկերով ստեղծված բոլոր մարդկանց փրկությունը միշտ եղել է Աստծո նպատակը (հմմտ. Ծննդ. 3:15):

Աստված հավատարիմ է Իր խոստումներին: Սա ճշմարտություն է թե Հին Կտակարանի հավատացյալների համար, և թե Նոր Կտակարանի սուրբերի: Բանալին Աստծո հավատարմությունն է, և ոչ թե մարդու, Աստծո ողորմությունը և ոչ թե մարդու գործը: Ընտրությունը մարդկանց օրհնություն լինելու համար է, և ոչ թե փրկության մուտքը փակելու միջոց:

« սիրելի են հայրերի համար » Սա Ել. 20:5-6 և 2 Օրին. 5:9-10 և 7:9-ի խոստումն է: Ընտանիքներն օրհնվում են նախորդ սերունդների հավատքի պատճառով: Իսրայելը օրհնվեց հավատարիմ նախահայրերի պատճառով (հմմտ. 2 Օրին. 4:37; 7:8; 10:15): Այն, որ Մեսիան պետք է գար Հուդայի սերնդից, նույնպես խոստում էր տրված Դավիթին (հմմտ. II Թագ. 7): Ինչևէ, պետք է նշել, որ նույնիսկ «հավատարիմները» չկարողացան ամբողջությամբ պահել Օրենքը (հմմտ. Եզ. 36:22-36): Հավատք—անձնական, ընտանեկան, բայց ոչ կատարյալ հավատք ընդունելի է Աստծո կողմից և պոտենցիալ կերպով պետք է փոխանցվի սերնդե սերունդ (հմմտ. I Կոր. 7:8-16):

Արևելահայերեն «Որովհետև Աստուծոյ շնորհքը եւ կոչումը զոջալ չունի»
Արևմտահայերեն «Վասն զի Աստուծոյ պարգեւներն ու կոչումը առանց զոջալու են»

11:29
NASB, NKJV,
NRSV “for the gifts and the calling of God are irrevocable”
TEV “For God does not change his mind about whom he chooses and blesses”
JB “God never takes back his gifts or revokes his choice”

Սա չի վերաբերվում մարդկանց հոգևոր պարգևներին (հմմտ. I Կոր. 12), այլ Աստծո փրկության Հին և Նոր Կտակարանների խոստումներին: Ընտրությունը իրական է: Աստծո հավատարմությունը Իսրայել ազգի հույսն է (հմմտ. Մաղ. 3:6):

11:30-32 Այս համարները Աստծո ծրագրերի և նպատակների ամփոփումն են; (1) նրանք միշտ հիմնված են Նրա ողորմության վրա (տես ծանուցում 9:15-16), և ոչ թե քմահաճ,ինքնակամ վճռականության վրա: «Ողորմություն» տերմինը այս մեծ կոնտեքստում օգտագործված է չորս

անգամ (հմմտ. 9:15,16,18,32): (2) Աստված դատապարտեց բոլոր մարդկանց: Թե հրեաները և թե հեթանոսները մեղավոր են (հմմտ. 3:9,19,23; 5:11): (3) Աստված օգտագործել է մարդու կարիքն ու անկարողությունը, որպես հնարավորություն ցույց տալու Իր ողորմությունը բոլոր մարդկանց (հմմտ. հ. 22): Եվ նորից կոնտեքստում «բոլորը» պետք է դիտվի հհ. 12 և 25-26 լույսի ներքո: Ոչ բոլոր մարդիկ կընդունեն Աստծո առաջարկը, բայց բոլորին է ընձեռնված փրկվելու հնարավորությունը (հմմտ. 5:12-21; Հովհ. 3:16): Ով Աստված թող այդպես լինի...

11:30 և 31 «եւ հիմա» Սա խստորեն ցույց էր տալիս Իսրայել ազգի հոգևոր դարձի գալը Հիսուսին հավատալով: Ինչպես հեթանոսների «անհավատությունը» հաղթահարվել էր Աստծո ողորմությամբ, այնպես էլ կլինի հրեաների «անհավատությունը»:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:33-36

³³Ով Աստուծոյ մեծութեան եւ իմաստութեան եւ գիտութեան խորութիւնը. ինչպէս անքննելի են նորա դատաստանները, եւ անհասկանալի են նորա ճանապարհները: ³⁴Որովհետեւ ո՞վ գիտաց Տիրոջ միտքը, կամ ո՞վ եղաւ նորա խորհրդակից: ³⁵Կամ ո՞վ նորան առաջուց մի բան տուաւ, որ նորա հատուցուն առնէ նորանից: ³⁶Որովհետեւ նորանից եւ նորանով եւ դէպի նա է ամեն բան. նորան փառք յաւիտեան. ամէն:

NASB (UPDATED) TEXT: 11:33-36

³³**Oh, the depth of the riches both of the wisdom and knowledge of God! How unsearchable are His judgments and unfathomable His ways!** ³⁴**FOR WHO HAS KNOWN THE MIND OF THE LORD, OR WHO BECAME HIS COUNSELOR?** ³⁵**Or who has first given to Him that it might be paid back to Him again?** ³⁶**For from Him and through Him and to Him are all things. To Him be the glory forever. Amen.**

11:33-36 Սա Պողոսի ամենահիասքանչ հանպատրաստի Աստծո օրհներգություններից օրհնակներից մեկն է: Պողոսը հիացած է Աստծո ճանապարհներով; ուխտի հավատարմությունը, ուխտի ավելացումը և իրականացումը:

11:33 «մեծութեան» Պողոսի համար սա սիրված իդիոմա է (հմմտ. 2:4; 9:23; 10:12; 11:12,33; Եփ. 1:7,8; 2:7; 3:8,16; Փիլ. 4:19; Կող. 1:27): Ավետարանի էությունը և մարդկության հույսը Աստծո էության և ծրագրի առատ ողորմածությունն է (հմմտ. Ես. 55:1-7):

«ինչպես անքննելի են նորա դատաստանները, եւ անհասկանալի են նորա ճանապարհները» Սա շատ յուրահատուկ օրհներգություն է 9-11 գլուխների պարադոքսալ ճշմարտությունների (հմմտ. Ես. 55:8-11):

11:34 Այստեղ կա մեջբերում Սեպտուագիդից Ես. 40:13-14-ը, որտեղ Աստված ազատագրում է Իր ժողովրդին՝ նրանց գերությունից ետ բերելով: I Կոր. 2:16-ում Պողոսը մեջբերում է այս նույն հատվածը, բայց «Տեր» տիտղոսը տալով ինկատի ունի Հիսուսին:

11:35 Սա Հոր 35:7 կամ 41:11-ի ազատ շարադրանքն է:

11:36 «նորանից եւ նորանով եւ դէպի նա է ամեն բան» Այս արտահայտությունները վերաբերում են Հայր Աստծուն այս կոնտեքստում (հմմտ. I Կոր. 11:12), բայց կան շատ նմանատիպ ուրիշ Նոր Կտակարանի հատվածներ, որ վերաբերում են Որդի Աստծուն (հմմտ. I Կոր. 8:6; Կող. 1:16; Եբր.

2:10): Պողոսը հաստատում է, որ բոլոր բաները Աստծուց են առաջացել և բոլորը վերադառնում են Նրան:

«նորան փառք յաիտեան» Սա Նոր Կտակարանի օրհնության աստվածության առանձնահատկությունն է: Սա վերաբերում էր (1) երբեմն Հորը (հմմտ. 16:27; Եփ. 3:21; Փիլ. 4:20; I Պետ. 4:11; 5:11; Հուդա 25; Հայտ. 5:13; 7:12); և (2) երբեմն Որդուն (հմմտ. I Տիմ. 1:17; II Տիմ. 4:18; II Պետ. 3:18; Հայտ. 1:16): Տես լրիվ նշում/ծանուցում 3:23:

«Ամեն» Տես հատուկ թեմա 1:25.

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՅԵՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչպե՞ս Իսրայելը վրիպեց/ձեռքից բաց թողեց Աստծո փրկության ճանապարհը:
2. Ի՞նչ երկու պատճառներ է Պողոսը տալիս ապացուցելու համար, որ Աստված չի մերժել Իսրայելին:
3. Ինչու՞ Աստված խստացրեց հրեաների սրտերը: Ինչպե՞ս
4. Ի՞նչ է նշանակում «մնացորդ» բառը հրեական գաղափարով (2-5հհ.)
5. Սահմանիր «խորհուրդ, գաղտնիք» տերմինը Նոր Կտակարանում:
6. Ի՞նչ է նշանակում 11:26-ը: Ինչու՞: Ինչպե՞ս է դա կապվում 9:6-ին:
7. Ի՞նչ զգուշացում է Պողոսը տալիս հեթանոս հավատացյալներին (17-24հհ.)

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՑԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 12**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Նոր կյանք Քրիստոսում	Կենդանի պատարագ Աստծուն	Բարեպաշտ կյանք	Կյանք Աստծուն ծառայելու մեջ	Հոգևոր երկրպագություն
12:1-2	12:1-8	12:1-2	12:1-2	12:1-2
				Խոնարհություն և բարեգործություն
12:3-8		12:3-8	12:3-8	12:3-8
Քրիստոնեական կյանքի կանոնները	Վարվիր քրիստոնեավայել կերպով	Խրատներ, հոր դորներ		Բարեգործություն բոլորի հանդեպ ներառյալ քչնամիների
12:9-21	12:9-21	12:9-13	12:9-13	12:9-13
		12:14-21	12:14-16	12:14-21
			12:17-21	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ հհ.1-8

- Ա. Այստեղ սկսվում է Հռոմեացիս թղթի գործնական բաժինը (12:1-15:13): Պողոսի նամակներից շատերը փաստաթղթեր են, ուստի նրանք ունեն թե վարդապետական և թե կիրառական բաժիններ: Պողոսը գրում էր որոշակի խնդիր կամ ճգնաժամային իրավիճակ լուծելու նպատակով: Քանի որ Հռ. 12:1-8 հանդիսանում է այնքան հիանալի վարդապետական հարցերի համառոտ ամփոփումը, ուստի և դրա էթիկական և գործնական բաժինը հավասարաչափ գորավոր է և էական:
- Բ. Աստվածաբանությունն առանց կյանքի մեջ կիրառելու Աստծուց չէ (հմմտ. Մաթ. 7:24-27; Հովհ. 13:17; Հռ. 2:13; Հակոբ.1:22-23, 25; 2:14-26):
- Գ. 1-2 հհ. ամբողջ գործնական բաժնի ներածությունն է: Սա Հոգով առաջնորդվելու կյանքի հիմքն է:
- Դ. 3-8 հհ. քննարկում են հոգևոր պարզկների մասին: Մեր համատեղ պտղաբերությունը և օգտակարությունը Քրիստոսի համար պետք է արտահայտվի ծառայելով Աստծուն (հմմտ. 2 Օրին. 6:4-5; Մաթ. 22:37) և ուրիշներին (հմմտ. Դև. 19:18; Մաթ. 19:19): Այս պարզկներն ընդգծում են մեր միաբանությունը Քրիստոսում և զանազան պարզկներով օժտված լինելը (հմմտ. Եփ. 4:1-10): Հավատացյալները միշտ պետք է ձգտեն միաբանության և ոչ թե եզակիության: Աստված սպառնալիցում է մեզ մեկս մյուսին ծառայելու համար (հմմտ. I Կոր. 12:7,11):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12:1-2

¹Արդ աղաչում եմ ձեզ, եղբարք, Աստուծոյ ողորմութիւնովը, որ ձեր մարմինները ներկայացնէք կենդանի, սուրբ եւ Աստուծոյ ընդունելի պատարագ, որ է ձեր բանաւոր պաշտօնը: ²Եւ մի կերպարանուիք այս աշխարհքի կերպարանքովը. այլ նորոգուեցէք ձեր մտքի նորոգութեամբը, որ դուք քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը՝ բարին, հաճելին եւ կատարեալը:

NASB (UPDATED) TEXT: 12: 1-2

¹Therefore I urge you, brethren, by the mercies of God, to present your bodies a living and holy sacrifice, acceptable to God, *which* is your spiritual service of worship. ²And do not be conformed to this world, but be transformed by the renewing of your mind, so that you may prove what the will of God is, that which is good and acceptable and perfect.

«Արդ» Պողոսն օգտագործեց այս տերմինը Հռոմեացիներին ուղղված թղթում հատուկ կարևոր միջանկյալ հատվածներում Ավետարանի ճշմարտությունները ներկայացնելու ժամանակ: 5:1-ից նա ամփոփեց «հավատքով արդարացումը», 8:1-ից ամփոփեց հավատացյալների կապը մեղքի հետ, նրանց սրբացման մասին; և 12:1-ից խոսում է այն մասին, թե արդարացումն ու սրբացումը ինչպես են գործնականորեն կապված հավատացյալների առօրյա կյանքի հետ:

Արևելահայերեն «Արդ աղաչում եմ ձեզ»

Արևմտահայերեն «Արդ՝ կաղաչեմ ձեզ»

12:1

NASB "I urge you"
NKJV "I beseech you"
NRSV, TEV "I appeal to you"
JB "I beg you"

Այս արտահայտությունը մեղմ է, և միառժամանակ կտրուկ: Սա ճիշտ կյանքով ապրելու կոչ է: Պողոսը հաճախ է օգտագործում այս տերմինը (հմմտ. 12:1;15:30; 16:17; I Կոր. 1:10; 4:16; 16:15; II Կոր. 2:8; 5:20; 6:1; 10:1; 12:8; Եփ. 4:1; Փիլ. 4:2; I Թես. 4:10; I Տիմ. 1:3; Փիլիմոն. 9-10 հհ):

«եղբարք» Պողոսը հաճախ է օգտագործում այս բառը, երբ նոր թեմայի է անցնում:

«Աստուծոյ ողորմութիւնովը» LXX մեջ այսպես նկարագրվում է Աստծո կարեկցող բնությունը (հմմտ. Ել. 34:6): Այստեղ այս արտահայտությունը վերաբերում է 1-11 գլուխների վարդապետական վերլուծության զարգացմանը: Հռոմեացիս թղթում կա ակնհայտ շեշտադրություն Աստծո «ողորմության» վրա (երկու իմաստներով էլ *oikēirō* և *eleeō*), կապված մեղավոր մարդկության հետ (հմմտ. 9:15,16,18,23; 11:30,31,32; 12:8; 15:9): Քանի որ Աստծո շնորհքն ու ողորմությունը ձրի են առաջարկվում, հավատացյալները պետք է ապրեն բարեպաշտ կյանքով (հմմտ. Եփ. 1:4; 2:10) Աստծուն երախտապարտ լինելով, և ոչ թե իր արժանիքների վրա հենվելով (հմմտ. Եփ. 2:8-9):

«ներկայացնէք» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ՉԵՎՆ է: Այս բառը «զոհաբերությանը» վերաբերվող մի քանի տերմիններից մեկն է: պատարագ, հ. 1; սուրբ, հ. 1; հաճելի, հ. 1. Այս նույն գաղափարը արտահայտված է 6:13,16,19-ում: Մարդիկ իրենց անձերը կամ Աստծուն են տալիս կամ սատանային: Ինչպես Քրիստոսն Իր անձը անգուգական կերպով տվեց Հոր կամքը կատարելու համար, մեռնելով խաչի վրա, այնպես էլ Իր հետևորդները պետք է նմանվեն Նրա ինքնամերժող կյանքին (հմմտ. II Կոր. 5:14-15; Գաղ. 2:20; I Հովհ. 3:16):

« ձեր մարմինները» Քրիստոնությունն այնքան տարբեր է հունական փիլիսոփայությունից, որը համարում էր, որ ֆիզիկական մարմինը չար է: Այո, այն փորձությունների դաշտ է, բայց մարմինն ինքնին չեզոք է: «Մարմին» բառը իմաստային առումով զուգահեռ է «միտք» բառին հ. 2-ում: Հավատացյալներն իրենց ամբողջ էությունն ու անձը պետք է նվիրեն Աստծուն (հմմտ. 2 Օրին. 6:5; I Կոր. 6:20), ինչպես նախկինում իրենց նվիրել էին մեղքին (հմմտ. Հռ. 6):

«կենդանի» Սրանում էր արմատական տարբերությունը մեռած զոհաբերություններից, որոնք կատարվում էին հրեական կամ հեթանոսական տաճարներում (հմմտ. 6:13; Գաղ. 2:20):

Սա ոչ մի կապ չունի ասկետիզմի հետ (կրոնական նկատառումներից ելնելով, դաժանաբար են վարվում մարմնի հետ): Սա մարմնի մեկուսացում, պատիժ կամ ամուրիություն չէ, այլ Աստծուն ծառայելու և քրատոսանման սեր ունենալու ակտիվ կյանք:

«սուրբ պատարագ» «Սուրբ» տերմինը նշանակում է «առանձնացված Աստծո ծառայության համար»: Տվյալ կոնտեքստում այս բառի իմաստը կենտրոնացված է հավատացյալի նվիրվածության և պատրաստակամության վրա՝ Աստծո կողմից և Իր նպատակների համար օգտագործվելու նպատակով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ

I. Գործածությունը Հին Կտակարանում

- Ա. (*kadosh*) տերմինի ստուգաբանությունը անորոշ է, հնարավոր է քանանական: Շատ հնարավոր է, որ արմատի մասը (այսինքն *kd*) նշանակում է « բաժանել, սահման դնել»: Այստեղից առաջանում է հայտնի սահմանումը «առանձնացված (քանանական մշակույթից, հմմտ. 2 Օրին. 7:6; 14:2,21; 26:19) Աստծո գործածության համար:
- Բ. Տերմինը կապված է պաշտամունքային առարկաների, վայրերի, որոշակի ժամանակների և մարդկանց հետ, որոնք կապ ունեն այս ամենի հետ: Այն չի հանդիպում Ծննդոց գրքում, բայց լայն կիրառություն է ունենում Ելից, Ղևտացոց և Թվոց գրքերում:
- Գ. Մարգարեական գրականության մեջ (հատկապես Եսայիա և Ովսիա) արդեն առկա է անձնական տարրը, բայց մղված չէ առաջին պլան: Այն դառնում է Աստծո էության անվանումը, նշանակությունը (հմմտ. Ես. 6:3): Աստված սուրբ է: Նրա անունը հայտնում է Իր առանձնահատկության, էության մասին: Եվ Իր ժողովուրդը, որը նշանակված է հայտնելու Նրա էությունն ու կերպարը Իր կարիքն ունեցող աշխարհում, նույնպես սուրբ է (եթե նրանք հնազանդվեն և հավատքով հետևեն ուխտին):
- Դ. Աստծո սերն ու ողորմությունը անբաժանելի են ուխտերի աստվածաբանական գաղափարներից, արդարությունից և Նրա էական կերպարից: Այստեղ կա հակասություն Աստծո և պիղծ, ընկած, ըմբոստ մարդկության միջև: Մի շատ հետաքրքիր հոդված կա կապված Աստված որպես «ողորմած» և Աստված որպես «սուրբ» լինելու միջև եղած կապի մասին Ռոբերտ Բ. Գորդլսթոունի «Հին Կտակարանի հոմանիշները» գրքում [Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*], էջ. 112-113:

II. Գործածությունը Նոր Կտակարանում

- Ա. Նոր Կտակարանի հեղինակները հրեական մտածելակերպ ունեին (բացի Ղուկասից), որը քոյնե հունարենի ազդեցության տակ էր գտնվում (այսինքն Մեդետուազինդի): Հին Կտակարանի հունարեն թարգմանությունն էր, որ կառավարում էր նրանց բառարանը, և ոչ թե դասական հունարեն գրականությունը, մտածողները կամ կրոնը:
- Բ. Հիսուսը սուրբ է, որովհետև Նա Աստծուց է և Աստծո պես է (հմմտ. Ղուկ. 1:35; 4:34; Գործք 3:14; 4:27,30): Նա է Սուրբը և Արդարը (հմմտ. Գործք 3:14; 22:14): Հիսուսը սուրբ է, որովհետև Նա անմեղ է (հմմտ. Հովհ. 8:46; II Կոր. 5:21; Եբ. 4:15; 7:26; I Պետ. 1:19; 2:22; I Հովհ. 3:5):
- Գ. Քանի որ Աստված սուրբ է, Նրա զավակները նույնպես պետք է սուրբ լինեն (հմմտ. Ղև. 11:44-45; 19:2; 20:7,26; Մաթ. 5:48; I Պետ. 1:16): Քանի որ Հիսուսը սուրբ է, Իր հետևորդները նույնպես պետք է սուրբ լինեն (հմմտ. Հռ. 8:28-29; II Կոր. 3:18; Գաղ. 4:19; Եփ. 1:4; I Թես. 3:13; 4:3; I Պետ. 1:15): Քրիստոնեաները փրկվում են ծառայելու և քրիստոսանման լինելու համար:

«Աստուծոյ ընդունելի» Հին Կտակարանում սա վերաբերվում է համապատասխան գոհաբերությանը (հմմտ. հ. 2): Սա նման է «անարատ» բառի իմաստին, մարդու հետ կապված (հմմտ. Ծննդ. 6:9; 17:1; 2 Օրին. 18:13; Հոբ 1:1):

Արևելահայերեն «որ է ձեր բանատր պաշտօնը»
Արևմտահայերեն «որ է ձեր բանատր պաշտօնը»



- NASB “which is your spiritual service of worship”
- NKJV “which is your reasonable service”
- NRSV “which is your spiritual worship”
- TEV “This is the true worship that you should offer.”
- JB “in a way that is worthy of thinking beings”

Այս տերմինը [*logikos*] առաձայցել է *logizomai* բառից, որը նշանակում է «դատել, մտածել, խորհել» (հմմտ. Մարկ. 11:31; I Կոր. 13:11; Փիլ. 4:8): Այս կոնտեքստում այն կարող է նշանակել խելացի, բանական կամ խոհեմ, ողջամիտ: Բայց տերմինը նաև օգտագործվում էր «հոգևոր» իմաստով, ինչպես I Պետ. 2:2-ում: Էությունն այն է, որ անձը իրապես հասկանալով իր անձը նվիրի, որը տարբերվում է մեռած, զոհաբերած կենդանու մեռած կամ ծիսական արարողությունից: Աստված ուզում է մեր կյանքերը լինեն, լի սիրով և ծառայությամբ, և ոչ թե ձևական ծեսեր, որոնք ոչ մի կերպ չեն ազդում կյանքի ապրելակերպի վրա:

12:2 «Եւ մի կերպարանուիք» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (կամ ԿԱՏԱՐՅԱԼ ՉԵՁՈՔ ՍԵՌ) ԺԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ-ով, որը սովորաբար նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար: Այս համարում հակասություն կա, ինչպես Փիլ. 2:6-8, արտաքին ձևի փոփոխության (*schema*, 2:8) և ներքին անփոփոխ էության միջև (*morphe*, 2:6-7): Հավատացյալներին կոչ է արվում չշարունակել նմանվել փոփոխվող, ընկած աշխարհի համակարգին (անցյալ ըմբոստ ժամանակ), որի մեջ նրանք դեռ ֆիզիկապես մաս են կազմում, բայց կտրուկ փոխվել են դարձել քրիստոսանման (Սուրբ Հոգու նոր դարաշրջանը):

«այս աշխարհքի» Այս տերմինի բառացի իմաստն է՝ «դար»: Հրեաները երկու դար էին տեսնում (հմմտ. Մաթ. 12:32; Մարկ. 10:30; Դուկ. 20:34-35), ներկա չար դարը (հմմտ. Գաղ. 1:4; II Կոր. 4:4; Եփ. 2:2) և գալիք դարը (հմմտ. Մաթ. 28:20; Եբ. 1:3; I Հովհ. 2:15-17): Հավատացյալներն ապրում են լարվածությամբ լեցուն ժամանակի մեջ, որտեղ այս երկու դարերը զարմանալիորեն միմյանց մասամբ ծածկում են: Եվ քանի որ կա Քրիստոսի երկու գալուստ, հավատացյալներն ապրում են «արդեն» և «դեռ ոչ» լարվածության մեջ, Աստծո Թագավորությունը թե նրկայում է և թե դեռ գալիքում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՅՍ ԴԱՐԸ ԵՎ ԳԱԼԻՔ ԴԱՐԸ

Հին Կտակարանի մարգարեները ապագան պատկերացնում էին որպես ներկայի ընդարձակում: Նրանց համար ապագան դա Իսրայելի աշխարհագրական սահմանների վերկանգնումն էր: Ինչևէ, նույնիսկ նրանք տեսան նոր օր (հմմտ. Ես. 65:17; 66:22): Քանի որ Աբրահամի սերունդները շարունակում էին մերժել ՅԱՀՎԵ-ին (նույնիսկ գերությունից հետո) հրեական միջկտակարանային վախճանաբանական/ապոկալիպտիկ գրականության մեջ (այն է, I Ենովք, IV Եզրա, II Բարուք) նոր օրինակ/պարադիգմ գարգացավ: Այս գրվածքները բաժանություն են դնում երկու դարաշրջանների միջև՝ ներկա չար դարաշրջան, որտեղ տիրում է Սատանան և գալիք արդարության դարաշրջանը, որը տիրում է Սուրբ Հոգին և հաղթանակը, որը կլինի Մեսսիայի գալուստով (հաճախ ուժեղ և գործուն պատերազմով):

Աստվածաբանության (վախճանաբանություն) այս բնագավառում կա համապատասխան գարգացում: Աստվածաբանները սա կոչում են «գարգացող, պրոգրեսիվ հայտնություն»: Նոր Կտակարանը հաստատում է երկու դարաշրջանների այս նոր տիեզերական իրականությունը (այն է, ժամանակավոր դուալիզմ):

<u>Հիսուս</u>	<u>Պողոս</u>	<u>Երրայեցիս</u>
Մաթ. 12:32	Հռ. 12:2	1:2
Մաթ. 13:22 և 29	I Կոր. 1:20; 2:6,8; 3:18	6:5
Մարկ. 10:30	II Կոր. 4:4	11:3
Ղուկ. 16:8	Գաղ. 1:4	
Ղուկ. 18:30	Եփ. 1:21; 2:1,7; 6:12	
Ղուկ. 20:34-35	I Տիմ. 6:17	
	II Տիմ. 4:10	
	Տիտոս 2:12	

Նոր Կտակարանի աստվածաբանության մեջ այս երկու հրեական դարաշրջանները մասամբ իրար ծածկել են, որովհետև Մեսիայի երկրորդ գալստյան մասին կան անհասկանալի և անապասելի կանխագուշակություններ: Հիսուսի մարմնացումը իրականացրեց Հին Կտակարանի մարգարեությունները, որը սկիզբ դրեց նոր դարի: Ինչևէ, Հին Կտակարանը Նրա գալուստը դիտում էր որպես Գատավոր և Նվաճող, սակայն Նա եկավ նախ որպես Տառապող Ծառա (հմմտ. Ես. 53), խոնարհ ու հեզ (հմմտ. Չաբ. 9:9): Նա կվերադառնա գործությունով ինչպես Հին Կտակարանը մարգարեացավ (հմմտ. Հայտ. 19): Այս մարգարեության իրականացման երկու փուլերը ցույց են տալիս Աստծո Թագավորության ներկա գոյությունը (հռչակված է նրա սկիզբը), բայց նաև գալիք թագավորությունը (դեռ չավարտած): Մա Նոր Կտակարանի հակասությունը «արդեն», բայց «դեռ ոչ»:

«Մի կերպարանուիք» Այս տերմինի քերականական ձևը կարող է լինել կամ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՉԵՁՈՔ ՍԵՌ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, «շարունակեք կերպարանափոխել ինքդ ձեզ» կամ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, «շարունակեք կերպարանափոխվել»: Մա նաև ճիշտ է 2հ-ի «կերպանուիք»: Նմանատիպ հակասություն կարելի է տեսնել՝ համեմատելով Եզ. 18:31-ը (մարդկային պարտավորությունն ու գործողությունը) Եզ 36:26-27-ի հետ (աստվածային պարզև): Երկուսն էլ անհրաժեշտ են:

Այս նույն բառի ձևը «կերպարանափոխվել» օգտագործվում է Հիսուս Քրիստոսի հետ կապված Այլակերպության ժամանակ (հմմտ. Մաթ. 17:2), որտեղ Նրա ճշմարիտ էությունն է հայտնվում: Այս ճշմարիտ աստվածային էությունը (հմմտ. II Պետ. 1:3-4) չի երևում ամեն հավատացյալի մեջ (հմմտ. II Կոր. 3:18; Եփ. 4:13):

«Որոգուեցէք ձեր մտքի նորոգութեամբը» Այս տերմինը առաջացել է հունարեն արմատից, որը նշանակում է նոր որակի իմաստով, (*kainos*), ոչ թե նոր ժամանակի իմաստով (*chronos*): Հրեաների համար տեսնելու և լսելու զգայարանները հոգու պատուհաններն էին: Մարդ ինչի մասին մտածում է, դրան էլ նմանվում է: Հավատացյալի դարձի գալու հետ, քանի որ Սուրբ Հոգին է բնակվում նրա մեջ, նրանք ունենում են նոր հայացքներ կյանքի վերաբերյալ (հմմտ. Եփ. 4:13,23; Տիտոս 3:5): Այս նոր աստվածաշնչյան աշխարհայացքը, բնակվող Սուրբ Հոգու հետ միասին, փոխում է նորադարձի միտքն ու ապրելակերպը: Հավատացյալներն իրականությանը նայում են ամբողջությամբ ուրիշ կերպ, որովհետև նրանց միտքը լցված է Սուրբ Հոգով: Վերստին ծնված և Հոգով առաջնորդված միտքը տանում է նոր ապրելակերպի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐՈԳԵԼ (ANAKAINŌSIS)

Այս հունարեն տերմինը իր տարբեր ձևերի մեջ (*anakainoō*, *anakainizō*) ունի երկու հիմնական իմաստ

1. «այնպես անել, որ ինչ որ մի բան դառնա նոր և ուրիշ (այն է, ավելի լավ)» - Հռ. 12:2; Կող. 3:10
2. «փոփոխություն մտցնել նախկին գերադասելի վիճակի մեջ» - II Կոր. 4:16; Եբր. 6:4-6

(վերցված է Լաուվ և Նիդայի «Հունարեն-Անգլերեն Բառարան»-ից [Louw and Nida's *Greek-English Lexicon*,] հատ. 1, էջ. 157, 594)

Մուլտոն և Միլիգան «Հունարեն Նոր Կտակարանի Բառարան» [Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek Testament*,] գրքում ասում են, որ այս տերմինը (այն է, *anakkainōsis*) հունարեն գրականության մեջ չկա մինչև Պողոսը: Հնարավոր է, որ Պողոսն ինքն է դա ստեղծել (էջ 34):

Ֆրենկ Ստեգի «Նոր Կտակարանի աստվածաբանություն» [Frank Stagg, *New Testament Theology*], գրքում կա մի հետաքրքիր մեկնաբանություն.

«Վերստին ծնունդն ու նորոգումը պատկանում են միայն Աստծուն: *Anakkainōsis*, «նորոգություն» բառը գոյական է և դա ենթադրվող գործողություն է. Այն օգտագործվում է Նոր Կտակարանում բայական ձևերի հետ, նկարագրելու համար շարունակական բնույթ կրող նորոգություն, ինչպես Հռ. 12:2, «այլ նորոգուեցեք ձեր մտքի նորոգութեամբը» և 2 Կոր. 4:16, «մեր ներսի մարդն օրեցօր նորոգվում է»: Կող. 3:10 նկարագրում է «նոր մարդ»-ուն որպես «մարդ, որ նորոգուած է գիտութիւնով իր ստեղծողի պատկերի պէս»: Ուստի «նոր մարդ», «կյանքի նորոգություն», «վերստին ծնունդ» կամ «նորոգություն» ինչպես էլ այն կոչենք, իրենից ներկայացնում է սկզբնական և հետևողական Աստծո գործողությունը, որպես հավիտենական կյանք տվող և պահպանող» (էջ 118):

«որ դուք քննեք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԳԵՐԲԱՅ Է: (*dokimazō*) բառը օգտագործված է «փորձել՝ համոզված լինելու համար» իմաստով: Տես հատուկ թեմա 2:18:

Աստծո կամքն է, որ մենք փրկվենք Քրիստոսի միջոցով (հմմտ. Հովհ. 6:39-40), և հետո ապրենք Քրիստոսի նման (հմմտ. Հռ. 8:28-29; Գաղ. 4:19, Եփ. 1:4; 4:13,15; 5:17-18): Քրիստոնեական վստահությունը հիմնված է

1. վստահության արժանի Աստծո խոստումների վրա
2. հավատացյալի մեջ բնակվող Սուրբ Հոգին (հմմտ. Հռ. 8:14-16)
3. հավատացյալի փոխված և փոխվող կյանքը (հմմտ. Հակոբոս և I Հովհ.) «չկա պտուղ, ուրեմն չկա արմատ» (հմմտ. Մաթ. 13:1-9, 19-23):

«ի՞նչ է Աստուծոյ կամքը» Տես հատուկ թեմա ներքևում

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏԾՈՒ ԿԱՄՔԸ (*thelēma*)

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ

- Հիսուսը եկավ Հոր կամքը կատարելու համար (հմմտ. 4:34; 5:30; 6:38)
- վերջին օրը հարություն տալու բոլոր նրանց, ում Հայրը տվեց Որդուն (հմմտ. 6:39)
- որ բոլորը հավատան Որդուն (հմմտ. 6:29,40)
- պատասխանված աղոթքը Աստծո կամքին է համապատասխանում (հմմտ. 9:31 և I Հովհ. 5:14)

ՄԻՆՈՊՏԻԿ ԿԱՄ ՆՈՒՅՆԱՆՄԱՆ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐ

- Աստծո կամքը կատարելը էական է և կարևոր (հմմտ. 7:21)
- Աստծո կամքը կատարելը մարդուն Քրիստոսով եղբայր և քույր է դարձնում (հմմտ. Մաթ. 12:5; Մարկ. 3:35)
- Աստծո կամքը չէ որևէ մեկին կորցնելը (հմմտ. Մաթ. 18:14; I Տիմ. 2:4; II Պետ. 3:9)
- Գողգոթան Հիսուսի համար Հոր Աստծո կամքն էր (հմմտ. Մաթ. 26:42; Դուկ. 22:42)

ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

- բոլոր հավատացյալների հոգևոր հասունությունն ու ծառայությունը (հմմտ. Հռ. 12:1-2)
- հավատացյալները ազատված են այս չար ներկա ժամանակաշրջանից (հմմտ. Գաղ. 1:4)
- Աստծո կամքը Իր փրկարար ծրագիրն էր (հմմտ. Եփ. 1:5,9,11)
- հավատացյալները փորձառու և ապրում են Հոգով լեցուն կյանք (հմմտ. Եփ. 5:17)
- որպեսզի հավատացյալները լցվեն Աստծո գիտությամբ (հմմտ. Կող. 1:9)
- որպեսզի հավատացյալները դառնան կատարյալ և ամբողջական (հմմտ. Կող. 4:12)
- որպեսզի հավատացյալները սրբանան (հմմտ. I Թես. 4:3)
- որպեսզի հավատացյալները գոհանան ամեն բանում (հմմտ. I Թես. 5:18)

ՊԵՏՐՈՍԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

- որպեսզի հավատացյալները ճիշտ վարվեն (այն է, հնազանդվեն քաղաքացիական իշխանություններին) և այդպիսով լռեցնեն հիմար մարդկանց (հմմտ. I Պետ. 2:15)
- որպեսզի հավատացյալները տառապանք կրեն (հմմտ. I Պետ. 3:17; 4:19)
- որպեսզի հավատացյալները չապրեն եսակենտրոն կյանքով (հմմտ. I Պետ. 4:2)

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

- որպեսզի հավատացյալները մնան հավիտյան (հմմտ. I Հովհ. 2:17)
- բանալի պայմաններ հավատացյալների համար, որպեսզի Աստված պատասխանի աղոթքներին (հմմտ. I Հովհ. 5:14)

«թէ ի՞նչ է բարին, հաճելին եւ կատարեալը» Սա է Աստված կամենում հավատացյալներից փրկությունից հետո (հմմտ. Փիլ. 4:4-9): Աստծո նպատակը յուրաքանչյուր հավատացյալի համար՝ քրիստոսանման հասունություն ունենալն է հիմա (հմմտ. Մաթ. 5:48):

«կատարեալ» Այս տերմինը նշանակում է «հասուն, ամբողջությամբ սպառազինված իրականացնելու առաջադրանք, հասած, ամբողջական»: Այն չի նշանակում «անմեղ, առանց մեղքի»: Այն օգտագործվում էր (1) կոտրված ձեռքեր և ոտքեր, որոնց բուժվելուց և վերականգնվելուց հետո դառնում են պիտանի, գործածելի; (2) ձկնորսական ուռկաններ, որոնք պոկված են և պատռված, բայց կարկատելուց հետո նորից պիտանի օգտագործման համար; (3) ճուտիկներ, բայց որ արդեն մեծ են և կարող ես տանել շուկա վաճառելու; և (4) նավեր որոնք լրիվ կազմ պատրաստ են ծով դուրս գալու:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12:3-8

³Որովհետեւ Աստուծոյ շնորհքովն՝ որ ինձ տրուած է՝ ասում եմ ձեր մէջ ամենին, բան չմտածել նորանից աւելի, քան թէ արժան է մտածել, այլ մտածել պարկեշտ կենալ այնպէս՝ ինչպէս որ Աստուած ամեն մէկին հաւատքի չափովը բաժանեց:⁴ Որովհետեւ ինչպէս մէկ մարմնի մէջ շատ անդամներ ունինք, եւ այն ամեն անդամները միեւնոյն գործը չունին, ⁵ Այնպէս էլ շատերս մէկ մարմին ենք Զրիստոսումը, բայց ամեն մէկը միմեանց անդամ ենք: ⁶ Սիայն թէ զանազան պարզելներ ունինք այն շնորհքի պէս որ մեզ տրուած է. թէ մարգարէութիւն՝ հաւատքի չափովը մարգարէանանք. ⁷ Թէ պաշտօն՝ պաշտօնում լինինք. թէ մէկը սովորեցնող է՝ վարդապետութեան մէջ լինի: ⁸ Թէ մխիթարող է՝ մխիթարութեան մէջ. բաշխողը՝ զուարթութիւնով. վերակացու դրուածը՝ ջանքով. ողորմողը՝ յօժարութիւնով:

NASB (UPDATED) TEXT: 12:3-8

³For through the grace given to me I say to everyone among you not to think more highly of himself than he ought to think; but to think so as to have sound judgment, as God has allotted to each a measure of faith. ⁴For just as we have many members in one body and all the members do not have

the same function, ⁵so we, who are many, are one body in Christ, and individually members one of another. ⁶Since we have gifts that differ according to the grace given to us, *each of us is to exercise them accordingly*: if prophecy, according to the proportion of his faith;⁷ if service, in his serving; or he who teaches, in his teaching;⁸ or he who exhorts, in his exhortation; he who gives, with liberality; he who leads, with diligence; he who shows mercy, with cheerfulness.

12:3 1-2հհ. շեշտը դնում են «նոր միտք» ունենալու անհրաժեշտության վրա: 3հ. չորս անգամ հայտնվում է «մտածել» բառը: Բրյուս Կորնելի և Կյորտիս Վոխենի «Հռոմեացիս գրքի մեկնաբանության սերտողության ուղեցույցը» գրքում [*The Zondervan Study Guide Commentary, Romans*, Bruce Corley and Curtis Vaughan] այս դիտարկումն են արել. «Չափազանցված մտորում. . ճիշտ մտորում. . նպատակային մտորում. . լուրջ մտորում» (էջ 138): Այս բնութագիրը շատ օգտակար է:

Այս համարը, ինչպես նաև 11:13-24, կարող է արտացոլել (1) Հռոմի եկեղեցում տիրող հրեա հավատացյալների և հեթանոս հավատացյալների միջև լարվածությունը կամ (2) այն փաստը, որ Պողոսը այս նամակը գրել է Կորնթոսից, որտեղ կային ամբարտավան և ցուցամոլ հավատացյալներ:

«Որովհետև Աստուծոյ շնորհքովն՝ որ ինձ տրուած է» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ-ԴԵՐԲԱՅ է: Շնորհքը Աստուծոց է, որպես կոնկրետ, ամբողջական իրադարձություն՝ կատարված անցյալում: Այս կոնտեքստում «շնորհք» բառը կապված է հոգևոր պարգևներով օժտվածությանը (հմմտ. 15:15; I Կոր. 3:10; 15:10; Գաղ. 2:9; Եփ. 3:7-8), և ոչ թե արդարության պարգևին (հմմտ. Հռ. 4): Սա վերաբերվում է Պողոսի դարձի գալուն և հեթանոսներին առաքյալ լինելու կոչմանը (հմմտ. Գործք 9:15; Հռ. 1:1,5; Գաղ. 1:15-16; 2:7-8; Եփ. 3:1-2,8; I Տիմ. 2:7; II Տիմ. 4:17):

«ասում են ձեր մեջ ամենին» հ. 3-ի զգուշացումը բոլոր քրիստոնյաների համար է, և ոչ միայն եկեղեցու առաջնորդների:

«քան չմտածել նորանից առելի» Տես հատուկ թեմա: Պողոսի «*Hyper*» նախդիրի գործածությունը բարդ բառեր կազմելու համար 1:30:

«ինչպես որ Աստուած ամեն մեկին բաժանեց» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Հավատացյալները չեն ընտրում իրենց հոգևոր պարգևները (հմմտ. I Կոր. 12:11; Եփ. 4:7): Դրանք տրվում են Սուրբ Հոգու կողմից փրկության ժամանակ և ի օգուտ բոլորի (հմմտ. I Կոր. 12:7): Հոգևոր պարգևները արժանի լինելու կրթանշաններ չեն, որոնք մեծարում կամ բարձրացնում է անհատին, այլ ծառայի սրբիչ, որպեսզի յուրաքանչյուր հավատացյալ ծառայի Քրիստոսի մարմնին՝ եկեղեցուն:

«հաստքի չափովը» Սա վերաբերվում է հավատացյալի կարողություններին ծառայության մեջ պտղաբեր լինելու համար նրան անհրաժեշտ են համապատասխան (հմմտ. հ. 6): Որպեսզի հոգևոր պարգևներով օժտվածությունը առողջ և պտղաբեր լինի լինի, այն պետք է զարգանա Սուրբ Հոգու պտուղի օգնությամբ (հմմտ. հհ. 9-12; Գաղ. 5:22-23): Հոգևոր պարգևները Հիսուս Քրիստոսի ծառայությունն է, որը Նա բաժանեց իր հետևորդների միջև, իսկ Հոգու պտուղը դա Քրիստոսի միտքն է: Արդյունավետ ծառայության համար երկուսն էլ անհրաժեշտ են:

12:4 Սա շատ հաճախ հանդիպող փոխաբերություն է Պողոսի գրվածքներում: Մարդու մարմնի անդամների ներկայվածությունը օգտագործվում է որպես օրինակ՝ եկեղեցու մեջ գոյություն

ունեցող պարզները նկարագրելու համար (հմմտ. I Կոր. 12:12-27; Եփ. 1:23; 4:4,12,16; 5:30; Կող. 1:18,24; 2:19): Քրիստոնեությունը թե համագործակցող է, և թե անհատական:

12:5 «չատերս մէկ մարմին ենք Քրիստոսումը» Այս համարն ընդգծում է հավատացյալների միաբանությունն ու զանազանությունը: Եկեղեցում հոգևոր պարզների հետ կապված կա լարվածություն: Սիրո գլուխը I Կոր. 13 քննարկում է պարզների զանազանության լարվածության մասին (հմմտ. I Կոր. 12 և 14): Քրիստոնյաները մրցման մեջ չեն այլ համագործակցության:

12:6-8 Այս համարները հունարենում մեկ նախադասություն են երկու ԴԵՐԲԱՅ_ով, որտեղ բացակայում է հիմնական բայը: Այն սովորաբար թարգմանվում է որպես ԵՐՐՈՐԴ ԴԵՄԸ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ «թող որ մենք էլ»:

12:6 «պարզներ. . շնորհք» «պարզներ» (*charisma*) և «շնորհք» (*charis*) տերմինները հունարենում ունեն նույն բառային արմատը, որը նշանակում է « ձրիաբար տրված»: Տես ծանուցում 3:24: Հոգու պարզները թվարկված են I Կոր. 12; Հռ. 12; Եփ. 4 և I Պետ. 4: Ցանկն ու նրանց հերթականությունը չեն համընկնում իրար հետ, ուստի դրանք պետք է նայվեն որպես օրինակ և ոչ թե սպառիչ ցանկ: Աստվածաշունչը երբեք չի տեղեկացնում հավատացյալներին, թե ինչպես կարող են իմանալ իրենց հոգևոր պարզը(ները): Ոչ աստվածաշնչյան աղբյուրներում լավագույն քրիստոնեական իմաստության շարադրանքը այս թեմայի շուրջ գտնվում է սկզբունքներում, գտնվում է Փոլ Լիթլի «Հաստատելով Աստծո կամքը» փոքրիկ գրքում [Paul Little, *Affirming the Will of God*] հրատ. «InterVarsity Press»: Այս նույն ուղեցույցները Աստծո կամքն իմանալու մասին, հավատացյալին օգնում են որոշել այն ծառայությունը, որի մեջ նա ավելի պտղաբեր կլինի: Բայց ամենայն հավանականությամբ, ավելի կարևոր է իմանալ այն, որ բոլոր հավատացյալները օժտված են հոգևոր պարզներով, քան թե կարողանալ որոշել, թե ինչ չափով են օժտված, կամ կոնկրետ որ պարզներով են նրանք օժտված:

«թե» Սա կապ է *eite* (հմմտ. հհ. 6,7[երկու անգամ],8), որը թարգմանվում է «եթե. . եթե» կամ «թե. . թե» իմաստով: Այս համարում նրան հետևող ԲԱՅ չկա (հմմտ. I Կոր. 3:22; 8:5; II Կոր. 5:10), բայց հաճախ հետևում է ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ (Հմմտ. I Կոր. 12:26; II Կոր. 1:6): Հետևաբար այս նախադասությունը ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրում է այս հոգևոր պարզների գոյությունը:

«մարգարեություն» Սա ոչ մի կապ չունի Հին Կտակարանի մարգարեության հետ որպես հայտնված (ներշնչված) պատգամ Աստծուց: Հին Կտակարանի շրջանում մարգարեները գրեցին Սուրբ Գիրքը (ներշնչանք): Նոր Կտակարանի շրջանում այդ գործողությունը Աստծո ճշմարտությունը հռչակելն էր համարվում: Մարգարեությունն իր մեջ կարող է նաև ընդգրկել կանխագուշակություն (հմմտ. Գործք 11:27-28; 21:10-11): Ենչտեղ ոչ թե նոր բովանդակության վրա է, այլ ավետարանի պատգամի բացատրությունը և թե ինչպես այն կիրառել այսօր: Տերմինի իմաստի մեջ կա աստիճանաբար և հարթ զարգացող տարր: Դրա տակ կարելի է հասկանալ հավատացյալների գործնական քայլերը, (հմմտ. I Կոր. 14:1,39) և որպես հատուկ հոգևոր պարզ (հմմտ. I Կոր. 12:28; 13:28; Եփ. 4:11): Այս նույն զարգացումը տեսանելի է Պողոսի Կորնթացիներին ուղղված նամակում, որը գրվել է մոտավորապես նույն ժամանակ (հմմտ. I Կոր. 12:10,12; 13:8; 14:1, 5,29,39):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

I. Սա նույնը չէ, ինչ Հին Կտակարանի մարգարեությունը, որն ունի ռաբբիական հասկացողություն հայտնության ներշնչվածության մասին ստացած ՅԱՀՎԵ-ից (հմմտ. Գործք 3:18,21; Հռ. 16:26): Միայն մարգարեները կարող էին Սուրբ Գիրք գրել:

Ա. Մովսեսը կոչվում էր մարգարե (հմմտ. 2 Օրին. 18:15-21)

- Բ. Պատմական գրքերը (Հեսու – Թագավորաց գրքեր [բացի Հռութից]) կոչվում էին «վաղ մարգարեներ» (հմմտ. Գործք 3:24):
- Գ. Մարգարեները փոխարինեցին Քահանայապետին, որպես ինֆորմացիայի աղբյուր Աստծուց (հմմտ. Եսայա -Մաղաքիա):
- Դ. Եբրայական Կանոնի երկրորդ բաժանումը կոչվում է «Մարգարեները» (հմմտ. Մաթ. 5:17; 22:40; Դուկ. 16:16; 24:25,27; Հռ. 3:21):
- II. Նոր Կտակարանում մարգարեության գաղափարը օգտագործվում է մի քանի իմաստով
- Ա. Հին Կտակարանի մարգարեները և նրանց ներշնչված հայտնությունը (հմմտ. Մաթ. 2:23; 5:12; 11:13; 13:14; Հռ. 1:2)
- Բ. պատգամ, որն ավելի շատ ուղղված է անհատին, քան թե մարդկանց խմբին (Հին Կտակարանի մարգարեները հիմնականում խոսեցին Իսրայելին)
- Գ. Հովհաննես Սկրտիչը (հմմտ. Մաթ. 11:9; 14:5; 21:26; Դուկ. 1:76) և Հիսուսը, որպես Աստծո Թագավորության հռչակողներ (հմմտ. Մաթ. 13:57; 21:11,46; Դուկ. 4:24; 7:16; 13:33; 24:19): Հիսուսը պնդեց, որ Ինքն ավելի մեծ է քան մարգարեները (հմմտ. Մաթ. 11:9; 12:41; Դուկ. 7:26):
- Դ. Նոր Կտակարանի մյուս մարգարեները
1. Հիսուսի երկրավոր կյանքը, ինչպես արձանագրված է Դուկասի Ավետարանում (այն է, Մարիամի հիշողությունները)
 - ա. Եղիսաբեթ (հմմտ. Դուկաս 1:41-42)
 - բ. Ջաքարիա (հմմտ. Դուկ. 1:67-79)
 - գ. Սիմեոն (հմմտ. Դուկ. 2:25-35)
 - դ. Աննա (հմմտ. Դուկ. 2:36)
 2. ծաղրական կանխագուշակություններ (հմմտ. Կայափա, Հովհ. 11:51)
- Ե. անձ, որը հռչակում է ավետարանը (համապատասխան պարզևների ցանկը I Կոր. 12:28-29; Եփ. 4:11)
- Զ. դեռևս շարունակվող պարզև եկեղեցում (հմմտ. Մաթ. 23:34; Գործք 13:1; 15:32; Հռ. 12:6; I Կոր. 12:10,28-29; 13:2; Եփ. 4:11): Երբեմն սա կարող է վերաբերվել կանանց (հմմտ. Դուկ. 2:36; Գործք 2:17; 21:9; I Կոր. 11:4-5):
- Է. Վախճանաբանական գիրք՝ Հայտնություն (հմմտ. Հայտ. 1:3; 22:7,10,18,19)
- III. Նոր Կտակարանի մարգարեներ
- Ա. Նրան չեն տալիս ներշնչված հայտնություն այն իմաստով, ինչպես Հին Կտակարանի մարգարեներն էին անում (այն է, Սուրբ Գիրքը): Այսպիսի պնդումը հնարավոր է «հավատք» տերմինի շնորհիվ (այն է, ավարտված ավետարան), ինչպես օգտագործվում է Գործք 6:7; 13:8; 14:22; Գաղ. 1:23; 3:23; 6:10; Փիլ. 1:27; Հուդա 3,20:
- Այս գաղափարը պարզ է դառնում Հուդա 3 ամբողջ արտահայտությունից «որ մրցիք սրբերին միանգամ աւանդուած հաւատքովը»: «Միանգամ աւանդուած» հավատքը վերաբերվում է քրիստոնեական ճշմարտություններին, վարդապետություններին, գաղափարներին, աշխարհայացքի ուսմունքների: Ընդգծված «մեկ անգամ տրված» արտահայտությունը հանդիսանում է աստվծաշնչյան հիմք՝ աստվածաբանորեն սահմանափակելով Նոր Կտակարանի գրվածքների ներշնչվածությունը և թույլ չտալով ավելի ուշ կամ ուրիշ գրվածքներ համարվեն հայտնություն: Նոր Կտակարանում կան շատ «մոխրագույն գոնա» ներ, որոնք անորոշ են, անհաստատ, սակայն հավատացյալները հավատքով պնդում են, որ ամեն բան ինչ անհրաժեշտ է «հավատքի» և «գործնական կյանք» ապրելու համար կա Նոր Կտակարանում: Այս գաղափարը ուրվագծվել է այսպես կոչված «հայտնության եռանկյունի» անունով:
1. Աստված Իրեն հայտնել է ժամանակի -տարածություն պատմության մեջ (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ)

2. Նա ընտրել է որոշակի մարդկանց, որպեսզի արձանագրեին և բացատրեին Իր գործողությունները (ՆԵՐՇՆՉԱՆԶ)
3. Նա տվել է Իր Հոգին մարդկանց սրտերն ու մտքերը բացելու համար, որպեսզի հասկանան այս գրվածքները — ոչ բացարձակ և վերջնական ձևով, այլ բավարար փրկության համար և արդյունավետ Քրիստոնեական կյանքի համար (ԼՈՒՄԱՎՈՐՈՒՄ)

Հիմնական միտքն այն է, որ ներշնչանքը սահմանափակվում է Սուրբ Գրքի հեղինակներով: Ուրիշ հեղինակային գրվածքներ, տեսիլքներ կամ հայտնություններ չկան: Կանոնը փակված է: Մենք ունենք ամբողջ ճշմարտությունը՝ Աստծուն ճիշտ արձագանքելու համար:

Այս ճշմարտությունն ավելի լավ տեսանելի է, երբ համեմատում ենք աստվածաշնչյան հեղինակներին և տեսնում թե որքան համահունչ են, սակայն տարածայն են անկեղծ և աստվածահաճո հավատացյալները: Ժամանակակից գրողներից կամ քարոզիչներից ոչ մեկը չունի այն աստվածային առաջնորդության աստիճանը, որ ունեին Սուրբ Գրքի հեղինակները:

Բ. Նոր Կտակարանի մարգարեները որոշ ձևերով նման են Հին Կտակարանի մարգարեներին.

1. գալիք իրադարձությունների կանխագուշակում (հմմտ. Պողոս, Գործք 27:22; Ագաթոս, Գործք 11:27-28; 21:10-11; ուրիշ անանուն մարգարեներ, Գործք 20:23)
2. վճռի հռչակում (հմմտ. Պողոս, Գործք 13:11; 28:25-28)
3. սիմվոլիկ/խորհրդավոր գործողություն, որը հստակ պատկերում է որոշակի իրադարձություն (հմմտ. Ագաթոս, Գործք 21:11)

Գ. Նրանք իրոք երբեմն հռչակում են Ավետարանի ճշմարտությունները կանխագուշակության ձևով (հմմտ. Գործք 11:27-28; 20:23; 21:10-11), բայց սա չէ հիմնական իմաստը: Ի Կորնթացիս գրքում եղած մարգարեությունը հիմնականում Ավետարանը փոխանցելու համար է(հմմտ. 14:24,39):

Դ. Նրանք հանդիսանում են այն կարևոր , իր ժամանակին համապատասխանող միջոցները, որի միջոցով Սուրբ Հոգին բացահայտում է Աստծո ճշմարտության գործնական կիրառությունը յուրաքանչյուր նոր իրավիճակի, մշակույթի կամ ժամանակաշրջանի համար (հմմտ. Ի Կոր. 14:3):

Ե. Նրանք բավականին ակտիվ գործում էին «Պողոս»-յան եկեղեցիների վաղ ժամանակաշրջանում (հմմտ. Ի Կոր. 11:4-5; 12:28,29; 13:29; 14:1,3,4,5,6,22,24,29,31, 32,37,39; Եփ. 2:20; 3:5; 4:11; Ի Թես. 5:20) և հիշատակված են *Didache* մեջ (գրված առաջին կամ երկրորդ դարի վերջին, տարեթիվն անորոշ է) և երկրորդ և երրորդ դարի մոնտանիզմի մեջ հյուսիսային Աֆրիկայում:

IV. Արդյո՞ք Նոր Կտակարանի պարզևները դադարեցրել են իրենց գործելը

Ա. Այս հարցին դժվար է պատասխանել: Ճիշտ եզրահանգման գալու համար, նախ և առաջ պետք է հասկանալ հոգևոր պարզևների նպատակը: Արդյո՞ք դրանք մտադրված են եղել Ավետարանի ճշմարտության վաղ քարոզչությունն իրականացնելու համար , թե՞ այսօր էլ շարունակում են միջոց հանդիսանալ ծառայության մեջ, թե եկեղեցում և թե կորսված աշխարհին հասնելու համար:

Բ. Որտե՞ղ պետք փնտրել այս հարցի պատասխանը: Եկեղեցու պատմության մեջ թե՞ միանշանակ Նոր Կտակարանում: Այն մասին, թե հոգևոր պարզևները ժամանակավոր էին, Նոր Կտակարանում ցուցում չկա: Նրանք, ովքեր փորձում են օգտագործել Ի Կոր. 13:8-13 հիմնավորելու համար այս հարցը, չարաշահում են հեղինակի մտադրությունը տվյալ հատվածի վերաբերյալ, որը հաստատում է, որ բացի սիրուց ամեն բան պետք է անցնի և վերջանա:

- Գ. Ես հակված եմ ասելու, որ քանի որ Նոր Կտակարանը, և ոչ թե եկեղեցու պատմությունն է, գերագույն հեղինակությունը, ապա հավատացյալներին պետք է պնդել, որ հոգևոր պարզակների գործածումը շարունակվում է: Ինչևէ, ես հավատում եմ, որ մշակույթն ազդում է մեկնաբանության վրա: Որոշ պարզ տեքստեր այլևս կիրառելի չեն (այն է, սուրբ համբույր, կանայք գլուխները ծածկելը, տնային պաշտամունքները և այլն): Եթե մշակույթն ազդում է տեքստ վրա, ապա ինչու՞ եկեղեցու պատմությունը չի կարող իր ներգործությունն ունենալ նրա վրա:
- Դ. Պարզապես սա այն հարցն է, որին չի կարելի որոշակի, հստակ պատասխանել: Որոշ հավատացյալների պարզակների գործածությունը դարադրելու կողմն են, որոշներն էլ դեմ: Այստեղ, ինչպես նաև շատ ուրիշ դեպքերում, մեկնաբանության հետ կապված վերջնական ենթադրությունները, վճռորոշ դեր են խաղում քրիստոնյայի սրտում: Նոր Կտակարանը անորոշ է, երկիմաստ և մշակույթային: Դժվարն այն է, թե ինչպես որոշել, որ տեքստերն են մշակույթային/ պատմական և որոնք՝ հավիտենական (հմմտ. Գորդոն Ֆիլի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչն իր ամբողջ արժողությամբ» գիրքը [Fee and Stuart's *How to Read the Bible for All Its Worth*], էջ. 14-19 և 69-77): Սա հենց այն դեպքն է, երբ հանդիպում են ազատության և պատասխանատվության քննարկումները, որոնք գտնվում են Հռ. 14:1-15:13 և I Կոր. 8-10, և շատ կարևոր են: Թե ինչպես ենք մենք պատասխանում այս հարցին ունի կարևոր նշանակություն երկու պատճառներով,
1. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է քայլի իր ունեցած հավատքի լույսի ներքո: Աստված նայում է մեր սրտերին ու դրդապատճառներին:
 2. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է թույլ տա մյուս հավատացյալներին քայլել իրենց ունեցած հավատքի հասկացողության համաձայն: Աստվածաշնչյան սահմանների մեջ պետք է լինի փոխադարձ հանդուրժողականություն: Աստված ուզում է որ մենք սիրենք միմյանց ինչպես Ինքն է սիրում:
- Ե. Ամփոփելով ասենք, որ քրիստոնեությունը հավատքի և սիրո կյանք է, և որ թե կատարյալ աստվածաբանության: Աստծո հետ ունեցած կապը, որը մեծ ազդեցություն է թողնում ուրիշների հետ ունեցած մեր հարաբերությունների վրա, ավելի կարևոր է քան որոշակի հստակ տեղեկություն ունենալը կամ հավատքի կատարյալ վիճակը:

«հաւատքի չափովը» Սա ուղղակիորեն կապվում է հ. 3, «ինչպես որ Աստուած ամեն մէկին հաւատքի չափը բաժանեց» (հմմտ. Եփ. 4:7): Սա նաև պետք է հասկանալ էլ ավելի մեծ կոնտեքստային իմաստով, թե ինչպես են հավատացյալներն օգտագործում իրենց հոգևոր պարզակները: Սա վերաբերվում է հավատացյալների պարզակների հանդեպ ունեցած կեցվածքին, մղող շարժառիթներին և գործուն կիրառություններին այն ծառայությունների մեջ, որոնք Աստված տվել է յուրաքանչյուրին, որը հիմնականում Սուրբ Հոգու պտուղն է թվարկված Գաղ. 5:22-23:

Արևելահայերեն «թէ պաշտօն՝ պաշտօնում լինինք»
Արևմտահայերեն «եթէ սպասարութիւն՝ սպասարութեան մէջ»

- 12:7**
NASB “if service”
NKJV, NRSV “or ministry, let us use it in our ministry”
TEV “if it is to serve, we should serve.”
JB “if administration, then use it for administration”

Ժամանակակից թարգմանությունները միմյանցից տարբերվում են այն պատճառով, որ գոյություն չունի հունարեն (*diakonia*) տերմինի ստույգ համարժեքը: Այն կարող է նշանակել (1)

գործնական ծառայություն կամ (2) կառավարում (հմմտ. Գործք 6:1; I Կոր. 12:5,28): Հարող Ք. Մոուլտոնի վերահրատակած «Հունարեն լեզվի վերլուծական բառարանում» [*The Analytical Greek Lexicon Revised* by Harold K Moulton], այս տերմինի իմաստն այսպես է սահմանված «նշանակում, ֆունկցիա, ծառայություն (հոգևոր), պարտավորություն, պաշտոն» հետևյալ հատվածներում Հռ. 12:7; I Կոր. 12:5; Կող. 4:17; II Տիմ. 4:5» (էջ. 92): Կոնտեքստի իմաստն է՝ օգնել հավատացյալներին:

«սովորեցնող է՝ վարդապետության մեջ» Այս պարզևի (*didaskō*) մասին խոսվում է I Կոր. 12:28 և 14:26: Այն կապված է մարգարեության պարզևի հետ Գործք 13:1 և քարոզելու պարզևի հետ Եփ. 4:11: Վաղ եկեղեցին տեսնում էր, որ այս պարզևներով օժտված հավատացյալները ծառայություն են իրականացնում իրար մասամբ համընկնող բնագավառներում: Քարոզչություն, մարգարեություն, ավետարանչություն և ուսուցում բոլորն էլ Ավետարանն են բաժնեկցում, սակայն տարբեր շեշտադրություններով և մեթոդաբանությամբ:

12:8 «մխիթարող է՝ մխիթարության մեջ» Այս տերմինը (*parakaleō*) կապված է սովորեցնելու հետ (հմմտ. I Տիմ. 4:13): Հնարավոր է սա այն հմտությունն է, որով ճշմարտությունը կիրառվում է կյանքում: Այդ դեպքում այն կապ ունի Եփ. 4:15,16 «ճշմարիտ լինելով սերի մեջ. . . իր անձը սիրով շինելու համար»:

«բաշխող՝ զուարթութունով» Տես հատուկ թեմա ներքևում.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՌԱՏԱԶԵՌՆ/ՄՐՏԱԲԱՑ, ԱՆԿԵՂԾ (HAPLOTOS)

Այս տերմինը (*haplotes*) ուներ երկու հիմնական նշանակություն, «առատաձեռն, սրտաբաց» կամ «անկեղծ»: Դա փոխաբերություն էր, որն օգտագործվում էր տեսողության հետ կապված: Հին Կտակարանում աչքն օգտագործվում էր որպես փոխաբերություն այն էլ երկու կերպով (1) չար աչք (ժլատ, հմմտ. 2 Օրին. 15:9 և Սաղ. 23:6), և (2) բարի աչք (առատաձեռն, հմմտ. Առ. 22:9): Հիսուսն օգտագործեց այս փոխաբերությունները (հմմտ. Մաթ. 6:22-23; 20:15): Այս տերմինը Պողոսն օգտագործում է երկու իմաստով (1) «միամտություն, անկեղծություն, անարատություն» (հմմտ. II Կոր. 1:12; 11:3; Եփ. 6:5; Կող. 3:22) և (2) «յոժարություն» (հմմտ. Հռ. 12:8; II Կոր. 8:2; 9:11,13):

«վերակացու դրուածը՝ ջանքով» Սա վերաբերվում է քրիստոնյա առաջնորդներին, ղեկավարներին, կամ տեղական կամ լայն մասշտաբի (մի քանի եկեղեցիների վրա):

«ողորմող՝ յօժարութիւնով» Սա վերաբերվում է հիվանդներին և կարիքավորներին օգնելուն: Չպետք է տարբերություն դրվի վարդապետական քարոզչության և սոցիալական հոգատարության միջև հավատացյալ համանքում: Դրանք մանրադրամի եկու երեսն են: Չկա «սոցիալական ավետարան, պարզապես ավետարան»:

Քննարկվող հարցեր հհ.1-8

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ի՞նչ է նշանակում քո անձը որպես կենդանի պատարագ մատուցել (հ. 1)
2. Ունի՞ յուրաքանչյուր հավատացյալ հոգևոր պարզև (հհ. 3-8; I Կոր. 12:7): Եթե այո, ապա դա անձի՞ ընտրությամբ է, թե որն է ինքն ուզում:

3. Ո՞րն է հոգևոր պարզեցման նպատակը
4. Կա՞րողքը Աստվածաշնչում պարզեցման սպառնալից ցանկ
5. Ի՞նչպե՞ս կարող է հավատացյալն իմանալ իր պարզեցման մասին

ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐՈՒՄՆԵՐԻ ՆՈՒՄԵՐ ԻՆ 9-21

- Ա. Այս բաժինը կարելի է վերնագրել «Քրիստոնեական ուղեցույց միջանձնական փոխհարաբերությունների համար»: Սա սիրո գործնական քննարկումն է (հմմտ. Մաթ. 5-7; I Կոր. 13 և I Հովհ. 3:18; 4:7-21):
- Բ. Հռոմեացիս 12 գլուխը իր կառուցվածքով և բովանդակությամբ շատ նման է I Կոր. 12-13: Հոգևոր պարզեցման մասին քննարկումից անմիջապես հետո գալիս է զգուշացում հպարտանալուց և շեշտը դնում է սիրո կյանք ապրելու վրա:
- Գ. Այս կոնտեքստը քննարկում է
1. մեր կապն ուրիշ քրիստոնյաների հետ (հմմտ. 12:9-13): Այս մասին նաև մանրամասն քննարկվում է 14:1-15:13 և I Կոր. 8:11; 10:23-33:
 2. մեր կապը անհավատների հետ կամ, որն ավելի հավանական է, ուրիշ քրիստոնյաների, որոնց հետ տարաձայնություն (կոնֆլիկտ) ունենք (հմմտ. 12:14-21): Այս բաժինը, թվում է թե, արտացոլում է Հիսուսի Լեռան քարոզը (հմմտ. Մաթ. 5-7):
 3. հատվածի այսպիսի բաժանումը որոշ չափով արհեստական է, անբնական, քանի որ այս բնագավառները (փոխհարաբերությունների) մասամբ համընկնում են:
- Դ. Այս հատվածը պարունակում է շարունակական ընթացող կյանքի ապրելակերպի պատվերներ (ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, հմմտ. Խ. 4[3], 16, 20[2], 21[2] և ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅԵՐ օգտագործված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով 17 անգամ): Փրկությունը Աստծո շնորհքի ձրի պարզեցում է Քրիստոսի ավատարած գործի և Սուրբ Հոգու միջոցով, բայց ընդունելու պահից սկսած անհրաժեշտ է պահել և ապրել այդ կյանքը, որից թանկ բան չկա այս աշխարհում Հիսուսին «Տեր» կոչելը փոխաբերություն չէ (հմմտ. Գուլ. 6:46):
- Ե. Այս հատվածը նաև ունի մի շարք ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԳԵՐԲԱՅԵՐ, օգտագործված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով ԺԽՏԱԿԱՆ ՍԱՄՆԻԿ-ով, որը նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար, Խ. 14, 16 (երկու անգամ), 17, 19 և 21: Քրիստոնյաներն արդեն ապրում էին՝ անցնելով ամեն թույլատրելի սահմանները: Որոշ իմաստով, մեղքին կարելի է տալ նաև այսպիսի սահմանում, Աստծո պարզեցման շարաշահում՝ անցնելով Աստծո կողմից դրված սահմանները:
- Զ. Քրիստոնյաները պետք է լինեն «բաց» — բաց-միտք, բաց- ձեռք, բաց-սիրտ և բաց դուռ (հմմտ. Հակոբոս 2):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12: 9-13

⁹ Մերն առանց կեղծաորութեան. չարն ատեցէք, բարիին հետեւեցէք:¹⁰ Եղբայրասիրութիւնում իրար վերայ գրած եղէք. պատիւ տալու մէջ իրար առաջ անցէք:¹¹ Չանքի մէջ՝ թոյլ չլինիք. հոգովը

ջերմեռանդ եղէք, Տիրոջը ծառայեցէք:¹² Յուսով ուրախացէք, նեղութեան համբերեցէք, աղօթքում յարատեցէք:¹³ Սրբերի պիտոյքներին հաղորդ եղէք. հիւրասիրութեան հետեւեցէք:

NASB (UPDATED) TEXT: 12:9-13

⁹*Let love be without hypocrisy. Abhor what is evil; cling to what is good.* ¹⁰*Be devoted to one another in brotherly love; give preference to one another in honor;* ¹¹*not lagging behind in diligence, fervent in spirit, serving the Lord;* ¹²*rejoicing in hope, persevering in tribulation, devoted to prayer,* ¹³*contributing to the needs of the saints, practicing hospitality.*

12:9 «Սէրն առանց կեղծաորութեան.» Հունարեն տեքստում բացակայել են կապակցող բառերը (*asyndeton*), որը շատ անսովոր էր հունարեն կոյնայի Koine համար: Դա կարող է անդրադարձնել հին եբրայերեն քերականական ձևը, ինչպես Մաթ. 5 «Երանելիները» բաժնում: Այս քերականական ձևն ընդգծում էր արտահայտություններից յուրաքանչյուրը որպես մենակ հանդես եկող ճշմարտություն:

«Կեղծավորություն» բառը թատերական տերմին էր և բառացի նշանակում էր «դիմակի տակից խոսել»: Սերը չպետք է խաղ կամ կեղծիք լինի (հմմտ. II Կոր. 6:6): Սերը հավատացյալների առանձնահատկությունն է (հմմտ. Հովհ. 13:34-35; 15:12,17; I Հովհ. 3:11,18; 4:7-21) որովհետև դա նաև Աստծո առանձնահատկությունն է:

«չարն ատեցէք» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԵՐԲԱՅ Է, օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով: Հավատացյալները պետք է զգոն լինեն և դիմադրեն, հակառակվեն չարին (հմմտ. I Թես. 5:21-22): Իսկ մենք հաճախ միայն զարմանում ենք չարի կողմից գործած հետևանքների համար, որոնք ուղղակիորեն ազդում են մեր կյանքերին.

Արևելահայերեն «բարիին հետեւեցէք»
Արևմտահայերեն «բարիին յարելով»

- ☐
- NASB, NKJV “cling to what is good”
- NRSV “hold fast to what is good”
- TEV “hold on to what is good”
- NJB “stick to what is good”

Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ (բայց օգտագործված ՉԵՁՈՔ ՍԵՌ-ի իմաստով) ԴԵՐԲԱՅ Է, օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով «կայել, ստանձվել» (հմմտ. LXX Ծննդ. 2:24; Գործք 8:29 և նաև Փիլ. 4:8; I Թես. 5:21-22):

Արևելահայերեն «Եղբայրասիրութիւնում իրար վերայ գթած եղէք.»
Արևմտահայերեն «Եղբայրասիրութեան մէջ իրարու գորովալից եղէ՛ք»

- 12:10**
- NASB “Be devoted to one another in brotherly love”
- NKJV “Be kindly affectionate to one another with brotherly love”
- NRSV “Love one another with mutual affection”
- TEV “Love one another warmly as Christians”
- JB “Love each other as much as brothers should”

Այս բարդ հունարեն բառը (*phileo + storge*) միացնում է «եղբայրական սերը» «ընտանեկան սիրո» հետ և օգտագործվում է միայն այստեղ Նոր Կտակարանում: Քրիստոնյաները մեկ ընտանիք են: Եվ մեզ պատվիրված է սիրել միմյանց (հմմտ. I Թես. 4:9):

Այստեղ սկսվում են մի շարք բառեր օգտագործված ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ, որի գործածությունը հունարեն նախադասության մեջ ծառայել է որպես մտքի ընդգծում:

Արևելահայերեն «պատի տալու մեջ իրար առաջ անցեք»
Արևմտահայերեն «պատուելու մեջ իրարմէ անցե՛ք»

-
- NASB** “give preference to one another in honor”
- NKJV** “in honor giving preference to one another”
- NRSV** “outdo one another in showing honor”
- TEV** “and be eager to show respect for one another”
- JB** “have a profound respect for each other”

Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՉԵԶՈՔ ՍԵՌ ԳԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով: Հավատացյալները պետք է իրենց հավատակից ընկերներին համարեն ավելի կարևոր քան իրենց (հմմտ. Եփ. 4:2; Փիլ. 2:3):

Արևելահայերեն «Չանքի մեջ՝ թոյլ չլինիք.»
Արևմտահայերեն «Չանքի մեջ թուլասիրտ մի՛ըլլաք»

- 12:11**
- NASB** “not lagging behind in diligence”
 - NKJV** “not lagging in diligence”
 - NRSV** “do not lag in zeal”
 - TEV** “work hard and do not be lazy”
 - JB** “work for the Lord with untiring effort”

Ճշմարիտ սերը տալիս է հսկայական ուժ (հմմտ. Գաղ. 6:9):

Արևելահայերեն «հոգովը ջերմեռանդ»
Արևմտահայերեն «հոգիով բորբոքեցե՛ք»

-
- NASB, NKJV** “fervent in spirit”
- NRSV** “ardent in spirit”
- TEV** “with a heart full of devotion”
- JB** “with great earnestness of spirit”

Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով: Սրա բառացի իմաստն է «եռալ, բորբոքվել»: Սա կարող էր վերաբերվել կամ վերստին ծնունդ ունեցող մարդու հոգուն կամ էլ մարդու մեջ բնակվող Սուրբ Հոգուն (RSV, հմմտ. Գործք 18:25; Հայտ. 3:15-16):

«Տիրոջը ծառայեցե՛ք» Սա նույնպես ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով: Այս արտահայտությունը տարբեր ձեռագրերում տարբեր ձև է գրված: Արևմտյան ծողովածուի մի քանի հունարեն ձեռագրերում (MSS D^{*.3}, F, և G) գրված է «ժամանակին» (*kairos*) «Տիրոջը» փոխարեն (*kurios*): Այսպիսի տարբերակը կարող է

ընդգծել Տիրոջը և Իր եկեղեցուն ամենա հնարավոր բնագավառներում ծառայելու իմաստը (հմմտ. Հովհ. 9:4; Եփ. 5:16):

Ամենայն հավանականությամբ ենթադրելի է, որ շփոթությունը առաջացել է *kurios* բառը սխալ հասկանալու կամ կարդալու պատճառով: Ամենալավ և ամենահին ձեռագրերում P⁴⁶, Ռ, A, և B գրված է «Տիրոջը ծառայելով»: UBS⁴ կազմողները «Տիրոջը» տարբերակը գնահատում են որպես «A» կատեգորիա (վստահելի):

12:12 «Յուսով ուրախացեք» Եվ սա նույնպես ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով: «Հույս» տերմինը հաճախ օգտագործվում էր Երկրորդ Գալատյան հետ կապված (հմմտ. 5:2): Բայց ոչ այն հույսը, որ անգլերենում ենք հասկանում «ցանկություն, իղձ», այլ Նոր Կտակարանում, երբ խոսքը գնում է կոնկրետ որևէ իրադարձության մասին, բայց ժամանակի առումով անորոշ մի բանի մասին: Տես ծանուցում 4:18 և 5:2:

«համբերեցե՛ք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով: Տերմինը նշանակում է «եռանդուն, կամավոր, կայուն, անսասան համբերատարություն»:

«նեղութեան» 5:3,5 հհ. «հույս» կապված էր նեղության հետ (*thlipsis*): Ընկած աշխարհում Քրիստոսի հետևորդների համար սա բնական է (հմմտ. Գործք 14:22; Հռ. 8:17; II Տիմ. 3:12; I Պետ. 4:12): Մենք չպետք է փնտրենք այն և ոչ էլ փախչենք դրանից: Տես հատուկ թեմա: Նեղություն 5:3.

«աղոթքում յարատեցե՛ք» Սա նույնպես ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով: Աղոթքը հոգևոր կարգապահություն է և պարզև, որով ընդունում ես, որ Աստծո ձեռքը ներգործում է պատմության մեջ: Հավատացյալները կարող են ազդեցություն ունենալ սիրող Երկնավոր Հոր վրա: Աստված ընտրել է սահմանափակել Իրեն Իր գավակների աղոթքներով (հմմտ. Գործք 1:14; 2:42; 6:4; Եփ. 6:18-19; Կող. 4:2): Սա աղոթքը դարձնում է խիստ անհրաժեշտ և պատասխանատու: Տես Քլինտոն Առնոլդի «Երեք գլխավոր հարցերը հոգևոր պատերազմի մասին» գրում [*Three Crucial Questions About Spiritual Warfare* by Clinton Arnold], էջ. 43-44, 187-188:

Արևելահայերեն «Սրբերի պիտոյքներին հաղորդ եղե՛ք»
Արևմտահայերեն «Սուրբերուն պետքերուն հաղորդ եղե՛ք»

12:13

NASB, NRSV	“contributing to the needs of the saints”
NKJV	“distributing to the needs of the saints”
TEV	“share your belongings with your needy fellow Christians”
JB	“share with any of God’s holy people who are in need”

Հունարեն *koinonia* ԲԱՅԸ նշանակում է «հաղորդակցություն, շփում, բաժնեկցել»: Պողոսի համար այս տերմինն ունի լայն իմաստ: Այն ընդգրկում է հաղորդակցություն թե՛ ավետարանի հետ և թե՛ ֆիզիկական կարիքների (հմմտ. Գաղ. 6:6): Այն նույնիսկ օգտագործվում է Հիսուսի չարչարանքները բաժնեկցելու դեպքում (հմմտ. Փիլ. 3:8-10; I Պետ. 4:13) և Պողոսի (հմմտ. Փիլ. 4:14): Քրիստոսի հետ միավորված լինել նշանակում էր միավորվել Իր ժողովրդի հետ ամեն առումներով: Տես Հատուկ Թեմա: Սուրբեր 1:7.

Այստեղ նորից ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով (հմմտ. Առ. 3:27; Գաղ. 6:10): Հավատացյալները պետք է շատ աշխատեն, որպեսզի ավելին ունենան ուրիշներին տալու համար Հիսուսի անունով (հմմտ. II Կոր. 8:11-12; Եփ. 4:28):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: *KOINŌNIA*

«Հաղորդակցություն» տերմինը (*koinōnia*) նշանակում է

1. մտերմիկ հարաբերություն անձի հետ
 - ա. Որդու (հմմտ. I Հովհ. 1:6; I Կոր. 1:9)
 - բ. Սուրբ Հոգու (հմմտ. II Կոր. 13:13; Փիլ. 2:1)
 - գ. Հոր և Որդու (հմմտ. I Հովհ. 1:3)
 - դ. հավատակից եղբայրների/քույրերի հետ (հմմտ. I Հովհ. 1:7; Գործք 2:42; Գաղ. 2:9; Փիլիմոն 17)
2. մտերմիկ հարաբերություն իրերի կամ մարդկային խմբերի հետ
 - ա. ավետարանի (հմմտ. Փիլ. 1:5; Փիլիմոն 6)
 - բ. Քրիստոսի արյան (հմմտ. I Կոր. 10:16)
 - գ. ոչ թե խավարի (հմմտ. II Կոր. 6:14)
 - դ. տառապանքի (հմմտ. Փիլ. 3:10; 4:14; I Պետ. 4:13)
3. պարզ կամ նվիրատվություն արված առատաձեռնությամբ (հմմտ. Հռ. 12:13; 15:26; II Կոր. 8:4; 9:13; Փիլ. 4:15; Եբր. 13:16)
4. Աստծո շնորհքի պարզև Քրիստոսի միջոցով, որը վերականգնում է մարդու հաղորդակցությունն Աստծո և իր եղբայրների ու քույրերի հետ:

Սա հաստատում է հորիզոնական կապը (մարդ - մարդ), որը հետևանք է ուղղահայաց կապի (մարդ - Արարիչ): Այն նաև ընդգծում է քրիստոնեական համայնքի կարիքն ու ուրախությունը: Այս բայի ժամանակաձևը շեշտը դնում է համայնքում այս տեսակ փորձառության սկսման և շարունակման վրա (հմմտ. 1:3 [երկու անգամ], 6,7): Քրիստոնեությունը դա համագործակցություն է:

«հիւրասիրութեան հետեւեցէք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով: Բառացիորեն նշանակում է «անդադար ձգտել հյուրասիրության» (տես ծանուցում 14:19, հմմտ. I Տիմ. 3:2; Տիտոս 1:8; Եբր. 13:2; I Պետ. 4:9): Այս ծառայությունը խիստ կարևոր էր վաղ եկեղեցում, որովհետև այդ ժամանակ գոյություն ուներ «պանդոկների» վատ համբավը: Սա հիմնականում վերաբերվում էր ապաստարան հատկացնել կամ կերակրել շրջիկ քրիստոնյա ծառայողներին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12:14-21

¹⁴Ձեզ հալածողներին օրհնեցէք, օրհնեցէք եւ մի անիծէք: ¹⁵Ուրախացողների հետ ուրախացէք, եւ լացողների հետ լացէք: ¹⁶Իրար վրայ միեւնոյն խորհուրդը ունեցէք. բարձր բաները մի խորհիք. այլ խոնարհների հետ խոնարհուեցէք. ձեր անձերումը իմաստուն մի լինիք: ¹⁷Սէկին չարի տեղ չար մի հատուցանէք. ամեն մարդկանց առաջին բարի խորհուրդ ունեցէք: ¹⁸Եթէ կարելի է՝ որքան ձեզանից է կախուած՝ ամեն մարդկանց հետ խաղաղութիւն ունեցէք: ¹⁹Ձեր անձերի համար վրէժխնդրութիւն մի անէք, սիրելիներ. այլ բարկութեան տեղ տուէք. որովհետեւ գրուած է՝ Վրէժխնդրութիւնն իմն է. ես հատուցումը կտամ, ասում է Տէրը: ²⁰Արդ եթէ քո թշնամին սոված է, հաց տուր նորան. եւ եթէ ծարաւ է, ջուր տուր նորան. որովհետեւ այս անելով կրակի կայծեր կժողովես նորա գլխի վրայ: ²¹Մի յաղթուիր չարիցը, այլ բարիովը յաղթիր չարին:

NASB (UPDATED) TEXT: 12:14-21

¹⁴Bless those who persecute you; bless and do not curse. ¹⁵Rejoice with those who rejoice, and weep with those who weep. ¹⁶Be of the same mind toward one another; do not be haughty in mind, but associate with the lowly. Do not be wise in your own estimation. ¹⁷Never pay back evil for evil to anyone. Respect what is right in the sight of all men. ¹⁸If possible, so far as it depends on you, be at peace with all men. ¹⁹Never take your own revenge, beloved, but leave room for the wrath of God, for it is written, “VENGEANCE IS MINE, I WILL REPAY,” says the Lord. ²⁰“BUT IF YOUR ENEMY IS HUNGRY, FEED HIM, AND IF HE IS THIRSTY, GIVE HIM A DRINK; FOR IN SO DOING YOU WILL HEAP BURNING COALS ON HIS HEAD.” ²¹Do not be overcome by evil, but overcome evil with good.

12:14 «Չեզ հալածողներին օրհնեցէք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է այս համարում օգտագործված երկու անգամ: Այս հունարեն տերմինից առաջացել է անգլերեն «eulogy», որը նշանակում է «գովասանական ճառ, ներբող, օրհներգել, փառաբանել» (հմմտ. Մաթ. 5:44; Գուկ. 6:28; I Կոր. 4:12; Հակոբոս 3:9-12; I Պետ. 3:9): P⁴⁶ պապիրուսում (Չեստեր Բիտիի գրադարանում) և B ձեռագիր մատյանում (Վատիկան), «ձեզ» բառը բաց է թողնված, միտքն ավելի ընդարձակելի դարձնելու համար, կամ էլ, այլ կերպ ասած, էլ ավելի ընդհանրական միտք տալու համար: «Հալածել» բառի համար նայեք ծանուցում 14:9:

«մի անիծէք» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ (deponent) ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է ԺԽՏԱԿԱՆ ՍԱՄՆԻԿ-ով, որը նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար: Սա վերաբերում է աղոթքի մեջ Աստծո անունը վրեժխնդրության համար կանչելուն (նման է I Կոր. 12:3 անեծքներին): Սա չի վերաբերում պղծությանը (հմմտ. Եփ. 4:29; I Պետ. 3:9):

12:15 «ուրախացողների հետ ուրախացէք, եւ լացողների հետ լացէք» Այս երկու ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԳԵՐԲԱՅ/ԻՆՖԻՆԻՏԻՎՆԵՐ են օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով: Զրիստոնյաները մեկ ընտանիք են: Հավատացյալները մրցման մեջ չեն, այլ պետք է իրար հետ վարվեն ընտանեկան սիրով: Ելնելով հհ. 14-21 կոնտեքստից սա նույնիսկ կարող է անդրադարձնել հավատացյալի մոտեցումը իրեն շրջապատող անհավատների հետ օգտագործելով մշակույթային հնարավորությունները կամ հանգամանքները ավետարանելու հնարավորությունների դեպքում:

- 12:16**
NASB, NKJV “Be of the same mind toward one another”
NRSV “Live in harmony with one another”
TEV “Have the same concern for everyone”
JB “Treat everyone with equal kindness”

Արևելահայերեն «Իրար վրայ միեւնոյն խորհուրդը ունեցէք»
Արևմտահայերեն « Իրարու վրայ միեւնոյն խորհուրդը ունեցէ՛ք»

Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով (հմմտ. 15:5; II Կոր. 13:11; Փիլ. 2:2): Համար 16 կարող է կապվել կոնֆլիկտի հետ (1) Հռոմի եկեղեցում հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև

(հմմտ. 11:13-24); (2) տնտեսական դասակարգերի հնացած կոնֆլիկտ; կամ (3) հոգևոր պարզվելու գանազանության:

«քարձր բաները մի խորհիք. այլ խոնարհների հետ խոնարհուեցեք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ-ով, որը նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար:

«խոնարհությամբ» տերմինը կարող է լինել ԱՐԱԿԱՆ կամ ՉԵԶՈՔ ՍԵՌ: Եթե ՉԵԶՈՔ ՍԵՌ է ապա ուրեմն թարգմանությունը պետք է կարդացվի «ընդունեք խոնարհ դիրք»; եթե ԱՐԱԿԱՆ «միացեք աղքատ/խեղճ կամ խոնարհ մարդկանց հետ»:

«ձեր անձերունը իմաստուն մի լինիք» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ (deponent) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ-ով, որը նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար (հմմտ. Առ. 3:7; Ես. 5:21; I Կոր. 10:12; Գաղ. 6:3): Հավատացյալները չպետք է իրենց գերազանց դասեն ուրիշներից կամ էլ ամբարտավանությամբ են վարվում անհավատների հետ:

12:17 «Մեկին չարի տեղ չար մի հասուցանեք» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ-ով, որը նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար: Աստծո գործն է ամեն բան կարգի բերելը ոչ թե հավատացյալներինը (հմմտ. Առ. 20:22; 24:29; Մաթ. 5:38-48; Գուլ. 6:27; I Թես. 5:15; I Պետ. 3:9):

«ամեն մարդկանց առաջին բարի խորհուրդ ունեցեք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով (հմմտ. II Կոր. 8:21; I Թես. 5:22; և I Տիմ. 3:7): Արտահայտությունը կարող է ակնարկ է Առ. 3:4 ըստ Մեպտուազինդի (LXX): Հավատացյալներն ապրում են մշտաբթուն վիճակում՝ անհավատներին ավետարանելու համար: մենք ոչինչ չպետք է անենք, որ վնասենք կամ հեռացնենք մեզանից անհավատներին (հմմտ. I Կոր. 9:19-23): Նույնիսկ մեր ամենախորը համոզմունքները պետք է արտահայտվեն սիրալիր կերպով:

12:18 «Եթե կարելի է՝ որքան ձեզանից է կախում՝ ամեն մարդկանց հետ խաղաղութիւն ունեցեք» Այստեղ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Նախադասության երկրորդ մասում ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, օգտագործված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով: Սա միշտ չէ, որ կախված է հավատացյալի ընտրությունից, բայց քերականական շարադասությունը ենթադրում է, որ այդպես հաճախ հնարավոր է (հմմտ. Մարկ. 9:50; II Կոր. 13:11; I Թես. 5:13):

12:19 «Ձեր անձերի համար վրեժխնդրութիւն մի անեք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ԳԵՐԲԱՅ ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ-ով օգտագործված ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ, որը սովորաբար նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար: Կգա օրը, երբ Աստված ամեն բան կարգի կբերի:

«որովհետեւ գրուած է» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որը սեմիթական իդիոմատիկ արտահայտություն է, որն օգտագործել են ներշնչված Սուրբ Գրքի համար: Ներշնչվածության այս իդիոման զուգահեռ է «ասում է Տերը» արտահայտությանը (հմմտ. I Կոր. 14:21 և II Կոր. 6:17): Սա մեջբերում է 2 Օրին. 32:35-ից:

12:20 «Արդ եթէ քո թշնամին» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է հնարավոր գործողություն ապագայում: Թշնամիներն անապայման կգան:

«կրակի կայծեր կժողովես նորա գլխի վրայ» Սա ակնարկում է Առ. 25:21-22. Այս արտահայտության մեկնության վարկածներից են

1. սա իդիոմա էր, հավանական է Եգիպտոսի նշակույթից վերցված, որը նշանակում էր, որ թշնամուն ընկեր դարձնելու լավագույն կերպը բարությունն է: Սա նաև քրիստոնյայի արձագանքն է խրամատել չարին (հմմտ. Մաթ. 5:44);
2. «կրակի կայծեր» ակնհայտ է, որ այս ամոթը իր անհարիր արարքների համար, որ այդպես հստակ հայտնվում են ուրիշին սիրելու և ներելու լույսի ներքո (հմմտ. Ամբրոզիաս, Օգոստինոս և Ջերոմ);
3. Օրիգենը և Քրիստոստոմն ասել են, որ սա վերաբերվում է քրիստոնեական բարությանը, ինչն էլ Աստծուն մղում է ավելի դաժան դատելու անապաշխարին (հմմտ. «Ջերոմի աստվածաշնչյան մեկնաբանությունները»)[cf. the *Jerome Biblical Commentary*], հատ. 2, էջ. 326:

Վերը նշված բոլոր թեորիաները իրենց օգտին են խոսում: Իմաստը հասկանալու բանալին գտնվում է ամփոփիչ դրույթի մեջ հ.21:

12:21 «Մի յաղթուիր չարիցը, այլ բարիովը յաղթիր չարին» Այստեղ օգտագործված են ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ- ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ և ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ- ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ: Մեր պատասխանը անարդար վերաբերմունքի հանդեպ կորոշի և կարտացոլի մեր ներքին խաղաղության և ուրախության աստիճանը: Դառնությունը հոգևոր քաղցկեղ է: Հավատացյալներն այս ամենը պետք է տան Աստծուն:

«չարից» Այս բառը կամ ԱՐԱԿԱՆ ՍԵՌ է, և այս դեպքում վերաբերվում է կոնկրետ չար մեկը, կամ էլ ՉԵԶՈՔ ՍԵՌ է և նշանակում է չար լայն իմաստով: Սա հատուկ է Նոր Կտակարանին, այսպիսի անորոշություն շատ է հանդիպում ՆԿ-ում (հմմտ. Մաթ. 5:37; 6:13; 13:19,28; Հովհ. 17:15; II Թես. 3:3; I Հովհ. 2:13-14; 3:12; 5:18-19):

Քննարկվող հարցեր հհ.9-21

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչու՞ հհ. 9-21 այսքան շատ են հանդիպում ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ բայեր:
2. Տվյալ հատվածից առանձին սյունակներով դուրս գրեք բոլոր պատվերները: Դրանք բավականին շատ են, թե ինչ է ներգրավված գործնակ քրիստոսանման կյանք ապրելու մեջ:
3. Ինչու՞ է այսքան դժվար որոշել, թե որ համարներն են առնչվում քրիստոնյայի վերաբերմունքը մյուս հավատացյալների հետ, և որն է վերաբերում նրանց վերաբերմունքը անհավատների հետ:

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 13**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Հնագանդություն իշխանություններին	Ենթարկվել Կառավարությանը	Քրիստոնյան և պետությունը	Պարտավորություններ պետական իշխանությունների հանդեպ	Ենթարկվել իշխանություններին
13:1-7	13:1-7	13:1-7	13:1-5	13:1-7
			13:6-7	
Եղբայրական սեր	Սերձավորի սերը	Սերը կատարում է օրենքը	Պարտավորություններ միմյանց հանդեպ	Սեր և օրենք
13:8-10	13:8-10	13:8-10	13:8-10	13:8-10
Տիրոջ Օրվա մոտենալը	Հագնել Քրիստոսին	Անխուսափելիություն Քրիստոսի Երկրորդ Գալուստից		Լույսի որդիներ
13:11-14	13:11-14	13:11-14	13:11-13	13:11-14
			13:14	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն

2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ հհ.1-7

- Ա. Եթե 12-րդ գլուխը հիմնականում խոսում էր քրիստոնյայի և իր հավատակից եղբայրների և քույրերի (հհ. 9-13) և շրջապատող հասարակության հետ ունեցած փոխհարաբերությունների մասին (հհ. 14-21), ապա գլուխ 13:1-7-ը հիմնականում առընչվում է քրիստոնյայի կապը քաղաքացիական կառավարության հետ փոխհարաբերությանը: Ինչևէ, այս երկու թեմաների միջև կոնտեքստային բաժանում չկա: Պողոսի համար դրանք մեկ են: Այստեղ հոգևոր-աշխարհիկ դիխոտոմյա չկա: Կյանքն ամբողջությամբ պատկանում է Աստծուն: Հավատացյալները տնտեսներ են բոլոր բնագավառներում: Այս երկու գլուխների միջև եղած կապը կարելի է տեսնել 12:18-ում:
- Բ. Հավատացյալների հասկացողությունը քաղաքացիական իշխանությունների տեղի և դերի մասին եղել են տարբեր: Հին Կտակարանում կառավարման ձևերը զարգանում են Կայենի սերնդի ներսում (հմմտ. Ծննդ. 4:16-22): Բաբելոնյան աշտարակաշինությունը (հմմտ. Ծննդ. 11) դա մարդկության ինքնակառավարում իրականացնելու փորձն է Աստծուց անկախ: Իսրայելի թագավորական կառավարումը պետք է լիներ Աստծո գահակալությամբ և աստվածային օրենքով և նրա կողմից նշանակված հովվի (թագավորի) միջոցով, սակայն այս ամենը հաջողություն չունեցավ մարդկության մեղքի պատճառով: Հիսուսի քննարկումը Մաթ. 22:21 և Մարկոս 12:17 իշխանության հատուկ տեղի մասին հիմնական/կենտրոնական տեղ է գրավում այս հարցում: Չարմանալի է, որ Պողոսը չի նշում Հիսուսի խոսքերը այս կոնտեքստում (չնայած 1-7հհ. և 11հ. իմաստը զուգահեռ է Մաթ. 22:15-22 և 39): Ընկած աշխարհում իշխանության համար կա հատուկ դեր Աստծո կողմից: Հաճախ առաքյալները հայտնվում էին բարդ իրավիճակներում՝ իշխանությունների հետ ճիշտ վարվելու հարցում, թե քաղաքացիական և թե կրոնական: Պողոսը թե պաշտպանված էր իշխանությունների կողմից և թե հալածվում էր նրանցից: Ինչևէ, Հովհաննեսը Հայտնության գրքում խոսում է իշխանության մասին, որպես Մեծ Պոռնիկ (հմմտ. Հայտ. 17):
- Մենք պետք է աջակցենք իշխանություններին այնքան ժամանակ, մինչև որ նրանք չեն ոտնահարի Սուրբ Հոգով կառավարվող մեր խիղճը, կամ չեն պահանջի անսահմանափակ նվիրվածություն և հնազանդություն: Բայց քաղաքացիական կարգ ու կանոնը գերադասելի է, քան քառասյին վիճակը (հմմտ. II Թես. 2:6-7):
- Գ. Այս նույն թեման շոշափվում է նաև Տիտոս 3:1 և I Պետ. 2:13-17-ում:
- Դ. Հուդայականությունը օրինական կրոն էր առաջին դարում հռոմեական կառավարության ներքո: Շատ տարիներ քրիստոնեությունը համարվում էր աղանդ հուդայականության ներսում ձևավորված (հմմտ. Գործք 18:12-16): Այսպիսի իրավիճակը թույլ էր տալիս ունենալ օրինական պաշտպանություն միսսիոներական շարժման այն վաղ տարիներին: Գործք Առաքելոց գրքի նպատակներից մեկն այն էր, ցույց տալ, որ քրիստոնեությունը քաղաքական վտանգ չէր ներկայացնում Հռոմի համար: Չնայած Հռոմը ստեղծեց միջազգային խաղաղություն և կայունություն (*pax Romana*), որի պայմաններում էլ տարածվեց Ավետարանը (հմմտ. I Տիմ. 2:1-2):

Ե. Այս հատվածի իմաստը ուժեղացվում է Պողոսի իշխանությունների հետ ունեցած անձնական փորձառությունների լույսի ներքո: Շատ հնարավոր է, որ այս բաժինը ներգրավվել է երկու պատճառով (1) Հռոմի եկեղեցու ներսում կար լարված իրավիճակ կառավարության կողմից դուրս եկած հրամանների պատճառով (օրինակ, սահմանափակել հրեական ծեսերը): Սա կարող էր ստիպել որոշ հավատացյալ հրեաների հեռանալ մայրաքաղաքից (օրինակ, Ակյուղաս և Պրիսկիդա, հմմտ. Գործք 18:2): Իրենց բացակայության ժամանակ հավատացյալ հեթանոսների առաջնորդությունը զարգացավ: (2) Հռոմի հրեական մեծ համայնքում լարվածությունը ստեղծվել էր ավետարանի քարոզչության արդյունքում: Պատմաբան Սվիտոնուսը «Կլավդիա կյանքը» գրքում [Suetonius, *Life of Claudius*] 25.2, գրում է, որ կայսրը հրեաներին արքայից մայրաքաղաքից 49 Ք.Հ, հասարակական կարգը խախտելու համար, որը ստեղծում էր «Քրեստոս»: Հնարավոր է, սա Քրիստոս անվան գրելու լատիներեն տարբերակն է (Christos).

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 13:1-7

¹Ամեն անձը թող հնազանդի բարձր իշխանություններին. որովհետև չկայ իշխանություն որ չէ Աստուածանից. եւ ներկայ իշխանություններն Աստուածանից են կարգուած: ²Ուրեմն իշխանութեանը հակառակողը Աստուծոյ հրամանին է հակառակում. եւ հակառակողներն իրանց անձերին դատաստան կընդունին: ³Որովհետև իշխանները բարի գործերի համար վախի պատճառ չեն, այլ չար գործերի. կամենու՞մ ես որ իշխանութիւնիցը չվախենաս, բարին գործիր, եւ նորանից գովասանք կընդունիս: ⁴Որովհետև սպասատր է նա Աստուծոյ քեզ համար դէպի բարին. ապա եթէ չարը գործես՝ վախեցիր. որովհետև գուր տեղը սուրը չէ կրում. որովհետև նա սպասատր է Աստուծոյ՝ վրէժխնդիր բարկութիւն բերելու չարը գործողի համար: ⁵Վասնորոյ պէտք է հնազանդ լինել՝ ոչ միայն բարկութեան համար, այլ խղճմտանքի համար էլ: ⁶Սորա համար հարկ էլ էք վճարում. որովհետև նորանք սպասատրներ են Աստուծոյ որ իսկ այս բանին հոգ են տանում: ⁷Ուրեմն ամենին վճարեցէք եղած պարտքը. ում որ հարկ պարտ էք՝ հարկը, ում որ մաքս՝ մաքսը, ում որ վախ՝ վախը, ում որ պատիւ՝ պատիւը:

NASB (UPDATED) TEXT: 13: 1-7

¹Every person is to be in subjection to the governing authorities. For there is no authority except from God, and those which exist are established by God. ²Therefore whoever resists authority has opposed the ordinance of God; and they who have opposed will receive condemnation upon themselves. ³For rulers are not a cause of fear for good behavior, but for evil. Do you want to have no fear of authority? Do what is good and you will have praise from the same; ⁴for it is a minister of God to you for good. But if you do what is evil, be afraid; for it does not bear the sword for nothing; for it is a minister of God, an avenger who brings wrath on the one who practices evil. ⁵Therefore it is necessary to be in subjection, not only because of wrath, but also for conscience' sake. ⁶For because of this you also pay taxes, for *rulers* are servants of God, devoting themselves to this very thing. ⁷Render to all what is due them: tax to whom tax *is due*; custom to whom custom; fear to whom fear; honor to whom honor.

13:1 «Ամեն անձը թող հնազանդի» Այս ձևը ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ-ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, որը նշանակում է «շարունակել հնազանդ լինել ինչ որ մեկին» (հմմտ. Տիտոս 3:1; I Պետ. 2:13): «Հնազանդվել» ռազմական տերմին էր, որն օգտագործվում էր

նկարագրելու համար մի շարք հրամաններ: Համաձայն կոնտեքստի, Պողոսը այս խոսքերը ուղղում է բոլոր հավատացյալներին (հմմտ. Եփ. 5:21), որտեղ Պողոսը պնդում է, որ հավատացյալները պետք է հնազանդվեն միմյանց:

Մեր օրերում հնազանդությունը կարծես բացասական իմաստ ունի: Բայց այս բառը նկարագրում է թե խոնարհություն և թե խորը հասկացողություն Աստծո ստեղծած աշխարհի և մեր տեղը նրանում: Հիսուսը հնազանդվեց (1) Իր երկրային ծնողներին (հմմտ. Թեա. 2:51) և (2) Իր երկնային Հորը (հմմտ. I Կոր. 15:28): Այս բնագավառում Նա մեր առաջնորդն ու օրինակն է:

«բարձր իշխանություններին» Չնայած Պողոսն օգտագործեց այս բառը (*exousia*), ուրիշ դեպքերում կապված հրեշտակային ուժերի հետ, հիմնականում դիվային (հմմտ. 8:38; Կող. 1:16; 2:10,15; Եփ. 1:21; 3:10; 6:12), այստեղ կոնտեքստը պահանջում է «քաղաքացիական իշխանություններին» (հմմտ. I Կոր. 2:6,8; Տիտոս 3:1; I Պետ. 2:13): Թվում է, թե Աստվածաշունչը ենթադրում է հրեշտակային իշխանությունների առկայությունը յուրաքանչյուր մարկային իշխանությունների ետևում կանգնած (Դանիել 10 և ըստ LXX 2 Օրին. 32:8 «Երբ Բարձրյալը բաժանեց ազգերը, երբ Նա առանձնացրեց Ադամի/մարդու որդիներին, Նա ազգերի սահմանները դրեց՝ համաձայն Աստծո հրեշտակների քանակի»): Սակայն գոյություն ունեցող բոլոր կառավարող իշխանությունները անխտիր գործում են Աստծո ներքո (հմմտ. հհ. 1բ,4ա, և 6): Ստորև տես Հատուկ Թեմա.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Սահմանումը – Կառավարությունը դա մարդկային հասարակության մեջ ձևավորված ներքին համակարգ է, որի նպատակն է հայթայթել և պաշտպանել նրա ֆիզիկական կարիքները:

Բ. Նպատակը - Աստծո կամքն էր, որ լիներ կարգ ու կանոն, և ոչ թե անարխիա:

1. Մովսեսական օրենսդրությունը, մասնավորապես Դեկալոգը Աստծո կամքն է մարդու համար հասարակության մեջ: Այն հավասարազոր է անում Աստծուն երկրպագելն ու կյանքը:

1. Սուրբ Գիրքը չի առաջարկում կամ պաշտպանում որևէ իշխանության կառավարման ձև կամ կառուցվածք, չնայած հին իսրայելական թեոկրատիան դա այն նախատեսված ձևն է, որը կլինի երկնքում: Ո՛չ դեմոկրատիան, և ոչ էլ կապիտալիզմը աստվածաշնչյան ճշմարտություն չեն: Քրիստոնյաները պետք է վարվեն համապատասխան կերպով, աստվածահաճո, անկախ այն բանից, թե իշխանության կառավարման ինչ համակարգի մեջ են նրանք գտնվում: Քրիստոնյայի նպատակը ավետարանչությունն ու ծառայությունն է, և ոչ թե հեղափոխությունը:

Գ. Մարդկային իշխանության ծագումը

1. Հռոմեական կաթոլիկությունը պնդում է, որ մարդկային իշխանությունը դա մարդում մեջ դրված բնության պահանջ է նույնիսկ մինչև Անկումը: Թվում է, Արիստոտելը այսպիսի ենթադրության կողմնակից էր: Նա ասում է, «մարդը դա քաղաքական, պետական կենդանի է» և դրանից ելնելով, նա համարում էր, որ կառավարությունը «լավ կյանք զարգացնելու, կարգավորելու համար է»:

2. Բողոքականությունը, հատկապես Մարտին Լյութերը, պնդում է, որ մարդկային իշխանությունը ստեղծվել է Անկման ժամանակ: Նա դա կոչում է «Աստծո Թագավորության ձախ ձեռքը»: Նա ասում է, որ «Վատ մարդկանց կառավարելու Աստծո միջոցը դա վատ մարդկանց որոշակի սահմանների մեջ պահելն է»:

3. Կարլ Մարքսը պնդում էր, որ կառավարությունը դա միջոց է, որի օգնությամբ ոչ այնքան շատ էլիտան կառավարում է մարդկային հոծ զանգվածը: Իր կարծիքով կառավարությունն ու կրոնը նմանատիպ դեր են կատարում:

II. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՆՅՈՒԹ

Ա. Հին Կտակարան

1. Իսրայելը դա օրինակ է, որը կօգտագործվի երկնքում: Հին Իսրայելում ՅԵՀՈՎԱ-ն էր Թագավորը: Թեոկրատիա տերմինը օգտագործվում է նկարագրելու համար Աստծո ուղղակի կառավարումը (հմմտ. I Թագ. 8:4-9):
2. Աստծո սուվերենությունը/գերիշխանությունը մարդկային իշխանությունների մեջ հստակ երևում է
 - ա. Երեմիա 27:6; Եզրաս 1:1
 - բ. II Մնացորդաց 36:22
 - գ. Եսայա 44:28
 - դ. Դանիել 2:21
 - ե. Դանիել 2:44
 - զ. Դանիել 4:17,25
 - է. Դանիել 5:28
3. Աստծո ժողովուրդը պետք է խոնարհ լիներ և հարգալից նույնիսկ նվաճող և զավթիչ իշխանություններին:
 - ա. Դանիել 1-4, Նաբուգոդոնոսոր
 - բ. Դանիել 5, Բաղդասար
 - գ. Դանիել 6, Դարեհ
 - դ. Եզրաս և Նեեմիա
4. Աստծո ժողովուրդը պարտավոր է աղոթել քաղաքացիական իշխանությունների համար:
 - ա. Երեմիա 28:7
 - բ. Միշնա, Avot. 3:2

Բ. Նոր Կտակարան

1. Հիսուսը հարգանք ցուցաբերեց մարդկային իշխանություններին
 - ա. Մատթևոս 17:24-27; վճարեց Տաճարի հարկը
 - բ. Մատթևոս 22:15-22, պաշտպանեց կայսրին հարկ տալը և այդպիսով հարգանք ցուցաբերեց հռոմեական քաղաքացիական իշխանությունների հանդեպ
 - գ. Հովհաննես 19:11, Աստված է դնում քաղաքացիական իշխանություն
2. Պողոսի խոսքերը կապված մարդկային իշխանություններին
 - ա. Հռոմեացիս 13:1-7, հավատացյալները պետք է հնազանդվեն և աղոթեն քաղաքացիական իշխանությունների համար:
 - բ. I Տիմոթեոս 2:1-3, հավատացյալները պետք է աղոթեն քաղաքացիական իշխանությունների համար
 - գ. Տիտոս 3:1, հավատացյալները պետք է հնազանդվեն քաղաքացիական իշխանություններին
3. Պետրոսի խոսքերը կապված մարդկային իշխանություններին
 - ա. Գործք 4:1-31; 5:29, Պետրոսն ու Հովհաննեսը Սենեդրիոնի առջև (սա ցույց է տալիս քաղաքացիական անհնազանդությունը)
 - բ. I Պետրոս 2:13-17, հավատացյալները պետք է հնազանդվեն քաղաքացիական իշխանություններին
4. Հովհաննեսի խոսքերը կապված մարդկային իշխանություններին
 - ա. Հայտնություն 17, Բաբելոնի պռոնիկը աջակցում է մարդկային իշխանությանը, որը հակառակվում է Աստծուն:

III. ԱՄՓՈՓՈՒՄ

- Ա. Մարդկային իշխանությունները դրված են Աստծո կողմից: Մա նշանակում, թե թագավորներն ունեն «աստվածային իրավունք» այլ Աստծո կողմից տրված հատուկ տեղ և դեր ունեն նրանք: Ոչ մի կառավարման ձև մյուսից առավել չէ:
- Բ. Հավատացյալների կրոնական պարտականությունն է հնազանդվել քաղաքացիական իշխանություններին և ցուցաբերել հատուկ հարգանք նրանց հանդեպ:
- Գ. Հավատացյալների համար միանգամայն պատշաճ է աջակցել մարդկային իշխանություններին՝ հարկեր վճարելով և նրանց համար աղոթելով:
- Դ. Մարդկային իշխանությունները կարգ ու կանոն հաստատելու և պահպանելու համար են: Նրանք Աստծո ծառաներն են հենց այս առաջադրանքը կատարելու համար:
- Ե. Մարդկային իշխանությունները վերճնական և գերագույն համակարգը չէ: Այն սահմանափակված է իր իսկ իշխանության մեջ: Հավատացյալները պարտավոր են գործել իրենց խղճի համեմատ և չկատարեն իշխանությունների պահանջները, եթե դրանք անցնում են Աստծո դրած սահմանները: Օգոստինոսը իր «Աստծո քաղաքը» գրքում (*The City of God*) ասում է, որ մենք հաղիսանում ենք երկու պետության քաղաքացի, որից մեկը ժամանակավոր է, իսկ մյուսը հավիտենական: Երկուսում էլ մենք ունենք պատավորություններ և պատասխանատվություններ, բայց Աստծո թագավորությունն է գերագույնը: Աստծո առաջ ունեցած մեր պատասխանատվությունը այս հարցում թե անհատական է և թե համընդհանուր, համատեղ:
- Զ. Մենք պետք է քաջալերենք հավատացյալներին դեմոկրատական համակարգի մեջ ակտիվ մասնակցության համար կառավարման գործընթացի մեջ և դրան կիրառության մեջ, որտեղ որ հնարավորն է Սուրբ Գրքի ուսմունքները:
- Է. Սոցիալական փոփոխությունը պետք է նախորդի անհատի դարձի գալը: Կառավարության մեջ չկա իրական վախճանաբանական հույս: Բոլոր մարդկային իշխանությունները չնայած գոյություն ունեն Աստծո կամքով և օգտագործվում են Աստծո կողմից, հանդիսանում են մեղավոր համակարգ առանց Աստծո: Այս գաղափարը լավ արտահայտվում, այնպես ինչպես Հովհաննես առաքյալն է օգտագործում «աշխարհ» բառը:

**Արևելահայերեն «եւ ներկայ իշխանութիւններն Աստուածանից են կարգուած»
Արևմտահայերեն «եւ անոնք որ կան՝ Աստուածմէ կարգուած են »**

- ☐
- NASB** “those which exist are established by God”
- NKJV** “that exist are appointed by God”
- NRSV** “that have been instituted by God”
- TEV** “have been put there by God”
- NJB** “have been appointed by God”

Մա այլաբանական կիրառությունն է ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅԻ: Մա պնդում է, որ Աստված գերազանց է բոլոր մարդկային իշխանություններից (հմմտ. Հովհ. 19:11): Մա չի վերաբերվում «Աստծո աջի թագավորներին/օծյալներին», այլ Աստծո կամքին՝ կարգ ու կանոն լինելու համար: Մա չի խոսում ինչ որ առանձնահատուկ տեսակի կառավարության մասին, այլ հենց ինքնին իշխանությունը: Քաղաքացիական կարգ ու կանոնը ավելի լավ է քան քառսը (հմմտ. հ. 6):

13:2 «իշխանութեանը հակառակողը» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅԻ է: Խոսքը վերաբերվում է անձնական սովորույթի ըմբոստությանը՝ հաստատված կանոնակարգի դեմ, բառացիորեն «քեզ դնել ընդդիմության մեջ» (հմմտ. Գործք 18:6; Հակոբոս 5:6): Մարկոս 12:17,

Հիսուսը հստակ հաստատեց թե կառավարության և թե եկեղեցու թագավորությունը: Գործք 5:25-32 մենք տեսնում ենք, թե ինչ է տեղի ունենում, երբ իշխանություններն անցնում են իրենց սահմանները:

«է հակառակում . . . հակառակողներն» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՍՄՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՆԱԿ Ե Լ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՍՄՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ԴԵՐԲԱՅ: Սա խոսում է հաստատված և արմատացած ապստամբության մասին, որը տեղ է գտել մարդկանց մեջ: Աստված ստեղծել է կարգ ու կանոն այս ընկած աշխարհում (հմմտ. հհ. 4,6): Կանոնակարգին հակառակվել նշանակում է հակառակվել Աստծուն, բացառությամբ այն իրավիճակի, երբ քաղաքացիական իշխանությունները ոտնահարում են իրենց Աստծո կողմից դրված սահմանները: Ճիշտ հոգևոր վիճակը իշխանություններին հնազանդվելն է: Ընկած մարդկությունն ուզում է անկախություն:

«իրանց անձերին դատաստան կրնդունին» KJV թարգմանության մեջ օգտագործված է «անեծք, նզովք, դատապարտում» բառը: Այս բառն անգլերեն լեզվի մեջ մտել է գործածության 1611թ.Ն. NKJV Տարբերակում օգտագործված է «դատաստան» բառը: Կոնտեքստում սա կարող էր վերաբերվել (1) Աստծո դատաստանին կամ (2) քաղաքացիական իշխանությունների կողմից արված պատժին (հմմտ. հ. 4): Այս մարդիկ իրենց վրա դատապարտություն էին բերում իրենց վերաբերմունքով և արարքներով ուղղված իշխանությունների դեմ (հմմտ. Հովհ. 3:17-21):

13:3 Տես զուգահեռ մեկնաբանություն I Պետ. 2:14.

«իշխանութիւն» Տես Հատուկ Թեմա: *Archē* 8:38.

13:4 **«Որովհետեւ սպասաւոր է նա Աստուծոյ քեզ համար դէպի բարին»** Իշխանությունների կառավարման համակարգի գործողությունը չարագործների դեմ է, մինչդեռ հավատացյալը ինքն իրեն սահմանափակում է վրեժխնդիր լինելու մեջ/ պատասխան քայլ անելու մեջ (հմմտ. 12:17-19): Լյութերը պնդում էր, որ « Աստծո կերպը վատ մարդկանց հետ վարվելու՝ նրանց դնել որոշակի սահմանների մեջ»:

«եթէ» Այստեղ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է հնարավոր գործողություն ապագայում:

Արևելահայերեն «որովհետեւ զուր տեղը սուրը չէ կրում»
Արևմտահայերեն « վասն զի դատարկ տեղ մէջքը թուր չէ կապեր »

□

- NASB “for it does not bear the sword for nothing”
- NKJV “for he does not bear the sword in vain”
- NRSV “for the authority does not bear the sword in vain”
- TEV “their power to punish is real”
- NJB “it is not for nothing that they symbol of authority is the sword”

«Սուր» (*machaira*) բառը փոքր հռոմեական սուր էր, որն օգտագործվում էր մահվան դատավճիռ իրականացնելու համար (հմմտ. Գործք 12:2; Հռ. 8:35): Այս հատվածը և Գործք 25:11 տալիս են Նոր Կտակարանի հիմքը մահվան դատավճռի համար, իսկ Ծմնդ. 9:6 հստակ հաստատում է Հին Կտակարանի դիրքն այս հարցում: Վախը ամենաարդյունավետ միջոցներից մեկն է՝ քառսին հակառակ կենալու համար:

«որովհետև նա սպասատր է Աստուծոյ՝ վրեժխնդիր» «վրեժխնդիր» (*ekdikos*) տերմինը հանդիպում է Հին Կտակարանում մի քանի անգամ: Այն նույնիսկ օգտագործվում է ՂԼ. 19:18-ի առաջին մասում: Հին Կտակարանում, եթե մեկը մարդ սպաներ, նույնիսկ պատահաբար, այդ մարդու ընտանիքը իրավունք ուներ «աչքի տեղ աչք» վրեժխնդիր լինել (արյան վրեժխնդիր): Պողոսը կողմնակից էր այն բանի, որ հին կտակարանային սովորությունը կիրառվեր քաղաքացիական իշխանությունների կողմից:

13:5 «պետք է հնազանդ լինել» Սա անելու համար երկու պատճառ կար (1) պատժից փախչել, կամ Աստծո կամ էլ կառավարող քաղաքացիական իշխանությունների և (2) հավատացյալների խղճի համար:

«խղճմտանքի համար էլ» Հին Կտակարանում հունարեն «խիղճ» բառի նմանը/կրկնորդը չկա, եթե չհաշվենք հին եբրայերեն տերմինը «հոգի, սիրտ, խիղճ», որը նշանակում է մարդու էություն և նրա դրդապատճառները: Հունարեն տերմինի բնագրային իմաստը վերաբերվում էր մարդու գիտակությանը կապված հինգ զգայարանների հետ: Հետո այն սկսեցին օգտագործել նեքին զգացողության համար (հմմտ. Հռ. 2:15): Պողոսն իր փորձությունները նկարագրելիս երկու անգամ օգտագործում է այս տերմինը Գործք Առաքելոց գրքում (այն է, 23:1 և 24:16): Նա խոսում է սեփական վստահության մասին, որ նա դիտավորյալ չի խախտել որևէ հայտնի կրոնական պարտավորություն Աստծո հետ կապված (հմմտ. I Կոր. 4:4):

Հավատացյալների խիղճը դա զարգացող կարողություն է հասկանալու շարժառիթներն ու գործողությունները հիմնված (1) աստվածաշնչյան աշխարհայացքի; (2) հավատացյալի մեջ բնակվող Սուրբ Հոգու և (3) Աստծո խոսքի վրա հիմնված ապրելակերպի իմացություն: Սա հնարավոր է դառնում միայն ավետարանի անձնապես ընդունման պայմանով:

13:6 «Մորա համար հարկ էլ էք վճարում» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, չնայած իր կառուցվածքով կարող է լինել ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ (հմմտ. JB): Սա քաղաքացիական իշխանությունների հանդեպ քրիստոնյայի պատասխանատվության օրինակներից մեկն է, քանի որ իշխանությունները Աստծո ծառաներն են:

Արևելահայերեն «ամենին վճարեցէք եղած պարտքը; հարկ...մաքս...վախ...պատիվ»
Արևմտահայերեն «Ուստի հատուցանեցէք պէտք եղածը անոնց, հարկ...մաքս...վախ...պատիվ »

13:7

- NASB** “Render to all what is due them: tax. . .; custom. . .; fear. . .; honor”
- NKJV** “Render therefore to all their due; taxes. . .; customs. . .; fear. . .; honor”
- NRSV** “pay to all what is due them—taxes. . .; revenue. . .; respect. . .; honor”
- TEV** “Pay, then, what you owe them; pay them your personal and property taxes, and show respect and honor for them all”
- JB** “Pay every government official what he has a right to ask—whether it be direct tax or indirect, fear or honor”

Այս խոսքերը կարող էին վերաբերվել քաղաքացիական իշխանությունների երկու առանձին խմբերի (հմմտ. RSV), բայց հնարավոր է , որ այստեղ ենթադրվում է այն, որ քրիստոնյաները պարտավոր են և վճարել հարկերը, և հարգեն քաղաքացիական իշխանություններին, քանի որ նրանք գործում են որպես Աստծո ծառաներ (հմմտ. հհ. 1,4 [երկու անգամ],6; Մաթ. 22:15-22):

Երկու տերմինները, «մաքս» և «հարկ», այստեղ օգտագործվում են որպես հոմանիշներ (չնայած TEV թարգմանությունը դնում է տարբերություն նրանց մեջ): Եթե վերլուծենք ստուգաբանորեն (բնագրի նշանակությունը), առաջինը վերաբերվում է այն հարկերին, որը պիտի վճարվեր հպատակ պետությանը, ու կողմից, որ նվաճվել էին (հմմտ. Դուկ. 20:22) իսկ երկրորդը անձնական հարկերն էին (հմմտ. Մաթ.17:25; 22:17,19):

ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ 13:8-14

- Ա. 1-7 համարները կարելի է հասկանալ, որպես ինքնաբավարար գրական կոնտեքստ: Ինչևէ, հ. 7-ի «պարտական» թեման կարծես թե շարունակվում է ուրիշ իմաստով հ. 8-ում: Հավատացյալներն ունեն պարտավորություն թե պետության դեմ և թե ուրիշ մարդկանց նկատմամբ:
- Բ. 8-10 համարները միավորմամբ են մեկ մտքով, ինչպես հհ. 11-14-ը: Նրանք շարունակում են թեմայի քննարկումը, սկսած գլուխ 12-ից, քրիստոնյայի պատասխանատվությունը ուրիշներին սիրելու մեջ:
- Գ. Այն, որ Պողոսն օգտագործում է Հին Կտակարանի Դեկալոգ որպես բարոյական ուղեցույց Նոր Կտակարանի հավատացյալների համար, ցույց է տալիս Հին Կտակարանի շարունակական կարևորությունը աստվածահաճո կյանք ապրելու համար (սրբացում), և ոչ թե փրկության համար (արդարացում): Թվում է, թե Պողոսը միավորել է մի քանի աղբյուրներ՝ իր էթիկայի ուղեցույցը կազմելու համար.
- (1) Հիսուսի խոսքերը
 - (2) Սուրբ Հոգու առաջնորդությունը
 - (3) Հին Կտակարանը
 - (4) իր ռաբիական փորձառությունը և պատրաստվածությունը
 - (5) հույն մտածողների մասին իր գիտելիքները (հատկապես ստոիկները)
- Սա բնութագրում է «սիրո օրենքը»— սեր առ Աստված, սեր մարդկանց հանդեպ, ծառայություն առ Աստված և մարդկանց:
- Դ. 11-14 համարները ունեն վախճանաբանական (ժամանակի ավարտի) կողմնորոշում: Խավարի և լույսի հակադրությունը բնութագրվում է հրեական գրականության մեջ, ներառյալ Մեռյալ ծովի ձեռագրերը: Սա նաև հատուկ է Հովհաննեսի և Պողոսի գրվածքներին: Քրիստոնեական կյանքում այս հակադրությունը «արդեն» և «դեռ ոչ»-ի միջև մղում է քրիստոնյաներին ապրելու աստվածահաճո կյանք: «Նոր Դար»-ը (Աստծո Թագավորությունը) սկսել է, իր իրավունքների մեջ է մտել և մոտ ապագայում կամբողջանա: Այս հատվածը շատ նման է I Թես. 5:1-11:
- Ե. 13-14 համարներն այնպես ազդեցին Օգոստինոսի վրա, որ 386թ. ամռանը փոխվեց նրա ամբողջ կյանքը: Իր «Խոստովանություն» [*Confessions*], գրքում 8:29 նա գրում է, «Ես չկարողացա կարդալ շաշունակությունը, և ես ուրիշ ոչ մի բանի կարիք էլ չունեի; հենց այստեղ, այս նախադասության վերջում մաքուր լույսը լցրեց իմ սիրտը, և ամբողջ խավարը ցրվեց»:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 13:8-10

⁸Ոչ ովի ոչինչ պարտական չմնաք՝ բացի իրար սիրելուց. որովհետև ընկերին սիրողը՝ օրենքը կատարել է: ⁹Վասն զի այն Սի շնարը, Սի սպանիրը, Սի գողանարը, Սի սուտ վկայերը, եւ Սի

ցանկանարը, եւ ուրիշ ինչ պատուիրանք էլ որ կայ, այս խօսքումն է բովանդակվում, Քո ընկերը սիրիր քո անձի պէս: ¹⁰Սէրն իր ընկերին չար չի անիլ. ուրեմն օրէնքի լրումը սէրն է:

NASB (UPDATED) TEXT: 13:8-10

⁸Owe nothing to anyone except to love one another; for he who loves his neighbor has fulfilled *the* law. ⁹For this, “YOU SHALL NOT COMMIT ADULTERY, YOU SHALL NOT MURDER, YOU SHALL NOT STEAL, YOU SHALL NOT COVET,” and if there is any other commandment, it is summed up in this saying, “YOU SHALL LOVE YOUR NEIGHBOR AS YOURSELF.” ¹⁰Love does no wrong to a neighbor; therefore love is the fulfillment of *the* law.

13:8 «Ոչ ուրիշ ոչինչ պարտական չմնաք» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ-ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿ-ով, որը սովորաբար նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար: Այս շեշտված արտահայտությունն ունի երկու ժԽՏԱԿԱՆ-ներ: Այս բառերը կարող են վերաբերվել նաև հարկեր վճարելուն (հհ. 6-7): Ֆինանսական պարտքերը միշտ էմոցիոնալ և պոտենցիալ հոգևոր անկման: Չգուշացեք աշխարհասիրությունից: Այն գրկում է հավատացյալներին իրենց կարողությունից աջակցել քրիստոնյա բարի գործերին և զբաղվել անձնական բարեգործությունով: Չնայած, այս համարը չի կարող օգտագործվել որպես սպացույց, «ոչ սպառող վարկ»-ի համար: Աստվածաշունչը պետք է մեկնաբանվի այն շամանակի լույսի ներքո, երբ այն գրվել է: Նա ամերիկյան առավոտյան օրաթերթ չէ: 8-10 համարներն ընդգծում են առաջնահերթությունը մեր փոխադարձ սիրո միմյանց հանդեպ (1) որպես ուխտի եղբայրներ (Մաթ. 13:34-35; 22:39-40); և (2) որպես մարդկային համայնքի անդամ (հմմտ. Մաթ. 5:42; Գաղ. 6:10):

«բացի իրար սիրելուց» Սա 8-10 համարների բանալի միտքն է (հմմտ. Հովհ. 13:34; 15:12; Հն. 12:10; I Կոր. 13; Փիլ. 2:3-4; I Թեա. 4:9; Եբ. 13:1; II Պետ. 1:7; I Հովհ. 3:11; 4:7, 11-12):

«ընկերին սիրողը» Այս ԲԱՅ-ը հանդես է գալիս որպես ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԵՐԲԱՅ: Սա չի վերաբերվում մեկուսացված կամ սեզոնային սիրուն, այլ սա քրիստոսանման սիրո արտահայտման և կյանք ապրելու ձև է:

«Հարևան, մոտիկ, այստեղ ընկեր» տերմինը բառացիորեն նշանակում է «ուրիշ տեսակի մեկ ուրիշ» (*heteros*), չնայած *heteros* և *allos* (նույն տեսակի մեկ ուրիշ) միջև եղած տարբերությունը դադարեց գոյություն ունենալ հունարեն կոյնայում: Կոնտեքստում սա կարող է վերաբերվել բոլոր իր կողքը եղողներին, բառի բուն իմաստով, անկախ այն բանից, հավատացյալ է թե ոչ (հմմտ. Դուկ. 12:14-21; 10:25-37): Չնայած, Դև. 19:18 մեջբերումը ցույց է տալիս, որ սա վերաբերվում է ուրիշ ուխտի մասնակիցներին (ղևտացին – իսրայելացուն):

Քրիստոնյաները պետք է սիրեն իրենց հավատակիցներին, որպես եղբայրներին իսկ կորսված մարդկանց որպես պոտենցիալ, հնարավոր եղբայրներ: Քրիստոնեությունը ընտանիք է: Յուրաքանչյուր անդամ ապրում և ծառայում է ամբողջի առողջության և աճի համար (հմմտ. I Կոր. 12:7):

Արևելահայերեն «օրենքը կատարել է»
Արևմտահայերեն «օրենքը կը կատարե»

- NASB, NKJV,
- NRSV “has fulfilled the Law”
- TEV “has obeyed the Law”
- JB “have carried out your obligations”

Այս տարածված հունարեն բայը (*pleroō*) կարող է թարգմանվել մի քանի տարբեր ձևերով: Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, որը կարող է թարգմանվել որպես «իրականացել է և շարունակում է իրականանալ»: Ռոբերտ Հաննան «Հունարեն Նոր Կտակարանի քերականական ձեռնարկ»-ում [Robert Hanna, *A Grammatical Aid to The Greek New Testament*], մեջբերում է Ա.Տ. Ռոբերտսոնին և այն կոչում «վաղակատար ձամանակաձևի գնոմիկ (վերաբերվում է սովորական ճշմարտությանը, որը հայտնի էր, ծանոթ էր լուրջ ստացողներին)» (էջ 28): Այս բայը կրկնվում է հ. 10-ում(հմմտ. Գաղ. 5:14; 6:2):

13:9 Պողոսի համար անսովոր բան չէր Մովսեսական Օրենքն օգտագործելը (Ելից 20:13-17 կամ 2 Օրին. 5:17-21 և Գև. 19:18) Նոր Կտակարանի հավատացյալներին դրդապատճառ տալու համար: Եփ. 6:2-3, Պողոսը նաև օգտագործեց Տաս Պատվիրաններից մեկը՝ որպես դրդապատճառ քրիստոնյաների համար (հմմտ. I Տիմ. 1:9-10): Այս Հին Կտակարանի տեքստը փրկության միջոց չէր, այլ Աստծո կամքն էր հայտնում մարդկանց, թե ինչպես պետք է վարվեիր Աստծո և միմյանց հանդեպ (հմմտ. Հռ. 15:4; I Կոր. 10:6,11): Հավանական է, Պողոսի համար Հին Կտակարանից մեջբերում անելը միջոց էր՝ դիմելու թե հրեա հավատացյալներին և թե հեթանոս, որոնցից կաղմված էր Հռոմի եկեղեցին: «Կատարեց» բառը այս հատվածի նաև վերաբերվում է Հիսուսի ասածին Օրենքի մասին Մաթ. 5:17.

Հնարավոր է, որ սա վերաբերվում է ընդհանուր օրենքին, օրենք որպես սոցիալական նորմեր, և ոչ թե մասնավոր Մովսեսական Օրենքին (հմմտ. JB): Ինչևէ, այն փաստը, որ Պողոսն մեջբերում է Հին Կտակարանից հ. 9-ում վերաբերվում է Մովսեսական Օրենքին: Ուշադրություն դարձրեք, որ միայն սերը, և ոչ թե մարդու օրենքներին հետևելը, կարող է ճշմարտապես կատարել Օրենքը: Ստորև տես հատուկ թեմա:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԻ ԿԱՐԾԻՔԸ ՄՈՎՍԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Ա. այն բարի է և Աստծուց է (հմմտ. Հռ. 7:12,16)

Բ. արդարացման և ոչ էլ Աստծո կողմից ընդունվելու միջոց չէ այն (այն կարող է նաև անեծք լինել, հմմտ. Գաղ. 3)

Գ. Այն նաև Աստծո կամքն է հավատացյալների համար, որովհետև այն Աստծո ինքնա հայտնությունն է (Պողոսը հաճախ մեջբերում է Հին Կտակարանից՝ հանդիմանելու և/կամ քաջալերելու հավատացյալներին)

Դ. Հավատացյալները տեղեկացվում են Հին Կտակարանից (հմմտ. Հռ. 4:23-24; 15:4; I Կոր. 10:6,11), բայց չեն փրկվում Հին Կտակարանով (հմմտ. Գործք 15; Հռ. 4; Գաղ. 3; Եբրայեցիս)

Ե. այն գործում է նոր ուխտի մեջ

1. ցույց տալու համար մարդու մեղավոր վիճակը (հմմտ. Գաղ. 3:15-29)

2. ուղեցույց է հանդիսանում փրկվածների համար հասարակության մեջ ապրելու համար

3. քրիստոնյաներին տալու բարոյական որոշումներ

Այս աստվածաբանական սպեկտրն է անեծքից օրհնության և հարատևության փոխվելն է, որ որոշակի խնդիրներ է ստեղծում երբ փորձում ես հասկանալ Պողոսի կարծիքը Մովսեսական Օրենքի մասին: Ջեյմս Ստյուարտը իր «Մարդը Քրիստոսի մեջ» գրքում [*A Man in Christ*, James Stewart] ցույց է տալիս Պողոսի պարադոքսալ մտածելակերպն ու գրվածքները.

«Դուք որպես կանոն կցանկանայիք, որ մարդն ինքը, որն ինքն է կառուցում մտքերի և վարդապետության համակարգ, իր օգտագործած տերմինների իմաստը ինչքան հնարավոր է ճշգրիտ ֆիքսելու համար: Դուք կակնակելիք, որ նա լուրջ մտադրություններ ունենալ, որքան հնարավոր է ստույգ արտահայտություն դարձնելու իր հիմնական գաղափարները: Դուք կպահանջեիք, որ ձեր հեղինակի կողմից մեկ անգամ և որոշակի իմաստով օգտագործված բառը, պահպաներ իր իմաստը ամբողջ նյութի շարադրանքի ընթացքում:

Բայց եթե այսպես նայենք Պողոսի գործին, կհասթափվենք: Նրա ոճաբանությունից շատերը հոսում են, և ոչ թե խիստ և կոնկրետ. . . «Օրենքը սուրբ է» գրում է նա, « Ես հավանում եմ Աստծո օրենքը ներսի մարդով (հմմտ. Հռ . 7:12,22) բայց հստակ է *nomos-ի* մեկ ուրիշ ասպեկտ, որը նրան մղում է ասելու, «Քրիստոսը մեզ ազատեց օրենքի անեծքից (հմմտ. Գաղ. 3:13)» (էջ 26):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՇՈՒՄՆԵՐ ԵԼԻՑ ԳՐԶԻ 20: 13-15, 17

ԵԼԻՑ 20:13, ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

I. ԿՈՆՏԵՔՍՏ

Ա. Անհարժեշտ է հիշել, որ նույնիսկ այն պատվիրանները, որ իրենց բնությամբ թվում են սոցիալական, իրականում դրանք կրոնական են: Աստծո սուվերենությունը արարչագործության վրա և փրկությունը արտահայտված են այս պատվիրաններում: Մի սպանիր, պատվիրանը, ճիշտ ուղղությունը, խոսում է Աստծո պատկերի մասին, որն ունի բոլոր մարդիկ և Աստծո հոգատարությունն ու խնամքը մարդկային կյանքի համար:

Բ. Անհարժեշտ է հիշել, որ յուրաքանչյուր պատվիրան արտացոլում է հավատացյալ համայնքի հավատքը: Անօրինական ձևով մարդուն կյանքից զրկելու արգելքը հիմնականում և հենց սկզբից հավատացյալ համայնքի համար էր: Դրա կիրառությունը տարածվում է բոլոր մարդկանց վրա:

II. ԲԱՆԱԼԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ/ԲԱՌԱՅԻՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Ա. «Սպանություն»

1. Այս հազվադեպ օգտագործվող տերմինը (*rasah*) հանդիպում է Հին Կտակարանում ընդամենը 46 անգամ: Կա ևս երկու տերմին, որոնք օգտագործվում են ավելի հաճախ:

ա. *Harag*, օգտագործված է 165 անգամ

բ. *Hemit*, օգտագործված է 201 անգամ

2. Թվում է թե (*Rasah*) տերմինն ունի երկու հիմնական իմաստ; նեղ, սահմանափակ և լայն:

ա. Սկզբնականում այն նշանակում էր օրինական ձևով վերցնել ուխտի ընկերջ կյանքը, քաղաքը, ազգակցականների կողմից կատարվող վրեժխնդրությունն էր կամ «*go'el*»: Այսպիսի օգտագործման ձևը ներգրավում էր դիտավորություն, բայց միայն օրինական վրեժխնդրության իմաստով (հմմտ. Թվ. 35:30-34; Ղևտ. 24:13-23). Իրականում *Lex Talionis* (վրեժխնդրության օրենքը), «աչքի տեղ աչք» (հմմտ. Ծննդ. 9:5-6) վրեժխնդրությունը սահմանափակելու մի ձև էր: Ավելի ուշ ապաստարանի քաղաքները (2 Օրին. 4:41; Հեսու 20:3) հիմնվեցին, որպեսզի եթե ուխտի անդամներից մեկը պատահաբար կամ անզուսպ լինելով սպաներ համայնքից մի ուրիշ ուխտի անդամի, կարողանար փախչել գոհի ընտանիքի բարկությունից:

բ. Ավելի ուշ տերմինի իմաստը փոխվեց ավելի դեպի շարժառիթը և պատճառը՝ կյանքից զրկելու համար: Դիտավորության գաղափարը դառնում է բարձրագույնը (հմմտ. Ելից 21:12-14; Թվոց 35:11,22; 2 Օրին. 28:24):

գ. Այս տարբերությունը, առանձնահատկությունը դառնում է շատ կարևոր այս պատվիրանում: Թվում է, թե կոնտեքստում այն վերաբերվում է միայն ուխտի մասնակիցներին, այսինքն ուխտի մեջ եղողների համար է: Այն վերաբերում է ազգակցական ազատարարին կամ արյան վրեժխնդրությանը: Ինչևէ, տերմինը օգտագործվում է ավելի ուշ հատվածներում, որը ցույց է տալիս Գեկալոզը, Ովս. 4:2 և Երեմ. 8:9, կապված մարդասպանի հետ: Այս բառը կապված է ոչ միայն օրենքին այլև շարժառիթին: Այն տարածվում է ոչ միայն բարեկամի վրա այլ նաև բոլոր մարդկանց նկատմամբ:

3. Այս տերմինը ոչ մի առընչություն չունի մեր ժամանակակից էթիկայի հարցերի հետ, կապված մահապատժի կամ պատերազմի հետ: Հրեաները երբեք խնդիր չունեին դատական

վճիռը կայացնելու մեջ կամ սուրբ պատերազմ վարելու հետ (կամ, ինչպես նաև, ոչ սուրբ պատերազմ):

4. Մեր ժամանակակից մշակույթի համար, լավագույն թարգմանությունը այս տերմինի համար կլինի «կանխատեսված, դիտավորյալ սպանություն»:

III. ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐԸՄԲՈՒՆՈՒՄ

- Ա. 6, 7 և 8-րդ պատվիրանները կազմված են միայն երբայերեն երկու բառով: Նրանք շատ կարճ են բայց դիպուկ:
- Բ. Կյանքը, և ամենը նրանում, պատկանում է Աստծուն: Թե ինչպես ենք վարվում ուրիշների հետ ցույց է տալիս մեր մտքերը Աստծո մասին:

IV. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՉՈՒԳԱՀԵՌՆԵՐ

- Ա. Հիսուս Քրիստոս
 - 1. Այս պատվիրանի ընդարձակումը Նրա կողմից (հմմտ. Մաթ. 5:21-26) մեզ տալիս է ճիշտ կողմնորոշում ժամանակակից քննարկման համար, թե ինչպես կիրառել այս տեքստը մեր օրերում:
 - 2. Չնայած, որ Հիսուսը Դեկալոգը գործողությունների և արարքների բաժնից փոխադրեց դրդապատճառների բաժին: Մենք այն ենք, ինչ մտածում ենք: «Ինչի մասին մարդը մտածում է իր սրտում, այն էլ կա իրականում»: Մտային կյանքը էլ ավելի կարևոր է և երևացող, քան որ մենք սովորաբար տալիս ենք դրան հաշիվ:
- Բ. Հովհաննես Առաքյալ
 - 1. I Հովհ. 3:5-ում, այս նույն գաղափարը, որ ուրիշին ասելը նույնպես համարվում է սպանություն, հաստատվում է:
 - 2. Մաթ. 5:21 և I Հովհ. 3:5 մեջ օգտագործված հունարեն տերմինները տարբեր են, բայց իմաստը հիմնականում նույնն է:
 - 3. Ուշադրություն դարձրեք I Հովհ. 4:19-21-ի դրական ասպեկտի վրա:

V. ԸՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

- Ա. Չնայած, որ ոչ դիտավորյալ գործած սպանությունը կարող է փախչել արյան վրեժխնդրությունից՝ թաքնվելով քաղաք-փախստարանում (հմմտ. Թվ. 35; Հեսու. 20), նա միևնույնն է պետք է վճարի այդ քաղաքում բանտարկության համար, մինչև որ քահանայապետի մահը: Այս արարքի հետևանքները մինչև հիմա մնում են:
- Բ. Չնայած այս համարը ուղղակիորեն չի առընչվում ինքնասպանության հետ, քանի որ հնում, հավանական է, այդպիսի մտքեր չեն էլ ծագել, այս տեքստը տալիս է հոգևոր սկզբունք կապված մարդու կյանքի սրբության հետ և Աստծո սուվերենությունը և նպատակը Իր պատկերով ստեղծված մարդու կյանքի համար: Այս տեքստը շատ խիստ ու կոնկրետ խոսում է այս չարագործության թեմայի մասին մեր օրերում:
- Գ. Ինչևէ, այս տեքստը չի ասում որոշիչ խոսք ի պատասխան ժամանակակից հարցի կապված (1) մահապատժի կամ (2) պատերազմի հետ: Իսրայելի համար չար բան չկար դրանց մեջ: Իսրայելացիները ներգրավված էին այս երկու գործողություններում էլ: Բայց և այնպես, մարդու կյանքի արժեքի, կարևորության սկզբունքը՝ ստեղծված Աստծո պատկերով և Իր իշխանությամբ, կարևոր ճշմարտություն է այս հարցում:
- Դ. Բայց այս տեքստը շատ կարևոր բան է հռչակում՝ մարդկային կյանքի արժանիքը և սրբությունը: Համարվելով տնտեսներ մեր հավատացյալ համայնքում, մենք պետք է ոչ միայն մեր գործողությունները անենք, այն նաև համայնքի մասին մտածենք: Կյանքի պարզև թե անհատական է և թե ընդհանուր: Մենք պատասխանատու ենք մեր սեփական մարմինների ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական չարաշահման համար, ինչպես նաև մեր հասարակության մեջ ուրիշների

ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական չարաշահման համար: Սա հատկապես ճշմարիտ է մեր մշակույթի համար, որտեղ մեզ թույլատրված է խոսել այդ մասին և դա նշանակում է, որ մենք կարող ենք փոխել իրավիճակն ու համակարգը: Մենք մեր եղբայրների պահապաններն ենք:

ԵԼԻՑ 20:14, ՇՆՈՒԹՅՈՒՆ

I. ԿՈՆՏԵՔՍՏ

- Ա. Ակնհայտ է, որ պատվիրանը կապված է մարդու հարգանքը Աստծո հանդեպ, որը երևում է մեր ընկերոջ, կյանքի, կնոջ և ունեցվածքի հարգանքի դեպքում (հմմտ. Եր. 5:8): Սա հաստատվում է այս պատվիրանների ուրիշ հերթականությամբ Սեպտուագինդի մեջ:
- Բ. 2 Օրինաց. զուգահեռը ցույց է տալիս, որ միանգամայն ընդունելի է այդ հին ճշմարտությունը նաև մեր օրերում:
- Գ. Ինչպես ծնողների հանդեպ ունեցած հարգանքը դիտվում էր կայուն հասարակություն ունենալու բանալին, այդպես էլ այս պատվիրանը:
- Դ. Այս պատվիրանը նաև նշանակում է Աստծո սեփականությունն ու հսկողությունը մեր սեռական և ընտանեկան կյանքում:
- Ե. Այս պատվիրանը կարծես հիմնված է եղել Ծննդ. 2:24 , ինչպես համար 4-ը հիմնված էր Ծննդ. 2:1-3:

II. ԲԱՌԻ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Ա. Այս տեքստի գլխավոր տերմինը «շնությունն» է: Շատ կարևոր է հասկանալ դրա իմաստը հին հրեական մշակույթի լույսի ներքո:

- 1. Հին Կտակարանի կոնտեքստում այս տերմինը տարբերվում է «պոռնկություն» բառից: Շնությունը այն է, երբ սեռական հարաբերության մեջ զույգից մեկը ամուսնացած է: «Պոռնկություն» տերմինը վերաբերվում է երկուսին էլ, որոնք ամուսնացած չեն (հմմտ. Առ. 29:3; 31:3): Նոր Կտակարանի հունարեն տերմիններում այս բառերի տարբերությունը կորել է :
- 2. Ընտանեկան կարգավիճակի վրա այսքան ուժեղ շեշտադրության պատճառը, հնարավոր է, որ կապ ուներ ժառանգության իրավունքի հետ, որը ներգրավված էր Աստծո խոստման մեջ «երկիրը»: Ամեն 50 տարին (հորելյանական տարի) ամբողջ երկիրը վերադարձվում էր սկզբնական հողատերերին (ցեղին):
- 3. Շնությունը մշակույթորեն և հասարակության մեջ դատապարտվում էր մինչև Մովսեսական օրենսդրությունը (հմմտ. Ծննդ. 12:10; 26:7; 39:9):
- 4. Շնությունը մեղք էր դիտվում, ուղղված՝
 - ա. բարեկամի, հարևանի-- Ելից 20:14; 2 Օրին. 5:18
 - բ. ամուսնության—Ղևտ. 18:20
 - գ. Աստծո դեմ—Ծննդ. 20:1-13; 26:7-11
- 5. Այն պատժվում էր երկու մասնակիցների մահով.
 - ա. Ղևտացոց 20:10
 - բ. 2 Օրինաց 22:22-24
 - գ. Եզեկիել 16:40 (փոխաբերություն)
 - դ. Խիստ զգուշացումներ, որ կան Առակաց գրքում 1-9

III. ԿԱՊ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԵՏ

Ա. Հիսուսն օգտագործեց Ղևտացոց 19:18-ը, որպես Հին Կտակարանի հայտնության ամփոփում (հմմտ. Գուկ. 10:27): Սա հաստատում է, որ Տաս Պատվիրանները կապված են մեր հարաբերությունները ուրիշների հետ:

Բ. Հիսուսը ուժեղացնում է պատվիրանները Մատթևոս 5:28-ում: Նա շեշտը դնում է շարժառիթի վրա ավելի քան գործողության: Հրեաները մարդու միտքը համեմատում էին ջերմոցի, մարգի հետ: Որովհետև մարդն ինչ մտածում է, այն էլ իրականում կա (Առ. 23:7): Սա է, որ Տասը Բառերը պահել անհնարին է -- դա է նպատակը, դրան պետք է ձգտել (հմմտ. Գաղ. 2:15-3:29):

IV. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Ա. Հավանական է, որ հենց ամուսնությունը իրենից ներկայացնում է լավագույն ժամանակակից օրինակը, նմանությունը կյանքի մշտական հավատքի նվիրման Աստծո անվանը: Սա մեղ համար լավագույն առիթն է հասկանալու Հին Կտակարանի գաղափարների իրականությունը (Մաղ. 2:14): Մեր հարգանքը մեր կողակցի հանդեպ բոլոր բնագավառներում, ներառյալ սեքսը, օգնում է մեզ ըմբռնել այս համարի իմաստը:

Բ. Ամուսնական հարաբերությունների կայունությունն ու փոխադարձ հավատարմությունը, ինչպես նաև ծնողական հարգանքը, դա այն գլխավոր սյունն է, որի վրա հենվում է հասարակության ուժն ու երկարակեցությունը:

Գ. Պետք է հատուկ ընդգծել, որ մարդու սեռական հատկությունը պարզ է Աստծուց: Սա Նրա գաղափարն ու կամքն էր մարդու համար: Պատվիրանները մարդու ազատությունը կամ ուրախությունը սահմանափակելու համար չեն, այլ որպեսզի մեղավոր մարդուն տրվի կոնկրետ աստվածահաճո ուղեցույց: Սահմանները տրված են մեր երկարաժամկետ օգտի և ուրախության համար: Եվ չնայած մարդը չարաշահել է իր սեռական ցանկությունները և ճիշտ չի վարվել դրա հետ, ինչպես Աստծո տված բոլոր պարզանքների հանդեպ, նա մնում է ուժեղ ներքին մղվածություն մարդու մեջ, որը պետք է լինի Աստծո կառավարման և առաջնորդության ներքո:

Դ. Սեքսը պետք է պահպանվի, որպեսզի մարդու (կին թե տղամարդ) սրբությունը հարգվի, որովհետև նրանք ստեղծված են Աստծո պատկերով: Մեր ընկած, մեղավոր բնության հակումն այն է, որ նախ հոգ ենք տանում մեր սեփական «ես»-ի համար, որը ակնհայտ է:

ԵԼԻՑ 20:15, ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Ինչպես մնացած բոլոր պահանջները Դեկալոգում, մեր հավատքը, սերը և հարգանքն առ Աստված պետք է երևա մեր առօրյա կյանքի թե աշխարհիկ և թե հոգևոր գործերում: Աստծո համար զգվելին այն է, որ երբ մարդն ասում է, որ ճանաչում է Իրեն բայց սխալ է վարվում իր հավատակից եղբոր հետ (հմմտ. I Հովհ. 4:20-21; 2:7-11):

Բ. Այս պատվիրանը եկեղեցու ներսում միաբանությունը պահելու համար է: Այս հոգևոր հաղորդակցության որակը կգրավի մերժված և փնտրող աշխարհի ուշադրությունը դեպի մեր Աստվածը, որը Սուրբ Գրքի նպատակն է:

Գ. Ինչպես մյուս պատվիրանները, այնպես էլ այս մեկը կենտրոնացել են Աստծո վրա, որպես կյանքի սեփականատեր: Մենք տնտեսներ ենք, և ոչ թե սեփականատերեր: Մեր մեղավոր մղվածությունն է տերանալ այն բանին, որը մերը չէ, այն էլ ձրի, որը անթույլատրելի է (հմմտ. Սաղ. 50:10-12):

II. ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Ա. Սա երրորդ պատվիրանն է Դեկալոգի երկրորդ բաժնում, որը հին եբրայերեն լեզվում կազմված է ընդամենը երկու բառից

Բ. Արգելքի օբյեկտը բացակայում է: Պատվիրանը ճիշտ հասկանալու համար օգնում են

1. Նախորդ երկու պատվիրանների կոնտեքստը, կապված հանցագործությունների հետ, որի պատիժը մահն էր

2. Կիրառելի համապատասխան Չուգահեռ հատվածներում թե անմիջական (Ել. 21:16) և թե հեռու (2 Օրին. 24:7): Նաև տես Ծննդոց 37.

Գ. Ինչևէ, կարճ ձևը նույնպես բավարար հիմնավոր է:

1. Այն արձանագրված է մեզ համար Սուրբ Հոգու ներշնչանքով
 2. Այն ընդարձակում է արգելքի սահմանները
 3. Կա նաև զուգահեռ հատված անմիջական կոնտեքստում, որը առընչվում է գողությանը — Ելից 22:1.
 4. Հիսուսը, անկասկած մեջբերում է անում այս հատվածը կապված գողության հետ (հմմտ. Մաթ. 19:18):
- Գ. Գողությունը, որպես հանցագործություն, գոյություն է ունեցալ նաև ուրիշ Օրենագրքերում հնադարում: Բայց սովորաբար պատիժը եղել է մահապատիժը, անդամահատումը կամ 30 անգամ փոխհատուցում:
- Ե. Կան մի քանի կարևոր զուգահեռ հատվածներ, որ սահմանում և բացատրում են այս ճշմարտությունը.
1. Գևուսացոց 19:1-18—«Գուք սուրբ եղեք, որովհետև ես ձեր Եհովա Աստվածը սուրբ եմ»:
 - ա. Մեր ապրելակերպը պետք է անդրադարձնի մեր Հոր և մեր Աստծո ընտանեկան գծերը (հմմտ. հ. 18):
 - բ. Մեր հավատքը պետք է ազդի մեր առօրյայի վրա, մղելով թե ճիշտ գործողությունների և թե արգելելով սխալ, բացասական վարքը, ի դեպ երկու դեպքում էլ մղված ճիշտ շարժառիթներով (հմմտ. հ. 17):
 - գ. Գուք ունենալ արտաքսված և կարիքավորների հանդեպ, հհ. 9-10, 13, այնքան կարևոր է որքան թույլ չտալ քեզ թալանել ընկերներիդ, մերձավորիդ, հ. 11:
 2. Ամովս 8:4-7-- Աստված ատում է շահագործումները:
 3. Միքիա 6:6-8-- Աստված ուզում է ճիշտ շարժառիթներ մեր բոլոր գործերում: Այն որ մենք չենք գողանում, դա արդեն հետևանք է:
 4. Ելից 22:1—Թալանի և գողության խնդրի շուրջ, մեր ժամանակակից քննարկման մեջ կա մի ճշմարտություն, որը մենք հաճախ բաց ենք թողնում, դա փոխհատուցումն է: Մեղքը միշտ թանկ արժէ:

III. ԾՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

- Ա. Ձոյ Գեվիդմենը, Կ. Ս. Լուիսի կինը, գրել է հիասքանչ գիրք Գեկալոգի վերաբերյալ: Նա թարգմանել է այս պատվիրանն այսպես «Մի ձգտիր ստանալ մի բան անվճար»: Սա, անշուշտ, ընդարձակում է ունենալու, տիրելու գաղափարի սահմանները: Նա ասում է, որ «Ունեցվածքը ոչ մեղք է և ոչ էլ անբաժանելի իրավունք, այլ փոխառություն, վստահված Աստծո կողմից»:
- Բ. Գողությունը, ինչպես բոլոր մեղքերը մեղավոր մարդու, լուծվում է նոր սրտով, Եփ. 4:28: Չարմանալի է, թե ինչպես հին բնությունը « վերցնելու» հատկությունը փոխվում է նոր բնության՝ «բաժնեկցելու, տալու» հատկության հետ:
- Գ. Մեր հարգանքն առ Աստված հստակ երևում է՝ մեր հավատակից եղբայրների հարգելով: Այս ճշմարտությունն իր մեջ ամփոփում է ամբողջ Գեկալոգի իմաստը:
- Դ. Ժամանակակից մարդը գողանում է տարբեր կերպերով:

IV. ԹՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՅԵՐ

1. Ինչպե՞ս է ժամանակակից մարդը զբաղվում գողությամբ:
2. Ինչպե՞ս է հատուցումը կապվում ապաշխարության հետ:
3. Ինչպե՞ս է այս համարը կապված կապիտալիստական հայացքի հետ ունեցվածքի առումով:

ԵԼԻՑ 20:17, ՅԱՆԿԱՆԱԼ, ՓԱՓԱԳԵԼ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Ա. Վերջին հինգ պատվիրանների միջև կարելի է տեսնել հետևյալ կապը

1. 6, 7, և 8-րդ պատվիրաններում արգելում են վնաս հասցնել իր ուխտի ընկերոջը բացահայտ գործողությամբ
 2. 9-րդը արգելում է վնաս հասցնել իր ուխտի ընկերոջը խոսքով
 3. 10-րդը արգելում է վնաս հասցնել իր ուխտի ընկերոջը մտքով
- Բ. Ճիշտ է, որ ցանկանալու գործողությունը վնասում է ցանկացողին, և ոչ թե առարկային, օբյեկտին, հարևանին: Ինչևէ, հնարավոր է, որ այս պատվիրանը ակնկալում է, որ մտքերին կհետևեն համապատասխան գործողություններ:
- Գ. Շատերն այս պատվիրանը դիտում են որպես եզակի, ունիկալ մի գաղափար, որը գտնվում է միայն Իսրայելի հին օրենսգրքում և որը հին Մերձավոր Արևելքի ուրիշ օրենսգրքերում բացակայում է: Այս նոր գաղափարը կլինե՞ր մտքի արգելք: Ճիշտ է, որ Իսրայելը հասկանում էր, որ մտային կյանքը չար արարքների աղբյուրն էր (հմմտ. Առակ. 23:7; Հակ. 1:14-15): Սակայն, այս համարը կապված է մտքերի հետ, որոնց հետևում են գործողությունները: Մի քանի հատվածներ օգտագործում են «ցանականալ» տերմինը՝ գործի դնելու իմաստով (հմմտ. 2 Օրին. 7:25; Հեսու 7:21; Միքիա 2:2):
- Դ. Եթե ճիշտ է, որ հիմնական շեշտը տվյալ դեպքում դրված է թվարկվածի վրա, ապա այս պատվիրանի իրական իմաստը տեսանելի է: Նախ պետք է Աստծուն երկրպագություն անեն, բայց մեր մոտեցումները և շարժառիթները իրերի հանդեպ այս աշխարհում ազդում են Աստծուն մեր իրական երկրպագության վրա: Այս երկակի շեշտը նաև երևում է Հիսուսի Լեռան Քարոզում, Մաթ. 6:33--«Նախ խնդրեցեք Նրա թագավորությունը և արդարությունը, և ամեն բաները ձեզ կտրվի» (հմմտ. հհ. 19-32)

II. ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

- Ա. Ելից 20:17 և 2 Օրինաց 5:21, չնայած հիմնականում նույնն են, ունեն մի քանի կարևոր տարբերություններ.
1. Ելից 20-ում կինը ներգրավված է «տան» ավելի լայն իմաստով, պատկանում է տղամարդուն կամ տղամարդու սեփականությունն է, իսկ 2 Օրին. 5-ում կինը հանդես է գալիս առանձին, այսինքն սա ցույց է տալիս, որ նա ունի նշանակություն և կարևոր դիրք:
 2. Ելից 20-ում հատվածն ունի երբայերեն «կիրք» տերմինը, որը նշանակում է «ուժեղ փափագ տիրելու», սակայն 2 Օրին. 5-ում կա երկրորդ իմաստը «ցանկություն, փափագ» ինչպես նաև «կիրք»: «Փափագ» խոսում է ցանկության մասին, որը կապված է մի գործողության հետ՝ ցանկացած օբյեկտը ձեռք բերելու համար, բայց «ցանկություն» ավելի կենտրոնանում է միայն կեցվածքի վրա:
 3. Նաև, Ելից 20-ը, գրված Իսրայելի զավակների համար, անապատում թափառելու ժամանակաշրջանում, չի հիշատակում «դաշտ» անունը, որպես ունեցվածք, իսկ 2 Օրին. 5-ում նույն պատվերն է տալիս բնակվող, նստակյաց ժողովրդին Խոստացյալ Երկրում:
- Բ. «Ցանկանալ» տերմինը չեզոք է: Այն կարող է վերաբերվել լավ բաներ ցանկանալուն (հմմտ. Սաղ. 19:10; I Կոր. 12:31):
- Գ. Միայն, անվայել ցանկությունը արմատական պատճառ է սատանայի, Ադամի ու Եվայի և մեր բոլոր համար: Հռ. 7:7-8-ում Պողոսը խոսում է իր անձնական պայքարը ցանկանալու հետ: Ցանկանալը հիմնականում անբավարարվածություն և Աստծո հազաժության և խնամքի վստահության պակաս է:
- Դ. Նոր կտակարանում կան մի շարք հատվածներ, որ վերաբերում են ցանկանալու.
1. Մարդու խնդիրը անբավարարվածությունն ու ազահությունն է (հմմտ. Գուկ. 12:15; I Տիմ. 6:8-10):
 2. Ցանկանալը տեղ էր գտել Հիսուսի թվարկած պիղծ, անբարոյական մեղքերի ցանկում (հմմտ. Մարկ. 7:17-23; I Կոր. 5:10; Եփ. 5:5; Կող. 3:5):

III. ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ա. Վավաշոտ, կրքոտ ազահության և անբավարարվածության կամ լուծումը դա
1. Մերն է—Հռ. 13:8-10

2. Բավարարվածությունը, գոհությունը—Եբր. 14:5; Փիլ. 4:11-13 (և բաժնեկցելը, Փիլ. 4:14)
Բ. Պատվիրանն ասում է «կանգ առ», բայց միայն Քրիստոսը տվեց մեզ միջոց, որի օգնությամբ կարող ենք կանգ առնել: Նրա մեջ լինելով միայն կարող ենք ինչ որ չափով կառավարել մեր մտքերը:

Գ. Աստված գիտի մեր սրտերն ու մտքերը

1. I Մնացորդաց 28:9
2. Առակաց 20:27
3. Սաղմոս 139:1,23
4. Երեմիա 17:10
5. Հռոմեացիս 8:27
6. Հայտնություն 2:23

Դ. Իրերը կամ առարկաները ինքնին չար չեն, բայց երբ նրանք դառնում են նախապատվություն, այդ ժամ դառնում են մեղք: Իրերը առաջնային կամ հավիտենական չեն, իսկ մարդիկ, որ ստեղծված են Աստծո պատկերով՝ հավիտենական են: Կրքոտ ցանկությունը ազդում է Ուխտի հավատացյալ համայնքի վրա գաղտնի և կործանարար կերպով:

Քննարկող հարցեր

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում կրքոտ ցանկությունը:
2. Ինչպե՞ս է ժամանակակից մարդը ցուցաբերում կրքոտ ցանկություն:
3. Մեր մտքերը մեղավո՞ր են:
4. Ինչու՞ քրիստոնեական կյանքում մտքերին այդքան մեծ նշանակություն են տալիս:
5. Ինչու՞ է Ելից 20:17-ի պատվիրանը որոշ չափով տարբերվում 2 Օրին. 5:21-ից:

«Վասն զի այն» Սա քաղվածք է Տաս Պատվիրաններից կամ Դեկալոգից: Այս ցանկի հերթականությունը Տասը Պատվիրանների երկրորդ կեսը համապատասխանում է հունարեն ձեռագիր B-ին, որը կոչվում է Վատիկանյան: Այն թեթևակի տարբերվում է Մագորեթիկ եբրայերեն տեքստից Ելից 20 և 2 Օրին. 5: Դեկալոգի երկրորդ կեսը առընչվում էր Իսրայելի հարաբերությանը միմյանց հետհիմնված ԵՀՈՎԱ-յի հետ ունեցած իրենց հարաբերության վրա:

«Եւ ուրիշ ինչ պատուիրանք էլ որ կայ» Այստեղ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ՊԱՅՍԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Կան ուրիշ պատվիրաններ էլ: Այս արտահայտության իմաստ այսպիսին էր « եթե կան ուրիշ պատվիրաններ Դեկալոգից դուրս»: Այլ կերպ ասած, սա ամփոփում է ամբողջ Մովսեսական Օրենքը կամ, հավանաբար, «օրենքը» լայն իմաստով:

Հունարեն ձեռագրային արվանդության մեջ կա որոշակի տարբերություն, թե Տասը Պատվիրաններից քանիսն են և ինչ հերթականությամբ են թվարկված: Հուդայականությունն ունի միայն մեկ տարբերակ: Կաթոլիկներն ու Բողոքականները նույնպես ունեն տարբեր թվարկումներ: Բայց այս տարբերությունները ոչ մի կերպ չեն ազդում տեքստի բովանդակության իմաստի վրա, որի ճշմարտությունը հաստատվում է տարբեր ձեռագրերի հսկայական քանակության հիման վրա:

«այս խօսքումն է բովանդակվում» Սա մեջբերում է Ղև. 19:18-ից: Այն մի քանի անգամ հանդիպում է Ավետարաններում (հմմտ. Մաթ. 5:43; 19:19; 22:39; Մարկ. 12:31 և Գուկ. 10:27): Հիսուսն այն կոչում է երկրորդ մեծ կամ ամենագլխավոր պատվիրանը: Սա նաև մեջբերված է Գաղ. 5:14 և Հակոբ. 2:8: Երբ մարդը սիրում է Աստծուն, ապա նա կսիրի այն, ինչ Աստված է սիրում- մարդը ստեղծված է Աստծո պատկերով:

«Քո ընկերը սիրիք քո անձի պէս» Հավատացյալները պետք է սիրեն միմյանց ինչպես Աստված է սիրում իրենց, մինչև նրանց սիրելն ու ընդունելը ուրիշներին: Համապատասխան ինքնասիրությունը

չար չէ: Այս բաժնի գլխավոր ճշմարտությունը հստակ է՝ սիրել ուրիշներին (հմմտ. հ. 10): Նրանք, ովքեր ճաշակել են Աստծո ինքնատվող և զոհաբերող սիրը, իրենք էլ կսիրեն ուրիշներին նույն կերպ: Սրանում է քրիստոսանմանության իմաստը (Աստծո վերականգնված պատկերը): Այս տեսակ սիրո ներկայության մեջ «օրենքի» կարիք չկա:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 13:11-14

¹¹Եւ այս արեք իմանալով ժամանակը. որ ժամ է արդէն քնիցն զարթնել. որովհետեւ հիմա մեզ անելի մօտ է փրկութիւնը՝ քան թէ այն ժամանակ՝ որ հաւատացինք:¹² Գիշերն անցաւ զնաց, եւ ցերեկը մօտեցել է. ուրեմն դէն զցենք խաւարի գործերը, եւ հագնենք լոյսի զէնքերը:¹³ Ինչպէս ցերեկումը՝ պարկեշտութեամբ ման գանք. ոչ թէ անառակութիւններով եւ արբեցութիւններով եւ խառն անկողիներով եւ պղծութիւններով, ոչ հակառակութիւնով եւ ոչ նախանձով:¹⁴ Բայց Տէր Յիսուս Քրիստոսին հագէք. եւ մարմնի համար խնամք մի տանիք դէպի ցանկութիւն:

NASB (UPDATED) TEXT: 13:11-14

¹¹**Do this, knowing the time, that it is already the hour for you to awaken from sleep; for now salvation is nearer to us than when we believed.** ¹²**The night is almost gone, and the day is near. Therefore let us lay aside the deeds of darkness and put on the armor of light.** ¹³**Let us behave properly as in the day, not in carousing and drunkenness, not in sexual promiscuity and sensuality, not in strife and jealousy.** ¹⁴**But put on the Lord Jesus Christ, and make no provision for the flesh in regard to its lusts.**

Արևելահայերեն «Եւ այս արեք»

Արևմտահայերեն « Եւ այսպէս ըրէք »

13:11

NASB “do this”

NKJV “and do this”

NRSV “Besides this”

TEV “You must do this”

NJB “Besides”

Սա մի ձև է հաջորդը (հհ. 11-14) նախորդին կապելու համար (հհ. 9-10): Խոսքը կատարող եղեք, և ոչ միայն լսողներ: Սերը գործի դրեք:

«Իմանալով ժամանակը» Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է: Ժամանակի այս տերմինը (*kairos*) օգտագործվում էր հատուկ ժամանակի համար, ոչ թե սովորական ժամանակագրության համար (*chronos*): Հավատացյալները պետք է ապրեն ամեն պահ Քրիստոսի վերադարձի լոյսի ներքո:

«որ ժամ է արդէն» Այս փոխաբերությունը, «ժամը» (հաճախ օգտագործվում է Հովհաննու Ավետարանում), վերաբերում է Աստծո փրկության ծրագրի մեջ գտնվող հատուկ պահին (նման է *kairos*) (հմմտ. 3:26; I Կոր. 7:29; 10:11; Հակ. 5:8; I Պետ. 4:7; II Պետ. 3:9-13; I Հովհ. 2:18; Հայտ. 1:3; 22:10): Այն նաև օգտագործվում է Հիսուսի թե՛ խաչելության և թե՛ վերադարձի համար:

«քնիցն» Այստեղ այս տերմինը օգտագործված է փոխաբերական իմաստով բարոյական և հոգևոր թուլության/անորոշության վերաբերյալ (հմմտ. Եփ. 5:8-14; I Թես. 5:6): Բառերն ունեն իմաստ տվյալ կոնտեքստում: Զգուշացեք կոնկրետ սահմանում տալուց: Բոլոր բառերն ունեն մի քանի հնարավոր իմաստներ (իմաստաբանական դաշտ):

«որովհետև հիմա մեզ անելի մօտ է փրկութիւնը» Փրկությունը սկզբնական արձագանքն է Աստծո կանչին և հետևողական գործընթաց: Տես հատուկ թեմա 10:13: Փրկությունը ամբողջական չի լինի մինչև որ հավատացյալները չունենան իրենց նոր մարմինները (հմմտ. I Հովհ. 3:2; I Թես. 4:13-18; Եբր. 9:28; I Պետ. 1:5): Աստվածաբանորեն սա կոչվում է «փառավորում» (Հռ. 8:30): Սա ամեն մի քրիստոնյայի սերնդի հույսն է՝ ակնկալելով, որ Տերը կվերադառնա իր կենդանության օրոք (հմմտ. Դուկ. 21:28): Պողոսը բացատրություն չէր (հմմտ. I Թես. 4:15):

«այն ժամանակ՝ որ հաւատացինք» Քրիստոնեությունը սկսվում է որոշումով (ակնթարթային արդարացում և սրբացում), բայց արդյունքում պետք է լինի աստվածահաճո կյանք (առաջընթացային սրբացում) և ավարտվում է քրիստոսանմանությամբ (փառավորում): մարդը պետք է ընդունի Աստծո առաջարկածը Քրիստոսում (հմմտ. Հովհ. 1:12; 3:16; Հռ. 10:9-13): Այս սկզբնական որոշումը չէ վերջը, այլ սկիզբն է համարվում:

13:12 «Գիշերն անցաւ գնաց» Սա վերաբերվում է ներկայիս չար ժամանակներին, որն արդեն կործանման և վերափոխման մեջ է գտնվում (հմմտ. I Կոր. 7:29-31; 10:11; Հակոբ. 5:8; Եփ. 5:8,14; I Հովհ. 4:7; II Հովհ. 2:17-18; Հայտ. 1:3; 22:10). Տես հատուկ թեմա 12:2.

□ **«ցերեկը մօտեցել է»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Սրանք վերջին օրերն են (հմմտ. Փիլ. 4:5; Հակոբ. 5:9): Հիսուսի մարմնացումից սկսած մենք գտնվում ենք վերջին օրերի մեջ: Դրանք կտևեն մինչև Նրա փառավոր վերադարձը: Բոլոր հավատացյալները, առաջին դարից սկսած, զարմացել են Քրիստոսի գալուստն այսքան երկար ձգձվելու համար: Ինչևէ, նոր դարը ծագեց Քրիստոսում:

«դէն զցենք. . հագնենք» Սրանք ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ՉԵԶՈՔ ՍԵՌ՝ ՍՏՈՐԱԳԱՍՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ են, որը տալիս է պատահականության տարր: Բառացի իմաստն այս է՝ « դուք ինքներդ հրաժարվեք. . հագեք մեկընդմիջտ կամ վճռական»: Թե Աստված և թե մարդը բաժին ունեն արդարացման (ապաշխարություն և հավատք) և սրբացման մեջ (բարեպաշտ կյանք ապրել): Այս հագուստի փոխաբերությունը հատուկ է Պողոսի գրվածքներին: Հավատացյալները պետք է հանեն իրենց գիշերային հագուստը և հագնեն իրենց պատերազմական զգեստը (հմմտ. Եփ. 4:22-25; Կող. 3:10,12,14): Մենք քրիստոնյա զինվորներ ենք պատրաստված ամենօրյա հոգևոր պատերազմի համար (հմմտ. Եփ. 6:10-18):

«լոյսի զէնքերը» Հավանական է սա ակնարկ է Ես. 59:17: Հավատացյալները պետք է վճռականորեն հագնեն սպառազինությունը և արդարության զենքերը (հմմտ. II Կոր. 6:7; 10:4; Եփ. 6: 11,13; I Թես. 5:8): Աստծո զրահները հասանելի են հավատացյալին, բայց նրանք պետք է (1) ճանաչեն դրանց կարիքը; (2) իմանան Աստծո հոգածությունը և ապահովվումը և (3) անձնապես և մտադրված կիրառեն դրանք իրենց առօրյայում՝ մտքում և կյանքում: Հոգևոր պատերազմն ամեն օր է:

13:13 «պարկեշտութեամբ ման գանք» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍՏՈՐԱԳԱՍՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, բառացիորեն նշանակում է «քայլել»: Սա երբայերեն իդիոմա էր, որն օգտագործվում էր ապրելաճը նկարագրելու համար: Պողոսն այն օգտագործում է ավելի քան 33 անգամ:

Այս համարում թվարկված մեղքերը բաժանված են երեք խմբի երկուական բառով: Տերմիններն ունեն մի քանի իմաստային համընկնումներ: Հնարավոր է, որ դրանք իրար հոմանիշներ են: Տես Հատուկ թեմա: Անբարոյականություն և առաքիներություն 1:28-32:

Այս տերմինները կարող են նաև արտահայտել այն լարվածությունը, որ կար հավատացյալ հրեաների և հեթանոսների միջև Հռոմի եկեղեցում: Նոր հեթանոս հավատացյալները հնարավոր է շարունակում էին (1) իրենց որոշ անբարոյական հեթանոս պաշտամունքի ձևերի գործածությունը կամ (2) գոռոզությամբ վարվել վերադարձախ հավատացյալ հրա առաջնորդների հետ, ովքեր վերջերս էին հեռացել Հռոմից Ներոնի հրովարտակի պատճառով, որը արգելում էր բոլոր հեթանոսական ծեսերը Հռոմում:

«ոչ թե անառակութիւններով եւ արբեցութիւններով» Սա վերաբերվում է սեռական անբարոյականությանը, որը կապված էր հարբեցողության հետ հեթանոս կրոնների ծեսերի հետ: Գաղ. 5:21-ում թվարկված մարմնի մեղքերի ցանկում, այս տերմինները նաև կողք կողքի են հանդես գալիս:

«խառն անկողիւններով եւ պղծութիւններով» Այս մեղքի գույգը համընկնում է նախորդ գույգին: Երկրորդ բառը հաճախ է օգտագործվում Նոր Կտակարանում (հմմտ. Մարկ. 7:22; II Կոր. 12:21; Գաղ. 5:19; Եփ. 4:19; I Պետ. 4:3; II Պետ. 2:7): Եթե առաջին գույգը կենտրոնանում է հարբեցողության վրա, ապա այս մեկը կենտրոնանում է սեռական անբարոյականության վրա, նույնիսկ անկառավարելի անկաշկանդություն ցանկասիրության հանդեպ:

«ոչ հակառակութիւնով եւ ոչ նախանձով» Այս խոսքերը վկայում են այն պայքարի, կռվի մասին, որ կա մարդկանց միջև (հմմտ. Գաղ. 5:20): Հնարավոր է սա առաջին երկու գույգերի անհարիր, ոչ ճիշտ վարվելակերպի արդյունքն է: Եթե սա ուղղված է քրիստոնյաներին, ապա (հմմտ. I Կոր. 3:3; Կող. 3:8), նրանք հեթանոս կրոնների գործածությունը պետք է դադարեցնեն իրենց նոր կյանքում: Ինչևէ, կոնտեստում այս համարը հակասում է քրիստոնեական ապրելակերպին, և այդ դեպքում, սա կարող է գոուշացոյիմ լինել:

13:14 «Տէր Յիսուս Քրիստոսին հագէք» Այս փոխաբերությունը վերաբերվում է Հիսուսի այն թագավորական հագուստներին, որ հիմա դրված են մեր ուսերին (դիրքային սրբացում): Որոշ գիտնականներ այս ակնարկը կապում են մկրտության հագուստի հետ: Հագուստի հետ կապված այս փոխաբերությունը առաջին անգամ հանդիպում է հ. 12-ում: Սա միջոց է, որը ցույց է տալիս հավատացյալների նոր դիրքը Քրիստոսում: Սա նաև ընդգծում է այն փաստը, որ հավատացյալները պետք է գործադրեն իրենց նոր ապրելակերպը (առաջընթաց սրբացում) քանի որ նրանք ունեն նոր դիրք Քրիստոսում (հմմտ. Եփ. 4:22,24; Կող. 3:8): Գաղ. 3:27-ում այս ճշմարտությունը արտահայտվում է որպես կարծիք կատարված փաստի շուրջ, որպես ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ; այստեղ այն արտահայտված է որպես ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ (ԱՕՐԻՍՏ ՉԵՉՈՔ ՍԵՌ), պատվեր:

Այս տարբերությունը ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ-ով դրույթի և ՀՐԱՍԱՅԱԿԱՆ-ի միջև նույն է ինչ մեր դիրքը Քրիստոսում և մեր ձգտումը այդ դիրքին հասնելու: Մենք «սրբեր» (holy ones) փրկության պահից սկսած, բայց մեզ մորդորված է «սուրբ» լինել: Սա աստվածաշնչյան պարադոքս է ամբողջական, կատարյալ և ձրի փրկության Քրիստոսում և փողի կանչը քրիստոսանման լինելն է:

«խնամք մի տանիք» Այս ձևը ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՉԵՉՈՔ ՍԵՌ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է ԺԽՏԱԿԱՆ ՍԱՆՆԻԿ-ով: Այս քերականական ձևը սովորաբար նշանակում է արդեն իսկ գործընթացի մեջ եղող գործողության դադար: Այստեղից կարելի է ենթադրել, որ Հռոմում, որոշ քրիստոնյաներ ապրում էին անբարոյական կյանքով: Հնարավոր է, որ դա պահպանվել էր իրենց հեթանոսական պաշտամունքներից:

Դժվար է բացատրել Նոր Կտակարանի ուսմունքները մարմնավոր քրիստոնայաների մասին: Նոր Կտակարանի հեղինակները մարդու վիճակը ներկայացնում են սև ու սպիտակով: Մարմնավոր

քրիստոնյան հակադիր վիճակում է ներկայանում: Սա մեր իրական կյանքն է «արդեն», բայց «դեռ ոչ»: Պողոսը մարդկանց բաժանում է երեք խմբի (I Կոր. 2:14-3:1)

1. մարդիկ (կորսված), 2:14
2. հոգևոր մարդիկ (փրկված), 3:1
3. մարմնավոր մարդիկ (մարմնավոր քրիստոնյաներ կամ մանուկ քրիստոնյաներ), 3:1.

«մարմնի համար ...դէպի ցանկութիւն» Պողոսը բավականին լավ գիտեր մեր ընկած, Ադամական բնության շարունակական վտանգը (հմմտ. Հռ. 7; Եփ. 2:3), սակայն Հիսուսը մեզ տալիս է զորություն և փափագ՝ ապրելու Աստծո համար (հմմտ. Հռ. 6): Եվ սա անավարտ պայքար է (հմմտ. 8:5-7; I Հովհ. 3:6-9):

Քննարկվող հարցեր

Սա սերտորության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա քողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչու՞ Պողոսի հայտարարությունը իշխանության մասին այդքան վճռորոշ/արմատական էր վաղ քրիստոնյաների համար:ians?
1. Արդյո՞ք քրիստոնյաները պետք է հնազանդվեն ամեն տեսակ իշխանությանը:
2. Արդյո՞ք քրիստոնյաները պետք է հնազանդվեն իշխանության ամեն օրինական պահանջներին:
4. Համար 1-ը սովորեցնու՞մ է, որ թագավորները «Աստծո օծյալ» կոչվելու իրավունք ունեն:
5. Արդյոք Պողոսը նոր աստվածաբանական հիմք է դնում, թե սա Հիսուսի խոսքերի նախադեպն է Մաթ. 22:21:
6. Թույլատրելի՞ է քրիստոնյայի համար երբևէ ցուցաբերել քաղաքացիական անհանգանդություն (հմմտ. Գործք 5:25-32):
7. Ինչպե՞ս է համար 4-ը առընչվում մահապատժի հետ:
8. Արդյո՞ք քրիստոնյայի խիղճը միշտ ճիշտ է (հմմտ. հ. 5):
9. Հիմնվելով 8-րդ համարի վրա, կարող ենք ասել, որ հավատացյալները չպետք է **credit cards** ունենան:
10. Համար 8-ը խոսում է քրիստոնյաների հանդեպ ունեցած մեր սիրո մասին թե՞ բոլոր մարդկանց:
11. Ինչու՞ է Պողոսն օգտագործում Գեկալոգ որպես դրդապատճառ Նոր Կտակարանի հավատացյալների համար:
12. Ինչու՞ է Պողոսը թվարկում այսպիսի սարսափելի մեղքեր կապված հավատացյալների հետ:
13. Ինչպե՞ս կարող է մարդը «հագնել Տեր Հիսուս Քրիստոսին»:

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 14**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Մի դատիր եղբորդ	Ազատության օրենքը	Սերը հարգում է ուրիշների վարանումները	Մի դատիր ուրիշներին	Բժախնդրության փոխարեն ողորմածություն
14:1-12	14:1-13	14:1-4	14:1-4	14:1-12
		14:5-6	14:5-12	
		14:7-9		
		14:10-12		
Եղբորդ համար գայթակղություն մի եղիր	Սիրո օրենքը		Ուրիշների ընկնելու պատճառ մի հանդիսացիր	
14:13-23		14:13-23	14:13-18	14:13-15
	14:14-23			
				14:16-21
			14:19-23	
				(14:22-15:6)
				14:22-23

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐՇՄԲՈՆՈՒՄՆԵՐ 1-12հհ.

- Ա. Այս գլուխը փորձում է պահել հավասարակշռությունը քրիստոնեական ազատության և պատասխանատվության հակասությունը: Գրական բաժինը հասնում է մինչև 15:13:
- Բ. Հավանական է, խնդիրը, որը արագացրեց այս գլխի գրվելուն, դա Հռոմի եկեղեցում տիրող հեթանոս և հրեա հավատացյալների միջև առաջացած լարվածությունն էր (կամ էլ այն իրավիճակն էր, որը Պողոսը հանդիպեց Կորնթոսում): Մինչև դարձի գալը հրեաները հակված էին օրինապաշտությանը, իսկ հեթանոսները՝ անբարոյականությանը: Հիշեք, որ այս գլուխը ուղղված է Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներին: Այս գլուխը ուղղված չէ մարմնավոր հավատացյալներին (հմմտ. I Կոր. 3:1): Ամենաբարձր շարժառիթը երկու խմբերին էլ վերագրված է: Վտանգավոր է, երբ երկու կողմերը գնում են ծայրահեղության: Այս քննարկումը չի հանդիսանում ոչ արտոնություն մանրախնդիր օրինականության ոչ էլ ցուցամոլական ծայրահեղ հայացքների:
- Գ. Հավատացյալները պետք է զգույշ լինեն, որ իրենց աստվածաբանությունը կամ էթիկան ուրիշ հավատացյալների համար չափանիշ չդարձնեն (հմմտ. II Կոր. 10:12): Հավատացյալները պետք է քայլեն իրենց ունեցած լույսի ներքո, բայց հասկանան, որ իրենց աստվածաբանությունը ինքնաբերաբար Աստծո աստվածաբանությունը չէ: Հավատացյալները դեռևս մեղքի ազդեցության տակ են: Մենք պետք է քաջալերենք, հորդորենք, առիթի դեպքում և փորձառության հիման վրա մեկս մյուսին սովորեցնենք Սուրբ Գրքից, սակայն միշտ սիրով: Մարդն ինչքան շատ է սովորում, այնքան ավելի շատ է հասկանում, որ ոչինչ չգիտի (հմմտ. I Կոր. 13:12):
- Դ. Աստծո առաջ ունեցած մեր կեցվածքով և դրդապատճառներով է գնահատվում մեր իրական վիճակ: Քրիստոնյաները կանգնելու են Քրիստոսի առաջ, դատվելու այն բանի համար, թե ինչպես ենք վարվել մեկս մյուսի հետ (հմմտ. հհ. 10,12 և II Կոր. 5:10):
- Ե. Մարտին Լյութերն ասել է, «Քրիստոնյան ամենաազատ մարդն է ամենի տերը, ոչ մեկից կախում չունեցող; և այդ նույն Քրիստոնյան ամենահնազանդ ծառան է բոլորի համար, բոլորին պարտական»: Աստվածաշնչյան ճշմարտությունը հաճախ ներկայացվում է ակնհայտ պարադոքս տեսքով:
- Զ. Այս դժվար, բայց շատ կարևոր թեմային է նվիրված ամբողջ գրական բաժինը Հռ. 14:1-15:13 և նաև I Կոր. 8-10 և Կող. 2:8-23:
- Է. Ինչևէ, պետք է նշել, որ ճշմարիտ հավատացյալների միջև եղած պլուրալիզմը այնքան էլ վատ չէ: Յուրաքանչյուր հավատացյալ ունի թե ուժեղ և թե թույլ կողմերը: Յուրաքանչյուր մարդ պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո, միշտ բաց լինի Հոգու և Աստվածաշնչի

համար էլ ավելի շատ լուսավորվելու համար: Հիմա, երբ մենք ամեն բան տեսնում ենք խավար հայելու միջով (I Կոր. 13:8-13) ամեն մեկս պարտավոր է մնանք սիրո (հ. 15) և խաղաղության մեջ (հհ. 17,19) որպեսզի մեկս մյուսով շինություն լինենք:

Ը. «Տկարներ» և «ուժեղներ» տերմինները, որը Պողոսն օգտագործում է մեզ մոտ ստեղծում են կանխակարծիք այս խմբերի մարդկանց մասին: Իհարկե սա Պողոսի մտադրությունը չէր: Երկու խմբերն էլ ճշմարիտ հավատացյալներ էին: Մենք չպետք է փորձենք ուրիշ քրիստոնեաներին մեզ նմանեցնենք: Մենք ընդունում ենք մեկս մյուսին Քրիստոսով:

Թ. Ընդհանուր եզրակացությունը կարող է ուրվագծվել այսպես

1. ընդունեք մեկը մյուսին, որովհետև Աստված ընդունում է մեզ Քրիստոսով (հմմտ. 14:1,3; 15:7);
2. մի դատեք իրար, որովհետև Քրիստոսն է մեր միակ Տերն ու Դատավորը (հմմտ. 14:3-12);
3. սերն ավելի կարևոր է քան անձնական ազատությունը (հմմտ. 14:13-23);
4. հետևեք Քրիստոսի օրինակին և հրաժարվեք ձեր իրավունքներից ուրիշների խրատի և լավի համար (հմմտ. 15:1-13):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 14:1-4

¹Բայց հաւատքի մեջ տկար լինողին ընդունեցէք առանց կարծիքների վերայ վիճելու: ²Մէկը հաւատում է՝ թէ ամեն բան կարող է ուտել. բայց տկարը բանջար է ուտում: ³Ուտողը չանարգէ չուտողին. եւ չուտողը չդատէ ուտողին. որովհետեւ Աստուած ընդունեց նորան. ⁴Դու ո՞վ ես՝ որ ուրիշի ծառային դատում ես. իր Տիրոջ համար է կանգնում կամ ընկնում. բայց կկանգնի, որովհետեւ Աստուած կարող է կանգնեցնել նորան:

NASB (UPDATED) TEXT: 14: 1-4

¹Now accept the one who is weak in faith, *but not for the purpose of passing judgment on his opinions.* ²One person has faith that he may eat all things, but he who is weak eats vegetables *only.* ³The one who eats is not to regard with contempt the one who does not eat, and the one who does not eat is not to judge the one who eats, for God has accepted him. ⁴Who are you to judge the servant of another? To his own master he stands or falls; and he will stand, for the Lord is able to make him stand.

14:1

NASB	“Now accept”
NKJV	“Receive”
NRSV, TEV	“Welcome”
NJB	“Give a welcome”

Արևելահայերեն «ընդունեցէք»

Արևմտահայերեն «ընդունեցէք»

Այստեղ օգտագործված է ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՉԵԶՈՔ ՍԵՌ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ (հմմտ. 15:1): Սա շարունակական հրաման է շեշտը ենթակայի վրա դրված: «Դու» ԴԵՐԱՆՈՒՆԸ

հունարենում գտնվում է ԲԱՅԻ մեջ, բայց այն հասկացվում է անզլերեն տարբերակով և վերաբերում է «ուժեղ» քրիստոնեաներին (հմմտ. 15:1): Սա նույնպես խոսում է Հռոմի եկեղեցում գոյություն ունեցող երկու խմբերի մասին: Սա վերաբերվել է կամ (1) տարածայնությունը հրեա և հեթանոս հավատացյալների միջև (հմմտ. 15:7-21) կամ էլ (2) տարբեր բնավորությունների տեր մարդկանց միջև: Այս ամբողջ կոնտեքստը խոսում է ճշմարիտ, անկեղծ հավատացյալների մասին, ոմանք ուժեղ, ոմանք էլ տկար իրենց հավատքի մեջ: Հավատքն այստեղ օգտագործված է ավետարանը հասկանալու իմաստով և նրա բացարձակ նոր և կյանքի կտրուկ փոփոխության գործողություններով:

- ☐
- NASB, NKJV** “the one who is weak in faith”
- NRSV, TEV** “those who are weak in faith”
- JB** “If a person’s faith is not strong enough”

Արևելահայերեն « հաւատքի մեջ տկար լինողին »
Արևմտահայերեն « Հաւատքի մեջ տկար եղողը »

Այս արտահայտության իմաստն ամրապնդվում է նրանով, որ այն գտնվում է հունարեն նախադասության սկզբում: Բառացիորեն հետևյալն է «հավատքի մեջ տկար»: ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԱՉԵՎԸ կենտրոնանում է այն փաստի վրա, որ խոսքը գնում է կյանքի ապրելակերպի բնութագրի մասին: Սա վերաբերվում է իրավաբանական մտածելակերպ/մտքի կերտվածքին: Չափից շատ բծախնդիր քրիստոնեա եղբոր մասին է նկարագրված այս գլխում երեք կերպերով (1) ուտելիքի արգելք (հմմտ. 14:2,6,21); (2) հատուկ մոտեցում որոշ օրերի նկատմամբ (հմմտ. 14:5-6); և (3) զինի օգտագործելու արգելք (հմմտ. 14:17,21): Նմանատիպ մարդու մասին նշված է Հռ. 15:1 և I Կոր. 8:9-13; 9:22: Չշտապենք ինքներս մեզ դասել ուժեղ կամ տկար քրիստոնեայի կարգին: Հաճախ հավատացյալները մի բնագավառում տկար են հանդես գալիս իսկ մեկ ուրիշում ուժեղ:

Պողոսի վերաբերմունքը այս բոլոր հարցերի նկատմամբ շատ է տարբերվում Գաղ. 4:9-10 և Կոր. 2:16-23: Բայց այս հատվածները արտացոլում են կեղծ վարդապետների կեցվածքն և ուսմունքները: Հռոմեացիներին ուղղված թղթում խոսվում է ճշմարիտ հավատացյալների մասին, ովքեր ունեն շատ նրբանկատ խիղճ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Այստեղ կա հակասություն: Կեղծ վարդապետները միշտ պարծենում էին իրենց հատուկ արժանիքներով և ուժով, դա անելով իրենց հատուկ ոճով, բայց Պողոսը գիտեր «տկարության» (*astheneō*): Ուշադրություն դարձրեք, թե որքան հաճախ են օգտագործված այս տերմինները (կամ դրանց տարբեր ձևերը) I և II Կորնթացիներին ուղղված թղթում;

Պարծենկոտություն

- I Կորնթացիս 1:29,31
- 3:21
- 4:7
- 5:6
- 9:15,16
- II Կորնթացիս 1:12,14
- 5:12 (2 անգամ)
- 7:4,14 (2 անգամ)
- 8:24
- 9:2,3

Տկարություն

- I Կորնթացիս 1:25,27
- 2:3
- 4:10
- 8:7,9,10,11,12
- 9:22
- 11:30
- 12:22
- 15:43
- II Կորնթացիս 10:10
- 11:21,29,30

10:8,13,15,16,17
11:12,16,17,18,30
12:1,5,6,9

12:5,9,10 (2 անգամ)
13:3,4(2 անգամ), 9

Տկարության գաղափարը Պողոսն օգտագործում է մի քանի տարբեր կերպերով.

1. Աստծո տկարը, I Կոր. 1:25
2. աշխարհի հիմար, I Կոր. 1:27
3. Պողոսի տկարությունն ու վախը, I Կոր. 2:3; 9:22; II Կոր. 11:29,30; 12:5
4. Պողոսն ու իր միսիոներական թիմը, I Կոր. 4:10; II Կոր. 11:21
5. տկար հավատացյալ (հմմտ. Հռ. 14:1-15:13), I Կոր. 8:7,9,10,11,12; 9:22
6. ֆիզիկական հիվանդություն, I Կոր. 11:30
7. մարդու մարմնի անդամներ, I Կոր. 12:22
8. ֆիզիկական մարմին, I Կոր. 15:43
9. Պողոսի ֆիզիկական ներկայությունը կամ նրա հռետորական հմտությունը, II Կոր. 10:10
10. Պողոսի տկարությունը ամրապնդվեց Աստծո գործունեով, II Կոր. 12:9,10; 13:4,9
11. Քրիստոսի պատգամը Պողոսի միջոցով, II Կոր. 13:3
12. Քրիստոսի ֆիզիկական մարմինը, II Կոր. 13:4



NASB	“but not for the purpose of passing judgment on his opinions”
NKJV	“but not to dispute over doubtful things”
NRSV	“but not for the purpose of quarreling over opinions”
TEV	“but do not argue with them about their personal opinions”
JB	“without starting an argument”

Արևելահայերեն « առանց կարծիքների վերայ վիճելու »
Արևմտահայերեն « ոչ թե տարակուսական որոշումներով »

Հավատացյալները պետք է ամբողջությամբ ընդունեն ուրիշ/մյուս հավատացյալներին , որոնց հետ տարաձայնություն ունեն, չփորձելով փոխել նրանց: Խղճի ազատությունը հենց սա է պահանջում որպես հաղորդակցության հիմք, և ոչ թե հարկադրված միօրինակություն/նիսանմանություն: Բոլոր հավատացյալները աճման գործընթացի մեջ են: Նրանք պետք է ժամանակ տան Սուրբ Հոգուն որ գործի և ձևավորի յուրաքանչյուրի մեջ հասունության աստիճանի հասցնելու համար, բայց նույնիսկ հոգևոր հասունության մեջ էլ ոչ ամեն ինչի մեջ բացարձակ համաձայն կլինեն իրար հետ:

14:2 Ուտելիքը, որի մասին խոսվում է այս համարի մեջ կրոնական նպատակ է հետապնդում և ոչ թե ֆիզիկական առողջությունը պահպանելու համար է հոգ անում: Ուտելիքի այս խնդիրը ծագում է երկու հնարավոր աղբյուրներից (1) հրեական ուտելիքի օրենքները (հմմտ. Գև. 11) կամ (2) կուռքերին զոհաբերած միսը (հմմտ. I Կոր. 8-10): Հիսուսը հստակ սովորեցնում էր, որ ուտելիքը չէ պղծում մարդուն (հմմտ. Մաթ. 15:10-20; Մարկ. 7:14-23): Այս ճշմարտությունը պարզաբանվում է Պետրոսի տեսիլքում Կոռնելիոսի այցելության հետ կապված Գործք10:

14:3 «Ուտողը չանարգէ չուտողին» «չանարգէ» արտահայտությունը հանդես է գալիս ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ezoutheneō բայի ԺԽՏԱԿԱՆ

ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է գործողության դադար, ընթացքի մեջ արդեն գտնվող գործողության դադար: «Անարգել/արհամարհել» բառացի նշանակում է «կարևորություն չտալ, ոչ լուրջ վերաբերվել», «բանի տեղ չդնել» կամ «համարել ոչինչ չարժեցող» (հմմտ. 14:10; Գուկ. 18:9; I Կոր. 6:4; 16:11; II Կոր. 10:10; Գաղ. 4:14; I Թեա. 5:20): Հավատացյալները պետք է զգուշանան ինքնաարդարացումից: Հավատքի մեջ գորավորը չպետք է դատապարտի հավատքով տկարին:

«չդատե՛» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ԺԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է գործողության դադար, ընթացքի մեջ արդեն գտնվող գործողության դադար: Հավատքի մեջ տկարը պետք է կանգնեցնի իր եղբայրների/քույրերի դատապարտությունը, ովքեր անձնական հավատարմության հետ կապված համաձայն չեն իր հետ:

«որովհետև Աստուած ընդունեց նորան» Այստեղ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՉԵԶՈՔ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Սա նույն տերմինը ինչ հ. 1-ում: Հավատացյալների համար մեկը մյուսին ընդունելու հիմքն այն է, որ Աստված Հիսուս Քրիստոսի միջոցով (15:7) ընդունել է նրանց: Կոնտեքստում հ.3 ուղակիորեն խոսում է չափից շատ բարեխիղճների մասին՝ հավատքի մեջ տկար քրիստոնեայի մասին:

14:4 «Գու ո՞վ ես» Հունարենում սա շատ արտահայտիչ/շեշտակի արտահայտություն է՝ ուղղված տկար եղբորը և քրոջը:

«ծառա» *oiketēs* տերմինը կազմված է *oikos* բառից, որը նշանակում է «տուն», ուստի խոսքը կամ տնային ծառայի կամ աղախնի, սպասավորի մասին է (հմմտ. Գուկ. 16:13; Գործք 10:7; Հն. 14:4; I Պետ. 2:18): Այդ իմաստով այն օգտագործված է Սեպտուագինդի մեջ (հմմտ. Ծննդ. 9:25; 27:37; 44:16,33; 50:18): Նոր Կտակարանում այն հաճախ չի օգտագործվում, ինչպես *doulos* (գերի, ծառա, աղախին) տերմինը, որով նաև կոչում էին տհային սպասավորներին կամ ծառաներին: Պողոսը փաստում է այն, որ յուրաքանչյուր հավատացյալ Քրիստոսի ծառան/սպասավորն է: Քրիստոսը հավատացյալների «տերն» է և միմիայն Նա կղեկավարի նրանց և հաշիվ կպահանջի իրենց գործերի և շարժառիթների համար (հմմտ. II Կոր. 5:10):

«իր Տիրոջ համար է կանգնում կամ ընկնում» Կոնտեքստում Պողոսն այս միտքը ուղղում է չափից շատ բարեխիղճ հավատացյալներին, բայց այս միտքը ակնհայտորեն վերաբերում է երկու խմբերին էլ: Լավ կլինի, որ հավատացյալները նախ և առաջ իրենց աչքի գերանը հանեն (հմմտ. Մաթ. 7:1-15):

«բայց կկանգնի, որովհետև Աստուած կարող է կանգնեցնել նորան» Սա հիանալի խոստում էր (հմմտ. 5:1-2; Հուդա24-25): Այն նաև խոսում է հավատացյալների համատեղ գործողությունների մասին (հմմտ. I Կոր. 15:1-2): Տես Հատուկ Թեմա: Կանգնել 5:2.

Հունարեն տարբեր ձեռագրերում հանդիպում են այս հատվածի զանազան տեսակները: NKJV քարգմանության մեջ, հիմնված D, F, G, 048 և D150 երկաթագիր ձեռագրերի վրա, ինչպես նաև Վուլգատում, նշված է «Աստված» բառը (*Theos*), սակայն MSS P⁴⁶, Ք, A, B, C, P ձեռագրերում գրված է «Տեր» բառը (*kurios*): UBS⁴ կազմողները ընդունում են «Տեր» տարբերակը, որպես հավաստի աղբյուր (A):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 14:5-9

⁵Մէկը օրն օրից աւելի է համարում, իսկ միւսն ամեն օր մէկ է համարում. ամեն մէկը թող իր միտքը հաճեցնէ: ⁶Օրին մտիկ անողը Տիրոջ համար է մտիկ անում. եւ օրին մտիկ չանողը, Տիրոջ համար չէ մտիկ անում. եւ ուտողը Տիրոջ համար է ուտում, որովհետեւ Աստուածանից գոհանում է. եւ չուտողը Տիրոջ համար չէ ուտում, եւ Աստուածանից գոհանում է: ⁷Որովհետեւ մեզանից ոչ ով ինքն իրան համար չէ ապրում, եւ ոչ ով ինքն իրան համար չէ մեռնում: ⁸Որովհետեւ եթէ ապրենք՝ Տիրոջ ենք ապրում, եւ եթէ մեռնենք՝ Տիրոջ ենք մեռնում. ուրեմն թէ ապրենք եւ թէ մեռնենք՝ Տիրոջն ենք: ⁹Վասնզի նոյն իսկ նորա համար էլ Քրիստոսը մեռաւ եւ կենդանացաւ՝ որ մեռելների եւ կենդանիների վերայ տիրէ:

NASB (UPDATED) TEXT: 14:5-9

⁵One person regards one day above another, another regards every day *alike*. Each person must be fully convinced in his own mind. ⁶He who observes the day, observes it for the Lord, and he who eats, does so for the Lord, for he gives thanks to God; and he who eats not, for the Lord he does not eat, and gives thanks to God. ⁷For not one of us lives for himself, and not one dies for himself; ⁸for if we live, we live for the Lord, or if we die, we die for the Lord; therefore whether we live or die, we are the Lord's. ⁹For to this end Christ died and lived again, that He might be Lord both of the dead and of the living.

14:5 «Մէկը օրն օրից աւելի է համարում» Որոշ մարդիկ հատուկ նշանակություն են տալիս օրացույցի օրերին և տարեթվերին՝ ելնելով իրենց կրոնական ըմբռնումներից(հմմտ. Գաղ. 4:10; Կող. 2:16-17): Բոլոր օրերը հավասարապես պատկանում են Աստծուն: Հատուկ օրեր չկան: Եվ չկան «աշխատիկ» և «հոգևոր» օրեր: Նրանք բոլորն էլ սուրբ են:

«ամեն մէկը թող իր միտքը հաճեցնէ» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ-ՀՐԱՍՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Այստեղ է գտնվում այս հարցերի խաղաղության բանալին: Նախ և առաջ հավատացյալները պետք է քննեն իրենց գործերը (հմմտ. հ. 23), և ոչ թե ուրիշների: Աստված չի ապրում իմ աստվածաբանական պատկերացման շրջանակներում: Իմ աստվածաբանությունը անպայման չէ, որ Աստծունը լինի:

14:6 «Տիրոջ համար է» Այս արտահայտությունը, որը ՏՐԱԿԱՆ ՀՈՒՈՎ-ով է, երեք անգամ օգտագործված է հ. 6 և երկու անգամ հ. 8: Յուրաքանչյուր որոշում, յուրաքանչյուր կյանքի ընտրություն ճշմարիտ հավատացյալների կողմից պետք է իրականացվի ինչպես «Տիրոջը, Տիրոջ համար» (հմմտ. Եփ. 6:7 և Կող. 3:23), և ոչ թե անձնական հետաքրքրություններից ելնելով:

14:7 «Որովհետեւ մեզանից ոչ ով ինքն իրան համար չէ ապրում» Ոչ մեկ քրիստոնեա անջատ կղզի չէ: Քրիստոնեաներն ապրում են, նախ և առաջ, Քրիստոսի համար (հմմտ. հ. 8): Հավատացյալների յուրաքանչյուր արարք, անպայման, ինչ որ ազդեցություն է ունենում մյուսների վրա: Չէ, որ նրանք մեծ հոգևոր ընտանիքի մասն են կազմում: Ուստի, նրանք պետք է սահմանափակեն իրենց անձնական ազատությունը մյուսների հանդեպ սեր ունենալով հանդերձ (հմմտ. I Կոր. 10:24,27-33): Նրանք պետք է թույլ տան, որ մյուսներն աճեն անձնական ազատության մեջ: Օրինապաշտությունը տանում է ինքնաարդարացման միանմանության, որը Աստծուց չէ: Հիսուսի ամենախիստ խոսքերն ու դատապարտություններն ուղղված էին փարիսեցիների ինքնաարդարացմանը:

14:8 «եթէ...եթէ» Սրանք երկու ԵՐՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ են, որը նշանակում է հնարավոր գործողություն ապագայում: Հավատացյալները ծառայում են

Տիրոջը ամեն ինչում և ամեն հնարավոր անկանխատեսելի համգամանքներում (հմմտ. Եփ. 6:7; Կող. 3:23):

14:9 « Քրիստոսը մեռաւ եւ կենդանացաւ՝ որ մեռելների եւ կենդանիների վերայ տիրէ» Այս տերմինները դասակարգված են անսովոր հերթականությամբ: Այսպիսի դասավորվածությունը կարող է արտացոլոր Քրիստոսի մահն ու հարությունը: Հիմա Նա է երկու թագավորությունների Գերիշխան Տէրը:

Սա ի հայտ է բերում աստվածաբանական պատճառը, թե ինչու քրիստոնեաները չպետք է ապրեն միայն իրենց համար, այլ նաև ուրիշ հավատացյալների համար: Իրենք իրենց սեփականությունը չեն, նրանք մեծ գնով են գնվել: Նրանք հիմա Հիսուսի ծառաներն են, Որը մեռավ նրանց մեղքերի համար, որ նրանք այլևս մեղքի ծառա չլինեն այլ Աստծո (հմմտ. Հռ. 6): Հավատացյալները պետք ընդօրինակեն Հիսուսի կյանքը, որը լի էր ուրիշներին ծառայելու սիրով, մեռնելով իրենց եսակենտրոն ցանկություններին (հմմտ. II Կոր. 5:14-15; Գաղ. 2:20; I Հովհ. 3:16):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 14:10-12

¹⁰Բայց դու ի՞նչու համար ես դատում քո եղբորը, կամ ի՞նչու ես քո եղբորն անարգում. որովհետեւ ամենս Քրիստոսի ատեանի առաջին պիտի կանգնենք: ¹¹Որովհետեւ գրուած է՝ Ես կենդանի եմ, ասում է Տէրը. որ ամեն ծունկ ինձ պիտի կրկնուի եւ ամեն լեզու խոստովան լինի Աստուծուն: ¹²Ուրեմն մեզանից ամեն մէկն իր անձի համար պիտի հաշի տայ Աստուծուն:

NASB (UPDATED) TEXT: 14:10-12

¹⁰**But you, why do you judge your brother? Or you again, why do you regard your brother with contempt? For we will all stand before the judgment seat of God.** ¹¹**For it is written, “AS I LIVE, SAYS THE LORD, EVERY KNEE SHALL BOW TO ME, AND EVERY TONGUE SHALL GIVE PRAISE TO GOD.”** ¹²**So then each one of us will give an account of himself to God.**

14:10 « Բայց դու » Այս բառը միտքը շեշտելու համար է:

h. 10-ի երկու հարցերը հհ. 1-12-ի հատվածի կենտրոնն են: Երկու խմբերը referred to in h. 3 are կրկին հակասում են: Մի խումբը «դատում է», իսկ մյուս խումբը «վարվում է արհամարհանքով»: Բայց այս երկու վերաբերմունքներն էլ անհամապատասխան են « ծառաներին»: Նրանց տերը՝ Հիսուս Քրիստոսը միակն է, որ ունի իրավունք «քննադատելու» կամ «վերևից նայելու/արհամարհելի»: Եթե հավատացյալները վարվում են դատավորի պես, դա նշանակում է, որ (1) նրանք անօրինականորեն գրավում են Աստծո տեղը և (2) նրանց գործողությունները նախապատրաստական և թերի բնույթ են կրում:

«որովհետեւ ամենս Քրիստոսի ատեանի առաջին պիտի կանգնենք» Այս նույն ճշմարտությունը արտահայտված է II Կոր. 5:10: Հավատացյալները պետք է բացատրեն Տիրոջը, թե ինչպես են վարվել միմյանց հետ: Հիսուսը կվարվի ինչպես աստվածային Դատավոր (հմմտ. Մաթ. 25:31-46):

NKJV թարգմանության մեջ ասվում է «Քրիստոսի ատյան»: Հունարեն ձեռագրերում, որի վրա հենվում է KJV թարգմանություն, դրանք վաղ հունարեն երկաթագիր ձեռագրերի ուղղված տարբերակներն են \aleph^2 , և C^2 : «Աստված» *Theos* բառը գտնվում է MSS \aleph , B, C, D, F և G ձեռագրերում: Շատ հավանական է, որ արտագրողները փոխել են հունարեն տեքստը, որպեսզի համաձայնեցնեն II Կոր. 5:10: Նաև հնարավոր է, որ արտագրողները փոխել են այս համարը,

որպեսզի հակադրեն Քրիստոսի այսպես կոչված «որդեգրության» գաղափարի վաղ սխալ տեսակետը: Սակայն բացառված չէ և այն, որ տեքստի մի քանի տարբերակներ արվել են նրա համար, որպեսզի հենց տեքստն ինքը դառնար ավելի ուղղափառ (հմմտ. Բարտ Գ. Երման «Ուղղափառ դավանանքի Սուրբ Գրքի աղավաղումը», (Bart D. Ehrman's *The Orthodox Corruption of Scripture*), հրատ. Oxford University Press, 1993, էջ. 90-91:

14:11 «Որովհետև գրուած է» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ/ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Այս արտահայտությունը մասնագիտացված իդիոմա էր, որը օգտագործվում էր նկարագրելու համար Հին Կտակարանի ներշնչված մեջբերումները: Սա ակնարկ է Ես. 45:23, որը նույնպես մեջբերված է Փիլ. 2:10-11:

« **Ես կենդանի եմ** » Սա երդման բանաձև է, որը բառախաղ է Աստծո Ուխտի անվան համար, ՅԱՀՎԵ: ՅԱՀՎԵ անունը կազմված է երբայերեն «լինել, գոյություն ունենալ» բայի ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՉԵՎ-ով (հմմտ. Ել. 3:14): Նա միակ հավիտենական կենդանի Աստվածն է: Ուստի, Նա երդվում է Իր իսկ գոյությամբ:

14:12 «Ուրեմն մեզանից ամեն մեկն իր անձի համար պիտի հաշի տայ Աստուծուն» Քրիստոնեաները պիտի կանգնեն Քրիստոսի ատյանի առջև (հմմտ. II Կոր. 5:10), և հաշիվ պիտի տան եղբայրներին քննադատելու համար: Որոշ վաղ հունարեն ձեռագրերում «Աստուծուն» բառը բաց է թողնված: Բայց կոնտեքստում դա ակնհայտ է: Շատ հնարավոր է, որ այս տարբերակը գրված է հատվածի հ. 10 ազդեցության տակ:

ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ 13-23հհ.

Ա. Քննարկումը, թե քրիստոնեաներն ինչպես պետք է վարվեն միմյանց հետ սկսվեց հհ. 1-12: Սա հիմնված է այն ճշմարտության վրա, որ նրանք պարտավոր են ամբողջությամբ ընդունել ամեն տեսակի քրիստոնեաներին, որովհետև Քրիստոսը, որը նրանց տերն ու դատավորն է, այս երկու խմբերին էլ ամբողջությամբ ընդունում է: Շատ հաճախ պատահում է, որ ինչ որ հոգևոր բաներ կարևոր են մի խմբի համար, ինչպիսիք են իրենց անցյալը, իրենց անձնական առանձնահատկությունները, իրենց ծնողները, իրենց անձնական նախապատվությունները, նրանց փորձառությունները և այլն բացարձակ էական չեն Աստծո համար:

Բ. Քննարկման այս երկրորդ բաժինը կապված քրիստոնեայի ազատության և պատասխանատվության հետ, թեման շարունակում է զարգացնել ուրիշ տեսանկյունից: Այս համարներում խոսվում է Քրիստոսով Աստծո հանդեպ ունեցած հավատացյալի սիրո մասին, որը մղում է նրան սիրել իրենից տարբերվող քրիստոնեա եղբայրներին: Ինչպես Հիսուսն Իր կյանքը դրեց հավատացյալների համար, այդպես էլ նրանք պետք է դնեն իրենց ազատությունը հանուն նրանց, ում համար որ Նա մեռավ: Սիրո վրա դրված այս շեշտը քրիստոնեայի կյանքի հիմնական շարժառիթն է, որը նաև երևում է 13:8-10, որտեղ խոսքը գնում է հավատացյալի և անհավատի միջև եղած հարաբերությունների մասին:

Գ. Ճշմարտությունն այն մասին, որ այս ֆիզիկական աշխարհում ամեն բան մաքուր է, մենք դժվարությամբ է ընդունվում որոշ քրիստոնեաների կողմից: Հաճախ նույնիսկ հավատացյալները մեղքի սխալը գցում են «իրերի կամ հանգամանքների» վրա, իրենք իրենց մեղադրելու փոխարեն: Պողոսը շարունակաբար հաստատում է, որ ամեն բան մաքուր է (հմմտ. 14:14,20; I Կոր. 6:12; 10:25-26; I Տիմ. 4:4; Տիտոս 1:15): Նրա հիմնավորմանը հետևում է Հիսուսի ուսմունքները ուտելիքի մասին Մարկ. 7:18-23: Գործք 10:15

օգտագործված է մաքուր և անմաքուր ուտելիքի պատկերը, որի միջոցով Աստված ցույց տվեց Պետրոս առաքյալին, որ Նա ընդունում է Կռռնելիոսին:

Դ. Այս բաժինը հիմնականում ուղղված է «հավատքի մեջ ուժեղ եղբորը»: Պողոսը համամիտ է, որ «բոլոր բաները մաքուր են» միտքը, դա միայն ճշմարտության կեսն է, և ավելացնում է, որ ոչ ամեն ինչ է շինում կամ խրատում Աստծո ընտանիքը (հմմտ. I Կոր. 6:12; 10:23): Ուժեղ եղբոր ազատությունը կարող է ուրիշ քրիստոնեա եղբայրներին հասցնել դատարկության և ուժասպառության: Հավատացյալներն իրենց եղբայրների պահպաններն են Քրիստոսի միջոցով և Քրիստոսի համար:

Ե. Շատ հետաքրքիր է, որ Պողոսը չի հաստատում կամ ենթադրություն անում այն մասին, որ «տկար եղբայրը» հոգևոր զարգացման գործընթացի մեջ է, որը նրան կհասցնի նրան այն վիճակին, երբ նա կդառնա «ուժեղ եղբայր»: Այս ամբողջ քննարկումը չի վերաբերվում շնորհքի մեջ աճելուն, այլ խոսվում է քրիստոնեաների միջև սիրո առաջնահերթության մասին, որոնք ունեն տարբեր հասկացողություններ այս կամ այն հարցի շուրջ: Հավատացյալների ներգրավվումը այս կամ այն խմբին պայմանավորված է անձնական առանձնահատկությունների, կրոնական գիտելիքների և անձնական փորձառությունների վրա ավելի, քան «ճիշտ» կամ «սխալի» վրա: Հավատացյալի առաջադրանքը չէ ուրիշներին փոխելը, այլ սիրել և հարգել նրանց: Բայց սա արդեն սրտի և ոչ թե մտքի: Աստված Իր Որդուն տվեց բոլոր մարդկանց համար, Նա սիրում և ընդունում է բոլորին հավասարապես:

ԲԱՈՒ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 14:13-23

¹³Այսուհետև այլևս իրար չդատենք. այլ ավելի այս դրեք ձեր մտքումը, որ եղբօր գլորում կամ գայթակղութիւն չդնէք: ¹⁴Գիտեմ եւ հաստատ իմանում եմ Տէր Յիսուսումը, որ ոչ մի բան պիղծ չէ ինքն իրանով. բացի ով որ մի բան պիղծ է համարում, նորա համար պիղծ է: ¹⁵Բայց եթէ կերակուրի պատճառով քո եղբայրը տրտմում է, դու այլ եւս նորա հետ սիրով չես վարվում, քո կերակուրովը մի կորցնիր նորան, որի համար Քրիստոսը մեռաւ: ¹⁶Արդ ձեր բարի բանը չչարախօսուի: ¹⁷Որովհետև Աստուծոյ արքայութիւնն ուտելիք եւ խմելիք չէ. այլ արդարութիւն եւ խաղաղութիւն եւ ուրախութիւն Սուրբ Հոգովը: ¹⁸Վասնզի նա որ ստրանցում Քրիստոսին ծառայում է, Աստուծուն հաճելի է, եւ մարդկանց գովելի: ¹⁹Ապա ուրեմն խաղաղութեան եւ միմեանց շինութեան բաների ետեւից գնանք: ²⁰Կերակուրի պատճառով մի քանդիր Աստուծոյ գործը. ամեն բան մաքուր է. բայց չար է այն մարդի համար՝ որ գայթակղութիւն տալով է ուտում: ²¹Լաւ է միս չուտել եւ զինի չխմել, եւ այն բանը չանել՝ որ նորանով քո եղբայրը գլորվում է կամ գայթակղում է կամ տկարանում է: ²²Դու հաւա՞տք ունիս. մեզ համար ունեցիր Աստուծոյ առաջին. երանի նորան՝ որ իր անձը չը դատապարտէ նորանով, որ ընդունում է: ²³Իսկ նա որ խղճմտանք է անում, եթէ ուտէ դատապարտուած է, որովհետև հաւատքից չէ. եւ ամեն ինչ որ հաւատքից չէ, մեղք է:

NASB (UPDATED) TEXT: 14:13-23

¹³Therefore let us not judge one another anymore, but rather determine this—not to put an obstacle or a stumbling block in a brother’s way. ¹⁴I know and am convinced in the Lord Jesus that nothing is unclean in itself; but to him who thinks anything to be unclean, to him it is unclean. ¹⁵For if because of food your brother is hurt, you are no longer walking according to love. Do not destroy with your food him for whom Christ died. ¹⁶Therefore do not let what is for you a good thing be spoken of as evil; ¹⁷for the kingdom of God is not eating and drinking, but righteousness and peace

and joy in the Holy Spirit. ¹⁸For he who in this way serves Christ is acceptable to God and approved by men. ¹⁹So then let us pursue the things which make for peace and the building up of one another. ²⁰Do not tear down the work of God for the sake of food. All things indeed are clean, but they are evil for the man who eats and gives offense. ²¹It is good not to eat meat or to drink wine, or to do anything by which your brother stumbles. ²²The faith which you have, have as your own conviction before God. Happy is he who does not condemn himself in what he approves. ²³But he who doubts is condemned if he eats, because *his eating is not from faith*; and whatever is not from faith is sin.

14:13 «Այսուհետեւ այլեւս իրար չդատենք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ԺԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է արդեն գործընթացի մեջ գտնվող գործողության դադար, Սա զգուշացում չէ, այլ արգելք: Այն շատ նման է հ. 16-ին: «Գատել» տերմինը Պողոսն արդեն հինգ անգամ օգտագործել է հհ. 1-12 և հինա ևս չորս անգամ հհ. 13-23:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴՅՈ՞Ք ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԴԱՏԵՆ ՄԻՄՅԱՆՑ

Այս խնդրին պետք է նայել երկու կողմ ից: Նախ, հավատացյալներին կոչ է ուղղված չդատել միմյանց (հմմտ. Մաթ. 7:1-5; Բուկ. 6:37,42; Հն. 2:1-11; Հակոբոս 4:11-12): Բայց նույն ժամանակ հավատացյալները պետք է գնահատեն իրենց առաջնորդներին (հմմտ. Մաթ. 7:6,15-16; I Կոր. 14:29; I Թես. 5:21; I Տիմ. 3:1-13; և I Հովհ. 4:1-6):

Ընդհանուր գնահատման համար որոշ չափանիշներ կարող են օգտակար լինել

1. գնահատելու նպատակը հաստատելն է (հմմտ. I Հովհ. 4:1 - «փորձել» համոզվելու համար)
2. գնահատել պետք է խոնարհությամբ և հեզությամբ (հմմտ. Գաղ. 6:1)
3. գնահատումը չպետք է լինի անձնական նախապատվության հիմքի վրա (հմմտ. Հն. 14:1-23; I Կոր. 8:1-13; 10:23-33)
4. գնահատման ժամանակ պետք է ի հայտ բերել այն առաջնորդներին, ովքեր քննադատելու առիթ չեն տալիս եկեղեցու ներսում կամ համայնքում (հմմտ. I Տիմ. 3):

«որ եղբոր գործում կամ գայթակղություն չդնեք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ԱՆՈՐՈՇ ԺԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է գործողության դադար, ընթացքի մեջ արդեն գտնվող գործողության դադար: Նույն ճշմարտությունը հաստատվում է հ. 21 և I Կոր. 8:9:

«Խոչընդոտ» տերմինը նշանակում էր ճանապարհի վրա ընկած մի բան, որը մարդկանց զրորվելու պատճառ էր: «Գլորման քար» տերմինի բառացի իմաստն էր դա թակարդի գործածման մեխանիզմն է, որը դրվում էր շների կողմից հետապնդված կենդանու ճանապարհի վրա:

Քրիստոնեությունն ունի շատ կարևոր առանձնահատկություն, որն է համագործակցությունը: Մենք պետք է մեր եղբոր պահապանը, քաջալերողը և ընկերը լինենք: Հավատքը դա ընտանեկան գործ է:

14:14

- NASB "I know and am convinced in the Lord Jesus"
- NKJV "I know and am convinced by the Lord Jesus"
- NRSV "I know and am persuaded in the Lord Jesus"
- TEV "My union with the Lord Jesus makes me certain"
- JB "Now I am perfectly well aware, of course, and I speak for the Lord Jesus,"

Արևելահայերեն «Գիտեմ եւ հաստատ իմանում եմ Տէր Յիսուսումը »
 Արևմտահայերեն «Ասիկա գիտեմ ու համոզուած եմ Տէր Յիսուսով»

Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ/ԿԱՏԱՐՅԱԼ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ է *oida* բայի, որը օգտագործվել է ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ իմաստով ՎԱՂԱԿԱՏԱՐ/ԿԱՏԱՐՅԱԼ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ: Բառացի նշանակությունն է, «Ես շարունակում եմ իմանալ, և ես եղել եմ և շարունակում եմ լինել համոզված»: Ճշմարտության այս հաստատումը գտնվում է հհ. 5բ և 22-23: Հավատացյալների հոգևոր հարցերի իմացությունը գալիս է նրանց Հիսուսի հետ ունեցած հարաբերությունից Սուրբ Հոգու միջոցով: Նրանք պետք է քայլեն իրենց ունեցած լույսի ներքո:

« ոչ մի բան պիղծ չէ ինքն իրանով» Այս նույն ճշմարտությունը պատկերված է Գործք 10:9-16: Ոչ մի իր/ առարկա չար չէ, այլ մարդիկ են չար: Արարչագործության մեջ ոչինչ չար չէ և իր մեջ չար բան չէ պարունակում (հմմտ. հ. 20; Մարկ. 7:18-23; I Կոր. 10:25-26; I Տիմ. 4:4 և Տիտոս 1:15):

« բացի ով որ մի բան պիղծ է համարում, նորա համար պիղծ է» Խոսքը գնում է կրոնական մտքի անմաքրության մասին: Հավատացյալները պետք է գնահատեն իրենց արաքները իրենց խղճով (հմմտ. հհ. 5,22-23): Եթե նույնիսկ նրանց հետ սխալ են վարվել այս կամ այն առիթով, նրանք պետք է քայլեն Աստծո առաջ իրենց ունեցած լույսի ներքո: Նրանք նաև չպետք է դատեն ուրիշ հավատացյալներին իրենց պատկերացումներով, հատկապես եթե մտքերն այնքան էլ հստակ չեն (հմմտ. 14:1,3,4,10,13):

14:15 «Բայց եթե կերակուրի պատճառով քո եղբայրը տրտմում է» Այստեղ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ էլ իր գրական նպատակների համար: Սերը, և ոչ թե իրավունքները, պատասխանատվությունը, և ոչ թե ազատությունը - որոշում է մեր ապրելակերպը:

Սա կամ վերաբերվում է (1) հրեական ուտելիքի օրենքներին (հմմտ. Գլ. 11); կամ էլ (2) կուռքերին զոհաբերած մսին (հմմտ. I Կոր. 8-10): հ. 20 այնքան հստակ արտահայտում է այս ճշմարտությունը:

«դու այլ ես նորա հետ սիրով չես վարվում» Հաճախ սա կոչում են «ազատության օրենք» (հմմտ. Հակոբ. 1:25; 3:12), կամ «թագավորական օրենք» (հմմտ. Հակոբ. 2:8) կամ «Քրիստոսի օրենք» (հմմտ. Գաղ. 6:2): Նոր Կտակարանում կան թե պատասխանատվություններ և թե ուղեցույցներ:

□

NASB, NKJV “Do not destroy with your food him for whom Christ died”
NRSV “Do not let what you eat cause the ruin of one for whom Christ died”
TEV “Do not let the food that you eat ruin the person for whom Christ died!”
JB “You are certainly not free to eat what you like if that means the downfall of someone for whom Christ died.”

Արևելահայերեն « քո կերակուրովը մի կորցնիր նորան, որի համար Քրիստոսը մեռաւ »
Արևմտահայերեն « քու կերակուրովը մի կորսընցներ զանիկա՝ որուն համար Քրիստոս մեռաւ »

Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ԺԽՏԱԿԱՆ ՍԱՄՆԻԿՈՎ, որը հաճախ տալիս է գործողության դադար տալու իմաստ, որն արդեն գտնվում էր գործընթացի մեջ: Սա շատ խիստ արտահայտություն է: Որոշ քրիստոնեաների ազատությունը չպետք է ուրիշ

քրիստոնեաների կործանման պատճառը դառնա: Սա չի վերաբերվում փրկությունը կորցնելուն, այլ խաղաղության, վստահության և արդյունավետ ծառայության կորստի մասին է:

«Կործանել» տերմինը հունարենում *lupeō* բառն է, որը նշանակում է «տխրություն, սուգ կամ ցավ պատճառել» (նույնը նաև LXX-ում): Պողոսն օգտագործում է այս բառը հիմնականում II Կորնթացիների թղթում (հմմտ. 2:2,4,5; 6:10; 7:8,9,11): Թարգամանությունը որպես «կործանել» չափից շատ խիստ է: Սա չի վերաբերում փրկությունը կորցնելուն, այլ երբ անարգվում են ինչ որ մեկի անձնական համոզմունքները՝ Սուրբ Հոգին հանդիմանում է: Եթե հավատացյալը չի վարվում իր հավատքին համապատասխան, ապա մեղք է գործում (հմմտ. հ. 23):

14:16

- NASB** “do not let what is for you a good thing be spoken of as evil”
- NKJV, NRSV** “do not let your good be spoken of as evil”
- TEV** “do not let what you regard as good get a bad name”
- JB** “you must not compromise your privilege”

Արևելահայերեն « ձեր բարի բանը չչարախօսուի »
Արևմտահայերեն « ձեր բարին չար խօսքերու նշուակ չըլլայ »

Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ԺԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է գործողության դադար, ընթացքի մեջ արդեն գտնվող գործողության դադար: Ազատությունը շատ հեշտությամբ կարող է վերածվել այն բանի, որ ամեն ինչ թույլատրելի է:

Այս համարում «բարին» վերաբերում է ուժեղ եղբոր արարքներին: Եթե ուժեղ քրիստոնեան իր ազատության հիման վրա վարվում է այնպես, որ բացասաբար է ազդում տկար հավատացյալների վրա և հոգևորապես վնասում նրանց, ապա « բարին» նրանց համար փոխվում է չարի:

Թվում է, որ այս համարով շեշտը փոխվում է քրիստոնեաների վարվելակերպը միմյանց հետ հարաբերություններից, այն բանի վրա, թե ինչպես դա կարող է ազդել անհավատների վրա (հմմտ. հ. 18բ): Այստեղ օգտագործված ԲԱՅԸ կազմված է «հայիություն» բառից (խոսակցական լեզվում), որը սովորաբար օգտագործվում է անհավատների հետ կապված:

14:17 «Աստուծոյ արքայութիւնն» Սա միակ դեպքն է, որ օգտագործվում է այս արտահայտությունը Հռոմեացիների թղթում: Հիտուսը շատ հաճախ խոսեց այս թեմայի մասին: Աստծո թագավորությունը իրականություն է այստեղ և հիմա, և միառժամանակ դրա վերջնական իրականացումն ապագայում է լինելու (հմմտ. Մաթ. 6:10):

Քրիստոնեայի համատեղ կյանքը Քրիստոսի մարմնում ավելի թանկ է, քան անձնական ազատությունը: Տես Հատուկ Թեմա ներքևում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հին Կտակարանում ՅԵՀՈՎԱՅԻ մասին մտածում էին, որպես Իսրայելի Թագավոր (հմմտ. I Թագ. 8:7; Սաղ. 10:16; 24:7-9; 29:10; 44:4; 89:18; 95:3; Ես. 43:15; 4:4,6) և Մեսիային, որպես իդեալական թագավոր (հմմտ. Սաղ. 2:6): Բեթլեհեմում Հիսուսի ծնունդը (6-4 Ք.Ա.) Աստծո թագավորությունը մտավ մարդկության պատմության մեջ՝ նոր գործությունով և փրկությունով (նոր ուխտ, հմմտ. Եր. 31:31-34; Եզ. 36:27-36): Հովհաննես Սկրտիչը հռչակեց թագավորության մոտ լինելը (հմմտ. Մաթ. 3:2; Մարկ. 1:15): Հիտուսը հստակ սովորեցրեց, որ թագավորություն գտնվում է Իր մեջ և Իր ուսմունքների մեջ (հմմտ. Մաթ. 4:17,23; 9:35; 10:7; 11:11-12; 12:28;16:19; Մարկ. 12:34; Գուկ. 10:9,11; 11:20; 12:31-32; 16:16; 17:21): Բայց և նաև Աստծո թագավորությունը ապագայում է (հմմտ. Մաթ. 16:28; 24:14; 26:29; Մարկ. 9:1; Գուկ. 21:31; 22:16,18):

Մարկոս և Գուկաս սինոպտիկ/նույնանման Ավետարաններում, զուգահեռ հատվածներում մենք հանդիպում ենք «Աստծո թագավորություն» արտահայտությունը: Հիսուսը հաճախ սովորեցրեց ներկա պահին մարդկանց սրտերում Աստծո թագավորության մասին, որը մի օր պետք է հաստատվի ամբողջ երկրում: Սա արտացոլված է Հիսուսի աղոթքում Մաթ. 6:10: Մաթևոսի Ավետարանը, որը գրվել է հրեաների համար, այս արտահայտության մեջ չկա Աստծո անունը (Երկնքի Արքայություն), իսկ քանի որ Մարկոս և Գուկաս Ավետարանները գրվել են հեթանոսների համար, օգտագործել են Աստծո անունը, որն ավելի ընդունված է եղել:

Այս բանալի արտահայտությունը շատ հաճախ հանդիպում է սինոպտիկ Ավետարաններում: Հիսուսի առաջին և վերջին քարոզները, և Իր առակներից շատերը առընչվում են այս թեմային : Սա խոսում է Աստծո այն թագավորության մասին , որը հիմա մարդկանց սրտերում է: Չարմանալի է, որ Հովհաննեսն այս արտահայտությունն օգտագործումը ընդամենը երկու անգամ (և ոչ մի անգամ Հիսուսի առակներում): Հովհաննեսի Ավետարանում բանալի տեմինը և փոխաբերությունը «հավիտենական կյանքն» է:

Այս լարվածության պատճառը Քրիստոսի երկու գալուստներն են: Հին Կտակարանը կենտրոնանում էր Աստծո Մեսիայի միայն մեկ գալուստյան վրա որպես ռազմավար, դատավոր, փառավոր գալուստ, բայց Նոր Կտակարանը ցույց է տալիս, որ Նա առաջին անգամ եկավ որպես Տառապող Ծառա Ես. 53 և հեզ թագավոր Չաք. 9:9: Հրեական երկու ժամանակաշրջանները, անօրենության շրջանը և արդարության նոր շրջանը մասամբ իրար ծածկում են, մասնակի կերպով համընկնում են: Հիմա Հիսուսը թագավորում է հավատացյալների սրտերում, բայց կգա օրը երբ Նա կթագավորի ամբողջ արարչագործության վրա: Նա կգա այնպես, ինչպես կանխագուշակված է Հին Կտակարանում: Հավատացյալներն ապրում են «արդեն» բայց «դեռ ոչ» վիճակում, կապված Աստծո թագավորության հետ (հմմտ. Գորդոն Ֆի և Դուգլաս Ստյուարտ, «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ ճոխությամբ» Gordon D. Fee and Douglas Stuart's *How to Read The Bible For All Its Worth*, էջ. 131-134):

«այլ արդարութիւն եւ խաղաղութիւն եւ ուրախութիւն Սուրբ Հոգովը» Սուրբ Հոգին է, որ այս հատկությունները տալիս է քրիստոնեաներին անհատապես և ամբողջ համայնքին: Սա Աստծո ընտանիքի առանձնահատկություններն են թե արտաքին և թե ներքին:

«Արդարություն» տերմինը այստեղ Պողոսն օգտագործում է հատուկ իմաստով: Տես հատուկ թեմա 5:1: Սովորաբար նա դա օգտագործում էր նկարագրելու համար վերագրված արդարությունը, իրավականորեն (դատական) Աստծո հռչակումը հավատացյալի ներումը և Քրիստոսի մեջ բնակվելը (հմմտ. 3:21-31; 4): Մեղավոր մարդիկ ոչ միայն սկսեցին արդար համարվել, այլ նրանք պետք է արդար դառնան: Դա միառժամանակ թե պարզ է և թե նպատակ, ՀԱՏԿԱՆԻՇ և ՀՐԱՄԱՆ, դիրք և նպատակին հասնելու միջոց, հավատքի գործ և հավատքի կյանք: Տես Հատուկ Թեմա 6:4.

14:18 Երբ հավատացյալները սահմանափակում են իրենց ազատությունը ի օգուտ տկար եղբայրների դա նշանակում է ծառայել Քրիստոսին: Չկա ավելի ուժեղ միջոց ապացուցելու մեր սերը Հիսուսի հանդեպ, քան սիրել, հոգալ և պաշտպանել նրան, ում համար Նա մեռավ:

«մարդկանց գովելի» Հնարավոր է այս խոսքերը հաստատում են այն, որ քրիստոնեական սեր ցուցաբերելով ուրիշների հանդեպ ծառայության և անհավատներին վկայելու դռներ են բացվում (հմմտ. հ. 16; II Կոր. 8:21; I Պետ. 2:12): Թե ինչպես ենք մենք վարվում միմյանց հետ հավատացյալ համայնքի ներսում հանդիսանում է շատ գորավոր վկայություն , կամ դրական, կամ բացասական:

14:19 «Ապա ուրեմն ետեւից գնանք» *diōkō* տերմինը Հին Կտակարանային իդիոմ է, որը հաճախ հանդիպում է Սեպտուագինդի մեջ և նաև Պողոսի գրվածքներում, նշանակում է «հետևել մեծ եռանդով» կամ «հատուկ ջանքեր գործադրել, ինչ որ մի բանի հասնելու համար»: Պողոսն

օգտագործում է այս բառը Հռ. 9:30,31; 12:13; և այստեղ «հետապնդել, ձգտել հասնելու» իմաստով, բայց 12:14 նրանց համար է, ովքեր հալածում են հավատացյալներին (հմմտ. I Կոր. 4:12; նույնիսկ իր մասին խոսելով, 15:9; II Կոր. 4:9; Գաղ. 1:13,23; Փիլ. 3:6):

Քերականական կառուցվածքը այստեղ կամ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ (MSS X, A, B, F, G, L & P ձեռագրեր) կամ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ (MSS C, D ձեռագրեր) օգտագործված ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ: UBS⁴ կազմողները տեքստում թողնում են երկրորդ տարբերակը, բայց գնահատում են այն «D» կատեգորիայով (մեծ դժվարությամբ):

Ուշադրություն դարձրեք այն բաների վրա, թե ինչին պետք է ձգտեն և ինչին պետք է հասնեն քրիստոնեաները

1. հյուրասիրություն, 12:13
2. ինչը բերում է խաղաղություն և միմյանց շինություն, 14:19
3. սեր, I Կոր. 14:1
4. քրատոսանմանություն, Փիլ. 3:12,14
5. ինչը բարի է մյուսների և միմյանց համար, I Թես. 5:15
6. արդարություն, բարեպաշտություն, հավատք, սեր, համբերություն և հեզություն, I Տիմ. 6:11
7. արդարություն, հավատք, սեր և խաղաղություն նրանց հետ, ովքեր Տիրոջ անունն են կանչում մաքուր սրտով, II Տիմ. 2:22

«խաղաղութան եւ միմեանց շինութեան բաների ետեւից գնանք» Ամեն բանում սա պետք է լինի հավատացյալի նպատակը (հմմտ. Սաղ. 34:14; Եբր. 12:14): Անձնական ազատությունն ու աստվածաբանական հասկացողությունը պետք է տանեն Քրիստոսի մարմնի կայունությանն ու աճմանը (հմմտ. 15:2; I Կոր. 6:12; 14:26; Եփ. 4:12). Տես հատուկ թեմա: Խրատել 15:2:

14:20 « մի քանդիր Աստուծոյ գործը» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ԺԵՏԱԿԱՆ ՍԱՄՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է գործողության դադար, ընթացքի մեջ արդեն գտնվող գործողության դադար: Սա բարդ ԲԱՅ է (*kata + luō*): Պողոսի գրվածքներում այն հանդիպում է ընդամենը երեք անգամ (հմմտ. II Կոր. 5:1 մահվան հետ կապված և Գաղ. 2:18 նույն իմաստն է ինչ այստեղ «կործանել, քանդել»): Այստեղ բառախաղ կա « շինություն լինել» հ. 19 և այս բառի, որը բառացիորեն նշանակում է «քանդել, տապալել»: Երկուսն էլ շինարարական փոխաբերություններ են:

Այս կոնտեքստում ինչպես հասկանալ «Աստծո գործը» բառը: Այն չի կարող վերաբերել հոգևոր հասունությանը, այլ Սուրբ Հոգու գործունեությանը «տկար» հավատացյալների կյանքում: Ոչ այս կոնտեքստում և ոչ էլ I Կոր. 8-10 Պողոսը չի խոսում այն մասին, որ հավատացյալների մի խումբը պետք է փոխի մյուս խմբին կամ իր փոխել նրանս իր պես դաժնել:

«ամեն բան մաքուր է» Տես ծանուցում հ. 14



NASB	“but they are evil for the man who eats and gives offense”
NKJV	“but it is evil for the man who eats with offense”
NRSV	“but it is wrong for you to make others fall by what you eat”
TEV	“but it is wrong to eat anything that will cause someone else to fall into sin”
JB	“but it becomes evil if by eating it you make somebody else fall away”

Արևելահայերեն « բայց չար է այն մարդի համար՝ որ գայթակղութիւն տալով է ուտում »
Արևմտահայերեն « միայն այն մարդուն զէջ է, որ ուրիշը կը գայթակղեցնէ»

Այս համարը այս գլխի կենտրոնական ճշմարտությունն է (հմմտ. I Կոր. 10:25-26; Տիտոս 1:15):

Այստեղ խոսքը գնում է կուռքերին զոհաբերած մսի մասին (հմմտ. I Կոր. 8-10): Միսը բարի կամ չար չէ, բայց եթե մի տկար եղբայր, որը մտածում է որ դա անպիտան է գործածման համար և տեսնում է, որ մի ուրիշ քրիստոնեա ուտում է այն և ինքը նույնպես ուտում է, ապա այդ ժամանակ ինչը բարոյապես չեզոք է դառնում է չար, որովհետև այն ոտնահարում է/պղծում է Աստծո կամքի իր անձնական գիտակցությունը:

Շատ անգլերեն լեզվոր թարգմանություններ այս արտահայտությունը կապում են «ուժեղ եղբոր» հետ այն իմաստով, որ երբ նա ուտում է նրա տկար եղբայրը գայթակղվում է: Նոր ամերիկյան Աստվածաշունչ (New American Bible) Կաթոլիկ թարգմանությունը առաջարկում է ուրիշ ընտրություն և այս խոսքերը կապում է «տկար եղբոր» հետ, թարգմանելով այն այսպես «բայց սա ճիշտ չէ, եթե մարդն ուտում է, երբ այդ ուտելիքը փորձություն/մեղք է իր խղճի համար»: Կոնտեքստում առաջին տարբերակն ավելի ընդունելի է, բայց երկիմաստությունը կարող է օգտակար լինել թե մեկին և թե մյուսին, որը հաստատում է հ. 22-23:

14:21 Այս խոսքերը ուղղված են «ուժեղ եղբոր»: Ինքնին այս տեքստը Աստվածաշնչում հանդիսանում է միակ հիմքը աստվածաբանական գաղափարի համար «ամբողջական ժուժկալություն» որոշակի ուտելիքներից կամ խմիչքներից: Ուժեղ քրիստոնեաները պետք է իրենք իրենց սահմանափակեն հանուն սիրո իրենց հոգևոր եղբայրների և քույրերի և անկեղծ փնտրողների (կորսված մարդկանց): Այս սահմանափակումների մեծ մասը կապված են մշակույթային, ռեզիոնալ և/կամ հարանվանային առանձնահատկությունների հետ:

Տվյալ տեքստում երկու անգամ օգտագործված է ԱՆՈՐՈՇ ՁԵՎ ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը նշանակում է « երբեք մի սկսիր այդ անել»: Ոմանք մեկնաբանել են այս ԱՕՐԻՍՏՆԵՐԸ որպես կիրառություն որոշակի առիթների (հմմտ. I Կոր. 8-10): Պարզ է, որ չի կարելի մարդուն արգելել ուտել և խմել:

14:22

- NASB** “The faith which you have, have as your own conviction before God. Happy is he who does not condemn himself in what he approves.”
- NKJV** “Do you have faith? Have it to yourself before God. Happy is he who does not condemn himself in what he approves.”
- NRSV** “The faith that you have, have as your own conviction before God. Blessed are those who have no reason to condemn themselves because of what they approve.”
- TEV** “Keep what you believe about this matter, then, between yourself and God. Happy are those who do not feel guilty when they do something they judge is right!”
- JB** “Hold on to your own belief, as between yourself and God—and consider the man fortunate who can make his decision without going against his conscience.”

Արևելահայերեն «Դու հաւատք ունիս. մեզ համար ունեցիր Աստուծոյ առաջին. երանի նորան՝ որ իր անձը չը դատապարտէ նորանով, որ ընդունում է:»

Արևմտահայերեն «Դուն հաւատք ունի՞ս. զանիկա քեզի պահէ Աստուծոյ առջեւ. երանի անոր որ իր անձը չի դատապարտեր անով, որ ինք կընդունի:»

Այս խոսքերը ևս մեկ անգամ հաստատում են, որ հավատացյալը պետք է ապրի Մուրբ Հոգու առաջնորդությամբ և Աստվածաշնչի լույսի ներքո (հմմտ. հ. 5): Նա պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո, բայց ոչ այնպես, որ վիրավորի իր հավատակից ընկերոջը: հ. 22 «ուժեղ եղբոր» մասին է, իսկ հ. 23 «տկար եղբոր»:

h. 22 սկիզբը որոշ չափով տարբերվում է տարբեր ձեռագրերում: Ոմանց մեջ հարցականի տեսքով է (NKJV) իսկ ոմանց մեջ հաստատական իմաստով է (NASB, NRSV, TEV և JB):

«որ ընդունում է» Տես հատուկ թեմա 2:18.

14:23 «Իսկ նա որ խղճմտանք է անում» Սա ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՉԵԶՈՔ ՍԵՈ: Խոսքը չափից շատ բծախնդիր քրիստոնեայի մասին է հ. 3:

«**դատապարտում է**» Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ/ԿԱՏԱՐՅԱԼ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՈՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, կազմված *kata + krinō*, և նշանակում է (1) «ցուցաբերել արժանի կշտաբանք համեմատած ինչ որ մի բանի հետ» (հմմտ. Հարոլդ Կ. Մոուլտոն, «*Հունարեն լեզվի վերլուծական բառարան*», Harold K. Moulton, *The analytical Greek Lexicon Revised*, էջ. 216) կամ (2) «ոչ թե դատապարտություն, այլ արժանի պատիժ» (հմմտ. Հռ. 5:16,18; 8:1 [հմմտ. Մոուլտոն և Միլլիգան, «*Հունարեն Նոր Կտակարանի բառարան*», Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek Testament*, էջ. 328]): Խոսքը մարդկային արաքի մասին է, գործած հակառակ իր խղճի և արդյունքում կրելով ցավ և տառապանք և նաև Սուրբ Հոգու հանդիմանությունը:

«**եթե ուտէ**» ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ

«**եւ ամեն ինչ որ հաւատքից չէ, մեղք է**» Աստվածաշնչյան երկիմաստ հատվածներում մեղքը խախտում/պղծում է մեր խիղճը և ոչ թե օրենքը: Մենք պետք է քայլենք մեր ունեցած լույսի ներքո և միշտ բաց լինենք, որ Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին էլ ավելի շատ մեզ լուսավորեն:

Աստծո կամքը հասկացած հավատացյալները պետք է գործերով ցույց տան: Հնարավոր է, որ հոգևորապես հասուն հավատացյալներն ունենան տարբեր կարծիքներ աստվածաշնչյան երկիմաստ մտքերի շուրջ և միառժամանակ համաձայնվել Աստծո կամքի հետ:

Որոշ հունարեն ձեռագրերում 16:25-26 օրհերգություն տեղադրված է 14-րդ գլխի վերջում: Իսկ որոշներում եկու տեղում էլ կան: Մի պայարիուսե ձեռագրում P⁴⁶, այս տեքստը ավարտում է գլուխ 15-ը: Հռոմեացիս թղթի հունարեն ձեռագրի ավանդույթի մեջ այս օրհներգությունն ունի վեց տարբեր տեղադրումներ: Այս հարցի բազմակողմանի քննարկումը գտնվում է Բրյուս Մ. Մեցգերի «*Հունարեն Նոր Կտակարանի տեքստային մեկնաբանություն*» գրքում , *A Textual Commentary of the Greek New Testament* by Bruce M. Metzger, հրատ. «United Bible Societies», էջ. 533-536: Ահա տվյալ տեսությունների համառոտ ամփոփումը; (1) Օրիգենը հաստատում էր, որ Հռոմում գտնվող հերետիկոս Մարիկոնը Հռոմեացիներին ուղղված թղթի վերջին երկու գլուխները հանել է: Սրանով բացատրվում է գլուխ 14 տեղադրված օրհներգությունը; (2) ուրիշ գիտնականներ ենթադրում են, որ Պողոսը սկզբում գրել է Հռոմեացիներին ուղղված թուղթը կազմված 1-14 գլուխներից Հռոմ ուղարկելու համար, իսկ ավելի ուշ տեսել է կարիքը այդ նույնը Եփեսոս ուղարկելու բայց այս անգամ 1-16 գլուխներով: Անձնական ողջունների երկար ցանկը (գլուխ 16) ցույց է տալիս Եփեսոսը և ոչ թե Հռոմը; (3) գլուխ 16 ողջունները հավատացյալների համար էին Հռոմի ճանապարհին, որովհետև Ակյուղասն ու Պրիսկիլան Եփեսոսում էին, և երբեք չի նշվում նրանց Հռոմ վերադառնալու մասին; և (4) օրհներգությունը չէր հանդիսանում բնագրի մաս և ավելի ուշ ավելացվել է արտագրողների կողմից ծիսական նպատակներով հրապարակային պաշտամունքների մեջ:

Մ. Ռ. Վինսենթի «Բառային Սերտողություն» գիրքը հետաքրքիր է, (M. R. Vincent, *Word Studies*, հատ. 2):

«Այս բոլոր տեսությունների դեմ համառորեն հանդես է գալիս այն փաստը, որ բոլոր հայտնի և մինչև մեր օրերը հասած Պողոսի ձեռագրերը (մոտ 300 հատ) ներկա պահին քննադատորեն ուսումնասիրված են, այդ թվում նաև բոլոր ամենակարևորները, և դրանք

ներկայացնում են բոլոր գլուխները ընդունված կապվածությամբ և հերթականությամբ, բացառությամբ օրհներգությունը (էջ. 750):

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Նկարագրեք «տկար» եղբոր: Արդյոք Պողոսն ի նկատի ունի հոգևորապես ոչ հասուն քրիստոնեայի:
2. Ի՞նչ կապ կա քրիստոնեական ազատության և քրիստոնեական պատասխանատվության միջև:
3. Արդյո՞ք բնության մեջ ամեն բան «մաքուր» է կամ բարոյապես չեզոք (հհ. 14, 20)
4. Ինչու՞ ուտելիքի հետ կապված խնդիրն այդքան կարևոր էր Կորնթոսում (հմմտ. I Կոր. 8, 10), հիշեք, որ Պողոսը Հռոմեացիներին ուղղված թուղթը գրել է Կորնթոսից:
5. Բացատրեք գիտության, ազատության և սիրո մեջ եղող կապը այս գլխում:
6. Ինչի՞ հիման վրա մենք պետք է կառուցենք փոխհարաբերություններ եկեղեցում:
7. Ինչի՞ հիման վրա ենք մենք իրականացնում մեր անձնական ընտրություններն ու գործողությունները:
8. Ինչպե՞ս են մեր արարքներն ազդում ուրիշների վրա: Ի՞նչ է դա մեզանից պահանջում:
9. Ինչպե՞ս ենք մենք որոշում, թե որն է ճիշտ քրիստոնեական էթիկան:
10. Հնարավոր է արդյոք, որ հասուն քրիստոնեաները իրար հետ տարաձայնություններ ունենան, և միևնույն ժամանակ ընդունված լինել Աստծո կողմից:

**ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՑԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 15**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Հաճեցրեք ձեր եղբայրակիցներին, և ոչ թե ձեզ,	Ուրիշների լուծը կրեք	Ուժեղները պետք է աջակցեն տկարներին	Հաճեցրեք ուրիշներին, և ոչ թե ինքներդ ձեզ	(14:22-15:6)
15:1-6	15:1-6	15:1-6	15:1-6	
Ավետարանը հեթանոսներին և հրեաներին նույնն է	Միասին փառավորեք Աստծուն		Ավետարանը հեթանոսներին	Միաբան լինելու կոչ
15:7-13	15:7-13	15:7-13	15:7-12	15:7-12
			15:13	15:13
Պողոսի միսիոներական առաջադրանքը	Երուսաղեմից Լյուրիկիա	Անձնական նոթեր	Պողոսի հիմքը այսպիսի համարձակությամբ գրելու համար	Վերջաբան
15:14-21	15:14-21	15:14-21	15:14-21	15:14-16
				15:17-21
Պողոսի Հռոմ այցելելու ծրագիրը	Հռոմ այցելելու ծրագիր		Պողոսի Հռոմ այցելելու ծրագիրը	Պողոսի ծրագրերը
15:22-29	15:22-33	15:22-29	15:22-29	15:22-29
15:30-33		15:30-33	15:30-33	15:30-33

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 թարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ և միայն մեկ թեմա: Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՐՏԵՔՍՏԻ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ 1-13հհ.

Ա. Քրիստոնեական ազատության և պատասխանատվության մասին քննարկումը շարունակվում է 15:1-13-ում սկսած 14-րդ գլխից:

- Բ. 14:1-15:13 ամբողջ փաստարկը կարող է արտահայտվել հետևյալ կերպ
1. ընդունեք մեկը մյուսին, որովհետև Աստված էլ Քրիստոսով մեզ է ընդունում (հմմտ. 14:1,3; 15:7)
 2. մի դատեք մեկը մյուսին, որովհետև Քրիստոսն է մեր միակ Տերն ու Գ-ատավորը (հմմտ. 14:3-12)
 3. սերը ավելի կարևոր է քան անձնական ազատությունը (հմմտ. 14:13-23)
 4. հետևեք Քրիստոսի օրինակին և ձեր իրավունքները դրեք ուրիշների շինության և բարիի համար (հմմտ. 15:1-13)

- Գ. 15:5-6 հհ. արտացոլված է 14:1-15:13 ամբողջ կոնտեքստի եռակի նպատակը
1. մեկը մյուսի հետ ներդաշնակության մեջ ապրեք
 2. ապրեք Քրիստոսի օրինակին հետևելով
 3. միաբան սրտերով և շուրթերով փառաբանեք Աստծուն

Դ. Այս նույն լարվածությունը անձնական ազատության և ընդհանրական պատասխանատվության միջև քննարկվում է նաև I Կոր. 8-10:

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 15:1-6

¹Մենք որ գորատր ենք՝ պետք է տկարների տկարութիւնը վեր առնենք, եւ միայն մեր անձերին հաճոյ չլինինք: ²Ապա մեզանից ամեն մէկը թող հաճոյ լինի ընկերին դէպի բարին՝ շինութեան համար: ³Որովհետեւ Քրիստոսն էլ ոչ թէ իր անձին հաճոյ եղաւ, այլ ինչպէս գրուած է, թէ Քեզ նախատողների նախատինքներն ինձ վերայ ընկան: ⁴Նորա համար ինչ որ գրուեցաւ՝ մեր սովորելու համար գրուեցաւ, որ համբերութեամբ եւ զրքերի մխիթարութեամբը յոյսն ունենանք: ⁵Եւ համբերութեան եւ մխիթարութեան Աստուածը տայ ձեզ միեւնոյն բանը խորհել իրար հետ Քրիստոսի Յիսուսի կամքի համեմատ: ⁶Որ միաբան մէկ բերանով փառաւորէք Աստուծուն, եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը:

NASB (UPDATED) TEXT: 15:1-6

¹Now we who are strong ought to bear the weaknesses of those without strength and not *just* please ourselves. ²Each of us is to please his neighbor for his good, to his edification. ³For even Christ did not please Himself; but as it is written, “THE REPROACHES OF THOSE WHO REPROACHED YOU FELL ON ME.” ⁴For whatever was written in earlier times was written for our instruction, so that through perseverance and the encouragement of the Scriptures we might have hope. ⁵Now may the God who gives perseverance and encouragement grant you to be of the same mind with one another according to Christ Jesus, ⁶so that with one accord you may with one voice glorify the God and Father of our Lord Jesus Christ

15:1

Արևելահայերեն «Մենք որ զօրաւոր ենք՝ պէտք է տկարների տկարութիւնը վեր առնենք»
Արևմտահայերեն «Մենք որ զօրաւոր ենք, պէտք է տկարներուն տկարութիւնը վերցնենք»

NASB “Now we who are strong ought to bear the weakness of those without strength”
NKJV “We then who are strong ought to bear with the scruples of the weak,”
NRSV “We who are strong ought to put up with the failing of the weak”
TEV “We who are strong in the faith ought to help the weak to carry their burdens”
JB “We who are strong have a duty to put up with the qualms of the weak”

Այս արտահայտության մեջ երկու անգամ օգտագործված է ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԳԵՐԲԱՅ, ՀՐԱՍԱՅԱԿԱՆ իմաստով: Ուժեղի և տկարի մասին հիշեցումը ցույց է տալիս, որ 15 գլուխում շարունակվում է թեմայի քննարկումը, որը սկսվել էր 14:1-ից: Ակնհայտ է, որ այստեղ արտացոլված է այն լարվածությունը, որը կար չոռմի եկեղեցու հավատացյալների, և բոլոր եկեղեցիների միջև, այն առումով, թե ինչպես են քրիստոնեաներն ապրում կյանքի այն բնագավառները, որոնց մասին Աստվածաշունչը լուռ է մնում կամ անորոշ պատասխան է տալիս: Պողոսը կրկին ինքն իրեն նույնացնում է «ուժեղ» խմբի հետ:

Ժամանակակից անգլիախոս ընթերցողների համար, պիտակավորել «ուժեղ» կամ «թույլ», նշանակում է կանխակարծիք ունենալ տվյալ մարդու մասին: Պողոսն այդպիսի մտադրություն չունի: Ուժեղները նրանք էին, ովքեր ազատագրվել էին կրոնական կյանքի ծիսակարգերից և կանոններից: Նրանց հարաբերությունն Աստծո հետ կախված չէր որոշակի առաջադրանքներ և ծեսեր կատարելուց կամ որոշակի կրոնական արգելքներին հետևում: Մյուս խումբի մեջ նույնպես մտնում են լիարժեք քրիստոնեաները և ընդունված Աստծո կողմից և ամբողջությամբ Նրան նվիրված: Սակայն, նրանք իրենց հավատքը դիտում էին իրենց անցյալի կրոնական գաղափարների փորձառություններից ելնելով: Հրեա հավատացյալները հակված էին պահելու Հին Ուխտի հուղայականությունը: Դարձի եկած հեթանոսները հակված էին պահել իրենց հին կրոնական (հեթանոս) գաղափարներից ու գործածություններից ոմանք: Բայց ուշադրություն դարձրեք, որ Պողոսը հավատացյալների մեջ մտած այս մտածելակերպը «մեղք» չի կոչում: Մեղք է դառնում սա այն ժամանակ, երբ նրանք իրենց խղճին հակառակ են կենում (հմմտ. հ. 23):

«Տկար» տերմինը (*adunates*, առանց ուժի, հմմտ. Հռ. 8:3) տարբերվում է *astheneō* տերմինից 14:1,21 (հմմտ. I Կոր. 8:7,10,11,12; 9:22), որը նույնպես նշանակում է առանց ուժի:

Այս տեքստն ակնարկում է, որ քրիստոնեաները ոչ մի դեպքում չպետք է մի կերպ, չուզենալով հանդուրժեն ուրիշ քրիստոնեաների, այլ պետք է սիրով հոգ տանեն նրանց մասին և միասին գործեն: «Կրել, տանել» տերմինը մաս օգտագործված էր Հիսուսի «խաչը կրելու» իմաստով Հովհ. 19:17 և Գուլյ. 14:27:

«Եւ միայն մեր անձերին հաճոյ չլինինք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ԺԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է գործողության դադար, ընթացքի մեջ արդեն գտնվող գործողության դադար: Եսասիրությունը հոգևոր անհասունության նշան է; հետևել Քրիստոսի օրինակին (հմմտ. հ. 3; Փիլ. 2:1-11) հասունության նշան է: Դարձյալ, այս խոսքերը հասցեագրված էին ուժեղներին (հմմտ. 14:1,14,16,21,27): Բայց սա չի նշանակում է, որ նրանք բոլորը կրում էին պատասխանատվություն եղբայրական հարաբերությունները պահելու համար: Տկարների մասին խոսում են 14:3, 20, 23; 15:5-6,7-ը:

15:2 «Ապա մեզանից ամեն մեկը թող հաճոյ լինի ընկերին» «Ընկեր» բառն այստեղ նշանակում է քրիստոնյա-եղբայր: Սա չի նշանակում, որ պետք է ինչ որ փոխզիջման գնալ սեփական համոզմունքների, այլ որ անորոշ կամ երկիմաստ հարցերի առումով չպնդես քո անձնական կարծիքներն ու ենթադրությունները: Քրիստոսի մարմնի միաբանությունն ու անն է առաջնահերթ և կարևոր, և ոչ թե անձնական ազատությունը (հմմտ. I Կոր. 9:19-23; 10:24-33; Եփ. 4:1-16):

Արևելահայերեն «շինութեան համար»
Արևմտահայերեն «շինութեան համար»

- ☐
- NASB** “for his edification”
- NKJV** “leading to edification”
- NRSV** “for the good purpose of building up the neighbor”
- TEV** “in order to build them up in the faith”
- JB** “help them to become stronger Christians”

Սա 14-րդ գլխի գլխավոր թեման է (հմմտ. 14:16,19): Սա նաև հոգևոր պարզակները ստուգելու միջոցներից մեկն է, որի մասին խոսվում է I Կոր. 10:23; 11:7; 14:26; Եփ. 4:29:

Այս կոնտեքստում այս բառերն ուղղված են ուժեղ հավատացյալին, որը սահմանափակում է իր ազատությունն այն բանի համար, որպեսզի սիրով օգնի իր եղբայրներին և քույրերին հավատքի մեջ աճելու համար: «Ջերոմի աստվածաշնչյան մեկնությունը» գրքում, հեղ. Ջոզեֆ Ա. Ֆիցմայեր և Ռայմոնդ Ե. Բրաուն [Joseph A. Fitzmyer and Raymond E. Brown, ed., *The Jerome Biblical Commentary*], հատ. 2, այս համարի վերաբերյալ կա հետաքրքիր մեկնաբանություն;

«Այս արտահայտությունը հաճախ վերցվում է «խրատել/շինություն նրան (ընկերոջը), վերաբերվելով ինչ- որ մեկի քրիստոնյա ընկերոջ անձնական զարգացմանը: Բայց հաշվի առնելով, որ Պողոսն իր նամակներում հաճախ օգտագործում է շինարարությանը վերաբերող փոխաբերություններ ընդհանուր իմաստով, այս արտահայտությունն էլ անկասկած ունի սոցիալական, ընդհանուր իմաստ (հմմտ. I Կոր. 14:12; Եփ. 4:12; Հռ. 14:19)» (էջ. 328):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Պողոսը հաճախ օգտագործում է այս տերմինը *oikodomeō* և դրա տարբեր ձևերը: Բառացիորեն նշանակում է «տուն շինել» (հմմտ. Մաթ. 7:24), բայց այն լայնորեն օգտագործվում է որպես փոխաբերություն.

1. Քրիստոսի մարմինը, եկեղեցի, I Կոր. 3:9; Եփ. 2:21; 4:16;
2. շինություն
 - ա. տկար եղբայրներին, Հռ. 15:1
 - բ. մտերիմների, Հռ. 15:2

- գ. մեկը մյուսին, Եփ. 4:29; I Թես. 5:11
- դ. սուրբերին ծառայության համար, Եփ. 4:11
- 3. մենք գորացնում և շինություն ենք տալիս
 - ա. սիրով, I Կոր. 8:1; Եփ. 4:16
 - բ. սահմանափակելով անձնական ազատությունը, I Կոր. 10:23-24
 - գ. խուսափելով ասեկոսներից և ենթադրություններից, I Տիմ. 1:4
 - դ. սահմանափակելով պաշտամունքին մասնակցողների ելույթները (երգիչներ, ուսուցիչներ, մարգարեներ, լեզուներով խոսացողներ և մեկնաբաններ), I Կոր. 14:3-4,12
- 4. ամեն բան պետք է շինության համար լինի
 - ա. Պողոսի իշխանությունն ու հեղինակությունը, II Կոր. 10:8; 12:19; 13:10
 - բ. ամփոփիչ պնդումները Հռ. 14:19 և I Կոր. 14:26

15:3 «Քրիստոսն էլ» Քրիստոսը մեզ համար օրինակ է: Այս ճշմարտությունը մաս ընդգծված է հ. 5; Փիլ. 2:1-11; I Պետ. 2:21; I Հովհ 3:16:

«ինչպես գրուած է» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, որը Հին Կտակարանի իղիմա է հանդիսանում: Սա մեջբերում է Սաղմոս 68:9 և 7: Վկայակոչելով Քրիստոսի օրինակին (Ինքն իրեն չհաճեցրեց, հմմտ. Փիլ. 2:5-8) իրումն Հին Կտակարանի մեջբերման, Պողոսն օգտագործում է երկու կարևոր հեղինակության աղբյուրները վաղ եկեղեցում (հմմտ. Նյունեն և Նիդա *«Մեկնաբանի տեղեկագիրք Պողոսի Հռոմեացիներին ուղղված նամակի վերաբերյալ»* Newman and Nida, *A Translator's Handbook on Paul's Letter to the Romans*, էջ. 271): Քրիստոսի ինքնամերժումը, երբ Նա Իր վրա կրեց ամբողջ աշխարհի մեղքը- սա օրինակ է մեզ համար (հմմտ. I Հովհ 3:16):

15:4 «Նորա համար ինչ որ գրուեցաւ՝ մեր սովորելու համար գրուեցաւ» Հին Կտակարանը մաս գրվել է Նոր Կտակարանի հավատացյալների համար (հմմտ. Հռ. 4:23-24; 15:4; I Կոր. 9:10; 10:6,11): Այն վերաբերվում/պատշաճ է նոր ուխտի հավատացյալներին (հմմտ. II Տիմ. 2:15; 3:16-17): Հին և Նոր Կտակարանների միջև կա հաջորդականություն բայց մաս անհաջորդականություն/ընդհատումներ:

«որ համբերութեամբ եւ գրքերի մխիթարութեամբը» Ուշադրություն դարձրեք այն բանին, թե ինչպես Աստծո Խոսքն ու հավատացյալների ապրելակերպը կապակցված են իրար հետ: Հավատքն ու գործնական կիրառությունը իրար հետ սերտ կապված են (հմմտ. հ. 5): Նրանք հանգեցնում են կյանքի, մահվան և Քրիստոսի վերադարձի խոստացյալ հույսի վստահությանը:

«յոյսն ունենանք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ, որը նշանակում է, որ մեր հույսը կախված է գործողություններից, որոնք նշված են 4-րդ համարում: Նոր Կտակարանում «հույս»-ը հաճախ վերաբերվում էր Երկրորդ Գալստյանը, երբ մեր փրկությունը կամբողջանա (հմմտ. 8:30; I Հովհ. 3:2): Այս հունարեն տերմինը, ի տարբերություն իրեն համապատասխան անգլերեն տերմինի, չունի անորոշության ոչ մի նշույլ: Երկրորդ Գալուստը հաստատ իրադարձություն է անորոշ ժամանակի տարրով:

Պողոսն օգտագործում է այս տերմինը հաճախ մի քանի տարբեր բայց իրար հետ կապված իմաստներով: Հաճախ այն համագործակցվում է հավատացյալի հավատքի իրականացումով/վախճանով: Սա կարող է արտահայտվել որպես փառք, հավիտենական կյանք, վերջնական փրկություն, Երկրորդ Գալուստ և այլն: Վախճանը հաստատ է, բայց ժամանակի տարրը ապագայում է և անհայտ: Հաճախ այն համագործակցվում է «հավատք» և «սեր» (հմմտ. I Կոր. 13:13; I Թես. 1:3; II Թես. 2:16): Ահա Պողոսի կողմից օգտագործված մի քանի նմուշներ

- 1. Երկրորդ Գալուստը, Գաղ. 5:5; Եփ. 1:18; 4:4; Տիտոս 2:13

2. Հիսուս մեր հույսը, I Տիմ. 1:1
3. հավատք Ավետարանի, Կող. 1:23; I Թես. 2:15
4. վերջնական փրկություն, Կող. 1:5; I Թես. 4:13; 5:8
5. Աստծո փառքը, Հն. 5:2, II Կոր. 3:12; Կող. 1:27
6. փրկության վստահություն, I Թես. 5:8
7. հավիտենական կյանք, Տիտոս 1:2; 3:7
8. Արարչագործության ազատագրումը, Հն. 8:20
9. Հավատք, Հն. 8:23-25, 15:4
10. Աստծո անունը, Հն. 15:13
11. Պողոսի փափագը հավատացյալների համար, II Կոր. 1:7

15:5 «Աստուածը տայ» Սա բացառիկ ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, որն արտահայտում է ցանկություն կամ աղոթք: Պողոսի աղոթքը հհ. 5-6, ուներ երկու խնդրանք (1) նույն միտքն ունենալ (հմմտ. 12:16; II Կոր. 13:11; Փիլ. 2:2) և (2) միաբան մեկ բերանով փառավորել (հմմտ. հհ. 6, 7,9):

«Եւ համբերութեան եւ մխիթարութեան Աստուածը» Սա փաստորեն Աստծո բնութագրող անունն է (հմմտ. 15:13; I Կոր. 1:3): Աստծո այս առանձնահատկությունները եկան հավատացյալներին Սուրբ Գրքերի միջոցով (հմմտ. հ. 4):

15:6 «Աստուծուն, եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը» Սա Աստծո Նոր Կտակարանային ամբողջական անունն է (հմմտ. II Կոր. 1:3; Եփ. 1:3; I Պետ. 1:3): Նա փիլիսոփայական անհրաժեշտության Աստված չէ, այլ հայտնության: Ուշադրություն դարձրեք Աստծո այս երկու անուններին Պողոսի աղոթքում հհ. 5-6 (1) համբերության և քաջալերանքի/մխիթարության Աստվածը; և (2) Աստված և մեր Տէր Հիսուս Քրիստոսի Հայրը: Տես հատուկ թեմա: Հայր 1:7.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 15:7-13

⁷Վասնորոյ իրար ընդունեցէք, ինչպէս Քրիստոս էլ մեզ ընդունեց Աստուծոյ փառքի համար: ⁸Բայց ասում են թէ Յիսուս Քրիստոսը թլփատութեան սպասաւոր եղաւ Աստուծոյ ճշմարտութեան համար, որ հայրերի խոստումները հաստատէ: ⁹Բայց հեթանոսները ողորմութեան համար փառաւորում են Աստուծուն, ինչպէս գրուած է թէ Սորա համար կգոհանամ քեզանից հեթանոսների մէջ, եւ քո անունին սաղմոս կասեն: ¹⁰ Եւ դարձեալ ասում է. Ուրախացէք, ով հեթանոսներ, նորա ժողովրդի հետ: ¹¹Եւ դարձեալ՝ Օրհնեցէք Տիրոջը, ամեն հեթանոսներ, եւ գովեցէք նորան, ամեն ժողովուրդներ: ¹²Եւ դարձեալ Եսայիան ասում է. Յեսսէի արմատը կլինի, եւ նա որ հեթանոսների համար իշխան կկանգնի, նորան յոյս կը դնեն հեթանոսները: ¹³Եւ յոյսի Աստուածը լեցնէ ձեզ ամեն ուրախութիւնով եւ խաղաղութիւնով, հաւատալու մէջ, որ յուսով աւելանաք Սուրբ Հոգու զորութիւնովը:

NASB (UPDATED) TEXT: 15:7-13

⁷Therefore, accept one another, just as Christ also accepted us to the glory of God. ⁸For I say that Christ has become a servant to the circumcision on behalf of the truth of God to confirm the promises *given* to the fathers, ⁹and for the Gentiles to glorify God for His mercy; as it is written, “THEREFORE I WILL GIVE PRAISE TO YOU AMONG THE GENTILES, AND I WILL SING TO YOUR NAME.” ¹⁰Again he says, “REJOICE, O GENTILES, WITH HIS PEOPLE.” ¹¹And again, “PRAISE THE LORD ALL YOU GENTILES, AND LET ALL THE PEOPLES PRAISE HIM.” ¹²Again Isaiah says, “THERE SHALL COME THE ROOT OF JESSE, AND HE WHO ARISES TO RULE OVER THE GENTILES, IN HIM SHALL THE GENTILES HOPE.” ¹³Now may the God of hope fill you with all joy and peace in believing, so that you will abound in hope by the power of the Holy Spirit.

Արևելահայերեն «իրար ընդունեցէք»
Արևմտահայերեն « մէկգմէկ ընդունեցէք »

15:7

- NASB, TEV** “accept one another”
NKJV “receive one another”
NRSV “welcome one another”
JB “treat each other in the same friendly way”

Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԻ ՉԵԶՈՔ ՍԵՌ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է: Հավատացյալները պետք է շարունակեն ընդունել միմյանց, որովհետև Քրիստոսն ընդունեց նրանց: Այս նույն ճշմարտությունը գտնվում է 14:1: Ինչևէ, այստեղ ներկայացնում է մի շարք հատվածներ Հին Կտակարանից, թե ինչպես է Աստված ընդունում հեթանոսներին (հմմտ. հհ. 9-12): Հնարավոր է, որ նրանք արտացոլել են լարվածությունը Հռոմի եկեղեցում գոյություն ունեցող: Քրիստոնեությունը բնութագրվում է հավատացյալների զոհաբերությամբ, ինքնատվող միմյանց հանդեպ հոգ տանելով (հմմտ. 1:12; 12:5,10,16; 13:8; 14:13,19; 15:5,7,14; 16:16):

«ինչպես Քրիստոս էլ մեզ ընդունեց» Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿԻ ՉԵԶՈՔ ՍԵՌ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է: Այս բառերում հավատացյալի գործողությունները ուրիշների հանդեպ շարժառիթը և մղիչ ուժը (հմմտ. 14:3): Գլուխ 14-ը կենտրոնանում էր (1) Քրիստոս որպես Տեր և Դատավոր, հհ. 1-12, և (2) Քրիստոս որպես մեր օրինակը ինքնազոհաբերող սեր, հհ. 13-23: Քրիստոսն ընդունեց մեզ, մենք էլ պետք է ընդունենք ուրիշներին:

«Աստուծոյ փառքի համար» Տես ծանուցում 3:23

15:8 **«Յիսուս Քրիստոսը թլփատութեան սպասատր եղաւ»** Հիսուսը Հին Կտակարանի մարգարեության Աստծո իրականացումն է (հմմտ. Մաթ. 15:24): Սա կարող էր լարվածություն առաջացնել Հռոմի եկեղեցում հավատացյալ հրեաների և հեթանոսների միջև:

Արևելահայերեն «Աստուծոյ ճշմարտութեան համար, որ հայրերի խոստումները հաստատէ»
Արևմտահայերեն «Աստուծոյ ճշմարտութիւնը, որպէս զի նախահայրերուն տրուած խոստումները հաստատէ»

□

- NASB** “on behalf of the truth of God to confirm the promises given to the fathers”
NKJV “for the truth of God, to confirm the promises made to the fathers”
NRSV “on behalf of the truth of God in order that he might confirm the promises given to the patriarchs”
TEV “on behalf of the Jews, to show that God is faithful, to make his promises to their ancestors come true”
JB “so that God could faithfully carry out the promises made to the patriarchs”

Հավանական է, սա վերաբերում է Աստծո Հին Կտակարանի ուխտի խոստումներին ուղղված Իսրայելին (հմմտ. 4:16): Ինչևէ, այն կարող էր վերաբերվել Աստծո խոստումներին բոլոր մարդկանց փրկելու համար (հմմտ. Ծննդ. 3:15, 12:3, Ելից 19:5-6; Ես. 2:2-4; 56:7; 66:18-24): Ավետարանի խորհուրդն այն է, որ Աստծո ծրագիրը միշտ եղել է հրեաների և հեթանոսների միավորումը Հիսուս Քրիստոսի միջոցով (հմմտ. Եփ. 2:11-3:13):

Նոր Կտակարանի պատգամը Հին Կտակարանի հույսերի իրականացումն է, ոչ թե ամբողջապես նոր բան: Քրիստոսի ամենամեծ առաքելությունն էր (1) կատարել Իսրայելի խոստացված հույսը և (2) դուռ բացել հեթանոսների համար (հմմտ. Հռ. 3:29-30; 9:30; 10:11-12,16-20; 11:25,32; 16:25; Եփ. 2:11-3:21): Քանի որ Իսրայելը թերացավ իր ավետարանչական առաքելության մեջ՝ հայտնելու Աստծուն և գրավելու հեթանոսներին առ հավատք, Հիսուսը զորացնում է նոր հոգևոր Իսրայելին (հմմտ. Գաղ. 6:16) իրականացնելու համար այս տիեզերական առաջադրանքը (հմմտ. Մաթ. 28:19-20; Հովհ. 3:16):

«**հաստատե՛ք**» Տես Հատուկ Թեմա 4:16.

15:9-12 Սա մի շարք մեջբերումներ է Հին Կտակարանից, ցույց տալու համար, որ հեթանոսները միշտ եղել են Աստծո ծրագրի մի մասը (հմմտ. 10:16-20): Սա մի շարք մեջբերումներ է Հին Կտակարանից Սաղ. 18:49 կամ II Թագ. 22:50; 2 Օրին. 32:43; Սաղ. 117:1; Ես. 11:1,10: Նկատեք, որ այս մեջբերումները ներկայացնում են հին եբրայերեն կանոնի բոլոր մասերը՝ Օրենք, Մարգարեներ և Գրվածքներ:

15:9 «ողորմութեան համար փառաւորում են Աստուծուն» Աստծո ողորմությունը աստվածաբանական բանալին է Հռոմեացիս թղթի նախասահմանության թեման հասկանալու (հմմտ. 9:15,16,18,23) և հեթանոսների ներգրավվումը փրկության ծրագրի մեջ (հմմտ. 11:30,31,32; 15:9): Աստծո ողորմությունն է, որ փրկեց Իսրայելին: Աստծո ողորմությունն է, որ փրկում է հավատացյալ հեթանոսներին: Փրկության մեխանիզմը մարդու գործը չէ (հմմտ. Հռ. 9), այլ Աստծո ողորմած, անփոփոխ կերպարը (հմմտ. Ելից 34:6; Նեեմ. 9:17; Սաղ. 103:8,4; Հովել 2:13) և Մեսիայի խոստումը (հմմտ. Ես. 11:1,10):

15:13 «Եւ յոյսի Աստուածը» Սա գրական բաժնի փակման օրհներգություն էր, որը սկսվեց 14:1: Սա մեկ ուրիշ հիանալի տիտղոսներից մեկն է Աստվածության համար —հույսի Աստվածը:

15:13 «լեցնէ ձեզ ամեն ուրախութիւնով եւ խաղաղութիւնով» Սա ԱՕՐԻՍՍ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, ցույց է տալիս Պողոսի աղոթքը Հռոմի հավատացյալների համար: Ուշադրություն դարձրեք «ամեն» բառի վրա (հմմտ. 5:1-2; 14:17):

Արևելահայերեն «հաւատալու մէջ»
Արևմտահայերեն «հաւատքին համաձայն»

☐
NASB, NKJV,
NRSV “in believing,”
TEV “by means of your faith in Him”
JB “in your faith”

Այս ձևը ԻՆՖԻՆԻՏԻՎ ԱՆՈՐՈՇ ԳԵՐԲԱՅ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ է: Սա արտահայտում է համբերության վստահություն Քրիստոսի վրա ունեցած շարունակական հավատքի միջոցով, Սուրբ Հոգու զորությունով՝ տալով յուրաքանչյուրին ուրախություն և խաղաղություն: Քրիստոսին հավատալը ոչ միայն սկզբնական արձագանքն է այլ համապատասխան ապրելակերպ:

«**որ յուսով աւելանաք**» Այստեղ ԻՆՖԻՆԻՏԻՎ ԱՆՈՐՈՇ ԳԵՐԲԱՅ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ է *perisseuō* բայի, որը հիմնականում նշանակում է «ավելի և ավելի քան»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՌԱՏ (PERISSEVO)

Պողոսը հաճախ է օգտագործում այս տերմինը,

1. Աստծո ճշմարտությունը ավելացավ Նրա փառքի համար, Հռ. 3:7
2. Ձրի շնորհքն ու պարգևը մեկ մարդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով ավելացավ, Հռ. 5:15
3. Հավատացյալները ավելանան հույսի մեջ, Հռ. 15:13
4. Հավատացյալները չեն դատապարտվում ուտելով կամ չուտելով որոշակի ուտելիքներ, I Կոր. 8:8
5. Հավատացյալները առավելանում են եկեղեցու շինության համար, I Կոր. 14:12
6. Հավատացյալները ավելանում են Տիրոջ գործի մեջ, I Կոր. 15:58
7. Հավատացյալները առատապես բաժնեկցում են Քրիստոսի տառապանքների և Քրիստոսի մխիթարության մեջ, II Կոր. 1:5
8. Արդարության պաշտոնը ավելանում է փառքով, II Կոր. 3:9
9. Հավատացյալների գոհությունը ավելանում է Աստծո փառքի համար, II Կոր. 4:15
10. Հավատացյալների ուրախության առավելությունը, II Կոր. 8:2
11. Հավատացյալները ավելանում են ամեն ինչում (հավատք, արտահայտվել, գիտություն, լրջություն, և սեր), նաև ընծայի մեջ Երուսաղեմի եկեղեցու համար, II Կոր. 8:7
12. Բոլոր շնորհքը ավելանում է հավատացյալների մեջ, II Կոր. 9:8
13. Հավատացյալների առատ գոհությունը առ Աստված, II Կոր. 9:12
14. Աստծո շնորհքի ճախությունը ավելիով հորդում է հավատացյալների վրա, Եփ. 1:8
15. Հավատացյալների սերը էլ ավելի և ավելի հարստանա, ավելանա, Փիլ. 1:9
16. Հավատացյալների վստահությունը Պողոսի հանդեպ ավելանում է Քրիստոսում, Փիլ. 1:26
17. Ունենալով ավելություն, առատություն Փիլ. 4:12,18
18. Հավատացյալները աճելով գոհությունով, Կող. 2:7
19. Հավատացյալները աճում և ավելանում են սիրով միմյանց հանդեպ, I Թես. 3:12
20. Էլ ավելի առաջանաք, ավելանաք աստվածահաճո ապրելակերպի մեջ, I Թես. 4:1
21. Ավելանաք եղբայրասիրության մեջ, I Թես. 4:10

Պողոսի հասկացողությունը Քրիստոսում Աստծո շնորհքի «էլ ավելի» էր, նույնպես հավատացյալները իրենց առօրյայում պետք է քայլեն այս « էլ ավելի» շնորհքի և սիրո մեջ:

□ **«Սուրբ Հոգու գործունակությունը»** Սուրբ Հոգին Երրորդության մեկ անձն է, որ գործում է այս նոր դարում: Գոյություն ունեցող ոչ մի բան այս աշխարհում առանց Իրեն չի կատարվում (հմմտ. 15:19; I Կոր. 2:4; I Թես. 1:5):

ՀԱՐՑԵՐ ԸՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Սա սերտողության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա բողոնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են, որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ո՞րն է Հռոմեացիս 14:1-15:13-ի կենտրոնական ճշմարտությունը:
2. Ի՞նչու է Պողոսը մեջբերում Հին Կտակարանի հատվածները 9-12 համարներում: Ի՞նչ մեծ ճշմարտություն են նրանք սովորեցնում:

ԿՈՐՏԵՔՍԻ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ 14-33հհ.

- Ա. Այս նամակի վերջաբանը շատ ձևերով նման է բացմանը, 1:8-15
 - 1. գովաբանում է նրանց հավատքը (հմմտ. 1:8)
 - 2. պաշտպանում է հեթանոսներին ավետարանելու Պողոսի առաքյալ լինելու իրավունքները (հմմտ. 1:13,14)
 - 3. պնդում է նրանց այցելելու Պողոսի փափագը (հմմտ. 1:10,13)
 - 4. արտահայտում է Պողոսի ցանկությունը, որ նրանք օգնեն իրեն ուրիշ շրջաններ այցելելու ժամանակ, որոնք դեռ ավետարանված չեն (Իսապանիա, հմմտ. 1:13)

- Բ. Եվ նորից, այստեղ կա ակնարկ այն լարվածության մասին, որ կար Հռոմի եկեղեցում հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև, որը գոյություն ունի ամբողջ նամակի ընթացքում, բայց հատկապես 9-11, 14:1-15:13 գլուխներում:

- Գ. Նաև կա լարվածության ակնարկ վաղ եկեղեցում կապված Պողոսի առաքյալ լինելու հետ: Թվում է, թե նա պաշտպանում է ինքն իրեն հհ. 15-19; 1:2,5:

- Դ. Այս գրական բաժինը պարունակում է երկու թեմա
 - 1. Պողոսի ծառայությունը որպես առաքյալ և ավետարանիչ (հմմտ. հհ. 14-21)
 - 2. Պողոսի ճամփորդական ծրագրերը, այս նպատակը իրականանալու համար նրան բերում են Հռոմ (հմմտ. հհ. 22-33):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 15:14-21

¹⁴Եւ ես ինքս էլ, եղբարքս, ձեզ համար հաստատ եմ, որ դուք էլ լիքն էք բարութիւնով, լեցուած ամեն գիտութիւնով, որ կարող էք իրար էլ խրատել: ¹⁵Բայց համարձակեցի, եղբարք, փոքր ի շատ գրել ձեզ. իբր թէ ձեզ յիշեցնեմ Աստուածանից ինձ տրուած այն շնորհքի պատճառովը: ¹⁶Որ ես Յիսուս Քրիստոսի սպասատրն եմ հեթանոսների մէջ. Աստուծոյ աւետարանը մատակարարող, որ հեթանոսների պատարագն ընդունելի լինի՝ Սուրբ Հոգովը սրբուած: ¹⁷Արդ պարծանք ունիմ Քրիստոս Յիսուսին Աստուծոյ առաջին: ¹⁸Որովհետեւ ես չեմ համարձակիլ մի բան խօսել՝ որը Քրիստոս չգործեց ինձանով՝ հեթանոսները հնազանդեցնելու համար՝ խօսքով եւ գործքով: ¹⁹Նշանների եւ հրաշքների գորուէիւնով, Աստուծոյ Հոգիի գորութիւնով. այնպէս որ ես Երուսաղէմիցն սկսած պտոյտ տալով մինչեւ Լիւբիկացիների կողմերը Քրիստոսի աւետարանովը լցրել եմ: ²⁰Այնպէս ջանք արի աւետարանը քարոզելու, ոչ թէ որտեղ որ Քրիստոսի անունն անուանուած էր, որ մի գուցէ ուրիշի հիման վերայ շինեմ. այլ ինչպէս որ գրուած է. ²¹Թէ որոնց չէ պատմուած նորա համար՝ կտեսնեն, եւ որոնք որ չեն լսել՝ միտք կանեն:

NASB (UPDATED) TEXT: 15:14-21

¹⁴And concerning you, my brethren, I myself also am convinced that you yourselves are full of goodness, filled with all knowledge and able also to admonish one another. ¹⁵But I have written very boldly to you on some points so as to remind you again, because of the grace that was given me from God, ¹⁶to be a minister of Christ Jesus to the Gentiles, ministering as a priest of the gospel of God, so that *my* offering of the Gentiles may become acceptable, sanctified by the Holy Spirit. ¹⁷Therefore in Christ Jesus I have found reason for boasting in things pertaining to God. ¹⁸For I will not presume to speak of anything except what Christ has accomplished through me, resulting in the obedience of the Gentiles by word and deed, ¹⁹in the power of signs and wonders, in the power of

the Spirit; so that from Jerusalem and round about as far as Illyricum I have fully preached the gospel of Christ. ²⁰And thus I aspired to preach the gospel, not where Christ was *already* named, so that I would not build on another man's foundation; ²¹but as it is written, "THEY WHO HAD NO NEWS OF HIM SHALL SEE, AND THEY WHO HAVE NOT HEARD SHALL UNDERSTAND."

Արևելահայերեն « Ես ես ինքս էլ, եղբարքս, ձեզ համար հաստատ եմ »

Արևմտահայերեն « Ես ինքս ալ հաստատ համոզուած եմ ձեզի համար, իմ եղբայրներս,»

15:14

NASB "And concerning you, my brethren, I myself also am convinced"

NKJV "Now I myself am confident concerning you, my brethren"

NRSV "I myself feel confident about you, my brothers and sisters"

TEV "My friends: I myself feel sure that you"

JB "It is not because I have any doubts about you, my brothers, on the contrary I am quite certain that you"

Հունարեն լեզվում «ես ինքս»-ը (*auto egō*) շատ ընդգծված է: Պողոսը ճշմարտապես գովում է այս եկեղեցին (համոզված, ՎԱՂԱԿԱՏԱՐ կամ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ):

Պողոսը պնդում է երեք բան այս Հռոմի քրիստոնյաների մասին հ. 14-ում (1) նրանք լի են բարեպաշտությամբ [ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ]; (2) նրանք լի են գիտությամբ [ՎԱՂԱԿԱՏԱՐ կամ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ]; և (3) նրանք ընդունակ են հորդորելու միմյանց [ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ]: Այս համարը նշանակում է, որ Պողոսը նոր պատգամ չի բերել իրենց, այլ բացատրում և հստակեցնում է այն բարի լուրը, որն իրենք արդեն լսել և ընդունել էին (հմմտ. հ. 15):

«դուք լիքն եք բարությանով, լեցուած ամեն. . .» Ինչպես «Ես ինքս» առաջին արտահայտության մեջ, այնպես էլ «դուք ինքներդ» այստեղ ունի ընդգծված նշանակություն: «Լիքը» տերմինը (*mestos*) նշանակում է «լիքը ինչ որ բանով» կամ «լեցուն, լցված»: Այս տերմինը Պողոսը օգտագործում է ընդամենը երկու անգամ, երկու անգամն էլ Հռոմեացիս թղթում (1:29; 15:14):

«Լցված» (*plēroō*) տերմինը ՎԱՂԱԿԱՏԱՐ կամ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս տերմինը Պողոսը հաճախ է օգտագործում Հռոմեացիս թղթում (հմմտ. 1:29; 8:4; 13:8; 15:13,14,19): Նա նաև հաճախ է օգտագործում ԳԵՐԱՆՈՒՆ *plērōma* Հռոմեացիս թղթում (հմմտ. 11:12,25; 13:10; 15:29), բայց երբեք որպես ԱԾԱԿԱՆ չի գործածվում նրա գրվածքներից որևէ մեկում:

Պողոսի փափագն էր, որ ամբողջ Ավետարանը ամբողջությամբ լցնի հավատացյալներին և հորդի նրանցից սեր և ծառայություն: Հիսուս Քրիստոսում հավատացյալներն ունեն այն ամենը, ինչ իրենց պետք է: Նրանց միայն պետք է ընդունել այս ամենը և ունենալ վստահություն:

«լիքն եք բարությանով, լեցուած ամեն գիտությամբ» Այս տերմինները հասկանալու համար կա երկու տարբերակ, (1) որ նրանք ըստ կոնտեքստի պատկանում են անմիջականորեն նախորդ գրական բաժնին 14:1-15:13—հավատացյալի սերը միմյանց հանդեպ ցուցաբերում է տարբերությունները քրիստոնյաների միջև անորոշ կամ երկիմաստ աստվածաշնչյան հատվածներում: Սա հաստատում է և «լավ, բարի» բառի գործածությունը ընդհանուր իմաստով 14:16; 15:2 և այստեղ; կամ (2) սա վերաբերում է ամբողջ Ավետարանին, կապված հավատքի և գործնական քրիստոնեական կյանքին, ուղղափառությանը և օրոպարաքսիին:

15:15 «Համարձակեցի, գրել ձեզ» Պողոսը Հռոմեացիս թուղթը գրել է Կորնթոսից: Այդ եկեղեցում նա ստիպված էր հաղթահարել խմբավորումներից մեկի հարձակումները, որոնք նրան մեղադրում էին այն բանում, որ նա իր գրվածքներում քաջ էր հանդես գալիս, բայց որպես մարդ, անձնական շփման ժամանակ տկար էր: «Քաջաբար» բառի ԲԱՅ-ական ձևը հանդիպում է II Կոր. 10:2,12; 11:21: Պողոսի քաջությունը գալիս էր իր դարձի գալուց, ծառայության կանչից և Ավետարանի իմացությունից:

«Աստուածանից ինձ տրուած այն շնորհքի պատճառովը» Պողոսը խոսում է Աստծո շնորհքի մասին (հմմտ. 1:5; 12:3; I Կոր. 3:10; 15:10; Գաղ. 2:9; և Եփ. 3:7-8) որը կանչեց իրեն, փրկեց, պարգևներով օժտեց և իրեն ուղարկեց հեթանոսների մեջ (հմմտ. 11:13; 15:16): Սա միջոց էր իր առաքյալ լինելն ու իշխանությունը հաստատելու համար (հմմտ. 1:1,5):

15:16 «սպասաւոր. . մատակարարող. . պատարագ. . ընդունելի» 16 և 17 համարները պարունակում են մի քանի քահանայությանը վերաբերող տերմիններ և արտահայտություններ: «Ծառայություն» բառը այստեղ օգտագործված է որպես քահանայի ծառայություն հ. 27: Այն նաև օգտագործվում է Եբր. 8:2-ում, որտեղ խոսքը գնում է Քրիստոսի ծառայության մասին: Պողոսը իրեն ներկայացնում է որպես քահանա (հմմտ. Փիլ. 2:17) հեթանոսներին բերելով Աստծուն, որը Իսրայելի գործն էր, առաջադրանքը (հմմտ. Ելից. 19:5-6; Ես. 66:20): Եկեղեցուն է տրված եղել այս ավետարանչական առաջադրանքը (հմմտ. Մաթ. 28:18-20; Դուկ. 24:47): Եկեղեցին կոչվում է հին կտակարանյան քահանայական տերմիններով I Պետ. 2:5,9 և Հայտ. 1:6:

«Սուրբ Հոգովը սրբուած» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ կամ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ԳԵՐԲԱՅ է, որը նշանակում է «եղել և շարունակում է սրբվել Սուրբ Հոգովը»: Եվ նորից սա կարող է արտացոլել այն լարվածությունը, որ կար հրեա և հեթանոս հավատացյալների միջև Հռոմի եկեղեցում: Պողոսը հստակորեն պնդեց, որ ազգերը (հեթանոսները) ընդունված են եղել և շարունակում են ամբողջությամբ ընդունվել և սրբվել Սուրբ Հոգու կողմից (հմմտ. I Կոր. 6:11):

15:17-19 Ուշադրություն դարձրեք Եռյակ Աստծո միացյալ գործողությանը; Աստծուն (հմմտ. հ.17); Քրիստոսին (հմմտ. հ. 17) և Սուրբ Հոգու գործունակ (հմմտ. հ. 19): Նկատեք, որ հ. 30-ում երևում են աստվածության երեք Անձերը: Չնայած «Երրորդություն» տերմինը աստվածաշնչյան չէ, բայց գաղափարը աստվածաշնչյան է (հմմտ. Մաթ. 3:16-17; 28:19; Գործք 2:33-34; Հն. 8:9-10; I Կոր. 12:4-6; II Կոր. 1:21; 13:14; Եփ. 1:3-14; 4:4-6; Տիտոս 3:4-6; I Պետ. 1:2): Տես Հատուկ Թեմա: Երրորդություն 8:11:

15:18-19 Պողոսը թվարկեց տարբեր կերպեր, թե ինչի շնորհիվ է իր հեթանոսների ծառայությունը եղել արդյունավետ (1) խոսքի; (2) գործի; (3) նշանների; (4) հրաշքների; և (5) ամենը Սուրբ Հոգու գործունակով:

Մի փոքր ծանուցում ձեռագրերի տարբերությունների մասին կապված #5, «Հուզիկ»; մի քանի հունարեն տեքստերում ավելացված է «Սուրբ Հոգին», իսկ որոշներում «Աստծո Հոգին»: Ելնելով այսպիսի տարբերություններից, այս լրացումը գնահատվում է որպես չներշնչված պարզաբանում, որը ոչ մի կերպ չի ազդում տեքստի իմաստի ճշմարտության վրա: Այս ձգտումը բացատրվում է ավելի ուշ դպիրների կողմից, որոնք կրկնօրինակում էին, արտագրում Նոր Կտակարանի տեքստերը, բերելու համար նրանց միակ չափանիշի մտքերի ձևավորման համար:

15:18 «հեթանոսները հնազանդեցնելու համար» Աստծո նպատակը միշտ եղել է մարդը, որն արտացոլում է Իր կերպարը: Հիսուս Քրիստոսի Ավետարանը վերականգնում է Աստծո պատկերը, որը կորել էր մեղքի անկման ժամանակ Ծննդ. 3-ում: Խորը և անկեղծ փոխհարաբերություն

Աստծո հետ փաստում է մարդու բարեպաշտ կյանքը: Քրիստոնեության նպատակը՝ Աստծո հետ հաղորդակցությունն է և քրիստոսանմանությունը հիմա:

«խօսքով եւ գործքով» Սա վերաբերում է Պողոսի ծառայությանը, և ոչ թե Հռոմի քրիստոնյաների հնազանդությանը: Սա ակնհայտորեն կապված է Հոգու զորության հետ հ. 19-ում:

15:19 «Նշանների եւ հրաշքների զորուէինով» Այս երկու տերմինները շատ անգամ միասին են հանդիպում Գործք Առաքելոց գրքում (հմմտ. 14:8-10; 16:16-18, 25-26; 20:9-12; 28:89), նկարագրելով Աստծո զորությունը, որը գործում է Ավետարանի միջոցով (հմմտ. II Կոր. 12:12): Այդպես է երևում, որ նրանք հոմանիշներ են: Դժվար է ստույգ ասել, թե ինչին են վերաբերում այս խոսքերը՝ հրաշքներին թե՞ հոգևոր վերստին ծննդյանը: Այստեղ նորից, ակնարկ է Պողոսի առաքյալ լինելու հետ կապված լարվածության մասին: Քանի որ Աստված հաստատեց Տասներկու Առաքյալների ծառայությունը Երուսաղեմում, Նա նաև, տեսանելի նշաններով, հաստատեց Պողոսի ծառայությունը հեթանոսների մեջ:

«Քրիստոսի ատետարանովը լցրել եմ» Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ կամ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՍՄՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ԻՆՖԻՆԻՏԻՎ *plēroō* (հմմտ. հ. 14): Սա նշանակում է, որ Պողոսը վստահ էր, որ նա կատարեց Ավետարանի քարոզչության իր առաջադրանքը արևելյան Սիջերկրականում (հմմտ. հ. 23):

«մինչև Լիբիկացիների կողմերը» Հռոմեական այս նահանգը, նաև հայտնի որպես Դալմատիա, տեղակայված էր Ադրիատիկ ծովի արևելյան ափին, հունական թերակղզուց հյուսիս արևմուտք (Մակեդոնիա): Գործք Առաքելոց գրքում չի գրված, որ Պողոսը քարոզեց իրենց, բայց նա հաստատեղել է մոտակայքում (հմմտ. 20:1-2): «Մինչև» բառը կարող էր նշանակել «սահմանին» կամ «շրջանում»:

15:20 «Այնպես ջանք արի ատետարանը քարոզելու, ոչ թե որտեղ որ Քրիստոսի անունն անուանուած էր» Սա Պողոսի կայուն միսիոներության ռազմավարությունն էր (հմմտ. I Կոր. 3:10; II Կոր. 10:15-16). Նա ուզում էր հասնել հեթանոսներին, ովքեր երբեք առիթ չեն ունեցել լսելու և ընդունելու Ավետարանը: Նա սովորաբար ընտրում էր մեծ քաղաքներ՝ տեղակայված ռազմավարորեն կարևոր տեղերում հռոմեական կայսրության մեջ, որպեսզի հիմնված եկեղեցիները կարողանային ավետարանել և աշակերտել իրենց շրջաններում:

15:21 Սա մեջբերում է Ես. 52:15 Սեպտուագիմից (LXX), որտեղ ասվում է, որ հեթանոսները կլսեն Աստծո մասին: Պողոսն ընտրեց այս մարգարեությունը, որպես ռազմավարություն իր միսիոներության համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 15:22-29

²² Սորա համար էլ շատ անգամ արգիլուեցայ ձեզ մօտ գալուց: ²³ Բայց հիմա որ այս կողմերումն այլ ես տեղ չունիմ, եւ շատ տարուց հետէ խիստ փափաք ունիմ ձեզ մօտ գալու, ²⁴ Երբ որ անցկենամ Սպանիա, կգամ ձեզ մօտ. յոյս ունիմ որ անցկենալու ժամանակս տեսնեմ ձեզ. եւ ձեզանից ճանապարհի գցուիմ այնտեղ, եթէ առաջ մի քիչ ձեզանով լիանամ: ²⁵ Բայց հիմա Երուսաղեմ եմ գնում սուրբերին ծառայութիւն անելու: ²⁶ Որովհետեւ Մակեդոնացիք եւ Աքայեցիք հաճեցան մի հաղորդութիւն անել աղքատ սրբերին որ Երուսաղեմումն են: ²⁷ Հաճեցան, նոյն իսկ պարտական էլ են նորանց. որովհետեւ եթէ հեթանոսները նորանց հոգեւոր բարիքներին մասնակից եղան, պէտք է՝ որ մարմնական բաներում էլ ծառայեն նորանց: ²⁸ Արդ այս որ կատարեմ եւ նորանց պտուղն իր տեղը հասցնեմ, կանցնեմ Սպանիա ձեր միջովը: ²⁹ Եւ գիտեմ որ երբոր ձեզ մօտ գամ, Քրիստոսի ատետարանի առատ օրհնութիւնովը կգամ:

NASB (UPDATED) TEXT: 15:22-29

²²For this reason I have often been prevented from coming to you; ²³but now, with no further place for me in these regions, and since I have had for many years a longing to come to you ²⁴whenever I go to Spain— for I hope to see you in passing, and to be helped on my way there by you, when I have first enjoyed your company for a while—²⁵but now, I am going to Jerusalem serving the saints. ²⁶For Macedonia and Achaia have been pleased to make a contribution for the poor among the saints in Jerusalem. ²⁷Yes, they were pleased to do so, and they are indebted to them. For if the Gentiles have shared in their spiritual things, they are indebted to minister to them also in material things. ²⁸Therefore, when I have finished this, and have put my seal on this fruit of theirs, I will go on by way of you to Spain. ²⁹I know that when I come to you, I will come in the fullness of the blessing of Christ.

15:22 «Սորա համար էլ» Այս պատճառը բացատրվում է հ. 20-ում:

«շատ անգամ արգիլուեցայ» Այստեղ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՍԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂՎԱՆԱԿ է: Ամեն անգամ նա արգելք ուներ (հմմտ. 1:13): Այդ արգելքների աղբյուրների մասին չի խոսվում ոչ մի տեղ: Բայց դա կարող էր լինել Աստված, սատանան, չար մարդիկ կամ նոր հնարավորություններ ավետարանելու համար:

Հիշեք, որ Պողոսը գրել է Հռոմեացիս թուղթը Կորնթոսից: Այնտեղ Պողոսը հանդիպեց հակառակորդների այնպիսի հարձակման, որ նույնիսկ չկարողացավ իրականացնել իր ճամփորդության ծրագրերը: Առանց որևէ կասկածանքի, այդ հարձակումները, որոնք շատ լուրջ ազդեցին Պողոսի վրա հենց Կորնթոսի եկեղեցուց էին: Հնարավոր է, որ նշել է այն մասին, որ իր ճամփորդության ծրագիրը ամեն անգամ խափանվում էր:

15:23 «Բայց հիմա որ այս կողմերումն այլ ես տեղ չունիմ» Այս համարի իմաստն անհրաժեշտ է հասկանալ տարածքի շրջանակներում, աշխարհագրականորեն սամանափակ շրջաններում Փոքր Ասիայում կամ Արբելյան Միջերկրականի տարածքում: Սա չի նշանակում է, որ Պողոսը քարոզեց Ավետարանը ամենուր և ամենքին այս վայրերում, բայց միայն ոմանց:

«եւ շատ տարուց հետէ խիստ փափաք ունիմ ձեզ մօտ գալու» Պողոսը հաճախ արտահայտել էր ձեռն այցելելու իր փափագը (հմմտ. 1:10-15; Գործք 19:21; 23:11):

Կա հունարեն ձեռագրի տարբերակ այս տեքստի վերաբերյալ, որը նշված չի UBS⁴ քարգմանության տողատակի ծանոթագրության մեջ: Հին հունարեն ձեռագրերում MSS P⁴⁶, Ռ, A, D, F, G և L կա «շատ» (*polus*) բառը, որն օգտագործված է հ. 22-ում, իսկ MSS B, C և P ձեռագրերում «մի քանի» բառը (*ikanos*): Շատ հնարավոր է, որ ավելի ուշ դպիրները, արտագրողները մտահոգված էին Պողոսի չափազանցելուց:

15:24 «Երբ որ անցկենամ Սպանիա» Պողոսն ուզում էր գնալ Հռոմեական կայսրության արևմտյան շրջանը (հմմտ. II Կոր. 10:16): Նա ազատվել էր Հռոմի բանտարկությունից Գործք Առաքելոց գրքի վերջում և գնաց իր չորրորդ միսիոներական ճամփորդությանը: Հովվական թղթերը (I Տիմ., II Տիմ., և Տիտոս) գրվել են այս չորրորդ ճամփորդության ժամանակ: Հավանական է II Տիմ. 4:10-ում կա նշում սրա վերաբերյալ, որտեղ մի շարք հունարեն երկաթագիր ձեռագրերում Ռ, C և լատիներեն Վուլգատում և Ղպտի քարգմանություններում կա «Գալեր» բառը: Կլեմենտ հռոմեացին, որը գրեց առաջին դարի վերջում, իր «Կորնթացիներին ուղղված նամակում» 5:7-ում նաև պնդում է, որ Պողոսը ճամփորդեց «Արևմուտքի սահմանները»:

«եւ ձեզանից ճանապարհ գցուիմ այնտեղ,» Այս արտահայտությունը վաղ եկեղեցում իրենից ներկայացնում էր իդիոմատիկ արտահայտություն, որի իմաստն էր օգնել ճամփորդող միսիոներին հասնել հաջորդ վայրին իր ավետարանչական գործունեության ընթացքում (հմմտ. Գործք 15:3; I Կոր. 16:6, 11; II Կոր. 1:16; Տիտոս 3:13; III Հովհ. 6): Հռոմի եկեղեցին չէր կարող Երուսաղեմի եկեղեցում ֆոնդին ներդրում ունենալ, բայց նա կարող էր ֆինանսական օգնություն ցույց տալ Պողոսի միսիոներական ճամփորդությանը դեպի արևմուտք:

15:25 «սուրբերին ծառայութիւն անելու» Այս արտահայտությունը հաճախ օգտագործվում էր գումար հավաքելու համար (հմմտ. հ. 31; I Կոր. 16:15; II Կոր. 8:4; 9:1): Տես Հատուկ Թեմա: Սուրբեր 1:7

15:26 «մի հաղորդութիւ անել աղքատ սրբերին որ Երուսաղէմումն են» Պողոսը ստանում էր այս հանգանակությունը, դրամական օգնությունը (տես Հատուկ Թեմա: *Koinōnia* 12:13) մի քանի տարի շարունակ (1) Գաղատիայից և Փոքր Ասիայից (հմմտ. I Կոր. 16:1-4), և (2) Մակեդոնիայից ու Աքայիայից (հմմտ. II Կոր. 8-9): Նրա մոտ արդ գաղափարը ծագեց Անտիոքի եկեղեցուց (հմմտ. Գործք 11:30; 12:25): Ենթադրվում էր, որ դա կօգնի միավորել վաղ եկեղեցու երկու թևերը՝ նախկին հրեաներին և հեթանոսներին: Նախկին հեթանոսներից բաղկացած եկեղեցիները «ուրախ էին» դա անելու (հմմտ. հհ. 26 և 27): Ստորև տես հատուկ թեմա.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԲՐԻՍՏՈՆՅԱՆ ԵՎ ՍՈՎԱԾԸ

I. Ներածություն

Ա. Սովը մարդկության և արարչագործության մեղավոր վիճակի հիշեցումն է:

Բ. Սովը չարի և տառապանքի խնդրի ասպեկտներից մեկն է: Սա մարդուն բնորոշ հատկանիշ է, և ոչ թե Աստծո: Չնայած Աստված օգտագործեց գյուղատնտեսական օրհնությունները կամ անեծքները՝ որպես Իր ուխտի ժողովրդին վարձատրելու և պատժելու մի ձև (2 Օրին. 27-28), սա հիմնականում չէր տարածվում անհավատների վրա (Մաթ. 5:45): Սովը ևս մեկ օրինակ է ազահության, եսասիրության և նյութապաշտության: սովի խնդիրը միայն ուտելիքի պակասը չէ, այլ մարդու դրդապատճառը և նախապատվությունները:

Գ. Սովը նաև միջոց է փրկված մարդու համար ցուցաբերելու Աստծո սերը ուրիշների հանդեպ: Հավատացյալների արձագանքները ֆիզիկական կարիքի դեմ, եկեղեցում և շրջապատող միջավայրում, ցույց է տալիս մեր իրական էությունը, թե ով ենք մենք:

II. Աստվածաշնչյան նյութ

Ա. Հին Կտակարան

1. Մովսես

ա. Հին Իսրայելում երեք տասանորդներից մեկը աղքատի համար էր նշանակված (2 Օրին. 14:28-29)

բ. Օրենքը նախատեսում էր հատուկ ապահովվում սննդի տեսքով աղքատների համար (Ելից 23:11; Գև. 19:10; 23:22; 2 Օրին. 24:19-22)

գ. Օրենքը նախատեսում էր հատուկ, ոչ թանկարժեք զոհաբերություն աղքատների համար (Գև. 14:21)

դ. Իսրայելը պետք է կարեկից լիներ և առատաձեռնություն ցուցաբերեր աղքատի և կարիքավորի հանդեպ (2 Օրին. 15:7-11, հմմտ. Հոր 29:16; 30:25; 31:16-23)

2. Իմաստուն Գրականություն

ա. Կային հատուկ օրհնություններն նրանց համար, ովքեր օգնում էին աղքատներին (Սաղ. 41:1)

բ. Օգնել աղքատին նշանակում էր օգնել Աստծուն (Առ. 14:31; 17:5; 19:17)

3. Մարգարեություններ

- ա. Աստված պահանջում էր երկրպագություն Իրեն սոցիալական արդարության և կարիքավորների հանդեպ ունեցած գթածության ձևով (Ես. 58:6-7; Միք. 6:8)
- բ. Աստծո պատգամներից մեկն այն էր, որ հռչակում էր աղքատների և կարիքավորների պետքերը (Ես. 61:1-2)
- գ. Աստծո մարգարեները խոսեցին ամեն տեսակ սոցիալական շահագործման դեմ (Ամովս 2:6-8; 5:10-13; Միքիա)

Բ. Նոր Կտակարան

1. Ավետարաններ

- ա. Նոր Կտակարանը պնդում է աղքատներին օգնելը (Մարկ. 10:21; Գուկ. 3:11)
- բ. Դատաստանը հիմնված է մեր Հիսուսի անունով ուրիշների հանդեպ ունեցած մեր սիրո վրա: Փաստորեն օգնել ուրիշներին նշանակում է օգնել Հիսուսին (Մաթ. 25:31-46):
- գ. Մարկոս 14:7 սխալ է հասկացվել, եթե ասում են որ իբր Հիսուսը քիչ է մտահոգվել աղքատների համար: Այս համարի իմաստը Նրա եզակիությունը ընդգծելն է և ոչ թե աղքատներին նվաստացնելը:
- դ. Եսայա 61:1-2 ասում է այն մասին, որ Աստծո պատգամը ուղղված է այն մարդկանց, որոնք հասարակության կողմից մերժված և նվաստացած էին (Գուկ. 4:18; 7:22; 14:21):

2. Պողոս

- ա. Սիրիայի Անտիոքի եկեղեցու օրինակով Պողոսի մոտ ձևավորվեց մի գաղափար սիրո արտահայտում միմյանց հանդեպ աղքատների համար արված հատուկ հանգանակության շնորհիվ, ինչպես արվեց Երուսաղեմի եկեղեցու համար (Հռ. 15:26; I Կոր. 16:1; II Կոր. 8:4,6,19; Գաղ. 2):
- բ. Պողոսը շեշտը դնում է շնորհքի, հավատքի և գործերի վրա (Եփ. 2:8-10):

3. Հակոբոս (Նոր Կտակարանի Իմաստուն Գրականություն)

- ա. Հավատք առ Աստված, Քրիստոսի միջոցով առանց հոգատարություն ցուցաբերելու սոցիալապես կարիքավորների հանդեպ, դա հիվանդ է (Հակոբոս 2:14-17):
- բ. Նա նույնիսկ ասում է, որ հավատքն առանց գործերի մեռած է:

4. Հովհաննես

- ա. I Հովհաննեսը գիրքը պնդում է, որ քրիստոնյայի փրկության վստահությունը հիմնված է փոխված կյանքով՝ հավատքի և ծառայության (I Հովհ. 3:17-18):

III. Ամփոփում

Ա. Մարդկային տառապանքն ու կարիքը մարդու մեղքի պատճառով է: Սովն ունի մի քանի պատճառներ.

- 1. հիմար արարք (Առ. 19:15)
- 2. Աստծո պատիժը (2 Օրին. 27-28)
- 3. կապված հոգևոր ծառայության հետ (II Կոր. 11:27)
- 4. մշակույթային հանգամանքներ (ազահություն, հասկացողություն և ըմբռնում, մոտեցում, և այլն)
- 5. նյութական հանգամանքներ (սով, ջրհեղեղներ, կարկուտ, և այլն)

Բ. Իրականում Աստված հոգ է տանում մարդու մասին: Նա հատկապես սիրում է նրանց, ովքեր կարիքի մեջ են:

Գ. Գործուն եկեղեցին դա Աստծո պատասխանն է մարդու կարիքի դեմ (նյութական և հոգևոր)

- 1. ուղիղ, անձնական գործողությունը յուրաքանչյուր քրիստոնյայի
- 2. համագործակցող, միասնական եկեղեցու գործողությունը
- 3. քաղաքական տեսանկյունից, եկեղեցին դա կազմակերպություն է՝ փոփոխություններ իրականացնելու համար

- Գ. Մենք պետք է քննադատորեն գնահատենք մեր մշակույթն ու անձնական նախապատվությունները Սուրբ Գրքի լույսի ներքո (II Կոր. 8-9):
- Ե. Մենք պետք է բացենք մեր աչքերը, սրտերն ու ձեռքերը մարդկանց կարիքների առաջ հայրենիքում և մեր սահմաններից դուրս, եկեղեցում և աշխարհում:
- Զ. Մեր օգնությունը պետք է հիմնված լինի այն հասկացողության վրա, թե ով ենք մենք Քրիստոսով, Իր Մեծ Պատվիրանի լույսի ներքո (Մաթ. 28:18-20): Օգնությունը պետք է լինի նյութական և հոգևոր:

15:27 «եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ, որը ճշմարտություն է ձևացնում հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակի համար: Եթե հեթանոսները կհստում են հրեաների հոգևոր օրհնությունները (հմմտ. Հռ. 10-11), ապա նրանք պետք է Երուսաղեմի մայր եկեղեցուն ցուցաբերեն նյութական աջակցություն:

15:28

Արևելահայերեն «Արդ այս որ կատարեմ եւ նորանց պտուղն իր տեղը հասցնեմ,»
Արևմտահայերեն «Ուրեմն ասիկա կատարելով ու կնքելով անոնց այս պտուղը՝ ձեզմէ»

- NASB** “when I have furnished this, and have put my seal on this fruit of theirs”
- NKJV** “when I have performed this and have sealed to them this fruit”
- NRSV** “when I have completed this, and have delivered to them what has been collected”
- TEV** “when I have finished this task and have turned over to them all the money that has been raised for them”
- JB** “So when I have done this and officially handed over what has been raised”

Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ԳԵՐԲԱՅ և ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿ ՉԵԶՈՔ ՍԵՌ ԳԵՐԲԱՅ է: Սա գրականորեն ընդունված ձև էր կնքելու տոպրակը, դրա պարունակության ապահովության համար: Պողոսի համար, հավանական է, հաստատելու, պնդելու միջոց էր, որ իրեն տրված միջոցները կհասնեն և կտրվեն հասցեատերերին: Անկասկած երաշխիքի համար նա իր հետ վերցրեց մի քանի ներկայացուցիչներ՝ հանգանակություն արարծ եկեղեցիներից (հմմտ. Գործք 20:4):

«Կնիք» բառի հետ կապված տես հատուկ թեմա 4:11.

15:29 Ուշադրություն դարձրեք, որ այստեղ կրկին օգտագործված է *plēroō / plērōma* բառը: Տես բացատրությունը հ. 14-ում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 15:30-33

³⁰ Եւ աղաչում եմ ձեզ, եղբարք, մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը եւ Հոգու սիրովը, որ ինձ պատերազմակից լինիք՝ ինձ համար աղօթքներ անելով դէպի Աստուած. ³¹ Որ ազատուիմ այն անհնազանդներիցը որ Հրէաստանումն են. եւ իմ ծառայութիւնը որ Երուսաղեմումն անելու եմ՝ սուրբերին ընդունելի լինի. ³² Որ ուրախութիւնով ձեզ մօտ գամ Աստուծոյ կամքովը, եւ ձեզ հետ հանգիստ առնեմ: ³³ Եւ խաղաղութեան Աստուածը ձեր ամենի հետ լինի. ամէն:

NASB (UPDATED) TEXT: 15:30-33

³⁰Now I urge you, brethren, by our Lord Jesus Christ and by the love of the Spirit, to strive together with me in your prayers to God for me, ³¹that I may be rescued from those who are disobedient in Judea, and *that* my service for Jerusalem may prove acceptable to the saints; ³²so that

I may come to you in joy by the will of God and find *refreshing* rest in your company. ³³Now the God of peace be with you all. Amen.

15:30 «Եւ աղաչում եմ ձեզ. . . ինձ պատերազմակից լինիք» Սրանք ուժեղ հունարեն տերմիններ են: Առաջինը նաև օգտագործված է 12:1-ում: Երկրորդը օգտագործված է, երբ Հիսուս պայքարում էր Գեթսեմանի այգում: Պողոսը զգում էր աղոթքի խիստ կարիք իր և իր ավետարանի ծառայության համար (հմմտ. II Կոր. 1:11; Եփ. 6:18-20; Կող. 4:3; I Թես. 5:25; II Թես. 3:1): Երուսաղեմի իր փորձառությունը շատ ծանր էր (հմմտ. հ. 31): Նա ժամանեց Հռոմ, բայց ոչ իր ծրագրած ձևով: Տես Հատուկ Թեմա: Բարեխոսական աղոթք 9:3:

15:30-33 Պողոսի աղոթքը արտահայտում է 3 ցանկություն; (1) որ նա կարողանար ազատվել իր թշնամիներից Հուդայում (հմմտ. Գործք 20:22-23); (2) որ հեթանոս եկեղեցիների կողմից արված հանգանակությունը լավ ընդունվեր Երուսաղեմի եկեղեցու կողմից (հմմտ. Գործք 15:1; 21:17); և (3) որ նա կարողանար այցելել Հռոմ իսպանիա գնալու ճանապարհին:

15:30 « ինձ պատերազմակից լինիք» Նոր Կտակարանում այս տերմինը օգտագործվում է միայն այստեղ: Այս բարդ բառը կազմված է *sun* (դրա հետ միասին) և *agōnizomai* (կռվել, պայքարել, ջանք գործադրել, հակառակ կենալ, հմմտ. I Կոր. 9:25; Կող. 1:29; 4:12; I Տիմ. 4:10; 6:12): Այս ուժեղ բայ ԻՆՏԻՆԻՏԻՎԸ կոչ է անում հռոմեական եկեղեցուն ակտիվ աղոթքի Պողոսի հետ միասին Երուսաղեմի մայր եկեղեցուն ընդունելու համար նախկին հեթանոսների կողմից արված հանգանակության համար:

15:31 «այն անհնազանդներիցը» Սա վերաբերում է կամ հրեա ընդդիմությանը կամ էլ հավանական է հուդայականներին, բայց ոչ եկեղեցուն ընդհանրապես (հմմտ. 11:30,31):

15:32 Պողոսի աղոթքն ավարտվում է ևս երկու խնդրանքով; (1) որ նա կարողանար իրենց մոտ գալ ուրախությունով և (2) նրանց հետ հանգիստ վայելել (ԱՕՐԻՍՏ ՉԵՉՈՔ ՍԵՌ՝ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ *sunanapauomai* բայի, միայն այստեղ Նոր Կտակարանում, բայց հանդիպում է Ես. 11:6: Պողոսը մեջբերում է Ես.11:1,10 հ. 12-ում): Պողոսը կարիք ուներ հանգստի և ուժերի վերականգնման՝ հասուն հավատացյալների մեջ լինելով (հմմտ. II Կոր. 4:7-12; 6:3-10; 11:23-33): Ինչևէ, նրա մոտ դա չհաջողվեց: Պաղեստինում նրան սպասվում էր բանտարկություն, փորձություններ և տարիներով կալանք:

15:33 «խաղաղութան Աստուածը» Սա հիասքանչ տիտղոս է Աստծո համար (հմմտ. 6:20; II Կոր. 13:11; Փիլ. 4:9; I Թես. 5:23; II Թես. 3:16; Եբ. 13:20):

«Ամեն» Տես հատուկ թեմա 1:25-ում:

ՀԱՐՑԵՐ ԶՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Սա սերտորոշության համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա բողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են, որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչու՞ է Հին Կտակարնը արժեքավոր Նոր Կտակարանի հավատացյալների համար (հհ. 4-5; I Կոր. 10:6,11)
2. Ինչու՞ է Պողոսը մեջբերում Հին Կտակարնը հհ. 9-12: Ի՞նչ մեծ ճշմարտություն է այն մեզ սովորեցնում:
3. Հռոմեացիս թղթի այս բաժնում որտե՞ղ է հավանաբար երևում լարվածությունը հրեաների և հեթանոսների միջև:
4. Հռոմեացիս թղթի այս բաժնում որտե՞ղ է երևում լարվածությունը կապված Պողոսի Առաքյալ լինելու հետ:
5. Ինչպիսի՞ն էին Պողոսի սեփական դրդապատճառները, կապված հեթանոս եկեղեցիների զոհաբերությունների հետ Երուսաղեմի եկեղեցու համար (հհ. 15-28):
6. Ո՞րն էր Պողոսի միսիոներական ռազմավարությունը: Ինչու՞ նա ցանկացավ գնալ Իսպանիա:
7. Ինչպե՞ս և ինչու՞ է Պողոսը նկարագրում իր գործը որպես քահանա (հ.16) կապված Իսրայելի հետ, որպես քահանաների թագավորություն (Ելից 19:5-6) կամ եկեղեցու (I. Պետ. 2: 5,9; Հայտ. 1:6)
8. Աստված պատասխանե՞ց Պողոսի աղոթքին 30-33հ-ում:

ԹՈՒՂԹ ՈՒՂՂՎԱԾ ՀՌՈՍԵԱՅԻՆԵՐԻՆ
ԳԼՈՒԽ 16

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ				
UBS⁴	NKJV	NRSV	TEV	JB
Անձնական ողջույններ	Փիբե քրոջ հանձնարարականը	Ողջույններ	Անձնական ողջույններ	Ողջույններ և բարի ցանկություններ
16:1-2	16:1-2	16:1-2	16:1-2	16:1-2
	Ողջույն Հռոմի Սուրբերին			
16:3-16	16:3-16	16:3-16	16:3-5ա	16:3-5ա
			16:5բ-7	16:5բ-16
			16:8-11	
			16:12-15	
			16:16	
	Զգուշացեք խռովություն զցողներից		Վերջին հրահանգներ	Զգուշացում և առաջին ետզրությունը
16:17-20	16:17-20	16:17-20	16:17-20ա	16:17-20
			16:20բ-21	
	Ողջույններ Պողոսի ընկերներց			Վերջին ողջյունները և երկրորդ ետզրությունը
16:21-23	16:21-24	16:21		16:21-23
		16:22	16:22	
		16:23	16:23	
Օրհներգություն	Օրհնություն		Ամփոփիչ փառաբանության աղոթք	Օրհներգություն
16:25-27	16:25-27	16:25-27	16:25-26	16:25-27
			16:27	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Սեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Ճանաչիր թեմաները: Համեմատիր քո թեմայի բաժանումները վերը նշված 5 քարգմանությունների հետ: Բաժանումները ներշնչված չեն, բայց դա բանալի է հետևելու բուն հեղինակի մտադրությանը, որը մեկնաբանության սիրտն է: Յուրաքանչյուր պարագրաֆ ունի մեկ կամ միայն մեկ թեմա:

Մեկ շնչով կարդացեք այս գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՐՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ 1-27hh.

Ա. Ուշադրություն դարձրեք, որ այս վերջին գլխում հիշատակված այս բոլոր կանայք Ավետարանի տարածման գործում Պողոսի գործընկերներն են եղել (հմմտ. Փիլ. 4:3): Փիբեն 1h-ում; Պրիսկիլան 3h-ում; Մարիամը 6h-ում; Յունիան (եթե Յունիոս է- ուրեմն տղամարդ է) 7h-ում; Տրիփանոսը և Տրիփոսը 12h-ում; Պերսիլոն 12h-ում; «նրա մայրը» 13h-ում; Յուլիան 15h-ում; և «նրա քույրը» 15h-ում: Չգուշացեք այս տեքստերի հիման վրա դոգմատիկ ենթադրություններ անել կապված կանանց ծառայության հետ: Բոլոր հավատացյալներն օժտված են պարզելներով (հմմտ. I Կոր. 12:7,11), ակտիվ ծառայողներ են (հմմտ. Եփ. 4:12): Աստվածաշունչը հաստատում է տղամարդու գլխավորությունը որպես Աստծո կամք: Այս ցուցակում մենք ունենք կին սարկավագ, Փիբե, և հավանական կին առաքյալ, Յունիան (հմմտ. Հովել 2:28; Գործք 2:16-21): Դժվար է իմանալ, թե ինչպես մեկնաբանել այս հարցը աստվածաշնչորեն, ըստ երևույթին Պողոսի տարօրինակ մտքերի պատճառով, ինչպիսին է I Կոր. 11:4-5 համեմատած 14:34:

Բ. Ուշադրություն դարձրեք այս անունների հնարավոր ռասայական առանձնահատկություններին

1. հավատացյալ հրեաներ: Ակիլոս, Պրիսկիլա, Անդրոնիկոս, Յունիա, Մարիամ
2. Հռոմեական ազնվական ընտանիքի անուններ: Պրիսկիլա, Ամպոլիաս, Ապեղես, Նարկիսե, Յուլիա, Փիղոդոզ;
3. Հրեական ազնվական ընտանիքի անուններ: Արիստոբուլոս, Հերովդիոն.

Գ. 1-16 համարները Պողոսի անձնական ողջուններն են, իսկ 17-20 համարները վերջին զգուշացումներն են կեղծ վարդապետների դեմ: 21-23 համարներում միսիոներական թիմը ողջուններ է ուղարկում Կորնթոսից:

Դ. 16-րդ գլխի քննարկումը Ֆ. Ֆ. Բրյուսի «Նոր Կտակարանի Թայնդեյի Մեկնաբանության» (*Tyndale New Testament Commentary* by F. F. Bruce) գրքի մեջ շատ օգտակար է: Եթե

հետաքրքրված եք անունները մանրամասն սերտելով, որոնք գտնվում են այս գլխում, կարդացեք 266-284էջ:

Ե. Որոշ կասկած կա այն մասին, թե որտեղ է նամակն ավարտվում: Ավարտում միտք է հանդիպում 14, 15 գլուխների վերջում (ձեռագիր P⁴⁶) և 16, հին հունական ձեռագրերում: Ինչևէ, ավանդական ավարտում միտքը 16:25-27 հայտնվում է P⁶¹, Ռ, B, C և D ձեռագրերում, ինչպես նաև հունական տեքստում գործածված Կլեմենտ Հռոմեացու կողմից (A.D. 95):

Վաղ հունական ձեռագրերում P⁴⁶, P⁶¹, Ռ, A, B, C, 24 համարը բացակայում է, ոչ էլ լատինական Վուլգատում կամ էլ հունարեն տեքստում, որի հետ աշխատում էր Օրիգեն Ալեքսանդրիացին: Տարբերակների ամբողջական քննարկումը կգտնեք Բրյուս Մ. Մեցգեր, «Հուններեն Նոր Կտակարանի Տեքստային Սեկնարանություն» (*A Textual Commentary on the Greek New Testament*, էջ 533-536):

ԲԱՌԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:1-2

¹Յանձնում եմ ձեզ մեր Փիբե քոյրը, որ սպասատր է Կենքրայի եկեղեցու: ²Որ նորան ընդունեք Տերով. ինչպես սուրբերին արժան է. եւ հոգ տանիք նորան ինչ բան որ ձեզանից պէտք ունենայ, որովհետեւ ինքն էլ շատերին խնամք է տարել, եւ իսկ ինձ էլ:

NASB (UPDATED) TEXT: 16: 1-2

¹I commend to you our sister Phoebe, who is a servant of the church which is at Cenchrea; ²that you receive her in the Lord in a manner worthy of the saints, and that you help her in whatever matter she may have need of you; for she herself has also been a helper of many, and of myself as well.

16:1 «Յանձնում եմ ձեզ» Սա հանձնարարական նամակ է Փիբե սարկավագուհու համար: Հավանական է, որ հենց նա է տարել Պողոսի նամակը Հռոմ: Նոր Կտակարանում կան հանձնարարական նամակների մի քանի ուրիշ օրինակներ (հմմտ. Գործք 18:27; I Կոր. 16:3; II Կոր. 3:1; 8:18-24; և Փիլ. 2:19-30):

«Փիբե» Նրա անունը նշանակում է «պայծառ» կամ «փայլուն»:

Արևելահայերեն «որ սպասատր է եկեղեցու» Արևմտահայերեն «որ եկեղեցիին սպասատրն է»

☐	
NASB, NKJV	“who is a servant of the church”
NRSV	“a deacon of the church”
TEV	“who serves the church”
JB	“a deaconess of the church”

Սա *diakonos* տերմինն է: Սա ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈՒՆՎ ԵԶԱԿԻ ԹԻՎ ԻԳԱԿԱՆ ՍԵՌ ձև է: Հունարեն լեզվում նշանակում է ծառայող, Այս բառն օգտագործվում է Քրիստոսի հետ կապված 15:8 և Պողոսի Եփ. 3:7; Կող. 1:23,25:

Կա ապացույց թե Նոր Կտակարանում և թե վաղ հետ-աստվածաշնչյան եկեղեցական գրվածքներում սարկավագուհիների ծառայության մասին: Մեկ ուրիշ օրինակ կանանց ծառայությունը տեղական եկեղեցում Նոր Կտակարանում հովիվների «որբևայրիների դերը» (հմմտ. I Տիմ. 3:11; 5:3-16): RSV, Ընդլայնված և Ֆիլիպս թարգմանություններում 16:1 կա «սարկավագուհի» բառը: NASB և NIV այսպիսի թարգմանություն ունեն տողատակի ծանուցման մեջ: NEB ունի «նա ով պաշտոն է զբաղեցնում»: Բոլոր հավատացյալները կանչված են, պարզևներով օժտված, զբաղված ծառայողներ են (հմմտ. Եփ. 4:12): Ոմանք կանչված են առաջնորդության ծառայության համար: Մեր ավանդույթները պետք է զիջեն Սուրբ Գրքին! Այս վաղ շրջանի սարկավագներն ու սարկավագուհիները ծառաներ էին և ոչ թե գործադիր/ղեկավար խորհրդի անդամներ:

Մ. Ռ. Վինսենթ, *Բառային Մերտողություններ*, հատոր 2, 752 և 1196 էջեր, ասում է, որ *Առաքելական Սահմանադրությունները*, տարեգրված 2-րդ դարի վերջերից կամ 3-րդ դարի սկզբերում, տալիս է տարբերությունը կին եկեղեցական ծառայողների պարտականությունների կամ ձեռնադրության միջև:

1. սարկավագուհիներ
2. որբևայրիներ (հմմտ. I Տիմ. 3:11; 5:9-10)
3. կույսեր (հմմտ. Գործք 21:9 և հավանականորեն I Կոր. 7:34)

Այս պարտականությունները ներգրավում էին:

1. խնամել հիվանդներին
2. խնամել նրանց, ովքեր հալածվում են ֆիզիկապես
3. այցելել նրանց, ովքեր հավատքի պատճառով բանտում են գտնվում
4. ուսուցանել նորադարձներին
5. մասնակցել կանանց մկրտությանը
6. որոշ եկեղեցու անդամ կին վերակացուներ

«եկեղեցի»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵԿԵՂԵՑԻ (*EKKLESIA*)

Այս հունարեն տերմինը, *ekklesia*, երկու բառերից է կազմված, «դուրս» և «կանչված» ուստի, տերմինը նշանակում է աստվածային կերպով կանչված մարդիկ: Վաղ եկեղեցին վերցրեց այս բառը աշխարհիկ իմաստով (հմմտ. Գործք 19:32,39,41) և որովհետև Մեպտուագինդումը օգտագործում է սա Իսրայելի «համայնք/ժողովուրդ» համար (հմմտ. Թվոց. 16:3; 20:4): Նրանք օգտագործեցին դա իրենց համար, որպես Հին Կտակարանի Աստծո ժողովուրդ: Նրանք նոր Իսրայելն էին (հմմտ. Հռ. 2:28-29; Գաղ. 6:16; I Պետ. 2:5,9; Հայտ. 1:6), Աստծո համաշխարհային միսիայի/առաքելության իրականացումը (հմմտ. Ծննդ. 3:15; 12:3; Ելից. 19:5-6; Մաթ. 28:18-20; Գուկ. 24:47; Գործք 1:8):

Այս տերմինը օգտագործվում է մի քանի իմաստներով Ավետարաններում և Գործք Առաքելոցում:

1. աշխարհիկ քաղաքային ժողով, Գործք 19:32,39,41
2. Աստծո տիեզերական/ամբողջական ժողովուրդը Քրիստոսում, Մաթ.16:18 և Եփեսացիս
3. Քրիստոսում հավատացյալների տեղական համայնք, Մաթ. 18:17; Գործք 5:11 (այս համարներում Երուսաղեմի եկեղեցին)
4. Իսրայելի հավաքական ժողովուրդը, Գործք 7:38, Ստեփանոսի քարոզի մեջ
5. Աստծո ժողովուրդը մարգում, Գործք 8:3 (Հուդա կամ Պաղեստին)

«Կենցրայի» Սա Կորնթոսի երկու նավահանգիստներից մեկն էր: Այս մեկն արևելյան կողմն էր (հմմտ. Գործք 18:18):

16:2 «Որ նորան ընդունէք Տէրով. ինչպէս արժան է.» Սա ԱՕՐԻՍՏ ՉԵԶՈՔ ՍԵՌՍՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ [մի կողմ դրած] *prosdechomai* բառի, որը նշանակում է «որպէս հյուր բարյացակամորեն ընդունել» (հմմտ. Փիլ. 2:29): Պողոսը վստահեց այս կնոջը և ցանկացավ, որ եկեղեցին ընդունի և օգնի նրան հանուն իր սիրո/իր անունից:

«սուրբերին» Այս տերմինը նշանակում է «սուրբ մարդիկ»: Այն նկարագրում է ոչ միայն հավատացյալների դիրքը Հիսուսում, այլ նաև, հույս ունենալով, նրանց աստվածահաճո կյանքերը, աստիճանաբար կատարվող բնութագրող նրանց նոր դիրքը Քրիստոսում: «Սուրբ» տերմինը միշտ ՀՈԳՆԱԿԻ է բացի մի տեղից Փիլ. (4:21) և նույնիսկ այնտեղ դա ընդհանուր իմաստով է: Քրիստոնէա լինել նշանակում է հավատացյալ համայքի, ընտանիքի, մարմնի մի մասը կազմել: Արևմուտքում ժամանակակից եկեղեցին արժեքագրկել/թերագնահատել է աստվածաշնչյան հավատքի այս ընդհանուր ասպեկտը: Տես Հատուկ Թեմա: Սուրբեր 1:7.

«եւ հոգ տանիք նորան ինչ բան որ ձեզանից պէտք ունենայ» Կան երկու բայեր ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ: Առաջինը, *paristēmi* (ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ), նշանակում է «պաշտպանել այնպէս ինչպէս օգնել»: Երկրորդը, *chrēzō* (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ), նշանակում է «օգնել այն ամենով ինչ պահանջվում է» (հմմտ. Ս Կոր. 3:1):

Սա առնչվում էր նյութական պաշարներից/մթերքին շրջիկ ծառայողների համար: Սա էր հանձնարարական մասնակների նպատակը:

Արևելահայերեն «շատերին խնամք է տարել»
Արևմտահայերեն «շատերու խնամք տարավ»



- NASB, NKJV** “has been a helper of many”
- NRSV** “has been a benefactor of many”
- TEV** “for she herself has been a good friend to many people”
- JB** “has looked after a great many people”

Այս տերմինը, *proistatis*, գտնվում է միայն այստեղ Նոր Կտակարանում: Սա կարող էր վերաբերել ֆիզիկական կամ ֆինանսական աջակցությանը: Այս բառը սկզբնապես վերաբերում էր հարուստ խնամակալուհուն/պաշտպանուհուն: Քանի որ Փիբեն ճամփորդում էր Հռոմ (հմմտ. 1 հ.) և օգնել էր շատերին (հմմտ. 2 հ.), սա կարող է նաև պատմականորեն ճիշմարտություն լինել նրա համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:3-16

³Բարեւ տուէք Պրիսկիղային եւ Ակիլոսին՝ իմ գործընկերներին Քրիստոս Յիսուսումը.⁴Որ իմ անձի տեղ իրանց վիզն առաջարկեցին, որոնցից ոչ միայն ես եմ շնորհակալ՝ այլ եւ հեթանոսների բոլոր եկեղեցիները.⁵Եւ նորանց տանը լինող եկեղեցուն. բարեւ տուէք Եպենետին՝ իմ սիրելուն որ Աքայեայի անդրանիկն է ի Քրիստոս: ⁶Բարեւ տուէք Մարիամին՝ որ շատ աշխատեց մեր վերայ:⁷Բարեւ տուէք Անդրոնիկոսին եւ Յունիային՝ իմ ազգականներին, եւ գերութեանս ընկերներին. որ առաքեալների մէջ երեւելի են՝ որ ինձանից առաջ են եղել Քրիստոսումը: ⁸Բարեւ տուէք Ամպղիասին իմ սիրելուն Տէրումը: ⁹Բարեւ տուէք Ուրբանոսին՝ մեր գործակցին Քրիստոսումը, եւ Ստաքէսին իմ սիրելուն: ¹⁰Բարեւ տուէք Ալեղեսին՝ որ ընտիր է Քրիստոսումը:¹¹Բարեւ տուէք նորանց՝ որ Արիստոբոլոսի տանիցն են. բարեւ տուէք Հերովդիոնին՝ իմ աղգականին. բարեւ տուէք նորանց, որ Նարկիսէի տանիցն են Տէրումը:¹²Բարեւ տուէք Տրիփանոսին եւ Տրիփոսին՝ որ աշխատատրներ են Տէրումը. բարեւ տուէք Պերսիդէ սիրելուն՝ որ

շատ աշխատեց Տէրումը: ¹³Բարեւ տուէք Ռուփոսին՝ որ ընտիր է Տէրումը. եւ նորա եւ իմ մօրը: ¹⁴Բարեւ տուէք Ասիւնկրիտոսին, Փղեգոնտին, Երմասին, Պատրոբային, Երմեսին, եւ եղբայրներին՝ որ նորանց հետ են: ¹⁵Բարեւ տուէք Փիղոդոզին եւ Յուլիային եւ Ներէոսին եւ նորա քրոջը եւ Ողիմպիային եւ բոլոր սուրբերին՝ որ նորանց հետ են: ¹⁶Բարեւ տուէք իրար սուրբ համբոյրով. բարեւ են տալիս ձեզ Քրիստոսի բոլոր եկեղեցիները:

NASB (UPDATED) TEXT: 16:3-16

³Greet Prisca and Aquila, my fellow workers in Christ Jesus, ⁴who for my life risked their own necks, to whom not only do I give thanks, but also all the churches of the Gentiles; ⁵also greet the church that is in their house. Greet Epaphroditus, my beloved, who is the first convert to Christ from Asia. ⁶Greet Mary, who has worked hard for you. ⁷Greet Andronicus and Junias, my kinsmen and my fellow prisoners, who are outstanding among the apostles, who also were in Christ before me. ⁸Greet Ampliatus, my beloved in the Lord. ⁹Greet Urbanus, our fellow worker in Christ, and Stachys my beloved. ¹⁰Greet Apelles, the approved in Christ. Greet those who are of the *household* of Aristobulus. ¹¹Greet Herodion, my kinsman. Greet those of the *household* of Narcissus, who are in the Lord. ¹²Greet Tryphaena and Tryphosa, workers in the Lord. Greet Persis the beloved, who has worked hard in the Lord. ¹³Greet Rufus, a choice man in the Lord, also his mother and mine. ¹⁴Greet Asyncritus, Phlegon, Hermes, Patrobas, Hermas and the brethren with them. ¹⁵Greet Philologus and Julia, Nereus and his sister, and Olympas, and all the saints who are with them. ¹⁶Greet one another with a holy kiss. All the churches of Christ greet you.

16:3 «Պրիսկիդային եւ Ակիլդասին» Ղուկասը նրան կոչում է Պրիսկիդա: Նա հաճախ իր ամուսնու անվամբ է կոչվում, որը որ շատ անսովոր էր (հմմտ. Գործք 18:18, 26; I Կոր. 16:19; II Տիմ. 4:19): Հնարավոր է, որ նա հռոմեական ազնվականություն էր կամ իշխող անհատ այս գույզի: Թե Պողոսը և թե այս գույզը վրանագործներ կամ կաշեգործներ էին: Պողոսը նրանց կոչում է «Հիսուս Քրիստոսով գործընկերներ»: Հավանական է նա լսել էր Հռոմի եկեղեցու ուժեղ և տկար կողմերի մասին հենց այս գույզից:

16:4 «իրանց վիզն առաջարկեցին» Սա իդիոմա/խոսակցական ոճ է վերցրած «ղահճի կացին» տերմինից: Աստվածաշունչը լուռ է մնում այն մասին, թե Պողոսն ինչ ինկատի ունի այս արտահայտությունով:

«որոնցից ոչ միայն ես եմ շնորհակալ՝ այլ եւ հեթանոսների բոլոր եկեղեցիները» Պողոսը շատ երախտապարտ էր այս գույզի ընկերության և ակտիվ օգնության համար: Նա նույնիսկ զարգացնում է նրանց ծառայությունը «հեթանոսների բոլոր եկեղեցիներ»-ին: Ինչպիսի վճռական/պատասխանատու հաստատում/հայտարարություն և գոհություն: Դա կարող է վերաբերել նրանց քաջալերանքին և Ապողոսից տեղեկացված(հմմտ. Գործք 18:24-28):

16:5 «եկեղեցուն» Սա վերաբերում է մարդկանց և ոչ թե շենքին: Տերմինը նշանակում էր «կանչվածներ»: Հունարեն Հին Կտակարանում, Սեպտուագինդում (LXX), այս տերմինը օգտագործվում էր թարգմանելու համար եբրայերեն *qahal* տերմինը, թարգմանված «համայնք»: Վաղ եկեղեցին իրենց համարում էին, որպես իրական ժառանգորդներ/փոխարինողներ և Հին Կտակարանի «Իսրայելի համայնք/խորհուրդ»-ի իրականացում և ոչ թե աղանդավորական բաժանված խումբ: Տես Հատուկ Թեմա 16:1.

«Եւ նորանց տանը լինող» Վաղ քրիստոնեաները հավաքվում/հանդիպում էին տներում (հմմտ. 16:23; Գործք 12:12; I Կոր. 16:19; Կող. 4:15 և Փիլիմոն 2): Եկեղեցաշենքերը հայտնվեցին Ք. Ն. 3-րդ դարում:

«Եպեներտին» Այս մարդու անունը նշանակում է «գովաբանված/փառաբանված»

«որ անդրանիկն է ի Քրիստոս» Սա նույնպես ասվում է Ստեփանի սան մասին I Կոր. 16:15:

«Աքայեայի» Սա վերաբերում էր հռոմեական նահանգին, որը կազմված էր ներկայիս արևմտյան Թուրքիայի մեկ երրորդ մասը:

16:6 «Մարիամին՝ որ շատ աշխատեց մեր վերայ» Այս անձի մասին ոչինչ հայտնի չէ: Հնարավոր է, որ նա միսիոներ է եղել Հռոմի եկեղեցուց: Այնքան շատ հիասքանչ, աստվածապաշտ հավատացյալներ կան, որ անհայտ/անծանոթ են մեզ, սակայն լավ հայտնի Աստծուն:

16:7 «գերութանս ընկերներին» Ժամանակակից գիտնականները համոզված չեն, թե որ բանտարկությանն է սա վերաբերում: Պողոսն իր հավատքի համար շատ տառապեց (հմմտ. II Կոր. 4:8-11; 6:4-10; 11:25-28): Նա եղել է Փիլիպեի, Կեսարիայի, Հռոմի բանտերում և հավանական է նաև ուրիշ տեղերի էլ (հմմտ. Եփեսոս, I Կոր. 15:32; II Կոր. 1:8):

«Յունիային» Այս անունը կարող էր լինել թե արական թե իգական, որը պետք է որոշվի շեշտի նշանով: Կան հունարեն տարբերակների ձեռագիր մատյաններ, «Յունիային» գտնվում է MSS \mathcal{R} , A, B, C, D, F, G & P ձեռագրերում, սակայն առանց շեշտի նշանի: Շեշտված/ընդգծված իգական ձևը գտնվում է MSS B^2 , D^2 , և 0150 ձեռագրերում: Վաղ պապիրուսե ձեռագիր մատյանը P^{46} և որոշ Վուլգատ և Ղպտի թարգմանություններում, ինչպես նաև հունարեն տեքստերը օգտագործվել է Ջերոմի կողմից «Յուլիան» որը իգական է: Որոշ գիտնականներ մտածում են, որ սա գրչի կատարած սխալ էր: Այս իգական ձևը հանդիպում է 16:15: Հնարավոր է, որ այն երկու անձիք, ովքեր թվարկված են 7h. (1) երկու հրեա հավատացյալներն էին, ովքեր բանտարկված էին Պողոսի հետ; (2) եղբայր և քույր; կամ (3) ամուսին և կին: Եթե սա իգական է և եթե «առաքյալներ» արտահայտությունը վերաբերում է ավելի լայն կիրառմանը այդ տերմինի քան «Տասներկուսը», ուրեմն սա կին առաքյալ էր:

Հետաքրքիր է նաև այն, որ «Յունիային» արտասանությունը չի գտնվել ոչ մի տեղ հռոմեական գրականության մեջ կամ արձանագրություններում սակայն «Յունիա» անունը շատ ընդունված անուն էր: Դա հռոմեական ընտանիքի անուն էր: Լրացուցիչ ինֆորմացիայի համար կանայք ծառայության մեջ տես *Կին Առաջնորդները և Եկեղեցին*, Լինդա Լ. Բելվիլ, էջ. 188 տողատակի ծանոթագրություն 42:

Արևելահայերեն «որ առաքեալների մեջ երեւելի են»

Արևմտահայերեն «որոնք առաքեալներուն մեջ երեւելիներ են»

□

NASB “who are outstanding among the apostles”

NKJV “who are of note among the apostles”

NRSV “they are prominent among the apostles”

TEV “they are well known among the apostles”

NJB “to those outstanding apostles”

Սա կարող է վերաբերել Տասներկուսին, եթե այդպես է այս երկուսը շատ հայտնի էին նրանց, կամ ծառայողների ավելի լայն խումբ հայտնի որպես «առաքյալներ» (հմմտ. Գործք 14:4, 14; 18:5;

I Կոր. 4:9; Գաղ. 1:19; Փիլ. 2:25; I Թես. 2:6): Կոնտեքստը բովանդակում է այս ավելի լայն կիրառությունը, ինչպես Եփ. 4:11, բայց ՈՐՈՇԻՉ ՀՈՂԸ վերաբերում է Տասներկուսին: Տես Հատուկ Թեմա: Send (*Apostellō*) 1:1:

«որ ինձանից առաջ են եղել Քրիստոսումը» Սա պարզ նշանակում է, որ նրանք փրկված էին և ակտիվ կերպով Քրիստոսի շառայության մեջ էին մինչև Դամասկոսի ճանապարհին Պողոսի դարիձի գալը:

16:8-16 Այս բաժնի անուններն անհայտ են գիտնականներին: Նրանք Աստծո և Պողոսի սիրելիներն են, բայց նրանց անուններն ու ծառայությունները արձանագրված չեն Նոր Կտակարանում կամ վաղ քրիստոնեական գրականության մեջ: Որն/Ինչն է ուշագրավ, որ կա խառնուրդ հասարակ ստրուկի անունների և հռոմեական և հրեական ազնվական ընտանեկան անունների մեջ: Կան տղամարդիկ և կանայք: Կան հարուստ ազատ արձակված ստրուկ և շրջիկ քարոզիչներ: Կան օտարականներ Պարսկաստանից: Բոլոր անջրպետները հաղթահարված են Հիսուս Քրիստոսի եկեղեցում (հմմտ. 3:22; 10:12; Հովել 2:28-32 [Գործք 2:14-21]; I Կոր. 12:11; Գաղ. 3:28; Կող. 3:11):

16:8 «Ամադիաս» Այս անունը, ինչպես Պրիսկիլա և Յունիա անունները, շատ հայտնի հռոմեական ընտանեկան անուն է:

«իմ սիրելուն Տերումը» «Սիրելին» տերմինը օգտագործվում է Հոր Աստծո կողմից Որդի Հիսուսի համար Մաթ. 3:17 և 17:5, որը կարող է տիտղոս լինել Եսայի մարգարեության մեջ Ծառայի Երգեր-ի հատվածից (հմմտ. Մաթ. 12:18, մեջբերում Եսա. 42:1): Ինչևէ, Պողոսն օգտագործում է դա հավատացյալներին ուղղելու համար (հմմտ. 1:7; 16:8,9; I Կոր. 4:14,17; 15:58; Եփ. 6:21; Փիլ. 2:12; Կող. 4:7,9,14; I Տիմ. 6:2; Փիլեմոն v. 16):

16:9 «Ուրբանոս» Անունը նշանակում է «քաղաքաբնակ» կամ «քաղաքային ծագում»:

«Քրիստոսումը» Սա կրկնվող արտահայտություն է, «Տերումը» արտահայտության հետ միասին, ամբողջ այս գլխում: Այս քրիստոնեա ծառայողները մեկ ընտանիքի, մեկ փրկչի մասն էին կազմում:

«Ստաբեսին» Սա հազվագյուտ անուն է, որը նշանակում է «հասկ» (ցորենի): Հնագիտությունը գտել է, որ այս անունը կապված է Կեսարի/կայսրի ընտանիքի հետ:

16:10 «որ ընտիր է Քրիստոսումը» Այս իդիոմատիկ/խոսակցական արտահայտությունը վերաբերվում է մեկին, որը անցել էր փորձությունների միջով և մնացել էր հավատարիմ: Տես Հատուկ Թեմա 2:18.

«որ տանիցն են» Որոշ գիտնականներ ենթադրում են, որ այս արտահայտությունը վերաբերում է Արիստոբոլոսի տան ծառային և ոչ թե ընտանիքի անդամներին, և նույնը վերաբերում է 11հ. արտահայտությանը, «որ Նարկիստի տանիցն են»:

«Արիստոբոլոսի» Որոշ գիտնականներ ենթադրում են, որ սա Հերովդես Ագրիպաս I եղբայրն էր (որը Գործք 12 սպանել էր Հակոբոս Առաքյալին): Եթե այդպես է, այն ցույց է տալիս, թե ինչպես է ավետարանը սկսել թափանցել այս թագավորական Իդումական ընտանիք:

16:11 «Հերովդիոնին» Հնարավոր է նա եղել է Հերովդեսի ընտանիքի ծառա:

«որ Նարկիսի տանիցն են» Սա կարող է վերաբերվել Կայսր Կլավդիոսի հայտնի ծառային: Եթե այդպես է, այն ցույց է տալիս թե ինչպես է ավետարանը սկսել թափանցել հռոմեական թագավորության մեջ:

16:12 «Տրիփանոսին» Այս անունը նշանակում է «նուրբ/համեղ»

«Տրիփոսին» Այս անունը նշանակում է «նուրբ/քնքուշ»: հավանական է նրանք քույրեր էին, նույնիսկ երկվորյակներ:

«Պերսիդե» Սա նշանակում է «Պարսիկ կին»:

16:13 «Ռուփոս» Այս անունը նշանակում է «կարմիր» կամ «կարմրա-գլուխ»: Ռուփոս անունը շատ ճանաչված անուն է Հռոմում (հմմտ. Մարկ. 15:21): Արդյոք նա կարող է ճանաչվել այս անձի հետ անհայտ է, բայց նաև հնարավոր:

Արևելահայերեն «որ ընտիր է Տերունը»
Արևմտահայերեն «Տերոջնով ընտրուածին»



NASB	“a choice man in the Lord”
NKJV, NRSV	“chosen in the Lord”
TEV	“that outstanding worker in the Lord’s service”
JB	“a chosen servant of the Lord”

Սա բառացի նշանակում է «ընտրվածը»: Այստեղ տերմինը վերաբերում է ոչ միայն Աստծո կանչին, այլ նաև իր ճիշտ կյանք ապրելով: Նրա մայրը Պողոսին վերաբերվում էր մեծ կապվածությամբ/սիրով նույնպես:

16:14 «Հերմես» Սա հաջողության չաստծո անունն է: Սա հասարակ ծառայի անուն էր համարվում առաջին դարում հունա-հռոմեական աշխարհում:

16:15 «բոլոր սուրբերին» Տես Հատուկ Թեմա: Սուրբեր 1:7.

16:16 «սուրբ համբոյրով» Ոչ մի վկայություն/փաստ չկա, թե ով ում համբուրեց, կամ երբ կամ որտեղ: Ժողովարանում, որի ողջունի ձևը շարունակվում էր եկեղեցում, տղամարդը համբուրում էր տղամարդու այսը, իսկ կինը՝ կնոջ (հմմտ. I Կոր. 16:20; II Կոր. 13:12; I Թես. 5:26; I Պետ. 5:14): Ողջունի այս գործողությունը դարձավ խնդիր եկեղեցու ներսում և սխալ ըմբռնելի էր անհավատների կողմից և ուստի այն դադարեցվեց:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:17-20

¹⁷Աղաչում եմ ձեզ, եղբարք, որ մտիկ տաք նորանց՝ որ հերձուածներ եւ գայթակղութիւններ են շինում այն վարդապետութիւնիցը դուրս՝ որ դուք սովորեցիք՝ եւ հեռու քաշուեցէք նորանցից:

¹⁸Որովհետեւ այդպիսիները մեր էր Քրիստոսին չեն ծառայում, այլ իրանց որովայնին. եւ քաղցր խօսքերով եւ եւ գովութիւնով խաբում են անմեղների սրտերը: ¹⁹Որովհետեւ ձեր հնազանդութիւնն ամենի ականջը հասաւ. եւ սորա համար ուրախ եմ ձեզ համար. միայն ուզում եմ՝ որ դուք իմաստուն լինիք դէպի բարին՝ եւ միամիտ դէպի չարը:

²⁰Եւ խաղաղութեան Աստուածը խորտակէ սատանային ձեր ոտների տակ շուտով. մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը լինի ձեզ հետ. ամէն:

NASB (UPDATED) TEXT: 16:17-20

¹⁷Now I urge you, brethren, keep your eye on those who cause dissensions and hindrances contrary to the teaching which you learned, and turn away from them. ¹⁸For such men are slaves, not of our Lord Christ but of their own appetites; and by their smooth and flattering speech they deceive the hearts of the unsuspecting. ¹⁹For the report of your obedience has reached to all; therefore I am rejoicing over you, but I want you to be wise in what is good and innocent in what is evil. ²⁰The God of peace will soon crush Satan under your feet. The grace of our Lord Jesus be with you.

16:17 Այս գգուշացումը թվում է թե անսպասելի է մտնում կոնտեքստի մեջ: 17-18հհ. կա մի ցանկ, որտեղ թվարկվում է, թե ինչեր էին անում այս կեղծ վարդապետները:

1. նրանք առաջացրեցին բաժանումներ
2. նրանք արգելքներ դրեցին հավատացյալի ճանապարհին
3. նրանք սովորեցրեցին հակառակը եկեղեցու տված ուսմունքի
4. նրանք ծառայում էին իրենց որովայնին
5. նրանք խաբում էին անմեղների սրտերը իրենց քաղցր խօսքերով եւ գովութիւնով

«հեռու քաշուեցէք նորանցից» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ: Սա կրկնվող/հակադարձ թեմա է (հմմտ. Գաղ. 1:8-9; II Թես. 3:6,14; II Հովհ. 10):

16:18

Արևելահայերեն «իրանց որովայնին»
Արևմտահայերեն «իրանց որովայնին»

NASB, NRSV

- TEV** “their own appetites”
- NKJV** “their own belly”
- NJB** “their own greed”

Սա բառացի «որովայն,ստամոքս» է (հմմտ. Փիլ. 3:19; իսոս 1:12): Կեղծ վարդապետները ամեն բան շրջեցին/փոխեցին՝ հարմարեցնելով իրենց հիմնական հետաքրքրություններին:

«քաղցր խօսքերով եւ գովութիւնով» Կեղծ վարդապետները հաճախ ֆիզիկապես գրավիչ են և ունեն դինամիկ/շարժուն անհատականություն (հմմտ. Կող. 2:4): Նրանք հաճախ շատ տրամաբանական են իրենց մատուցման/պրեզենտացիայի մեջ: Զգուշացե՛ք! Ահա մի քանի հնարավոր աստվածաշնչյան ստուգարքներ/տեստեր՝ կեղծ վարդապետներին ճանաչելու համար, որոնք գտնվում են 2 Օրին. 13:1-5; 18:22; Մաթ. 7; Փիլ. 3:2-3, 18-19; I Հովհ. 4:1-6:

«խաբում են անմեղների սրտերը» Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որը նշանակում/ցույց է տալիս շարունակական խաբեություն: Այս ըստ երևույթին նոր կամ պարզամիտ/միամիտ հավատացյալները խոցելի էին («չարի դեմ անփորձ»):

16:19 «ձեր հնազանդութիւնն ամենի ականջը հասաւ» Սա վերաբերվում է 1:8: Սա Պողոսի հիպերբոլաներից/չափազանցություններից մեկն է:

«իմաստուն լինիք դէպի բարին՝ եւ միամիտ դէպի չարը» Սա անդրադարձնում է Հիսուսի ուսմունքը (հմմտ. Մաթ. 10:16; Դուկ. 10:3):

16:20 «խաղաղութեան Աստուածը» Սա հիանալի տիտղոս է Աստծո համար (հմմտ. 15:33; II Կոր. 13:16; Փիլ. 4:9; I Թես. 5:23 և Եբր. 13:20):

«խորտակէ սատանային ձեր ոտների տակ շուտով» Սա ակնարկում է Ծննդ. 3:15: Հավատացյալի հարաբերությունը Մեսիայի հետ տալիս է հաղթանակ նաև նրանց (հմմտ. I Հովհ. 5:18-20): Սա ահարկու խոստում և պատասխանատվություն է: Այս կոնտեքստում սատանան համառոտում/կարճեցնում է կեղծ վարդապետների կողմից առաջացած խառնաշփոթությունն ու բաժանումը, որոնք պատճառ դարձան, որ եկեղեցին կորցնի իր մեծ պատվիրանի կենտրոնը/ֆոկուսը: Կեղծ վարդապետների ետևում դիվայինն է: Ավետարանը, ինչևէ, ցրում է խավարը և չարը նրանց համար, ովքեր ընդունում/հարում են այդ և ապրում են դա: Որպես լավ գիրք այս թեմայի վերաբերյալ կարող ես վերցնել *Երեք Վճռական/Կրիտիկական Հարցեր Հոգևոր Պատերազմի Մասին*, Կլինտոն Ե. Առնոլդ, *Three Crucial Questions About Spiritual Warfare*, by Clinton E. Arnold.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆՁՆԱԿԱՆ ՉԱՐԸ

Այս թեման շատ բարդ մի քանի պատճառներով:

1. Հին Կտակարանը չի բացահայտում սատանային, որպես ամեն բարիքի անիծված թշնամին, այլ որպես ՅԱՀՎԵ-ի ծառա, որը մարդկությանն առաջարկում է այլընտրանք և մարդուն մեղադրում անարդարության մեջ:
2. Աստծո այս հակառակորդի անձի գաղափարը զարգացավ ներ-աստվածաշնչյան (ոչ-կանոնական) գրականության մեջ պարսկական կրոնի (գահադաշտական) ազդեցության ներքո: Իսկ սա իր հերթին շատ ուժեղ ազդեցություն գործեց ռաբբիական հուդայականության վրա:
3. Նոր Կտակարանը զարգացնում է Հին Կտակարանի թեմաները զարմանալիորեն կատարյալ, սակայն ընտրողական կատեգորիաներում:

Եթե մոտենանք չարի ուսումնասիրմանը աստվածաշնչյան աստվածաբանության տեսանկյունից (յուրաքանչյուր գիրք կամ հեղինակ կամ ժանր ուսումնասիրված և հետազոտված է առանձին-առանձին), ապա շատ տարբեր տեսակետեր չարի վերաբերյալ հայտնվում են:

Եթե, այնուամենայնիվ, չարի ուսումնասիրման մոտեցումը ոչ-աստվածաշնչյան կամ աստվածաշնչից դուրս աշխարհիկ կրոնների կամ արևելյան կրոնների մոտեցում է, ուրեմն Նոր Կտակարանի զարգացումներից շատերը նախանշան հանդիսացավ պարսկական դուալիզմի և հունա-հռոմեական սպիրիտիզմի:

Եթե մեկը սկզբից բացարձակ վստահ է Սուրբ Գրքի աստվածային հեղինակությանը, ապա Նոր Կտակարանում այս թեմայի զարգացումը պետք է դիտվի որպես պրոգրեսիվ հայտնություն: Քրիստոնյաները չպետք է թույլատրեն հուդայական ժողովրդական բանահյուսության կամ արևմտյան գրականության (օրինակ Գանթե, Միլտոն) սահմանել աստվածաշնչյան գաղափարը: Հայտնության այս բաժնում անշուշտ գոյություն ունի և գաղտնիք և անորոշություն: Աստված ընտրել է չհայտնել չարի բոլոր տեսակետերը, նրա ծագումը, նրա նպատակը, այլ Նա հայտնեց նրա պարտությունը:

Հին Կտակարանում սատանա կամ ամբարիշտ/մեղադրող/հակառակորդ տերմինը կարծես վերաբերում է երեք առանձին խմբերի

1. մարդ հակառակորդներ (I Թագ. 29:4; II Թագ. 19:22; III Թագ. 11:14,23,25; Սաղ. 109:6)
2. հրեշտակային հակառակորդներ (Թվոց. 22:22-23; Չաք. 3:1)
3. սատանայական/դիվային հակառակորդներ (I Մնաց. 21:1; III Թագ. 22:21; Չաք. 13:2)

Միայն ավելի ուշ միջկտակարանային շրջանում է Ծննդոց 3-ի օձը ճանաչվում է որպես սատանա (հմմտ. Գիրք Իմաստության 2:23-24; II Ենոք 31:3), և նույնիսկ ավելի ուշ սա դառնում է ռաբբիական ուսմունքի մաս (հմմտ. *Sot* 9բ և *Sanh.* 29ա): Ծննդոց 6-ի «Աստծո որդիները» դառնում

են հրեշտակներ I Ենոք 54:6: Ես այս ամենը նշում եմ ոչ թե նրա համար, որ պնդեմ կոնկրետ աստվածաբանական հիմնավորում, այլ ցույց տալու համար դրա զարգացման գործընթացը: Նոր Կտակարանում այս հիմնկտակարանային գործունեությունները վերաբերվում են հրեշտակային ծագում ունեցող չարին, (այն է սատանա) II Կոր. 11:3; Հայտ. 12:9:

Հենվելով Հին Կտակարանում չարի անձեղության ծագումը դժվար է կամ անհնարին (սա կախված է ձեր տեսանկյունից): Այս բարոյությունների ամենագլխավոր պատճառներից մեկը Իսրայելի բացարձակ մոնոթեիզմը՝ միաստվածությունը (հմմտ. III Թագ. 22:20-22; Ժող. 7:14; Ես. 45:7; Ամովս 3:6): Իսրայելացիները բոլոր կապված պատճառները վերագրում են ՅԱՀՎԵ-ին՝ ցույց տալու համար Նրա եզակիությունը/անզուգական լինելը և առաջնությունը (հմմտ. Ես. 43:11; 44:6,8,24; 45:5-6,14,18,21,22):

Հնարավոր ինֆորմացիայի աղբյուրները կենտրոնանում են (1) Հոր 1-2 որտեղ Սատանան «Աստծո որդիներից» մեկն է (այն է, հրեշտակներ) կամ (2) Եսայի 14; Եզեկ. 28 որտեղ հպարտ մերձավոր արևելքի թագավորները (Բաբելոն և Տյուրոս) օգտագործվում են նկարագրելու համար սատանայի հպարտությունը (հմմտ. I Տիմ. 3:6): Այս տեսակ մոտեցման առիթով ես ունեցել եմ խառը զգացմունքներ: Եզեկիելն օգտագործում է Եղեմի Պարտեզ փոխաբերությունը ոչ միայն Տյուրոսի թագավորի համար որպես սատանա (հմմտ. Եզեկ. 28:12-16), այլ նաև Եգիպտոսի թագավորի համար որպես Բարու և Չարի Գիտության Ծառը (Եզեկ. 31): Ինչևէ, Ես. 14, մասնավորապես 12-14hh., թվում է նկարագրվում է հրեշտակային ըմբոստությունը հպարտության միջոցով: Եթե Աստված ուզում է հայտնել մեզ սատանայի առանձնահատուկ բնությունը և ծագումը ապա սա ամենաուղղակի ձևն է և տեղը դա անելու համար: Մենք պետք է զգուշանանք գոյություն ունեցող սիստեմատիկ աստվածաբանության վերցնելով փոքր, երկիմաստ/անորոշ մասերը տարբեր կտակարանների, հեղինակների, գրքերի, և ժանրերի և միացնելով դրանք կարծես մեկ աստվածային գրուխկոտրուկի/փազլ մասեր:

Ալֆրեդ Էդերշեյմ (*Հիսուս Մեսիայի Կյանքն ու Ժամանակները, The Life and Times of Jesus the Messiah*, հատ. 2, հավելված XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]) ասում է, որ Ռաբբիական Հուդայականությունը չափից ավելի ներգործված է եղել պարսկական դուալիզմի և դիվային տեսությունով: Ռաբբիները լավ աղբյուր չեն ճշմարտության համար այս բնագավառում: Հիսուսի ուսմունքը արմատականորեն տարբերում է ժողովարանի ուսմունքներից: Ես կարծում եմ, որ ռաբբիական գաղափարը հրեշտակային միջամտության և ընդդիմության Մովսեսական Օրենքում Մինա լեռան վրա դուռ բացեց հետևյալ գաղափարին՝ ՅԱՀՎԵ-ի և ամբողջ մարդկության չար հրեշտակապետը: Երկու բարձր աստվածները իրանական (գրահաղաշտական) դուալիզմի, *Ահլիման* և *Օրմազա*, բարի և չար, և այս դուալիզմը զարգացավ հուդայական սահմանափակ դուալիզմի ՅԱՀՎԵ և սատանա:

Անշուշտ Նոր Կտակարանում կա պրոգրեսիվ/առաջադիմական հայտնություն չարի զարգացման հետ կապված, բայց ոչ այնպես մանրամաս զարգացած/մշակված ինչպես ռաբբիներն են հռչակում: Այս տարբերության լավ օրինակներից է «պատերազմ երկնքում»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, սակայն յուրահատուկները տրված չեն: Նույնիսկ այն ինչ տրված է ծածկված է ապոկալիպտիկ ժանրում (հմմտ. Հայտ. 12:4,7,12-13): Չնայած սատանան պարտված է և գերության մեջ է երկրի վրա, նա դեռ գործում է որպես ՅԱՀՎԵ-ի ծառա (հմմտ. Մաթ. 4:1; Դուկ. 22:31-32; I Կոր. 5:5; I Տիմ. 1:20):

Մենք պետք է սանձենք մեր հետաքրքրասիրությունը այս բնագավառում: Կա անձնական մղում փորձության և չարի հանդեպ, բայց կա միայն մեկ Աստված և մարդը դեռևս պատասխանատու է իր ընտրությունների համար: Կա հոգևոր պատերազմ թե փրկությունից առաջ թե հետո: Հաղթանակը միայն կարող է գալ և մնալ Եռյակ Աստծո մեջ և միջոցով: Չարը պարտվել է և կհեռացվի/կվերցվի:

«մեր Տեր Յիսուս Քրիստոսի շնորհքը լինի ձեզ հետ» Սա սովորական փակման/վերջին խոսք է Պողոսի համար (հմմտ. I Կոր. 16:23; II Կոր. 13:14; Գաղ. 6:18; Փիլ. 4:23; Կող. 4:18; I Թես. 5:28; II

Թես. 3:18 և նաև Հայտ. 22:21): Հավանական է գրվել է իր իսկ ձեռքով: Սա իր նամակները վավերացնող ձև էր (հմմտ. II Թես. 3:17; I Կոր. 16:21; Կող. 4:18):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:21

²¹Բարեւ եմ տալիս ձեզ Տիմոթէոսը իմ գործընկերը, եւ Ղուկիոսը եւ Յասոնը եւ Սոսիպատրոսը իմ ազգականները:

NASB (UPDATED) TEXT: 16:21

²¹**Timothy my fellow worker greets you, and so do Lucius and Jason and Sosipater, my kinsmen.**

16:21-23 Այս համարները ետգրություն են: Պողոսի Կորնթոսի գործընկերները ուղարկեցին իրենց ողջյունները:

16:21 «**Ղուկիոս**» Սա կարող էր լինել (1) բժիշկ Ղուկասը (հմմտ. Կող. 4:14), կամ հնարավոր է իղիոնա էր «բարձրագույն կրթությամբ մեկի» մասին (2) Ղուկիոս Կիրենացին (հմմտ. Գործք 13:1); կամ (3) անհայտ/անծանոթ քրիստոնեա:

«**Յասոնը**» Հավանական է սա այն Յասոնն է, որի տանը մնաց Թեսաղոնիկեին (հմմտ. Գործք 17:5-9).

«**Սոսիպատրոս**» Հավանական է սա Սոպատրոս Բերիացին է Գործք 20:4:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:22

²²Բարեւ եմ տալիս ձեզ ես՝ Տերտիոս, որ այս թուղթը գրեցի Տերմունը:

NASB (UPDATED) TEXT: 16:22

²²**I, Tertius, who write this letter, greet you in the Lord.**

16:22 «**եւ՝ Տերտիոս, որ այս թուղթը գրեցի**» Պողոսն օգտագործում էր դպիր (*amanuensis*) իր նամակները գրելու համար (հմմտ. I Կոր. 16:21; Գաղ. 6:11; Կող. 4:18; II Թես. 3:17): Ես կարծում եմ, որ Պողոսն ուներ տեսողության խնդիր և չէր կարող փոքր գրել, փոքր, դժվար ձեռագիրը պետք է տարածություն պահպաներ պապիրոսի կամ կաշվե մագաղաթի վրա (հմմտ. Գաղ. 6:18):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:23-24

²³Բարեւ է տալիս ձեզ Գալիոսը՝ իմ եւ բոլոր եկեղեցու հիւրընկալը. բարեւ է տալիս ձեզ Երաստոսը՝ քաղաքիս հոգատարը, եւ Կուարտոս եղբայրը: ²⁴Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը լինի ձեր ամենի հետ. ամէն:

6:23 «**Գալիոսը**» Սա կարող էր լինել (1) Յուստոսը Գործք Առ. 18:7; (2) Գալիոս Դերբացին (հմմտ. Գործք 19:29; 20:4; I Կոր. 1:14); կամ (3) Գալիոսը III Հովհ. 1հ.

«**իմ եւ բոլոր եկեղեցու հիւրընկալը**» Սա հյուրասիրություն էր, որի կարիքը կար եկեղեցում: Որոշ հավատացյալներ, որոնք ունեին ռեսուրսներ/միջոցներ ճամփորդող քրիստոնեա ծառայողների համար վճարում էին սենյակի և ուտելիքի համար: Ոմանք, ինչպես այս մարդը, նաև բացեց իր տունը ժողովատեղի լինելու համար: Տնային եկեղեցիները ավելի քան 100 տարի նորմա/ընդունված են եղել: Տես Հատուկ Թեմա: Եկեղեցի (*Ekklesia*) 16:1:

«Երաստոսը՝ քաղաքիս հոգատարը» Նա մասին նաև նշվում է Գործք 19:22; II Տիմ. 4:20: Նա ուներ ճամփորդական/թափառող ծառայություն կապված Պողոսի հետ:

«Կուարտոս» Լատիներենում այս անունը նշանակում է «չորրորդ»: Հավանական է նա Տերտիոսի եղբայրն էր, որը լատիներենում նշանակում է «երրորդ» (հմմտ. 22h.):

16:24 Այս համարը վաղ հունարեն ձեռագիր մատյաններում P^{46,61}, Ռ, A, B, C, և 0150 բացակայում է: Այն հանդիպում է որոշ հունարեն ձեռագիր մատյաններում 16:23-ից հետո, իսկ մյուսները 16:27-ից հետո: Ակնհայտ է, որ դա Պողոսի մոտ դա այդպես չէ: Այն չկա NASB, NRSV, TEV և NJB թարգմանություններում: UBS⁴ կազմողները այս համարը բացակայող տարբերակը գնահատում են «A» (հուսալի): Սա փորձարկված ավարտ է նամակի համար և վերաբերում է վերջաբան-փառաբանության խնդրին, որը հանդիպում է 14, 15, և 16 գլուխների վերջում հին հունական տեքստերի մի քանի տարբերակներում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:25-27

²⁵Բայց նորան, որ կարող է ձեզ հաստատ պահել իմ ատեարանի եւ Յիսուս Քրիստոսի քարոզութեան համեմատ, այն խորհրդի յայտնութեանը համեմատ որ յաւիտեանական ժամանակներից լուռ պահուած էր, ²⁶Բայց հիմա մարգարեական գրքերով յայտնուեցաւ՝ յաւիտեանական Աստուծոյ հրամանին պէս, եւ հաւատքին հնազանդելու համար բոլոր հեթանոսների մէջ ճանաչուեցաւ. ²⁷Մի միայն իմաստուն Աստուծուն, Յիսուս Քրիստոսի ձեռովը, նորան փառք յաւիտեանս: Ամէն:

NASB (UPDATED) TEXT: 16:25-27

²⁵**Now to Him who is able to establish you according to my gospel and the preaching of Jesus Christ, according to the revelation of the mystery which has been kept secret for long ages past, ²⁶but now is manifested, and by the Scriptures of the prophets, according to the commandment of the eternal God, has been made known to all the nations, leading to obedience of faith; ²⁷to the only wise God, through Jesus Christ, be the glory forever. Amen.**

16:25-27 Հունարենում սա մեկ նախադասություն է: Այս օրհնությունը կարող է գտնվել թե 14-րդ գլխի վերջում և թե 15-ի վերջում: Այս կոնտեքստը գրքի գլխավոր թեմաների ամփոփումը հավանական է գրվել է հենց իսկ Պողոսի ձեռքով: Ոմանք հավատում են, որ այս փառաբանությունը եղել է;

1. պաշտպանող/ծածկող նամակը եփեսացիներին ուղղված պարբերական նամակի համար

2. նրանց համար, որոնց Հռոմի ճանապարհին է հանդիպել, որովհետև

ա. Պողոսը երբեք չէր այցելել Հռոմ, սակայն նա ողջունում է 26 հոգու/մարդու

բ. 16-ում առաջին անգամն է նշվում կեղծ վարդապետների մասին

գ. այս փառաբանությունը հայտնվում է հունարեն մատյաններում մի քանի տարբեր տեղերում:

Նաև հնարավոր է, որ Պողոսը երկու օրինակ/պատճեն է արել, 1-14 գլուխները Հռոմին, 1-16-ը Եփեսոսին: Սովորաբար այս հայտարարությունները/հաստատումները պատասխանվում են (1) այն փաստով, որ այս վաղ քրիստոնյա աշխատողները ճամփորդեցին; (2) փաստը, որ Հռոմեացիս թղթի ոչ մի հունարեն ձեռագիր մատյան առանց 16-րդ գլխի չէ; և (3) հավանականություն, որ կեղծ վարդապետները ակնարկվում են/նշվում են 14:1-15:13:

16:25 «նորան, որ կարող է» Սա մի ուրիշ հիանալի տիտղոս/անուն է Աստծո համար, որը օգտագործվում է 3 անգամ Նոր Կտակարանում (հմմտ. Եփ. 3:20; Հուդա 24):

Ծանուցում, ինչպես է Աստված հնարավորություն/իրավունք է տալիս հավատացյալներին.

1. Պողոսի ավետարանը
2. քարոզչությունը Հիսուս Քրիստոսի մասին
3. փրկության Աստծո հավիտենական ծրագրի հայտնվելը, որը գաղտնի է պահված եղել (խորհուրդ/խորհրդավորություն)

Հավատացյալները իրավասու են ավետարանի գիտությունով: Այս ավետարանը պիտանի/մատչելի չի եղել բոլորին:

«այն խորհրդի» Աստված ունի միասնական նպատակ մարդկության փրկության համար, որը նույնիսկ նախորդեց անկմանը (հմմտ. Ծննդ. 3): Այս ծրագրի/պլանի ակնարկները հայտնվում է Հին Կտակարանում (հմմտ. Ծննդ. 3:15; 12:3; Ել. 19:5-6; և ընդհանուր/ամբողջական հատվածները մարգարեական գրքերում): Ինչևէ, այս ամբողջ տեսարանը պարզ չէր (հմմտ. I Կոր. 2:6-8): Հիսուսի և Հոգու գալուստով այն սկսում է դառնալ ավելի ակնհայտ: Պողոսն օգտագործում է «խորհուրդ» տերմինը նկարագրելու համար այս ամբողջական փրկության ծրագիրը (հմմտ. I Կոր. 4:1; Եփ. 2:11-3:13; 6:19; Կող. 4:3; I Տիմ. 1:9): Ինչևէ, նա սա օգտագործում է մի քանի տարբեր իմաստներով:

1. Իսրայելի մասնակի/կողմնապահ կարծրանալը թույլ տալ հեթանոսներին ներգրավվել: Հեթանոսների այս ներհոսքը կգործի որպես մեխանիզմ հրեաների համար՝ ընդունելու Հիսուսին որպես մարգարեության Քրիստոսը (հմմտ. Հռ. 11:25-32):
2. Ավետարանը հայտնի եղավ բոլոր ազգերին, որոնք ներգրավված են Քրիստոսում և Քրիստոսով (հմմտ. Հռ. 16:25-27; Կող. 2:2):
3. Հավատացյալների նոր մարմինները Երկրորդ Գալստյան ժամանակ (հմմտ. I Կոր. 15:5-57; I Թես. 4:13-18):
4. Ամեն բան ամփոփվում է Քրիստոսում (հմմտ. Եփ. 1:8-11):
5. Հեթանոսներն ու հրեաները ժառանգակիցներ են (հմմտ. Եփ. 2:11-3:13):
6. Քրիստոսի և Եկեղեցու միջև եղած մտերմիկ հարաբերությունը նկարագրվում է ամուսնական տերմիններով (հմմտ. Եփ. 5:22-33):
7. Հեթանոսները ներգրավվեցին ուխտի ժողովրդի մեջ և բնակվեցին Քրիստոսի Հոգով, որպեսզի քրիստոսանման հասունություն ունենան, որն է վերականգնել աղավաղված պատկերը ընկած/մեղավոր մարդկության մեջ (հմմտ. Ծննդ. 6:5, 11-13; 8:21) Աստծուն մարդու մեջ (հմմտ. Ծննդ. 1:26-27; 5:1; 9:6; Կող. 1:26-28):
8. Վերջին ժամանակը՝ հակա-քրիստոս (հմմտ. II Թես. 2:1-11):
9. Վաղ եկեղեցու ամփոփումը/եզրակցությունը խորհուրդի մասին գտնվում է I Տիմ. 1:16:

16:26 «հիմա յայտնուեցաւ» Աստծո այս խորհուրդը կամ ծրագիրը հստակորեն հայտնի է եղել ամբողջ մարդկությանը:

Սա Հիսուս Քրիստոսի ավետարանն է (հմմտ. Եփ. 2:11-3:13):

«մարգարեական գրքերով» Աստված ակնհայտ է դարձրել այս խորհուրդը Հիսուսի անձի և գործի մեջ: Սա կանխագուշակվել է Հին Կտակարանի մարգարեների կողմից: Նոր Կտակարանի եկեղեցու հիմնումը հավատացյալ հրեաների և հեթանոսների միասնությամբ միշտ եղել է Աստծո ծրագիրը (հմմտ. Ծննդ. 3:15; 12:3; Ելից 19:5-6; Եր. 31:31-34):

«յալիտենական Աստուծոյ» Տես Հատուկ Թեման ներքևում.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ

Ռոբերտ Բ. Գրրոլլիստոնը, իր *Հին Կտակարանի Հոմանիշները* գրքում, ունի հետաքրքիր մեկնաբանություն «հավիտենական» բառի վերաբերյալ:

«*aiōnios*» ածականը օգտագործվում է ավելի քան 40 անգամ Նոր Կտակարանում, կապված *հավիտենական կյանքին*, որը վերաբերվում է մասամբ որպես ներկա պարզև, մասամբ էլ որպես ապագայի խոստում: Սա նաև վերաբերվում է Աստծո անվերջանալի գոյությանը Հռ. 16.26-ում; Քրիստոսի քավության անվերջանալի ներգործությանը/գործությանը Եբր. 9.12, 13.20-ում; և անցյալ դարերին/ժամանակներին Հռ. 16.25, 2 Տիմ. 1.9, Տիտոս 1.2.

Այս բառը օգտագործվում է վկայակոչելով *հավիտենական կրակը*, Մաթ. 18.8,25. 41, Հուդա 7; *հավիտենական պատիժը*, Մաթ. 25.46; *հավիտենական դատաստանը* կամ *դատապարտությունը*, Մարկ. 3.29, Եբր. 6.2; *հավիտենական կործանումը*, 2 Թեա. 1.9. Այս հատվածներում բառը նշանակում է *ավարտվածություն/վերջնականություն*, և ըստ երևույթին նշանակում է, որ երբ այս դատաստանները կհասցվեն, փորձման ժամկետը, փոփոխությունը, կամ ինչ որ մեկի փոխվելու շանսը, կընթանա/կտևի անպայման/բացարձակապես և հավիտյան: Մենք շատ քիչ բան ենք հասկանում ապագայի մասին, մարդկային կյանքի փոխհարաբերությունը մնացած գոյության մասին, և անհավատության բարոյական ծանրության/բռնի մասին, նայելով հավիտենականության լույսի ներքո: Եթե, մի կողմից, Աստծո խոսքին ավելացնելը սխալ է, ապա մյուս կողմից մենք չպետք է այն հեռացնենք իմաստից, և եթե մենք երբեք ենք հավիտենական պատժի վարդապետության տակ, ինչպես այն շարադրվում է Սուրբ Գրքում, մենք պետք է գոհանանք՝ սպասելով, հավատարիմ մնալով Քրիստոսում ամփոփված Աստծո սիրո Ավետարանին, ընդունելով, որ կա մութ/խավար ֆոն, որը մենք չենք կարող հասկանալ/ըմբռնել» (էջ 318-319):

«բոլոր հեթանոսների մեջ ճանաչուեցաւ» Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Այն տեղադրվում էր վերջում հունարեն նախադասության մեջ ընդգծելու/շեշտելու համար: Աստված ներկայացրել է Ավետարանը, առաջարկելով ամբողջ աշխարհին, որը միշտ Նրա նպատակն է եղել (հմմտ. Ծննդ. 3:15):

Արևելահայերեն «հաւատքին հնազանդելու համար»
Արևմտահայերեն «հաւատքի հնազանդելու համար»

<input type="checkbox"/>	
NASB	“leading to obedience of faith”
NKJV	“for obedience to the faith”
NRSV	“to bring about the obedience of faith”
TEV	“leading to obedience of faith”
JB	“to bring them to the obedience of faith”

Այս արտահայտությունը հասկանալու երեք տարբեր կերպեր կան; այն կարող է վերաբերել (1) Քրիստոսի մասին վարդապետությանը; (2) Քրիստոսին վստահելուն; կամ (3) հնազանդվել ավետարանին թե սկզբնականում և շարունակաբար: Հնազանդությունը պետք է կապակցված լինի ապաշխարության և հավատքի գաղափարի հետ (հմմտ. Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21):

16:27 «Մի միայն իմաստուն Աստուծուն» Սա մոնոթեիզմի/միաստվածության ակնարկ է (հմմտ. 2 Օրին. 6:4-5): Քրիստոնեությունն ունի միայն մեկ Աստված, ինչպես հուդայականությունը, ինչևէ,

Հիսուսի ամբողջական աստվածությունը և Հոգու ամբողջական մարդեղությունը մեզ մղում են դեպի «եռյակ-միություն», Երրորդություն:

«Վիառք յաիտեանս» Տես ծանուցում 3:23.

«Ամեն» Տես հատուկ թեմա 1:25.

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորոյան համար ուղեցույց հանդիսացող մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո սեփական մեկնաբանության համար: Դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը մեկնաբանության մեջ: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ:

1. Ինչպե՞ս գիտեր Պողոսը Հռոմի եկեղեցու այս բոլոր մարդկանց, երբ նա երբեք չէր եղել այնտեղ:
2. Կա՞ արդյոք որևէ աստվածաշնչյան ապացույց/փաստ կին սարկավագների համար (հմմտ. 16:1; I Տիմ. 3:11; 5:3-16)
3. Ո՞րն է իմաստը, որ այսքան շատ կանանց անուններ են թվարկված այս գլխում:
4. Նկարագրեք կեղծ վարդապետների մեթոդներն ու պատգամը (17-18 հհ.)

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՈՒՆԱՐԵՆ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Կոյնե հունարենը, որը հաճախ կոչվում էր հելլենական հունարեն Միջերկրականի ընդհանուր բարբառն էր՝ սկսած Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով (մ.թ.ա. 336 - 323 թթ.) ընդհուպ մինչև հաջորդ ութ հարյուր տարիների ընթացքում (մ.թ.ա. 300 - 500 մ.թ.): Դա ընդամենը պարզեցված, դասական հունարենը չէր, այլ շատ առումներով հունարենի ավելի նոր ձևը, որը դարձավ հնագույն Մերձավոր Արևելքի և Միջերկրականի երկրորդ լեզուն:

Նոր Կտակարանի հունարենը որոշ առումով եզակի էր, որովհետև այն օգտագործողների հիմնական լեզուն, բացառությամբ Դուկասի և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակի, արամեերենն էր: Ահա թե ինչու նրանց գրություններում առկա էին արամեերենի բարբառային և կառուցվածքային ձևերը: Բացի այդ նրանք կարդում էին և մեջբերում անում Սեպտուագինտայից կամ Յոթնասանից (Հին Կտակարանի հունարեն թարգմանությունն էր), որը նույնպես գրված էր կոյնե հունարենով: Սակայն Սեպտուագինտան նույնպես գրել էին հրեա դպրագետները, որոնց մայրենին հունարենը չէր:

Սա հիշեցնում է մեզ, որ մենք չենք կարող դիտարկել Նոր Կտակարանը խիստ քերականական կառուցվածքի տեսանկյունից: Նրա քերականական կառուցվածքը եզակի է, սակայն այն շատ ընդհանրություններ ունի (1) Սեպտուագինտայի հետ, (2) հրեական ստեղծագործությունների հետ, ինչպես օրինակ՝ Ջոզեֆ Ֆլավիոսի գործերն են, ինչպես նաև (3) Եզրիպտոսում գտնված պապիրուսների հետ: Ուրեմն ինչպիսի՞ մոտեցում պետք է ունենանք Նոր Կտակարանի քերականական վերլուծությանը:

Կոյնե հունարենի և նորկտակարանյան կոյնե հունարենի քերականական առանձնահատկություններն անկայուն են: Շատ առումներով այն քերականության պարզեցման ժամանակամիջոց էր: Նախ և առաջ մենք կառաջնորդվենք կոնտեքստով: Բառերն իմաստ են ձեռք բերում միայն կոնտեքստում, այդ պատճառով քերականական կառուցվածքը կարելի է միայն հասկանալ (1) որոշակի հեղինակի ոճային առանձնահատկությունների լույսի ներքո, և (2) որոշակի կոնտեքստից: Հնարավոր չէ տալ հունարենի ձևերի և կառուցվածքների հստակ և վերջնական սահմանումները:

Կոյնե հունարենը գլխավորապես բայական լեզու է: Հաճախ մեկնության բանալին է՝ բայածանցյալների տեսակը և ձևը: Գլխավոր նախադասությունների մեծամասնությունում բայը դրվում է սկզբում՝ մատնանշելով դրա կարևոր նշանակությունը: Հունարեն բայը վերլուծելիս պետք է նշել երեք կարևոր բան. (1) ժամանակի, սեռի և եղանակի հիմնական շեշտադրությունը (ձևաբանություն), (2) տվյալ բայի հիմնական իմաստը (բառարանագրություն), և (3) կոնտեքստի էությունն ու զարգացումը (շարահյուսություն):

I. ԺԱՄԱՆԱԿ

Ա. Ժամանակը կամ կերպը ցույց է տալիս բայի հարաբերությունը կատարյալ կամ անկատար գործողությանը: Այն համապատասխանաբար կոչվում է «կատարյալ» և «անկատար» ժամանակ:

1. Կատարյալ ժամանակը կենտրոնանում է գործողության կատարման վրա: Ուրիշ որևէ տեղեկություն չի տրվում, այլ միայն այն, որ որևէ բան է տեղի ունեցել: Ոչինչ չի ասվում գործողության սկզբի, դրա ընթացքի կամ զագաթնակետի մասին:

2. Անկատար ժամանակը կենտրոնանում է գործողության ընթացքի վրա: Այն կարող է նկարագրվել իբրև գծային, շարունակական և սաստկացող:

Բ. Ժամանակը կարող է դասակարգվել ըստ այն բանի, թե ինչպես է հեղինակը դիտարկում գործողության ընթացքը:

1. Այն տեղի ունեցավ = ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ
2. Այն տեղի ունեցավ, իսկ հետևանքները դեռ շոշափելի են = ԿԱՏԱՐՅԱԼ
3. Այն տեղի էր ունեցել անցյալում, և հետևանքները շոշափելի էին, բայց ոչ հիմա = ԳԵՐԱԿԱՏԱՐ
4. Այն տեղի է ունենում = ՆԵՐԿԱ
5. Այն տեղի էր ունենում = ԱՆԿԱՏԱՐ
6. Այն տեղի կունենա = ԱՊԱՌՆԻ

Կոնկրետ օրինակը, թե ինչպես են այս ժամանակաձևերն օգնում մեկնաբանելու՝ «փրկել» տերմինն է: Այն օգտագործվում էր մի քանի տարբեր ժամանակաձևերով՝ ցույց տալով, թե՛ դրա ընթացքը, թե՛ գազաթնակետը:

1. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ - «փրկված» (հմմտ. Հռ. 8:24)
2. ԿԱՏԱՐՅԱԼ - «փրկված են, և հետևանքը շարունակվում է» (հմմտ. Եփ. 2:5, 8)
3. ՆԵՐԿԱ - «փրկվում են» (հմմտ. I Կոր. 1:18; 15:2)
4. ԱՊԱՌՆԻ - «կփրկվեն» (հմմտ. Հռ. 5:9, 10; 10:9)

Գ. Ուշադրություն դարձնելով բայի ժամանակների վրա՝ մեկնիչները փնտրում են պատճառը, որով բնագրի հեղինակը նախընտրել էր իր մտքերն արտահայտելու համար օգտագործել կոնկրետ ժամանակաձևը: Ստանդարտ «առանց ավելորդությունների» ժամանակաձևն՝ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼՆ էր: Այն սովորական, ոչ կոնկրետ, «աննշան» կամ «ոչնչով չթուլացող» բայական ձև էր: Այն կարող է օգտագործվել տարբեր կերպերով՝ կախված կոնտեքստից: Այն պարզապես հաստատում էր, որ ինչ-որ բան էր տեղի ունեցել: Անցյալ ժամանակի կերպն ունեին միայն ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ բայերը: Եթե որևէ այլ ժամանակ էր օգտագործվում, հեղինակը շեշտադրում էր ավելի կոնկրետ որևէ բան: Բայց ի՞նչ:

1. ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ. Այն ցույց է տալիս կատարված գործողություն, որի հետևանքները շոշափելի են: Որոշ առումով դա ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԻ և ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ գույություն է: Սովորաբար շեշտը դրվում է գործողության շոշափելի հետևանքների կամ ավարտման վրա: Օրինակ՝ Եփ. 2:5 և 8 «շնորհքով եք փրկված և շարունակվում եք փրկվել»:

2. ԳԵՐԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. Այն նման էր ԿԱՏԱՐՅԱԼԻՆ, բայց շոշափելի հետևանքներն արդեն վերջացել են: Օրինակ՝ «Պետրոսն էլ դռան մոտ կանգնած էր» (Հովհ. 18:16):

3. ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ. Խոսքը վերաբերում է անավարտ կամ անկատար գործողությանը: Սովորաբար շեշտը դրվում է իրադարձության շարունակության վրա: Օրինակ՝ «Ամեն ով որ նրանում մնում է՝ չէ մեղանշում», «Ամեն ով որ Աստվածանից է ծնված, մեղք չէ անում» (I Հովհ. 3:6 և 9):

4. ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. Այս ժամանակաձևի հարաբերությունը ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻՆ համեմատական է ԿԱՏԱՐՅԱԼԻ և ԳԵՐԱԿԱՏԱՐԻ միջև հարաբերությանը: ԱՆԿԱՏԱՐԸ ցույց է տալիս անավարտ գործողություն, որը տեղի էր ունեցել, բայց դադարել էր ներկա պահին կամ էլ գործողության սկիզբին անցյալում: Օրինակ՝ «Այն ժամանակ դուրս էին գնում նրա մոտ Երուսաղեմը» (Մաթ. 3:5):

5. ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ. Այն ցույց է տալիս գործողություն, որը տեղի կունենա ասպագայում: Այն շեշտադրում է առավել պոտենցիալ, քան իրական իրողությունը: Այն հաճախ ցույց է տալիս իրադարձության որոշակիությունը: Օրինակ՝ «Երանի... նրանք...» (Մաթ. 5:4-9):

II. ՄԵՌ

Ա. Մեռը ցույց է տալիս հարաբերությունը բայի գործողության և դրա սուբյեկտի (ենթակայի) միջև:

Բ. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՌԸ նորմալ, սպասված և ոչ շեշտադրված միջոցն է՝ ցույց տալու, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը:

Գ. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՌԸ նշանակում է, որ ենթական կրում է բայի արտահայտած գործողությունը՝ կատարված արտաքին գործող անձի կողմից: Գործողությունը կատարող արտաքին գործող անձին էին մատնանշում հետևյալ նախդիրները և հոլովները հունարեն Նոր Կտակարանում:

1. Անհատական ուղղակի գործող անձ՝ *hupo* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (հմմտ. Մաթ. 1:22; Գործք 22:30):

2. Անհատական միջնորդ գործող անձ՝ *dia* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (հմմտ. Մաթ. 1:22):

3. Անորոշ գործող անձ սովորաբար՝ *en* ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ:

4. Երբեմն անհատական կամ անորոշ գործող անձ միայն ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ:

Դ. ՉԵԶՈՔ ՄԵՌԸ նշանակում է, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը, ինչպես նաև ուղղակիորեն ներգրավված է բայի գործողության մեջ: Այն հաճախ կոչվում է անձնական սուբ հետաքրքրվածության սեռ: Այս քերականական կառույցն ուժեղացնում էր ենթակայի նշանակությունը նախադասության մեջ: Անգլերենում մման քերականական կառույց չկա: Հունարենում այն ունի բազմաթիվ նշանակություններ և թարգմանություններ: Այս ձևի որոշ օրինակներն են.

1. ԱՆԴՐԱԴԱՐՉ - ենթակայի ուղղակի գործողությունն ինքն իր վրա: Օրինակ՝ «...ինքնիրան խեղդեց» (Մաթ. 27:5):

2. ԻՆՏԵՆՍԻՎ - ենթական կատարում է գործողությունն ինքն իր համար: Օրինակ՝ «Սատանան ինքն էլ լույսի հրեշտակի կերպարանքն իրան վրա է առնում» (II Կորնթ. 11:14):

3. ՓՈԽԱԴԱՐՉ - երկու սուբյեկտների փոխազդեցությունը: Օրինակ՝ «Եվ խորհուրդ արին իրար հետ...» (Մաթ. 26:4):

III. ԵՂԱՆԱԿ

Ա. Կոյնն հունարենում կա չորս եղանակ: Դրանք ցույց են տալիս բայի հարաբերությունը իրականությանը, համեմայն դեպս հեղինակի սեփական տեսանկյունից: Եղանակները բաժանվում են երկու մեծ խմբի՝ իրական գործողություն ցույց տվող (ՄԱՀՄԱՆԱԿԱՆ) և պոտենցիալ գործողություն ցույց տվող (ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և ԸԳՁԱԿԱՆ):

Բ. ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ցույց էր տալիս ստանդարտ եղանակ, որը ցույց էր տալիս գործողություն, որը տեղի էր ունեցել կամ տեղի էր ունենում առնվազն հեղինակի տեսանկյունից: Սա միակ հունարեն եղանակն էր, որն արտահայտում էր որոշակի ժամանակ, եթե նույնիսկ այդ ասպեկտը երկրորդական էր:

Գ. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում էր հնարավոր գործողություն ասպագայում: Ինչ-որ մի բան դեռ տեղի չի ունեցել, բայց հնարավորությունները մեծ են, որ տեղի կունենա: Այն շատ ընդհանրություն ունի ԱՊԱՌՆԻԻ ՄԱՀՄԱՆԱԿԱՆԻ հետ: Տարբերությունն այն է, որ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆ արտահայտում է որոշակի աստիճանի

կասկած: Անգլերենում սա հաճախ արտահայտվում է *could, would, may* կամ *might* տերմիններով (կարող էր, կկարողանար):

Դ. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում էր ցանկություն, որը թեորայես կարող էր ի կատար ածվել: Այն դիտարկվում էր մի քայլ առաջ իրական գործողությունից ՄՏՈՐԱԳԱՍԱԿԱՆԻ համեմատ: ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում էր գործողության հնարավորությունը որոշ պարագաների ներքո: Նոր Կտակարանում ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հազվադեպ էր հանդիպում: Դա ամենից հաճախ օգտագործվում է Պողոսի հայտնի արտահայտությունում՝ «քավ լիցի», որը հանդիպում է ավելի քան տասնհինգ անգամ (հմմտ. Հռ. 3:4, 6, 31; 6:2, 15; 7:7, 13; 9:14; 11:1, 11; I Կորնթ. 6:15; Գաղ. 2:17; 3:21; 6:14): Մյուս օրինակներն են՝ Թես. 1:38, 20:16, Գործք Առաք. 8:20, և I Թես. 3:11:

Ե. ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ցույց էր տալիս հրաման, որի կատարումը հնարավոր էր, բայց շեշտը դրվում էր խոստով մտադրության վրա: Այն հաստատում էր միայն կամային հնարավորությունը և պայմանավորված էր մեկ ուրիշ անձի ընտրությամբ: ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հատկապես օգտագործվում էր աղոթքներում և երրորդ անձի խնդրվածքներում: Նոր Կտակարանում այս հրամաններն ունեին միայն ՆԵՐԿԱ և ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ ժամանակաձևեր:

Զ. Որոշ քերականություններում ԱԾԱԿԱՆ ԳԵՐԲԱՅՆԵՐԸ դասակարգվում են որպես առանձին եղանակ: Դրանք շատ են հունարեն Նոր Կտակարանում և սովորաբար սահմանվում էին որպես բայածանցյալներ: Դրանք թարգմանվում են գլխավոր բայի հետ միասին, որի հետ առնչվում են: Ածական դերբայները թարգմանելիս հնարավոր էին բազմաթիվ տարբերակներ: Լավագույն տարբերակն է դիտարկել և հաշվի առնել Աստվածաշնչի մի քանի թարգմանությունները: Այս հարցում շատ օգտակար կարող է լինել «Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով» ձեռնարկը, Բեյքերի հրատարակության (*The Bible in Twenty Six Translations*, Baker):

Է. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼՆ օգտագործվում էր որպես գործողության ստանդարտ կամ «աննշան» միջոց իրողությունն արձանագրելու համար: Ցանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակն ունեին կոնկրետ նշանակություն մեկնության համար, որը հեղինակն ուզում էր հաղորդել:

IV. Հետևյալ ձեռնարկները կարող են օգտակար լինել նրանց համար, ովքեր չեն տիրապետում հունարենին.

Ա. Բարբարա և Տիմոթի Ֆրայբերգ, «Անալիտիկ Հունարեն Նոր Կտակարան» [Friberg, Barbara and Timothy. *Analytical Greek New Testament*. Grand Rapids: Baker], 1988 թ.:

Բ. Ալֆրեդ Մարշալ, «Նոր Կտակարանի Տողամիջյան Հունարեն-Անգլերեն Թարգմանություն» [Marshall, Alfred. *Interlinear Greek-English New Testament*. Grand Rapids: Zondervan], 1976 թ.:

Գ. Ուիլյամ Դ. Մաունս, «Հունարեն Նոր Կտակարանի Վերլուծական Բառարան» [Mounce, William D. *The Analytical Lexicon to the Greek New Testament*. Grand Rapids: Zondervan], 1993 թ.:

Դ. Ռեյ Սամերս, «Նորկտակարանյան Հունարենի Կարևոր Առանձնահատկությունները» [Summers, Ray. *Essentials of New Testament Greek*. Nashville: Broadman], 1950 թ.:

Ե. Դուք կարող եք նաև օգտվել կոյնե հունարենի ուսումնասիրության ուսումնական դասընթացներից, որոնք հասանելի են Չիկագոյի Մուդիի Աստվածաշնչյան Ինստիտուտի հետ նամակագրության միջոցով:

V. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ա. Շարադասությամբ գոյականները դասակարգվում են ըստ հոլովների: Հոլովը գոյականի խոնարհվող ձևն էր, որը ցույց էր տալիս դրա հարաբերությունը բային և նախադասության մյուս անդամներին: Կոյնե հունարենում նախդիրները ցույց էին տալիս հոլովի շատ ֆունկցիաներ: Քանի որ հոլովական ձևը կարող էր վկայել մի քանի տարբեր տեսակի հարաբերությունների մասին, նախդիրներն օգնում էին ավելի հստակ սահմանափակել այս հնարավոր ֆունկցիաները:

Բ. Հունարենում գոյություն է ունեցել ութ հոլով:

1. ՌԻՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր առարկաներն անվանելու համար, և այն սովորաբար կատարում էր նախադասության ենթակայի ֆունկցիան: Այս հոլովում կարող էին օգտագործվել նաև բաղադրյալ գոյականները և ածականները «լինել» կամ «դառնալ» օժանդակ բայերի հետ:

2. ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր նկարագրության համար և սովորաբար մատնանշում էր այն բառի հատկանիշը կամ որակը, որի հետ այն առնչվում էր: Այն պատասխանում էր «ի՞նչ տեսակ» հարցին: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *of* նախդիրի օգնությամբ:

3. ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ մույն խոնարհված ձևը, բայց այն օգտագործվում էր անջատում նկարագրելու համար: Սովորաբար այն նշանակում էր անջատում ըստ ժամանակի, տարածության, աղբյուրի, ծագման կամ աստիճանի: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *from* նախդիրի օգնությամբ:

4. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր անձնական հետաքրքրվածությունը նկարագրելու համար: Սա կարող էր նշանակել դրական կամ բացասական ասպեկտը: Հաճախ սա անուղղակի լրացումն էր: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *to* նախդիրի օգնությամբ:

5. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՏՐԱԿԱՆԻ մույն խոնարհված ձևը, բայց այն նկարագրում էր դիրք կամ տեղայնք տարածության, ժամանակի կամ տրամաբանական սահմանների մեջ: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *in, on, at, among, during, by, upon* և *beside* նախդիրների օգնությամբ:

6. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՏՐԱԿԱՆ և ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐԻ մույն խոնարհված ձևը: Այն նշանակում էր միջոց կամ կապ: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *by* և *with* նախդիրների օգնությամբ:

7. ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր գործողության ավարտը նկարագրելու համար: Այն արտահայտում էր սահմանափակում: Գոյականն այս հոլովում հիմնականում օգտագործվում էր որպես ուղիղ լրացում: Այն պատասխանում էր «որքա՞ն», «ի՞նչ աստիճան» հարցերին:

8. ԿՈՉԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր որևէ մեկին ուղղակի դիմելու համար:

VI. ՇԱՂԿԱՊՆԵՐ և ԿԱՊԱԿՑՈՂ ԲԱՌԵՐ

Ա. Հունարենը շատ ճշգրիտ լեզու է, որովհետև այն ունի շատ կապակցող բառեր: Դրանք կապում են մտքերը (նախադասությունները, արտահայտությունները և պարբերությունները): Դրանք այնքան տարածված են, որ դրանց բացակայությունը (անշաղկապությունը) հաճախ կարևոր է մեկնաբանության համար: Փաստացի, այս

շաղկապները և կապակցող բառերը մատնանշում են հեղինակի մտքի ուղղությունը: Հաճախ դրանք կարևոր են որոշելու համար, թե ինչ է հեղինակը փորձում հաղորդել:

B. Ստորև ներկայացված է որոշ շաղկապների, կապակցող բառերի և դրանց իմաստների ցուցակը (այս տեղեկությունը հիմնականում հավաքված է Հ. Ի. Դանայի և Ջուլիուս Բ. Մենթեյի «Հունարեն Նոր Կտակարանի Քերականության Չեռնարկ» գրքից [H. E. Dana and Julius K. Mantey's *A Manual Grammar of the Greek New Testament*]):

1. Ժամանակային կապակցող բառեր

- (a) *epci, epeidē, hopote, hōs, hote, hotan* (ստորադասական եղ.) - «երբ»
- (b) *hcōs* - «մինչդեռ»
- (c) *hotan, epan* (ստորադասական եղ.) - «երբ էլ որ»
- (d) *heōs, achri, mechri* (ստորադասական եղ.) - «մինչև»
- c. *priv* (ինֆին.) - «նախքան»
- d. *hōs* - «այն ժամանակից ի վեր», «երբ», «այն ժամանակ երբ»

2. Տրամաբանական կապակցող բառեր

ա. Նպատակ

- 1. *hina* (ստորադասական եղ.), *hopōs* (ստորադասական եղ.), *hōs* - «որպեսզի»
- (2) *hōste* (ինֆինիտիվը հայցական հոլովով հոդի հետ) - «որպեսզի», «որ»
- (3) *pros* (ինֆինիտիվը հայցական հոլովով հոդի հետ) կամ *eis* (ինֆինիտիվը հայցական հոլովով հոդի հետ) - «որպեսզի», «որ»

բ. Հետևանք (սերտ կապ կա նպատակի և հետևանքի քերականական ձևերի միջև)

- (1) *hōste* (ինֆինիտիվ, սա ամենատարածվածն է) - «որպեսզի», «այսպիսով»
- (2) *hiva* (ստորադասական եղ.) - «այնպես որ»
- (3) *ara* - «այնպես»

գ. Պատճառ

- (1) *gar* (պատճառ/հետևանք կամ պատճառ/եզրահանգում) - «քանզի», «որովհետև»
- (2) *diothi, hotiy* - «որովհետև»
- (3) *epci, epeidē, hōs* - «քանի որ»
- (4) *dia* (հայցական հոլովով) և (ինֆինիտիվով և հոդով) - «որովհետև»

դ. Եզրակացություն

- (1) *ara, poinun, hōste* - «հետևաբար»
- (2) *dio* (ամենատարածված հետևանքային շաղկապը) - «ինչի կապակցությամբ», «ինչի համար», «հետևապես»
- (3) *oun* - «ուստի», «այսպիսով», «այն ժամանակ», «որպես հետևանք»
- (4) *toinoun* - «համապատասխանաբար»

ե. Ընդդիմական կամ հակադրություն

- (1) *alla* (ուժեղ ընդդիմական) - «քայց», «քացառությամբ»
- (2) *de* - «քայց», «սակայն», «քայց և այնպես», «մյուս կողմից»
- (3) *kai* - «քայց»
- (4) *mentoi, oun* - «սակայն»
- (5) *plēn* - «այնուամենայնիվ» (հիմնականում Դուկասի Ավետարանում)
- (6) *oun* - «սակայն»

զ. Համեմատություն

- (1) *hōs, kathōs* (ներմուծվում է ստորադասական շաղկապներում)
- (2) *kata* (քաղաղրյալ բառերում՝ *katho, kathoti, kathōsper, kathaper*)
- (3) *hosos* (Եբրայեցիներին ուղղված Թղթում)
- (4) *ē* - «քան»

է. Շարունակական կամ հաջորդություն

- (1) *de* - «և», այժմ»
- (2) *kai* - «և»
- (3) *tei* - «և»
- (4) *hina, oun* - «որ»

- (5) *oun* - «այն ժամանակ» (Հովհաննեսի Ավետարանում)
3. Էմֆատիկ (շեշտված) օգտագործում
- ա. *alla* - «անշուշտ», «այո», «իրականում»
- բ. *ara* - «իրապես», «անշուշտ», «իսկապես»
- գ. *gar* - «բայց իսկապես», «անշուշտ», «իսկապես»
- դ. *de* - «իսկապես»
- ե. *can* - «նույնիսկ»
- զ. *kai* - «նույնիսկ», «իսկապես», «իրապես»
- է. *mentoi* - «իսկապես»
- ը. *oun* - «իրապես», «ամեն դեպքում»

VII. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ընդգրկում է մեկից ավելի պայմանական ստորադասական նախադասություններ: Այս քերականական կառույցը օգնում է մեկնաբանությանը, քանի որ այն տալիս է պայմանները կամ պատճառները, թե ինչու հիմնական բայով արտահայտված գործողությունը տեղի է ունենում կամ տեղի չի ունենում: Կար պայմանական նախադասությունների չորս տեսակ: Դրանք կարող էին արտահայտել գործողությունների մի ամբողջ սպեկտր՝ նրանք, որոնք իրական էին հեղինակի կամ նրա մտահաղացման տեսանկյունից ընդհուպ մինչև ցանկալին:

Բ. ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ արտահայտում էր գործողություն կամ վիճակ, որն իրական էր համարվում հեղինակի կամ նրա մտահաղացման տեսանկյունից, թեև այն արտահայտվում էր «եթե» շաղկապի միջոցով: Որոշ կոնտեքստներում այդ շաղկապը կարող էր թարգմանվել «քանի որ», «սպա» (հմմտ. Մաթ. 4:3; Հռ. 8:31): Բայց սա չի նշանակում, որ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ պարտադիր նկարագրում են իրապես տեղի ունեցած իրադարձություններ: Դրանք հաճախ օգտագործվում էին բանավեճի մեջ տեսակետ արտահայտելու կամ մոլորությունը բացահայտելու համար (հմմտ. Մաթ. 12:27):

Գ. ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆԸ հաճախ կոչվում է «իրականությանը հակասող»: Այն արտահայտում էր մի բան, որը չէր համապատասխանում իրականությանը և չէր կարող ապացուցել արտահայտած տեսակետը կամ որպես փաստ ընդունվել: Օրինակներ.

1. «Սա եթե մի մարգարե էր, ապա կգիտենար՝ թե ով կամ ինչպիսի կին է նա, որ իրան մոտենում է, որովհետև մեղավոր է (իսկ նա չգիտի)» (Գուկ. 7:39):

2. «Որովհետև եթե դուք Մովսեսին հավատայիք, ինձ էլ կհավատայիք (իսկ դուք չեք հավատում)» (Հովհ. 5:46):

3. «Եթե տակավին մարդկանց հաճո լինեի (իսկ ես դա չեմ անում), Քրիստոսի ծառա չեի (Գաղ. 1:10):

Դ. ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ասում է հնարավոր գործողության մասին ապագայում: Այն հաճախ ենթադրում է այդ գործողության հավանականությունը և հիմնականում չնախատեսվածությունը: Հիմնական բայով արտահայտված գործողությունը պայմանավորված է այն բանով, թե արդյոք տեղի կունենա ստորադասականում նկարագրված գործողությունը: Օրինակ՝ I Հովհ. 1:6-10; 2:4, 6, 9, 15, 20, 21, 24, 29; 3:21; 4:20; 5:14, 16:

Ե. ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ամենահեռուն է գործողության կատարման հնարավորությունից: Այն հազվադեպ է հանդիպում Նոր Կտակարանում: Փաստացի, չկա լիարժեք ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ, որում գլխավոր և ստորադասական նախադասությունները կհամապատասխանեին իրենց սահմանմանը: Մասնակի ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ օրինակ է՝ I Պետր. 3:14-ի բացող խոսքը: Մասնակի ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ մեկ այլ օրինակ է՝ Գործք Առ. 8:31-ի եզրափակիչ խոսքը:

VIII. ԱՐԳԵԼՔՆԵՐ

Ա. ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ *ME* ՄԱՍՆԻԿԻ հետ հաճախ (բայց ոչ միմիայն) շեշտադրում է արդեն տեղի ունեցող գործողության դադարը: Որոշ օրինակներ են՝ «ձեզ համար գանձեր մի դիզեք երկրիս վրա...» (Մաթ. 6:19); «հոգս մի՛ անեք ձեր կյանքի համար...» (Մաթ. 6:25); «և ձեր անդամները անիրավության գործիք մի ներկայացնեք մեղքին...» (Հռ. 6:13); «և մի տրտմեցնեք Աստուծո Սուրբ Հոգին...» (Եփես. 4:30); և «մի արբենաք զինով...» (5:18):

Բ. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ *ME* ՄԱՍՆԻԿԻ հետ շեշտադրում է, որ «նույնիսկ մի սկսեք կատարել որոշակի գործողություն»: Որոշ օրինակներ են՝ «Մի կարծեք...» (Մաթ. 5:17); «հոգս մի անեք...» (Մաթ. 6:31); «ամոք մի համարիր...» (II Տիմ. 1:8):

Գ. ԿՐԿՆԱԿԻ ԺԵՏՈՒՄԸ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ հետ շատ ուժգին ժխտում է՝ «երբեք, ոչ երբեք» կամ «ոչ մի դեպքում»: Որոշ օրինակներ են՝ «Նա մահ չի տեսնիլ հավիտյան» (Հովհ. 8:51); «ես հավիտյան միս չեմ ուտիլ» (I Կորնթ. 8:13):

IX. ՀՈԳ

Ա. Կոյնե հունարենում որոշիչ հոդն ունի նույն իմաստն, ինչ անգլերենի որոշիչ հոդը: Նրա հիմնական ֆունկցիան էր որպես «ցուցիչ»՝ միջոց հանդիսանալ ուշադրությունը գրավելու բառին, անվանը կամ արտահայտությանը: Դրա օգտագործումը տարբեր է Նոր Կտակարանի տարբեր հեղինակների մոտ: Որոշիչ հոդը կարող էր նաև կատարել հետևյալ ֆունկցիան.

1. որպես առանձնացում ըստ հակասության սկզբունքի, ինչպես ցուցական դերանունն է
2. որպես նշան՝ ավելի վաղ հիշատակված առարկայի կամ անձի
3. որպես միջոց՝ նախադասության մեջ որոշելու ենթական կապող բայի հետ: Օրինակներ՝ «Աստված Հոգի է» Հովհ. 4:24; «Աստված լույս» I Հովհ. 1:5; «Աստված սեր է» 4:8,16:

Բ. Կոյնե հունարենը չունի անորոշ հոդ՝ ի տարբերություն անգլերենի: Որոշիչ հոդի բացակայությունը կարող էր նշանակել.

1. առարկայի առանձնահատկության կամ որակի շեշտադրում
2. առարկայի դասակարգի շեշտադրում

Գ. Նոր Կտակարանի հեղինակները տարբեր կերպ էին օգտագործում հոդը:

X. ՇԵՇՏԱԳՐՄԱՆ ԿԵՐՊԵՐԸ ՀՈՒՆԱՐԵՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Ա. Շեշտադրման տեխնիկան տարբեր է Նոր Կտակարանի տարբեր հեղինակների մոտ: Ամենահետևողական և խիստ գրողներն էին Գուկասը և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակը:

Բ. Ավելի վաղ մենք նշել էինք, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ստանդարտ էր և չէր շեշտադրվում, մինչդեռ ցանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակ իրենց նշանակությունն ունեին մեկնության համար: Սա անշուշտ չի նշանակում, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ հաճախ չէր օգտագործվում որպես կարևոր քերականական ձև: Օրինակ՝ Հռ. 6:10 (կրկնակի):

Գ. Բառային հաջորդականությունը կոյնե հունարենում

1. Կոյնե հունարենը թեքական (ֆլեկտիվ) լեզու էր, որն ի տարբերություն անգլերենի կախված չէր բառային հաջորդականությունից: Հետևաբար հեղինակը կարող էր փոխել բառային ստանդարտ հաջորդականությունը, որպեսզի ցույց տար:

ա. ինչ էր հեղինակն ուզում ընդգծել ընթերցողի համար

բ. ինչը կարող էր, ըստ հեղինակի, զարմանալի լինել ընթերցողի համար

գ. այն, ինչը թանկ էր և կարևոր հեղինակի համար

2. Բառային ստանդարտ հաջորդականությունը հունարենում դեռևս անլուծելի խնդիր է: Այնուամենայնիվ, ենթադրվում է բառային ստանդարտ հաջորդականությունը հետևյալն է.

ա. կապող բայերի համար

(1) բայ

(2) ենթակա

(3) լրացում

բ. անցողական բայերի համար

(1) բայ

(2) ենթակա

(3) ուղիղ խնդիր

(4) անուղղակի խնդիր

(5) նախդրավոր արտահայտություն

գ. անվանական արտահայտությունների համար

(1) գոյական

(2) որոշիչ

(3) նախդրավոր արտահայտություն

3. Բառային հաջորդականությունը կարող է ծայրահեղ կարևոր լինել մեկնաբանության համար: Օրինակներ.

ա. «Ինձ և Բառնաբասին աջ ձեռք տվին հաղորդակցության համար» (Գաղ. 2:9): «Աջ ձեռք հաղորդակցության համար» արտահայտությունը դրված է սկզբում՝ ցույց տալով դրա կարևորությունը:

բ. «Քրիստոսի հետ» (Գաղ. 2:19) առջևում էր դրված *[հու՛ն]*. Ես Քրիստոսի հետ խաչված եմ]: Նրա մահը կենտրոնական իրադարձություն էր:

գ. «Շատ մասերով և շատ կերպերով» (Եբր. 1:1) առջևում էր դրված: Շեշտադրվում էր այն, թե ինչպես Աստված հայտնեց Իրեն, ոչ թե՝ հայտնության փաստն ինքնին:

Դ. Սովորաբար շեշտադրման համար նաև օգտագործվում էր

1. Դերանվան կրկնությունը, որն արդեն առկա էր բայի խոնարհված ձևում: Օրինակ՝ «Եվ ահա ես ձեզ հետ եմ...» (Մաթ. 28:20):

2. Սպասված շաղկապի կամ մեկ ուրիշ կապակցող բառերի, արտահայտությունների կամ նախադասությունների միջև բացակայությունը: Սա կոչվում է անշաղկապություն («չկապված»): Սպասվում էր, որ շաղկապը պետք է լիներ, այդ պատճառով դրա բացակայությունն ուշադրություն կհրավիրեր իր վրա: Օրինակներ.

ա. Երանելիները, Մաթ. 5:3 և այլն (շեշտադրվում էր հերթականությունը)

բ. Հովհ. 14:1 (նոր թեմա)

գ. Հռ. 9:1 (նոր բաժին)

դ. Ս Կորնթ. 12:20 (շեշտադրվում է հերթականությունը)

3. Տրված կոնտեքստում առկա բառերի և արտահայտությունների կրկնությունը: Օրինակներ՝ «Իր փառավոր շնորհքի գովասանքի համար» (Եփես. 1:6, 12 և 14): Այս արտահայտությունն օգտագործվում էր՝ շեշտադրելու սբ. Երրորդության յուրաքանչյուր անձի գործը:

4. Բարբառային արտահայտությունների կամ բառախաղերի օգտագործումը

ա. Մեղմասությունները տաբուի ենթարկված բառերի փոխարինող բառերն են, ինչպիսիք են՝ «ննջել» մահ բառի փոխարեն (Հովհ. 11:11-14) կամ «ուտքեր» տղամարդու արնանդամի փոխարեն (Հռուբ 3:7-8; I Թագ. 24:3):

բ. Շրջաբանություններն Աստծու անվան փոխարինող բառեր են, ինչպիսիք են՝ «երկնքի թագավորություն» (Մաթ. 3:21) կամ «ձայն երկնքից» (Մաթ. 3:17):

գ. Փոխաբերություններ

(1) անհավանական չափազանցություններ (Մաթ. 3:9; 5:29-30; 19:24)

(2) մեղմ չափազանցություններ (Մաթ. 3:5; Գործք Առ. 2:36)

(3) անձնավորում (I Կորնթ. 15:55)

(4) հեզմանք (Գաղ. 5:12)

(5) բանաստեղծական հատվածներ (Ֆիլ. 2:6-11)

(6) բառախաղ

(ա) «եկեղեցի»

(i) «եկեղեցի» (Եփես. 3:21)

(ii) «կոչում» (Եփես. 4:1, 4)

(iii) «կանչված» (Եփես. 4:1, 4)

(բ) «ազատ»

(i) «ազատ կին» (Գաղ. 4:31)

(ii) «ազատություն» (Գաղ. 5:1)

(iii) «ազատել» (Գաղ. 5:1)

դ. Բարբառային լեզուն որոշակի մշակույթին և լեզվին բնորոշ յուրահատուկ արտահայտություններն են:

(1) «Կերակուր» բառի փոխաբերական օգտագործումը (Հովհ. 4:31-34):

(2) «Տաճար» բառի փոխաբերական օգտագործումը (Հովհ. 2:19; Մաթ. 26:61):

(3) Կարեկցանքի եբրայերեն բարբառն էր՝ «ատել» (Ծննդ. 29:31; II Օր. 21:15; Թես. 14:36; Հովհ. 12:25; Հռոմ. 9:13):

(4) «Ամենքս» բառն՝ ի համեմատություն «շատերը» բառի: Համեմատություն՝ Եսայիա 53:6 («ամենքս»), իսկ 53:11 և 12 («շատերը»): Այս տերմինները հոմանիշներ են, ինչպես ցույց են տալիս Հռ. 5:18 և 19:

5. Մեկ բառի փոխարեն լիակատար լեզվաբանական արտահայտության օգտագործում: Օրինակ՝ «Տեր Հիսուս Քրիստոս»:

6. *autos* բառի օգտագործումը

ա. Հողի հետ (որոշի դիրք) այն թարգմանվում էր որպես «նույն»:

բ. Առանց հողի (ստորոգյալի դիրք) այն թարգմանվում էր որպես ուժգնացող անդրադարձ դերանուն՝ ինքն իրեն:

ե. Աստվածաշունչ ընթերցողը, որը չգիտի հունարեն կարող է գտնել շեշտադրված տեղերը հետևյալ կերպ:

1. Օգտվելով վերլուծական բառարանից և հունարեն-անգլերեն տեքստի տողամիջյան թարգմանությունից:

2. Համեմատելով անգլերեն թարգմանությունները, հատկապես նրանք, որոնք հիմնված են թարգմանության տարբեր տեսությունների վրա: Օրինակ՝ կարելի է համեմատել «բառացի» թարգմանությունները (KJV, NKJV, ASV, NASB, RSV, NRSV) «համարժեք դինամիկ» թարգմանությունների հետ (Williams, NIV, NEB, REB, JB, NJB, TEV): Ձեզ նաև մեծապես օգտակար կլինի «Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով», Բեյքերի հրատարակության գիրքը [*The Bible in Twenty-Six Translations*, Baker]:

3. Օգտվելով Ջոզեֆ Բրայանթ Ռոթերհեմի գրքից՝ «Հատուկ Շեշտադրումն Աստվածաշնչում» [*The Emphasized Bible*, Joseph Bryant Rotherham (Kregel)], 1994 թ.:
4. Օգտվելով Աստվածաշնչի հետևյալ բառացի թարգմանություններից.
 - ա. «Ամերիկյան Ստանդարտ Տարբերակ» [*The American Standard Version*], 1901 թ.:
 - բ. «Աստվածաշնչի Բառացի Թարգմանություն Ըստ Յանգի» [*Young's Literal Translation of the Bible* (Guardian Press)], 1976 թ.:

Քերականություն ուսումնասիրելը հոգնեցուցիչ է, բայց անհրաժեշտ է ճիշտ մեկնաբանության համար: Այս համառոտ սահմանումները, մեկնաբանությունները և օրինակները նպատակ ունեն քաջալերելու և սպառազինելու հունարեն չիմացող անձանց, որպեսզի օգտվեն այս գրքի քերականական բացատրություններից: Անշուշտ, այս սահմանումները չափազանց պարզեցված են: Դրանք չպետք է օգտագործել դոգմատիկ և ոչ ճկուն կերպով, այլ որպես մի քայլ նորկտակարանյան շարահյուսությունն ավելի լավ հասկանալու ուղղությամբ: Հուսով ենք, որ այս սահմանումները կօգնեն նաև ընթերցողներին հասկանալու մյուս ուսումնական ձեռնարկների մեկնաբանությունները, ինչպիսիք են՝ Նոր Կտակարանի հատուկ ուսումնասիրությունները:

Մենք պետք է կարողանանք ստուգել մեր մեկնաբանությունն աստվածաշնչյան տեքստերի տեղեկատվության հիման վրա: Քերականության հասկացումը ծայրահեղ կարևոր է, բայց մեզ նաև օգնում են պատմական և գրական կոնտեքստները, ինչպես նաև բառերի ժամանակակից օգտագործման և զուգահեռ տեքստերի օգտագործման մասին իրազեկությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2 ՏԵՔՍԱՅԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մենք այս թեման կնայենք այնպես, որ բացատրենք տեքստային ծանուցումները՝ բերված այս մեկնաբանության մեջ: Մենք կհետևենք հետևյալ պլանին

I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները

Ա. Հին Կտակարան

Բ. Նոր Կտակարան

II. Խնդիրների և «ցածր քննադատության» կամ այսպես կոչված «տեքստային քննադատության» տեսությունների համառոտ բացատրությունը:

III. Գրքեր լրացուցիչ ընթերցանության համար

I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները

Ա. Հին Կտակարան

1. Մագորեթիկ տեքստ (MT) – Սա հին հրեական կոնսոնանտ (բաղաձայն տառերով գրված) տեքստ էր խմբագրված ռաբբի Ակուիբայի կողմից 100թ. Ք.Հ. Չայնավոր հնչյունները, շեշտերը, լուսանցքի նշումները, կետադրությունը և ապարատային նշանները սկսեցին ավելացվել 6-րդ դարում և վերջնականապես ձևավորվել 9-րդ դարում: Դ-ա արվեց հայտնի հրեա գիտնականների կողմից, ովքեր հայտնի էին որպես մագորեթներ: Տեքստը, որը նրանք օգտագործեցին, նույնն էր ինչ որ Միշնան, Թալմուդը, Թարգումները, Փեշիթան և Վուլգատան:

2. Սեպտուագինդա (LXX) - Ավանդույթն ասում է, որ Սեպտուագինդան կազմվել է 70 հրեա գիտնականների կողմից 70 օրվա ընթացքում Ալեքսանդրիան գրադարանի համար Պտղոմեոս II թագավորի հովանավորությամբ (285-246թթ. Ք.Ա.): Ենթադրվում է, որ թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում ապրող մի հրեա առաջնորդի խնդրանքով: Այս ավանդույթը հիմնված է «Արիստեսի ուղերձի» վրա: LXX հաճախ հիմնվում էր եբրայերեն ուրիշ տեքստային ավանդության վրա, համեմատվելով ռաբբի Ակուիբայի (MT) տեքստի հետ:

3. Մեռյալ Ծովի մագաղաթները (DSS) - Մեռյալ Ծովի մագաղաթները գրվել են Հռոմում Ք.Ա. (200թ. Ք.Ա. մինչև 70թ. Ք.Հ.) հրեա անջատողական խմբավորման կողմից, որոնք կոչվում էին «Էսսեններ» (սրանք փարիսեցիների նախահայրերն էին): Մեռյալ Ծովի տարբեր հատվածներից գտնված եբրայերեն ձեռագրերը պատկանում են եբրայերեն ուրիշ տեքստային ընտանիքին, չտարբերվելով MT և LXX:

4. Ահա մի քանի հստակ օրինակներ, թե ինչպես են այս տեքստերի համեմատությունները օգնել մեկնաբանել Հին Կտակարանը հասկանալու մեջ.

ա. LXX օգնել է թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT

(1) LXX, Ես. 52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՆՐԱ վրա»

(2) MT, Ես. 52:14, « Ինչպես որ շատերը ապշեցին ՔԵԶ վրա»

(3) դատելով Ես. 52:15-ից ճիշտ տարբերակը LXX –ն է

(ա) LXX, «նույնպես պիտի շատ ազգեր զարմանան Նրանով»

(բ) MT, «այնպես շատ ազգեր Նա բերում է զարմանքի»

բ. DSS օգնել են թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT

(1) DSS, Ես. 21:8, «հետո տեսանողը աղաղակեց, դիտարանի վրա են

կանգնել Ես. . .»

(2) MT, Ես. 21:8, «Եւ առիւծօրէն աղաղակեց. Ով Տէր, ես միշտ ցերեկը

կանգնած եմ դիտանոցի վերայ. . .»

գ. LXX և DSS օգնել են հասկանալ Ես. 53:11

(1) LXX և DSS, « Իր անձի աշխատութեանից հետո նա կստենի լույսը և

կկշտանա»

(2) MT, «Իր անձի աշխատութեան պտուղը պիտի տեսնէ եւ կշտանայ»

Բ. Նոր Կտակարան

1. Գոյություն ունեն հունարեն ամբողջական Նոր Կտակարանի կամ նրա մասերի ավելի քան 5300 ձեռագրեր: Մոտավորապես 85 գրված են պապիրուսների վրա, իսկ 268 ձեռագրեր գրված են բոլորը մեծատառերով (ունիցիալներ): Ավելի ուշ, մոտավորապես 9-րդ դարում Ք.Հ., հայտնվեցին գրչագիր՝ ձեռագիրները (փոքրատառերը միջնադարյան ձեռագրերում): Հաշվվում է մոտ 2700 հունարեն ձեռագրեր: Մենք նաև ունենք Սուրբ Գրքի մոտ 2100 օրինակներ, որոնք օգտագործվել են պաշտամունքների ժամանակ, որոնք կոչվում են բնագրի տարբերակներ:

2. Մոտ 85 հունարեն ձեռագրեր, պարունակելով Նոր Կտակարանի առանձին հատվածներ, գրված պապիրուսների վրա, գտնվում են թանգարաններում: Նրանցից մի քանիսը պատկանում են Ք.Հ. 2-րդ դարին, բայց մեծամասնությունը 3-րդ և 4-րդ դարերին Ք.Հ.: Այս ձեռագրերից ոչ մեկը չի պարունակում Նոր Կտակարանն ամբողջությամբ: Եվ չնայած որ նրանք հանդիսանում են Նոր Կտակարանի ամենահին օրինակները, դա ավտոմատ կերպով չի նշանակում, որ նրանցում քիչ տարբերակներ կան: Այդ օրինակներից շատերը արվել են արագորեն՝ տեղական օգտագործման համար, որոնց վրա այդքան էլ ուշադրություն չեն դարձրել: Այդ իսկ պատճառով նրանց մեջ կան շատ տարբերակներ:

3. Մինայական հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է եբրայերեն *α* (*aleph*) տառով կամ (01), գտնվել է Թիսշեմնոքի կողմից Մինա լեռան վրա գտնվող Սուրբ Եկատերինայի վանքից: Այն պատկանում է Ք.Հ. 4-րդ դարին և պարունակում է LXX թե չին Կտակարանի և թե հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:

4. Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «A» կամ (02), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս:

5. Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «B» կամ (03), գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում և պատկանում է Ք.Հ. 4-րդ դարի կեսերին: Այն պարունակում է LXX թե չին Կտակարանի և թե հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:

6. Եփեսոսի հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «C» կամ (04), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, որը մասամբ ոչնչացվել է:

7. Բեզայի հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «D» կամ (05), 5-րդ կամ 6-րդ դարի հունարեն ձեռագիր է: Սա այսպես կոչված «արևմտյան» տեքստի գլխավոր ներկայացուցիչն է: Այն պարունակում է շատ լրացումներ և հանդիսացել է հիմնական հունարեն ձեռագիրը՝ անգլերեն Հակոբոս թագավորի թարգմանության ժամանակ:

8. Նոր Կտակարանի ձեռագրերը կարող են բաժանվել երեք, հնարավոր է նաև, չորս ընտանիքների, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ.

ա. ալեքսանդրիան տեքստը Եգիպտոսից

- (1) P⁷⁵, P⁶⁶ (մոտ Ք. Հ. 200թ.), պարունակում են Ավետարանները
- (2) P⁴⁶ (մոտ Ք. Հ. 225թ.), պարունակում են Պողոսի նամակները
- (3) P⁷² (մոտ Ք. Հ. 225-250թթ.), պարունակում են Պետրոսի և Հուդայի նամակները
- (4) չին ձեռագրերի ժողովածու B, որը կոչվում է Վատիկանյան (մոտ Ք. Հ. 325թ.), ամփոփում է չին և Նոր Կտակարանը ամբողջությամբ
- (5) Օրիգենի մեջբերումը այս տեսակի տեքստից
- (6) ուրիշ ձեռագրեր, որոնցում ներկայացված է այս տեսակի տեքստը *α*, C, L, W, 33

բ. արևմտյան տեքստ Հյուսիսային Աֆրիկայից

- (1) հյուսիս-աֆրիկյան եկեղեցու հայրերի մեջբերումները. Տերտուլիանոս, Կիպրիանոս և հին լատիներեն թարգմանություն
- (2) Իրինիոսի մեջբերումները

- (3) Տացիանոսի մեջբերումները և հին սիրիական թարգմանություն
- (4) Հին ձեռագրերի ժողովածու «D» Բեզայի - այս տեսակի տեքստ
- գ. Արևելյան բյուզանդական տեքստ Կոնստանդնուպոլսից
 - (1) այս տեսակի տեքստը ներկայացված է 5300 ձեռագրերից ավելի քան 80%-ի մեջ
 - (2) Սիրիայի Անտիոքի եկեղեցու հայրերի մեջբերումները, կապադովկիացիներ, Ոսկեբերան և Թեոդոսեթ
 - (3) հին ձեռագրերի ժողովածու A, միայն Ավետարաններում
 - (4) հին ձեռագրերի ժողովածու E (8-րդ դար) ամբողջ Նոր Կտակարանը
- դ. չորրորդ հնարավոր տեսակը «կեսարիան» Պաղեստինից
 - (1) այն հիմնականում հանդիպում է միայն Մարկոսի Ավետարանում
 - (2) մասամբ հանդիպում են P⁴⁵ և W ձեռագրերում

II. «Ցածր քննադատության» կամ «տեքստային քննադատության» խնդիրներն ու տեսությունները

Ա. Ինչպե՞ս են հայտնվել տարբերակները

1. ոչ դիտավորյալ կամ պատահական (մեծամասամբ, շատ դեպքերում)

ա. վրիպակ, երբ երկու միանման բառեր (կամ նույնանման վերջավորություն ունեցող բառեր) իրար կողք կողքի դրված, արտագրողը նայել է երկրորդին և բաց է թողել այդ երկուսի միջև գտնվող ամբողջ տեքստը, (հոմեոտելևտոն/homoioteleuton)

(1) աչքի վրիպում, երբ բաց է թողնվել նույն տառերով բառի մի մասը կամ ամբողջ արտահայտությունը (հապլոգրաֆիա/haplography)

(2) հունարեն տեքստի արտահայտության կամ տողի կրկնողություն (դիտոգրաֆիա/dittography)

բ. լսողական վրիպում, տեքստը թելադրության միջոցով արտագրելու ժամանակ, բառերի սխալ գրելաձև (իտացիզմ/itacism): Հաճախ գրվել է նույն ձևի հնչող հունարեն բառի ուրիշ բառ:

գ. Շատ հին հունարեն տեքստերում գլուխների և համարների բաժանումները չկան, համարյա բացակայում է կետադրությունը և բառերի միջև բաժանումներ չկան: Հնարավոր է բաժանել տեքստը տարբեր տեղերում, որի արդյունքում ստացվում են նոր բառեր:

2. դիտավորյալ

ա. փոփոխություններ են արվել արտագրված տեքստի քերականական ձևի բարելավման համար

բ. փոփոխություններ են արվել այն բանի համար, որ համաձայնեցվի տեքստը ուրիշ աստվածաշնչյան տեքստերի հետ (զուգահեռ տեքստերի համաձայնեցում)

գ. փոփոխություններ են մտցվել, որպեսզի կապակցեն ընթերցանության երկու կամ ավելի տարբերակների մեկ երկար կապակցված տեքստում(միաձուլում)

դ. փոփոխություններ են մտցվել, որպեսզի ուղղեն անհասկանալի թվացող տեքստը (հմմտ. I Կոր. 11:27 և I Հովհ. 5:7-8)

ե. մի արտագրող լրացուցիչ տեղեկություն է մտցրել լուսանցքներում պատմական կոնտեքստի վերաբերյալ կամ տեքստի ճիշտ մեկնաբանության մասին, իսկ մյուս արտագրողը դա մտցրել է հենց տեքստի մեջ (հմմտ. Հովհ. 5:4)

Բ. Տեքստային քննադատության հիմնական սկզբունքները (տրամաբանական միջոցներ՝ տեքստի բնագրի ընթերցանությունը որոշելու համար, երբ կան տարբերակներ)

1. ամենատարօրինակ կամ ոչ սովորական քերականական տեքստը, ավելի շուտ բնագիրն է

2. ամենակարճ տեքստը, ավելի շուտ բնագիրն է

3. ավելի հին տեքստին ավելի շատ կշիռ է տրված, նրա պատմականորեն բնագրին մոտ լինելու համար, մնացած ամեն ինչում հավասար են

4. ձեռագրեր, որ աշխարհագրականորեն բաժանված են, սովորաբար մոտ են բնագրին

5. վարդապետականորեն ավելի թույլ տեքստեր, հատկապես նրանք, որոնք վերաբերվում են մեծ աստվածաբանական քննարկումներին ձեռագրերի փոփոխության ժամանակաշրջանում, օրինակ Երրորդության թեման I Հովհ. 5:7-8,

6. գերադասելի է այն տեքստը, որը օգնում է բացատրել ուրիշ տարբերակների գոյությունը

7. երկու մեջբերումներ, որոնք օգնում են ցույց տալ հավասարակշռությունը այսպիսի մտահոգող տարբերակներում

ա. Ի. Հարոլդ Գրինլի «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը» (J. Harold Greenlee's book, *Introduction to New Testament Textual Criticism*,) (Էջ 68). «Ոչ մի քրիստոնեական վարդապետություն չի հիմնվում վիճաբանական տեքստի վրա և Նոր Կտակարանը ուսումնասիրող յուրաքանչյուր անձ պետք է զգուշանա իր տեքստը ավելի օրթոդոքսային կամ վարդապետական չդարձնի, քան ներշնչված բնագիրն է»:

բ. Ու. Է. Կրիստելը ասաց Գրեգ Գարիսոնին «*Բիրմինգհեմ Նյուզ*»-ից, որ նա (Կրիստելը) չի հավատում, որ Աստվածաշնչի յուրաքանչյուր բառ ներշնչված է, «համենայն դեպս, ոչ ամեն բառ, որը հասել է ժամանակակից հրատարակման թարգմանիչների բազմադարյան գործունեությունից հետո»: Եվ ավելացրեց,- «Ես հավատում եմ տեքստի քննադատությանը: Եվ, որպես դրան հավատացող, ես կարծում եմ, որ Մարկոսի Ավետարանի 16-րդ գլխի երկրորդ կեսը հերետիկոսություն է, այն ներշնչված չէ, այլ ակնհայտ հորինվածք է... Եթե համեմատենք հին ձեռագրերը, կտեսնենք, որ Մարկոսի Ավետարանը այդպիսի վերջաբան չունի: Ինչ-որ մեկն այն ավելացրել է...»:

SBC [*"Southern Baptist Convention"*]-ի անսխալականության հետազոտողներից այս նախահայրը նաև պնդում է, որ «ինտերպոլացիան (այն է հեղինակին չպատկանող և տեքստը աղավաղողբառեր մտցնել ձեռագրի մեջ)» ակնհայտ է նաև Հովհ. 5-ում, Բեթեզդայի ավազանի մոտ Հիսուսի պատմությունը: Խոսելով Հուդայի ինքնասպանության հետ կապված երկու տարբեր պատմությունների մասին (հմմտ. Մաթ. 27 և Գործք 1), Կրիստելն ասաս, - «Սա պարզապես ինքնասպանությանը նայելու մի ուրիշ հայացք է: Եթե դա կա Աստվածաշնչում, ապա այն ունի բացատրություն: Իսկ Աստվածաշնչում կա երկու պատմություն Հուդայի ինքնասպանության մասին»: Կրիստելն ավելացրեց,-«Տեքստային քննադատությունը ինքնին հիանալի գիտություն է: Այն անցողիկ չէ, և այն անհեթեթ չէ: Այն դիմամիկ է և շատ կարևոր...»:

III. Ձեռագրերի խնդիրները (տեքստային քննադատություն)

Ա. Գրքեր հետագա ընթերցանության համար

1. *Biblical Criticism: Historical, Literary and Textual*, by R.H. Harrison [Ռ. Հ. Հարիսոն, «Աստվածաշնչյան քննադատություն՝ պատմական, գրական և տեքստային»]:

2. *The Text of the New Testament: Its Transmission, Corruption and Restoration* by Bruce M. Metzger [Բրյուս Մ. Մեցգեր, «Նոր Կտակարանի տեքստաբանությունը՝ ձեռագրերի ավանդությունը, խեղաթյուրում և բնագրի վերականգնում»].

3. *Introduction to New Testament Textual Criticism*, by J. H Greenlee [Ջ. Հ. Գրինլի, «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը»].

ՀԱՎԵԼՎԱԾ 3 ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ալեքսանդրիան դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Ալեքսանդրիայում, Եգիպտոս 2-րդ դարում Ք.Հ.: Այնտեղ օգտագործվում է Փիլոյի հիմնական մեկնաբանական սկզբունքները, որը Պլատոնի հետևորդն էր: Այն հաճախ կոչվում է այլաբանական մեթոդ: Եկեղեցին մինչև բարեփոխությունը ընդունում էր այս մեթոդը: Սրա ամենակարող կողմնակիցները եղել են Օրիգենը և Օգոստինոսը: Տես Սիլվա Մալխեսյի «Եկեղեցին ճիշտ չի՞ կարդացել Աստվածաշունչը» գիրքը (Sec Moises Silva, *Has The Church Misread The Bible?* (հրատ. Academic, 1987):

Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու. Սա 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս, որը ներառում է Հին Կտակարանը, Անկանոն գրքերը և Նոր Կտակարանից շատ գրքեր: Սա ամբողջ հունարեն Նոր Կտակարանի գլխավոր օրինակներից մեկն է (բացի որոշ մասեր Մաթևոսից, Հովհաննոս ավետարանից և II Կորնթացիսից): Գիտնականներից շատերը շատ դեպքերում համարում են, որ երբ այս ձեռագիրը, որը հայտնի է որպես «A» համընկնում է «B» (Վատիկանյան) ձեռագրի հետ, ուրեմն տեքստը բնագիր է:

Այլաբանություն. Սա Աստվածաշնչի մեկնաբանության տեսակ է, որը սկիզբ է առել ալեքսանդրիան հուդայականության մեջ: Այն հանրաճանաչ է դարձել Փիլոնոս Ալեքսանդրիացու կողմից: Սրա հիմնական յուրահատկությունն է Սուրբ Գիրքը համապատասխանեցնել որևէ մեկի մշակութային կամ փիլիսոփայական համակարգին, անտեսելով Աստվածաշնչի պատմական և/կամ գրական կոնտեքստը: Նրա մեջ փնտրում են թաքնված հոգևոր իմաստ յուրաքանչյուր սուրբգրային տեքստի ետևում: Պետք է խոստովանել, որ Հիսուսը, Մաթ. 13-ում, և Պողոսը, Գաղ. 4-ում, օգտագործել են այլաբանություն՝ ճշմարտությունը փոխանցելու համար: Դ-ա, ինչևէ, սիմվոլիկ լեզու էր, և ոչ թե խիստ այլաբանություն:

Աշխարհի պատկերը և աշխարհայացքը. Սրանք ընկերական տերմիններ են: Այս երկու փիլիսոփայական գաղափարները կապված են արարչագործության հետ: «Աշխարհի պատկեր» տերմինը վերաբերվում է «ինչպես» է ստեղծվել աշխարհը հարցին, իսկ «աշխարհայացք»-ը թե «ով» է ստեղծել այն: Այս տերմինները կարևոր են ԾՆՆԳ.1-2 գլուխները մեկնաբանելու համար, որտեղ խոսքը գնում է , նախ և առաջ, այն մասին, թե Ով է ստեղծել երկիրը, և ոչ թե ինչպես է այն ստեղծվել:

Անտիոքյան դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացվել է Անտիոքում, Սիրիայում 3-րդ դարում Ք.Հ. որպես ռեակցիա Ալեքսանդրիայի, Եգիպտոս այլաբանական մեթոդին: Նրա հիմնական իմաստը՝ ուշադրություն դարձնել Աստվածաշնչի պատմական նշանակությանը: Այն թարգմանեց Աստվածաշունչը որպես սովորական, մարդկային գրականություն: Այս դպրոցը ներգրավվեց բանավեճի մեջ, արդյոք Քրիստոսն ուներ երկու բնություն (նեստորականություն) թե մեկ բնություն (ամբողջությամբ Աստված և ամբողջությամբ մարդ): Հռոմի կաթոլիկ եկեղեցին այն հերետիկոսություն հռչակեց և նրա ներկայացուցիչները բնակություն հաստատեցին Պարսկաստանում, բայց ունեին քիչ ազդեցություն: Այս դպրոցի հիմնական հերմենևտիկական սկզբունքները ավելի ուշ սկսեցին օգտագործվել դասական բողոքական Ռեֆորմատորների կողմից (Լյութեր և Կալվին):

Ապոկալիպտիկ գրականություն. Առավելապես, գուցե նույնիսկ բացառապես հրեական ժանր էր: Սա գրվածքի գաղտնի տեսակ էր, որը հրեաները օգտագործում էին օտար աշխարհակալների կողմից նվաճումների և գրավումների ժամանակ: Ենթադրվում էր, որ

անձ հանդիսացող Փրկիչ Աստվածը ստեղծեց և կառավարում է աշխարհի իրադարձությունները, և որ Աստված հատուկ ուշադրություն և խնամք է ցուցաբերում Իսրայելի հանդեպ: Այս գրականությունը Աստծո ժողովրդին խոստանում է վերջնական հաղթանակ Աստծո հատուկ ջանքերի շնորհիվ:

Սա շատ խորհրդավոր և ֆանտաստիկ ժանր է՝ շատ հանելուկային տերմիններով: Այստեղ ճշմարտությունը հաճախ արտահայտվում է գույների, թվերի, տեսիլքների, երազների, հրեշտակների, գաղտնագրերի տեսքով, հաճախ կա նաև սուր դուալիզմ չարի և բարու միջև:

Այս ժանրի մի քանի օրինակներ (1) Հին Կտակարանում, Եզեկիել (գլուխներ 36-48), Դանիել (գլուխներ 7-12), Ջաբարիա; և (2) Նոր Կտակարանում, Մաթ. 24; Մարկ. 13; II Թես. 2 և Հայտնություն:

Ապոլոգետ (ապոլոգետիկա/հավատքի պաշտպանություն). Տերմինը առաջացել է հունարեն «օրինական պաշտպանություն» բառի արմատից: Սա հատուկ դիսցիպլինա է աստվածաբանության մեջ, որը ձգտում է ներկայացնել ապացույցներ և ռացիոնալ փաստարկներ քրիստոնեական հավատքի օգտին:

Արիոսականություն. Արիոսը Ալեքսանդրիայի, Եգիպտոս, եկեղեցու երեցն էր, 3-րդ և 4-րդ դարի սկզբին: Նա պնդում էր, որ Հիսուսը հավիտենական էր, բայց ոչ աստվածային (Հոր նույն էությունը չունեցող), հնարավոր է հենվելով Առակաց 8:22-31: Նրան մարտահրավեր է նետում Ալեքսանդրիայի եպիսկոպոսը, և վեճը սկսվում է (Ք.Հ. 318), որն էլ շարունակվում է երկար տարիներ: Արիոսականությունը դարձավ նույնիսկ հավատքի պաշտոնական խորհրդանիշը արևելքի եկեղեցում: Ք.Հ. 325 Նիկիայի Ժողովը դատապարտեց Արիոսին և հռչակեց Հոր և Որդու աստվածության անբողջական հավասարությունը:

Արիստոտել. Հին հունական փիլիսոփաներից էր, Պլատոնի աշակերտը և Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը: Նրա ներգործությունը մինչ այսօր զգացվում է ժամանակակից ուսումնասիրություններից շատերի մեջ: Որովհետև նա շեշտը դնում էր հետազոտության և դասակարգման միջոցով կատարվող գիտության վրա: Սա գիտական մեթոդների սկզբունքներից մեկն է:

Աստվածաշնչյան հեղինակություն. Այս տերմինը օգտագործվում է շատ մասնագիտացված իմաստով: Այն սահմանվում է որպես հասկացողություն, թե ինչ է ասել բնօրինակի հեղինակը իր օրերում և այդ ճշմարտության կիրառությունը մեր օրերում: Աստվածաշնչյան հեղինակությունը սովորաբար սահմանվում է որպես Աստվածաշնչին նայելու ձև, որպես մեր միակ հեղինակային ուղեցույց: Ինչևէ, լայն տարածում ունեցող, սխալ մեկնաբանությունների լույսի ներքո, ես սահմանափակել եմ Աստվածաշնչի գաղափարը թարգմանված պատմական-քերականական մեթոդով:

Անհատական կարծիքի հաստատում աստվածաշնչյան տեքստի միջոցով. Սուրբ Գրքի մեկնաբանության գործածություն, երբ մեջբերվում է որևէ համար առանց ուշադրություն դարձնելու անմիջական տեքստին կամ գրական հատվածի ընդհանուր կոնտեքստին: Արդյունքում մոռացվում են բնօրինակի հեղինակի մտադրությունները և հաճախ փորձ է կատարվում հաստատելու որևէ անձնական կարծիք իր աստվածաշնչյան հեղինակությամբ:

Բնագրի հեղինակը. Սա վերաբերվում է Սուրբ Գրքի իրական հեղինակներին/գրողներին:

Բնագրեր. Սա Աստվածաշնչի բնօրինակի գրվածքներին տրված անունն է: Այս բնագիր, ձեռագիր մատյանները բոլորն էլ կորել են: Միայն օրինակների օրինակներն են մնացել: Սա եբրայերեն և հունարեն ձեռագրերի և հին տարբերակների շատ տեքստային տարբերակների աղբյուրն է:

Բեզայի հին ձեռագրերի ժողովածու. 6-րդ դարի Ք.Հ. հունարեն և լատիներեն ձեռագիր է, որը հայտնի է որպես «D»: Պարունակում է բոլոր Ավետարանները և Գործք Առաքելոցը, և նաև մի քանի թղթեր: Այն պարունակում է շատ լրացումներ, որոնք արվել են գրիչների կողմից: Սա հիմք է հանդիսացել «Textus Receptus» հիմնական հունարեն ձեռագրի համար, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել անգլերեն Հակոբոս թագավորի Նոր Կտակարանի թարգմանության համար:

Բարձր քննադատություն. Աստվածաշնչյան մեկնաբանության ընթացակարգ, որը կենտրոնանում է աստվածաշնչյան առանձին գրքի պատմական կոնտեքստի և գրական կառուցվածքի վրա:

Բառացի թարգմանություն. Սա ուսումնասիրության միջոց է, որը թույլ է տալիս մարդկանց, որոնք չեն տիրապետում աստվածաշնչյան լեզվին, վերլուծել նրա նշանակությունը և կառուցվածքը: Սա բառացի թարգմանություն է, որը դրվում է աստվածաշնչյան լեզվով անմիջապես բնագրի տեքստի տակ: Այս ձևը, ինչպես նաև վերլուծական բառարանը տալիս է մեզ Աստվածաշնչի հին երբայերեն և հունարեն տեքստի հիմնական նշանակությունները և ձևերը:

Բառացի ընթերցանություն. Եվս մեկ անուն հերմենևտիկական պատմական և կենտրոնացած տեքստի մեթոդի համար, որը զարգացել է Անտիոքում: Սա նշանակում է, որ մեկնաբանությունը ներառում է մարդկային լեզվի սովորական և ակնհայտ իմաստ, չնայած ընդունում է պատկերավոր լեզվի առկայությունը:

Բնական հայտնություն. Մարդուն Աստծո հայտնության կատեգորիաներից մեկն է: Սրա մեջ մտնում է բնության երևույթների հաջորդականությունը (Հռ. 1:19-20) և բարոյական խղճմտանքը (Հռ. 2:14-15): Այդ մասին խոսվում է Մաղ. 19:1-6 և Հռ. 1-2: Այն տարբերվում է հատուկ հայտնությունից, որը Աստծո հատուկ հայտնությունն է Աստվածաշնչում և կարևորագույնը՝ Հիսուս Նազովրեցու մեջ:

Այս աստվածաբանական կատեգորիան կրկին վերընդգծվել է «հին աշխարհ» քրիստոնյա գիտնականների շարժման կողմից (օր., Հյու Ռոսի գրվածքները (Hugh Ross): Նրանք օգտագործում են այս կատեգորիան պնդելու համար, որ ցանկացած ճշմարտություն Աստծուց է ծագում: Բնությունը բաց դուռ է Աստծո մասին գիտություն ունենալու համար, այն տարբերվում է հատուկ հայտնությունից (Աստվածաշունչը): Այդպիսով ժամանակակից գիտությունը կարող է հետագոտել բնության երևույթների հաջորդականությունը: Իմ կարծիքով, սա նոր հիանալի հնարավորություն է վկայելու Աստծու մասին ժամանակակից արևմտյան գիտական աշխարհում:

Գնոստիցիզմ. Այս հերետիկոսության մասին ունեցած մեր իմացության մեծամասնությունը գալիս է 2-րդ դարի գնոստիկ գրվածքներից: Բայց համապատասխան գաղափարները գոյություն են ունեցել դեռևս առաջին դարում (և դրանից առաջ):

2-րդ դարի գնոստիկներ Վալենտինյանի և Կերնիթիանի որոշ հաստատված հավատալիքներ այսպիսինն են; (1) նյութն ու հոգին հավասարապես հավիտենական են (օնթոլոգիական դուալիզմ): Նյութը չար է, հոգին բարի: Աստված, որ Հոգի, չի կարող ուղղակիորեն ներգրավված լինել մեղավոր նյութի ձևավորման գործընթացում; (2) Աստծո և նյութի միջև կան էմանացիաներ (*coons* կամ հրեշտակային մակարդակներ): Դրանցից վերջինը կամ ամենացածրը Հին Կտակարանի Եհովան էր, ով ստեղծեց տիեզերքը (*kosmos*); (3) Հիսուսը էմանացիա էր, ինչպես Եհովան, բայց ավելի բարձր մակարդակի վրա, ավելի մոտ ճշմարիտ Աստծուն: Ոմանք Նրան ամենաբարձրն էին համարում, բայց Աստծուց ցածր, և անշուշտ ոչ մարմնացած Աստված (հմմտ. Հովհ. 1:14): Քանի որ նյութը չար է, Հիսուսը չէր կարող ունենալ մարդկային մարմին և Աստված լինել: Նա հոգևոր ուրվական էր (հմմտ. I Հովհ. 1:1-3; 4:1-6); և (4) փրկությունը հասնում է Հիսուս Քրիստոսին

հավատալով, գումարած հատուկ գիտություն, որն ունեն միայն հատուկ մարդիկ: Գիտությունը (ծածկագրեր) անհրաժեշտ էր, որպեսզի անցնեիր երկնային մարմինների միջոցով: Հրեական օրինապաշտությունը նույնպես անհրաժեշտ էր՝ Աստծուն փնտրելու համար:

Գնոստիկ կեղծ վարդապետները երկու հակադիր էթիկական համակարգերի կողմնակիցներ էին. (1) ոմանք կարծում էին, որ մարդու ապրելակերպը ոչ մի բանով կապ չունի փրկության հետ: Նրանց համար փրկությունն ու հոգևորությունը սահմանափակվում էին գաղտնի գիտությամբ (ծածկագրեր), որը կատարվում էր հրեշտակային մարմինների միջոցով (*eons*); կամ (2) ուրիշների համար էլ ապրելակերպը խիստ անհրաժեշտ էր փրկության համար: Նրանք համարում էին, որ ասկետիկ ապրելակերպը ապացույց էր ճշմարիտ հոգևորության:

Գրական ժանր. Հատուկ ձևեր, որոնք կարող են ինֆորմացիա փոխանցել մարդկային հասարակություններին, ինչպես օրինակ պոեզիան կամ պատմական արձակը: Գրականության յուրաքանչյուր տեսակ մեկնաբանվում է հատուկ հերմենևտիկական սկզբունքների վրա, ընդհանուր սկզբունքների հիման վրա, որոնք վերաբերվում են ցանկացած գրավոր գրականությանը:

Գրական բաժին. Սա վերաբերվում է աստվածաշնչյան գրքի գլխավոր մտքի բաժանումներին: Այն կարող է կազմված լինել մի քանի համարներից, պարբերություններից կամ գլուխներից: Այն ինքնաբավարար տեքստ է կենտրոնական թեմայով:

Դեդուկտիվ. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որը ընդհանուր սկզբունքներից գնում է դեպի առանձին կիրառությունները: Սա հակառակ է ինդուկտիվ դատողությանը, որը ցույց է տալիս գիտական մեթոդը, որը փոխվում է առանձին դեպքերի դիտարկումներից դեպի ընդհանուր եզրակացությունները (տեսություններ):

Դիալեկտիկական. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որտեղ թվացյալ հակասությունները կամ պարադոքսները գտնվում են լարվածության մեջ՝ ամբողջական որոշում կայացնելու ժամանակ, որն իր մեջ ամփոփում է պարադոքսի երկու կողմերն էլ: Շատ աստվածաշնչյան վարդապետություններ ունեն դիալեկտիկական գույգեր, նախասահմանություն—ազատ կամք; ապահովություն—երկայնմտություն; հավատք—գործեր; Աստծուն ընդունելու որոշում—աշակերտություն; քրիստոնեական ազատություն—քրիստոնեական պատասխանատվություն:

Դինամիկ համագոր. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես կոնտինում, որտեղ յուրաքանչյուր երրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում», որին տրվում է իմաստ, քիչ ուշադրություն դարձնելով վերափոխությանը կամ բնօրինակի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դինամիկ համագոր»-ի տեսությունը, որը լրջությամբ է մոտենում բնօրինակի տեքստին, բայց թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ձևեր և իդիոմաներ: Իրական լավ քննարկում թարգմանության տարբեր տեսությունների մասին գտնվում է Գորդոն Ֆիլի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչն իր ամբողջ ճոխությամբ» (*Fee and Stuart's How to Read the Bible For All Its Worth*), էջ 35 և Ռոբերտ Բրեչտերի «Ժամանակակից անգլերեն Աստվածաշնչի թարգմանության ներածությունը» գրքում (*Robert Bratcher's Introduction to the TEV*):

ԵՀՈՎԱ. Հին Կտակարանում սա Աստծո Ուխտի անունն է: Սահմանումը գտնվում է Ելից 3:14: Այն երրայերեն «լինել» բայի ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ձևն է: Հրեաները վախենում էին արտասանել այդ անունը, որ զուր տեղը չլիներ, ուստի դա փոխարինեցին երրայերեն

Adonai, «Տեր» բառով: Ահա թե ինչպես է թարգմանվում այս ուխտի անունը շատ լեզուներում:

Երկհիմաստություն. Տեքստի անհասկանալի մասեր, որտեղ գրավոր փաստաթղթում կան ընթերցանության երկու կամ ավելի հնարավորություններ, կամ երբ երկու կամ ավելի բաներ առկա են միառժամանակ: Հնարավոր է, որ Հովհաննեսը դիտավորյալ օգտագործել է երկհիմաստ արտահայտություններ:

Չուզահեռ հատվածներ. Սրանք այն գաղափարի մասն են, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և, ուստի, ինքն է ամենալավը օգնում մեզ մեկնաբանել իրեն և հավասարեցնել պարաֆրասային ճշմարտությունները: Սա նաև օգտակար է, երբ մեկը փորձում է մեկնաբանել անհասկանալի կամ բազմիմաստ հատվածները: Նրանք նաև օգնում են գտնել ամենահստակ հատվածները տվյալ թեմայի, և ինչպես նաև բոլոր մյուս սուրբգրային հատվածները նույն թեմայի վերաբերյալ:

Էյզեզետիկա. Էյզեզետիկայի հակադարձը: Եթե Էյզեզետիկան հիմնվում է հեղինակի միտումների փնտրման վրա, ապա Էյզեզետիկան ենթադրում է մուտքագրում տեքստի մեջ այնպիսի միտք կամ կարծիք, որը խորթ է հեղինակին:

Էյզեզետիկա. Հատուկ տերմին է, որը նշանակում է որոշակի հատվածի տեքստի մեկնաբանություն, բառացի - այդ հատվածի իրական մտքի՝ ասելիքի դուրսբերում, այսինքն հասկանալ հեղինակի միտումները պատմական իրավիճակի, գրական կոնտեքստի՝ հատվածի, սինտաքսիսի՝ քերականության և բառերի նշանակությունների լույսի ներքո:

Էկլեկտիկա. Այս տերմինի օգտագործումը պայմանավորված է տեքստի քննադատության հետ: Այն ենթադրում է տեքստերի ընթերցանությունից տարբեր ձեռագրերի ավանդույթների հետ կապված տարբերակների դուրսբերում, որպեսզի ի հայտ բերվի այն տեքստը որը որ ավելի մոտ կգտնվի բնօրինակին: Այս դեպքում հերքվում է այն կարծիքը, որ հունարեն ձեռագրերի ամեն մի խումբ ունի մեկ բնօրինակ:

Էտիմոլոգիա. Բառերի ուսումնասիրման բնագավառ, որտեղ ի հայտ է բերվում բառի սկզբնական նշանակությունը: Մեկնաբանության ժամանակ բառերի էտիմոլոգիան ամենակարևորը չէ, ավելի կարևոր է նրանց նշանակությունը և օգտագործումը որոշակի դարաշրջանի մեջ:

Թալմուդ. Գրքերի ժողովածուի անվանումն է, որտեղ շարադրված է հրեական բանավոր ավանդույթը: Հրեաները հավատում են, որ այն բանավոր կերպով տրվել է Աստծո կողմից Մովսեսին Սինա լեռան վրա: Իրականում սրանք հրեա վարդապետների իմաստուն ասացվածքներն են, որոնք հավաքվել են տարիների ընթացքում: Գոյություն ունեն Թալմուդի երկու տարբեր գրավոր ավանդույթներ՝ Բաբելոնյանը և ավելի կարճը, թերի մնացած Պաղեստինյանը:

Թեմայեցիություն/Parochialism. Սա վերաբերվում է այն հիմքերին, որոնք միացվում են տեղական աստվածաբանական/մշակույթային կոնտեքստին: Սրանք չեն ընդունում աստվածաշնչյան ճշմարտության կամ նրա կիրառության միջմշակույթային բնությունը:

Թորա. Եբրայերեն տերմին է, որը նշանակում է «ուսուցում, ուսմունք»: Այսպես պաշտոնական կոչվել են Մովսեսի գրվածքները (Ծննդոցից մինչև 2 Օրինաց): Հրեաների համար սա եբրայական կանոնի ամենահեղինակավոր մասն է:

Ժամը. Ֆրանսերեն տերմին, որը նշանակում է գրական ստեղծագործության տարբեր տեսակներ: Աստվածաշնչյան գրական ձևերը բաժանվում են մի քանի կատեգորիաների, որոնք ունեն ընդհանուր առանձնահատկություններ: պատմական արձակ, պոեզիա, առակներ, ապոկալիպտիկ/վախճանաբանական և օրենսդրություն:

Իդիոմա. Արտահայտություն, որը տվյալ մշակույթին համապատասխան ունի հատուկ նշանակություն, որը կապ չունի առանձին վրեցրած բառերի սովորական իմաստի հետ: Ժամանակակից օրինակներ. «դա սարսափելի լավն էր» կամ «դու պարզապես սպանում ես ինձ»: Աստվածաշունչը նույնպես պարունակում է այս տեսակի արտահայտություններ:

Իմաստային դաշտ. Սա վերաբերվում է իմաստի ամբողջ ոլորտին, կապված կոնկրետ բառի հետ: Հիմնականում սրանք իմաստի տարբեր երանգներն են, որն ունի բառը տարբեր կոնտեքստներում:

Իմաստուն գրականություն. Գրական ժանր, տարածված հին Մերձավոր Արևելքում (և ժամանակակից աշխարհում): Նպատակն է երիտասարդ սերնդին պոեզիայի, առակի կամ ակնարկի միջոցով սովորեցնել կյանքի իմաստությունը: Այն ավելի ուղղված է առանձին անհատների, քան խմբակային համայնքին: Այն հիմնված չէ պատմական ակնարկների վրա, այլ կյանքի փորձառությունների և դիտարկումների վրա: Աստվածաշունչում, Հոբից մինչև Երգ Երգոցը ենթադրվում է ԵՀՈՎԱՅԻ ներկայությունը և Նրան երկրպագությունը, բայց կրոնական աշխարհայացքը հստակ չի արտահայտվում:

Որպես ժանր, այն արտացոլում է ընդհանուր ճշմարտություններ: Բայց այս ժանրը չի կարող օգտագործվել ամեն մի կոնկրետ իրավիճակում: Սրանք ընդհանուր մտքեր են, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են անհատական իրավիճակներին:

Իմաստունները համարձակվել են բարդ հարցեր տալ կյանքի մասին: Հաճախ նրանք մարտահրավեր են նետել ավանդական կրոնական հայացքներին (Հոր և Ժողովողի): Այդպիսով նրանք հավասարակշռություն և լարվածություն են ստեղծում կյանքի ողբերգությունների հետ կապված հեշտ պատասխանների միջև:

Ինդուկտիվ. Տրամաբանական դատողության մեթոդ է, որը մասնավորից տանում է դեպի ընդհանուրը: Սա ժամանակակից գիտության էմպիրիկական/փորձով հաստատված մեթոդ է: Հիմնականում սա Արիստոտելի մոտեցումն է:

Լուսավորում. Աստծո դիմելը մարդկությանը: Այս հասկացության ամբողջ նշանակությունը ամփոփվում է երեք տերմինների համախմբվածությամբ. 1. հայտնություն - Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ; 2. ներշնչանք –Նա տվեց է Իր գործերի ր դրանց նշանակությունների ճշգրիտ մեկնությունը ընտրված մարդկանց, որպեսզի նրանք գրանցեին այն մարդկության համար; և 3. լուսավորում- Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի Նա օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Կանխակարծիք. Որևէ թեմայի շուրջ նախօրոք ձևավորված պատկերացում: Հաճախ մենք ունենք կարծիքներ կամ դատողություններ ինչ որ հարցերի շուրջ մինչև Սուրբ Գրքին անդրադառնալը: Այս կանխակարծիքը հայտնի է նաև որպես թեքվածություն, պնդում, իսկ priori-ը նախօրոք ձևավորված կարծիք:

Կանոն. Տերմինը օգտագործվում է այն գրվածքների համար, որոնք անկասկած համարվում են ներշնչված: Այն թե Հին և թե Նոր Կտակարանի գրքերի համար է:

Հակադիր. Սա երեք բնութագրող տերմիններից մեկն է, որը ցույց է տալիս եբրայերեն պոեզիայի տողերի միջև գոյություն ունեցող կապը: Սա պոեզիայի տողերին է վերաբերվում, որոնք իմաստով հակադիր են միմյանց (հմմտ. Առ. 10:1, 15:1):

Համաքարքառ. Աստվածաշունչը ուսումնասիրելու միջոց: Այստեղ բերվում են գործնականում յուրաքանչյուր բառ Հին և Նոր Կտակարաններից: Սա օգնում է մեզ (1) սահմանել եբրայերեն կամ հունարեն բառը, որը ընկած է հատուկ բառի թարգմանության տակում; (2) համեմատել հատվածները, որտեղ օգտագործվում էր նույն եբրայերեն կամ հունարեն բառը; (3) ի հայտ բերել հատվածներ, երբ երկու տարբեր եբրայերեն կամ հունարեն տերմիններ թարգմանվում են նույն բառով; (4) տեսնել տարբեր բառերի կիրառությունը տարբեր գրքերում կամ տարբեր հեղինակների մոտ; (5) Աստվածաշունչում գտնել որոշակի հատվածը (հմմտ. Վալտեր Կլարկի «Ինչպես օգտագործել հունարեն Նոր Կտակարանի օժանդակ ձեռնարկը» (Walter Clark's *How to Use New Testament Greek Study Aids*), էջ 54-55):

Հայտնություն. Աստծո ղիմելը մարդկությանը: Այս հասկացության ամբողջ նշանակությունը ամփոփվում է երեք տերմինների համախմբվածությամբ. 1. հայտնություն - Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ; 2. ներշնչանք – Նա տվեց է Իր գործերի և դրանց նշանակությունների ճշգրիտ մեկնությունը ընտրված մարդկանց, որպեսզի նրանք գրանցեին այն մարդկության համար; և 3. լուսավորում- Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի Նա օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Հերմենևտիկա. Սկզբունքներ նշանակող հատուկ տերմին, որն օգտագործում են մեկնաբանության ժամանակ: Սա թե յուրահատուկ ուղեցույցների շարք է և թե արվեստ/պարզ: Աստվածաշնչյան, կամ սուրբ հերմենևտիկան սովորաբար բաժանվում է երկու կատեգորիաների; ընդհանուր սկզբունքներ և հատուկ սկզբունքներ: Նրանք կապված են Աստվածաշնչում եղած գրական տարբեր տեսակների հետ: Յուրաքանչյուր տարբեր տեսակ (ժանր) ունի իր հատուկ սկզբունքը, բայց մեկնաբանության մի քանի ընդհանուր ենթադրությունների և ընթացակարգերի հիման վրա:

Հումանիշ. Սա վերբերում է այն բառերին, որոնք իմաստով նույնն են կամ համընկնում են (չնայած իրականում երկու բառերի իմաստաբանական մասը երբեք ամբողջությամբ չեն համընկնում): Նրանք իմաստով այնքան մոտ են իրար, որ կարող են նախադասության մեջ իրար փոխարինել՝ առանց իմաստը կորցնելու: Այս տերմինը նաև օգտագործվում է հին եբրայերեն բանաստեղծական զուգահեռականության երեք տեսակներից մեկի համար: Այս իմաստով, այն նշանակում է երկու բանաստեղծական տողեր, որոնք արտահայտում են նույն ճշմարտությունը (հմմտ. Սաղ. 103:3):

Ձեռագիր. Այս տերմինը վերաբերվում է հունարեն Նոր Կտակարանի տարբեր օրինակներին: Սովորաբար նրանք բաժանվում են տարբեր տեսակների (1) նյութ, ինչի վրա, որ գրվել են (պապիրոս, կաշի), կամ (2) գրվածքի ձև (բոլորը մեծատառերով կամ սահուն ձեռագիր): Կրճատ կոչվում է «MS» (եզակի) կամ «MSS» (հոգնակի):

Մագորեթիկ տեքստ. Հին Կտակարանի եբրայերեն ձեռագիր է (9-րդ դար): Դա արվել է հայտնի հրեա գիտնականների կողմից, որը պարունակում է ձայնավոր հնչյուններ և ուրիշ տեքստային նշումներ: Նրանք հիմք են հանդիսանում Հին Կտակարանի թարգմանության համար: Նրա տեքստը պատմականորեն հաստատված է եղել հին եբրայերեն ձեռագրերով, հատկապես Եսայի մարգարեությունը, հայտնի որպես Սեռյալ ծովի գլանաձև մագաղաթներ: Կրճատ կոչվում է «MT»:

Մարդակերպություն. Ունի առանձնահատկություններ, որոնք կապված են մարդու հետ: Այս տերմինը օգտագործվում է նկարագրելու համար մեր կրոնական լեզուն, որով մենք խոսում ենք Աստծո մասին: Տերմինը առաջացել է հունարեն բառից, որը նշանակում էր մարդկություն: Սա նշանակում է, որ մենք խոսում ենք Աստծո մասին այնպես, կարծես Նա մարդ է եղել: Աստված նկարագրվում է, որպես ֆիզիկական, սոցիոլոգիական և հոգեբանական տերմիններով, որոնք վերաբերվում են մարդկանց և հասկանալի են մարդուն (հմմտ. Gen. 3:8; 3Թագ. 22:19-23): Իհարկե, սա միայն համանմանություն է : Ինչևէ, մարդիկ ունակ են օգտվել միայն մարդկային տերմիններով կամ հասկացողություններով: Ուստի, Աստծո մասին ունեցած մեր գիտությունը, չնայած ճիշտ է, բայց և սահմանափակ:

Մեկնաբանություն. Աստվածաշունչը ուսումնասիրող հատուկ տեսակի գիրք: Այն տալիս է աստվածաշնչյան գրքի ընդհանուր կոնտեքստը: Հետո բացատրում է գրքի յուրաքանչյուր բաժնի նշանակությունը: Որոշ մեկնաբանություններ հատուկ ուշադրություն են դարձնում ճշմարտության կիրառության վրա, ուրիշներն էլ տեքստին նայում են տարբեր հատուկ հարցերի տեսանկյունից: Այս գրքերը օգտակար են, բայց պետք է օգտագործվեն միայն ինքնուրույն մոտավոր սերտողությունից հետո: Մեկնաբանի մեկնությունները երբեք չպետք է ընդունվեն առանց քննադատության: Մովորաբար օգտակար է համեմատել մի քանի մեկնաբանություններ, որոնց հեղինակները ունեն տարբեր աստվածաբանական տեսանկյուններ:

Մեռյալ Ծովի մագաղաթները. Սա վերաբերվում է մի շարք երրայերեն և արամեերեն հին տեքստերին, որոնք գտնվել են Մեռյալ ծովի մոտակայքից 1947թ.: Դրանք պատկանում էին 1-ին դարի հուդայական աղանդավորների կրոնական գրադարաններին: Հռոմի տիրապետության ճնշումը և 60-ականների կրոնական պատերազմները պատճառ հանդիսացան, որ նրանք մագաղաթները հերմետիկորեն տեղավորեին գլանաձև կավե ամանների մեջ և թաքցնեին քարանձավներում և հորերում: Այս մագաղաթները օգնել են մեզ հասկանալու 1-ին դարի պատմական իրավիճակը Պաղեստինում, և հաստատել են Մագդրեթիկ ձեռագիրը, որպես շատ ստույգ, համեմայնդեպս, համեմատած մեր դարի սկզբի հետ: Կրճատ նշվում է «DSS»:

Մուրատորիան հատվածներ. Սա Նոր Կտակարանի կանոնի գրքերի ցանկն է: Գրվել է Հռոմում մինչև 200թ. Ջ.Հ.: Այն պարունակում է նույն 27 գրքերը, ինչպես Բողոքական Նոր Կտակարանում: Սա պարզ ցույց է տալիս, որ հռոմեական կայսրության տարբեր տեղերում գտնվող տեղական եկեղեցիները «փորձնականում» կանոն են որոշել մինչև 4-րդ դարի գլխավոր եկեղեցական խորհուրդը:

Նախատիպ. Մեկնաբանության յուրահատուկ ձև: Մովորաբար այն ներգրավում է նորկտակարանյան ճշմարտություն, որը գտնվում է հինկտակարանյան հատվածներում նույնանման սիմվոլի տեսքով: Հերմենևտիկայի այսպիսի տեսակը ավելի քան մեթոդի գլխավոր տարրն է եղել: Եվ քանի որ մեկնաբանության այսպիսի մեթոդը հեշտ է աղավաղել, պետք է սահմանափակել դրա օգտագործումը կոնկրետ օրինակներով՝ արձանագրված Նոր Կտակարանում:

Նեստորականություն. 5-րդ դարում Նեստորը Կոստանդնուպոլսի նախահայրերից էր: Նա սովորել է Սիրիայի Անտիոքում և պնդել է, որ Հիսուսն ուներ երկու բնություն՝ ամբողջությամբ մարդ և ամբողջությամբ Աստված: Այդ կարծիքը տարբերվում էր ավելի քան հինգ դարից, միայն մեկ բնություն, օրթոդոքս/ուղղափառ կարծիքից: Նեստորի հիմնական մտահոգությունը «Աստվածամայր» տիտղոսն էր՝ տրված Մարիամին: Նեստորի ուսմունքը հակասում էր ավելի քան հինգ դարից Կիրիլին և, ըստ իմաստի, իր իսկ սեփական անտիոքիան դարձրած ուսմունքին: Անտիոքը աստվածաշնչյան

մեկնաբանության պատմա-քերականական-տեքստային մոտեցման կենտրոնն էր, իսկ Ալեքսանդրիան մեկնաբանության քառասյատիկ (այլաբանական) դպրոցը: Նեստորը պաշտոնագրկվում է և վտարվում:

Ներշնչանք. Աստված խոսել է մարդու հետ աստվածաշնչյան հեղինակների միջոցով, ովքեր հատակ և ճշգրտորեն արձանագրել են Իր հայտնությունը: Սովորաբար ամբողջ գաղափարը արտահայտվում է երեք տերմիններով。(1) հայտնություն—Աստված գործել է մարդկային պատմության մեջ; (2) ներշնչանք—Նա տվել է հատուկ մեկնաբանություն Իր գործողություններին և նրանց նշանակությանը որոշակի ընտրված մարդկանց՝ արձանագրելու մարդկության համար; և (3) լուսավորում—Նա տվել է Սուրբ Հոգին օգնելու մարդուն հասկանալ Աստծո բացահայտումը Իր մասին:

Նկարագրող լեզու. Օգտագործվում է իդիոմաների հետ, որոնց օգնությամբ գրվել է Հին Կտակարանը: Այն խոսում է մեր աշխարհի մասին այնպես, ինչպես այն ընկալվում է մեր հինգ զգայարաններով: Դա գիտական նկարագրություն չէ, և չպետք է լինի էլ:

Շարահյուսություն/Syntax. Սա հունարեն տերմին է, որը վերաբերվում է նախադասության կառուցվածքին, թե ինչպես են նախադասության տարբեր անդամները միացված իրար՝ ավարտված միտք ստանալու համար:

Շեղություն. Ուժեղ հակվածություն դեպի որոշակի կարծիքի կամ տեսակետի: Մտածելակերպ, որն անհնարին է դարձնում կոնկրետ թեմայի կամ դիրքորոշման նախապաշարումը:

Ոգեշնչում. Տեքստին խորհրդանշական իմաստ տալ: Աստվածաշնչի այլաբանական մեկնաբանության հոմանիշն է, քանի որ այստեղ նույնպես անտեսվում է հատվածի պատմական և գրական կոնտեքստը, իսկ մեկնաբանությունը հիմնվում է ուրիշ չափանիշների վրա:

Որդեգրություն. Սա վաղ կարծիքներից մեկն էր Աստծո հետ Հիսուսի ունեցած կապի մասին: Այն պնդում էր, որ Հիսուսը սովորական մարդ էր բոլոր առումներով և հատուկ կերպով որդեգրված Աստծո կողմից մկրտության պահին (հմմտ. Մաթ. 3:17; Մարկ. 1:11) կամ հարության ժամանակ (հմմտ. Հռ. 1:4): Հիսուսն այնպիսի օրինակելի կյանքով ապրեց, որ Աստված ինչ որ պահի (մկրտություն, հարություն) որոշեց որդեգրել Նրան որպես Իր «որդի» (հմմտ. Հռ. 1:4; Փիլ. 2:9): Սա վաղ եկեղեցու և 8-րդ դարի փոքրամասնության կարծիքն էր: Ոչ թե Աստված մարդ դարձավ (Մարմնացում) այլ ընդհակառակը մարդը դարձավ Աստված:

Դժվար է ասել, որ Հիսուսը, Որդի Աստվածը, հավիտենական Աստվածը, վարձատրվեց կամ փառավորվեց Իր օրինակելի կյանքի համար: Եթե Նա արդեն Աստված էր, ինչպես կարող էր Նա վարձատրվել: Եթե Նա ուներ հավիտենական աստվածային փառք, ինչպես կարող էր ավելի պատվի արժանանալ: Չնայած դժվար է մեզ համար սա ըմբռնել, Հայրը ինչ որ կերպով պատվեց Հիսուսին, այն ժամանակ երբ Հիսուսը կատարյալ կերպով կատարեց Հոր կամքը:

Պապիրոս. Գրվող նյութի տեսակ, որը օգտագործվել է Եգիպտոսում: Այն պատրաստել են գետի եղեգից: Այդ նյութի վրա գրվել են հունարեն Նոր Կտակարանի հնագույն օրինակները:

Պարադոքս. Սա վերաբերվում է այն ճշմարտություններին, որոնք թվում է թե իրար հակասող են, բայց և երկուսն էլ ճշմարտություն, չնայած իրար մեջ ունեն ներքին լարվածություն: Նրանք փոխանցում են ճշմարտություն՝ ներկայացնելով նրա երկու կողմերը: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են պարադոքսային

(կամ դիպլեկտիկական) զույգերով: Աստվածաշնչյան ճշմարտությունները առանձին աստղեր չեն, այլ համաստեղություններ՝ ձևավորած առանձին պատկեր:

Պարբերություն. Սա արձակի հիմնական մեկնաբանության գրական բաժինն է: Այն ունի մեկ կենտրոնական միտք և դրա զարգացումը: Եթե մենք մնանք դրա գլխավոր մտքին հենված, մենք չենք փոքրացնի կամ մեծացնի կամ էլ բաց թողնի բնօրինակի հեղինակի մտադրությունը:

Պլատոն. Հին Հունաստանի փիլիսոփաներից մեկն է: Նրա փիլիսոփայությունը մեծ ազդեցություն է թողել վաղ եկեղեցու վրա Ալեքսանդրիայի և Եգիպտոսի գիտնականների միջոցով, իսկ ավելի ուշ Օգոստինոսի միջոցով: Պլատոնը պնդում էր, որ երկրի վրա ամեն ինչ երևակայական է և հանդիսանում է հոգևոր աշխարհի բնօրինակը: Ավելի ուշ շրջանի աստվածաբանները Պլատոնի ձևերը/զաղափարները նմանեցրել են հոգևոր արքայության հետ:

A priori. Սա հիմնականում հոմանիշ է «կանխակարծիք» տերմինին: Այն ենթադրում է քննարկում նախապես ընդունված սահմանումների, սկզբունքների կամ դիրքերի հիման վրա, որոնք ենթադրվում են որպես ճշմարտություն: Սա այն է, ինչը ընդունվում է առանց քննության կամ վերլուծության:

Մեպտուազինը. Այսպես է կոչվում եբրայերեն Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը: Ավանդությունն ասում է, որ այն գրվել է 70 օրում 70 հրեա գիտնականների կողմից Եգիպտոսի Ալեքսանդրիան գրադարանի համար: Գրվելու ընդունված տարեթիվը 250 Ք.Ա. (իրականում թարգմանության համար, ավելի շուտ, պահանջվել է ավելի քան հարյուր տարի): Այս թարգմանությունը ունի մեծ նշանակություն, որովհետև (1) այն մեզ տալիս է հին տեքստ, որը կարող ենք համեմատել Մագորեթիկ եբրայերեն տեքստի հետ; (2) այն մեզ ցույց է տալիս հրեական մեկնաբանության վիճակը 3-րդ և 2-րդ դարերում Ք.Ա. (3) այն մեզ տալիս է հրեական մեսիական հասկացողություն՝ մինչև Հիսուսին մերժելը: Կրճատ նշվում է «LXX»:

Մինայական հին ձեռագրերի ժողովածու. Ք.Հ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Այն գտնվել է գերմանացի գիտնական Թիսշենդորֆի կողմից Ջեբել Մուսա լեռան վրա գտնվող Մուրբ Եկատերինայի վանքից, որն ըստ ավանդության համընկնում է Մինա լեռան հետ: Այս ձեռագիրը հայտնի է եբրայերեն այբուբենի առաջին *α* (*aleph*) տառով: Այն պարունակում է թե Հին Կտակարանը և թե ամբողջ Նոր Կտակարանը: Սա ամենահին երկաթագիր ձեռագրերին:

Մինթետիկ. Եբրայերեն պոեզիայի տեսակներին պատկանող երեք տերմիններից մեկն է: Այս տերմինը վերաբերվում է պոեզիայի տողերին, որոնք կառուցվում են մեկը մյուսի վրա ընդհանուր իմաստով, երբեմն այս տեսակի պոեզիան անվանում են «կուլմինացիոն» (հմմտ. Մադ. 19:7-9):

Միստեմատիկ աստվածաբանություն. Սա մեկնաբանության փուլ է, որը փորձում է կապել աստվածաշնչյան ճշմարտությունները ավելի կապակցված և ռացիոնալ ձևերով: Սա ավելի տրամաբանական բնույթ ունի, քան պատմական՝ ներկայացնելով քրիստոնեական աստվածաբանությունն ըստ կատեգորիաների (Աստված, մարդ, մեղք, փրկություն և այլն):

Մուրբ Գրքի համանմանությունը. Արտահայտություն, որը նշանակում է, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է, հետևաբար, նրա տարբեր տեքստերը չեն հակասում իրար, այլ լրացնում են միմյանց: Այս նախապայմանը հիմք է օգտագործելու զուգահեռ հատվածներ՝ աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու համար:

Սփյուռք/Diaspora. Հատուկ հունարեն տերմին, որն օգտագործում էին Պաղեստինի հրեաները, այն հրեաների համար, ովքեր ապրում էին Խոստացյալ երկրի աշխարհագրական սահմաններից դուրս:

Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու (Vaticanus). Ք.Հ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում: Սկզբում պարունակել է ամբողջ Հին Կտակարանը, անկանոն գրքերը և Նոր Կտակարանը: Բայց, որոշ մասեր կորել են (Ծննդոց, Սաղմոսներ, Եբրայեցիս, հովվական թղթեր, Փիլեմոն և Հայտնություն): Սա շատ օգտակար ձեռագիր է՝ հեղինակային բնագրերը իմանալու համար: Այն նշվում է մեծատառ «B»-ով:

Վերափոխում. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես կոնտինում, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում», որին տրվում է իմաստ, քիչ ուշադրություն դարձնելով վերափոխությանը կամ բնօրինակի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դինամիկ համագործ»-ի տեսությունը, որը լրջությամբ է մոտենում բնօրինակի տեքստին, բայց թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ձևեր և իդիոմաներ: Իրական լավ քննարկում թարգմանության տարբեր տեսությունների մասին գտնվում է Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչն իր ամբողջ ճոխությամբ» (*Fee and Stuart's How to Read the Bible For All Its Worth*), էջ 35:

Վերլուծական բառարան. Սա ուսումնասիրություն անելու միջոց է, որը թույլ է տալիս որոշել բոլոր հունարեն ձևերը Նոր Կտակարանում: Սա հիմնական սահմանումների ժողովածու է, հունարեն այբենական կարգով գրված: Բառացի թարգմանության հետ միասին օգնում է հունարեն լեզուն չիմացող հավատացյալին, վերլուծել Նոր Կտակարանի հունարեն քերականական և շարահյուսական ձևերը:

Վուլգատա. Սա Հերոմի կողմից թարգմանված Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունն է: Սա Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հիմնական թարգմանությունն է: Այն արվել է 380 ականներին Ք.Հ.:

Տեքստային քննադատություն. Աստվածաշնչի ձեռագրերի ուսումնասիրություն: Տեքստային քննադատությունը անհրաժեշտ է, որովհետև բնագրերը մեզ չեն հասել, իսկ արտագրությունները տարբերվում են միմյանցից: Մենք փորձում ենք բացատրել տարբերակներն ու մոտենալ (որքան հնարավոր է մոտ) Հին և Նոր Կտակարանների հեղինակների բնագրերին: Այն հաճախ կոչվում է «ցածր քննադատություն»:

Textus Receptus. Անվանումը վերցված է Էլզևիրի հունարեն Նոր Կտակարանի հրատարակչությունից 1633թ. Ք. Հ.: Հիմնականում հունարեն Նոր Կտակարանի այս տարբերակը հիմնված է մի քանի ուշ հունարեն ձեռագրերի վրա և Երասմոսի(1510-1535), Ստեփանոսի (1546-1559) և Էլզևիրի (1624-1678) լատիներեն թարգմանությունների վրա: Ա. Թ. Ռոբերտսոնը (Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը) [A. T. Robertson, *An Introduction to the Textual Criticism of the New Testament*], էջ 27), ասում է, որ «բյուզանդական տեքստը գործնականորեն Textus Receptus-ն է»: Բյուզանդական տեքստը հին հունարեն ձեռագրերի երեք խմբերից ամենաարժեքավորն է (արևմտյան, ալեքսանդրիական և բյուզանդական): Այն պարունակում է սխալներ, որոնք հարյուրամյակներ շարունակ արել են արտագրողները: Ինչևէ, Ա. Թ. Ռոբերտսոնը նաև ասում է, որ «Textus Receptus տեքստը մեզ է հասել հիմնականում ճշգրիտ տեքստով» (էջ 21): Սա հունարեն ձեռագրային ավանդույթ է (հատկապես Էրասմոսի երրորդ

հրատարակությունը, 1522) հիմք է հանդիսանում Հակոբոս թագավորի Թարգմանության համար 1611թ.:

Բարբիական հուղայականություն. Շրջան, որը սկսվել է բաբելոնյան գերության ժամանակ (586-538թթ. Ք.Ա.): Երբ քահանաների և տաճարի ազդեցությունը դադարեց, հրեաների կյանքը սկսեց կառուցվել տեղական սինագոգի (ժողովարան) շուրջ: Այդ հրեական մշակույթի տեղական կենտրոնները, հաղորդակցությունները, երկրպագությունները և Աստվածաշնչի ուսուցումները դարձան հրեական կյանքի կենտրոնները: Հիսուսի օրերում այս «դպիրների կրոն» զուգահեռ էր քահանաների կրոնի հետ: Ք.Հ 70թ. Երուսաղեմի անկումից հետո դպիրների կրոնը, որում գերիշխում էի փարիսեցիները, սկսվեց կառավարվել հուղայական կրոնական կյանքով: Այն բնութագրվում է Թորայի գործնական, օրինապաշտական մեկնաբանությամբ ինչպես բացատրվում է բանավոր ավանդության մեջ (Թալմուդ):

Ցածր քննադատություն. Տես «տեքստային քննադատություն».

Փոխանություն/մետոնիմիա. Սա պատկերավոր լեզու է, երբ մի բանի անունը օգտագործվում է մի ուրիշ բան ներկայացնելու համար: Օր. «թեյնիկը եռում է» այնինչ թեյնիկի միջի ջուրն է եռում, և ոչ թե թեյնիկն ինքը:

Քրիստոսակենտրոն. Այս տերմինը ընդգծում է Քրիստոսի կենտրոնական դերը: Ես այն օգտագործում եմ, կապված այն գաղափարի հետ, որ Հիսուսը Տերն է ամբողջ Աստվածաշնչի: Հին Կտակարանը մատնանշում է Նրան; Նա է կատարողն ու նպատակը Հին Կտակարանի (հմմտ. Մաթ. 5:17-48):

Օրինականություն. Դիրք, որին բնորոշ է ծայրաստիճան ուշադրություն կանոններին կամ ծեսերին հետևելը: Եշտը դրվում է մարդու կողմից կատարված որոշակի օրենքների վրա, որով ուզում են Աստծուն հաճելի գտնվել: Հարաբերությունների նշանակությունը որևէ մեկի կամ ինչ որ մեկի հետ, սրտի վիճակը, շարժառիթները փոքրանում են և ավելանում է դրանց նշանակության կատարումը, այն ժամանակ երբ, երկուսն էլ կարևոր ասպեկտներ են ուխտի հարաբերության համար՝ սուրբ Աստծու և մեղավոր մարդկության միջև:

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

Ես հատուկ ուշադրություն չեմ դարձնում հավատքի խորհրդանիշերի վրա, այլ գերադասում եմ հաստատել Աստվածաշունչը ինքն իրենով: Ինչևէ, ես գիտակցում եմ, որ հստակ ձևավորված հավատքի սկզբունքները մարդկանց թույլ կտան, նրանք, ովքեր ծանոթ չեն ինձ, գնահատել իմ վարդապետական հայացքները: Մեր ժամանակներում այնքան շատ աստվածաբանական սխալներ ու շփոթություններ կան, որ ես կարևոր եմ համարում առաջարկել իմ աստվածաբանության հետևյալ համառոտ վերլուծությունը:

1. Աստվածաշունչը, թե Հին և թե Նոր Կտակարանները, ներշնչված, անսխալական, հեղինակային, հավիտենական Աստծո Խոսքն է: Այն Աստծո ինքնա-հայտնությունն է, արձանագրված մարդկանց կողմից Իր գերբնական առաջնորդության ներքո: Այն մեր միակ Աստծո և Նրա նպատակների հստակ ճշմարտության աղբյուրն է: Այն նաև մեր միակ հավատքի աղբյուրն է և Իր Եկեղեցու ուղեցույցը:

2. Կա միայն մեկ հավիտենական Աստված, Արարիչ և Փրկիչ: Նա է ամեն բաների ստեղծիչը, տեսանելի և թե անտեսանելի: Նա Իրեն հայտնել է որպես սիրող և գթացող, չնայած որ Նա նաև արդար է և սուրբ: Նա Իրեն հայտնել է երեք տարբեր անձերով; Հայրը, Որդին և Սուրբ Հոգին; Նրանք տարբեր Անձեր են, բայց միևնույն էության մեջ:

3. Աստված ներգործուն կերպով կառավարում է Իր աշխարհը: Նրա արարչագործության համար գոյություն ունի հավիտենական ծրագիր, որը անփոփոխ է և անհատապես կենտրոնացած է այնպես, որ թույլ է տալիս մարդու ազատ կամքը: Ոչինչ տեղի չի ունենում առանց Աստծո գիտության և թույլտվության, բայց Նա թույլ է տալիս թե հրեշտակներին և թե մարդկանց իրականացնելու իրենց անձնական ընտրությունը: Հիսուսը՝ Աստծո Ընտրյալը, և մենք բոլորս, ըստ հնարավորին, ընտրված ենք Նրանում: Դեպքերի մասին Աստծո կանխատեսությունը չի նշանակում, որ մարդիկ պետք է ամեն բան անեն այնպես, ինչպես կանխատեսված է եղել: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր մտքերի և գործերի համար:

4. Մարդկությունը, չնայած ստեղծվեց Աստծո պատկերով և առանց մեղքի, գերադասեց ըմբոստանալ Աստծո դեմ: Չնայած Ադամին ու Եվային փորձեց գերբնական արարածը, նրանք պատասխանատու էին իրենց գիտացաբար եսակենտրոնության համար: Նրանց ըմբոստությունը ազդեց մարդկության և արարչագործության վրա: Մենք բոլորս Աստծո ողորմության և շնորհքի կարիքն ունենք, թե աղամական մեղքի հետ համագործակցելու և թե մեր անձնական կամավոր ըմբոստության համար:

5. Աստված հոգացել է մեղավոր մարդկության ներման և վերահաստատման միջոցը: Հիսուս Քրիստոսը, Աստծո Միածին Որդին, մարդացավ, ապրեց անմեղ կյանքով և քավչարար մահով վճարեց բոլոր մարդկանց մեղքի փոխարեն: Նա է միակ ճանապարհը Աստծու հետ վերահաստատվելու և հաղորդակցվելու համար: Չկա ուրիշ փրկության միջոց բացի Նրա ավարտած գործի վրա ունեցած հավատքի միջոցով:

6. Մեզանից յուրաքանչյուրը անձնապես պետք է ընդունի Աստծո առաջարկած ներումն ու վերածնունդը Հիսուս Քրիստոսում: Սա իրականանում է գիտակցաբար վստահելով Աստծո խոստումներին Հիսուսի միջոցով և ինքնակամ հրաժարվում է մեղքից:

7. Մենք բոլորս ստանում ենք ամբողջական ներում և վերածնունդ Քրիստոսի վրա ունեցած մեր հավատքի հիման վրա և մեղքի ապաշխարություն: Ինչևէ, այս նոր հարաբերության ապացույցը հանդիսանում է փոխված և փոփոխվող կյանքը: Աստծո նպատակը մարդկության համար ոչ միայն երկինքն է ապագայում սպասվող, այլ նաև քրիստոսանմանությունը հիմա ներկայում: Նրանք, ովքեր իրապես փրկված են, երբեմն ընդունակ են մեղանչելու, բայց նրանք կշարունակեն հավատքով և ապաշխարությամբ ամբողջ իրենց կյանքի ընթացքում:

8. Սուրբ Հոգին «երկրորդ Հիսուսն է»: Նա ներկա է աշխարհում, կորածին դեպի Քրիստոսն առաջնորդելու և զարգացնելու քրիստոսանմանություն փրկվածի մեջ: Հոգու պարզկները տրվում են փրկության ժամանակ: Պարզկները Քրիստոսի կյանքի և ծառայության իմաստն է, որոնք բաժանված են Իր ամբողջ մարմնով մեկ՝ եկեղեցում:

Պարզևները, որոնք հիմնականում Հիսուսի վերաբերմունքներն ու շարժառիթներն են, պետք է գործի դրվեն Հոգու պտուղներով: Հոգին գործուն է մեր ժամանակներում, ինչպես գործուն էր աստվածաշնչյան ժամանակաշրջանում:

9. Հայրը հարուցյալ Հիսուս Քրիստոսին դարձրել է ամեն բաների Գատավորը: Նա վերադառնալու է երկիր՝ դատելու ամբողջ մարդկությանը: Նրանք, ովքեր վստահել են Հիսուսին և որոնց անունները գրված են Գառան կյանքի գրքում, կստանան իրենց հավիտենական փառավորյալ մարմինները Նրա գալստյան ժամանակ: Նրանք Նրա հետ կլինեն հավիտյան: Ինչևէ, նրանք ովքեր մերժել են արձագանքել Աստծո ճշմարտությանը հավիտյան պիտի բաժանված լինեն Եռյակ Աստծո ջերմ հաղորդակցությունից: Նրանք կդատապարտվեն սատանայի և նրա հրեշտակների հետ միասին:

Անշուշտ այսքանը ամբողջը չէ, բայց հույսով եմ այն ձեզ կտա իմ սրտի աստվածաբանական ուղղությունը: Ես սիրում եմ այս արտահայտությունը:

«Գլխավորը—միաբանություն, երկրորդականը—ազատություն, ամեն ինչում—սեր»: